ՎԵՄ
Մատենաշար
Թիւ 1

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ
«Լուսակն»
2020

ՀՏԴ
ԳՄԴ
Ք

Ք **Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները**/
Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ
ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպուքեանի:
-Եր., «Լուսակն», 2020, 352 էջ:

Ներկայ հատորով հրատարակուող անտիպ նամակները շարունակութիւնն են Հրաչ Տասնապետեանի խմբագրութեամբ Պէյրութի մէջ 1993 թ. հրատարակուած Հ.Յ.Դ. հիմնադիր Քրիստափոր Միքայէլեանի «Նամականի»ին:

Քրիստափորի անտիպներէն բաղկացած այս նոր ժողովածուն կազմած Երուանդ Փամպուքեանը նպատակ ունի հնարաւորինս ամբողջացնել Հ. Յ. Դաշնակցութեան Պոսթընի Կեդրոնական արխիւին մէջ պահուող Հ.Յ.Դ. անուանի առաջնորդին (1859-1905) նամակներն ու այլ ձեռագիր գրութիւնները եւ իր աւարտին հասցնել անոնց տպագրութեան գործը:

Հատորը նախատեսուած է մասնագէտ պատմաբաններու եւ Հ.Յ.Դ. պատմութեամբ հետաքրքրուող լայն հասարակութեան համար:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN

© **ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ**, 2020
© «**Լուսակն**», 2020

Քրիստափոր Միքայէլեան

(Գործ՝ գեղանկարիչ Արշակ Ֆեթվաճեանի)

Կը նուիրուի

Քրիստափոր Միքայէլեանի

ծննդեան 160-ամեակին

Հատորը կը տպագրուի հովանաւորութեամբ
տիկին **Ալիս Պօղոսեանի՝**
ի յիշատակ իր մեծ հօր՝ **Արամ Սահակեանի**
եւ մօր՝ **Կասիա Թիւթէլեանի**

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր, հայ մեծագոյն յեղափոխական Քր. Միքայէլեանի կեանքի ու գործունէութեան ամբողջական պատկերը վերականգնելու համար մեզ այսօր անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ ոչ միայն *նրա մասին* որոշակի տեղեկատուութիւն պարունակող արխիւային փաստաթղթերն ու ժամանակակիցների յուշերը, այլեւ հէնց նրա գրչին պատկանող նամակները, գաղտնի գրութիւններն ու հրահանգները:

Յայտնի է, որ Քր. Միքայէլեանի եղերական մահուանից ընդամէնը մի քանի տարի անց՝ 1909 թուականին, Կ. Պոլսում լոյս է տեսել ժամանակակիցների յուշերից եւ այլ վաւերագրերից բաղկացած մի ժողովածու(1), որով առաջին քայլն է արուել նրա ժառանգութեան ուսումնասիրութեան ուղղութեամբ: Կարճ ժամանակ անց տպագրուել է նաեւ Քր. Միքայէլեանի՝ ծաւալով ոչ մեծ, բայց բաւականին ինքնատիպ յօդուածներն ամփոփող գրքոյկը, որը վերահրատարակուել է մի քանի անգամ(2): Սակայն Քրիստափորը թողել է նաեւ բազմաթիւ նամակներ, որոնք տուեալ դարաշրջանի յեղափոխական գործիչների համար հաղորդակցման հիմնական միջոցի դեր ունէին: Դրանց մի մասը ժամանակին ընթերցողին է ներկայացուել Ս. Վրացեանի հրատարակած Հ. Յ. Դաշնակցութեան «Դիւանի»(3) զոյգ հատորների, իսկ աւելի ուշ՝ Հր. Տասնապետեանի կազմած «Քրիստափոր Միքայէլեանի նամակները»(4), մասամբ նաեւ՝ «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցու-

1.- Տե՛ս Քրիստափորի յիշատակին, Կ. Պոլիս, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1909:

2.- Տե՛ս Միքայէլեան Քրիստափոր, Յեղափոխականի մտքերը, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Աթէնք, 1931:

3.- Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, խմբ. Սիմոն Վրացեան, Պոսթըն, 1934 եւ 1938:

4.- Տ՛ես Քրիստափոր Միքայէլեանի նամակները, խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1993:

թեան պատմութեան համար»(5) ժողովածուների միջոցով:

Բայց ամբողջակա՞ն է արդեօք Քր. Միքայէլեանի կեանքի ու գործունէութեան ուսումնասիրութեան ընթացքում ձեւաւորուած այս պատկառելի աղբիւրագիտութեան հէնքը: Պարզւում է՝ ոչ, որովհետեւ նախ՝ մեծ մասամբ ոչնչացուել կամ անհետ կորել են Հ.Յ.Դ. գործունէութեան վաղ շրջանում Քրիստափորի՝ հիմնականում Թիֆլիսից ուղարկուած նամակները, որոնց մի մասն է միայն հանգրուանել Ժընեւում, իսկ հետագայում Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիւում: Դրանցից «փրկուել են» թերեւս միայն այն գրութիւնները, որոնք հետապնդումների ու խուզարկութիւնների հետեւանքով յայտնուել են ցարական Ոստիկանութեան դեպարտամենտի տարբեր բաժանմունքների, հնարաւոր է նաեւ՝ այլ երկրների ոստիկանութեան գզրոցներում:

Աւելի բարեյաջող է եղել Քր. Միքայէլեանի կեանքի վերջին եօթնամեակում գրուած նամակների ճակատագիրը: 1898 թ. տեղի ունեցած Հ.Յ.Դ. երկրորդ Ընդհանուր ժողովից կարճ ժամանակ անց Եւրոպայում հաստատուելուց յետոյ Քրիստափորը հնարաւորութիւն է ունեցել գործելու աւելի ազատ պայմաններում, ուստի գրել է շատ աւելի մեծ թուով նամակներ, որոնց ճնշող մեծամասնութիւնը պահպանուել է Ժընեւում՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի գզրոցներում: Այս մարմնի գործունէութիւնն ուղղորդելու եւ ապա «Փոթորիկի» ու Սուլթան Համիդի դէմ ուղղուած «Նժոյգի գործի» վերաբերեալ Քրիստափորի հրահանգների մեծագոյն մասը հետագայում հանգրուանել է Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիւում: Պատճառն այն է, որ դրանց մի զգալի մասը նշանակուած վայրերն ուղարկուելուց առաջ արտագրուել է Ժընեւում պահուող յատուկ մատեաններում, իսկ մի մասն էլ ծածկագրուել է՝ նման բարդ ու «ոլորապտոյտ» ճանապարհներով փրկուելով անհետացման վտանգից: Ուստի Հ.Յ.Դ. «Եւրոպական պրոպագանդի» սկզբնաւորումից սկսած մինչեւ իր եղերական մահը գրուած Քրիստափորի նամակների մի կարեւոր մասը դեռեւս անյայտ է մնում մեր գիտնականներին ու հասարակայնութեանը:

Պատճառն ակնյայտ է. 1930-ականներին Հ. Յ. Դաշնակցութեան «Դիւանի» մէջ ամփոփուած փաստաթղթերն ուսումնասիրած Ս. Վրացեանը եւ անգամ Քրիստափորի նամակներն ամբողջացնելու գործն իրականացրած Հր. Տասնապետեանը հնարաւորութիւն չեն ունեցել վերծանելու կուսակցութեան առաջնորդի բոլոր գրութիւնները, որոնց մի մասը ժամանակին Հ.Յ.Դ. մարմիններին է ուղարկուել Արեւմտեան Բիւրոյի կամ «Դրօշակ» պաշտօնաթերթի անունից: Այստեղ թերեւս իրենց դերն են ունեցել

5.- Տե՛ս «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», հատ. Ե., Պէյրութ, 2007, էջ 405-413:

նաեւ այդ փաստաթղթերի արտագրուած, այսինքն՝ պատճէնուած կամ էլ ծածկագրուած (գաղտնագրուած) լինելու իրողութիւնից բխող բարդութիւնները: Հարկաւոր էին տասնամեակների հետեւողական աշխատանք, համբերութիւն ու նաեւ յամառութիւն՝ նման վաւերագրերը հաւաքելու եւ ամբողջացնելու համար:

Ձեռնարկելով Քրիստափորի անտիպ նամակների ու նամակ-հրահանգների ուսումնասիրութեան ու հրապարակման գործը՝ Հ.Յ.Դ. արխիւների լաւագոյն գիտակ *Երուանդ Փամպուքեանն* առաջնորդուել է հարազատ կուսակցութեան հիմնադրի ու առաջնորդի ժառանգութիւնն ամբողջացնելու սեւեռուն նպատակով: Եւ այսօր ընթերցողի դատին ներկայացուող *«Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները»* ժողովածուն գալիս է վկայելու, որ դա յաջողուել է իրականութիւն դարձնել շնորհիւ կուսակցութեան գործին այն անմնացորդ նուիրումի, որի հիմքերը մեզանում հէնց ինքը՝ Քրիստափորն է դրել:

Ի մի բերելով Քր. Միքայէլեանի ձեռագրով գրուած եւ նրա վառ անհատականութեան ու ինքնատիպ մտածողութեան մասին վկայող նշխարները՝ ներկայ ժողովածուի միջոցով Երուանդ Փամպուքեանը Քրիստափորի կամային որակները ներբերել է նաեւ գիտութեան ասպարէզ: Դա սկսած գործը շարունակելու հարցում դրսեւորուող անկոտրում կամքի ու յամառութեան այն ամուր համաձուլուածքն է, որը ժամանակ ու տարիք չի ճանաչում: Ուստի այս նոր հրատարակութեան միջոցով հնարաւորինս ամբողջացնելով Քրիստափորի անտիպ նամակները՝ Երուանդ Փամպուքեանը մեզ յիշեցնում է ոչ միայն մեր մեծերի քաղաքական ժառանգութեան իմացութեան, այլեւ նրանց աւանդոյթներին հաւատարիմ լինելու հրամայականի մասին:

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրի ամէն մի երկտողի իւրաքանչիւր բառը կարեւոր է ոչ միայն դաշնակցականներիս ներկայ սերնդի, այլեւ մեր գործը շարունակողների համար: Այս առումով չենք կարող չնկատել, որ Քրիստափորի ձեռքով գրուած, բայց կուսակցութեան այս կամ այն մարմնի անունից ուղարկուած նամակներն ու գրութիւնները որքան պատկանում են իրեն՝ Քր. Միքայէլեանին, նոյնքան էլ իր ձեռակերտ կուսակցութեանը՝ Հ. Յ. Դաշնակցութեանը: Բայց կարո՞ղ է արդեօք մեզանից որեւէ մէկը ջնջել այդ փաստաթղթերի վրայ դրոշմուած Քրիստափորի ոգին եւ դրանք մեր հանրութեան սեփականութիւնը դարձնել սոսկ որպէս կուսակցական հրահանգներ ու գրութիւններ: Հ.Յ.Դ. միւս ղեկավար դէմքերի ու մանաւանդ Ռոստոմի կողմից գրուած գրեթէ նոյնատիպ նամակներից իւրաքանչիւրի հեղինակին հնարաւոր է յայտնաբերել միայն նրանց ձեռագրերի ու ինքնատիպ ոճի իմացութեան միջոցով:

Աւելին՝ որպէս գաղտնի գրութիւններ՝ ներկայ ժողովածուում ներառուած

փաստաթղթերը յաճախ աւելի կարեւոր տեղեկատուութիւն են պարունակում Հ.Յ.Դ. նպատակների ու գործունէութեան նրբերանգների վերաբերեալ, քան հրապարակային յայտարարութիւնները կամ էլ ստորագրուած եւ կնքուած նամակներն ու գրութիւնները: Դրանցում Հ. Յ. Դաշնակցութեան հերոսական ու զոհառատ յեղափոխական պայքարի հեւքն է զգացւում, ինչը նրա աւելի քան մէկդարեայ միֆը դարձնում է յաւերժի բաղադրիչ: Այդ իրողութիւնն էր իր անձնական պատասխանատուութեան բեռը մինչեւ վերջ սեփական ուսերին կրած Քրիստափորի կեանքի վերջին եօթ տարիները վերածել համակ ինքնազոհութեան: Նա դանդաղօրէն այրւում ու մխում էր՝ կուսակցութեան իւրաքանչիւր ձեռնարկի մէջ ներդնելով իր ողջ եռանդը եւ ապա անցնելով յաջորդ գործին, որը կարող էր վերջինը լինել: Ուստի հայ ընթերցողի դատին ներկայացուող՝ Քր. Միքայէլեանի այս անտիպ նամակներն ու գրութիւնները կարելի է համարել 1898 թ. դեկտեմբերից սկսուած եւ 1905 թ. մարտեան օրերին աւարտուած նրա եօթնամեայ մարտիրոսագրութեան վաւերական էջերը:

Հ. Յ. Դաշնակցութեան երկրորդ Ընդհանուր ժողովից յետոյ Ժընեւ հասնելուն զուգահեռ՝ Քրիստափորը արագացրել էր կուսակցութեան արտասահմանեան մարմինների աշխատանքի ռիթմը՝ նրանց տալով նոր ու աւելի բարդ յանձնարարականներ: Նրա նամակների ու հրահանգների առարկան էին դարձել Հ.Յ.Դ. «Եւրոպական պրոպագանդի» սկզբնաւորմանը առնչուող մեծ ու փոքր գործերը՝ հանդիպումներն ու շփումները հայկական հարցով հետաքրքրուող քաղաքական շրջանակների հետ, «Պրօ Արմենիայի» համար դրամական միջոցների հայթայթումը, ինչպէս նաեւ թուրքական բռնակալութեան դէմ պայքարի դրօշ պարզած բուլղար-մակեդոնական շարժման հետ յարաբերութիւնների կանոնաւորումը Բուլղարիայում հաստատուած Ռոստոմի միջոցով:

Սակայն այս բոլոր ձեռնարկներն անընդհատ ընդմիջւում էին Երկրից հասնող՝ Սերոբ Աղբիւրի եւ միւս հերոսների նահատակութեան մասին ցնցող լուրերով: Նման պայմաններում Քրիստափորի մօտ օրէցօր խորանում էր յեղափոխական պայքարի նոր մարտավարութեանն անցնելու համար անհրաժեշտ միջոցների անբաւարարութեան գիտակցումը: Այդ պատճառով, համբուրելով «Պրօ Արմենիայի»՝ 1900 թ. դեկտեմբերին ստացուած առաջին համարը, Քրիստափորը համակուեց ոչ միայն անսահման ոգեւորութեամբ, այլեւ սկսած գործը կիսատ չթողնելու գիտակցութեամբ: Ուստի նա իր նամակների ու գրութիւնների միջոցով նախապատրաստում է «Հ.Յ.Դ. Կամքը ներկայացնող մարմնի» ժողովը, որը պէտք է հիմք դառնար «Փոթորիկի գործի» սկզբնաւորման համար:

Եւ ահա Կովկաս անցած Քրիստափորը նորից Հ.Յ.Դ. կենդանի գործի գլուխն էր, նորից համախմբում էր երկրամասի տարբեր քաղաքներում

Երկրի համար միջոցներ հայթայթող իր ընկերներին՝ յաղթահարելով պարտադիր հանգանակութեան ճանապարհին երբեմն դրուող բարոյական արգելքները: Ժամանակն իրենն էր պահանջում. Կովկասում սկսուել էր պայքարը հայ մանուկներին ուսում ստանալու հնարաւորութիւնից զրկող ցարական բիւրոկրատիայի դէմ, իսկ թուրքական բանակի կողմից օղակուող Սասունը նորանոր խմբեր ու զէնք էր պահանջում: Անհրաժեշտ էր նաեւ նախապատրաստել Հ.Յ.Դ. երրորդ Ընդհանուր ժողովի հրաւիրումը՝ զուգահեռաբար ստեղծելով մի յանձնախումբ, որն անմիջապէս պէտք է ձեռնամուխ լինէր նրա որոշումների գործադրմանը:

Բայց այդ ամէնը դեռ բաւարար չէր: Հէնց այդ ժողովի որոշմամբ սկսւում է նաեւ Քրիստափորի համար ճակատագրական դարձած նախաձեռնութեան՝ «Նժոյգի գործի» անմիջական նախապատրաստման գործընթացը: Դրանով պայմանաւորուած՝ ծաւալւում ու ընդլայնւում է քիմիական բանաձեւերով ու պայթուցիկների արտադրութեան բարդ ու վտանգաւոր աշխատանքի այլեւայլ մանրամասներով համեմուած՝ Քրիստափորի գաղտնի գրագրութիւնը «Ցուցական մարմնի» միւս անդամների հետ:

Քր. Միքայէլեանն իր տարերքի մէջ էր. լինում է տարբեր երկրներում, երկու անգամ գաղտնաբար այցելում է Կ. Պոլիս, վերադառնում Բուլղարիա եւ, դրան զուգահեռ, շարունակում է ակտիւ նամակագրութիւն պահպանել Սուլթան Համիդի դէմ նախապատրաստուող մահափորձի համար անհրաժեշտ միջոցներ ուղարկող կովկասեան մարմինների հետ: Միաժամանակ նա վերջիններիս հետ մտքեր է փոխանակում Ռուսաստանում սկիզբ առած յեղափոխութեան ու նոյն օրերին ընթացող՝ Հ.Յ.Դ. Խորհրդի հրաւիրման նախապատրաստական աշխատանքների վերաբերեալ: Դրանց իւրօրինակ ամփոփումն է դառնում ներկայ ժողովածուում առաջին անգամ հրապարակուող՝ Հ.Յ.Դ. Խորհրդի օրակարգի մասին Քրիստափորի բաւականին ընդարձակ, բայց այդպէս էլ սեւագիր վիճակում մնացած գրութիւնը, որը թէեւ կիսատ է ձեռագրի վերջին էջի կորստեան պատճառով, բայց իր բովանդակութեամբ ու քննարկուող հարցերի լայն շրջանով իւրօրինակ քաղաքական կտակ է յիշեցնում:

Նման բովանդակութեամբ տեքստեր սովորաբար գրում են իրենց անցած ուղին ամփոփող քաղաքական գործիչները: Մինչեւ իր կեանքի վերջին ակնթարթը յեղափոխական գործի մէջ խրուած Քրիստափոր Միքայէլեանը չհասցրեց նոյնիսկ դա՛ անել, եւ նրա վերջին գրութիւնը մնաց սեւագիր ու անաւարտ: Ու թէեւ նրանում Քրիստափորը հանդէս է գալիս որպէս Հ.Յ.Դ. Խորհրդի աշխատանքների ոչ ուղղակի մասնակից, սակայն, Սուլթան Համիդի ահաբեկման գործով զբաղուելուն զուգահեռ, անհանգստացած է իր բացակայութեան պայմաններում կուսակցութեան 1898 եւ 1904 թթ. Ընդհանուր ժողովներում որդեգրուած ուժերի կենտրոնացման մար-

տավարութեան հնարաւոր փոփոխութեամբ: Աւելին՝ դրանում նա նշմարում է Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան հիմնանպատակից շեղուելու միտում. «Այլեւս բաւական է. իմ կարծիքով ոչ սիստեմ փոխելու եւ ոչ էլ Մեծ Հայքի գործը կանգնեցնելու տրամադրութիւններ պիտի արտայայտի Խորհուրդը»(6):

Այս տողերում նկատւում է Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան խնդրի առաջնահերթութիւնը կասկածի տակ դնելու փորձերը կանխելու Քրիստափորի ցանկութիւնը: Այդ նպատակով ոչ միայն ամփոփւում են Հ.Յ.Դ. 15-ամեայ յեղափոխական պայքարի արդիւնքները, այլեւ տրւում են այնպիսի գնահատականներ, որոնք որոշակի ուղերձներ են պարունակում յաջորդ սերունդների եւ անգամ մեզ համար:

Քրիստափորը կարծես գուշակում է, որ ինքն այլեւս չի մասնակցելու կուսակցութեան որոշումների ընդունման գործընթացին, ուստիեւ շտապում է նախազգուշացնել, որ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան համար մղուող պայքարը սառեցնելու պարագայում կուսակցութիւնը բռնելու է քայքայման ու թուլացման ուղին: Քրիստափորի պարագայում նման սուր անհանգստութիւնը կարելի է համարել կեանքի ճակատագրական պահերին մարդկային ենթագիտակցութեան մէջ առկայծող՝ *մայրամուտի զգացողութեան* արտայայտութիւն:

«Մեծ Հայքի գործը» կամ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան համար պայքարը շարունակելու պատգամը Քրիստափորի կտակն է ոչ միայն իր ժամանակակիցներին, այլեւ մեր սերնդին, որն արդէն տեսանելի ապագայում անպայմա՛ն դառնալու է Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան խնդրի՝ Հայկական հարցի վերաբացման ականատեսն ու մասնակիցը:

Աւարտելով Քր. Միքայէլեանի ծննդեան 160-ամեակի առթիւ ընթերցողի դատին ներկայացուող «Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները» ժողովածուի այս համառօտ առաջաբանը՝ չենք կարող ուշադրութեան չհրաւիրել նաեւ որպէս «Յաւելուած» հրատարակուող՝ ցարական Ոստիկանութեան դեպարտամենտի կազմած փաստաթղթերի այն փաթեթի վրայ, որը ժամանակին լոյս է տեսել «Վէմ» հանդէսում(7): Բանն այն է, որ 1905 թ. մարտին Քր. Միքայէլեանի հետ պատահած ողբերգական դէպքից յետոյ՝ Կովկասում սկիզբ առած յեղափոխութեան վերելքի պայմաններում, ողջ երկրամասի հայութիւնն իր հանրահաւաքների ու երթերի ժամանակ պարզել էր Քրիստափորի դիմանկարը: Եւ ահա ցարական ոստիկանու-

6.- Տե՛ս էջ289:

7.- Տե՛ս Յասմիկ Ա. Համբարձումեան, Քրիստափոր Միքայէլեանի հետքերով: Ցարական Ոստիկանութեան Դեպարտամենտի Յատուկ բաժնի 1905 թուականի թղթածրարը, «Վէմ», 2009, N 3 (28), էջ 191-210:

թիւնը սկսում է հետաքրքրուել, թէ ով էր վերջերս զոհուած այդ խորհրդաւոր անձնաւորութիւնը, որին մի ողջ ժողովուրդ իր առաջնորդն է համարում: Այդ պատճառով, Ուստիկանութեան դեպարտամենտի հրահանգով, նրա Յատուկ բաժնում սկսում են կուտակուել Քր. Միքայէլեանի յեղափոխական գործունէութեան մասին բոլոր այն զեկոյցներն ու գաղտնի գրութիւնները, որոնք հաւաքուել էին տարիների ընթացքում, եւ ապա կազմում են դրանցից իւրաքանչիւրի ամփոփագրերը: Ցարական Ռուսաստանի ոստիկանական տարբեր բաժանմունքների նիւթերը պահպանող՝ ներկայիս Ռուսաստանի Դաշնութեան, Ուկրաինայի ու Վրաստանի արխիւների գզրոցներում գտնուող այս փաստաթղթերի ամբողջական բնագրերի մանրամասն հետազօտութիւնը մեր պատմագէտների յաջորդ սերնդի պարտականութիւնն է: Որովհետեւ ամէն մի մեծ գործի աւարտ, յաջորդ՝ ոչ պակաս կարեւոր գործի սկիզբն է միայն…

Ուստի տարիների իր տքնաջան աշխատանքով Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր Քր. Միքայէլեանի հարուստ նամակագրական ժառանգութիւնն ամբողջացնելու դժուարին ու խիստ պատասխանատու գործը հրատարակութեան հանգրուանին հասցրած Երուանդ Փամպուքեանին մնում է յայտնել մեր խորին երախտագիտութիւնն ու ակնածանքը: Նա աւարտին է հասցրել ի՛ր գործը եւ ճանապարհ է բացել յաջորդ սերունդների համար, որպէսզի նրանք շարունակեն Քրիստափորի հետքերով ընթացող իրենց գիտական պրպտումները:

ԳԷՈՐԳ ԽՈՒԴԻՆԵԱՆ
Պատմագիտութեան դոկտոր
«Վէմ» համահայկական հանդէսի խմբագիր

659-199

24 մայիս 1911 Դպրեվանք

[illegible]

[illegible]

Նմոյշ Քրիստափոր Միքայէլեանի ձեռագրէն

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ծանօթ է արդէն Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր անդամներէն Քրիստափոր Միքայէլեանի նամակներու ժողովածուն, հրատարակուած Հրաչ Տասնապետեանի խմբագրութեամբ (Պէյրութ, 1993): Պոսթընի Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւներէն քաղուած այդ նամակները 188 հատ են. խմբագրին (Հ. Տ.) նշումով՝ ինչպէս Քրիստափորի, նոյնպէս նաեւ Ռոստոմի, Զաւարեանի եւ այլոց նամականին ամփոփող հատորներու «շարքերը երբեք կրնայ, անշուշտ, սպառիչ նկատուիլ»: Եւ երեւակայել որ այս հաստատումին հեղինակը՝ միա՛յն Դաշնակցութեան հիմնադիր Երրորդութեան Նամականիին նուիրած իր աշխատասիրութեանց մէջ, լոյս ընծայած է մօտ 1000 նամակներ: Ասով մէկտեղ, կարելի է ստուգապէս հաւաստել, որ նամակագրական գրականութեան ըստ կարելւոյն ամբողջական ուսումնասիրութիւնը, գէթ կուսակցական-կազմակերպական մարզին մէջ, հեռու կը մնայ գոհացուցիչ եւ բաւարար ըլլալէ, երբ նկատի ունենանք մանաւանդ, որ հասարակական կեանքին վերաբերող շատ մը էական հարցեր իրենց բացատրութիւնը պիտի գտնէին այդ գրութիւններուն մէջ, հոգ չէ թէ անոնք երբեմն անձնական բնոյթ կրեն:

Դաշնակցութեան արխիւներուն մէջ պահպանուած են հայ ազատագրական նորագոյն շարժման գլխաւոր դերակատարներու գրչին պատկանող բիւրաւոր՝ մեծագոյն մասով անտիպ նամակներ, որոնք պատմական արժէք ունին եւ կը շօշափեն գաղափարախօսական, կազմակերպական եւ գործնական բնոյթի հրատապ խնդիրներ, եւ որոնք կը կրեն ստորագրութիւնները հայ ժողովուրդի ապրած ճգնաժամային այդ տասնամեակներու գլխաւոր դերակատարներուն,– Երրորդութենէն սկսեալ մինչեւ Նիկոլ Դուման, Հրայր-Դժոխք, Անդրանիկ, Ռուբէն Տէր Մինասեան, Արմէն Գարո, Միք. Վարանդեան, Ա. Վռամեան, Արամ Մանուկեան, Ակնունի, Սիմոն Վրացեան, Նիկոլ Աղբալեան եւայլն (բոլորին թումը պիտի ըլլար շատ երկար):

Արդարեւ, հայոց նորագոյն պատմութեան ուսումնասիրութիւնը շատ բան պիտի կորսնցնէր, եթէ առաջին կարգի այդ փաստաթուղթերը մնային չպեղուած եւ փականքի տակ, ինչպէս կ՚ըսուի՝ արխիւներու փոշիներուն տակ թաղուած:

Սահմանափակուելով առ այժմ Հ.Յ.Դ. հիմնադիրներուն, որոնց Նամականի-

ին նուիրուած հատորները կը պարունակեն, ինչպէս ըսուեցաւ, շուրջ հազար նամակներ, յայտնենք որ վերջին տարիներու մեր հետազօտութիւնները երեւան բերին նոյնքան, եթէ ոչ աւելի անտիպներ միայն Պոսքրնի արխիւներուն մէջ, դարձեալ առանց համոզում գոյացնելու մեր մէջ, որ ուրիշներ պիտի չյայտնուին ապագային չսպասուած թղթածրարէ մը կամ արխիւատան մէջ կուտակուած բայց դեռ չբացուած ծրարներու մէջ: Այս հաստատումը կը կատարենք մեկնելով այն իրողութենէն, որ ատենին թէ՛ կուս. մարմիններու եւ թէ անհատ ընկերներու միջեւ հաղորդակցութիւնը կը կատարուէր գլխաւորաբար նամակագրութեամբ, ինչ որ երբեմն հնարաւորութիւն կ՚ընծայէ պատմական շատ մը խնդիրներու մասին աւելի մօտէն իրազեկ դառնալու:

*

* *

Ներկայ հատորով հրատարակութեան տրուող Քրիստափորի անտիպ նամակները կը բովանդակեն 143 գրութիւններ, բոլորը անտիպ, բացի անոնցմէ վեցին, որ լոյս տեսան մեր խմբագրութեամբ հրատարակուած «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» Ե. հատորին մէջ (Պէյրութ, 2007, էջ 405-413):

- Անտիպներու գրեթէ բոլոր ձեռագիրները կը պատկանին Քրիստափորի գրչին, որ ստորագրութիւններու համար գործածած է Էլլէն ծածկանունը կամ ուղղակի Քրիստափոր կամ Արեւմտեան Բիւրօ, երբ այդ մարմնի անունով կը գրէր կուսակցական մարմիններուն: Առհասարակ անստորագիր են գաղտնի թանաքով արտագրուելիք նամակները, որոնք անշուշտ շարադրուած են Ժընեւ:

- Նամակները ցրուած են զանազան թղթածրարներու մէջ: Այս վերջիններէն յատկանշական են երկու խումբեր, որ կը գտնուին մասնաւոր տետրերու եւ հաստափոր տոմարներու մէջ. երկու կարգի են անոնք՝

ա) Պատճէններու կամ կրկնօրինակներու տետրեր, որոնք կը պարունակեն կուս. մարմիններու, ընկերներու կամ այլազան անձնաւորութեանց յղուած գրութիւններու պատճէնները: Այդպիսիք են՝ 55-1, 84, 85, 86, 87 եւ 88 տետրերը*:

բ) ԳԱՂՏՆԻ ԹԱՆԱՔՈՎ ուղարկուած նամակներ՝ բնագիր օրինակներ՝ յղուած բացառաբար կուս. մարմիններու եւ հանգամանաւոր ընկերներու: Այս կարգին կը պատկանին թիւ 81-2, 81-3 եւ 89ա-1 տետրերը, կամ մատեանները:

Այս վերջինները ունին առաջնակարգ նշանակութիւն, որովհետեւ գաղտնի թանաքով ուղարկուած նամակներու համար Բիւրոյի հրահանգը խիստ էր,– կարդալէ ետք փճացնել: Ուստի եւ այս տետրերուն մէջ պահուած են բնագիրները այն բոլոր գրութիւններուն, որոնք չեն հասած մեզի:

Վերոյիշեալ երկու պարագաներուն, տետրերու համարին կողքին յիշատա-

---

*) Յայտնենք որ յիշուած տետրերը կամ տոմարները, որոնցմէ ոմանք կազմուած են մինչեւ 500-ի հասնող էջերով, կը բովանդակեն նոյնպէս Արեւմտեան բիւրոյի միւս անդամներուն եւ «Դրօշակ»ի խմբագրութեան կողմէ գրուած նամակներու պատճէնները:

կած ենք տուեալ փաստաթուղթին գրաւած էջին կամ էջերուն թիւը: Այլապէս, այսինքն պատճէններու եւ «Սեւագրութիւններ»ու տետրերէն դուրս գտնուող նամակներուն վերեւ նշած ենք թղթածրարին համարը, ապա գծիկով միացած փաստաթուղթին թիւը տուեալ թղթածրարին մէջ (օրինակ՝ 1143-2 կամ 1567ա-14 եւայլն):

- Հարկ տեսնուած պարագային, նամակներուն սկիզբը խմբագրական ծանօթութեամբ եւ կամ վերջաւորութեան՝ ծանօթագրութիւններու ճամբով տրուած են հակիրճ բացատրութիւններ գրութեան ծագման, յիշուած դէպքերու եւ այլ պարագաներու մասին. ծանօթագրութիւններով ջանացած ենք նաեւ պարզել ծածկանուններով յիշատակուած թէ տեղանուններու եւ թէ անձերու իսկական անունները:

Վերջապէս, բաղձալի պիտի ըլլար, Քրիստափոր Միքայէլեանի նամակներուն յաջորդ հրատարակութեան առիթով միացնել, ժամանակագրական կարգի պահպանումով անշուշտ, եւ՛ Հ. Տասնապետեանի խմբագրած ժողովածուն, եւ՛ ներկայ հատորով տրուած նիւթերը:

Ե. Փ.

1

Փաստ. 1522-13

Քրիստափորի այս նամակը արտագրութիւն է, ուղղուած Կ. Պոլսոյ Կեդր. կոմիտէին, որպէսզի վերջինս իր ներկայացուցիչ պատգամաւորը կամ պատգամաւորները ուղարկէ Թիֆլիս, ուր 1898 թ. Ապրիլ-Մայիս ամիսներուն պիտի կայանար Հ.Յ.Դ. երկրորդ Ընդհ. ժողովը: Հետեւաբար նամակը պէտք է թուագրել նոյն տարուան Մարտի վերջերուն կամ Ապրիլի սկիզբը:

[1898]

Սիրելիք!(1)

Ուղարկում ենք չորս հարիւր. Մարտի 29-ին նշանակուած է Մեծ քաղաքում(1) *տեսութիւն. այդ մասին ուրիշներից էլ իմացած կը լինիք։ Ձեր շրջանին տուած է երկուսի ներկայացուցչութիւն եւ ձեզնից է կախուած գալ մէկով թէ երկուսով։ Յամենայն դէպս գալը անհրաժեշտ է եւ յիշեալ օրը կը սպասեն ձեզ անպատճառ։*

Յտեսութի՛ն
ԷԼԼԷՆ

Յ. Գ.— Շտապելու է չտա՛պ հասնել. եթէ մի քանի օր էլ ուշանայ՝ չասէք թէ «ժամանակը անցած է ու աւելորդ համարէք». անպատճառ գալու է։ Սեպուհի վերջի անթուակիր նամակը ստացայ.— կը հաստատեմ նրան գրածս երկու նամակները։

Ձերդ Յը!
Վ. ՍԻՒՆԻ(2)

1.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է:
2.- Վահէ Սիւնի – ծածկանուն Վահէ Թիրեաքեանի, մասնակից Ընդհ. ժողովին իբրեւ պատգամաւոր Կ. Պոլսոյ, եւ հեղինակը յետ գրութեան:

2

Մատեան No 81-2, *էջ* 42-46 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Խիստ փոքր տառերով գրուած նամակ՝ ուղղուած Հ.Յ.Դ. Խարբերդի կոմիտէին: Քրիստափորի այս, ինչպէս նաեւ 81-2 համարը կրող մատեանին մէջ իր շարադրած միւս գրութիւնները, սեւագրութեան բնոյթ ունին, յատկանշուած՝ բազմաթիւ ջնջում-սրբագրութիւններով եւ լուսանցքային յաւելումներով: Այս բոլորը ծայր աստիճան դժուար ընթեռնելի եւ վերծանելի կը դարձնեն զանոնք: Իրողութիւնը այն է, որ անոնք, պէտք է արտագրուէին գաղտնի թանաքով եւ այդպէս ուղարկուէին իրենց հասցէատէրերուն: Բնագրին հաւատարիմ մնալու բծախնդրութեամբ՝ աշխատած ենք արտագրել եւ գրեթէ ամբողջական տեսք հաղորդել այս գրութեան, տեղ-տեղ բազմակէտերով նշելով անհասկնալի բառերը:

15/27 *դեկտ.* [18]98

ԽԱՐԲԵՐԴ (*Ալէքսանդրիոյ գծով*)

Պատասխանում ենք 29 [*նոյ.*] — 10 *դեկ*[*տեմբեր*] *ձեր գրած նամակին: Տրապ*[*իզոն*]*ի*(1) *ընկերներին քանիցս անգամ գրուած է ձեզ հետ յարաբերութիւնների մէջ մտնելու մասին, բայց, ինչպէս երեւում է ձեր նամակից, տակաւին մինչ վերջին ժամանակները նրանցից ոչ մի լուր չէք առել: Եթէ մինչ ներկայ նամակը ստանալը նոյնպէս դեռ կապուած չը լինիք նրանց հետ՝ այդ դէպքում ուղղակի գրեցէք Տրապ*[*իզոն*]*ի կոմիտէին ձեզ զբաղեցնող խնդիրների մասին եւ ուղարկեցէք Ալէքս*[*անդրիա*] *Վահան-ին*(2), *խնդրելով, որ իրեն յայտնի հասցէով անյապաղ ճանապարհի ձեր գրութիւնը ուր հարկն է:*

Նոյն այդ ճանապարհով մենք կը խնդրէինք ձեզ ըստ կարելոյն շուտով հաղորդել Բաթումի կոմիտէին (*Վահանին նաեւ*) *այն տեղեկութիւնները, որ կ'ունենաք Սամսոնի*(3) *մասին: Բայց մի երկու խօսք, որպէսզի ձեզ համար պարզւի այս մեր առաջարկութիւնը եւ այն զգուշութիւնները, որ դուք աչքի առաջ պիտի ունենաք այս առթիւ: Սամսոն պէտք է մտնի մեր շատ կարեւոր եւ անցեալներում արդէն վտանգւած ընկերը. դրա համար մի քանի կէտերից աշխատում են նախօրէն դիւրութիւններ ստեղծել: Սալմանը*(4) *առաջներում այնտեղ գործունէութիւն է ունեցել, յաջողւել է յարաբերութիւնների մէջ մտնել. այս վերջին դէպքում, ձեր իմացածը, ծանօթութիւննե-*

ը հաղորդեցէք անմիջապէս Բաթումին — դրանով դուք որոշ չափով դիւրացրած ու արագացրած կը լինէիք մեր ընկերոջ մեկնելը դէպի իր ուզած տեղը։ Կրկնում ենք, այդ գործը պատասխանատու է։ Եթէ Սալմանը ունի այնտեղ վստահելի բարեկամ կամ բարեկամներ, որոնք կ՚օգնեն մեր ընկերոջ քաղաք մտնելու եւ գոնէ առաջին օրերը պատսպարելու գործում՝ այն ժամանակ անպատճառ հոգացէք Վահանին գրելու ձեր իմացածը եւ հասցէ տալու։

Ի՞նչ եղաւ Սալմանի հետաքրքիր ճանապարհորդութեան հետեւանքը. ընկեր մտցրիք արդեօ՞ք Մալաթիա. եթէ Բալու-ից կարեւոր նամակներ ունիք՝ շնորհակալ կը լինէինք, եթէ մեզ ուղարկէիք. երկրից եկած բոլոր գրութիւններն ու տեղեկութիւնները այստեղ առանձին նշանակութիւն եւ պահվելու մեծ դիւրութիւն ունին։

Մի հետաքրքիր հարց։ Այստեղ ներկայ տարւանից հրատարակվում է մի քրդի խմբագրութեամբ քրդերէն մի թերթ «Քիւրդիստան» անունով։ Մենք կարդալ եւ բովանդակութեան հետամուտ լինել դեռ առայժմ չենք կարող, լեզուն չիմանալու պատճառաւ. յամենայն դէպս՝ դա անպայման յառաջդիմական ուղղութիւն պիտի ունենայ. խմբագրի հետ ծանօթ ենք. գոնէ այդպիսի տպաւորութիւն թողեց մեր վրայ։ Այդ թերթից մենք կ՚ուղարկենք ձեզ Վահանի միջոցաւ մի քանի օրինակ. ծանօթացէք բովանդակութեան եւ յամենայնդէպս քրդերի մէջ մտցրէք. աւելի եթէ հարկաւորւի՝ իմաց տուէք մեզ. ինչքան շատ՝ այնքան լաւ։ Ձենք պատճառաբանում մեր այս առաջարկը, համոզւած լինելով, որ շարժառիթները ակներեւ են։

Ուզել էք արձանագրութիւնները. տեղեկութիւն ունինք, որ ձեզ արդէն ուղարկւում են։

Մելիքի(5) *գալուն յուսադիր մի լինիք. նրան այժմ որոշ գործ յանձնւած է եւ դժւար թէ շուտով թողնի այդ գործի շրջանը։ Ուրիշ փորձառու ընկերներ զբաղւած են աւելի շատ [անընթեռնելի մէկ բառ] գործունէութեամբ, բայց ի նկատի ունեցէք, որ եթէ ապահովեն ----- գիծը՝ այն ժամանակ ձեր շրջան կը մտնեն մեր ընկերներից մէկը կամ միւսը։ Իսկ մինչ այն՝ մեզ թւում է, որ տեղացիքդ կարող էիք ձեր շրջանի գործերի [անընթեռնելի երեք տող]. մենք կրկնում ենք, որ այնպիսի մի ճգնաժամում, որի մէջ գտնւում է մեր դժբախտ ժողովուրդը, չպէտք է այնքան ..... լինին, որ սակաւաթիւ անհատներով այսօր հաշւէր ժողովրդի շահերին նւիրւած կամ նւիրւելու ընդունակ երիտասարդութիւնը։ Որոնեցէք եւ կը գտնէք անշուշտ։*

Աչքի առաջ ունեցէք, որ ձեր շրջանը մօտ է պատասխանատու կէտերից Ուլնի-ին(6)*։ Հետեւաբար, ձեր շրջանը պիտի ..... ունի որոշ ուղղութեամբ գործունէութիւն։ Ձեզ համար պարտաւորեցուցիչ գործերից յիշենք «մարտական-զինամարզական» խմբեր կազմակերպելու խնդիրը, որու մասին չէիք կարող դուք մինչ այժմ տեղեակ լինել։ Այդ խմբերը պէտք է հիմնւին*

տեղական կոմիտէներու ձեռքով, տեղական միջոցներով եւ տեղացի երիտասարդներից։ Վարժելով եւ վարժեցնելով ուրիշներին զէնքի գործածութեան մէջ՝ այդ խմբերը նպատակ պիտի ունենան՝

1) Տեղական տարրի մէջ յեղափոխական կուռող ուժեր պատրաստել, ստուարացնել եւ ծաւալել այդ ուժեր։

2) Ժողովրդի պաշտպանութեանը դուրս գալ, հարկաւոր դէպքերում անմիջապէս համախմբելով.

3) Ուլնի-ի պահանջման միջոցին օգնութեան հասնել կամ այնտեղի պատասխանատու մարմնի յանձնարարութեամբ իրենց տեղումը այս կամ այն դերը ստանձնել.

4) Այնպիսի ասպատակութիւններով, որոնք չեն հակասում Դաշնակցութեան սկզբունքներին եւ ընդհ. ժողովի վճիռներին, նիթական միջոցներ ձեռք բերել խմբի կամ եթէ կարելի է տեղական մարմինների համար։ («Անցեալի ասպատակութիւններով» սահմանափակումը տրամադրում է խուսափել ամէն տեսակ ստոր միջոցներից՝ ի նկատի ունենալով, որ յեղափոխականը պիտի գործէ միշտ ասպետական բարձր զգացմունքներով ոգեւորուած. հետեւաբար՝ ասպատակութիւնները կարող են ուղղուած լինել միայն կառավարութեան կամ յայտնի հարստահարիչների դէմ եւ երբեք գայրոյթ[?] կամ դժգոհութիւն չը զարթեցնեն հայ ժողովրդի, հայ հասարակութեան մէջ։ Բացի դրանից, եթէ այդ տեսակ մի ձեռնարկութիւն կարող է վնասել հարեւան տեղերի գործունէութեան կամ պատասխանատու կէտերի հետ յարաբերութիւնները դժւարացնել եւ առհասարակ իր որոշ հետեւանքներով խանգարել վերջին կէտերի շրջանում լուիկ-մնջիկ կատարուող պատրաստութիւնները,— ապա պարտաւորեցուցիչ պիտի լինի հարեւան կոմիտէների կամ նրանց պատասխանատու մարմնի համաձայնութիւնը ստանալ)։

Այս կտորից դուրս ձեր վերաբերեալ խնդիրները բոլորը կարող էք գտնել ը[նդհ.] ժ[ողովի] արձանագրութիւններում, գանազան տեղերում։ Լաւ ծանօթանալով այս եւ միւս ձեր անելիքներին, կ'որոշէք ձեզ համար կարեւոր խնդիրները ամբողջովին։ Մեզ մնում է աւելացնել կրկին Ուլնի-ի վերաբերմամբ, որ հարկաւոր է մտածել եւ եթէ կարելի է տեղդ ստեղծել այնպիսի պայմաններ, որ կարողանաք՝

1) Յարաբերութիւն ունենալ այնտեղի հետ, այնտեղ գնացող ընկերներ (անհատներ) ընդունել, պատսպարել միաժամանակ եւ՝ որոշ յարմարութիւններ տալով՝ ճանապարհ դնել.

2) Եթէ կարող էք այս կամ այն գծով նոյնիսկ ապրանքներ այնտեղ փոխադրելու համար։

Այս բոլորի համար, ի միջի այլոց, պէտք է ուսումնասիրել բոլոր այն գծերը, որոնցով դուք կարող էք յարաբերութիւններ ունենալ հեռու տեղերի հետ։ Այդպիսի գծեր են՝ 1) Տրապիզոն, 2) Սամսոն, 3) Մուշ, 4) Ալէքսանդ-

ըէտ։ Այս կէտերով կարող են Զ[էյթուն] կապուել մի տեղից եւ միւս կողմից Եգիպտոսի հետ։

Այս նամակը գրուում էր, երբ ստացուեց ձեր 17/29 նոյեմբերի նամակը. կ՚աշխատենք գոհացում տալ։

1.- Այս եւ յաջորդ բոլոր ընդգծուած բառերը գրուած են թուանշային ծածկագրով, որ կը բացուի հայրենասիրական երգի մը հետեւեալ տողերով.–

«Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժելու,

Ժամ է, ժամ, յառաջ ոտքի ելնելու»:

2.- Վահան – ծածկանուն Դաշնակցութեան առաջին սերունդին պատկանող գործիչ Նիկոլ Մատինեանի, որ այդ օրերուն կը գտնուէր Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը:

3.- Սեւ ծովեան նաւահանգիստ, Թուրքիա:

4.- Սալման – ծածկանուն Խարբերդի կուս. գործիչներէն Յարութիւն Մանկունիի:

5.- Մելիք – ծածկանուն հաւանաբար Իուսուֆեան Յովհաննէսի:

6.- Ուլնի կամ Ուլնիա – Զէյթունի մէկ այլ անուանակոչումը:

3

Մատեան No 84, *էջ* 277-81

21 *դեկտեմբեր* 1898

Սեպուհին(1), *Ալէքսանդրիա.*

Ընկե՛ր,

Ստացել ենք Նոյեմբերի 13/25 *եւ դեկտեմբերի* 9-*ից գրածներդ։ Պատասխանում ենք դրած հարցերիդ։*

Վարդապետի եւ վարժապետի առաքելութեան միսսիան կարող է կատարեալ անյաջողութեամբ վերջանալ, եթէ մերոնք մասամբ չօգնեն նրանց, մասամբ էլ հանգանակուած գումարներին տեղեակ չը լինեն։ Հէնց այդ պատճառաւ էլ պէտք է ափսոսալ, որ նախօրէն չէ հարցրուած արեւելեան բիւրօ-ն. այս հարկաւոր էր նոյնիսկ կարգապահութեան տեսակէտից. ներողութիւն խնդրելով, որ բիւրօների հետ չես խորհրդակցել այդ մասին՝ ցոյց ես տալիս, որ կարգապահութեան պահանջը դու չես ուզել արհամարհել, ի հարկէ. բայց, կրկնում ենք, եթէ արեւելեան բիւրօ-ն այդ առաքեալները ընդունելու համար չը պատրաստուի եւ այս կամ այն պատճառներով անօգուտ համարի դրանց չրջելը, մեր կարծիքով՝ շատ քիչ բան արած պիտի վերադառնան դոքա եւ անշուշտ հետները պիտի բերեն միայն հիասթափումն։ Եթէ ուշ չէ արդէն այս առթիւ մի բան անելը՝ ապա շտապիր արեւելեան բիւրօ-ին դիմել. մենք էլ մեր կողմից այս իմաստով կը գրենք նոյն բիւրօ-ին։ Մի հանգամանք եւս. արդեո՞ք չէր կարելի բաւականանալ վարդապետով միայն եւ թողնել վարժապետին իր տեղը. դրանով ամենայն դէպս մենք շահած կը լինէինք նրա անելիք ծախսերը եւ, ով գիտէ, գուցէ, նաեւ որոշ չափի գլխացաւութիւն։ Կշռիր նաեւ այս առաջարկը եթէ անհրաժեշտ չէ գործի համար վարժապետի ուղեկցութիւնը վարդապետին՝ թող ուրեմն տեղը մնայ։

Զարուհու(2) *օժանդակութեան խնդիրը.— Քանի որ օրիորդը այդ տեղի չրջանումն է, լաւ կը լինէր, եթէ միանգամից ընդմիշտ իրեն վրայ վերցնէր տեղական կոմիտետը։ Այս մասին գրուած է նաեւ Վահանին*(3). *կը սպասենք երկուսիդ պատասխանին, որպէս զի իմաց տանք Մեծ-քաղաքին՝*(4) *թողնեն իրենց հոգսերը օրիորդի մասին, թէ ոչ այնտեղ էլ է հարց դրուած կանոնաւոր նպաստ ուղարկել օրիորդին։ — Վազգէնի*(5) *կենսագրութիւնը յամենայն դէպս սպասում ենք օրիորդից (ի հարկէ, ձեր միջոցաւ). շտապեցրէք, ըստ կարելոյն։*

Գիրուկի մասին (Շ.) պարտք ենք համարում նախազգուշացնել քեզ, որ քո յարաբերութիւններում իր հետ շատ հեռու չգնաս. այդ մարդու անցեալին

ծանօթները լաւ չեն խօսում դրա մասին, իսկ Կարնոյ մեր ընկերները՝ չհերքելով որոշ ժամանակ, ոգեւորութեան ազդեցութեան տակ՝ դրա արած ծառայութիւնները՝ դորա հետ պնդում են, որ դրամական հաշիւներում միանգամայն արատաւորուած է։ Այդ մեր ընկերներն են Քոթոթը եւ Ղարամելիքը(6)։ Բացի դրանից՝ շատ վատ է խօսում Գիրուկի մասին Գարօն(7), պնդելով, որ վստահութեան արժանի չէ։ Վերջապէս, կասկած կայ, որ այդ մարդը յարաբերութիւնների մէջ է նաեւ «մարտականների» եւ մասնաւորապէս Արփիարի(8) հետ։ Այս քանի օրերս «Politiche Correspondenz»-ում Պոլսից ուղարկված մի թղթակցութեան մէջ, որը, հաւանական է, ներշնչուած լինի մեզ յայտնի փաշայից՝(9) Արփիարը, Բարդուղիմիոսը եւ Գիրուկը ուղղակի մի կուսակցութեան մարդիկ են անւանւում։ Զը լինի թէ մինչ Արփիարի հետ նրա յարաբերութիւններ ունենալու մասին մեր կասկածների փարատելը՝ այդ մարդը քեզնից ստացած տեղեկութիւնները հաղորդէ Արփիարին։ Վնասը այդ դէպքում անկասկածելի է։Հետաքրքրւիր, ըստ կարելոյն, այս հարցերով, եւ մինչ այս մինչ այն՝ զգոյշ եղիր քո յարաբերութիւններում։ Հարցնում ես՝ թէ ինչ է գրւած այստեղից Գիրուկի բանտախցային եւ անպատասխան մնացած. ոչինչ. դա եղել է ոչ-պաշտօնական մի մասնաւոր նամակ իր հին ծանօթներից մէկից, եւ կազմակերպութեան անունը այդտեղ ի զուր գործածվում է։

Փաշայի հետ բանակցութիւններից ոչինչ հետաքրքրութիւն ներկայացնող բան չունինք տակաւին։ Իրեն յայտնւած է ընդհ. ժողովի վճիռը. նա գտել է շատ խիստ եւ առաջարկել է մեղմացնել — մի բան, որ չէինք կարող անել — եւ ուրիշ անգամ ստիպուել ենք ընդհանուր խօսքերով կրկնել, որ այսուհետ մենք այլեւս ասելիք չունինք։ Տրդատը(10), որ դեռ այստեղ է, պիտի շուտով մեկնի. ինքն էլ է տրամադիր, մենք էլ այս օրերս պահանջելու ենք նրա հեռանալը։

Ծաղկի մարմնու(11) միջոցաւ այնտեղ եղող եպիսկոպոսին եւ վարդապետին ձեզ հետ կապելու խնդիրը առայժմ պիտի թողնենք մինչ պատասխանատու մարմնու անդամներից շուտով այնտեղ կը գտնուին դորա համար ձեռնհասները։ Զենք մոռանալ ուրեմն — ժամանակին այդ խնդիրը դնելու ծաղկեցոց առաջ։

Վահանը(3) ինքն էլ ցանկութիւն չունի այդտեղ մնալու, մենք էլ մասնաւոր մի նամակաւ խորհուրդ ենք տւել թողնել այդ վայրերը. ուրեմն՝ թող սրանով այդ խնդիրը փակւած համարւի։ Ինչ վերաբերում է հարցին, ըստ էութեան, այս բոլոր դժգոհութիւնները վատ տպաւորութիւն են թողնում եւ այդ մասին մասնաւոր մի նամակ կը գրւի քեզ։

500-ի գումարը, որ վերջին անգամ փոխադրված է քեզ Մեծ-քաղաքից(4), այդ արել է Էլլէնը(12) ի հաշիւ արեւմտեան բիւրօ-ի. ինչ վերաբերում է նրա նախազգուշացնելուն, որ այնտեղից առանձին յոյսեր չունենաք — դա արել է, որպէսզի ըստ կարելոյն յարմարւիք սնտուկին եւ շատ ծրագրերի ետեւից

ընկնելով՝ շարունակ հիասթափելու պայմաններ չստեղծէք ձեզ համար։ Այդպէս էր երկրի դրութիւնը. նա՝ Էլլէնը ուրիշ բան ասելով պիտի հակասէր կեանքին։

Հոկտեմբերի ընթացքում երկու անգամ հեռագրված է Արբակին(13)*տեղից դէպի ձեր կողմերը շարժուելու մասին։ Այս լուրը բերաւ Էլլէնը. տակաւին տեղեկութիւն չունինք, թէ ուր է նա։ Այժմ, երբ Վահանի հեռանալու մասին խնդիր կայ, երբ պատասխանատու մարմինը ցրուած է եւ, բացի տեղական գործերը , կայ նաեւ երկրի գործին եւ պատասխանատու ընկերների հետ յարաբերութիւնները պահպանելու խնդիրը — մեր կարծիքով պէտք է շտապեցնել Արբակին. այս մէկ. յետոյ գալիս է արեւմտեան բիւրօ-ից Լեռնավայրի մարմնոյ համար պահանջելիք ընկեր-անդամի հարցը եւ տեղեկութիւն կայ, որ Ծաղկի*(11) *համար ընտրուած երեք ընկերները արդէն հրաւիրել են իրենց գործակից Քոթոթին*(6) *եւ առել են նրա կատարեալ համաձայնութիւնը։ Լեռնավայրի մարմինը, ուրեմն՝ կարող է իսկոյն եւ ետ հարց դնել Բօրիսի*(14) *մասին, որովհետեւ մեր մէջ խօսք է եղել, որ շրջիկների դերում առայժմ լինելու են Քոթոթը եւ Բօրիսը։ Շուտով, ուրեմն՝ այդ մասին էլ պէտք է հարկաւորը անել... եւ ահա կ՚ունենանք այդտեղ երկու աւել ընկերներ։ Այդ մասին մենք էլ մեր կողմից հարկաւոր դիմումներ կ՚անենք։ Բօրիսին, եթէ գրելու լինէք, կարող էք դիմել Օդեսա, բայց ոչ Կարմրաթշիկի*(15) *հասցէով։ Այդ հասցէն վտանգուած է. նրա մօտ, լուր եկաւ, որ խուզարկութիւն է կատարուել եւ Բօրիսն էլ են հարցրել. գրել կարող էք այս հասցէով* Սուրիկովեան եւ Առեւտրական փողոցների անկիւն, Զինչենկոյի տուն, N 6 (16) — *ներփակ ծրարի վրայ «յանձնել Սմբատին»։*

Շահէնի(17) *մասին մի տեղեկութիւն գրիր. պիտի օգտուիս արդեօք դորա ուղեկցութեամբ թէ ոչ։ Երկրից ստացած նամակները, թէ ունենաս, մեզ ուղարկիր, դէն մի ձգեր. այստեղ առանձին նշանակութիւն ունին այդ տեսակի նամակները եւ միշտ որոշ օգուտ կը տան. նոյնպէս, եթէ ունիս նամակներ Գիրուկից՝ դրանք էլ մի մերժիր այստեղ ուղարկելու։*

Բէյրութում գտնուող Արծրունու մասին կասկածներ են յայտնվում։ Այդ մասին նախազգուշացնելով մեզ՝ Տօնապետեանը տալիս է մեզ մի նոր հասցէ, որով կարող էք նրա ճանաչած այս նոյն մարդու հետ յարաբերութեան մէջ մտնել եւ պարզել, թէ ինչ կարող է անել մեզ համար Բէյրութը եւ ում միջոցաւ ու ինչպէս։ Ահա այդ հասցէն՝ Madame Zoncovich, poste restante française, Beyrouth, Syrie։ *Ուրեմն՝ Արծրունու հետ առայժմ խիստ վեպապահութեամբ վարուել պէտք է։ Այս նոր բարեկամի անունը մենք կը յայտնենք ձեզ յաջորդ նամակաւ։*

«Միութեան» մէջ որոշ ակնարկներ կան «Դաշնակցութեան» մասին. այդ այստեղից է վերցրած. դու խօսմ խօսակցութիւն չես ունեցեր դոկումենտների մասին. եթէ այո, ապա ի՞նչ է։

Գրիր նաեւ քո կարծիքը Արամ Մանուէանի մասին, որը գտնվում է Վառ-

Նա եւ այժմ առաջարկում է իրեն մի տեղ գործի ուղարկել։

Վերը յիշած Արծրունու վերջին մի քանի նամակները այստեղից ձեզ են ուղարկված. չը կորցնէք այդ նամակները եւ մեզ յետ ուղարկէք։

Ներփակ կը գտնես երկու նամակ Շահէնի ծանօթ Մեծ-քաղաքից ստացուած։

Բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):
2.- Զարուհի Տէրոյեան, անդամ Վան-Վասպուրական կեդր. կոմիտէի, որ ձերբակալուած եւ աքսորուած էր Երուսաղէմ:
3.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:
4.- Մեծ-քաղաք – ծածկանուն Թիֆլիսի եւ Արեւելեան բիւրոյի:
5.- Վազգէն – ծածկանուն ծանօթ մարտիկ Տիգրան Տէրոյեանի (1872-1898): Զարուհին վերջինիս քոյրն էր:
6.- Քոթոթ – Ռոստոմի տրուած ծածկանուններէն մէկը: Ղարա-Մելիքը՝ Բարսեղ Մելիք-Գրիգորեանն է (1856-1915):
7.- Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին):
8.- Արփիարը՝ ծանօթ գրող Արփիարեանն է: Մարտականներ – Վերակազմեալ հնչակեաններն են:
9.- Փաշան – ակնարկութիւն է Օսմ. Թուրքիոյ արտաքին գործոց փոխ-նախարար Արթին փաշա Տատեանի, որու միջոցաւ Սուլթան Ապտիւլ Համիտ Բ. յարաբերութիւն կը ջանար ստեղծել Դաշնակցութեան հետ:
10.- Տրդատ – վերոյիշեալ Արթին փաշայի եղբօրորդին, որ Ժընեւ՝ Դաշնակցութեան Արեւմտեան բիւրոյի մօտ ուղարկուած էր իբրեւ բանագնաց:
11.- Ծաղիկ – կրճատուած անուանումը Կռուածաղիկի, որ ծածկանունն էր Կ. Պոլսոյ դաշնակցական մարմնին:
12.- Էլլէն – ծածկանուն նոյն ինքն նամակագիր Քրիստափոր Միքայէլեանի:
13.- Արբակ կամ Արբակ Ռշտունի – ծածկանուն Յովսէփ Միրզայեանի (1868-1935), անդամ ընտրուած Լեռնավայրի (Կիլիկիա) պատասխանատու մարմնին:
14.- Բօրիս – ծածկանուն Սմբատ Խաչատրեանի, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ ներկայացուցիչ Լեռնավայր-Կիլիկիա-ի պատասխանատու մարմնին մօտ:
15.- Կարմրաթշիկ – ծածկանուն Մարտիրոս Մարգարեանի, ծանօթ նաեւ Սաֆօ կեղծանունով, որ Քրիստափորի եղերական մահէն ետք, 1905 թ. պիտի ղեկավարէր Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.ի դէմ կազմակերպուած մահափորձը:
16.- Ռուսատառ հասցէ:
17.- Շահէն – ծածկանուն Գէորգ Մելիք-Շահնազարեանի:

4

Մատեան No 84, *էջ* 284-286

21 *դեկտեմբեր* 1898

Վահանին(1), *Ալէքսանդրիա*

Ընկե՛ր,

Պատասխանում ենք վերջին նամակներում դրուած մի քանի կարեւոր կէտերին։

Ոսկան Նազարեանցի «Տաւրոս» թերթի մէջ գրածներին ուզում ես պատասխանել եւ կը ցանկանայիր իմանալ, թէ ինչ հիման վրայ եւ ինչ դատաստանով դուրս դրուած է այդ պարոնը «Դաշնակցութիւնից»։ Ի հարկէ վատ չէ այդպիսիների գլխին խակոյն եւ ետ դուրս շուտ անել, բայց հարկաւոր տեղեկութիւնները ունենալու համար կրկին մի փոքր ժամանակ է պահանջւում. թէեւ արդէն գրուած էր Վրէժ(2) *դատաստանի արձանագրութիւնը մեզ հասցնել, բայց մինչ այժմ ոչինչ չլինելով ստացած այնտեղից, մենք վճռեցինք դիմել Նիկոլին*(3), *որը այժմ Ոսկանապատ*(4) *է, եւ նրանից սպասել այդ մասին հանգամանօրէն տեղեկութիւններ։*

Օգտակար ես գտնում Զարիֆեանի(5) *այդտեղից փոխադրութիւնը. ինչքան եւ ցանկալի լինէր այդ, բայց մենք յոյս չունենք, թէ նա կը ցանկանայ համաձայնուել. ընտանիքի տէր լինելով՝ հազիւ թէ նա իր նիւթական անապահով դրութեան մէջ րիսկ անի թողնել իր ստացած պաշտօնը։ Այնուամայնիւ մենք կը գրենք իրեն եւ կը յայտնենք ձեր ցանկութիւնը ու նրա այդտեղ օգտակար լինելու պայմանները։*

«Մարտականներից»(6) *ոմանց առաջարկութիւնը — մասնաւոր դատ բանալ Արփիարի*(7) *դէմ — մեզ վաղաժամ է թւում։ Մեր կարծիքով այդ դատը չէ կարող աւելի մեղադրական հիմքեր պարզել Արփիարի դէմ, քան ընդհանուր ժողովի ցանկութեան համաձայն՝ միութեան առթիւ մեր հրատարակելիք բրոշիւրի մէջ. սխալ է կարծել, որ այդ բրոշիւրը չի չօշափելու Արփիարի խնդիրը։ Կամայ-ակամայ Արփիարը իրեն պատշաճ տեղ կը բռնի դրանում։ Յամենայն դէպս մեզ թւում է, որ աւելի լաւ է առայժմ սպասել բրոշիւրի լոյս տեսնելուն մինչ կը պարզուի, թէ ինչ բնաւորութիւն կ՚ունենայ դա եւ ինչ տպաւորութիւն կը թողնի։*

Զէքերի վերաբերմամբ Խարբերդում յղացած մտքի դէմ մենք բողոքում ենք բոլոր հոգով։ Յեղափոխական դրօշակն ոչ մի հանգամանքներում չպիտի ունենայ ոչ մի առնչութիւն «ոճրալի» .....(8) *հետ։ Յեղափոխական դրօշակը պէտք է միշտ մաքուր պահել ամէն տեսակի կեղտերից եւ այդպիսի*

ցածր միջոցների դիմելով՝ չցեխոտել նրան. ասպետական բարձր զգացմունքներ — ահա ինչ միշտ գրուած պիտի լինեն մեր դրօշակի վերայ։ Այդ տեսակէտից մենք՝ միանգամայն հրաժարուելով խարբերդցոց յանձնարարութիւնը կատարելուց՝ կ'առաջարկենք նոյնիսկ ձեզ մեր եւ ձեր կողմից յայտնել նրանց մեր ընդհանուր պարսաւանքը։

Զարուհու(9) մասին գրում ես, որ Մեծ Քաղաքից(10) օգնութիւն չեն հասցնում. որքան ես յիշում եմ, իմ այնտեղէն հեռանալիս այդ մասին խոսակցութիւն կար եւ վճռեցին կանոնաւոր կերպով նպաստ ուղարկել օրիորդին. եթէ չեն ուղարկում տակաւին մինչ այժմ էլ՝ ապա լաւ կը լինէր, որ միանգամընդմիշտ այդ հոգսը իր վրայ առնէր այդտեղի կոմիտեատը։ Չէ՞ որ օրիորդը ձեր ռայոնում է նեղւում. ինչո՞ւ չօգնել նրան հէնց տեղումը։ Եթէ տեղացիք համաձայն են, այն ժամանակ Մեծ Քաղաքին կարելի էր իմաց տալ թողնեն այդ մասին իրենց հոգսերը ձեր վրայ։

Հալէպի փաստաբան Մեծատուրեանի մասին (Արծրունի) կասկածներ յայտնած է նաեւ Կարիճը Բաբելոնից(11) գրած իր 18 յունիսի 98 թուակիր նամակում։ Նրանից կարող էք տեղեկանալ այդ մասին եւ նրա (Կարիճի) միջոցաւ ստուգել։

Ուղարկեցինք այս օրերս 500 օրինակ No 11-ից։ Սարուստան(12) փոխադրելու ծախսերը, մեր կարծիքով, լաւ է, որ մենք անենք. տեղացիներին, եթէ թողնելու լինինք, գուցէ ուշանայ փոխադրութիւնը, որ միանգամայն ցանկալի չէ։ Ի սէր ամենայնի, այդ փոխադրութեան մասին պէտք է աշխատել ամէն կերպ։ Դեկտեմբերի համարը, գուցէ չտանք, որպէսզի յունուարին մեծ համար դուրս բերենք եւ, ըստ կարելոյն շուտով, որպէսզի ապագայում արդէն կանոնաւորուի թերթի լոյս տեսնելը որոշ ամսաթւերում։ Խմբագրական մասնաժողովի հետ դեռ չենք խօսել այդ մասին. տեսնենք — կարելի է անյարմար գտնեն։

Հաշուեցոյցեր Կիպրոս ուղարկուած են։

Տեղական կոմիտէին յիշեցրու, որ իրենց հաշիւները չուշացնեն. չէ՞ որ մեզնից էլ պահանջում են ընդհանուր հաշիւ. Մեծ Քաղաքը վաղուց է մեզնից հաշիւ ուզում, իսկ մենք նիւթ չունենք կազմելու։

14 ոսկու քո ուղարկած հաշուից երեւում է, որ ծախսերի մեծ մասը տեղական բնաւորութիւն ունեն, իսկ «Շարժումի» ուղարկած հեռագիրը — նոյն իսկ մասնաւոր։ Ինչո՞ւ չէ անում այդ ծախսերը կոմիտեատը կամ ինչու համար ուրեմն գոյութիւն ունի այդ կոմիտեատը, եթէ իր տեղական պահանջները անգամ լրացնելու կարողութիւն չունի։

Պետրոսի մօտ եղած ատրճանակի գինն է երեք ու կէս օսմանեան ոսկի. այդ գումարը փոխադրուելու է Ծաղիկ։

Բարեւներ՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:
2.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի եւ անոր կեդրոն Թաւրիզ քաղաքի:
3.- Նիկոլ Դումանն է. Տէր Յովհաննիսեան Նիկողայոս:
4.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:
5.- Զարիֆեան – ծածկանուն Յովհ. Լորիս-Մելիքեանի:
6.- Մարտականները Վերակազմեալ հնչակեաններն են, որ «Մարտ» անունով թերթ կը հրատարակէին:
7.- Արփիարը ծանօթ գրող Արփիար Արփիարեանն է:
8.- Անընթեռնելի մէկ բառ:
9.- Զարուհի Տէրոյեան, քոյրը ծանօթ յեղափոխական մարտիկ Տէրոյեան Տիգրանի (Վազգէն): Եղած է անդամ Հ.Յ.Դ. Վասպուրականի Կեդր. կոմիտէի: Ապա, թուրք կառավարութեան կողմէ աքսորուած Երուսաղէմ, ուր պիտի մնար մինչեւ 1908 թ. Օսմանեան սահմանադրութեան հռչակումը:
10.- Մեծ Քաղաք – ծածկանուն Թիֆլիսի եւ Արեւելեան բիւրոյի:
11.- Կարիճ – ծածկանուն ծանօթ գրող Միսաք Գոյումճեանի (Առանձար) (1877-1913): Բաբելոն գործածուած է Միջագետքի քաղաքներէն հաւանաբար Մուսուլի համար:
12.- Սարուստան – ծածկանուն ընդհանրապէս Ռուսիոյ, մասնաւորաբար Կովկասի:
13.- Ծաղիկ – կրճատուած Կոռուածաղիկի, ծածկանուն Պոլսոյ:

5

Մատեան No 84, *էջ* 291-92

12/24 *դեկտեմբեր* 1898

Ալէքսանդրիա, Սեպուհին(1)

Ընկե՛ր,

Հաստատում ենք դեկտ. 20ին գրած մեր նամակը։ Այդ նամակից յետոյ՝ երէկ, դեկտ. 23-ին, մենք ստացանք քո գրածը եւ իսկոյն հեռագրեցինք քեզ մեր կարծիքը (attente) *թէեւ, երեւի, արդէն ուշ էր* (*նաւը, ինչպէս գրել էիր, պիտի գնար հէնց այդ օրը*)։

Վարդապետի խնդրի մասին չենք երկարել այստեղ, մասամբ որովհետեւ այդ մասին մենք գրել ենք նախորդ նամակով, մասամբ էլ քո վերջին գրութեան մէջ դու ինքդ նախատեսնում ես այն բոլոր հանգամանքները, որոնք պահանջւում են գործի յաջողութեան համար։ Մեզ մնում է այդ առթիւ այս անգամ կարծիք յայտնել միմիայն այն տրամադրութեան մասին, որը դու ուզում ես կայացնել վարդապետի հետ։

Նախ՝ մենք չը վստահեցանք, ինչպէս դու առաջարկում ես, հարկաւոր ձեւով փոքրացնել քո ուղարկած պայմանագրութիւնը եւ վերադարձնել քեզ, ի նկատի ունենալով, որ այդ ձեռնարկութիւնը վերաբերում է աւելի Արեւելեան բիւրո-ի շրջանին եւ հետեւաբար՝ նրանց համաձայնութիւնը աւելի կարեւոր պիտի լինի քան մերը. մենք կարող էինք կատարել այդ քո պահանջը եւ սակայն դա ոչ մի գործնական նշանակութիւն չէր ունենալ, եթէ չը համաձայնվէր Արեւելեան բիւրո-ն այդ գործը իր վրայ առնելու։

Երկրորդ՝ նոյնիսկ պայմանները մեզ թւում են՝ գործի ընդհանուր տեսակէտից՝ բաւականին կաշկանդող այն ձեռնարկները, որոնք պիտի օգտուին այդ հանգանակութիւնից։ Ուստի՝ անպայման կարեւոր համարելով գլխաւորապէս Արեւելեան բիւրո-ի համաձայնութիւնը՝ մենք կ՚առաջարկէինք ձեզ աշխատել նոցա հետ համաձայնվել եւ, եթէ հակառակ չէք գտնուիլ, համաձայնութիւններ թէ վարդապետի եւ թէ Արեւելեան բիւրո-ի հետ հետեւեալ կէտերի շուրջը։

1.- *Ժողովավարութիւնը*(2) *կատարվում է վարդապետի եւ Արեւելեան բիւրո-ի կողմից նշանակուած անձին կամ անձանց ձեռքով։*

2.- *Ամէն մի տեղ հանգանակուած գումարները ուղարկվում է բիւրո-ին։*

3.- *Ժողովված գումարներից* 10% *յատկացվում է Ֆոնուզի*(3) *վանքի շինութեան եւ հայր սուրբի համաձայնութեամբ ուղարկվում է եգիպտաբնակ*

կիլիկեցիներից բաղկացած մի յանձնախումբի. 30% գործադրվում է Զէյթունի սովեալներին «Դաշնակցութեան» պատասխանատուութեամբ եւ վարդապետի խորհրդակցութեամբ (կամ համաձայնութեամբ). մնացած 60% դրվում է բացառապէս «Դաշնակցութեան» տրամադրութեան տակ եւ գործադրվում է Կիլիկիոյ պատասխանատու մարմնի համաձայնութեամբ։

Այս վերջին կէտը, ի հարկէ, չէ համապատասխանում քո ծրագրած պայմանագրութեան տրամադրութեան, բայց, ի նկատի առնելով որ միմիայն Կիլիկիան չէ, որ դրամի պէտք ունի, որ ժողովավարութիւնը՝ եթէ յաջողուի եւ լայն ծաւալ ստանայ՝ կարող է որոշ ժամանակի ընթացքում ցամքեցնել ուրիշ տեղերի եւ գործերի համար պահանջվելիք ժողովավարութիւնների աղբիւրները, որ նոյնիսկ որոշ ժամանակամիջոցում Կիլիկիան կարող է պէտք չունենալ բոլոր ժողովված դրամներին, իսկ մի ուրիշ տեղ նեղուել դրամի պակասութիւնից, որ, վերջապէս, ժողովավարութիւնը պիտի կատարուի «Դաշնակցութեան» ընդհանուր պատասխանատուութեան տակ (հասարակութեան առաջ).— Ի նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները ասում եմ, մեզ թւում է, որ այդ վերջին բանաձեւը աւելի նպատակայարմար է։ Առանձին երկիւղ կրել, որ ժողովվածը կը մսխուի դէսուդէն եւ Կիլիկիան դարձեալ առանց միջոց կը մնայ — աւելորդ է, որովհետեւ մտցնում ենք սահմանափակում — «Կիլիկիոյ պատասխանատու մարմնու համաձայնութիւնը»։ Ինչ վերաբերում է արտասահմանում 7 հոգուց նոր «գործադիր յանձնախումբ» կազմելուն, մենք միանգամայն հակառակ ենք դրան. այդ մարմինը պիտի կաշկանդէր գործը եւ աւել ոչինչ. եթէ բանը այդպիսի մարմնուն գայ, աւելի լաւ է ուղղակի տալ դրամները Կիլիկիոյ պատասխանատու մարմնուն բացառապէս, թէեւ, ինչպէս տեսնում ես, մենք նրան էլ ենք դէմ։

Ծանօթ խմբ.– Շարունակութիւնը – լուսանցքի վրայ գրուած 3 տող – բոլորովին անընթեռնելի է:

1.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի:
2.- Ժողովավարութիւն – դրամահաւաք, հանգանակութիւն իմաստով:
3.- Հայաբնակ մեծ գիւղ Զէյթունի գաւառակին մէջ:

6

Մատեան No 84, *էջ* 293-96

27 *դեկտեմբեր* 1898

Ռամպուիս[?], *Զարիֆեանին*(1)

Յարգելի ընկեր,

10 *դեկտ. Ձեր գրութիւնը ստացել ենք։ Այդ գրութեանը կցած ձեր մի բարեկամի նամակը, ի հարկէ, մեզ վրայ իր բարոյական շարժառիթների տեսակէտից՝ ամենալաւ տպաւորութիւնը թողեց, իսկ ինչ կը վերաբերի այն երկիւղին, որ նա ունի փաշայի եւ նրա եղբօրորդու հետ*(2) *ունեցած մեր յարաբերութիւնների վերաբերմամբ՝ այդ մասին մեզ թւում է, որ սպասելի վտանգը այնքան մեծ չէ։ Մենք միշտ կարելիութիւն կ'ունենանք հաւատ ներշնչելու դէպի մեր կազմակերպութիւնը, եթէ կուի դաշտում ուժ ներկայացնենք. ահա այն հիմնական պայմանը, որով մենք ղեկավարուել ենք եւ կը ղեկավարուենք. երկրից դուրս նեղսիրտ բամբասանքներով պարապելը մենք միշտ թողել ենք եւ կը թողնենք մեր հակառակորդներին. թո՛ղ պարապեն դոքա իրենց սիրած գործով մինչ այն օրը, երբ հասարակութիւնը կ'սկսի պահանջել գործ. հէնց այդ օրը, մենք համոզուած ենք, կը լինի իրենց անկման օրը։*

Բացի այս ընդհանուր պատճառից, մենք ունենք ուրիշ հիմքեր էլ մեզ դէմ ուղղուած արշաւանքից չը վախենալու համար։

Առաջին. Արփիարը(3), *իբրեւ անմաքուր, ցածր բնաւորութեան տէր մարդ, քանի աւելի մնայ հրապարակի վրայ, այնքան աւելի պիտի ճանաչուի իր կողմնակիցներից, իր գործակիցներից եւ հետեւաբար այնքան աւելի մարդիկ պիտի զզուեցնէ, հեռացնէ իրենից (ի հարկէ, մեր կարծիքով, փոքր ի շատէ մաքուր անձնաւորութիւնների վրայ, իսկ անմաքուրները թող իր հետ մնան թէկուզ մինչ «ի վախճան աշխարհի»)։ Նազարբէկեան, Ջահանգիւլեան*(4) *արդէն Արփիարի անունը լսել չեն կարող!.....*(5) *հրաժարուել է վարչութեան անդամութիւնից Արփիարի հետ գործակցել չը կամենալու պատճառաւ. ուրիշներից մի քանիսը երկդիմի դիրք են բռնել դէպի Արփիարը։ Ո՞վ գիտէ, էգուց կամ միւս օրը աւելի վատ չէ լինելու նրա դրութիւնը։*

Երկրորդ. Ընդհանուր ժողովի վճռի համաձայն՝ մենք այժմ ձեռնարկում ենք միութեան առթիւ պատճառաբանուած մի հրատարակութեան. այդ գրուածքում Արփիարը անշուշտ կը գտնի իրեն վայել գնահատումը, եւ հետեւաբար նոյնիսկ խօսքի շրջանում մենք որոշ չափով անտարբեր չենք գտնուիլ դէպի մեր հակառակորդները։

Վերջապէս, Արթին փաշայի հետ ունեցած մեր յարաբերութիւններից

մենք, գոնէ մինչեւ այժմ, բացի օգուտը ոչ մի վնաս չենք տեսել. խօսքը չերկարացնելու համար մենք կը յիշենք այստեղ այն անհերքելի փաստը, որ մեր խմբերից շատերը յուշում են, որ փաշայի դիմումը ունի կիսապաշտօնական բնաւորութիւն, նոքա միայն աւելի ոգեւորուեցին գործով, սկսեցին իրենց աւելի ուժեղ զգալ։ Ինչ վերաբերում է այն բարոյական ստուերին, որ կարող է ձգել մեզ վրայ այդ յարաբերութիւնները — դա միայն թիւրիմացութեան հետեւանք կարող է լինել։ Սկզբում, երբ Տրդատը երեւաց այստեղ՝ խմբագրութիւնը պատասխանել էր, որ պէտք է դիմել «Դաշնակցութեան» կոմիտեներին, կարծիքներ ժողովելու համար (ապակենտրոնացման սկզբունքին համաձայն՝ խմբագրութիւնը չէր կարող ինքը պատասխանել). յետոյ բարւոք դատուեց այդ խնդիրը դարձնել Ընդհ. ժողովի խորհրդածութեան առարկայ, ու միայն Ընդհ. ժողովի ցրւելուց յետոյ խմբագրութիւնը ստացաւ որոշ վճիռ Տրդատին յայտնելու համար։ Արդ, վճիռը յայտնելուց յետոյ Տրդատը կրկին մնաց՝ փաշային տեղեկութիւն տալու եւ նրա համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը իմանալու համար։ Փաշան խիստ էր գտել եւ Տրդատի միջոցաւ մինչ վերջին ժամանակները աշխատում էր մեր պահանջները մեղմացնել տալ, կարծես մենք Ընդհ. ժողովի վճռից մի մազաչափ շեղուելը — իրաւունք ունէինք։ Տրդատը վաղուց է համոզուած, որ իր այստեղ մնալը միանգամայն աւելորդ է, բայց ինչ արած, որ թիւրքի պաշտօնեայ Արթին փաշայի ուղեղը դեռ ընդունակ չէ ըմբռնելու —, որ ամէն գործում կոմպրոմիսներ չէ կարելի անել։ Այդպիսով Տրդատը ընկած էր այստեղ, չգիտենալով ինչպէս ազատուել երկու կրակի միջից, մինչ ահա այս օրերս միայն թոյլտւութիւն ստացաւ փաշայից վերադառնալու. նա այս շաբաթ պիտի մեկնի եւ տանի իր հետ, ի միջի այլոց, մեր անպայման պահանջը — այստեղ այլեւս չը գալ առանց պաշտօնական լիազօրութեան ընդհ. ժողովի տուած վճիռների շրջանում մեզ հետ անպայման համաձայնութեան գնալու։ Մեր հակառակորդները, ինչպէս եւ Փաշան, այս երկարատեւ ժամանակամիջոցում կարող էին շատ բան մտածել, շատ բան խօսալ, նոյնիսկ հազարներ կլանել, բայց այդ բոլորը իրենց գործն է. մեր դրութիւնը սկզբից մինչ այսօր եղել է այնքան որոշ, մեր ասելիքներն ու պահանջները այնքան պարզ, որ երբեք խաբուելու կամ որեւէ չափով մեզ արատաւորելու երկիւղ չենք ունեցել եւ չունինք էլ։ Հարկաւոր բոպէին մենք ամենավստահ «սրտով», թէկուզ ամբողջ աշխարհի առաջ՝ կարող ենք հաշիւ տալ մեր ամէն մի քայլի, նոյնիսկ ամէն մի խօսքի համար։ Թող յարգելի ընկերս չի վհատուի զանազան վայրահաջութիւններից։ Ձեր բարեկամը եւս, ոտի տակ յուսալի հող զգալով, աշխատէ տալ մեր անբախտ ժողովրդի անպաշտպան շահերին այն minimum-ը, որը թոյլ են տալիս իրեն իր ուժերը եւ պայմանները։

Ձեր հեռանալը մի այնպիսի անկիւն, ինչպիսին է այժմեան Ձեր պաշտօնատեղին, հասկանալի է, որ ոչ մի կերպ չէր կարող մեզ ուրախացնել։ Մենք, ի հարկէ, չենք հերքում ընտանեկան հոգսերի ծանրութիւնը եւայլն, բայց մի-

անգամայն վստահանալով Ձեր ընկերական ներողամտութեան վրայ՝ թոյլ ենք տալիս մեզ հետեւեալ առաջարկութիւնը անելու Ձեզ. չէի՞ք կարող արդեօք դուք հիմնուել Եգիպտոսում, օրինակ՝ Ալէքսանդրիա, Ձեր մասնագիտութիւնը այնտեղ անշուշտ պահանջ կը գտնի, իսկ տեղական հայ հասարակութեան մէջ եւ Կիլիկիայի հետ յարաբերութիւններում Ձեր գործունէութիւնը չօշափելի արդիւնք պիտի տայ։ Աւելորդ չէ յայտնել Ձեզ, որ այս առաջարկութիւնը բխում է հէնց Եգիպտոսում գործող մեր ընկերներից եւ, ինչ ասել կ՚ուզի, որ միանգամայն համապատասխանում է մեր ցանկութիւններին։ Յիշեալ ընկերները, լինելով ձեռնհաս անձնաւորութիւններ՝ խնդիրը չը կշռած չը պիտի յղանային Ձեզ հրաւիրելու միտքը։ Ի նկատի ունեցէք նաեւ այն հանգամանքը, որ Ձեզ հրաւիրող ընկերները այնտեղ չեն մնալու (իրենց գործերը ունեն որոշ տեղերում) եւ հետեւաբար նոր ուժի կարեւորութիւնը այնտեղ անպայման է։

Ատրճանակների վերաբերեալ խնդիրը կը կարգադրուի Ձեր ուզածին պէս։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Տեղանունը (հաւանաբար Ֆրանսայի մէջ) կարելի է կարդալ նաեւ Ռամպիւս կամ Ռոմպուիս: Զարիֆեանը ծածկանունն է բժ. Յովհ. Լորիս-Մելիքեանի (1862-1931), անդամ Հ.Յ.Դ. առաջին Կեդր. վարչութեան, ապա Ֆրանսա հաստատուած՝ ներկայացուցիչ Pro-Armenia-ի խմբագրութեան մօտ, եւ պատասխանատու հայկական հարցի քարոզչութեան՝ արեւմտեան Եւրոպայի մէջ:

2.- Փաշան՝ Արթին փաշա Տատեանն է (1830-1901), փոխ-նախարար Օսմ. Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան, որ Ապտիւլ Համիտի կողմէ պաշտօն ստացած էր բանակցելու Հ. Յ. Դաշնակցութեան հետ: Տրդատ պէյ Տատեանն էր, իր եղբօրորդին, որ ընդհանրապէս Ժընեւ՝ Դաշնակցութեան Արեւմտեան բիւրոյի հետ կը վարէր բանակցութիւնները:

3.- Արփիար – ծանօթ գրագէտ Արփիար Արփիարեանն է, անդամ Վերակազմեալ հընչակեաններու կեդրոնին: Դաշնակցութեան համար անոր անձին անվստահելիութիւնը պիտի հանդիսանար արգելքներէն մէկը երկու կուսակցութեանց միջեւ միութիւն առաջացնելու փորձերուն:

4.- Նազարբէկեան Աւետիս եւ Ջհանգիւլեան Յարութիւն հնչակեան ծանօթ ղեկավար դէմքեր:

5.- Անընթեռնելի անուն:

7

Մատեան No 84, *էջ* 297-299

15/27 *դեկտեմբեր* 1898

Վահանին(1), *Ալէքսանդրիա*

Սիրելի!

Ստացանք դեկտեմբերի 17*ից գրածդ, որ ուղղած էիր Վահաբին*(2)։ *Բայց այդ նամակին դառնալուց առաջ՝ մի երկու խօսք տեղիդ կոմիտէից ստացուած մի նամակի առթիւ։*

Նախ՝ աւելորդ չենք համարում այդ նամակից այստեղ բերել հետեւեալ կարծիքը. «Փափազեանը (այդտեղ գտնուող «մարտականը»), որուն մասին թիւրիմացութեամբ լաւ համարում կազմած էինք, այժմ, դժբախտաբար, կը տեսնենք, որ ամէն մասամբ համակարծիք է Արփիարին(3)*. կ՚երեւի՝ թէ վարչութեան ատենապետ ընտրուիլը մոռցնել տուած է իրեն Ամերիկայէն բերած դժգոհութիւնները»։ Ալէքսանդրիայի կոմիտէի այս խօսքերը բերելով, մենք կ՚ուզենայինք կոմիտեի անդամների վրայ այդ մարդու արած տպաւորութիւնը քեզ հաղորդել, եթէ ձեր մէջ (քո եւ կոմիտէի անդամների մէջ) այդ մասին արդէն խօսակցութիւն չէ եղել։ Փափազեանի իսկական պատկերը պարզելը կ՚օգնի քեզ նրա հետ ունեցած յարաբերութիւններում աւելի որոշ դիրք բռնել։*

Երկրորդ՝ կոմիտեին գրաւոր կերպով ոմանք դժգոհութիւններ են յայտնել քո դէմ։ Պահանջիր կանոնաւոր քննութիւն եւ վերջնական վճռի արձանագրութիւն։ Լիայոյս ենք, որ մեր կոմիտեը կարող կը լինի խնդրի պահանջած բարձրութեան վրայ մնալ եւ պարզել դժգոհութիւնների իսկական պատճառները։ Մեզի, ի հարկէ, ցաւ կը պատճառի քո մեղադրելը, բայց դորանից աւելի զգալի հարուած կը լինի մեզ համար, եթէ մենք տեսնենք, որ քննութիւնը տանող «դաշնակցական» մի մարմին չը կարողանայ անպայման արդարութեան ճանապարհից չչեղուել։

Դառնանք այժմ քո նամակում յարուցած հարցերին։

Մուրատի(4) *մասին կայացած համաձայնութեանը մենք ամէն կերպ համակրում ենք եւ ի սրտէ ցանկանալով յաջողութիւն, ողջունում ենք այդ առաջին կոնկրետ դէպքը, որի նմանները եթէ ապագայում կրկնուին՝ մենք կ՚ունենանք հող երեւի հասկանալու, իրար հաւատալու, իրար յարգելու, աջակցելու, ընկերանալու համար։ Ինչ ասել կ՚ուզի, որ, որքան մեզանից կախուած կը լինի, մենք ամենայն անկեղծութեամբ կ՚օգնենք «Մուրատի ազատման խնդրով զբաղող մասնաճիւղին»։*

Քո առաջարկութիւնը — զանազան տեղերում միտինգներ կազմակերպել եւ դիմումներ ներկայացնել «զինաթափութեան համաժողովին» — միանգա-

մայն եւ կարեւոր է եւ իրագործելի։ Մի անգամ մենք այդ մասին արդէն խոսել ենք, բայց այս շաբաթ կրկին մի անգամ աւելի բազմամարդ ժողովում այդ հարցը լրջօրէն կը քննենք եւ այնուհետ կարեւոր խորհուրդները կը ցրւենք, ուր կարելի եւ հարկաւոր է։ Այս մասին բաւարացուցիչ պատասխան մեր կողմից հետեւեալ անգամ, ուրեմն։

Յաճախ չօշափում ես Սեպուհի(5) երկիր գնալու խնդիրը։ Բայց չէ՞ որ, սիրելի Վահան, պատասխանատու մարմինների վերաբերմամբ Ընդհ. ժողովի ընդունած վճիռներից, ինչպէս եւ կատարւած ընտրութիւններից յետոյ, այդ տեսակ հարցերի մէջ խառնւելը արդէն մեր գործը չէ։ Մարդիկ իրենք են պատասխանատու. հետեւաբար, իրենք էլ պիտի ազատութիւն ունենան իրենց ստանձնած գործը այսպէս կամ այնպէս կարգադրելու։ Միակ բանը, որ մենք կարող ենք պահանջել — այդ այն է, որ մարմնի փոխարէն մի անդամը միայն կարգադրութիւններ չանէ։ Բայց դրա համար էլ մենք միայն յիշեցնել կարող ենք, որ այս կամ այն անդամը չբացակայէ իր շրջանից — ուրիշ ոչինչ։ Հէնց այդպէս մտածելով՝ մենք Սեպուհին արդէն գրել ենք, որ բերել տան իրենց երրորդ անդամին եւ բացի դրանից պահանջեն մեզնից (Արեւմտեան բիւրոյից) չորրորդ անդամը։ Երեւի, իր կողմից կարեւորը նա արել է. մենք էլ մեր կողմից կը դիմենք ընտրւած երրորդ անդամին։ Հէնց որ պատասխանատու մարմնի անդամներից գոնէ երկուսը այդտեղ պատահեցին իրար՝ թող իրենք՝ խորհրդակցելով Մարի(6) կամ չորրորդ անդամի հետ (կարծիք հարցնելով)՝ կարգադրեն իրենց անելիքները եւ գործունէութեան տեղերը։ Մեզ թւում է, որ քո դրած հարցը միայն այս ձեւով կարելի է փակել, եթէ չենք ուզում հակասել ընդունւած վճիռներին եւ ընտրւածների պատասխանատուութեան սկզբունքին։ Ի հարկէ, մասնաւոր կերպով, իբրեւ անձնական բարեկամ, մեզնից մէկը միւսը կարող է գրել Սեպուհին իր կարծիքը այս կամ այն տեղը գնալ կամ չգնալու մասին, բայց այդ արդէն Բիւրօ-ի գործ չէ։

.....(7)

Ծանօթութիւնները վստահելի են՝ ապա գրեն այդ մասին մանրամասն քեզ։ Ի նկատի ունեցիր, որ Սամսոն(8) է ուզում մտնել Քեռին (Դերսիմի, քեզ, ի հարկէ, ծանօթ)։ Այդ տեղեկութիւնները պիտի դիւրացնեն նրա մուտքը, եւ այլն։ Եթէ ստացար կարեւոր տեղեկութիւններ՝ անմիջապէս ուղարկիր Բաթում, կոմիտէի հասցէին, խնդրելով յանձնեն իսկոյն Քեռիին։

Սրա հետ միասին ուղարկում ենք մի նամակ եւ 3 օրինակ «Քիւրդիստան» թերթից Խարբերդ ճանապարհելու համար։

Թերթերի փոխադրութեան համար կարեւոր ծախսը խնայելու չէ. արդէն առանց այն էլ մինչեւ այժմ Բաթ[ում]ի գծի համար երբեմն մինչեւ 25 ֆրանկ ենք վճարել. խնդիրը ապահով տեղ հասնելու մասին է։ Տեղեկութիւն ունիս արդեօ՞ք, որ նախորդ ուղարկվածները Կարմրաթշիկին(9) հասել են։

Ջերմ բարեւներով

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Հաստատում ենք մեր նամակը դեկտեմբերի 20-ից

ԲԻՒՐՕ

1.- Վահան – ծածկանուն Մատինեան Նիկոլի:
2.- Վահաբ – ծածկանուն Վռամեան Արշակին, իսկական անունը Օննիկ Դերձակեան:
3.- Արփիար – ծանօթ գրող Արփիար Արփիարեան:
4.- Խօսքը կը վերաբերի, շատ հաւանաբար, հնչակեան ծանօթ ղեկավար Համբարձում Պոյաճեանի (Մուրատ), որ 1894 թ. Սասնոյ ապստամբութիւնը ղեկավարած էր եւ ապա ձերբակալուած եւ աքսորուած:
5.- Սեպուհը, այս պարագային, Հայկ Թիրեաքեանն է (Հրաչ):
6.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլ (1869-1931):
7.- Պատճէնը գրեթէ անընթեռնելի թուանշային ծածկագրով երկու տող, ուր խօսք կայ Սամսոնի, Խարբերդի եւ Դերսիմի Քեռիին (Շիշմանեան Ռուբէն) մասին:
8.- Այս եւ յաջորդ շեղագիր տառերով շարուած բառերը բնագրին մէջ ծածկագրով (շիֆրէ) են, որոնք կը բացուին «Մայր Արաքսի ափերով»ի շարքով:
9.- Կարմրաթշիկ – ծածկանուն Մարգարեան Մարտիրոսի:

8

Մատեան No 81-2, *էջ* 46 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Քր. Միքայէլեանի ձեռագրով շարադրուած գրութիւն, որ համապատասխան մարմնի՝ Կ. Պոլսոյ Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէի կողմէ պէտք է ուղղուէր Օրմանեան պատրիարքին:

31 [*դեկտ.* 1898] — 12 *յունվար* 1899 *թ.*
(*Պոլսոյ կոմիտէի կողմից*)

Տէր Մաղաքիա Արքեպիսկ. Օրմանեան
Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Սրբազան հայր,

Քանի մը օրէ ի վեր լուրեր կը պտտին, թէ հայոց պատրիարքարանը, կառավարութեան ստիպման վրայ, կը պատրաստուի գոհունակութեան գիր մը մատուցանել պալատը։

Թէեւ կը սիրենք չհաւատալ այդ լուրերուն, բայց պարտք կը համարինք փութալ Ձեզ յայտնել, թէ այդօրինակ որեւէ դիմում՝ կետր. կոմիտէիս կողմէն պիտի նկատուի իբր ազգադաւան արարք մը։

Ընդունեցէք մեր յարգանքներուն հաւաստիքը
(*կնիք*)

9

Մատեան No 84, *էջ* 308-310

7 *յունվար* 1899

Գահիրէի կոմիտէին,

Ընկերներ,

Անցեալ տարուայ հոկտեմբեր 10-*ից*[?] *եւ նոյեմբեր* 21-*ից ձեր գրած նամակները ստացուած են։ Վերջին ձեր գրութեան մէջ արած առաջարկները, որը վերաբերում էր Աբաբկիրին*(1) *պատճառ եղաւ մեր պատասխանի ուշանալուն. հարցը կարեւոր էր, եւ պահանջուեց նախօրէն որոշ տեղեկութիւններ ժողովել։ Մի քանի հանգամանքներ մեզ յաջողուեց պարզել, միւսները ոչ։ Այդպէս, օրինակ, մինչեւ այժմ մենք ոչ մի պատասխան չստացանք Դանիէլ Հացագործեանից, թէեւ վաղուց իրեն գրել էինք։ Ստիպուած ենք գրել ձեզ, ի նկատի առնելով այն պայմաններ, որոնք պարզուած են։*

Երկու անձանց երկիր անցնելու դիտաւորութիւնը, ի հարկէ, համակրելի է. բայց ահա մեր կարծիքը դոցա արած պահանջների վերաբերմամբ — կարծիք, որը կազմուած է խնդրին լաւատեղեակ աղբիւրներից ստացած ցուցմունքներից։

1) *Պայթուցիկ նիւթեր պատրաստել սովորելը ներկայ հանգամանքներում, բոլորովին աւելորդ է դառել, որովհետեւ շատ հեշտութեամբ եւ ուզած չափով մենք կարելիութիւն ունենք ձեռք բերել պատրաստը։ Ի հարկէ, եթէ կարողանայինք մենք հէնց երկրումը պատրաստել այդ նիւթերը, դրանով միանգամից ազատուած կը լինէինք փոխադրութեան բոլոր դժուարութիւններից. բայց գործին ծանօթ անձնաւորութիւնների միահամուռ կարծիքն է, որ երկրում անկարելի է գտնել հարկաւոր քանակութեամբ այն նիւթերը, որոնցից ստացուած է ուժանակը, մանաւանդ որ այդ նիւթերը պիտի լինեն շատ մաքուր տեսակից։ Գուցէ առարկուի, թէ աւելի հեշտ է նիւթերը փոխադրել, քան պատրաստը. բայց մի կողմից դժուար է երաշխաւորել, որ նիւթերի փոխադրութիւնը արգելքների չի հանդիպիլ, եւ միւս կողմից, որ այդ նիւթերը փոխադրութեան միջոցին չեն կեղտոտուիլ, այն ինչ նիւթերի անպայման մաքրութիւնը անհրաժեշտ է գործի համար։ Աւելացրէք ասածների վրայ եւ այն, որ ուժանակ պատրաստելը — ինչքան եւ ինքնըստինքեան հասարակ բան է, բայց եւ այնպէս պահանջում է որոշ յարմարութիւններ եւ յամենայն դէպս մի հմուտ մարդու մշտական ներկայութիւն (եթէ, ի հարկէ, շատ է պատրաստուելու), եւ դուք կը տեսնէք, որ փոխանակ նիւթերի՝ աւելի նպատակայարմար է ուղղակի պատրաստը փոխադրել, մանաւանդ որ*

պատրաստը շատ տեղ, գուցէ, չճանաչվի էլ, եթէ նոյնիսկ գտնելու էլ լինեն։

Այդպիսով մեզ թւում է, որ եթէ այդ երկու անձինք ուղղակի այժմ երկիր մտնէին եւ աշխատէին դրսի այս կամ [այն] կէտերի հետ կապ ու յարաբերութիւններ ստեղծել եւ նախապատրաստուել փոխադրութեան համար կարեւոր պայմաններում — այն ժամանակ կարող կը լինէին իրենց ուզածը ստանալ պատրաստ եւ ինչ քանակութեամբ կամենային։ Մենք կարող ենք երաշխաւոր լինել, որ մեր կողմից ամէն դիւրութիւններ կը տրւի պատրաստ <u>ուժանակի,</u> թէկուզ մի ամբողջ պահեստ ունենալ իրենց ցոյց տուած կէտում։ Պատրաստը ունի եւ այն առաւելութիւնը, որ երբեք վտանգաւոր չէ — ոչ պահելու համար, ոչ շարժելու, փոխադրութեան միջոցին։

Ինչ վերաբերում է <u>հրոսակային խումբեր</u> կազմելու մտադրութեան, որոնց համար կարեւոր <u>գէնքերի</u> հարցին՝ մենք հարկաւոր չափով գաղափար չունենալով այդ երկու անձանց վրայ, կ՚առաջարկէինք ձեզ կանգ առնել հետեւեալ երկու ելքից մէկի վրայ։ Եթէ այդ մարդիկ (կամ դոցանից մէկը գոնէ) բաւականաչափ վստահելի ուժեր են, ունեն փոքր ի շատէ փորձառութիւն, գրագէտ են եւ կարող են, որոշ ծրագիր ստանալով, դրա համաձայն տեղումը տանել կազմակերպութեան գործը — այն ժամանակ ուղարկեցէք դրանց Ալեքսանդրիա Վահանի եւ Սեպուհի(2) մօտ. թող նրանք խօսան հետները եւ հարկաւոր խորհուրդները տալով՝ ճանապարհեն երկիր. այս միանգամայն կարեւոր է այն տեսակէտից, որ Սեպուհը, մասնակցած լինելով Ընդհ. ժողովին, գիտէ առ հասարակ հրոսակային խմբերի մասին ընդունուած վճիռները եւ տեղին յարմար ցուցմունքները կը տայ։ Այդ մասին մենք կը գրենք Վահանին եւ Սեպուհին։ Իսկ եթէ մարդիկ անկարող են պատասխանատու կազմակերպական գործեր ինքնուրոյն վարելու, այդ դէպքում ուղղակի խորհուրդ տուէք իրենց՝ երկիր մտնեն եւ միմիայն իրենց համակրողներ գտնելու խնդրով զբաղուին առանց որեւէ գործնական քայլ անելու։ Դոցա ուզած տեղը, երեւի, կ՚անցնի մեր մօտից եւ փորձառու ընկերներից մէկը նոյն ժամանակ մեր յանձնարարութեամբ նա ինքը կը գտնի դրանց եւ անելիքների մասին, ի հարկէ, բազմակողմանի կերպով կը խօսայ, կը համաձայնուեն։ Այս երկրորդ դէպքում, ուրեմն, թող գնան եւ սպասեն մեր ընկերոջը — աւելի ոչինչ. Վահանին ու Սեպուհին տեսնելն այս դէպքում աւելորդ կը լինի։

Ոսկան Նազարեանցի մասին մենք առ այժմ կարող ենք ձեզ յայտնել միայն, որ դա Դաշնակցութիւնից արտաքսուած մարդ է. Պարսկաստանում դա ենթարկուած է ընկերական դատի եւ տեղական կոմիտէի վճռագրով եւ յայտարարութեամբ հեռացրուած։ Մենք ուզել ենք հեղինակաւոր աղբիւրից հարկաւոր տեղեկութիւններ. ստանալուն պէս, ի հարկէ, կը հաղորդենք ձեզ։

Յայտնելով մեր ջերմ ցանկութիւնները ձեր նորակազմ կոմիտէին՝ յոյս ունենք, որ Գահիրէի հայութիւնը, վերջապէս, մի օր պիտի արդարացնի տարիների ընթացքում իր յեղափոխական կոմիտէ ունենալը։ Ինչպէ՞ս է գնում

դրամական գործը. ինչքա՞ն մեծ ծաւալ է ստանում ձեզ հետ կապուողների թիւը. կ՚արտադրի արդեօ՞ք այդտեղի երիտասարդութիւնը մեր անբախտ ժողովրդի դատին նուիրեալներ։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.– Նոր կարգադրութեան մը համաձայն յունուարէն սկսած Դրօշակը 16 երեսի պիտի հրատարակուի. ուստի դեկտեմբերի թիւը մէջ խաղաց:

ՆՈՅՆ(3)

1.- Այս եւ յաջորդ ընդգծուած բառերը բնագրին մէջ թուանշային (շիֆրէ) ծածկագրութիւն են. կը բացուին «Մայր-Արաքսի ափերով»ի շարքով:

2.- Վահանը ծածկանունն է Նիկոլ Մատինեանի, Սեպուհը՝ Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):

3.- Բարեւագիրը եւ յետ գրութեանը կը պատկանին Միք. Վարանդեանի ձեռագրին:

10

Մատեան No 84, *էջ* 338-9

10 *փետրուարի* 1899

Ս. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ, Փարիզ

Ընկե՛ր,

Բրօշիւրը կարդացուեց,- եւ ահա մեր պատասխանը։

Գրուածքը բոլորիս վրայ՝ ընդհանուր առմամբ՝ լաւ տպաւորութիւն գործեց եւ մենք միանգամայն ուրախ կը լինէինք այդ գրութիւնը տպագրուած տեսնել։ Բայց՝ ելնելով մի քանի հանգամանքներից որոնք կարող էին բրօշիւրի ազդեցութիւնը աւելացնել՝ մենք ընդունեցինք հետեւեալ որոշումները։

1. *Մենք յանձն կ՚առնենք բրօշիւրի տպագրութիւնը այն ձեւով, ինչ ղրկւած է մեզ, եթէ յարգոյ հեղինակները՝ կամ նրանցից մէկը դնէր հրատարակութեան վրայ իր ստորագրութիւնը։*

2. *Եթէ առաջարկութիւնը որեւէ պատճառով չընդունուի, այն ժամանակ մենք կը տպագրենք Գ. ստորագրութեամբ, եթէ յարգոյ հեղինակները՝ մեր համաձայնութեամբ՝ գրուածքի մի քանի տեղերը փոքրիկ կրճատումների ենթարկէին (օրինակ, երկար եւ սառը յառաջաբանը, որը հէնց սկզբից չէ գրգռում ընթերցողի հետաքրքրութիւնը, մի քանի կրկնութիւններ, մի քանի փակագծեր, որոնք դժւարացնում ենք ընթերցանութիւնը, եւ վերջապէս՝ մի քանի, մեր կարծիքով, անյարմար նկատողութիւններ այս կամ այն անձնաւորութեան վերաբերմամբ)։*

3. *Ցամենայն դէպս պարտք ենք համարում աւելացնել, որ կարող ենք բրօշիւրը հրատարակել միայն մինչեւ փետրուարի վերջը կամ մարտի սկիզբը։*

Այսուհետ ուղարկում ենք եւ բրօշիւրը, որը կարող է հարկաւոր լինել յարգոյ հեղինակներին։

Բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

11

Մատեան No 84, *էջ* 340-44

12 *փետրվարի* 1899

Բերլինի կոմիտէին

Ընկերներ!

Ներեցէք, որ ձեր նամակին ուշ ենք պատասխանում։

Ձեր հարցը, այսինքն այն հարցը, որը դնում է Բեկզադէն(1) *իր յունվարի* 11-*ին գրած նամակում եւ վերաբերում է կոմիտէների եւ բիւրօների փոխադարձ յարաբերութիւններին — վերջին ժամանակս ստացել է մի տեսակ ընդհանուր բնաւորութիւն, եւ մենք կամայ-ակամայ ստիպուած ենք այդ հարցի վերաբերմամբ յայտնել մեր կարծիքը, նախ՝ միմիայն ընդհանուր հողի վրայ մնալով։*

Բանը նրանում է, որ վերջին ժամանակները այլ եւ այլ տեղերի ընկերների մէջ ցանկութիւն է ծագել տեղական օրգաններ հիմնել։ Այս երեւոյթում արդէն արտայայտւում է հայի այն անհատականութիւնը, որով բացատրւում է, օրինակ՝ հէնց ներկայումս արտասահմանեան զանազան երկրներում հրատարակւող բազմաթիւ թերթերի գոյութիւնը։ Թւեցէք այժմ լոյս տեսնող հրատարակութիւնները արտասահմանում եւ անշուշտ կը զգաք, թէ որքան տգեղ երեւոյթ է դա։ Վառնա քաղաքը Բօլղարիայում ուի իր «Շարժումը», «Իրաւունքը», «Տաւրոսը» եւայլն։ Աթէնքը — իր «Միութիւնը», Աղէքսանդրիան ունէր իր «Փարոսը», Նիւ Եորկը ունի իր «Տիգրիս» եւ «Եփրատը», Մանչեստերը — իր «Վաղուան Ձայնը», Լոնտոնը — իր «Մարտը» եւ «Նոր կեանքը», Փարիզը — իր «L'Arménie-*ն» եւ «Անահիտը», Մարսէյը — իր «Արմենիան» եւայլն եւայլն։ Եթէ ընդունենք, որ սոցանից մի քանիսը ունին որոշ* raison d'être(2), *ապա մնացածի, առնուազը՝ է*?... *Ցանկալի է արդեօք՞, որ այս հրէական անձնապաշտպանութիւնը (մանաւանդ ներկայ օրերում, երբ ամբողջ հայութիւնը միմիայն մի հարցի վրայ պիտի կենտրոնացած լինի) գնալով օր-աւուր զարգանայ։ Եւ եթէ այս ցանկալի չէ ընդհանուր տեսակէտից՝ ապա որքան ցանկալի կարող է լինել «Դաշնակցութեան» համար իր մարմինների վերաբերմամբ...*

Մենք չենք գտնում բաւականաչափ պատճառներ մեր կոմիտէների այդ ձգտումը արդարացնելու համար։ Ընդհակառակը՝ մենք տեսնում ենք մի շարք պայմաններ, որոնք միանգամայն հերքում են կոմիտէների այն անկախ հրատարակութիւնների կարեւորութիւնը։ Ահա այդ պայմանները։

1.- *Մենք համոզուած ենք, որ այդ կոմիտէները չեն ունենալ բաւականաչափ ուժ ժամանակակից էական պահանջների սահմաններում տանելու գործը։ Հրապարակի վրայ հազարաւոր մարդկանց առաջ ելնելը, նրանց սովորեցնելը — այնքան հեշտ բան չէ, որքան կարելի է, թւում է, երբ մարդ յափշտակւում է այդպիսի դերով։ Անցեալների փորձից մենք յիշում ենք մի քանի օրինակներ, երբ կոմիտէների թռուցիկները որքան անբաւարար կերպով էին կազմուած, որ մենք ուրախ կը լինէինք, եթէ դոքա բնաւ լոյս տեսած չը լինէին։*

2.- *Դաշնակցական կոմիտէների հոգսերը պիտի լինին, գլխաւորապէս ընդհանուր ժողովի կողմից ընդունուած կազմակերպական ձեռնարկներին ուժ տալու խնդիրները եւ ոչ թէ խօսքի շրջանում զանազան հարցերով զբաղուելը։ Մենք չենք հերքում, որ որոշ հանգամանքներում խօսքն էլ գործ պիտի համարւի, բայց, մեր կարծիքով, ներկայումս, երբ շատ կարեւոր հարցեր ինքը կեանքը արդէն պարզել եւ վերածել է որոշ գործնական պահանջների,— խօսքով — եւ այն էլ ով գիտէ, ինչ տեսակի խօսքով՝ շատ զբաղուելը — միմիայն յետադիմութեան նշան պիտի լինէր մեզ համար։*

3.- *Եթէ կոմիտէները իրենց կռիւը, իրենց գործունէութիւնը սահմանափակեն թղթի դաշտով միայն եւ դրա համար ծախսեն իրենց եկամուտները — ապա ի՞նչ աղբիւրներից պիտի լրացուեն ընթացիկ գործնական ձեռնարկները, որոնց պիտի յատկացւի մեր միջոցների մեծագոյն մասը։*

4.- *Եթէ կազմակերպութիւնը այս կամ այն կոմիտէից ոչ փող է ստանալու, ոչ էլ կարող է վստահ լինել, որ այդ կոմիտէների հրատարակութիւնները միանգամայն կարեւոր բաներ կը լինեն (եթէ չասենք նոյնիսկ ոչ-ցանկալի) — ապա ի՞նչ օգուտ կազմակերպութեան այդպիսի կոմիտէներից, ինչով պիտի հանդիսանան դոքա ամբողջի մէջ իբր օգտակար, իբր կարեւոր մաս։*

5.- *Եթէ մի շարք կոմիտէներ պիտի զբաղուեն հրատարակութիւնների խնդրով՝ ապա ո՞ւր էր կազմակերպութիւնը իր ուժերից եւ միջոցներից մի մասը յատկացնում հրատարակութիւնների գործին, ո՞ւր էր հաստատում մի ամբողջ խմբագրութիւն, պարտաւորեցնելով նրան տանել թէ թերթը, թէ բրօշիւրների հրատարակութիւնը, թէ ֆրանսերէն յաւելուածը եւայլն։*

6.- *Եթէ կոմիտէները բաւականաչափ պատրաստութիւն ունեն հրատարակութիւնների համար, թո՛ղ գրեն մեր թերթում, թող մեզ աշխատակցեն. բացի մեր թերթից՝ թող գրեն օտար թերթերում, որոնց ազդեցութիւնը նոյնիսկ հայերի վրայ աւելի է քան մեր հրատարակութիւնները։ Թո՛ղ հետեւեն այդ թերթերին, եւ տան մեզ քաղուածքներ, նիւթեր արեւելեան հարցի վերա-*

բերմամբ. թո՛ղ ուսումնասիրեն մեզ համար անհրաժեշտ առանձին հարցեր, օգտուելով մասնագէտների խորհուրդներից եւ արտասահմանեան հարուստ գրադարաններից, ու տան մեզ մոնոգրաֆիաներ, էդիւտներ(3) (յօժարութեամբ մենք էլ մեր կողմից կարող էինք դիմումներ առաջարկել)։ Թո՛ղ գտնեն օտար գրողների մէջ աշխատակիցներ մեզ համար կամ համակրողներ մեր դատին եւ դրանով մեր դատի կենդանութիւնը պահպանեն եւն եւն։

7.- Վերջապէս, եթէ երկու-երեք կոմիտէ իրենց ուժեր եւ միջոցները նուիրելու լինեն հրատարակութեան գործին՝ ինչո՞ւ չատ կոմիտէներ չեն կարող նոյն անել։ Այո, բաւական են մի երկու օրինակներ — եւ ահա կ՝ստեղծուեն պրեցեդենտներ(4), որոնք միանգամայն չեն համապատասխանում կազմակերպութեան ընդհանուր տրամադրութեան։ Սխալ է հասկացւում կազմակերպութեան ապակենտրոնացման սկզբունքը այս հարցում։ Հրատարակութիւնների վերաբերմամբ «Դաշնակցութիւնը» չէ ընդունել ապակենտրոնացում։ Ապակենտրոնացում՝ ընդունվում է կոմիտէի շրջանում գործերը վարելու ինքնա[վա]րութեան տեսակէտից, որոնց համար էլ պատասխանատու են իրենք կոմիտէները։ Բայց երբ հրատարակութիւնը կրում է կազմակերպութեան անունը, այդ դէպքում պատասխանատուութիւնը ընկնում է արդէն ամբողջ «Դաշնակցութեան» վրայ, եւ դրա համար էլ ընդհանուր ժողովը ինքն է միշտ ընտրում խմբագրական մարմին։ — Այս բոլորը, կրկնում ենք, անում ենք ընդհանուր հողի վրայ մնալով։

Գալով յատկապէս «Մոլէկիւլի»(5) դրած խնդրին՝ կարելի է այդ հարցին պատասխանել պաշտօնական եւ ընկերական տեսակէտներից։ Պաշտօնական, ձեւական տեսակէտից՝ մենք վճիռ չունենք յատկապէս ձեր վերաբերմամբ, ընդհանուր ժողովները գբաղւում են միայն ընդհանուր կանոններ, հարցեր մշակելով եւ այդ կողմից կազմակերպութիւնը միանգամից արդէն ընդունել է, որ կոմիտէները իրաւունք ունեն միայն թռուցիկներ հրատարակել իրենց անունից։ Ինչ վերաբերում է ձեր դրամի հարցին՝ քանի որ Եւրոպայում գտնուող կոմիտէները չունին իրենց կենտրոնական կոմիտէն, դոքա պիտի աշխատեն հաստատել այդպիսի մի կոմիտէ, եթէ դա կարելի են համարում, իսկ մինչ հաստատելը՝ Արեւմտեան բիւրօն պիտի լինի այդպիսի մարմին։ Այս բոլորը պարզ է, եթէ չուզենանք պարզապէս հակասել ընդունված ընդհանուր վճիռներին։ Բայց՝ ի նկատի ունենալով ձեր տրամադրութիւնը՝ մենք բաւականութիւն տրված չը պիտի լինինք ձեզ, եթէ բաւականանանք այդ պաշտօնական ցուցմունքներով։ Ուստի՝ կամենալով մնալ մեր յարաբերութիւններում ընկերական հողի վրայ՝ մենք նպատակայարմար ենք համարում ամէն անգամ դնել կոնկրէտ կերպով, եւ այնպէս համաձայնութեան գալ։ Դուք ուզում էք անպատճառ ձեր դրամները մսխել ձեր հրատարակութիւնների վրայ։ Իրաւունք ունէք թէ ոչ — այդ թողնում ենք մի կողմ եւ աշ-

խատելով չչեղվել ընդհանուր որոշումներից՝ խնդրում ենք գրել մեզ, թէ ինչ բան էք ուզում հրատարակել կամ ուղղակի ուղարկել մեզ ձեր հրատարակելի գրուածքը, որպէսզի ծանօթանանք հետը։ Դրանից յետոյ մեզ համար դժուար չի լինել որոշել՝ ընդունել արդեօք այդ գրուածքը Դաշնակցութեան անուան թէ ոչ։ գուցէ, չհաւանելով ձեր ձեռագիրը, մենք առաջարկենք ձեզ ուրիշը, որին դուք հաւանէք, եւ այդպիսով ձեր միջոցները նրա հրատարակութեանը յատկացնէք եւն եւն։ Ահա միակ ելքը, մեր կարծիքով, ներկայ դրութիւնից, եթէ ընկերական հողի վրայ մնալով հանդերձ, աշխատելու լինինք չչեղուել ընդհանուր կանոններից։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Բեկզադէ – այս ծածկանունով մեզի ծանօթ է մէկ ընկեր, որ 1905-6 տարիներուն անդամ էր Երեւանի կեդր. կոմիտէին. իսկական անունը՝ Ռուբէն Մելիք-Մուսեան:
2.- Ֆրանսերէն՝ գոյութեան իմաստ:
3.- Մենագրութիւններ եւ ուսումնասիրութիւններ:
4.- Նախընթացներ:
5.- «Մոլէկիւլ» անունն էր Պերլինի կոմիտէութեան, բաղկացած մեծ մասամբ ուսանող-ուսանողուհիներէ:



12

Մատեան No 81-2, *էջ* 60-65 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին ուղղուած Քրիստափորի այս գրութիւնը եւս ունի սեւագրութեան բնոյթ, եւ սահմանուած էր գաղտնի թանաքով արտագրուելու: Հոն արծարծուած բազմազան խնդիրներու կարգին, յատկանշական է Քրիստափորի ցարդ անյայտ մնացած առաջարկութիւնը՝ Երուսաղէմ աքսորուած Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Իզմիրլեանը Եւրոպա «փախցնելու» ծրագրին մասին: Մեզի անծանօթ պատճառներով՝ առաջարկը գործնական հետեւանք չէ ունեցած, բայց եւ այնպէս նման գաղափարի մը յղացումը կը վկայէ անգամ մը եւս մեծ յեղափոխականին յանդուգն խառնուածքին մասին:

29 *մարտ* [18]99

ԱՐԵՒԵԼԵԱՆ Բ[ԻՒՐՕ]ԻՆ

Սիրելիք,

Ստացանք գրաշարի հետ ուղարկած ձեր նամակը եւ միւս թերթերը։

Արտագրութիւնները, ընդհանուր առմամբ, մեզ վրայ լաւ տպաւորութիւն թողին. թւերի մեծութիւնը միայն, կասկածում ենք, տեղ-տեղ կարող է հազար ու մի խօսակցութիւնների առիթ տալ, տեղ-տեղ էլ ճնշող, վհատեցնող ազդեցութիւն ունենալ, որովհետեւ մի քանի շրջանների համար ուղղակի անիրագործելի պիտի լինին ընդունուած պահանջները։ Եթէ առանց կենտրոնական տեղերը յիշելու (որ իսկապէս տակտիկայի խնդիրը պարզում է), առաջ բերելով միայն ծախս պահանջող առարկաները, ու ընդհանուր խօսքերով ընդունելիք ուրիշների[?] մուտքի կրկնապատիկը միայն — մեզ թւում է, աւելի լաւ կը լինէր։ Ստիպողական միջոցների դիմելը նոյնպէս զգուշութիւն է պահանջում։ Ժամանակին, ի հարկէ, դուք կը կշռէք հանգամանքները, բայց մենք ընդհանրապէս վախենում ենք այդ կրիտիքական միջոցից մանաւանդ Սարուստանում(1)։ *Եթէ չանւի էլ այդ միջոցը, մենք կարծում ենք, իբր փորձ, աւելի լաւ կը լինէր սկսել արտասահմանում։*

Ինչպէս վերեւը ասացինք, մեզ վրայ արտագրութիւնները ընդհանրապէս լաւ տպաւորութիւն արեցին եւ մենք որոշեցինք, հիմք վերցնելով ձեր որոշումները, մեր շրջանումն էլ նոյնատեսակ մի բան ցրւել։

Շէկի[?], *Գիսակի եւ երկու Լեւոնների*(2) *մասին կայացած համաձայնութիւնը նոյնպէս կարեւոր է. ցանկանում ենք կատարել յաջողութիւն։*

Գուրգէնի յարաբերութիւնները Աղբերի(3) հետ այժմ վատ չպիտի լինին։ Վերջին կուից յետոյ (No 1), որի նկարագրութիւնը ուղարկել էր մեզ Գուրգէնը, նրանք մի տեղ, միասին են։ Գրեցիք արդեօ՞ք Գուրգէնին եւ Աղբերին այն կողմերի վերաբերմամբ ընդունուած որոշումների մասին։ Մենք որոշում ենք չարունակ, որ Գուրգէնի տեղում կարող է օրից-օր մի բան բռնկիլ, որը իր հաւանական զոհերով ներկայիս ցանկալի չէ։

Սաքօ-ի(4) մասին լրագրային տեղեկութիւն կար, որ ռուսաց դեսպանը միջամտել է։

Սեպուհի(5) վարդապետը կարող էր օգտակար լինել։ Երբ կազմակերպութեան կարիքները մեծ են, հաւանականութիւն ունեցող այդպիսի միջոցներից եւ ոչ մէկը չպէտք է անտես առնել։ Երբ Սեպուհը մեզ դիմեց՝ մենք մատնացոյց արինք ձեր համաձայնութեան անհրաժեշտութեան վրայ, յայտնելով եւ մեր կարծիքը. իսկ յետոյ, երբ նկատեցինք, որ մենք կարող ենք խնդրի ձգձգուելուն պատճառ լինել՝ գրեցինք, որ թողնում ենք նրանց եւ ձեր վճռին։ Կարծում ենք, որ կրկին դեռ կարելի է օգտուել դէպքից, եթէ դուք ազատ ընկեր կ՚ունենաք եկեղեցիների հետ ղրկելու համար։ Այդ բանը, յամենայն դէպս, առաջին պայմանը պիտի լինի։ Վարդապետին առանձին պահանջներ չպէտք է դնել. նա՝ իբր կենդանի վկայ երկրի դրութեան՝ պիտի միայն նիւթ տայ ձեր կողմից նրան ընկերակցողին։

Զինաթափութեան կոնֆերենցիային(6) դիմումը տեղեկագրի ընաւորութիւն չէ ունենալու, այլ կը լինի լոկ մի խիստ ցուցմունք միջազգային իրաւունքի տեսակէտից։ Հարցի պաշտօնապէս քննութեան ենթարկելու վրայ մենք եւս յոյս չունինք. բայց այն ժամանակ, երբ բոլոր պետութիւնների ներկայացուցիչները միասին՝ խմբուած կը լինին, շատ տեղերից մեր մասին յիշեցնելը առնուազը կարեւոր է պաշտօնական նիւթերից դուրս մասնաւոր կերպով մտքերի փոխանակութիւն առաջ բերել եւ, ով գիտէ, գուցէ նոյնիսկ միերկու պետութիւնների ներկայացուցիչների մէջ որոշ համաձայնութեան առիթ տալ։ Մեր դատի ընթացքը արագացնելու տեսակէտից որքան շատ բան մօտիկ ապագայում պարզւի — այնքան լաւ։ Մենք արդէն շատ տեղեր շրջաբերական ենք ցրուել, խորհուրդ տալով, որ իրենց դիմումների պատճէնները միաժամանակ աշխատեն ցրուել տեղական ..... եւ լրագրերին։ Ինչ վերաբերում է տեղեկագրի հարցին, դրա մասին կ՚աշխատենք ի հարկէ։

Դադեանի(7) հետ բանակցութիւնների առթիւ պայմանաւորուած ժամանակը լրանում է այս ամսւայ 11-ին, ձեր հաշւով փետրւարի 27-ին. այսուհետ ամէն յարաբերութիւններ խզւած են։ Թէ ինչ շահեցանք, այդ ձեզ էլ յայտնի է։

Արբակի(8) նամակը ստացանք. նա խնդրում է իրեն մի տարի ժամանակով ազատել պաշտօնից։ Գործի կարիքը մեծ է, եւ մենք ոչ մի իրաւունք չունենք նրա խնդիրը ընդունել։ Նրա գլխաւոր հիմքն է, որ պաշտօնատեղին մտնելը շուտով չէ յաջողւելու եւ ուրեմն, գուցէ, նա ստիպւի ի զուր որեւէ դրսի կէտում նստել (ինքը հարկաւոր է ընտանիքին)։ Բայց ի նկատի ունենա-

լով, որ մտնելը, ինչքան եւ դժւար լինէր, անհրաժեշտ էր, իսկ մտնելու համար հարկաւոր են աշխատողներ, մենք կարծում ենք, որ չէ կարելի յետաձգել գործը։ Մի բան, որ եւ կարող է անել — այդ է ուղղակի հրաժարական տալ, որպէսզի անմիջապէս ընտրւի մի ուրիշը։ Ցամենայն դէպս վերջնական վճիռը մենք թողնում ենք Լեռնավայրի(9) *մարմնին։ Մեր կողմից առանձին նամակ չենք գրել Արբակին. ուստի խնդրում ենք այս վճիռը*[?] *իրեն հաղորդել։*

Այժմ հրաւիրում ենք ձեր ուշադրութիւնը մի առաջարկութեան վրայ, որը խնդրում ենք պահել միանգամայն գաղտնի եւ Բ[*իւրո*]*-ի շրջանից դուրս ոչ մի տեղ եւ ոչ մի մարդու մի խօսք անգամ չասել։ Առաջարկութիւնը վերաբերում է Իզմիրլեանին փախցնելու խնդրին*(10)*, որի առթիւ հարկաւոր համարեցինք ձեր կարծիքը իմանալ։*

Այն բոլոր հանգամանքները, որոնց հետ կապուած է խնդիրը՝ կարելի է ամփոփել հետեւեալ կէտերում.

1) *Աւելի հաւանական է, որ Իզմիրլեանը մերժի եւ հետեւաբար ի զուր ծախս եւ ժամանակ լինինք կորցրած.*

2) *Համաձայնւելու դէպքում, նա կարող է ապագայում աշխատել մեզ իր ուզած ուղղութեան ենթարկել կամ նոյնիսկ բացարձակապէս հակայեղափոխական դիրք բռնել։*

Առաջին կէտի վերաբերմամբ մենք կարծում ենք, որ մեր կորուստը այդ դէպքում այնքան քիչ է, որ չ՝արժեր չխնայել փոքրիկ զոհողութիւն, որպէսզի մեր ձեռքը մի զօրաւոր փաստ ունենայինք այդ բոլոր ձայների դէմ, որոնք անդադար ականաւոր անձնաւորութիւնների պահանջներ են դնում մեր գործի համար։

Ծախսի եւ ժամանակի կորուստը, ասում ենք, չնչին կը լինի, որովհետեւ Բօրիսը(11) *արդէն հրաւիրուած է Լեռնավայրի մարմնի անդամ եւ Աղեքսանդրիա պիտի գնայ. նրան յանձնելով այդ այցելութիւնը, մենք աւել ծախս ու ժամանակ համեմատական չպիտի կորցնենք ..... դէպքում Բօրիսը կարող է* [*երկու տող անընթեռնելի*]*։*

Երրորդ կէտը իր բացասական կողմերի հետ միասին ունի եւ իր դրական կողմերը, որոնք մեր կարծիքով գերագրաւեն[?] *առաջինները. անկասկած այդպիսի մի յայտնի մարդ փախցնելը Դաշնակցութեան համար մի փոքրիկ, բայց փայլուն յեղափոխական «ցոյցի» տպաւորութիւն պիտի գործի եւ հետեւաբար Դաշնակցութեան հեղինակութիւնը պիտի աւելացնէ, ամրացնէ։ Այդպիսի մի խոշոր փաստ հայկական ներկայ ճնշւած մթնոլորտում պիտի ցնցէ ամբողջ հայութիւնը եւ ընդհանուր լքումի տեղ յոյսերի նորանոր ալիքներ առաջացնէ։ Վերջապէս, ինչ դիրք եւ բռնելու լինի ապագայում Իզմիրլեանը, նա յամենայն դէպս կ՝աշխատի օգտւել քաղաքական աշխարհում ունեցած իր կապերից եւ մի բան անել, որ միանգամայն ցանկալի է։ Վնասա-*

կար կողմերը կը լինին նրա հակայեղափոխական կամ մասնաւորապէս մեր դէմ բռնած ընթացքը։ Մի կողմ թողնելով դեռ այն անհրաժեշտ պայմանը, որ նրա մօտ գնացողը պարզապէս պիտի խօսի հետը եւ հետեւաբար նրանից համաձայնութիւն ստանալը պէտք է մի տեսակ գրաւական լինի մեզ հետ գործելու նրա ցանկութեան. մի կողմ թողնելով, ասում ենք, այդ հանգամանքը, կշռենք ամենավատ դէպքը։ Կասկած չը կայ, որ այն օրից, երբ նա Եւրոպա անցաւ, շատ տեղերից դրամներ նրան կ'ուղարկեն. շատերը կ'ենթարկուեն նրանց ազդեցութեան։ Բայց մեզ համար հետաքրքիր էր, թէ որքան մեծ ծաւալով այդ ամէնը կը վնասի մեզ։ Մենք հաւատացած ենք, որ մեզ հետ կապուած շրջանները չպիտի գայթակղուեն Իզմիրլեանով, բայց մեր ձեռքով ազատուած լինելուց յետոյ, նրա խօսքերը մեր դէմ առհասարակ առանձին ազդեցութիւն չպիտի ունենան. Խրիմեանը չը վնասեց Արծրունու եւ Մշակականութեանը, այլ միայն իր անունը ամրացրեց։ Ինչ վերաբերում է դրամներին, եթէ նա մեզ համար անմատչելի բուրժուաներից գումարներ կը ստանայ, մենք տեղիք չենք ունենալ ափսոսալու այդ մասին։

Կշռեցէք դուք էլ այս խնդիրը եւ անմիջապէս հեռագրէք մեզ, որպէսզի Բօրիսը չուշանայ մի կամ միւս տեղ մեկնելուց։ Համաձայնութեան դէպքում, հեռագրեցէք պոզդրավիթ(12), *հակառակ դէպքում* վիեզժայու(12)

Խանասորի բրօշիւրը կարող ենք շատ մօտիկ ապագայում հրատարակել։ Խնդրում ենք, ի նկատի ունենալով այն նիւթը, որ ժամանակին արդէն լոյս է տեսել «Դրօշակում», ուղարկէք լրացուցիչ տեղեկութիւններ, ընկած ընկերների պատկերներ, կենսագրութիւններ եւայլն, եթէ կան կամ գտնուեն։ Վարդանը եւ Նիկօլը(13) *անշուշտ կարող են տալ հետաքրքիր մանրամասնութիւններ։ Գրում ենք այդ մասին նաեւ Վրէժ*(14) *ու այդպիսով յետաձգում առայժմ բրօշիւրի հրատարակութիւնը։*

Բուլղարիայից մեզ գրում են, որ Կարնոյ բանտում համարեա 3 տարի է մեր գործերով բռնուած է (Ռումանիայից եկածների հետ է անցել) Գրիգոր Մովսիսեան անունով մշեցի մի խմբապետ, որը այժմ շարունակ գրում է իր ծանօթներին, շատ վատ դրութեան մէջ է, որովհետեւ ոչ մի տեղից իրեն ոչ մի կոպէկ դրամական օգնութիւն չէ հասցուում։ Ձէ՞ր կարելի արդեօք Թաթուլին(15) *մի կերպ իմաց տալ այդ մասին, որ հարկաւորը ստուգէր։ Թաթուլը ինքը հետաքրքրուած կը լինէր այդ մարդով եւ օգնած, եթէ կարիք ունենար, բայց՝ ի նկատի ունենալով մի շարք նամակներ, որոնք այստեղ ստացուել են այդ մասին՝ մի բան իմանալ եւ հաղորդելը կարեւոր է։*

Պրոպագանդի տեսակէտից ցանկալի է, որ «Դրօշակում» տալեն այդ տեղ հաւաքուող բոլոր գումարները։ Եթէ առանձին արգելքներ չլինեն, մաս-մաս ուղարկեցէք։

Դրամ արդէն ուզել ենք ձեզանից. կրկին խնդրում ենք հեռագրով մի բան հասցնել մեզ. մեր շրջանը ..... կենտրոնացնելու համար ժամանակ է հարկաւոր եւ լաւ կ'անէք, եթէ առայժմ առանձին յոյսեր չտածէք այդ շրջա-

նի վրայ։ Լեռնավայրը նոյնպէս դրամ է պահանջում։ Սեպուհի եւ Մարի(16) *վերջին նամակները շարունակ դրամի պահանջ են անում։*

Ուղարկում ենք միութեան հարցի(17) *առթիւ բրօշիւրը խմբագրելու համար. իսկ Բօրիսը ուշանում է։ Մեր նախորդ նամակում ձեզ գրած խնդրին պատասխանեցէք։ Ի նկատի ունեցէք, որ դրանց ընդունելու համար էլ դրամ է հարկաւոր։*

1.- Սարուստան – ծածկանուն Ռուսիոյ, մասնաւորաբար Կովկասի:

2.- Գիսակ – ծածկանուն Սերենկիլեան Յովհաննէսի (Վարդգէս): Լեւոններէն մէկը՝ Գիւլումեանն է, միւսը՝ պաքուեցի: Երկուքն ալ հրաւիրուած էին մասնակցելու Ցուցական մարմնին:

3.- Գուրգէն – ծածկանուն յայտնի յեղափոխական մարտիկ Մալեան Բաղդասարի (1873-1899), գործակից Սերոբ Աղբիւրի: Պիտի նահատակուէր Քրիստափորի այս նամակէն ամիս մը ետք՝ Ցրօնք գիւղի կռուին: Աղբերը՝ Մոկացի Յարութիւնն է:

4.- Սաքօ – ծածկանուն յայտնի յեղափոխական մարտիկ Սեւքարեցի Սաքոյի, բուն անունով Ծովհաննեան Սարգիս (1870-1908), որ այդ օրերուն ձերբակալուած էր եւ կը գտնուէր Մշոյ բանտը:

5.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի: Վարդապետը հաւանաբար կիլիկեցի հոգեւորական մըն է:

6.- Լահէյի զինաթափութեան կամ խաղաղութեան ժողով:

7.- Խօսքը կը վերաբերի Օսմ. Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Արքին (Յարութիւն) Տատեանի, որ սուլթան Համիտ Բ.ի թելադրութեամբ 1896-էն ի վեր բանակցութեան մէջ կը գտնուէր Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան հետ:

8.- Արբակ կամ Արբակ Ռշտունի – ծածկանուն պարսկահայ գործիչներէն Միրզայեան Յովսէփի, որ ընտրուած ըլլալով անդամ Լեռնավայր-Կիլիկիոյ պատասխանատու մարմնին, պիտի չկարենար այսուհանդերձ, Կիլիկիա անցնիլ:

9.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ յարակից Սուրիոյ եւ Լիբանանի Հ.Յ.Դ. կազմակերպութեան:

10.- Մատթէոս եպս. Իզմիրլեան. Կ. Պոլսոյ հայոց պատրիարք (1894-96): Իր պաշտօնավարութեան շրջանին տեղի ունեցաւ Սասնոյ ապստամբութիւնը, ապա, Համիտեան համատարած կոտորածները, որոնց դէմ բուռն բողոք բարձրացուցած էր եւ պահանջած քաղաքական թէ զինուորական պատասխանատուներուն պատժուիլը, ինչ որ պատճառ դարձաւ իր պարտադրական հրաժարումին եւ Երուսաղէմ աքսորուելուն (1896-1908): Օսմ. սահմանադրութեան հռչակումէն ետք վերադարձաւ եւ վերընտրուեցաւ պատրիարք, բայց շուտով, Խրիմեան Հայրիկի վախճանումէն ետք, Էջմիածնի մէջ ընտրուեցաւ Ամենայն հայոց կաթողիկոս: Սուլթան Համիտ Բ.ի դէմ իր բռնած արի կեցուածքին համար Իզմիրլեան շահած է հայ ժողովուրդի ընդհանուր գնահատանքը եւ արժանացած Երկաթեայ պատրիարք տիտղոսին:

11.- Բորիս – ծածկանուն՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի անդամ Սմբատ Խաչատրեանի:

12.- Բնագրին մէջ ռուսատառ՝ պոզդրավիթ՝ շնորհաւորել, վիեզժայու՝ մեկնում եմ:

13.- Վարդանը՝ Խանասորի Վարդանն է, Մեհրաբեան Սարգիս: Նիկոլը՝ Դումանն է, Տէր Յովհաննիսեան Նիկողայոս:

14.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի (Թաւրիզ):

15.- Թաթուլ – ծածկանուն Արամեան Արամի, մարտական յայտնի դէմք, որ այդ օրերուն կը գտնուէր Կարնոյ բանտը եւ նոյն տարուան Օգոստոսին կախաղան պիտի հանուէր:

16.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի, անդամ Կիլիկիոյ պատասխանատու Կեդր. կոմիտէին. միեւնոյն՝ 1899 թ. Յուլիսին պիտի ձերբակալուէր Մարաշի մէջ եւ բանտ նետուէր, ուր մնաց աւելի քան հինգ տարի:

17.- Հարցը կը վերաբերի Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան հետ միութիւն կամ համերաշխութիւն գոյացնելու խնդրին:

13

Մատեան No 84, *էջ* 398-9

26 *ապրիլի* 1899

Պ. Ճանկիւլեանին (1), *Գահիրէ*

Յարգելի ընկե՛ր,

Ներեցէ՛ք, խնդրում ենք, որ Ձեր նամակին աւելի քան ուշ ենք պատասխանում։ Մասամբ այստեղի մեր զբաղմունքները եւ մասամբ Ձեր դրած հարցերի բնաւորութիւնը — պատճառ եղան մեր ուշ գրելուն, եւ մենք վստահ ենք, որ դուք ներողամիտ կը գտնուէք դէպի մեզ։

Վահանի(2) *վերաբերմամբ հարցը ինքնըստինքեան փակւում է նրանով, որ նա ինքը չէ ուզում այլեւս մնալ Եգիպտոսում եւ այժմ սպասում է միայն մի ուրիշ ընկերոջ գալուն։ Այդ նոր մարդը, որ, հաւանական է, Ձեր անուանածներից մէկը լինի, շուտով երեւի այդտեղ կը գայ, եւ այն ժամանակ Վահանը ուրախութեամբ պիտի հեռանայ Եգիպտոսից։*

Դուք գանգատւում էք նաեւ Սեպուհից(3), *որ դեռ անցեալ ամառ չը համաձայնուեց չոր ճանապարհով գնալ իր պաշտօնատեղին։ Որքան մեզ ծանօթ է այդ վէճը, մենք էլ ենք կարծում, որ դրանով տեղ հասնելը շատ դժուար է։ Պայմանները վաղուց է, որ այդ գծի վրայ սաստիկ փոխւել են — այնքան են փոխւել, որ եթէ այժմ մեր ընկերներից մէկը կամ միւսը կարողանում է թէկուզ միայն Սասուն հասնել — դա համարւում է առանձին յաջողութիւն։ Արաբօ-ից*(3) *սկսած մինչեւ Սաքօ-ի*(4) *անցեալ տարւայ անյաջողութեան դէպքը բաւականաչափ համոզիչ ապացոյցներ են, թէ որպիսի դժոխային դժւարութիւններ են ստեղծւել այդ գծի վրայ։ Սաքօն, օրինակ — մի մարդ, որ երկար տարիների ընթացքում մասնակցել է 3 կռւի եւ որի փորձառութիւնը վեր է որեւէ կասկածանքներից,— ճանապարհ ընկաւ նոյնիսկ իբրեւ հասարակ գաղթական իր ընկեր-գաղթականների հետ եւ դարձեալ տեղ չհասաւ։*

Ինչ վերաբերում է «Շարժումին»(5), *արդէն դրա հրատարակութիւնը մեր խմբագրութեան կամքի հակառակ է սկսած եւ նրա մէջ հազւագիւտ չեն յօդւածներ եւ նկատողութիւններ, որոնցից մենք դժգոհ ենք եղել։ Սակայն մինչ այժմ այդ առթիւ մենք որեւէ բացատրութիւնների մէջ չենք մտել «Շարժումի» խմբագրութեան հետ եւ նոյն պատճառով չկարողացանք Ձեր գրքոյկի առթիւ էլ հարցի մէջ խառնւել։*

Ուզել էիք մեզնից Գլըճճեանի լուսանկարը. դժբախտաբար մենք չունենք

նրա լուսանկարներից։ Եթէ կամենաք, մենք կարող ենք մեր թերթի համար պատրաստուած կլիշէից մի հատ հանել տալ հաստ թղթի վրայ եւ Ձեզ ուղարկել։

Յոյս ունինք, յարգելի ընկեր, որ մեր նոր ընկերոջ այդտեղ եկած ժամանակ կը տեսնուէք հետը եւ չէք զլանալ Ձեր աջակցութիւնը նրան ցոյց տալու, որպէսզի երկրի ներկայ անմխիթար վիճակը այդ կողմերում ըստ կարելոյն բարւոքւի։

Օգտւում ենք դէպքից արտայայտելու մեր բոլոր զգւանքը դէպի այն տմարդները, որոնք Ձեր վրայ յարձակում գործեցին «դիմակաւորների» առթիւ։ Կեղտոտները հէնց նրա համար են կեղտոտ, որ իրենց անելիքներում եւ խօսքերում ընդունակ են ղեկավարւելու ամէն տեսակ դիտումներով, բացի իրենց առաջ դրած խնդիրների անկողմնապահ կշռադատութեամբ։ Մենք էլ, համաձայն մեր ընդհ. ժողովի վճռի, ստիպւեցանք այդ կեղտոտների վերաբերմամբ բերան բաց անել եւ ահա այս քանի մը օրերս կը ցրւենք միութեան խնդրի մասին մի յաւելուած «Դրօշակի»։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ճանկիլեան Յարութիւն (1856-1915), հնչակեան ծանօթ գործիչ, ջերմ կողմնակից երկու կուսակցութիւններու համերաշխ գործակցութեան:

2.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:

3.- Արաբօ (Առաքել, 1863-1893), հայ ազատագրական շարժման առաջին մարտիկներէն:

4.- Սեւքարեցի Սաքօ (Ծովիանեան Սարգիս, 1870-1908):

5.- Սոֆիա հրատարակուող լրագիր:

14

Մատեան No 84, *էջ* 410-412

28 *ապրիլի* 1899

Վահանին(1), *Ալէքսանդրիա*

Սիրելի,

Բաւական ժամանակ է քեզանից նամակներ չենք ստանում, բայց քեզ չենք գրում։ Եթէ նեղացած ես, մասամբ իրաւունք ունես, իսկ մենք մխիթարում ենք մեզ նրանով, որ ներողամիտ պիտի լինիս դէպի մեզ, ի նկատի ունենալով, որ վերջին նամակներդ, պարունակելով իրենց մէջ տեղեկութիւններ միայն, անմիջական պատասխանի կարօտ չէին։ Վերջին նամակդ (22 [*փետրուար*] - 3 *ապրիլի*) *սակայն առիթ է տալիս քեզ գրելու, եւ մենք, յիշելով, որ նախորդ նամակներիդ պատասխանելու մասին հաղորդել ենք քեզ Սեպուհի*(2) *միջոցաւ, թերթում ենք կրկին այդ նամակներդ էլ* (14/26 *յունուար*, 16/28 *փետրուար*, 17/29 *մարտ*)։

Մէքիրեանից[?] *ստացած* 14 *ոսկու մասին վերջին նամակումդ ուզում ես ստացական ունենալ, այն ինչ՝ համաձայն դեռ անցեալ տարւայ այդտեղից արւած պահանջին՝ մենք թէ այդ թւականի եւ թէ Բաբային*(3) *տւածի մասին արդէն ստացական գրել ենք* (11/23 *դեկտեմբերի*) *եւ ուղարկած իրեն Վահաբի*(4) *մասնաւոր նամակով։ Ինչպէ՞ս է, որ մինչ այժմ տեղեկութիւն չունես։*

«*Դրօշակի*» *ուզած համարներդ ղրկւած են։ Ստուգելու համար դնում ենք այստեղ թւերը*

1895 — 2, 10, 15, 16, 17, 18, 21.

1896 — 1, 1, 2, 2, 3, 4, 4, 5, 6, 6, 7, 9, 21.

1897 — 1, 2, 2, 5, 6, 8, 9, 12.

1898 — 1, 4,4։

Հանգանակութեան թերթերը ստացւած եւ ցրւած են։ Տամատեանի(5) *հրատարակութեան սպառմանը նոյնպէս, ուրախութեամբ կ՝աջակցենք։*

Յարութիւն Ասլանեանի մասին ոչինչ չգիտենք աւելի քան այն, ինչ հրատարակւած է. «Դրօշակի» No 10-*ի մէջ* (*անցեալ տարի*)։

Թերթերը այժմ ուրիշ դծերով են գնում։ Սակայն այն մարդկանց անունները, որոնք այդտեղ կարող են օգտակար լինել փոխադրութեան գործում, պէտք է թողնել այդտեղացիներից մէկի կամ միւսի մօտ։

Զէյթունի պայմանագիրը մեզ դուր չեկաւ։ Նախ՝ այդ չարաբաստիկ վարդապետի(6) *պատճառաւ դուք համաձայնւել էք ամբողջ երեք նոր հիմնարկութիւններ հաստատել «Դաշնակցութեան» գլխին — մէկը՝ Արեւելեան*

շրջանում ժողովուած գումարների համար, միւսը՝ Արեւմտեան շրջանում ժողովուած գումարների համար, եւ երրորդը, որ միանգամայն հակառակ է կազմակերպութեան ընդհ. ընթացքին՝ գործադիր մարմնի համար։ Ինչպէ՞ս կարող էիք դուք ամբողջ «Դաշնակցութեանը», իր բոլոր անցեալով, իր ընդհանուր ժողովում ընդունած որոշումներով եւայլն, այդպէս հեշտութեամբ հաւասարեցնեք մի, թէկուզ շատ լաւ, վարդապետի հետ — այդ մեզ համար միանգամայն անհասկանալի է, եւ մենք կարծում ենք, որ դուք այդպիսի իրաւունքներ չպիտի տայիք ոչ միայն մի վարդապետի, որը եթէ մի բան կարողանայ անել՝ այդ անելու է միայն շնորհիւ մեր ընկերների աջակցութեան, այլեւ նրանից մի աւելի լաւ մարդու, որը թէկուզ հէնց այսօր ձեր առաջը դնէր որքան դուք ուզենայիք։ Երկրորդ, ի՞նչ է նշանակում իսկոյն եւ ետ Վարդապետի համար 500 ռսկի համրելը, քանի որ չենք կարող նախագուշակել, թէ ինչ պիտի ժողովի այդ մարդը։ Երրորդ՝ ինչ է նշանակում հանգանակուած գումարի կէսը յատկացնել Արեւելեան բիւրոյին կամ գործադիր մարմնին, քանի որ դոցանից մէկը իրաւունք չպիտի ունենայ մի կոպէկ մսխելու մինչ Վարդապետի ճանապարհորդութիւնը չաւարտւի, իսկ միւսը դեռ գոյութիւն պիտի ստանայ ապագայում եւ ով գիտէ բաղկանայ երեւի «դաշնակցական» անդամից ընտրուած երկու «դաշնակցականներէ»։ Ուզենալով հաստատ մնալ մեր խօսքին, որով մեր կողմից լիազօրութիւն էինք տուել ձեզ եւ Արեւելեան բիւրոյին այդ հարցը կարգադրել՝ մենք այսօր չենք բողոքում պաշտօնապէս պայմանագրի դէմ, բայց յոյս ունենք որ մեր կարծիքը իբրեւ լոկ «դաշնակցական ընկերների» կարծիք, ի նկատի կ՚առնուի ձեր կողմից առաջ քան Վարդապետի ճանապարհ դնելը։ Ի սէր Աստծոյ, մի շտապէք դրամի համար այդպիսի բարդութիւններ ծնող միջոցների դիմել. մենք մինակ չենք, եւ ոչ մի իրաւունք չունենք ենթադրելու, որ մեր միւս ընկերները մեզնից աւելի պակաս սրտացաւութիւն պիտի ունենան գործի յաջողութեան համար կարեւոր միջոցները հոգալու։

Սեպուհի եւ քո յարաբերութիւնները մեզ ամէն անգամ սաստիկ ցաւ է պատճառում։ Աւել ոչինչ չենք կարող ասել։ Ցաւալի է այս, շատ ցաւալի, որովհետեւ, ինչպէս երեւում է, արդէն անկարող էք իրար հետ համերաշխ լինել։

Հաշիւներ ուղարկելիս լաւ կ՚անես, եթէ առանձին թղթերի վրայ գրես. մենք պահում ենք նամակներն էլ, հաշիւներն էլ եւ ցանկալի չէ, որ դոքա խառը լինեն։ «Շարժումի»(7) *հեռագիրը թողնուած է քո հաշուին, այնպէս որ քո վերջին հաշիւը փակւում է 30 դահեկան պարտքով քեզ վրայ։*

Այդ ինչ բաներ են անում պ.պ. Շահէնը, Կորիւնը եւայլն։ Աշխատիր, Վահան, դուն էլ քո կողմից այդ խառնակութիւնների առաջն առնել մինչ աւելի կ՚ուժեղանայ այդ չարաբաստիկ Եգիպտոսը սպասուող ընկերների կամ ընկերի գալովը։ Բօրիսը(8) *մեր կողմից արդէն պիտի միանայ այս մարմնին. դուցէ, Արբակից*(9) *էլ շուտով մի խաբար ստանանք։*

Խարբերդից վաղուց է բան չեն գրում. թերթ, նամակներ գնում-գալիս են թէ ո՞չ։ Բաղդադի հետ արդեօ՞ք յարաբերութիւնները շարունակւում են։ Զգիտե՞ս արդեօք Սղերդցի Զարեհը ուր է այժմ, ինչ է շինում։

Մայիսին ուզում ենք տալ եւ մի ֆրանսերէն յաւելուած, օգտուելով խաղաղութեան ժողովի դէպքից։ «Դրօշակ»ի No *4-ը նոյնպէս շուտով լոյս կը տեսնի։ Յաւելուածը ի՞նչ տպաւորութիւն է թողնում միութեան*(10) *խնդրի առթիւ։ Այստեղ մեզ երեւի կը յաջողւի մի կոմիտետ կազմել անւանաւոր շվէյցարիացիներից, որոնք կը կազմեն մի դիմում ու՝ բազմաթիւ ստորագրութիւններ ժողովելով՝ կ՚ուղարկեն ժողովին մասնակցող զանազան պետութիւնների ներկայացուցիչներին։ Վերջնական նիստը այս մասին նշանակւած է երկուշաբթի* (1-*ին մայիսի*) *եւ այդ է պատճառը, որ գրում եմ, «գուցէ»։ Ի՞նչ է անւում այդտեղ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:

2.- Սեպուհ – ծածկանուն Պանք Օթոմանի գրաման ղեկավարներէն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):

3.- Բաբա – ծածկանուն Գարեգին Խաժակի (Չագալեան):

4.- Վահաբ – ծածկանուն Արշակ Վռամեանի, որուն իսկական անունը Օննիկ Դերձակեան էր:

5.- Տամատեան Միհրան (1864-1945), հնչակեան յայտնի ղեկավար դէմք:

6.- Հարցը կը վերաբերի Կիլիկիոյ եւ յատկապէս Զէյթունի աղէտեալներու օգնութեան համար ձեռնարկուելիք հանգանակութեան:

7.- Սոֆիա հրատարակուող թերթ:

8.- Բորիս – ծածկանուն Խաչատրեան Սմբատի, անդամ Լեռնավայրի (Կիլիկիա) պատասխանատու մարմնին:

9.- Արբակ, Արբակ Ռշտունի – ծածկանուն Յովսէփ Միրզայեանի, որ նոյնպէս ընտրուած էր Կիլիկիոյ պատասխանատու մարմնի անդամ, բայց պիտի չկարենար մասնակցիլ:

10.- Հարցը կը վերաբերի «Դրօշակ»ի այն յաւելուածներուն, ուր կը խօսուի Դաշնակցութեան եւ Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան միջեւ միութեան կամ համերաշխ գործակցութեան ուղղութեամբ տարուած աշխատանքներուն մասին:

15

Փաստ. 38-13

Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի պաշտօնական թուղթի վրայ Ժընեւէն Մ. Վարանդեանի գրչով գրուած եւ Պուլկարիոյ Ֆիլիպպէ քաղաքը գտնուող Ռոստոմին ուղղուած նամակի մը վերջաւորութեան՝ Քրիստափոր Միքայէլեանի ձեռագրով աւելցուած պարբերութիւն: Կու տանք այս վերջին բաժինը միայն:

9 *մայիս* 1899

Ռոստոմին, Փիլիպպոպոլ

Հաջի Արամը, որի մասին լսած պէտք է լինես անցեալ տարւայ վերջերին Սալմաստում ու Վանում կրած մեր կորուստների առիթով, այժմ գտնւում է Աղէքսանդրիա եւ ուզում է այստեղ գալ իր իմացածները մեզ պատմելու համար: Մենք հարկաւոր տեղեկութիւնները կը գրենք Եգիպտոս, իսկ դու ի նկատի ունեցիր նրան Ծաղկի(1) *վերաբերմամբ, որովհետեւ թէ իսկապէս անհիմն չեն այն մեղադրանքները, որ բարդւում են դրա վրայ՝ դա կարող է մի գեղեցիկ օր այնտեղ էլ երեւալ:*

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ծաղիկը Կ. Պոլսոյ կուսակցական ծածկանունն էր:

16

Մատեան No 84, *էջ* 432

10 *մայիսի* 1899

Վահանին(1), *Ալէքսանդրիա*

Սիրելի Վահա՛ն,

Հաստատում ենք ապրիլի 28-*ից գրած մեր նամակը։*

Ներփակեալ միւս նամակը գրւում է քեզ յատկապէս հաջի-Արամի մօտ կարդալու եւ իրեն մեր պատասխանը յայտնելու համար։ Իսկ դրանից դուրս այս նամակով ահա ինչ ունենք քեզ ասելու այդ Հաջու մասին։ Դա մեղադրւում է բազմաթիւ մատնութիւններում, որ արել է Վասպուրականում (երեւի բռնուած միջոցին) եւ դրան են վերագրում շատ կորուստներ մեր կողմից։ Այդ մասին մենք տեղեկութիւն ունենք զանազան աղբիւրներից եւ հետեւաբար պարտաւոր ենք շատ զգոյշ լինել հետը։ Եթէ փոքր ի շատէ հիմք ունեն դրա վերաբերմամբ յայտնուած կասկածները, դա կարող է շատ վնասակար լինել եւ այդտեղ (թղթեր անհետացնել, Ծաղկի, Ոսկեհանքի կամ Լեռնավայրի(2) *մասին գաղտնիքներ, անուններ, հասցէներ ձեռք ձգել եւայլն)։ Ուրեմն՝ մեր խորհուրդն է. անմիջապէս դրան քեզնից հեռացնես, նախազգուշացնես այդ մարդու մասին այդտեղի մեր ընկերներին եւ կարեւոր ծանօթներին ու, եթէ կարելի է, աշխատես մի կերպ աչքի տակ ունենալ իրեն, մինչ մենք, անմիջապէս դիմելով երկու-երեք կոմիտէների, որոնք պիտի դրա գոյնին ծանօթ լինեն, կը ստանանք դրանցից մէկի կամ միւսի վերջնական որոշումը դրա մասին։ Պահանջը իրենից, որ այդտեղ որեւէ գործի, պաշտօնի մտնի եւ իրեն կերակրի։ Դա, երեւի կ՚ուզենայ դէս-դէն թռչել, ոչ մի տեղ իր դրութիւնը ապահով համարելով, բայց հէնց այդ պատճառաւ էլ ցանկալի չեն դրա ճանապարհորդութիւնները եւ նորանոր տեղերի եւ անձնաւորութիւնների հետ ծանօթանալը։ Աւելորդ է, ի հարկէ, այս բոլորին աւելացնել, որ մեր կողմից մի փարա անգամ չպիտի մսխւի դրա վրայ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:
2.- Ծաղիկ կամ Կռուածաղիկ, Ոսկեհանք, Լեռնավայր – յաջորդաբար՝ Կ. Պոլիս, Իզմիր եւ Կիլիկիա:

17

Մատեան No 84, *էջ* 433

10 *մայիսի* 1899

Վահանին, Ալէքսանդրիա

Սիրելի Վահա՛ն,

Այսօր ստացանք այդտեղից Հաջի Արամ Տէր-Եղիազարով ստորագրութեամբ մի նամակ, որի մէջ Հաջի Արամը պատմում է իր մասին. գրած է, որ գտնւում է քեզ մօտ եւ յետոյ խնդրում է, որ քո միջոցաւ կարգադրութիւն անենք նրան այստեղ ուղարկելու համար, որպէսզի իր խմացածները մեզ պատմի։ Այդ առիթով ահա խնդրում ենք քեզ՝ յայտնել Հաջի Արամին, որ մենք միանգամայն աւելորդ ենք համարում նրա այստեղ գալը եւ որ եթէ պատմելիք ունի՝ կարող է ինքը անձամբ գրել կամ ուրիշին խնդրել, որ գրի։ Եթէ Հաջի Արամը իր պատմելիքները շատ կարեւոր է համարում, թող դրա հետ իմանայ նաեւ, որ Եգիպտոսից ոչ մի երկիւղ չունի փոստի միջոցով եւ ընդամէնը մի քանի կոպէկներով անել այն, ինչ բանի համար նա տրամադրութիւն ունի ահագին ճանապարհորդութիւն կատարել։

Ընկերական բարեւներով՝
ԿՆԻՔ (Խմբ.)

18

Մատեան No 84, *էջ* 437

Քրիստափորի ձեռագրով շարադրուած այս գրութեան պատճէնէն յայտնի չէ անոր ճշգրիտ ամսաթիւը, ինչպէս նաեւ որուն ուղղուած ըլլալը: Նախորդող եւ հետագայ նամակներուն թուականները նկատի առնելով՝ պէտք է թուագրուի 1899 թ. Մայիսի առաջին կիսամեակին: Նամակը ամենայն հաւանականութեամբ ուղղուած է Եգիպտոս՝ Աղեքսանդրիոյ ընկերներուն:

մայիս[?] 1899

.....17*ին մայիսի մի նամակ Վահանին (Ալէքսանդրիա), որ իրենց մօտ կարող է գալ Նիւ-Եորքի կոմիտէի անդամներից մէկը, որը ցանկութիւն ունի Կիլիկիայով վերադառնալ հայրենիք (Զմշկածագ)։ Հաղորդւում է այն տեղեկութիւնները, որ ունէինքայդ մարդու մասին եւ մեր անձնական տպաւորութիւնները, որ ստացանք նրա այստեղ եղած ժամանակ։ Նա պիտի ներկայանայ (եթէ մտնի Եգիպտոս) Վարաժնունի կամ Քէօբելեան անունով։*

19

Մատեան No 84, *էջ* 439

18 *մայիսի* 1899

«Մոլեկիւլ» կոմիտէին(1), *Բերլին*

Սիրելի ընկերնե՛ր,

Առաջարկում ենք ձեր ուշադրութեանը ներփակեալ բաց նամակը, որ Խաղաղութեան ժողովի(2) *առիթով հրատարակել եւ ցրւել է դիւանագէտներին եւ տեղական խմբագրութիւններին Լօզանի համալսարանի ուսանողութիւնը։ Մեզ թւում է, որ դուք էլ կարող էիք մշակել մի դիմում եւ առաջարկել տեղիդ համալսարանական ամէն ազգի ուսանողներին ստորագրելու։ Դա էլ մի միջոց է որոշ չափով մեր խնդրի կենդանութեանը նպաստելու համար։*

Ինչքան շատ լինեն ստորագրութիւնները, այնքան լաւ։ Լօզանում ստորագրել էին 800 *հոգի, որ շատ չէ։ Ստորագրութիւնները չեն հրատարակւում։*

Խմբագրութիւններին լաւ է ներկայանալ անձամբ եւ խնդրել, որ տպագրեն ամբողջովին։ Յաջողութիւնը աւելի ապահովելու համար, դուք կարող էիք դիմումը խմբագրել աւելի կարճ, քան այդ արել են լօզանցիք, թէեւ այս դիմումը տպագրւեց տեղական լրագրերի մեծ մասում։

Զպէտք է կարծել, որ արդէն ուշ է. ժողովը տեւելու է առնուազը մի ամիս։ Հարկաւոր է միայն եռանդով ձեռնարկել գործը։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Սորա հետ ուղարկւում է Ս. Զաւարեանի գիրքը, որ նա նւիրում է տեղիդ «հայ ուսանողութեանը»։

1.- Մոլէկիւլ կը կոչուէր Պերլինի Հ.Յ.Դ. կոմիտէութիւնը, բաղկացած մեծագոյն մասով ուսանողներէ: Արեւմտեան բիւրոյի այս գրութեան լուսանցքին վրայ կը կարդանք. «նոյնը գրած է նաեւ Փարիզի մեր ընկերներին»:

2.- 1899 թ. Լահէյի Խաղաղութեան խորհրդաժողովը բացուած է Մայիսին եւ տեւած մէկ ամիս: Մասնակցած են եւրոպական եւ այլ երկիրներու արտաքին գործոց նախարարներ: Արտասահմանեան բազմաթիւ երկիրներէ գաղութի կամ ուսանողութեան կողմէ կայացած են միթինկներ, ուղղուած են դիմումներ եւ կոչեր հայկական հարցի վերաբերեալ: Խորհրդաժողովի դիւանին պատասխանը եղած է այն, որ այդ հարցը ժողովի օրակարգին մաս չի կազմեր:

20

Մատեան No 84, *էջ* 444-446

23 *մայիսի* 1899

Ռոստոմին, Սոֆիա

Սիրելի՛,

Յաւելուածի չարունակութիւնը եւ բաց նամակդ ստացանք, բայց վերջինիս մէջ խոստացած միւս նամակդ դեռ չենք ստացել։ Փիլիպպոպոլից գրածդ էլ ստացուած է ժամանակին։

Յաւելուածում Ամերիկայի շրջաբերականի վերաբերմամբ քո նկատած սխալը կ՚ուղղենք յաւելուածի 2-րդ թերթում։ Սխալը՝ այն վտանգաւոր սխալներից չէ։ Աւելի վատ դուրս պիտի գայ իրենց համար, որ մի ամբողջ տարի էլ անց՝ դեռ նոյն խարազանի տակն են եղել։

Providence-*ի մասին բան չէր կարելի իմանալ Հրանդից, որովհետեւ նա արդէն գնացել էր։*

Փող մեզ չունինք, դեռ քիչ էլ պարտք ենք արել։ Բաթումից մեզ գրում են, որ կարող ես ստանալ Բաբայից(1)*. նրան տրուած է* 6 *եւ* 9 *հարիւր ռուբլի։*

Ուզել էիր Ամերիկա երթեւեկող նաւերի ցուցակը։ Այդ ցուցակը ուղարկել ենք քեզ երեք գրքերի հետ (Սիմոնի գիրքը, Զաքարինը[?] *եւ մի հատ էլ Միքայէլի տուած)։ Ստացած պէտք է լինես Ֆիլիպպէում։ Ուղարկել ենք Գօշի*(2) *հասցէին։*

Այսօր մի հեռագիր ենք ուղարկում Լեապովին(3)*, խնդրելով տեղեկացնել մեզ, թէ ընդունեց արդեօ՞ք մեր առաջարկութիւնը պրոկլամացիայի*(4) *մասին թէ ոչ։ Հարկաւոր ենք համարում շտապեցնել այդ հարցը եւ պրոկլամացիայի խնդիրը, որովհետեւ Լահէից արդէն եկող տեղեկութիւններից երեւում է, որ նշանակութիւն պիտի ունենայ։ Զերազի*(5) *այնտեղ գնալը, Բօլգարիայի միտինկները եւայլն արդէն ուշադրութիւն են դարձրել հայերի վրայ։ Նոյնիսկ մի ինչ որ* «Le comité libéral ottoman»*է*(6) *այնտեղ երեւացել, որ կոչեր է հրատարակած, կոնֆերանսներ է կազմակերպում եւայլն։ Մի բան էլ մենք չուտով աւելացնենք այդ բոլորի վրայ։ Յաւում ենք, որ Եգիպտոսից եւ Ամերիկայից դեռ ձայն-ձուն չկայ, թէեւ չարունակում ենք յուսալ, որ այդտեղերից էլ մի բան կը գայ։ Եթէ մակեդոնացիք չեն ուզում մեզ հետ անել եւ եթէ մեր հեռագրին արդէն պատասխանուած չլինի, շտապիր ինքդ մեզ հեռագրելու, որ այստեղ անկախ մի բան խմբագրենք եւ չուտով ցրենք։ Մեր կարծիքով, շատ կը սխալուեն մակեդոնացիք, եթէ մերժեն այդ մեր առաջարկութիւնը։*

Զորրորդ համարում չենք դնում միութեան առթիւ առանձին յօդուած։ Մի բան գրեց Էլլէնը(7), բայց տղերքը խորհուրդ տւին «Դրօշակը» մաքուր պահել այդ հարցերից։ Էլլէնը կ՚ուղարկի քեզ իր գրածը. տես, գուցէ, կարելի համարես յաւելուածի վերջումը դնել կամ մի կողմ թողնելով նրա գրածը այդ հոգսով մի վերջաբան աւելացնել։ Ընդհ. ժողովի վճիռն էլ պէտք է յարմարեցնել յաւելուածում տալու։ Եթէ այս ամէնը անկարելի համարես, այն ժամանակ կը սպասենք մինչ յաւելուածի վերջանալը եւ յետոյ, նայած տպաւորութիւններին, խօսակցութիւններին եւայլն, մի բան կը տանք «Դրօշակ»ում։ Բայց կրկնում ենք, լաւ կը լինէր, եթէ այդ բանը մտցնէիր հէնց յաւելուածի վերջում։ Դա ոչ միայն կ՚ազատէր «Դրօշակը» ցեխի մասին խօսալուց, այլեւ, գուցէ, ամփոփէր ընթերցողի տպաւորութիւնը յաւելուածից։

Կարէնից(8) մի նամակ ստացանք, ուր պատասխանում է նա Բօրիսի(9) միսսիայի մասին իրեն դրած հարցին։ Նա չէ հաւատում, որ բան դուրս կը գայ, բայց համաձայն է եւ հարկաւոր է համարում փորձը անել. մի պայման է միայն վերջում աւելացնում, որ փորձողը նախօրէին ուղղակի յայտնի մեր պահանջները եւ այնպէս համաձայնութիւն ստանայ կամ չստանայ։

«Դրօշակը» այս երկու օրը կը ցրւենք. միւս համարը եւ Ֆրանսերէնը յոյս ունենք տալ մինչ յունիսի 10-ը։ Գրաշարը բաւականին դանդաղ մարդ դուրս եկաւ։

Տոմսերի[?] մասին, ի սէր ամենայնի, մի բան արա այդտեղ։ Զափսի համար ահա ներփակում ենք մի տառ No 13-ից։

Մարից(10) եւ Գուրգէնից(11) ուրախալի նամակներ ստացուեցին։ Երկսի գործերն էլ յաջող են ընթանում։ Մարը անսպասելի լաւ ընդունելութիւն է գտել։ Այս շրջանում անպիտան Կորիւնի վարքը միայն (եթէ յիշում ես) թունաւորում է մեր լաւատեսութիւնը. բայց Սեպուհի(12) վերջին նամակին նայելով, պէտք է յուսալ, որ Կորիւնն էլ շուտով յետ պիտի առնի իր բոլոր սպառնալիքները եւ միանգամայն հաշտւի մերոնց հետ։

Աշոտին մենք չենք ուզում գրել, որովհետեւ փոստ գնալ-գալը նրա համար անվտանգ չէ. միեւնոյն է. դու գրում ես իրան. գրիր մեր բարեւներն էլ եւ ասա, եթէ կարողանայ ինքը յարմարեցնել Վահաբի(13) քրոջ մօտ գնալը, մենք կը գրենք իրեն այդ միջոցաւ։ Յամենայն դէպս չմոռանաս յառաջիկայ նամակներում յայտնել Աշոտին, որ Տորքը(14) շատ խեղճ դրութեան մէջ է Ծաղկի(15) բանտում եւ որ նրան հարկաւոր է դրամ հասցնել։ Թող մի կերպ օգնէ։ Հարցրու նոյնպէս տեսնւե՞լ է «Զ-հի.»(16) հետ թէ ոչ. կը կամենար արդեօ՞ք, որ իր այնտեղ լինելը յայտնուէր «Զ.ին»։

Ծաղկի հասցէն ուզում են՝ Սեպուհը, Ծովափը եւ Գաղատիա(17) կարեւոր խնդիրների համար։ Ի՞նչ անենք։ Արդեօ՞ք յարմար չես գտնում առժամանակ դրանց տանք Գօշի հասցէն եւ կապենք Ֆիլիպպէի հետ մինչ յետոյ մի որոշ բան կը վճռէք դուք այդ մասին։

Սուտ[?] հեռագրերը բանակցութեան խնդրի մասին մենք բացատրում

ենք կամ տաճկական ինտրիգներով ի դիմաց Լահէյի ժողովին եկած Արթին փաշայի(18) *հակառակորդների մեքենայութիւններով։ Մենք հերքեցինք այնուամենայնիւ* «Journal de Genève»-*ում եւ* «Genovois»-*ում (որոնցից այստեղի մի ինչ որ հեռագրական գործակալ մեր հերքումն է հաղորդել գերմանական լրագրերին), միւս անգամ էլ* Frankfurter Zeitung-*ին հեռագրով, որը նոյնպէս տպւեց։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Բաբա – ծածկանուն Գարեգին Խաժակի (Չագալեան)
2.- Գօշ – ծածկանուն Պոյաճեան Անտոնի (1849-1927). անդամ Պալքանի Կեդր. կոմիտէի, ապա Ժընեւի մէջ՝ դիւանապետ «Դրօշակ»ի:
3.- Լեապով – մակեդոնացի յեղափոխական գործիչ, բարեկամ Դաշնակցութեան:
4.- Յայտարարութիւն, զոր ի վերջոյ համատեղ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ մակեդոնական վերին կոմիտէն ուղղեցին Լահէյի Խաղաղութեան խորհրդաժողովին առթիւ:
5.- Սինաս Չերազ – ազգային ծանօթ գործիչ, որ 1878 Պերլին մեկնած էր իբրեւ Խրիմեան հայրիկի քարտուղար:
6.- Ֆրանսերէն՝ Օթթոմանեան ազատական կոմիտէ:
7.- Նոյնինքն նամակագիր Քրիստափոր Միքայէլեանը:
8.- Կարէն – ծածկանուն Արամ Յակոբեանի (1872-1944):
9.- Բօրիս – ծածկանուն Սմբատ Խաչատրեանի:
10.- Մար – ծածկանուն Յովհաննէս Տէր Մարտիրոսեանի (1867-1954):
11.- Գուրգէն – ծածկանուն Բաղդասար Մալեանի (1873-1899), դաշնակցական քաջ մարտիկ, խմբապետ, որ նոյն տարին արդէն, Ապրիլ 25ին Տարօնի Յրօնք գիւղը պաշարող թուրք զօրքին դէմ մղած կռուին մէջ, փամփուշտները սպառելէ ետք միայն, կ՚ընդունի հերոսական մահը իր եօթ ընկերներուն հետ: Նոր տոմարով Մայիսի սկիզբը տեղի ունեցած այս չարաղէտ պատահարէն տեղեակ չէ յայտնապէս Քրիստափոր:
12.- Սեպուհ – ծածկանուններէն մէկը Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):
13.- Վահապ – ծածկանուն Արշակ Վռամեանի (Դերձակեան Օննիկ): Աշոտ կամ Աշոտ Թաթուլը՝ Արամեան Արամն է:
Աշոտ կամ Աշոտ Թաթուլը՝ Արամեան Արամն է:
14.- Տորք – ծածկանուն Աչըգկէօզեան Յովակիմի, որ Վանի մէջ ձերբակալուելէ ետք տարուած էր Պոլիս, ուրկէ շուտով աքսորուեցաւ Աքիա. հոն պիտի մահանար 1907 թ. Դեկտեմբերին:
15.- Ճաղիկ, Կռուածաղիկ – ծածկանուն Պոլսոյ:
16.- Զ-հի – հաւանաբար Զարուհի Տէրոյեանն է:
17.- Սեպուհ – Հոս գործածուած է հաւանաբար Երզնկա-Բաբերդ-Կարին շրջանին համար: Ճովափը՝ Տրապիզոնն է, Գաղատիան՝ Էնկիւրին է, այժմու Անգարան:
18.- Արթին փաշա Տատեան, Օսմանեան Թուրքիոյ արտաքին գործոց փոխ-նախարար, որ Ապտիւլ Համիտի թելադրութեամբ բանակցութեան մէջ մտած էր Հ. Յ. Դաշնակցութեան Ժընեւի կեդրոնին հետ:

21

Մատեան No 55-1

Քրիստափոր Միքայէլեանի այս գրութիւնը կը շօշափէ հայ եւ թուրք յարաբերութիւններու այն շրջանը, երբ սուլթան Ապտիւլ Համիտ անուղղակի փորձ մը կատարեց մեղմացնելու համար այն լարուած կացութիւնը, որ ստեղծուած էր 1895-96-ի համիտեան կոչուող կոտորածներու հետեւանքով (Զէյթունի ապստամբութիւն, Պանք Օթոմանի գրաւում եւայլն) եւ որ պատճառ հանդիսացած էր եւրոպական միջամտութեան: Հ. Յ. Դաշնակցութեան հետ յարաբերութեան մէջ մտնելու համար միջնորդ ընտրուած էր Օսմ. կայսրութեան արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան գործակատարներէն եւ փոխ-նախարարի պաշտօնը վարող Արթին (Յարութիւն) ամիրա Տատեան փաշան, որ միեւնոյն ատեն Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան Ազգ. վարչութեան ատենապետն էր: Բանակցութիւնները (որոնց նպատակը մեղմացում առաջ բերելն էր Ապտիւլ Համիտի հայահալած քաղաքականութեան մէջ) սկսած էին դեռ 1896 թ. վերջերուն եւ շարունակուեցան Արթին փաշայի որդիին (Տիրան) եւ եղբօրորդիին՝ Տրդատ պէյ Տատեանի միջոցաւ, որոնք Ժընեւ ժամանելով հանդիպումներ ունեցան Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյին հետ: Այդ բանակցութիւնները պիտի տեւէին մինչեւ 1899 թ. Մարտ ամիսը, առանց սակայն շօշափելի արդիւնքի յանգելու, իբրեւ հետեւանք կողմերու փոխադարձ անզիջող դիրքերուն (տեսնել այս մասին Ս. Վրացեան, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», Բ. հատոր, էջ 113-207):

Ուրբաթ, 26 *մայիսի* [1899]

Չնայելով, որ Տրդատ Դադեանի այստեղից մեկնելուց յետոյ (-----) *նրա Պոլսից գրած նամակներին երբեք չենք պատասխանել. չնայելով նաեւ, որ երբ լրացաւ Արթին փաշային տրուած երեք ամսւայ համաձայնութիւնը, մենք թէ Տրդատ Դադեանի մեզ մօտ թողած մասնաւոր հասցէով եւ թէ յետոյ Արթին փաշայի անձնական հասցէով յայտնել ենք, որ «Դաշնակցութիւնը» մարտի* 11-*ից կտրած է համարում իր յարաբերութիւնները փաշայի հետ* (*տես Բիւրօ-ի նամակները մարտի* 16-*ից եւ ապրիլի* 2-*ից*), *այնուամենայնիւ Տրդատ Դադեանը շարունակում էր գրել մեզ իբր թէ ոչ մի առանձին բան մեր եւ իրենց մէջ տեղի չլինէր ունեցած* (*տես Տրդատի նամակները մինչ ապրիլի* 30-*ից գրածը*)։ *Ի նկատի ունենալով այս անամօթութիւնը, որի վրայ*

աւելանում է նաեւ վերջին ժամանակները «Դաշնակցութեան» եւ տաճիկ կառավարութեան մէջ իբր թէ շարունակւող բանակցութիւնների մասին լրագրերում հրատարակւած անհիմն լուրերը,— բիւրօն վճռում է՝ վերցնել Տրդատ Դադեանի մայիսի 22-ից գրած վերջին նամակի պատճէնը եւ նշանակելով նամակի վրայ՝ «յետ է դարձնւում յարաբերութիւնների խզւած լինելու պատճառով» — վերադարձւել իրեն։

Ահա նամակի պատճէն՝

22 *մայիսի* 1899

«Ներփակ կը ղրկեմ ձեզ Ալկէմանիէ Յայթունկ Միւնիխի մէկ յօդւածն, որ կը խօսի հաստատւելիք քոմիսիոնի մը վրայ· ինչպէս արդէն մէջն ալ գրւած է, ստուգիւ այդ տեսակ քոմիսիոն մը հաստատիլ ուզւեցաւ, բայց Կօճն(1) *ընդդիմացաւ յայտնելով թէ քոմիսիոնի պէտք չկայ, բաւական է որ կառավարութիւնն իմ ըսածներս նկատողութեան առնու եւ ժամ առաջ պէտք եղածն գործադրել տայ, յայնժամ ես կարող եմ ուզած կերպովս տեսնիլ անոնց հետ եւ կը յուսամ թէ անոնք ալ իրական արդիւնքներ տեսնելով ամէն կերպով կը համոզւին եւ իմ վրայ ալ աւելի վստահութիւն կրնան ունենալ։*

Ք· Օ·(2)

Յ· Գ·— Նոյնպէս հաստատւելիք քոմիսիոնին, որ ետ մնաց, անդամոց վրայ եւս դիտողութիւն ըրաւ Կօճն։

ՆՈՅՆ

1.- Կօճ – գործածուած Արքին (Յարուքիւն) փաշա Տատեանի համար։
2.- Ք. Օ. սկզբնատառերը գրուած են Քամպուր Օղլի-ի փոխարէն, որ նոյնինքն Տրդատ պէյ Տատեանն է։

Ահա եւ ներփակ յօդւածը

Allegemeine Zeitung (Munich)
Le 16 mai 1899

"La nouvelle que des délégués des comités arméniens soient arrivés à Constantinople pour reprendre les négociations rompues il y a quelque temps

avec le gouvernement turc est prématurée. Jusqu'à présent ces comités n'ont pas envoyé des délégués ici, ni ne saurait-on pas dire actuellement quel développement la question arménienne va prendre. Cet état de choses a inspiré une certaine inquiétude au Palais et il a été question d'une comission spéciale, présidée par le mustéchar du ministère des Affaires étrangères, Artin Pacha Dadian, et à laquelle prendraient part un ou deux délégués des comités ainsi que Memdouh Pacha, ministre de l'Intérieur, Enver Bey, gouverneur de Péra, Ahmed Dchalaleddin Pacha, aide-du camp du Sultan, et enfin un avocat Bulbulian Effendi, l'organe dudit gouverneur de Péra auprès des Arméniens en Europe. Mais cette idée était très mauvaise parce que de tous ces fonctionnaires seulement Artin-Pacha inspire de la confiance aux comités étant en rapport avec eux pour les faire patienter et rester calmes.

D'ailleurs nous croyons savoir que Artin-Pacha préférerait que ces comités lui désignent un des leurs à Constantinople avec lequel s'aboucherait directement et chaque fois que le besoin se ferait sentir en faisant naturellement garantir la sécurité personnelle de ce délégué.

L'éxécution de ce plan serait en effet beaucoup plus oppurtune, considérant la haute position qu'occupe Artin-Pacha parmi la nation arménienne et vue que les autres personnages mentionnés, comme Enver Bey, Bulbulian etc., sont absolument indignes de confiance. Il y aurait naturellement un moyen très-simple pour écarter tout danger provenant des comités révolutionnaires: la concession des demandes réclamées déjà depuis deux ans à plusieures reprises par le Patriarcat arménien. Néanmoins la première condition pour amener des améliorations dans la situation de la nation arménienne c'est le maintien de la tranquilité. Les comités feront bien de continuer à suivre les conseils d'Artin Pacha, donnés dans ce sens depuis plus de deux ans”.

Թարգմանութիւնը.—

Կանխահաս է այն լուրը ըստ որուն հայկական կոմիտէներու պատուիրակները հասած ըլլան Կոստանդնուպոլիս՝ վերսկսելու համար թուրք կառավարութեան հետ ժամանակէ մը ի վեր խզուած բանակցութիւնները։ Մինչեւ հիմա այս կոմիտէները հոս պատուիրակները չեն ուղարկած, ոչ ալ կարելի է ըսել, որ այժմ ինչ զարգացում պիտի ստանայ հայկական հարցը։ Իրերու այս կացութիւնը որոշ մտահոգութիւն պատճառեց Պալատին, եւ հարց եղաւ Եւրոպայի հայերուն մօտ ուղարկել յատուկ յանձնախումբ մը՝ նախագահութեամբ Արտաքին գործոց նախարարութեան միւսթեշար Արթին փաշա Տատեանի, եւ որուն մաս պիտի կազմէին կոմիտէներու կողմէ մէկ կամ երկու պատուիրակներ, ինչպէս նաեւ Ներքին գործոց նախարար Մեմտուհ

փաշա, Բերայի կառավարիչ Էնվէր պէյ, Սուլթանին թիկնապահ Ահմէտ Ճելալետտին փաշա եւ, վերջապէս, փաստաբան Պիւլպիւլեան Էֆէնտի։ Սակայն այս մտադրութիւնը շատ դէշ էր, որովհետեւ այս բոլոր պաշտօնեաներէն միայն Արթին փաշան վստահութիւն կը ներշնչէ կոմիտէներուն, իրենց հետ հաղորդակցութեան մէջ գտնուելուն ու համբերելու եւ հանդարտ մնալու ուղղութեամբ անոնց տուած իր յորդորներուն համար։

Այլապէս նաեւ կը խորհինք թէ Արթին փաշա պիտի նախընտրէր, որ այս կոմիտէները Կոստանդնուպոլսոյ մէջ իրեն յանձնարարէին իրենցիններէն մէկը, որուն հետ ուղղակիօրէն խօսէր ինք՝ ամէն անգամ որ անհրաժեշտ ըլլար, բնականաբար երաշխաւորելով այդ պատուիրակին անձնական ապահովութիւնը։ Արդարեւ, շատ աւելի նպատակայարմար պիտի ըլլար այս ծրագիրը իրագործել Արթին փաշայի միջոցով՝ նկատի առնելով անոր գրաւած բարձր դիրքը հայութեան մէջ, քան վերոյիշեալ անձնաւորութեանց, ինչպէս Էնվէր պէյի, Պիւլպիւլեանի եւ այլոց, որոնք բացարձակ արժանի չեն վստահութեան։ Բնականաբար, յեղափոխական կոմիտէներու կողմէ գալիք ամէն վտանգ հեռացնելու համար, պէտք է գոյութիւն ունենար շատ աւելի պարզ միջոց մը.— ընդառաջում այն պահանջներուն, զորս հայոց Պատրիարքարանը երկու տարիէ ի վեր, եւ բազմաթիւ անգամներ, կը կատարէ։ Այսուհանդերձ, հայ ազգի կացութեան մէջ բարեկարգումներ մտցնելու առաջին պայմանը՝ հանդարտութեան պահպանումն է։ Կոմիտէները լաւ կ'ընեն եթէ շարունակեն հետեւիլ Արթին փաշայի աւելի քան երկու տարիներէ ի վեր տուած խորհուրդներուն»։

22

Մատեան No 81-2, *էջ* 83-85 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Նամակի մը սեւագրութիւնը, որ արտագրուելէ ետք գաղտնի մելանով պիտի ղրկուէր Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին: Անընթեռնելի բառերը, ինչպէս միշտ, նշուած են բազմակէտերով:

30 *մայիս* 1899 *թ.*

Արեւելեան Բիւրոյին

Ինչ է պատահել ձեզ հետ. ինչո՞ւ էք այսքան ժամանակ լուռ: Ահա ամբողջ երեք ամիս է, ձեզնից ոչ մի տեղեկութիւն չունինք: Վերջին անգամները գրել ենք ձեզ մարտի 19-*ին*, 29-*ին եւ ապրիլի* 16-*ին. դոցանից մինչեւ անգամ առաջինին մասին* (*եւ որին իսկապէս պիտի հեռագրով պատասխանէիք*) *մինչ այժմ լուր չտուիք մեզ: Մենք ենթադրում ենք, որ ցրւել էք ձեր շրջանները եւ քաղաքը մնացել է անիրաւասու դրութեան մէջ: Երբ այդպէս է, գոնէ պատասխանատու հարցեր դնելիս՝ մի կերպ տեղեկացրէք մեզ, որ շուտով չէ կարելի մեր հարցերին գոհացում տալ:*

Մայիսի 10/22-*ին մի նամակ ստացւեց Ծաղկի* «*Զոհ*»*ից*(1) (*որը չգիտէ Մենելիքի*(2) *այնտեղ լինելը*), *մի նամակ, որից դնում ենք այստեղ հետեւեալ կտորը:*

«Անցեալ օրը մեր երկրորդական ընկերներէն մէկը մեկնեցաւ դէպի ներսերը իբրեւ թարգման գերմանական դեսպանատան զինուորական կցորդ (attaché) մայիոր Մորգինի, Անատոլուի երկաթուղիներու տնօրէնի եւ գերմանական պանքի տնօրէնի հետ, որոնք կ՚երթան զօրաբանակները աչքէ անցնել եւ քննութիւններ ընել ռուսօ-թուրք սահմանագլխի վրայ: Տեղական թերթերը գրեցին արդէն թէ Մորգէնը Կարնոյ սահմանագլուխը աչքէ անցնելու կ՚երթայ եւ վերադարձին ուղղակի Բերլին պիտի անցնի առանց հոս ժամանակ կորցնելու: …… Այս խումբի ճանապարհորդութեան ծրագիրն է՝ Տրապիզոն, անկէ Էրզրում, ամէնն ալ, ի հարկէ, աչքէ անցնելով. սահմանագլխի ամրութիւնները քննելէ ետքը, անցնիլ Կարս եւ յետոյ՝ Անին աչքէ անցնելէ ետքը՝ երթալ Թիֆլիզ, ուր պիտի մնան hotel «Լոնտոն». այսուհետ պիտի իջնեն Պաթում եւ ծովու ճամբով վերադառնան… Բայց ինչ որ կարեւոր է՝ սա է, որ մեր ընկերը պիտի կրնայ լաւ ուսումնասիրութիւններ ընել: Մենք այսօր Արեւելեան բիւրօ-ին կը գրենք այդ մասին, դուք ալ գրեցէք, որ ուշադիր ըլլան այդ մարդոց Թիֆլիզ հասնելուն եւ այն ատեն, եթէ օգտակար սեպեն, երբան հիւրանոցը եւ տեսնեն

մեր տղան (Յարութիւն Մարգարեան). պանդոկի դռնապանը տեղեկութիւն պիտի ունենար նախապէս: Այս ճամբորդութիւնը պիտի տեւէ 4-էն 6 շաբաթ: *Սրանով ուրեմն կատարում ենք «Զոհի» ցանկութիւնը։*

Մայիս 10-*ին մի նամակ ստացանք Եգիպտոսից Հաջի-Արամ Տէր Եղիազարով ստորագրութեամբ, որի մէջ Հաջին պատմում էր, թէ ինչպէս ե՛ւ Վասպուրականում ձերբակալուեց, ինչպէս Պոլիս բերուեց եւ այնուհետ Եոֆֆէ ազատուելիս ծովի ալիքների պատճառաւ Պորտ Սայիդ իջաւ, իսկ այնտեղից մի յայտնի օգնութեան շնորհիւ Ալէքսանդրիա եկաւ... Պատմելով այդ բոլորը, աւելացնում էր, որ Ալէքսանդրիայից գնում է մեր Վահանի*(3) *մօտ եւ մեզնից խնդրում էր կարգադրութիւններ, որպէսզի Վահանը այստեղ ուղարկի կարեւոր տեղեկութիւններ մեզ պատմելու համար։ Այդ Հաջին, ի հարկէ, այն անձնաւորութիւնն է, որը ամբաստանւում էր բազմաթիւ մատնութիւններում Վանում։ Մենք իսկոյն գրեցինք Վահանին, որ այնտեղ ամէն կերպ զգոյշ լինին դրանից եւ աշխատեն միայն աչքի տակ պահել* [*մինչ*] *կարելի լինի պարզել դրա մասին եղած կասկածները։ Յետոյ Մենելիքից ստացանք տեղեկութիւն, որ այդ Հաջին վերջին ժամանակները Ծաղկում պտտում է եղել փողոցներում, ապրելով լրտեսների մօտ. իսկ անցեալ օրը պատիւ ունեցանք նորից նրա մի երկար գրութիւնը ստանալու, ուր մեղադրում է Վարդանին, Բժշկին եւ Նիկոլին՝*(4) *թէ դրանք* 20*ից մինչ* 60-*ական հազարներ գրպաններն են դրել կուսակցութեան փողերից, ու սաստիկ յարձակւում է Վրէժի*(5) *կոմիտէի վրայ, որը չլսելով Մեծ քաղաքի*(6) *կարգադրութիւններին, իր հետ գացած խմբի եւ յետագայ աղէտների պատճառը եղան։ Այս բոլորը ամենալիրը լեզուով պատմելուց յետոյ՝ պահանջում է իր պէս մի անձնուէր զինուորի «քաղցած» չը թողնել եւ անմիջապէս օգնութիւն հասցնել։ Այժմ մեզ հարկաւոր են որոշ փաստեր, որոնց վրայ կարող լինէինք հիմնել այդ մարդու հետ մեր բռնելիք ընթացքը. խիստ վճիռը, ի հարկէ, պահանջում է բացորոշ ապացոյցներ։ Այդ պատճառով միաժամանակ մենք դիմում ենք նաեւ Ծովափ*(7), *որը, մի գուցէ, տեղից կարողանայ ստանալ տեղեկութիւններ, եւ Վրէժին։ Եթէ դուք եւս ունիք կարեւոր բան, աճապարեցէք մեզ հաղորդելու։*

Ինչպէս են գնում գործերը այդտեղ. ինչ տրամադրութիւն կայ եւայլն։ Այդ ի՞նչ ձերբակալութիւններ[*են*] *եղել Վանում։ Մի մասնաւոր նամակից այստեղ իմացանք, իբր թէ Վանից երեք ինտելլիգենտ երիտասարդներ են բերուել Իգդիր, որ դորանից մէկին գաւառապետը ապտակել է եւ փոխարէնը ստացել։ Յետոյ Կ. Բէհբութեանի ձերբակալումը — այդ ի՞նչ է նշանակում, ի՞նչ է գտնուել նրա մօտ։*

Այստեղի լեհացիներից մէկի խորհրդով՝ Լօզան մենք այցելեցինք մի հին գործիչ-էմիգրանտի խորհուրդներ հարցնելու «լուացման» սիստեմի դէմ լեհացիների մէջ ընդունուած միջոցների մասին։ Ծերուկը, հանդերձ իր բոլոր բարեացակամութեան, ոչինչ չկարողացաւ մեզ ասել. լեհացոց մէջ շատ բան աւելի թարմ պատմական կեանքի ինքնուրոյն հետեւանք է, քան թէ այս կամ

այն ձեւի աշխատութիւն։ Մի բան միայն՝ նա խորհուրդ է տալիս .....(8) — այդ այն է՝ մտնել կառավարութեան բացած[?] դպրոցները, ուսումնարանները եւայլն իբր ուսուցիչներ եւ այդպիսով ըստ կարելոյն առաջ տանել սեպհական ազգերի պրոպագանդան։

Մեր կողմերում օրւայ հարցը Լահէյի ժողովն(9) է։ Զերազի(10) այնտեղ գնալը, Բոլգարիայի հայերի դիմումը ժողովի նախագահին եւայլն — արդէն որոշ չափով հայկական հարցը ուշադրութիւն .....(8) դարձրել։ Զգիտենք այդտեղ եկան թէ ոչ, բայց հաստատ է այժմ, որ Լահէում ընտրւած է մի կոմիսիա, որը պիտի ընդունի ամէն տեսակ կողմնակի (անմիջական զինաթափութեան հետ կապ չունեցող) խնդիրներ, առաջարկութիւններ եւայլն։ Ափսոս. որ չնայելով երկու անգամ մեր ցրւած շրջաբերականները, Եգիպտոսից եւ Ամերիկայից դեռ ձայներ չեն հասել. մենք եւս այստեղից բան չենք արել. սպասում ենք մակեդոնական կոմիտէի քայլին. նրանք ընդունեցին մեր առաջարկը, բայց ուշանում են իրենց համար մարդ ուղարկել ժողովին, իսկ մեր հետ միասին միայն եւրոպական հասարակական կարծիքին դիմել։ Մենք սպասում ենք, մի շարք պատճառներով, ժողովին դիմելու վրայ եւ Թարեւին[?] լիազօրութիւն ենք տւել խօսալու եւ խմբագրելու նրանց հետ դիմումը. Ռ[ոստոմը] այժմ նրանց մօտ է եւ այս քանի օրերս սպասում ենք վերջնական պատասխանի։ Այսպէս կամ այնպէս՝ այս շաբաթ շատ բան կը պարզւի։ Ֆրանսերէնը եւս(11)պիտի դուրս բերենք մինչ 10 օր (ձեր հաշւով մայիսի վերջին)։ Ուշ չէ, որովհետեւ ժողովը երկարում է։ Ֆրանսերէնի հետ միաժամանակ լոյս կը տեսնի եւ մարտ համարը(12)։ Ի միջի այլոց այստեղ մեզ յաջողւեց Զւիցերիայի յայտնի անձնաւորութիւններից կազմակերպել մի կոմիտէ, որը նաեւ պիտի դիմէ զւիցերիական ներկայացուցչին Լահէում խնդրելով նրան մասնաւոր կերպով խօսել անգլիական եւ ամերիկական դեսպանների հետ մեր հարցի մասին եւ ըստ այնմ կարելին անել, եւ երկրորդ՝ Խաղաղութեան ժողովից բոլորովին անկախ, օգտւելով իրենց կապերից Զւիցերիայում եւ Ֆրանսիայում, պիտի աշխատեն ուր կարելի է, ընդհանուր մի հոսանք առաջ բերել յօգուտ մեր դատին (անորոշ ժամանակւայ ընթացքում)։ Տեսնենք Ալլահը ինչ կը յաջողի այդ բարի մարդկանց։

Բանակցութիւնների խնդրի մասին(12), գուցէ, այդտեղ կգան սուտուսմուտ հեռագրեր։ Դոքա բոլորը հնարւում են Պոլսում, ուր մեծ երկիւղ ունեն Լահէի ժողովից։ Փաշայի(14) հետ մենք կտրել ենք յարաբերութիւններս, բայց նա շարունակում էր գրել եւ խորհուրդներ տալ. զզւած այդ մեծ անպիտանից, մենք սկսել ենք նրա գրածները իրեն վերադարձնել. գուցէ այժմ ձեռք քաշի մեզնից։

Ջստանալով ժամանակին ձեզնից պատասխան՝ Բորիսի(15) ծրարը մենք կարգաւորեցինք մեծամասնութեան ցանկութեան համաձայն։ Նա վաղուց մեկնել է, բայց չգիտենք ուր է այժմ — այն գործին գնաց, որի մասին հարցրել էինք եւ ձեր կարծիքը. դա Լեռնավայրի(16) պատասխանատու մարմնի

մէջ մտաւ։ Երեւի այս քանի օրերս լուր կ՚ունենաք։

Բացի այստեղի բազմաթիւ հասցէները (կոմիտէների), ձեզ ուղարկեցինք Տիգրանի հետ մի նորը եւս։ Ի հարկէ, իմացած կը լինէք, որ Տիգրանը այստեղից մեկնեց իր անձնական գործերով, եւ ոչ թէ մեր համաձայնութեամբ։

Սեպուհին(17) *առանց դրամ մի թողէք։ Մարի*(18) *գործերը շատ լաւ են գնում։ պէտք է տրամադրութիւնները չփացնել*[?]։ *Ամերիկայից կարողացանք Լեռնավայրի համար փոխադրել տալ* 600 *ռուբլու չափ։ Մենք էլ կրկին փող չունենք։ Այստեղ եկածները գացին ընթացիկ ծախսերի, պարտքերի եւ ընկերների ճանապարհածախսի* (800 *ֆր.*)։ *Բոլգարիայից կամ Եգիպտոսից բան չեն ուղարկում։ եղածը երեւի տեղւոյս համար ծախսւի։ Ստիպւած ենք կրկին ձեզ դիմել։ Գործերի բաւականին տաք ժամանակ է, իսկ մենք եօլա ենք գնում։ ապագայ գալիքների յոյսերով եւ ամէն բան պարտքով ենք անում այժմ։ Արդեո՞ք կստանանք չուտով ձեզնից մի բան։*

Սիրով ստացանք Օհանեանի գրքերը եւ ըստ պատկանելոյն բոլորը ցրեցինք։

1.- Ծաղիկ կամ Կռուածաղիկ – ծածկանուն Պոլսոյ։ Զոհը ծածկանունն է Կ. Պոլսոյ Սամաթիա թաղամասի կոմիտէին՝ բացկացած առաւելաբար մարտականներէ։

2.- Մենելիքի ինքնութիւնը անյայտ կը մնայ մեզի։ Կրնայ գործածուած ըլլալ Աշոտ Բագրատունիի (բուն անունով Եղիկեան Կարապետ) համար, որ այդ օրերուն Պոլիս անցած էր։

3.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի։

4.- Վարդանը՝ Խանասորի Վարդանն է, Մեհրաբեան Սարգիս։ Բժիշկը հաւանաբար Ատրպատականի ընկերներէն բժ. Քրիստափոր Օհանեանը։ Նիկոլը՝ Դումանն է, Նիկողայոս Տէր Յովհաննիսեան։

5.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի (Թաւրիզ)։

6.- Մեծ Քաղաք – ծածկանուն Թիֆլիսի, այստեղ՝ Արեւելեան բիւրոյի։

7.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոնի։

8.- Անընթեռնելի մէկ բառ։

9.- 1899 թ. Մայիս-Յունիս ամիսներուն գումարուած Խաղաղութեան վեհաժողովը, որուն տրուած էր նաեւ Զինաթափութեան ժողով անունը։

10.- Մինաս Չերազ, ազգային հանրածանօթ գործիչ։

11.- «Դրօշակ»ի յատուկ յաւելուած՝ ֆրանսերէն լեզուով։

12.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ»ի 1899 թ. Մարտ ամսուան համարին։

13.- Խօսքը կը վերաբերի Արթին փաշա Տատեանի միջնորդութեամբ Համիտ Բ.ի հետ տարուող անուղղակի բանակցութիւններուն, որոնք խզուած էին արդէն Դաշնակցութեան կողմէ։

14.- Փաշան՝ նոյն Արթին (Յարութիւն) Տատեան ամիրան է։

15.- Բորիս – ծածկանուն Արեւմտեան բիւրոյի եւ Լեռնավայր-Կիլիկիոյ պատասխանատու մարմնի անդամ Սմբատ Խաչատրեանի։

16.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ յարակից Սուրիոյ եւ Լիբանանի Դաշնակցութեան կազմակերպութեան։

17.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրիաքեանի։

18.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի։

23

Մատեան No 84, *էջ* 456

30 *մայիսի* 1899

«*Մօլէկիւլ*» *կոմիտէին*(1), *Բերլին*

Սիրելի ընկերներ,

Մինչ Կիւրակի, յունիսի 4-*ը, մեզ հարկաւոր է մի գումար, որը դժուար է այդքան կարճ ժամանակում ստանալ հեռու տեղերից։ Եթէ ազատ դրամ ունիք եւ կարող էք մեզ շուտով հասցնել — խնդրում ենք չմերժել. նամակս ստանալուն պէս ուղարկէք մեզ, ինչքան կարող կը լինիք։*

Հաստատում ենք մեր նամակը մայիսի 18-*ից. յաջողւում է արդեօք ձեզ մի բան*(2). *եթէ այո, ուղարկէք շուտով մեզ դիմումի պատճէնը, որպէսզի* «*Դրօշակ*»*ի հետեւեալ համարին հասնի.* 5-*րդ համարը լոյս կը տեսնի մինչ յունիսի* 10-12-*ը։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Մօլէկիւլ – Պերլինի Հ.Յ.Դ. կոմիտէին անունն է:
2.- Ակնարկութիւն Լահէյի խաղաղութեան խորհրդաժողովին առթիւ դիմում մը յղելու այն առաջարկին, զոր Արեւմտեան բիւրոն կատարած էր Պերլինի կոմիտէին – տես էջ 58:

24

Մատեան No 84, *էջ* 496-498

18 *յուլիսի* 1899

Ղարիբին(1), *Փարիզ*.

Սիրելի՛,

կատարում ենք երէկւայ փոքրիկ տոմսակով խոստացածներս։ Բաղդասարեանին այդտեղ մեր ներկայացուցիչ նշանակելը ցանկալի չէ, նախ՝ որովհետեւ առհասարակ «Դաշնակցութիւնը» չէ ընդունում ոչ մի «ներկայացուցչութիւն» այնտեղ, ուր կարող են խմբւել թէկուզ 2-3 հոգի։ Երկրորդ՝ որովհետեւ աշնանից այդտեղ պիտի լինիք դու եւ Ղազարը. երրորդ՝ որովհետեւ այդ մարդուց դժգոհ են Փարիզում եղող մի քանի լաւ երիտասարդներ, որոնց սակայն շատ ցանկալի է մօտեցնել տեղիդ գործերին. չորրորդ՝ որովհետեւ բոլորին արիւնը կապւած է այդտեղի «Ակումբի» հետ, որի անվերջ թշնամութիւնը ուսանողութեան մեծամասնութեան հետ ոչ մի տեսակէտից ցանկալի չէ, որ որեւէ ուսանողութիւն ունենայ «Դաշնակցութեան» հետ, եւ վերջապէս հինգերորդ՝ որովհետեւ, ինչպէս երեւում է, Բաղդասարեան շատ թիւր գաղափար ունի «յեղափոխական-դաշնակցական» խօսքերի վրայ. ինքը, օրինակ, այդպէս իրեն անւանելով հանդերձ՝ իրաւունք է համարում իր համար մեզ սանտիմների հաշիւներ անգամ ներկայացնել Փարիզում թերթը ցրւելու համար։ Եթէ այս բոլոր պատճառները բաւական չեն Բաղդասարեանի ներկայացուցչութիւնը մերժելու համար, մենք դնում ենք մի հարց եւս, թողնելով կշռել այդ հարցը քեզ եւ Սարգսին. արդեօ՞ք Բաղդասարեանը «յայտնի անձանց» հետ վարելիք իր յարաբերութիւնների միջոցին մի գեղեցիկ օր չպիտի ամաչցնի «Դաշնակցութեանը», իբր մեր գործերին (անցեալում եւ ներկայում) շատ քիչ ծանօթ եւ, դուցէ, դեռ անփորձ երիտասարդ։

Գալփաքչեանին համոզելու համար աւելի լաւ է խօսիլ հետը սկզբունքով։ Ամէնից առաջ հարկաւոր է հասկացնել նրան, որ «Դաշնակցութիւնը» այսօր չէ, որ պիտի ընտրի յեղափոխական ուղին. նրա անցեալը յայտնի է, իսկ ներկայ եւ ապագայ տարւայ համար նա նոյնպէս արդէն գծագրել է մի քանի ձեռարկութիւններ, որոնց համար եւ ընդհանուր ժողովը կուսակցութեան առաջնակարգ ուժերից կազմակերպել է «գործող պատասխանատու մարմիններ», իւրաքանչիւրը առնուազը 4 հոգուց բաղկացած, որոնք արդէն իրենց շրջաններում իրենց գործի վրայ են եւ որոնց տրամադրութեան տակ է կազմակերպութեան միջոցների մեծագոյն մասը։ Իսկ ինչ վերաբերում է ներկայ ձեր միսսիային, դա, ի հարկէ, երկրորդական բնաւորութեան խնդիր է, որը,

ինքնըստինքեան բխում է կեանքից եւ որի մասին կարող են եւ պէտք է հոգան երկրի գործերից հեռու, Եւրոպայում ցրւած մարդիկ։ Թող իմանայ պ. Գալփաքչեանը, որ յոյները դեռ նորերս 60 հազար զինւոր դուրս բերին թիւրքերի դէմ, բայց եւ այնպէս իրենք չլուծեցին Կրետէի հարցը։ Ցեղափոխութիւնը մեր գործունէութեան մէջ եւս հիմնաքար է, այլապէս մենք ոչ լոյս աշխարհ եկած կը լինէինք, ոչ էլ ահա 9 տարի կայ եւրոպական հասարակական կարծիքը գրգռելու համար այնքան անհոգ կը լինէինք եղած։ Բայց միթէ՞ կարելի է տարակուսել, որ ամէն մի յեղափոխական քայլ այնքան աւելի արդիւնաւէտ պիտի լինի, որքան մեծ արձագանք կը գտնի նա դրսում, կամ որ Եւրոպայի համակրութիւնը միշտ եղել է եւ կը լինի մեր շարժմանը յուսատու, դրդիչ պայմաններից մէկը, եւայլն եւայլն։

Գալփաքչեանի առաջարկութեան վերաբերմամբ մի մեծ ժողով գումարել եւայլն — մենք միանգամայն համամիտ ենք քեզ հետ. Փարիզի ներկայ մթնոլորտում այդպիսի մի ժողով, ոչ մի օգուտ չտալով հանդերձ, միմիայն բազար դուրս կը բերի մի շարք բաներ, որոնք պիտի սրբութիւններ մնան։ Բայց կայացնել մի ժողով, ինչպէս դու մտածում ես, սահմանափակ շրջանում, յուսալի տարրերից եւ բոլորովին ազատ «զսպանական» միջավայրին յատուկ հարցերից — ի հարկէ միանգամայն նպատակայարմար է։ Ի դէպ, եթէ Գալփաքչեանը չհամաձայնի մտնել «Դաշնակցութեան» մարմնի մէջ, դրանից առնուազը պէտք է խօսք առնել մասնաւոր կերպով մեզ աջակցելու եւ հարկաւոր դէպքերում մեր յանձնարարութիւնները կատարելու համար։

Պիեր Քիառի(2) *մօտ գնալիս պէտք է այդ մարդուն տեղեկութիւններ տալ «Դաշնակցութեան» մասին։ Իր յօդուածում* Revue de Paris-*ի մէջ, որը վերաբերում էր Փարիզի կոմիտէի բանակցութիւններին թուրք կառավարութեան հետ* («Diplomatie secrète du Sultan», page 882)(3), *սխալ տեղեկութիւններ կայ բանկի ցոյցի եւ Սամաթիայի կռւի վերաբերմամբ։* Revue de Paris *(յունիսի համար) դուք կարող էք այդտեղ գտնել, իսկ մենք ուղարկում ենք սրա հետ «Դրօշակ»ի մի համար, ուր նկարագրւած է Սամաթիայի կռիւը։*

Փարիզ յայտնի անձանց մեր դիմումի <u>պատճէնը</u> եւս ուղարկում ենք սրա հետ, միայն իմացած լինէք, որ այդ պատճէնը միակն է, որ մեզ մօտ մնացել է եւ իբր դոկումենտ պիտի մնայ խմբագրատանը. հետեւաբար չպէտք է ում եւ իցէ տաք կամ յայտնէք։ Պէտք է <u>անպատճառ հետեւեալ բերէք</u>։

Իսկոյն ստացանք եւ քո երկրորդ նամակը. լաւ չեղաւ, որ Զերազից բան չվերցրիք։ Եթէ նա յոյսը դրել է, որ իր լրագրից քաղուածքներ պէտք է անենք, դեռ շատ ուշ կը լինի, երեւի... պէտք էր մի կարճ բան վերցնել. նշանակութիւն չունի, որ յուսատու տպաւորութիւններ չունի. թող ժողովուրդը իրերին նայի այնպէս ինչպէս կան եւ իրեն ֆանտազիաներով չկերակրի։

Ահա եւ այն մարդկանցը ցուցակը, որոնց մենք Փարիզում գրաւոր դիմում ենք արել։

Francis de Pressensé, Fernand Labori, Emile Zola, Jean Jaurès, Père F. Charmetant, Georges Clémenceau, Ernest Lavisse, Albert Vandal, Denys

Cochin, Le Compte de Meun, Gérard Richard, Anatole France, Ernest Vaugharn, Mme Séverine, Octave Mirbeau, Henri Brisson, Ludovic Trarieux.

Ինչպէս կ՚երեւի Quillard-ին շատ հարեւանցի կարծիք կազմել տուած են իր բարեկամ մարտականները(4). ամփոփ եւ ճշգրիտ տալու է անոր մեր կազմակերպութեան մասին, եւ միանգամայն հասկցնելու է որ, բացարձակ կերպով Comité Central Révolutionnaire arménien(5) անունով մարմին մը ծանօթ չէր հայութեան: Quillard-ը, իբր անիշխանական, շատ շուտ կրնայ որոշել իր դիրքը, եթէ մօտից ծանօթանայ մարտականների, ուղղութեան մասին: Quillard-ին պարզելու է եւ մեր բանակցութիւնները. թերեւս ինք ալ հրատարակել ստանձնէ Revue de Paris-ի մէջ. այս մասին կարելի է խօսիլ նաեւ Lavisse-ի հետ, որ տնօրէնն է:

– Չմոռանաս հասցէ մը տալ մեզ: Առաջին անգամ գրեցինք քեզ Սարգսի անունով, Ֆընտրզլեանի հասցէին, երկրորդ անգամ, երէկ, Բաղդասարեանի հասցէին:

– Այս պահուս Ահմէտ Ռիզան(6) հոս էր. կ՚ուզէ տեսակցիլ մեզ հետ «միութեան» հնարաւորութեան մասին: Հինգշաբթի համամիտ պէտք է ըլլանք:

– Կովկաս ապաստանած հայաստանցիներու Կրետէ փոխադրման առթիւ մեր գրած նամակը պետութիւններուն՝ ղրկած չենք Frankfurter Zeitung-ին: Կիրակի օրուան համարին մէջ (16 յուլիս) գրեթէ բառացի տպագրուած էր: Մոռանալու չէ Quillard-էն խնդրել, որ Aurore-ին մէջ ինքն ալ գրէ եւ այդ նամակը յիշատակէ:

Յաջողութեան մաղթանքներ եւ բարեւներ երկուքիդ ալ:
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ղարիբ – ծածկանուն Աւետիս Ահարոնեանի:

2.- Պիէռ Քիառ – ֆրանսացի հրապարակագիր, որ շուտով, տարուան վերջը, պիտի հրաւիրուէր Pro-Armenia-ի խմբագրապետութեան:

3.- Ֆրանսերէն՝ «Սուլթանին գաղտնի դիւանագիտութիւնը, էջ 882»:

4.- Մարտականներ – հնչակեան կուսակցութենէն անջատուածները, որոնք այսպէս կը կոչուէին Լոնտոնի մէջ իրենց հրատարակած «Մարտ» թերթին անունով:

5.- Ֆրանսերէն՝ Հայ յեղափոխական կեդրոնական կոմիտէ:

6.- Աքսորի մէջ գտնուող թուրք ղեկավար անձնաւորութիւն, ընդդիմադիր Ապտիւլ Համիտի բռնատիրական վարչակարգին:

25

Մատեան No 85, *էջ* 7-8

22 *յուլիսի* 1899

Պ. Ճանկիւլեանին(1), *Աթէնք*

Յարգելի ընկե՛ր,

Յունիսի 21 *եւ* 24 *թւակիր Ձեր նամակները ստացել ենք։ Ներեցէք, որ մի փոքր ուշացրինք մեր պատասխանը։*

Եգիպտոս գնացող մեր ընկերոջ մասին Ձեզ տւած տեղեկութիւնը ճիշդ չէ։ Այնտեղ գնաց Բօրիսը(2), *որը յոյսով ենք տեղում եղած ընկերների հետ միասին կարող կը լինի ուժ տալ թէ Եգիպտոսի եւ թէ դրա հետ կապւած կէտերի գործերին*(3)։ *Ինչ վերաբերում է* .....(4) *նա այժմ այստեղ է եւ գործակցում է մեզ։*

Ընկերներին պաշտող եւ Սեպուհին ու Վահանին(5) *բարեկամ պարոնին մասին մենք, ի հարկէ, հարկաւոր նախազգուշութիւնները կ՚անենք մեր ընկերներին, բայց եթէ դուք ունիք բնորոշ փաստեր այդ անձնաւորութեան մասին, կը խնդրէինք հաղորդել մեզ, ինչպէս եւ գրել մեզ պարոնի անունը։*

«Դրօշակի» հաւաքածուն կ՚ուղարկենք Ձեզ, բայց միայն եղած համարներից. կատարեալ հաւաքածու դժբախտաբար անկարող ենք կազմել, որովհետեւ կան պակաս համարներ։

Իսագիւլը այժմ հեռացել է Թիֆլիզից կազմակերպական գործերով եւ հետեւաբար նրա հասցէն անկարող ենք Ձեզ ուղարկել. մեզ էլ չէ յայտնի ո՞ւր, ի՞նչ քաղաքում է նա գտնւում այժմ. մինչ Թիֆլիս նրա վերադառնալը ուրեմն պիտի սպասէք։

Արփիարի մասին(6) .....(7) *Ձեր ստացած լուրը շատ հետաքրքիր է, սակայն ապացո՞յց... Ով փոքրիշատէ գաղափար ունի այն տեղի մարդկանց մասին, որին պատկանում է Արփիարը, ի հարկէ, կը հաւատայ, որ նա ընդունած է Մուխտար փաշայի հետ յարաբերութիւնների մէջ լինելու, բայց հրապարակել մեղադրելու համար անհրաժեշտ է ունենալ անպայման ապացոյցներ։ Մենք լուր առանք վերջին օրերս, որ նա աշխատում է միութիւն կայացնել «Արմենիայի» հետ։ Այդ լուրին համապատասխանում են «Նոր Կեանքի» վերջին համարի մէջ Արփիարի շողոքորթութիւնները Փորթուգալեանի հասցէին։ Վա՜յ հայ ժողովրդին, եթէ նրա դատը պիտի պաշտպանւի այն իր զաւակների ձեռքով, որոնք իրար մօտենալու համար ուրիշ հող չունեն բացի շողոքորթութիւնից... Սակայն եթէ այս լուրը ճիշդ է, ուրեմն որոշ չափով հակասում է Արփիարի Պոլիս վերադառնալու մտադրութեան։*

Իզմիրի մեր ընկերներից մէկը գրում է մեզ հետաւեալ տեղեկութիւնը, որի մասին վստահ ենք դուք չէք մերժիլ կարեւոր բացատրութիւնները մեզ հաղորդելու։ Մայիսին Գայլ-Վահանը(8) *եկած էր հոս. այդ մարդը յուսահատած է եւ գացած մեր խմբի մի քանի գաւա[ռա]ցի պարզամիտ տղաներու միտքն ալ պղտորած է, ըսելով թէ ոչ մի կուսակցութեան մի վստահէք, բոլորն ալ վստահելի չեն։ Իրմէ բացատրութիւն խնդրեցի եւ նա վերջ ի վերջոյ յայտնեց, որ ինք նամակ ստացած է պ. Ճանկիւլեանից, որը յանձնարարած է ոչ մի կուսակցութեան չվստահիլ ու սպասել մինչեւ որ ինքը վերջնական նամակ պիտի գրէ։ Մենք քիչ մը վերապահութեամբ, ի հարկէ, իմացանք այս լուրը, քանի որ չգիտենք թէ պ. Ճանկիւլեանը ինչ պատճառ ունի հրապարակը ամբողջ կասկածելի ներկայացնել, երբ դորանով վհատութիւնը եւ անվստահութիւնը յաւիտենական բուն պիտի դնէ միամիտներու սրտին մէջ։*

Յոյսով ենք, որ հետաւեալ անգամ Ձեր անձնական դրութեան մասին աւելի մխիթարական տեղեկութիւններ կը հաղորդէք մեզ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Յարութիւն Ճանկիւլեան, հնչակեան հանրածանօթ ղեկավար անձնաւորութիւն:

2.- Բօրիս – ծածկանուն Սմբատ Խաչատրեանի:

3.- Ակնարկութիւն այն իրողութեան, որ համեմատաբար ազատ պայմաններու տակ գտնուող Եգիպտոսէն կը ղեկավարուէին Կիլիկիոյ, Սուրիոյ, Լիբանանի եւ մինչեւ իսկ Իզմիրի կուսակցական գործերը:

4.- Անընթեռնելի մէկ անուն:

5.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ): Վահան – ծածկանուն Մատինեան Նիկոլի: Երկուքն ալ Եգիպտոսի մէջ Դաշնակցութեան ներկայացուցիչներ:

6.- Ծանօթ գրող Արփիար Արփիարեան:

7.- Անընթեռնելի մէկ անուն:

8.- Գայլ-Վահան (Տոլպաշեան Մինաս) – յեղափոխական մարտիկ (1872-1904):

26

Մատեան No 85, *էջ* 31-32

25 *յուլիսի* 1899

Ղարիբին(1), *Փարիզ*.

Սիրելի!

Քո բոլոր նամակները ստացել ենք, դրանց թւում նաեւ Զիպրիանու(2) *հետ ունեցած առաջին տեսակցութեան առթիւ գրածդ։ Այս մասին յիշեցնում ենք, որովհետեւ, ինչպէս երեւում է յուլիսի* 24-*ին գրուած վերջին նամակիցդ, դու կասկածում ես թէ նամակդ մեզ հասած լինի։*

«Դրօշակի» համարը ոչ միայն մինչ այժմ լոյս չէ տեսել, այլեւ ուրախ պիտի լինինք, եթէ դեռ մինչ 10 *օր էլ կարողանանք դուրս բերել։ Մինչ այժմ համարեա զբաղուած ենք եղել միմիայն «յաւելուածով» եւ առօրեայ բիւրօ-ական գործերով ու գրագրութիւններով։ «Դրօշակը» դեռ երրորդ օրն է, որ շարւում է եւ առայժմ պատրաստ ունինք միայն Պատկերը եւ կովկասեան խապրիկները*(3). *միւս նիւթերը միայն էգուց-միւս օրը կը յանձնուին գրաշարին։ Այդ պատճառաւ խնդրում ենք տպագրութեան համար ինչ նիւթ որ ժողովի մօտդ՝ անմիջապէս մեզ ուղարկիր. Ժերար-Ռիշարի*(4) *նամակը նոյնպէս անմիջապէս մեզ ուղարկիր, որովհետեւ պիտի դնուի համարում նաեւ ֆրանսերէն տեկստը։ Եթէ վախենում ես կորչելուց, ուղարկիր պատւիրուած նամակով. այն ժամանակ դու էլ, մենք էլ հանգիստ կը լինինք, որ նամակը մեզ կը հասնի։*

Վերջին մեր ծրարով ուղարկել ենք քեզ բանակցութիւնների պատմութիւնը եւ այս անգամ ուղարկում ենք «ներկայացուցչութեան» մի ուրիշ օրինակ. վերջինս, կրկնում ենք, որովհետեւ առաջին անգամ ուղարկուածի վրայ մոռացմամբ կնիք չէր դրուած եւ հետեւաբար անպէտք պիտի համարուէր։

Գարօ-ի(5) *ծանօթ հրապարակախօս Նոգերի մասին խօսել ենք արդէն դեռ այստեղից մեկնելիս. գուցէ, յայլողի գտնել նրան. գուցէ, նոյնիսկ Սարգիսը ծանօթ է նրան. նա ապրել է Ժինեւում եւ իր հրատարակած գրքի համար շատ տեղեկութիւններ վերցրել է մեր խմբագրութիւնից*(6)։ *Նոգերի մասին յիշեցնելով, չենք ուզում, որ նրանից նամակ վերցնէք. դրան համարում են, ի հարկէ, փոքր մարդ, բայց՝ իբր լրագրական աշխարհի հետ չփւող մի անձնաւորութիւն՝ կարող է մեզ հարկաւոր դէպքում շատ օգնել։ Այդ ինքնըստինքեան, բայց այս անգամ ուզում ենք գլխաւորապէս յիշեցնել ձեզ, եթէ ի հարկէ գլուխ գալու բան համարէք,* Daily News-*ի եւ* Times-*ի թղթակիցների հետ տեսնուելով պահանջեցէք*[?], *որ մեր տւած տեղեկութիւնները զետեղեն*

իրենց լրագրերում. հարցրէք, տեղեկութիւններ ժողովեցէք այդ պարոնների մասին, մտածերէք նախօրէին՝ թէ ինչպէս կարելի է խօսել դրանց հետ ու մի քիչ էլ ստէք[?] *դէպի այդ պ.պ. անգլիացիները. եթէ նոյնիսկ աջակցութեան որեւէ խոստում էլ չյաջողւի ստանալ նրանցից, գոնեա որեւէ գաղափար, որեւէ որոշ տպաւորութիւն կը ստանաք այդ մարդկանցից, իսկ դա յայտնի չափով կ՚աւելացնի մեր փորձառութիւնը։*

Ուղարկում ենք սրա հետ 29 *հատ լուսանկար, որոնք գուցէ կարող էք հետներդ վերցնել կարեւոր այցելութիւնների ժամանակ։ Զիպրիանու կամ Քիարի մօտ անպատճառ տարէք, ստուգեցէք տպաւորութիւնը եւ այսուհետ կ՚իմանաք, որքան կարելի է օգտւել այդ լուսանկարներից։ Հասկացրէք, որ դժւարութեամբ են նկարւում եւ այդ պատճառով քիչ ունենք լուսանկարներ. արշաւախումբը բաղկացած էր* 280 *հոգուց, բայց, ինչպէս երեւում է նկարներից, աննշան մասին է յաջողւել նկարւել*(7)*։ Եթէ բան է, ձեզնից նկար ուզող գտնւի, չտաք դրանցից, ասելով, որ դրանք մի-մի հատ են եւ սեփականութիւն են խմբագրութեան։ Կարող էք խօսք տալ, որ մեզ յետ ուղարկելով՝ կը պատւիրէք արտանկարներ*[?] *վերցնել եւ ցանկացողներին հասցնել։ Ուրեմն՝ կրկնում ենք՝ ի սէր ամէնքի, ոչինչ չկորցնէք այն նկարներից, որոնք մի-մի սրբութիւններ են այսօր մեզ համար։ Մենք այստեղ մանրամասն ցուցակագրել ենք այդ* 29 *լուսանկարը եւ պիտի խստիւ ստուգենք, երբ վերադարձնում կը լինէք։*

Զէք կարող արդեօք խնդրել Զիպրիանուն, որ նա ձեզ յայտնէ այն միտքը՝ թէ տասը տարւայ հայերի լռութիւնը բաւական կը լինի նրանց յարութեան համար — մի առանձին նամակով կրկին զարգացնէր «Դրօշակում»։ Անչափ շնորհակալ կը լինէինք։

Ումից որ նամակ ստանաք, պատւիրած նամակով, ուղարկեցէք։ Ժօռէսից(8) *դեռ ձայն-ծպտուն չկայ։ Նամակ տւողների մասին, եթէ կարողանաք, տեղնտեղը կենսագրական տեղեկութիւններ էլ հաւաքէք, որ կցենք իրենց նամակներին։ Զիպրիանուց հարցրէք, որ կարելի է գտնել նրա ամենալաւ, ամենամանրամասն կենսագրութիւնը, եւ եթէ կարելի է՝ բերէք հետներդ։ Ասացէք, որ ուզում ենք տալ մեր ընթերցողներին նրա կենսագրութիւնը հայերէն լեզւով։* .....(9) *կարող է անքաղաքավարութիւն համարւել կենսագրութիւն ուզելը. այն ժամանակ հարցրէք Քիարից։*

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ղարիբի անւան բերել էին պատւիրած նամակ.յայտնեցինք փօստին Խ[*աչատուրի — Մալումեան միջոցաւ*]*, որ ուղարկեն այդտեղի հասցէին։*

1.- Ղարիբ – ծածկանուն Աւ. Ահարոնեանի:
2.- Ամիլկար Չիպրիանի – իտալացի հայասէր անձնաւորութիւն, բարեկամ Դաշնակցութեան:
3.- Կովկասեան խապրիկներ – Խաչատուր Մալումեանի (Ակնունի) ծանօթ յօդուածաշարքը:
4.- Ֆրանսացի հրապարակագիր, գործակից Դաշնակցութեան:
5.- Լուսանցքին գրուած երկու տող, բոլորովին անընթեռնելի:
6.- Խօսքը կը վերաբերի Արմէն Գարոյի (Փաստրմաճեան Գարեգին):
7.- Յայտնաբար, խօսքը կը վերաբերի Խանասորի արշաւանքէն առնուած լուսանկարներու:
8.- Ժան Ժորէս – ֆրանսացի ընկերվարական հանրածանօթ դէմք, քաղաքական անձնաւորութիւն:
9.- Անընթեռնելի անուն:

27

Մատեան No 85, *էջ* 33

13/25 *յուլիս* 1899

Սիրելի Մարտիրոս!(1)

Գիտես, որ անցեալ տարւայ վերջից ես այստեղ եմ եկել բժշկւելու համար։ Այդ մասին երկար գրել եւ գլուխդ ցաւեցնել չեմ ուզում. ապրում եմ այնպէս, ինչպէս պէտք է իմ հիւանդութեան տէր մի մարդ, եւ անում եմ այն, ինչ վիճակւած է անելու բոլոր հիւանդներին. լսել բժշկներին եւ կատարել նրանց պատուէրները։

Այո՛, Մարտիրոս, նամակս գրելու շարժառիթը աւելի հասարակ է, քան կարող էին լինել այդպիսի աւելորդաբանութիւններ։ Բանը նրանումն է, որ հէնց այսօրւանից դրամի սաստիկ պէտք ունեմ, իսկ իմ փողը կարող է գալ ուշ։ Հարկաւոր է ինձ ամենաքիչը 300 *ռուբլի։ Ստիպողաբար խնդրում եմ մի հնար անես՝ այդ գումարը ինքդ կամ ուրիշից պարտք վերցնելով՝ շուտով ուղարկես։ Հաւատացած եղիր, որ դժւարութեամբ վճռեցի քեզ այս նեղութիւնը պատճառել, բայց ինչ անէի, երբ իմ ծանօթ քաղաքներից քո եղածը ամէնից մօտիկ դուրս եկաւ։ Այս էլ երեւի քո բախտից է։ Անհամբեր սպասում եմ, եւ յոյս ունեմ չհիասթափւելու։ Փողը փոխադրիր հեռագրով Կրետի Լիոնի միջոցաւ հետեւեալ հասցէին.*

Genève, Roseraie, 26, Yervante Sissaguian(2)

Պրն Սիսակեանի հետ այստեղ ծանօթացայ եւ որովհետեւ ինքս հաստատ

հասցէ չունիմ, կը խնդրեմ նրան, որ այդտեղից դրամ ստանալուն պէս ինձ հասցնի։ Ուրեմն՝ կրկին խնդրելով քեզ չտապել՝ այդ գումարի մասին այս կամ այն կարեւոր կարգադրութիւնները թողնում եմ ապագային։ Ընդունիր ջերմ բարեւներս՝

ՔՈ ՔՐԻՍՏԱՓՈՐ

Յ. Գ.— Եթէ հետաքրքրւում ես այստեղի կեանքով եւ կ'ուզենաս նամակագրութիւն ունենալ՝ այդ մասին նոյնպէս գրիր վերոյիշեալ հասցէին. տուր նմանապէս հասցէդ. այս նամակը ես գրում եմ հին հասցէիդ։ Փողը փոխադրելիս բանկում միայն պէտք է աւրել, որ հեռագրով փոխադրեն.— ուրիշ ոչինչ քո կողմից հարկաւոր չէ անել. իրենք պոստէն ստանալով հեռագիրը, փողը ուղղակի բերում են. [ես] ստանում եմ փողը։

ՆՈՅՆ

1.- Կարմիր մելանով մակագրուած է՝ Կարմրաթշիկին, Օդեսա: Արդարեւ անձնական ստորագրութեամբ Քրիստափոր Միքայէլեանի այս գրութիւնը ուղղուած է Մարտիրոս Մարգարեանին (Կարմրաթշիկ), Դաշնակցութեան հիմնադիր սերունդին պատկանող անձնաւորութիւն,որ, աւելի ուշ, Քրիստափորի եղերական վախճանէն ետք, պիտի ղեկավարէր սուլթան Ապտիւլ Համիտի ահաբեկման գործը: Այսուհանդերձ, 300 ռուբլի փոխառութեան ետին պահուած պէտք է ըլլայ, ըստ երեւոյթին, շատ աւելի կարեւոր բայց եւ մեզի անծանօթ պատճառ մը:

2.- Յիշուած հասցէն բուն իսկ Ժընեւի «Դրօշակ»ի խմբագրատունն է:

28

Մատեան No 85, *էջ* 37-8

յուլիսի 1899

Ղարիբին(1), *Փարիզ*.

Սիրելի!

Պատասխանում ենք վերջին նամակիդ, ուր հարցնում ես ձեր վերադառնալու մասին (յուլիս 26-ին գրած)։

Հայկական կոլոնիայում(2) *բան անելը, ինչպէս երեւում է, դուք թողել էք ապագային։ Գուցէ այդպէս էլ աւելի նպատակայարմար է — գիտենք, բայց մենք կը ցանկանայինք յամենայն դէպս այդ կարգի հարցերին մինչ այդտեղից ձեր հեռանալը անտես չառնէիք* 1) *Համապետեանի*[?] *հետ խօսելը*. 2) *Մինասեանի պարտքի մասին մի գաղափար կազմելը եւ* 3) *Գալփակչեանի վերաբերմամբ գիտենալ մեր բռնելիք դիրքը ապագայում։*

Գալով «արտաքին յարաբերութիւնների» խնդրին, ահա մեր անելիքը։ Նախ՝ Ժօրէսը(3)*։ Այդ մարդու բռնած դիրքը մեզ ենթադրել է տալիս, որ դա սիրում է խոստանալ եւ յետոյ մոռանում իր խոստումները կամ թէ, ո՛վ գիտէ, գուցէ Զօրանեանի*(4) *հետ իր ծանօթութիւնը արգելում է մեզ վերաբերմամբ աւելի որոշ դիրք բռնելուն (օր մը կ՚ըսէր ինձի Ժօրէս)։ Մենք թեքւում ենք դէպի առաջին ենթադրութիւնը, բայց, եթէ հնար լինէր մի կերպ ստուգել այս ենթադրութիւնները — շատ լաւ կը լինէր։ Լաւ կը լինէր, որովհետեւ Ժօրէսի դիրքը ներկայումս մեծ է թէ Ֆրանսիայում եւ թէ արտաքին աշխարհի առաջ, ու այդ պատճառով նրան մօտենալը, նրա հետ ձեր կապւելը՝ մեզ համար շատ նպաստաւոր եղած կը լինէր. ինչո՞ւ նամակ չգրեց, ինչո՞ւ չտպեց իրեն յանձնւած յայտարարութիւնը։ Բայց «ստուգելու» հարցը շատ փափուկ է, եւ եթէ ուզենաք այդ մտքով մի բան անել,— ի հարկէ, պիտի աշխատէք այդ անել ոչ թէ որեւէ չափով Զօրանեաններին — ում եւ իցէ մօտ — սեւացնելու հողի վրայ, այլ միմիայն մեզ հետ աւելի ծանօթացնելու, մեզ վերաբերմամբ ճշգրիտ տեղեկութիւններ տալու նպատակով։ Եւ եթէ այդ բոլորը պսակւէր Ժօրէսի մի լաւ նամակով «Դրօշակ»ի համար, այն ժամանակ հարցը փակւած կը լինէր։*

Երկրորդ.— գուցէ այստեղ վերադառնալուց յետոյ յարմար գտնենք առաջարկել քեզ քո տպաւորութիւնները այդտեղի այցելութիւններից՝ գրես «Դրօշակ»ում։ Զոկ հարց է, ի հարկէ, եթէ կ՚ուզենաս դու այդ անել կամ թէ ոչ, բայց այն դէպքի համար, երբ դու էլ յարմար գտնես մի բան, հարկաւոր է ունենալ թոյլտւութիւն այն անձնաւորութիւններից, որոնց այցելել եւ լսել

ես։ մեզ թւում է, որ Ջիպրիանու(4) միջոցաւ կամ ինքդ մի օր պտտելով բոլորին, կարողանայիր այդպիսի թոյլտւութիւն ստանալ։ Այդ բանը լաւ կը լինէր, եթէ անէիր։ Նպատակայարմարութեան մասին կարող ենք խօսել-մտածել յետոյ էլ, իսկ դու թոյլտւութիւն վերցրած եկ։

Երրորդ.— Քիարին խնդրեցէք, որ մեր բանակցութիւնները տպի որեւէ տեղ, եթէ նա արդէն այդ մասին ձեզ չէ խոստացել։ Ինչքան մենք յիշում ենք գրածները, Քիարը ուզում է օգտւել դրանից միմիայն իր կոնֆերանսի համար։ Այդ բաւական չէ։

Չորրորդ.— ինչպէ՞ս է դրամական ձեր դրութիւնը. եթէ աւելորդ մի կամ երկու օր մնալը պահանջելու է աւելի ծախս, քան դուք կարող էք անել,— ի հարկէ, այս էլ կը չտապեցնի ձեր ճանապարհ ընկնելը։

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ղարիբ – ծածկանուն Աւ. Ահարոնեանի:
2.- Գաղութում:
3.- Ժան Ժօրէս, Ֆրանսայի ընկերվար կուսակցութեան ղեկավարներէն, խմբագիր Humanité պաշտօնաթերթին:
4.- Ամիլկար Չիպրիանի, իտալացի հայասէր, բարեկամ Դաշնակցութեան:

29

Մատեան No 85, *էջ* 152

12 *սեպտեմբեր* 1899

Ամերիկայի կեդր. կոմիտէին, Պրովիդէնս.

Ընկերնե՛ր,

Ձեզ մօտ եկող մեր ընկերը Հաւրից(1) *մեկնելու է ամսոյս* 16-*ին եւ հաւանական է, որ Նիւ-Եորք հասնի* 24-*ին։ Նա գալիս է ֆրանսիական* Transatlantique *ընկերութեան* «La Bretagne» *շոգենաւով, երկրորդ կարգով. ի նկատի ունենալով, որ անգլիերէն չգիտէ, կը խնդրենք հանդիպել նրան նաւում։ Գալիս է Օնիկ Դերձակեանի անցագրով, բայց այդտեղ յայտնի պիտի լինի Արշակ Վռամեան անունով։ Ուրեմն՝ նաւի վրայ կամ գործի սկզբում*[?] *միայն պէտք է օգտուել անցագրի անունից, իսկ այնուհետեւ ամէն տեղ եւ բոլոր պարագաներում մեր ընկերոջ ճանաչեցէք իբր Արշակ Վռամեանի*(2)։

Բացի ձեր ուղարկած 300 *ֆր., մեր ընկերոջ ճանապարհածախսի համար ստացել ենք* 412 *ֆր. նաեւ Լօրէնսի կոմիտէից, ընդամէնը ուրեմն* 712 *ֆր.։ Այս գումարից Վռամեանին տրուած է* 500 *ֆր., իսկ մնացածը* 212 *ֆր. խմբագրութեան տրամադրութեան տակ է եւ, ի հարկէ, ըստ ձեր կարգադրութեան, իսկոյն կը վերադարձւի կամ կը յատկացւի ձեր որոշած այս կամ այն նպատակին։*

Ընկերոջ գալու լուրը եւ հարկաւոր տեղեկութիւնները նրա մասին նոյնութեամբ կրկնում ենք — առանձին նամակով — նաեւ Նիւ-Եորքի կոմիտէին, բայց եւ այնպէս խնդրում ենք նաեւ ձեր ուշադրութիւնը խնդրի վրայ։

Նորութիւններ եւայլն կ՚իմանաք եկող ընկերոջից։

Բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Նաւահանգիստ Ֆրանսայի հիւսիսը:

2.- Իսկական անունը Օննիկ Դերձակեան էր, իսկ Արշակ Վռամեանը, աւելի գործածական, պիտի ընդհանրանար կուսակցական-հասարակական կեանքի մէջ:

30

Մատեան No 85, *էջ* 153

12 *դեկտեմբեր* 1899

Նիւ-Եորքի կոմիտէին

Ընկերնե՛ր,

Ձեզ մօտ եկող մեր ընկեր Հաւրից մեկնելու է ամսոյս 16-*ին եւ հաւանական է, որ Նիւ-Եորք հասնի* 24-*ին։ Նա գալիս է Ֆրանսիական* Transatlantique *ընկերութեան* «La Bretagne» *շոգենաւով, երկրորդ կարգով։ Ի նկատի ունենալով, որ անգլիերէն չգիտէ, կը խնդրենք հանդիպել նրան նաւի վրայ։ Գալիս է Օնիկ Դերձակեան անցագրով, բայց այդտեղ յայտնի պիտի լինի Արշակ Վռամեան անունով։ Ուրեմն՝ նաւի վրայ կամ գործի սկզբում*[?] *միայն պէտք է օգտուել անցագրի անունից, իսկ այնուհետեւ ամէն տեղ եւ բոլոր պարագաներում մեր ընկերոջ ճանաչեցէք եւ ուրիշներին ծանօթացրէք իբր Արշակ Վռամեանի։*

Նորութիւններ եւ այլն կ՝իմանաք եկող ընկերոջից։

Բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

31

Մատեան No 85, *էջ* 154

12 *դեկտեմբերի* 1899

Ֆիլիպպէի կոմիտէին

Ընկերնե՛ր,

Ներփակ շրջաբերականներով մենք դիմում ենք ձեզ, Վառնա, Սլիվէն, Շումլա եւ Եամբոլ։ Յատկապէս ձեզ ուղարկւում է 9 *օրինակ աւել, որպէսզի ցրւէք դուք եւ այն տեղերը, ուր կարող էք վստահել փոքր ի չատէ կազմակերպւած խմբերի վրայ։ Այդպիսիք կարող են լինել Սօֆիա, Ռուսչուք, Բուրգաս, Սիլիստրէ (վերջին տեղից մեզ դիմել էին Յ. Սիմոնեան եւ Ղ. Պ. Նահապետեան)։*

Ներեցէք, որ ժամանակի սղութեան պատճառով, առանց ձեր կարծիքը հարցնելու, վստահեցանք ժողովի գումարման նախաձեռնութիւնը ուղղակի ձեզ յանձնարարել։

Խնդրում ենք ձեր առանձին ուշադրութիւնը դէպի առաջիկայ գործը։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

32

Մատեան No 81-3, *էջ* 7-13 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Անստորագիր, Քրիստափորի գրչով, լուսանցքի եւ տողամէջի յաւելումներով, սրբագրութիւններով Ժընեւէն, Արեւմտեան բիւրոյին կողմէ ուղղուած Արեւելեան բիւրոյին:

3 *հոկտեմբերի* [1899]

Մեծ Քաղաք(1)

Անտօնի(2) *գրած նամակները ստացել ենք. տեղեկացանք նոյնպէս Կայտառի* [?] *միջոցաւ բերանացի հաղորդածներիդ։ Մեր կողմից էլ սեպտեմբ. սկզբներում այստեղից մեկնած մի բարեկամից եւ յետոյ օրիորդից տեղեկութիւններ առած կը լինէք։ Բայց եւ այնպէս ահա կարճ ամփոփում ենք մի քանի կարեւոր կէտեր։*

Հարցրել էիք կարծիք տէրրօրի մասին։ Մենք բոլորս (3 *հոգի*) *մնում ենք կրկին նոյն կարծիքի, ինչ որ մի անգամ նորէն գրել ենք ձեզ — այն է՝ որ մենք միանգամայն դէմ ենք դրան։ Ամենածայրայեղ դէպքում միայն, եթէ մեծամասնութիւնը պնդելու լինի, մենք կարող ենք համաձայնուել միայն, որ փորձը սկսւի արտասահմանեան որեւէ աննշան կօլօնիայում*(3), *որի համակրութիւն կամ հակակրութիւնը դէպի կազմակերպութիւնը առանձին նշանակութիւն չէ կարող ունենալ մեզ համար։ Գալ տարի լրանում է Դաշնակցութեան տասնամեակը. ի սէր ամենայնի, թողէք այդ տարին էլ անցնենք առաջիկայ տարիների ուղղութեամբ եւ փորձանք մի ստեղծէք կազմակերպութեան գլխին այնպիսի մի նշանաւորագոյն խնդրում, ինչպիսին է ձերը։ Փչացնելով այդ բայոնը, իմացած եղէք, որ կարող էք վտանգել ամբողջ կազմակերպութիւնը։*

Խորհուրդ էք տալիս թերթի(4) *հրատարակութիւնը չյաճախակիացնել։ Այդ մասին ոչ միայն մենք չենք մտածում, այլեւ մի շարք պատճառներով անկարող ենք նոյնիսկ ամէն ամիս հրատարակել. արդէն յուլիսի համարը բաց թողինք։ Կը բաւականանանք նրանով, որ ծաւալը մեծացրել ենք։*

Ֆրանսերէն թերթը(5) *չկարողացանք հասցնել Լահէի ժողովին եւ յետոյ թողինք։ Մասամբ ուրախ ենք, որ այդպէս եղաւ. առանձին ուշադրութեան չպիտի արժանանար, որովհետեւ այդ ժողովի ժամանակ շատ դիմումներ հրատարակուեցին, բայց քիչ բան ուշադրութեան արժանացաւ։ Մի փոքր զոհուեցան նրանք, որոնք անձամբ գնացել էին Լահէ (Զերազ, Ահմէտ Ռիզա)։ Նոյնիսկ մակեդոնացւոց հետ մեր բաց թողած հրատարակութիւնը, որ ինչ-*

պէս մենք ենթադրում էինք, իբր մի նոր երեւոյթ արեւելքի ազգերի կեանքում, պիտի հետաքրքրէր շատերին,— նոյնպէս անցաւ աննկատելի։ Այստեղ կրկնուեց նոյնը, ինչ լինում է միշտ, երբ մարդիկ անծանօթ խմբերի, անծանօթ անձնաւորութիւնների հետ են գործ ունենում.— այն է՝ զգուշութիւն, մի տեսակ ձեռնպահութիւն։ Հէնց այդ պատճառով է, որ ասում ենք, թէ գուցէ լաւ եղաւ, որ Ֆրանսերէնը դեռ բաց չենք թողել։ Բայց այլ կերպ, երեւի, կ'ընդունուի Ֆրանսերէնը, երբ մենք կ'ունենանք լրագրական եւ բարեկամական կապեր եւրոպական մամուլում եւ քաղաքական ասպարէզում գործողների հետ։ Այն ժամանակ, պէտք է ենթադրել, աւելի նկատելի ընդունելութիւն կը գտնի թերթը։ Այդպիսի կապեր արդէն ձեռք ենք բերել բաւականին. այս աշնանը մնում է կանոնաւորել եւ մի փոքր էլ լայնացնել մեր փոխադարձ յարաբերութիւնները եւ այն ժամանակ էլ բաց կը թողնենք Ֆրանսերէնը։ Թող փոքր ուշանայ, բայց հէնց առաջին համարից որեւէ ըէնօմէ(6) ստանայ, ցանկալի դիրք բռնի։

Յուցահանդէսի(7) ժամանակ հակաթիւրք տարրերից ժողով գումարելուն մենք դէմ չենք, բայց նախաձեռնութիւնը մենք չէինք ուզենալ ինքներս վերցնել, որովհետեւ արժանաւոր մարմիններ, տարրեր չկան։

Տաճիկները չեն ուզում կռւել(8) եւ «սահմանադրութիւն» են աղերսում Եւրոպայից (կարդացէք N 7-ի «Թիւրքիոյ շուրջը»)։ Արմենականներ եւ մարտականներ(9) այնքան կեղծ, յիմար, ստոր եւ թոյլ մարդիկ են, որ ոչ մի հաւատ չունինք, թէ կարելի է լուրջ կերպով խօսել դրանց հետ յեղափոխական գործունէութեան մասին։ Ուրեմն՝ ինչ կարող է տալ մեզ մի այդպիսի ժողով։ Գուցէ, եթէ ուրիշները մեզ հրաւիրեն, ի հարկէ, կ'երթանք, որովհետեւ այս դէպքում ինքներս ժամանակ եւ աշխատանք գոնէ քիչ կորցրած կը լինինք։ Դրա փոխարէն մենք աւելի նպատակայարմար ենք համարում Փարիզի մեր բարեկամների միջոցաւ եւրոպական մամուլի ներկայացուցիչներից մի ժողով կազմել, առաջարկելով <u>մամուլին, իբր եօթերորդ պետութիւն</u>, իր վրայ վերցնել մեր հարցը, որ թողնուած է միւս պետութիւններից, եւ հայ ժողովուրդը ազատած մտնել XX-րդ դարը։ Դա դժւար չէ իրագործել, եթէ մի փոքր աշխատութիւն, ծախք եւ գործ տարւի Փարիզում, մանաւանդ որ մեր հարցում համերաշխ են համարեա բոլոր անկախ թերթերը, սկսած ամենայետադէմներից մինչ ամենածայրայեղները։ Կլեմանսօ, Ֆրանսիս Պրէսանսէ, Զօլա, Ուրբէն Գոյէ, Իվ Գիօ, Պօլ-տը Կասանեակ, Վանդալ, Լուիս, Շարմտան, Ժօրէս, Ժերօ Բիշար, Պիեռ Քիառ եւ շատ ուրիշները — ահա մի շարք անուններ, որոնք ամենայն համակրութեամբ կը վերաբերին խնդրին եւ անշուշտ, չնորհիւ իրենց կապերի, կարող կը լինինք գրաւել նաեւ օտարազգի մամուլի գործիչներին։ Մտածեցէք եւ եթէ կարող էք, Ոսկանապատում(10) մի քանի հոգու (փոքրիկ Քոչար) համոզեցէք մի քիչ երկար ժամանակով կամ մի քիչ շուտ ճանապարհ ընկնեն «ցուցահանդէս»-ին։ Դոքա կարող են օգտակար լինել յիշեալ ժողովը կազմակերպելու գործում։

Իզմիրլեանի(11) գաղտնիքը կրկին տարածել էք։ Զէ՞ որ այդ մասին շատ էինք խնդրել լռել։ Լաւ չէ։ Գնացողը գնացել տեսել է։ Վերջնական պատասխան խոստացել է տալ 3 ամսից յետոյ, որ ահա շուտով պիտի լրանայ։

Լեռնավայրցիք(12) [ուզում են] անել երկու ձեռնարկներ, բայց ոչինչ չեն կարողանում, որովհետեւ դրամ չունեն։ Մարից(13) տեղեկութիւններ չկայ։ Արտասահմանեան լրագրերում տպում են, որ նա մատնուած է ..... կողմից։ Երկիւղ կայ, որ կարող է մատնուած լինել։

Ամէն ջանք թափւի ժողովարարութիւնը(14) յաջողեցնելու. երկրից եկողի հետ խօսել ենք, որ եթէ գործը լաւ գնաց, առաջարկում ենք ընդունիլ հետեւեալ անմիջական ծախսերը. 1) Աղբիւրին(15) անպատճառ հասցնել 3-4000 [ռուբլի]։ Մեզ գրում են որ տեղում կարելի է զէնք եւ մարտին գտնել։ Ի նկատի ունենալով, որ Աղբիւրը ամենայն օր կարող է ընդհարման հանդիպել, պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել նրա վրայ եւ տենդային արագութեամբ հասցնել նրան, ինչ կարող ենք։ Այսքան դառն տարիներից յետոյ ամօթ է, որ Աղբիւրի հետ կրկնւի Մուրատի պատմութիւնը(16)։ 2) 2000 պէտք է յատկացնել Կռուածաղիկին(17)։ 3) Լեռնավայրին հարկաւոր է 2-3000։ 4) Վասպուրականին — 1000։ 5) Վրէժի(18) պարտքերին (գոնէ մասամբ) եւ այնտեղի պէտքերին — 2000։ 6) Մեզ — մի քանի հազար։

Այս թւերը դնում ենք ի նկատի ունենալով, որ եթէ թոյլ չգնայ գործը Ոսկանապատում, կարող ենք յուսալ 12-15 հազարի վրայ։ Գնացողի հետ կարող է միանալ այդտեղից Անտօնը, որին յամենայն դէպս այնտեղ յարգում են եւ յետոյ նամակս ձեզ հասնելու միջոցին երեւի, Մեծ Քաղաքում կը լինի Միքայէլը — նրան էլ կցէք Աւօ-ին(19)։ Մեզ համար դրած թւանշանը թող ձեզ մեծ չթւի։ Նախ այս րոպէին ունենք միայն պարտք մօտ 2000 fr. եւ յետոյ մենք առանձին կարեւորութիւն ենք տալիս այն գործին, որին ձեռնարկել էինք եւրոպական պարլամենտական եւ մամուլի գործիչների վերաբերմամբ։ Դա միանգամայն յուսատու գործ է եւ արդէն օգուտները տեսնում ենք։ Կլեմանսօ-ի Aurore-ը եւ Ժօրէսի La Petite République արդէն ձեռք են առնում մեր դատը. շաբաթ չի լինել, որ Պրեսանսէ, Ուրբէն Գոյէ, Պիեռ Քիառ կամ Զիպրիանի մի բան չգրեն, հրաւէրներ չկարդան եւ կառավարութեան վրայ ազդելու ուրիշ փորձեր չանեն։ Ի նկատի ունեցէք, որ Իտալիայի եւ Ֆրանսիայի վերաբերմամբ մեր ջանքերը մեծ են, իսկ ներկայ քաղաքական մթնոլորտում Ֆրանսիան միակ պետութիւնն է, որ կարող է իր հետ քաշել Ռուսիան եւ միաժամանակ՝ իր միջամտութեամբ չխրտնեցնել Անգլիային։

Բացի այդ բոլորից, եւրոպական մեր բարեկամներից ոմանք, ինչպէս Զիպրիանի, Գարիբալտի, Քիառ եւն, միանգամայն յեղափոխական անձնաւորութիւններ են, պատրաստ մեզ ամէն կերպ օգնելու նաեւ կուի ասպարէզում։

Ամենաքիչը դոքա այսօր կարող են 1) տալ իրենց հայրենակիցներից մարդիկ, որոնք հեշտութեամբ կը մտնեն Ծաղիկ(17) կամ Լեռնավայր եւ ամենապահով կերպով հետները կը տանեն մեր ընկերներին, եւ երկրորդ՝ աջակցել, աշխատակցել, խմբագրել մեր ֆրանսերէն յաւելածը եւն։ Բայց այդպի-

սի խնդիրների մասին նրանց հետ խօսք բաց անել անկարելի է առանց պատրաստ դրամ ունենալու։

Այս օրերս Ալէքսանդրիայից ստացանք մի թղթակցութիւն՝ Դժոխքի(20) գրած եւ զարմացանք։ Չգիտենք այդ Դժոխքի անվերջ խաղերին[?], որ յաւիտեան պիտի մնան անթափանցելի, թէ ստացողի յանցանքը, որ փոխանակ տեղ հասցնելու, Ալէքսանդրիա է ուղարկել։ Փաստը մնում է, որ այդ նամակը Սեպուհը(21) գտել է մի ինչ որ տիգրանակերտցի երիտասարդի ձեռքին, որը մի ժամանակ Թիֆլիզ է եղել եւ այժմ էլ յարաբերութիւններ ունի այստեղի իր ընկերների հետ։ Ուրիշ բան յայտնի չէ։ Տիգրանակերտցին յայտնել է Սեպուհին նաեւ, որ Թիֆլիզի իր ընկերները խոստանում են ապագայում էլ շարունակ ղրկել իրենց ձեռքը անցնող նամակները, եթէ դոքա որեւէ թերթում հրատարակւելու լինին։ Ովքե՞ր են դրանք, չէ՞ կարելի արդեօք այդ տղայոց միջամտութեան առաջը առնել։ Մենք խնդրել ենք Սեպուհին իմանայ ղրկողի անունը, ձեզ յայտնելու համար։

* * *

Գուրգէնի եւ Աշոտի(22) մասին տեղեկութիւններ, ինչքան կարող էք, շտապէք մեզ հասցնել, թէկուզ ամենաանմշակ ձեւով։

Պետրոսին (Շահէնին) եւ Վահէ Սիւնիին (Վարդան) ուզել ենք Լեռնավայրի շրջանի համար։ Եթէ կարելիութիւն ունիք ձեր կողմից դրանց շտապեցնելու կամ դիւրութիւններ տալու շուտով ճանապարհ ընկնեն, ապա խնդրում ենք կարելին անել։

Հաջի Արամը (վանեցի), որը Սարուստան(23) է անցել եւ որի մասին ձեզ գրւած է Ալէքսանդրիայից, ամբաստանւում է մի շարք մատնութիւնների մէջ։ Ի՞նչ եղաւ այդ մարդը, ի՞նչ արիք դրա հետ։

Արմենականներին ուզում են միանալ Արփիարականները, բայց Փորթուգալեանը առայժմ լռութիւն է պահում այդ մասին։

Լսում ենք, որ շուտով լոյս պիտի տեսնի Նազարբէգի «Հնչակը»։

Ինչ խաբար Գիսակից(24), արհեստաւոր Լեւոնից, Քեռուց(25)։ Ա՛խ, թէ կարողանային Աղբիւրին հասնել...

Ոսկանապատից այստեղ եկած մի պարոնից, որ ինքը մասնակցել է գործին, ասում է, որ այնտեղ մօտ 40,000 ռուբլի է ժողովւել սովեալների համար եւ որ հեշտութեամբ կարող էին մեզ ղրկել, եթէ մենք խօսք տայինք մեր ընկերների միջոցաւ հացի վրայ ծախսել այդ փողերը։ Պէտք է այդ մասին մեր այնտեղի ծանօթներին միանգամից ընդմիշտ հասկացնել, որ այո՛, երկրի մեր ընկերների միջոցաւ, մենք կարող ենք ժողովրդին հասցնել այդպիսի գումարներ։ Երեւակայեցէք մի ռոպէ, թէ ինչ բարոյական հեղինակութիւն կը ստանար Դաշնակցութիւնը, եթէ այդ 40,000-ից գոնէ 10 հազարը Աղբիւրի միջոցաւ Ապրօ-ի գերեզմանում(26) եւ Մարի միջոցաւ Լեռնավայրում տուէր։ Պարոնը, որ երեւի շուտով Ոսկանապատ կը դառնայ, խոստացաւ մեզ, եթէ բան է մնացել յիշեալ գումարից, աշխատի մեզ ղրկել տալ։ Տես-

նենք։ Իսկ դուք լաւ կ՚անէիք, եթէ այդ առթիւ Ոսկանապատցոց գլուխները մի լաւ լանայիք։

Վարժապետը այստեղ է եկել։ Սպասում է Կայտառի[?] *միջոցաւ Կոստիից դրամ ստանալու եւ Վիէննայում տպելու։*

Դրամի մասին դուք չեշտում էք, որ աշխատինք միայն շրջանի եկամուտներով ապահովել թերթը։ Շատ լաւ. շատ համակրելի միտք է, որին ձգտում ենք եւ պիտի ձգտենք ամէն կերպ. բայց որ առայժմ ոչինչ չենք ստանում...

Վերջին (8) *համարից ուղարկեցինք* 600. *մի քանի մասնաւոր նամակներից Սարուստան ղրկւող թերթերի թիւը պէտք է բարձրանայ մինչ* 7-800։ *Գրեցէք, աւելորդ չէ արդեօ՞ք։ Հին համարներից էլ կրկին* 50-*ական*, 100-*ական օրինակ ուղարկեցինք։*

Վահանը(27) *այստեղ է։ Դեռ մեզ այստեղ գալը մենք վերջին ժամանակները պնդում էինք, որ նա մտնի Լեռնավայրի պատասխանատու մարմնի մէջ, չորրորդ անդամի փոխարէն, բայց առ այժմ նա համաձայնութիւն չէ տալիս։*

Օրիորդի հետ խնդրել էինք աշխարհաբարի մի քանի քերականներ ուղարկել, սպանացի մի պրոֆեսորի համար է. անպատճառ ուղարկէք. շատ բարեկամ է մեզ։

Ինչ տեղեկութիւններ, որ ստացւում է երկրից, ի սէր Աստուծոյ, խնդրեցէք մեզ ուղարկեցէք եւ խնդրեցէք, որ ըստ կարելոյն շուտ շուտ տեղեկութիւններ ուղարկեն։ Դա շատ կարեւոր է։ Aurore-*ը անդադար թարմ տեղեկութիւններ է ուզում, եւ մենք ստիպւած ենք հին-հին բաներ հաղորդել։ Ձեզ ղրկել ենք հասցէ. այդ հասցէով առանց ստորագրութեան ղրկէք, ինչ կը պատահի, թէկուզ ամենասովորական հարստահարութիւնների կամ աւազակութիւնների մասին լինին այդ տեղեկութիւնները։ Նոյնը ցանկալի է, որ անուէր նաեւ Կովկասի վերաբերմամբ՝ այստեղի գլխաւոր քաղաքներին։ Չէ՞ք կարող մի շրջաբերական ցրւել յատկապէս այդ մասին։*

Ուղարկեցէք շուտով Ա. Երիցեանի վերջին հրատարակութիւնը Ներսէս V *եւ Վօրոնցովի յարաբերութիւնների մասին, անպատճառ, շատ հարկաւոր է։ Գոլիցինի զեկուցումներից նոյնպէս, ինչ կարող էք ուղարկէք* (*հին թէ նոր*), *եւ առհասարակ ուշադիր եղէք պաշտօնական թղթեր ձեռք բերելու։ Արտասահմանեան լրագրերը առանձին կարեւորութիւն են տալիս այդպիսի դօկումենտներին եւ եթէ մեր միջոցաւ բան ստանան, շատ գոհ պէտք է լինին։ Բացի դրանից այդ թղթերը մեծ կարեւորութիւն ունեն եւ մեր թերթի համար։*

Բոլղարիայում ամէն բան տակնուվրայ է եղել։ Նոյնիսկ այնտեղ մեր ունեցած զէնքերը ծախւել, կերւել են։ Ռոստոմի վրայ է յոյսներս, որ մի փոքր կանոնաւորէ այնտեղի դրութիւնը , թէեւ հազիւ նա ժամանակ ունենայ Բոլղարիայով զբաղւելու։

Ամերիկացիք(28) *մեծ խոստումներ են անում առաջիկայ ձմեռւայ վերաբերմամբ, բայց պայման են դնում իրենց մօտ «գործիչ մը» ղրկել վեց ամսով։ Չգիտենք ինչպէս պէտք է անենք. մի քանի թեկնածուներից եւ ոչ մէկը մեզ*

մինչ այսօր խօսք չէ տալիս այնտեղ գնալու։

Ոսկանապատում, հարուստների այն շրջանում, որին դժւար է մօտենալ ուղղակի յեղափ. գործի անունով, կարելի է ի նկատի ունենալ հետեւեալ առաջարկութիւնները. 1) *Թող դրամ տան եւրոպական հասարակական կարծիքը յուզելու համար յայտնի ֆրանսիացիներից մի մշտական բիւրօ կազմելու համար։*

2) *Թող դրամ տան Կլեմանսոյին, որ նա իր յատուկ աշխատավայրը պահի Պոլսում,* 3) *Նոյնը* «La Petite République»*-ի վերաբերմամբ, եւն։*

1.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է, այս պարագային Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոն, որուն ուղղուած է Քրիստափորի նամակը:
2.- Անտօն՝ ծածկանուններէն մէկը Սիմոն Զաւարեանի:
3.- Գաղութում, անշուշտ հայկական:
4.- Խօսքը «Դրօշակ»ի մասին է:
5.- Խօսքը կը վերաբերի Pro-Armenia-ին, որ Քրիստափորի ջանքերուն շնորհիւ իբրեւ կիսամեայ լոյս պիտի տեսնէր 1900 թ. Նոյեմբերէն սկսեալ խմբագրապետութեամբ Պիեռ Քիյառի եւ աշխատակցութեամբ ֆրանսացի յայտնի քաղաքագէտներու եւ հրապարակագիրներու (Անաթոլ Ֆրանս, Ժորժ Քլեմանսօ, Ֆրանսիս տը Փրեսանսէ, Վիկտոր Պերար եւ շատ ուրիշներ):
6.- Ֆրանսերէն՝ համբաւ, ճանաչում իմաստով:
7.- Ակնարկութիւն նոյն տարուան Փարիզի ցուցահանդէսին:
8.- Կուել՝ պայքարել իմաստով գործածուած:
9.- Մարտականներ – Վերակազմեալ հնչակեաններ:
10.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:
11.- Մատթէոս Արք. Իզմիրլեան, 1894-1896ին Կ. Պոլսոյ հայոց պատրիարք, որ համիտեան կոտորածներուն առթիւ բարձրացուցած բողոքներուն պատճառաւ աքսորուած էր Երուսաղէմ, ուր մնաց մինչեւ 1908ի սահմանադրութեան հռչակումը: «Իզմիրլեանի գաղտնիքը» խօսքը կը վերաբերի Իզմիրլեանը Երուսաղէմէն առեւանգելու եւ Եւրոպա փոխադրելու խնդրին:
12.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:
13.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի (1869-1931), դաշնակցական գործիչ, ձերբակալուած եւ նետուած Մարաշի բանտը, ուր մնաց շուրջ հինգ տարի:
14.- Ժողովավարութիւն – դրամահաւաք, հանգանակութիւն իմաստով:
15.- Խօսքը Սերոբ Աղբիւրի մասին է:
16.- Հարցը կը վերաբերի Սասնոյ 1894 թ. ապստամբութեան հնչակեան ղեկավար Մուրատ Պոյաճեանի, որ ձերբակալուած ու աքսորուած էր:
17.- Ծաղիկ կամ Կռուածաղիկ – ծածկանուն Կ. Պոլսոյ. Լեռնավայր՝ Կիլիկիա:
18.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէին, Թաւրիզ կեդրոնով:
19.- Միքայէլը՝ Վարանդեանն է, իսկ Աւոն՝ Ահարոնեան Աւետիսը:
20.- Հարցը կը վերաբերի Հրայր-Դժոխքի (Ադամեան-Ղազարեան):
21.- Սեպուհ – ծածկանուն Թիրեաքեան Հայկի (1871-1915):
22.- Գուրգէն – ծածկանուն Մալոյեան Բաղդասարի (1873-7899). Աշոտ, Աշոտ Թաքուլ – ծածկանուն Արամեան Արամի (1870-1899):
23.- Սարուստան – ծածկանուն Ռուսիոյ, յատկապէս Կովկասի:
24.- Գիսակ – ծածկանուն Սերենկիւլեան Յովհաննէսի (Վարդգէս):
25.- Քեռին Տերսիմի Քեռին է, Շիշմանեան Ռուբէն (1865-1903):
26.- Ապրոյի գերեզմանը Սասունն է:
27.- Վահան – ծածկանուն Մատինեան Նիկոլի:
28.- Իմա՝ Ամերիկայի դաշնակցական մեր ընկերները:

33

Մատեան No 81-3, *էջ* 19-20 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Ժընեւ, 22 *դեկ*. 1899

Հ.Յ.Դ. Իզմիրի կոմիտէին,

Սիրելի ընկերներ,

Ձեր շրջանի համար ինչպէս յայտնի է գրած էինք Վարդանին(1), *որը եւ համաձայնել էր գալու, բայց գտնւելով Արեւելեան բիւրօի տրամադրութեան տակ, ինչպէս ենթադրում ենք, երեւի այս միջոցիս զբաղւած է։ Սակայն վերջերս մեր ընկեր Ռ*[*ոստոմը*]*ը Բոլգարիայից մեզ գրել է մի համակրելի երիտասարդի մասին — Լեւոն Սարգսեան անունով, որը բաւական ժամանակ աշխատակցեց շարժումին, ուսուցիչ է, մտաւորապէս բաւականաչափ պատրաստականութիւն ունի եւ բաւականին դիւրութիւն մանաւանդ պարապմունք ունենալու տեղդ. իր ջերմ ցանկութիւնն է բեռ չլինելու կոմիտէի վրայ։ Այս բոլորը հաղորդելով ձեզ, խնդրում ենք հետեւեալ հասցէով ուղղակի յարաբերութեան մէջ մտնենք մեր ընկեր Ռ-ի հետ, որի հասցէն հետեւեալն է*, Philippolis/Bulgarie M. Andon Koche, ... *եւ տեղեկացրէք իրեն — 1) համաձայն էք, արդեօք այդ ընկերոջը ընդունել, 2) դուրս հասնելու միջոցներ ունի՞ք, եւ ապա հաղորդեցէք տեղական պայմանների եւ ընդունելութեան մասին ձեր դիտողութիւնները։*

Ձեր յարաբերութիւնները Աղեքսանդրիայի հետ երեւի տակաւին կանոնաւոր չեն, որովհետեւ մեր Աղեսքսանդրիայի ընկերները գրած էին թէ դեռ պատասխան չեն առած ձեզանից իրանց գրած նամակներին։

Այն ինչ՝ Վահաբին(2) *գրած մասնաւոր նամակում ձեր տւած տեղեկութիւնների ու յայտնած դժգոհութիւնների առթիւ մենք բացատրութիւններ ենք ունեցել Լեռնավայրի*(3) *մարմնոյ հետ եւ եկել ենք այն համերաշխ եզրակացութեան, որը համապատասխանում է միանգամայն եւ ձեր տրամադրութիւններին։ Նոքա ընդունելով ձեր բոլոր պահանջները, ցաւ էին յայտնել միայն, որ դուք անմիջապէս իրենցից տեղեկութիւններ եւ բացատրութիւններ չառած՝ դատապարտում էք եղել նրանց վերաբերումը դէպի գործը եւ ընկերները, ինչպէս նաեւ նրանց «ծրագիրը»։ Սակայն կրկնում ենք, այս եղած-անցածը չէ կարող այժմ ազդել ձեր յարաբերութիւնների վրայ, եւ օր առաջ միմիանց հասկանալը եւ ու համերաշխութեամբ գործը վարելը — միանգամայն պարտաւորեցուցիչ պահանջ է ներկայումս։*

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ամենայն հաւանականութեամբ՝ Խանասորի Վարդանը:
2.- Վահաբ – ծածկանուն Վռամեան Արշակի:
3.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:

34

Մատեան No 81-3, *էջ* 26-28 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

[*դեկտ.* 1899]

Պետերբուրգ

Սիրելի Էլէկ!

Շնորհակալութեամբ ստացանք ուղարկած գրքերդ եւ դրանից մի փոքր առաջ՝ նամակդ։ Թերթեր Վառնայէն ուղարկուել են. սրանով պատասխանում ենք նամակումդ դրած հարցերին։

Ֆրանսիայում տեսնուել-խօսել կամ գրագրութիւն ենք ունեցել հետեւեալ մարդկանց հետ — Պիեռ Քիյառ, Ֆրանսիս Պրէսանսէ, Ուրբէն Գոյիէ, Ժակլար Զիպրիանի (իտալացի), Ժօրէս, Ժերօ-Բիշար եւ Բուանէ (պարլամենտի պատգամաւոր)։ Սոքա բոլորը "L'aurore" *արմատական եւ* "La Petite République" *սոցիալիստական լրագրերի շրջաններում յայտնի գրող եւ գործիչներ են, միանգամայն յեղափոխական տեմպերամէնտի մարդիկ եւ մեր շարժման ջերմ համակիրներ։ Դրանից դուրս պատմաբաններ Վանդալ եւ Լավիս,* Autorité *միապետական լրագրի խմբագիր Պոլ դը Կասանեակ,* Siècle *հասարակապետական լրագրի խմբագիր Իվ Գիօ եւ շատ ուրիշներ համակրում են մեր դատին, բայց կողմնակից են լեգալ գործունէութեան, թէեւ հայ յեղափոխականների վրայ չեն էլ յարձակւում։ Ուզում ենք այժմ մօտենալ Զոլային եւ յայտնի Կլեմանսօ-ին։*

Իտալիայում մեզ համակիր են Գարիբալդի, Էնրիկօ Ֆերրի (յայտնի փաստաբան եւ սոցիալիստական Avanti *լրագրի խմբագիր) եւ ուրիշներ, որոնց թիւը հեշտութեամբ կարող է աւելանալ շնորհիւ Գարիբալդու, Ֆերրիի եւ մասամբ Զիպրիանու, որ թէեւ աքսորուած իր հայրենիքից, այժմ ապրում է Ֆրանսիայում, բայց իր բոլոր բարեկամների վրայ կարող է մեզ ըէկօմենտացիաներ տալ։*

Շվէյցարիայում մենք ունենք Ժընեւի ամենայայտնի ներկայացուցիչների մի խումբ համակիրներ, որոնք միշտ պատրաստ են լեգալ ասպարէզում անել մեզ համար, ինչ հարկաւոր լինի։ Այդ խմբի մէջ են՝ տեղական կառավարութեան երկու նախարարներ (Բեշար եւ Ֆավօն). Ժընեւի ամենահարուստ բարեգործ-արիստոկրատ Ֆավը, տեղին յայտնի քարոզիչ-...տիօր եւ ուրիշներ։ Լահէի ժամանակ օրինակ մեր խնդրանօք, դոքա դիմեցին շվէյցարական ներկայացուցչին խնդրելով մեր հարցը բարձրացնել Վեհաժողովում, բայց, ինչպէս պատասխանել էր ներկայացուցիչը, այդ անկարելի է եղել։

Անգլիայում եւ Գերմանիայում դեռ կապեր չունենք։ Լաւ ըէկօմենտացիաներով(1) *մարդիկ պէտք է գնան, տեսնեն, խօսեն, որ բան դուրս գայ, որ*

միայն նամակներ գրելով դժուար է պահանջել, որ ամէն մարդ հաւատայ մեզ եւ կապւի հետներս։ Իսկ դրա համար հարկաւոր է դրամ, որ պակասում է մեզ միշտ, պակասում է նոյնիսկ աւելի կարեւոր գործերի համար։ Բացի դրանից, մենք առանձին կարեւորութիւն էլ չենք տուել Անգլիայի եւ Գերմանիայի գործունէութեան։ Եթէ նոյնիսկ մի կողմ թողնենք որ ժամանակակից գերմանացիք եւ անգլիացիք, իրենց նեղ ազգային շահերից դուրս համարեա յայտնել են իրենց զգայնութիւնը դէպի ընդհ. մարդկային պարտականութիւններ, գաղափարներ եւն — մի բան, որ առանձին յաջողութիւն չէր կարող խոստանալ մեզ այդ երկրներում,— մենք ունէինք եւ ուրիշ շարժառիթներ Անգլիայի եւ Գերմանիայի վերաբերմամբ առանձին ճիգեր չթափելու։

Մեզ թւում է, որ մեր հարցը խեղդել եւ խեղդում է ռուսը։ Այդ տեսակէտից մեզ համար կարեւոր է այն պետութեան համակրութիւնը, որ կարող է իր յետեւից քաշել ռուսին։ Ոչ Անգլիա, որի ամէն մի քայլին ռուսը բացասական կերպով է վերաբերում եւ ոչ Գերմանիա — այդպիսի դերի համար ոչ յարմարութիւն ունեն եւ ոչ էլ կ'ուզենան մեր ուզած նախաձեռնութիւնը վերցնել։ Այն ինչ Ֆրանսիան, իբր ռուսի դաշնակից, այժմ միակ կառավարութիւնն է Եւրոպայում, որ կարող է Ռուսաստանի հետ ոեւէ համաձայնութեան գալ մեր հարցի վերաբերմամբ։ Ահա ինչու մենք մեծ նշանակութիւն ենք տալիս Ֆրանսիային, եւ կարծում ենք, որ փոքր ի շատէ յուսատու տիպլոմատիական միջամտութիւն կարող է տեղի ունենալ ներկայ հանգամանքներում այն ժամանակ, երբ Ֆրանսիան միացած Իտալիայի հետ (որ ուրիշների պէս շահագրգռուած չէ Թրքական .....) միասին զարթեցնեն մեր հարցը։ Անգլիան այդ դէպքում անկասկած ամենաջերմ արձագանք կը տայ, ռուսի ընթացքը նախատեսնւած կը լինի արդէն Ֆրանսիայի կողմից, իսկ մնացածները յարելու են որեւէ կերպով համակերպել չորսի ցանկութիւններին։

Իսկ որ Ֆրանսիայից այդպիսի մի քայլ կարելի է սպասել — դրան երաշխաւոր կարող է լինել այն հետաքրքրութիւնը, որ այնտեղ նկատւում է դէպի մեր հարցը։ Դա մի զէնք է դառել բոլոր յառաջադիմական տարրերի ձեռքում ...ինի եւ դրա նման նախարարութիւնների դէմ, եւ այսօր Aurore-ը նախկին նախարար Հանոտոյին ուրիշ տեսակ չէ անւանում, բայց եթէ Հանոտօ-փաշա, Լակէյ սուլթանի» եւն։

Aurore մշտական բաժին ունի, «Մեծ մարդասպան» վերանագրի տակ եւ ոչ մի առիթ չէ բաց թողում մեր դատը պաշտպանելու համար։ Նորերս Սուլթանը նոյնիսկ դատի հրաւիրեց այդ լրագրի երեք խմբագիրներին, որոնք «Նորին Վեհափառութեան» տալիս են ամենայն օր ամէն տեսակ ածականներ, բայց մի փոքր ժամանակից յետոյ իր գանգատը յետ առաւ, երեւի նախագուշակելով, որ դատի ժամանակ թէ այդ երեք մեղադրողները եւ թէ իրենց փաստաբանները առիթը բաց չեն թողնել մի անգամ եւս կրկնելու ու ապացուցանելու իրենց բոլոր հայհոյանքները։ Ուշադրութեան արժանի է

այն հանգամանքը, որ նոյն այդ Aurore-ը, որ Հանոտօ-ի քաղաքականութիւնը դատապարտելու համար ածականներ չէ խնայում, միեւնոյն ժամանակ շատ յարգանքով է խօսում այժմեան արտաքին գործոց նախարար Դելկասէի վերաբերմամբ։

Յետոյ յայտնում ես, թէ ինչ կարող ենք յուսալ այդ կապերից։ Երկու տեսակի օգնութիւն — զուտ քաղաքական-դիպլոմատիական եւ յետոյ՝ յեղափոխական։ Մինչ այժմ ասածներից պարզւում է այն ընդհանուր քաղաքական նպատակը, որին պէտք է ձգտէ մեր գործունէութիւնը Եւրոպայում.— թեքել հասարակական կարծիքը եւ քաղաքական գործիչներին դէպի մեր մոռցուած հարցի պաշտպանութիւնը — ահա այդ նպատակը։ Գալով այդ նպատակի համար կարեւոր կօնկրէտ միջոցներին — ահա մեր օրւայ խնդիրները Ֆրանսիայի վերաբերմամբ։

(Արտագրել փետր. 23-ից «Մօլէկիւլին» գրած նամակի մի կտորը)։

Մի քանի խօսք էլ այն զուտ յեղափոխական օգնութեան մասին, որ կարելի է յուսալ մեր եւրոպական բարեկամների մի մասից։

Եթէ մենք ունենանք դրամ եւ կարողանանք մի փոքր աւելի վստահութիւն ներշնչել դէպի մեր կազմակերպութիւնը, նրանք

1) Կարող են կազմակերպել մի գաղտնի մարմին, որ ձեռնարկէ որոշ ձեռնարկութիւն Տաճկաստանում։

2) Կը տան մեզ մարդիկ, որոնք, իբր եւրոպացիներ, կարող են ազատ մտնել Տաճկաստանի ամէն մի անկիւն եւ հետները տանել-պատսպարել մեր գործող ընկերներին։

3) Կը տան մեզ կապեր նաւերի եւ ճանապարհների վրայ։

4) Կը տան մեզ փորձւած կռւող ուժեր (կարդա Դրօշակում լոյս տեսած մի քանի նամակները)

... էլ չեմ կարող շարունակել... Արիւն է թափւում մարդու սրտից, երբ մի րոպէ երեւակայում ես, թէ որքան բան կարող էինք անել, եթէ այսչափ ընկած չը լինէինք հայերս, եթէ մի փոքր աւելի օժտւած լինէինք մեր պատմութիւնից բարոյական ամենատարրական ընազդներով, եթէ մեր ստրկածին հասարակութիւնը մի փոքր անկեղծ սէր ունենար դէպի իր դժբախտ ժողովուրդը եւ ընդունակ լինէր գոնէ մի փոքր ամօթ զգալու, երբ տեսնում են թէ ինչպէս պատւաւոր դիրք վայելող օտարները, յանուն հայութեան բռնկւում են վրէժի կրակով...

Այս վերջին կտորը գաղտնի պիտի մնայ։ Յատուկ խնդրում ենք այս մասին. ոչ մի տեղ, ոչ մի խօսք։ Իմացիր դու եւ Ս.ը։

1.- Յանձնարարականներով։

35

Մատեան No 85, *էջ* 183-84

2 *յունվարի* 1900

Յարգոյ պ. Թումայեա՛ն,

Մենք խոստացել էինք գրելու Ձեզ, երբ մեր ընկերը վերադառնար Կովկասից եւ տեղեկութիւններ բերէր այն նիւթական օգնութեան մասին, որ կարող ենք սպասել Բաքւից։ Այժմ մեր ընկերը վերադարձել է եւ բացի այդ Գանջեցեանը (Արտաշէս) յայտնեց մեզ, որ դուք սպասում էք մեր խոստացած նամակին։ Դժբախտաբար, ուրախալի քիչ բան ունինք ասելու։

Մեր ընկերը, թէեւ Բաքու մտել է, բայց անցագրի եւ այլ պատճառներով անկարող է եղել կարեւոր մարդկանց տեսնել եւ հեռացել է այնտեղից համարեա ոչինչ չարած։

Միւս կողմից՝ Փարիզից, ուր այժմ գտնւում են յատուկ նպատակով մեր ընկերներից երկուսը, տեղեկութիւն ունինք, որ այն մարդիկ, որոնց մասին ձեզ հետ խօսել ենք, ամենայն սիրով յանձն են առնում մեր հարցի պաշտպանութիւնը թէ Ֆրանսիական մամուլի մէջ եւ թէ Ֆրանսիայից դուրս (Փարիզում հիմնւելիք բիւրօ-ի միջոցով)։ Թէ որքան դրական է այդ պատրաստականութիւնը, դուք կարող էք եզրակացնել այն կատաղի յօդւածներից, որոնք մէկը միւսի յետեւից լոյս են տեսնում «Aurore»*-ում եւ որոնց առթիւ սուլթանը ստիպւած է այդ լրագրի երեք խմբագրերին դատի ենթարկել։ Հարցը այնքան հասունանում է ֆրանսիական հասարակութեան մէջ, որ, ինչպէս նորերս յայտնւեց, Ֆրանսիայում գոյութիւն ունեցող յայտնի ընկերութիւնը* (Ligue de la défense des droits de l'homme et du citoyen)՝(1), *իր ճիւղերի պահանջման համաձայն՝ որոշել է ազդու դիմում անել ֆրանսիական կառավարութեան՝ հայկական խնդիրը առաջ տանելու համար։*

Այդպիսի պայմանների մէջ մեր ծրագրի իրագործումը աւելի քան անյետաձգելի է, իսկ անտարբերութիւնը՝ միանգամայն դատապարտելի։ Եթէ օտարները այդքան դրաււում են մեր դժբախտ ժողովրդի դրութիւնը բարելաւելու գաղափարով, եզրակացրէք ուրեմն՝ թէ մենք որքան աւելին պէտք է անենք։

Ի նկատի ունենալով այս հանգամանքները, մենք արդէն սկսել ենք Ձեզ յայտնի բոլոր ձեռնարկները, որոնցից մէկի, այն է՝ Պոլսում թղթակից ունենալու ծախսը, յոյս ունինք որ կը հոգաք դուք։

Ձեր պատասխանը ստանալով, մենք կը հաղորդենք Ձեզ Փարիզի մի հացէ, որով դուք կարող էք — եթէ կամենաք — անձամբ յարաբերութիւնների մէջ մտնել այնտեղի հետ։

Ընդունեցէք, խնդրում ենք, մեր անկեղծ յարգանաց հաւաստիքը։

1.- Ֆրանսերէն՝ մարդու եւ քաղաքացիի իրաւանց պաշտպանութեան Լիկա։

36

Մատեան No 85, *էջ* 212-15

21 *փետրուար* 1900

Միքայէլին[*Վարանդեան*], *Փարիզ*.

Սիրելի!

Ներողութիւն, որ մի փոքր ուշացրինք վերջին նամակների պատասխանը։ Պատճառը այդ անիծեալ Յաւելուածն էր, որ դու ամենայն իրաւամբ «կօշմար» էիր անւանում։ Թէ ինչ բերեց դա մեր գլխին, այդ երկար կը լինէր պատմել։ Բաւական է յիշել, որ ամբողջ 5 *կոլոն շարուածք կրճատուել է եւ մի երկու կարեւոր գլուխներ էլ բոլորովին դէն ձգուել։ Կարդալով անշուշտ ինքդ էլ կը նկատես, թէ չնայելով իր* 5 *թերթեայ ծաւալին, որքան այնուամենայնիւ սեղմուել է։ Այդ անպիտան գործի մասին, ամօթ է ասել, այսօր ենք միայն սկսում «Դրօշակի» շարելը. կ՚աշխատինք* 20 *օրում տալ եւ այնուհետ կանոնաւորել։*

Շնորհակալութեամբ ստացանք եւ կարդացինք քաղաքական տեսութիւնդ։ Ամբողջը հաւանեցինք, բայց յառաջաբանը, որ շօշափում է «տաճկական տեսութիւն» հետաքրքիր հարցը, պահում ենք, որպէսզի դու այդ տեման աւելի ընդարձակ մշակես եւ մի քանի յօդուածներ տաս տարուայ ընթացքում։ Առաջին յօդուածը դու կարող ես տալ 2-*րդ*, 3-*րդ համարից եւ այնուհետ շարունակութիւնները թէկուզ երկու ամիսը մի անգամ։ Այս մասին*, (*ռուսերէն*) *կրկին կը գրենք քեզ։*

Բէլքից(1) *վերցրածը* (*Սերոբի մասին*) *առայժմ անյարմար դատեցինք արտատպել, քանի որ պարոնը, ինչպէս գրում ես, մի կողմից դատապարտում է Սերոբի գործնական ընթացքը եւ միւս կողմից՝ միանգամայն անւանարկում այն կազմակերպութեան, որի անունից նա գործում էր։ Այս առթիւ խօսալով, մենք կանգ առանք հետեւեալ որոշման վրայ։ Մենք յօդուածը չունինք եւ չենք էլ կարդացել ամբողջապէս։*

Ուստի խնդրում ենք ուղարկել մեզ ամբողջը (*եթէ դժուար չէ՝ թարգմանուած. հակառակ դէպքում միայն համարները. կը թարգմանի Աբր. Ներսիսեանը*) *եւ յետոյ մի բան կը վճռենք. կամ այստեղից էլ հերքում կ՚ուղարկենք, կամ հանդերձ մեր նկատողութիւններով քեզ կը վերադարձնենք այդտեղից պատասխանելու համար։ Որովհետեւ այս բանը պէտք է շուտ անել, ուրեմն չտպիր ուղարկել, եթէ արդէն մի բան չես արել ինքդ։ Խաչատուրը*(2) *այդ առթիւ գուցէ մասնաւոր կերպով մի բան ինք գրէ Թելմանին*[?] — *Բէլքի ընկերոջ։*

Զերազի առարկութիւնը նոյն բանն է, ինչ արդէն գրել է «Միութիւնը»։ Մենք, ի հարկէ, անօգուտ չենք համարում այդպիսի մի ձեռնարկ եւ ուրախ կը լինէինք մի որեւէ տեղ խմբւած տեսնել ոչ միայն հայ կուսակցութիւնների ներկայացուցիչներին, այլեւ բոլոր հակահամիդեան տարրերին (մակեդոնացիք, երիտ. թուրքեր, քրդեր, ալբանացիք), բայց այդպիսի մի պատասխանատու համագումարի համար մենք չենք կարող նախաձեռնութիւն վերցնել։ Պատճառները շատ են եւ այդ պատճառների թւումն է նաեւ մեր շատ որոշ դիրքը դէպի միւս կուսակցութիւնները։ Ցամենայն դէպս մենք ուրախութեամբ կ՚ընդունենք այդպիսի մի հրաւէր, եթէ դա գայ ուրիշների կողմից։ Ի դէպ, Արտաշէսը պնդում է, որ Զերազի գրածը Ժ.եանին (եթէ նոյնիսկ բառերում նա սխալւած լինի) ամենեւին չէր համապատասխանում մեր սպասածներին կամ ձեզ տւած խոստումներին եւ հէնց դրանով էլ վրդովիչ էր առաջին տառից մինչեւ վերջինը։ Նա խորհուրդ է տալիս յարմար դէպքում նկատել պ. Զերազին, որ եթէ .....(3) նա յարմար զէնք է համարում Ժ.եանների հետ յարաբերութիւններ պահպանելու համար, ապա մեզ հետ գործ ունենալիս նա պիտի խօսի միմիայն մարդկային լեզւով եւ մաքուր հայերէն բարբառով, որովհետեւ դա Պոլսի տաճկական zoologie-ն է, որ կենդանիների լեզու էլ է սովորեցնում մարդկանց, իսկ այն սովորական zoologie-ն, որ մենք ենք սովորում, այդքան յառաջդիմութիւն չէ արել եւ այդչափ հմտութիւն մեզ չի տալիս...

Aurore-ի գործը լաւ էր գնում, միայն ափսոս, որ դատը չկայացաւ։ Արդէն գրել էի, որ տեղիս մեզ համակրողները ստորագրեցին մօտ 3000, Մոլէկիւլը(4) յանձն առաւ 2500, Ֆրէյբուրգը իսկոյն ուղարկեց 370 եւ դեռ պահեստ ունէինք Նիսը, Լօզանը, Լէյպցիքը։ Զը գիտենք դեռ ինչ կ՚անեն պպ. զոհաբերողները — յետ կը վերցնեն իրենց նւէրները թէ կը յատկացնեն նոյնանման մի գործի։ Այստեղ տրամադրութիւնները որոշ չեն։ Ոմանք ուզում են յետ վերցնել, ոմանք կէսը թողնել, ոմանք բոլորը։ Այս շաբաթ ժողով պէտք է հրաւիրեն եւ իրենք վճռեն։ Մենք չեն խառնւում եւ ճնշում չենք ուզում գործ դնել։ Երեւի, մեծ մասը ուրախ-ուրախ յետ կը կանգնի եւ միւս քաղաքներն էլ կը հետեւեն այստեղի օրինակին։ Հայե՛ր, հայե՛ր...

Բաբայի(5) մասին լսածդ սխալ է. նա դեռ իր տեղն է։ Տրապիզոնից գանգատւում են, որ 7-րդ համարից դէնը թերթ չեն ստանում։ Զես կարող արդեօ՞ք պարզել այդտեղ այդ խնդիրը։ Ինչո՞ւ չեն ուղարկում, թէ ուղարկել են, բայց տեղ չէ հասել։ Պէտք է անպատճառ կրկին ուղարկել տալ, եթէ նոյնիսկ մի անգամ ուղարկւած լինի. պահանջում են ամենախիստ կերպով։

Մենք համաձայն չենք որ «Դրօշակի» վերջին համարի առաջնորդողը քաղաքական սխալ է մեր կողմից, ինչպէս կարծում է Թ.։ Որ մեր յօդւածը, յեղափոխական տեսակէտից, կրթական նշանակութիւն կարող է ունենալ մեր ժողովրդի համար — այդ պարզ է մեզ համար, իսկ ի՞նչ պիտի տար մեզ յօգուտ Անգլիայի գրւած մի բան — այն Անգլիայի, որի մի վճռողական քայլը

ժամանակին բաւական էր կոտորածների առաջն առնելու համար, այն Անգլիայի, որի հրէշաւոր անհաւատարմութիւնը հաւատարմութեամբ պատասխանելը մի անորմալ երեւոյթ կը լինէր միայն։ Առաջին, մենք արդէն գիտենք, որ կառավարութիւնները մեր յօդւածներով չէ որ հետեւում են այս կամ այն ընթացքին մեր հարցի վերաբերմամբ։ Երկրորդ. դէմ լինելով Անգլիային, ինչպէս եւ Ռուսիային, Գերմանիային,— մենք ազատ ենք մնում կրիտիկական բոպէին այն կողմը յարելու, որից շօշափելի օգնութիւն կը տեսնենք։ Երրորդ. առանց այն էլ ռուսները մեզ համարում Անգլիայի գործիք՝ լրտեսներ, իսկ անգլիացիք, գերմանացիք եւ հայ հակադաշնակցականները՝ Ռուսիայի գործակատարները. համակրութեամբ վերաբերուել այդպիսի հանգամանքներում Անգլիային՝ այդ կը նշանակէ առանց որեւէ օգտի գրգռել հակառակ կողմը՝ ռուսներին, որոնք հէնց այդպիսի կասկածների չնորհիւ այնքան խիստ, այնքան անգութ են դէպի մեզ։ Այս ամէնը դեռ զուտ «դիպլոմատական» տեսակէտից։ Իսկ եթէ աւելացնենք մի փոքր «բարոյական» եւ այլն տեսակէտներ, որոնք նոյնպէս ժողովրդի համար անհրաժեշտ են, որովհետեւ ժողովուրդը ամբողջապէս դիպլոմատներ չէ դառնալու, այն ինչ՝ մի ընդհանուր .....գործ կատարելու համար միանգամայն անհրաժեշտ է, որ նա լինի բարոյական .....(6)։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ

1.- Բէլք – գերման բեւեռախոյզ:

2.- Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի):

3.- Անընթեռնելի մէկ բառ:

4.- Մօլէկիւլ – Պերլինի դաշնակցական կոմիտէի անունը: Փարիզեան Aurore թերթի դէմ դատ բացողը սուլթան Համիդն էր եղած: Այդ առթիւ Դաշնակցութիւնը զօրավիգ կանգնելով ֆրանսական օրաթերթին՝ Եւրոպայի իր մասնաճիւղերուն միջոցաւ հանգանակութեան (ստորագրութեան) ձեռնարկած էր: Սուլթանը դատը յետ կոչելէ ետք, հարց կը ծագէր թէ ի՞նչ նպատակի կամ ձեռնարկներու պէտք էր յատկացնել ինչ որ մնացած էր հաւաքուած գումարներէն:

5.- Բաբա – ծածկանուն Գարեգին Խաժակի (Չագալեան):

6.- Շուրջ 6 տող բոլորովին անընթեռնելի:

37

Մատեան No 85, *էջ* 224-227

23 *փետրուար* 1900

Մօլէկիւլ կոմիտէին, Բերլին.

Սիրելի ընկերնե՛ր,

Ստացել ենք վերջին ձեր երկու նամակները։ Դորանից առաջինին չկարողացանք խկոյն պատասխանել, որովհետեւ ժամանակ էր հարկաւոր, որպէսզի փորձէին մեր ընկերները ձեր ուզածին չափովը պարտք անելու տեղ գտնել։ Եւ ահա մինչ մենք սպասում ենք, թէ այսօր էգուց վերջապէս կը պարզուի այդ հարցը ու մենք կարող կը լինենք մի բան գրել ձեզ, եկաւ Aurore-*ի այն համարը, որտեղ հաղորդւում էր, որ դատը այլեւս չէ կայանալու։* Vossische Zeitung-*ի լուրը, ի հարկէ, վերցրած է* Aurore-*ից եւ միանգամայն ճիշդ է։ Այդպիսով ինքնըստինքեան* Aurore-*ի խնդիրը «փակւած է», եւ այդտեղացիներին է մնում՝ չեղած համարել տեղի ունեցած ստորագրութիւնը կամ թէ մի անգամ արդէն ստորագրած գումարներին տալ մի ուրիշ գործադրութիւն։ Գոնէ այստեղացիների մէջ մինչ այժմ որոշ տրամադրութիւն բոլորի կողմից չէ արտայայտւել։ Ոմանք, կապելով* Aurore-*ի գործը եւրոպական պրոպագանդայի ընդհանուր ընոյթի հետ, ուզում են ստորագրած գումարներին տալ՝ նոյնանման մի ուրիշ գործադրութիւն. ոմանք ուզում են կէսից հրաժարուել եւ միւս կէսը մեր հայեցողութեան թողնել. ոմանք էլ մտադիր են ամբողջովին յետ վերցնել։ Պարզ է, ի հարկէ, որ եթէ ժամանակին համակրութեամբ վերաբերուեցին իրենց արւած առաջարկին, այդ այն պատճառաւ էր՝ որ* Aurore-*ի մասնաւոր այս դէպքը կապ ունէր այն մեծ դատի հետ, որը կոչւում է հայկական եւ որը մօտ է բոլորիս սրտին։ Այս տեսակէտից խնդրին նայում եւ պնդում են*(1)*, որ իրենց համակրութիւնը նկատելի կերպով արտայայտւող .....*(2) *դէպի հարցը չպիտի միայն այն բոպէներին երեւան գայ, երբ մի* Aurore *կամ դրա նման ուրիշ պատահական դէպքեր հանդէս գան։ Գործենք մենք — եւ* Aurore-*ն»ի նման դէպքեր ինքներս կը ստեղծենք։ Հետեւաբար — ասում են այդպէս մտածողները — քանի որ մի մի բան ստորագրւած է արդէն, այժմ ոչ թէ պէտք է հրաժարւել նւէրներից, այլ յատկացնել ուրիշ ձեռնարկների։ — Կէսը թողնելու կողմնակիցները կանգ են առնում միջին ճանապարհի վրայ. մերժողները ուզում բաւականանալ ամսավճարներով եւ անտեսում են, որ* Aurore-*ի առթիւ եղած*

նէրները յետ վերցնելով, նրանք ուժ են պահում իրենց մէջ էգուց-միւս օր նոյնանման ստիպողութեան դէպքում օգնութեան հասնելու «Դաշնակցութեան»։

1.- Ի միջի այլոց, «ուրիշ ձեռնարկների» հարցով մեզ դիմողներին մենք մատնացոյց ենք արել հետեւեալ պահանջները.

ա) Փարիզում մեզ յաջողւում է յայտնի հայասէրներից (մի քանիսի նամակները տպագրուած են «Դրօշակում») կազմել մի կոմիտէ, որի նպատակը կը լինի. ա.— լրագրութեան միջոցով յուզել Ֆրանսիական հասարակական կարծիքը յօգուտ մեր հարցի,

բ) Նոյն նպատակով ժողովրդական միթինկներ եւ կոնֆերանսներ կազմակերպել. գ) պատգամաւորների միջոցաւ պարլամենտական հարցապնդումներ յաջողեցնել. դ) մեզ իրազեկ պահել քաղաքական (դիպլոմատիական) տրամադրութիւնների, որպէսզի երկրում գործող մեր ընկերները կարողանան յարմարուել արտաքին հանգամանքների պահանջներին. ե) Փարիզում, ամառս, ցուցահանդէսի (2) ժամանակ կայանալիք միջազգային մամուլի կոնգրէսին առաջարկել, որ բոլոր երկրների մամուլը — այդ եօթերորդ մեծ պետութիւնը Եւրոպայում — իր ձեռքը առնի հայկական հարցը, որ մոռացւում է միւս 6 պետութիւնների կողմից(3), եւ 20-րդ դարի շէմքին թոյլ չտայ, որ մի կուլտուրական, բայց դժբախտ ժողովուրդ զոհ գնայ տաճկական ամենագիշատիչ բռնակալութեան։

2.- Օտարներին հայ յեղափոխական շարժման հետ ծանօթացնելու եւ երկրի պահանջները պարզելու համար, Ֆրանսիերէն «Դրօշակի» մի քանի յաւելուածներ տալ։ Դա կարող էր մեծ ծառայութիւն անել թէկուզ այն տեսակէտից, որ Անգլիայից սկսած (օրինակ՝ Բրայս) մինչ Ֆրանսիա (Վիկտոր Բերար), Գերմանիա (չատերը, իսկ վերջերս Բէլքը) եւն հրէշաւոր սխալներ են գործում մեր կեանքում տեղի ունեցած երեւոյթների մասին խօսելիս եւ, ի հարկէ, շարունակ վնասում են մեր գործին։

3.- Կան օրագրեր Ֆրանսիայում, որոնք համակրելով մեր դատին, մեզանից տեղեկութիւններ են ուզում Հայաստանում օրէօր տեղի ունեցող երեւոյթների մասին եւ միշտ դժգոհ են, որ մեր տուած տեղեկութիւնները «հին են լինում», ահա մի բան, որ օրագրի համար անյարմար է։ Այդ պակասի առաջն առնելու համար մենք կարող ենք, թէկուզ վերոյիշեալ կոմիտէի միջոցով, մի արժանահաւատ Ֆրանսիացի թղթակից պահել Պոլսում, որը, իբր Ֆրանսիացի ազատ մուտք կ՚ունենար այնտեղի դեսպանատները եւ գաւառներից հիւպատոսների ուղարկած հեռագրական տեղեկութիւնները թարմ-թարմ Եւրոպայի ականջին կը հասցնէր։ Մեր ընկերները Պոլսում ազատ հասարակական դիրք չունեն, որպէսզի ամէն տեղ կարողանան երեւալ, այն ինչ հանգամանքները բոլորովին ուրիշ են ամէն մի օտարազգի մարդու համար։ Երկրից էլ ստացւող մեր տեղեկութիւնները, շատ հասկանալի պատճառներով, չեն կարող ունենալ այն թարմութիւնը, որ պահանջում է եւրոպական լրագիրը

— Հայոց պատրիարքարանը եկող տեղեկութիւնները եւս բաւականին նիւթ կը տային։

Ակներեւ է, որ այս ձեռնարկներից իւրաքանչիւրը ծախս է պահանջում եւ որ դոքա կարող են իրականանալ այն չափով, որ չափով դրամական պահեստ կ'ունենանք։ Աւելացրէք, որ կոմիտէի խնդիրը հեշտութեամբ կարող է ձեռնարկւել նաեւ Իտալիայում, Գարիբալդիի-Ֆերրի (Էնրիքօ) եւ այլոց միջոցաւ։

Երեւի այստեղացիք որեւէ վերջնական որոշում ընդունելու համար այս քանի օրերս ժողով կը դումարեն։ Արդիւնքը ժամանակին կը յայտնենք։ Այս մանրամասնութիւններն էլ գրում ենք ձեզ այն դէպքի համար, եթէ տեղդ էլ նոյնանման հարցեր ծագեն, ձեռքներիդ ոեւէ նիւթ ունենաք։ Ինչ վերաբերում է մեզ (խմբագրութիւն-Բիւրոյին), չնայելով մեր բացայայտ տրամադրութեան, բոլորովին չէզոք ենք այս հարցում։ Ուղարկեցէք Aurore*-ի կոնկրէտ խնդիրը, եւ եթէ դատը չէ կայանում, հարցը մեզ համար այլեւս փակւած է։ Ինչպէս ուզում էք, արէք. ահա մեր պատասխանը բոլորին։ Առաջարկեցին մեզ մօտակայ իրենց ժողովին մասնակցելու. մենք հրաժարւեցինք, որպէսզի ուսանողութեան մի որոշ մասի վրայ ճնշում չը լինինք գործ դրած։*

Այսօր ուղարկւում են ձեզ «յաւելւածի» վերջին թերթերը։ Վերջապէս ազատւեցինք այդ անհաճոյ գործից, որի պատճառաւ «Դրօշակը» ուշացաւ։

Ընկերական ջերմ բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Անընթեռնելի մէկ բառ:

2.- Խօսքը 1900 թ. Փարիզի միջազգային ցուցահանդէսի մասին է:

3.- Քրիստափոր հոս, ինչպէս նաեւ այլ առիթներով, մամուլի խաղացած կարեւոր դերի մասին խօսելով՝ վերջինիս կու տայ եօթներորդ պետութեան անունը, նկատի ունենալով այդ ժամանակներուն Եւրոպայի եւ միւս ցամաքամասերու երկիրներուն եւ ժողովուրդներուն ճակատագիրը կախում ունէր կարեւոր չափով մը եւրոպական 6 մեծ տէրութեանց վճիռէն:

38

Մատեան No 85, *էջ* 254

28 *մարտ* 1900

Պ. Մխիթարեանին(1), *Փարիզ.*

Յարգոյ պարո՛ն,

Ստացանք Ձեր առաջարկած պայմանները եւ դատի վերաբերեալ պպ. Իսկէնտէրի եւ Յակոբեանի նամակը(2)։

Պայմանները կը ցրւենք իսկոյն մեր պատասխանատու մարմիններին եւ մեծամասնութեան կարծիքը ստանալուն պէս՝ կը յայտնենք Ձեզ, ինչ դրութեան մէջ է հարցը։

Ինչ վերաբերում է դատի խնդրին՝ պպ. Իսկէնտէրի եւ Յակոբեանի նամակը կը տպւի «Դրօշակի» հետեւեալ համարի հետ՝ Յաւելուածով։ Միայն՝ մենք վերապահում ենք մեզ իրաւունք՝ կցել նամակին մի քանի նկատողութիւններ, ինչպէս նաեւ մեր պատասխանում յարմարւել «Դաշնակցութեան» արդի տրամադրութեան դէպի հարցը։ Այդ իրաւացի ենք համարում մանաւանդ այն պատճառով, որ նախնական մեր խօսակցութիւններում դատի խնդիրը թողնւած էր ապագայ միացեալ կազմակերպութեան եւ ամենեւին չէր դասւած իսկոյն ձեռնարկելի խնդիրների շարքը, ինչպէս արել էք դուք։

Ընդունեցէք մեր յարգանաց հաւաստիքը։

1.- Մխիթարեան կամ Մխիթար, որուն հետ երբեմն թղթակցութիւն կը պահէ Քրիստափոր, իրականին մէջ ծածկանուն է, բուն անունն է Յովհաննէս Շահնազար (1854-1943), յայտնի հրապարակագիր, որ ատեն մը իբր միջնորդ կ՚աշխատէր յօգուտ հնչակեան եւ դաշնակցական կուսակցութեան միութեան:

2.- Դատի հարցը կը վերաբերի տարիներէ ի վեր քաշքշուող Արփիար Արփիարեանի հարցին, որ ոչ միայն այդ տարիներուն արտասահմանեան մամուլի նիւթ էր դարձած, այլեւ խոչընդոտներէն մէկը կուսակցութեանց միջեւ միութիւն կամ համերաշխութիւն գոյացնելուն:

39

Մատեան No 85, *էջ* 255

29 *մարտ* 1900

Պ. Ճանկիւլեանին

Յարգելի բարեկա՛մ,

Ստացանք ձեր մարտի 8*-ից գրած նամակը։ Ընդունեցէք, խնդրում ենք, մեր շնորհակալութիւնը թէ Ձեր բարեկամական վերաբերմունքի համար դէպի մեզ եւ թէ մասնաւորապէս զէնքի հարցում*(1) *Ձեր ցոյց տւած ջանքերի առիթով։*

Զէնքի հարցը այսքան ձգձգւեց հակառակ մեր կամքին։ Սակայն ի նկատի ունենալով մեր հաւատը դէպի Ռոստոմը, որին է յանձնւած այդ գործի քննութիւնը, մենք ստիպւած ենք էլի սպասել. խնդրում ենք միայն Ձեր աջակցութիւնը Ռոստոմին, որին նոյնպէս գրւած է զէնքի հարցին վերաբերեալ Ձեր ունեցած տեղեկութիւնների մասին։

Ստացե՞լ էք արդեօք դեռ անցեալ տարւայ յուլիսի 22*-ից մեր գրած մի նամակը Աթէնքի Ձեր հասցէով։*

Ձեր ուզած Յաւելւածները(2) *ուղարկւել են Ձեզ՝ ձեր նամակը ստացւելուն պէս։*

Ձերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Զէնքի հարցը կը վերաբերի Դաշնակցութեան Պուլկարիոյ պահեստներէն գողցուած ռազմամթերքին:

2.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ»ի լոյս ընծայած Յաւելուածներուն:

40

Մատեան No 85, *էջ* 267

31 *մարտի* 1900

Մօլէկիւլ կոմիտէին, Բերլին

Ընկերնե՛ր,

Ստացանք ձեր մարտի 25-*ից գրածը։*

Փարիզում մեր ցանկացած կոմիտէն այժմ կազմակերպւած կարելի է համարել։ Աւելորդ կը լինէր այստեղ մանրամասնութիւնների մէջ մտնել այդ կոմիտէի առթիւ, ի նկատի ունենալով մի կողմից՝ այն հանգամանքը, որ այդ մասին արդէն բաւականաչափ գրած է ձեզ (տես մեր նամակը փետրվարի 23-*ից) եւ միւս կողմից՝ այն պատասխանատու գործերը, որոնք ապագայում կարող են ղեկավարւել այդ կոմիտէի ձեռքով եւ որոնց մասին առայժմ թոյլտւութիւն չունինք շատ շրջանների առաջ խօսալու։ Աւելի լաւ է, մեր կարծիքով, թողնել այդ հարցերը ապագային. ժամանակի ընթացքում, գործի մէջ՝ դոքա անկասկած կը պարզւեն ինքնըստինքեան, բնականաբար։*

Այս տեսակէտից, օրինակ, ահա ինչ կարող ենք հաղորդել ձեզ հէնց հիմա. 1) *կոմիտէն մտնող մարդիկ նպատակ ունին միայն ծրագրով, ինչ ծրագրով կազմակերպւում են իրենք, հիմնել կոմիտէներ յայտնի քաղաքական գործիչներից նաեւ Իտալիայում ու Անգլիայում, եւ* 2) *առաջարկում են հէնց հիմակւանից սկսել հրատարակել յատուկ մի շաբաթաթերթ ֆրանսիերէն լեզուով Պիեռ Քիառի խմբագրութեամբ եւ աշխատակցութեամբ Պրեսանսէի, Ժակլարի եւ ուրիշների։ Խմբագրութեան եւ աշխատակցութեան համար ոչ մի վարձատրութիւն համարեա չուզենալով մեզնից, նրանք պահանջում են միայն թղթի տպագրութեան եւ փոստի ծախսերը։ Փարիզից մեզ ղրկած նախահաշւի համաձայն, իւրաքանչիւր համար,* 8 *երեսներից բաղկացած, թէկուզ մինչ* 2000 *կամ* 3000 *օրինակ, կը նստի մեզ վրայ մօտաւորապէս* 100 fr., *կամ* 400-500 fr., *հաւանական։ Մենք այս բոպէիս բանակցութեան մէջ ենք հետները թերթի ծրագրի վերաբերմամբ. գուցէ մենք հարց դնենք ամիսը երկու կամ մի անգամ հրատարակել թերթը։ Բայց գլխաւորը այն է, որ թէ յիշեալ կոմիտէների եւ թէ թերթի այս ձեռնարկները կարեւոր են եւ եթէ մարդիկ այդպիսի ջերմ համակրութեամբ առաջարկում են մեզ թէ իրենց ժամանակը, թէ աշխատութիւնը, թէ իրենց անուններն իսկ,— մենք, ի հարկէ, պէտք է պատրաստ լինենք միեւնոյն ճշդութեամբ հոգալ պահանջւող ծախսերը*(1)։ *Այդ նպատակով է, որ մենք ուզում ենք մի որոշ ֆոնդ ունենալ Փարիզի համար, որպէսզի մի ամբողջ տարւայ խօսակցութիւններից յետոյ այդ*

մարդկանց հետ, այնքան գնալ-գալուց, բանակցելուց յետոյ, մենք կարող լինենք յետ չը կանգնել այս կամ այն գործնական պահանջի առաջ ու, անդառնալի կերպով հիասթափեցնելով մարդկանց, չզրկուել նրանցից սպասուող անպայման օգուտներից։

Սկզբունքով դուք համակրում էք այս տեսակ գործունէութեան Եւրոպայում։ Ձեզ մնում է ուրեմն քննել ներկայ երկու հերթական հարցերը եւ ընդունել այս կամ այն վճիռը դրանց մասին։ Եթէ ձեր ընդհանուր տրամադրութիւնը չէ հակասում յիշեալ ձեռնարկներին, ապա խնդրում ենք ըստ կարելոյն շուտ որոշել եւ տեղեկութիւն տալ մեզ՝ թէ իւրաքանչիւր ամիս, սկսած ապրիլից, որքան օժանդակութիւն կարելի է սպասել ձեզնից։ Եթէ Aurore*-ի համար ստորագրած գումարները նուիրատուները յետ չեն վերցրնում, այդ դէպքում նրանք հեշտութեամբ կարող են բաժանել իրենց նուէրները թէկուզ* 9 *ամսւայ վրայ (մինչ տարուայ վերջը) եւ այդպիսով ամսական մի որոշ մուտք ապահովել Փարիզի գործերի համար։ Այստեղի ուսանողները*(2) *նոյն հարցի վերաբերմամբ, բացի մի-երկու «ազնուաշուք» օրիորդներից, վճռեցին իրենց նուէրները ժողովել միանուագ եւ դնել Բիւրօ-ի (մեր) անպայման տրամադրութեան տակ։*

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Հարցը կը վերաբերի Եւրոպայի մէջ հայկական հարցի քարոզչութեան համար ֆրանսերէն լեզուով պարբերաթերթի մը հրատարակութեան, որուն նախապատրաստական աշխատանքներուն ձեռնարկած էր Քրիստափոր: Արդարեւ, նոյն տարուան Նոյեմբեր ամսուն Փիեռ Քիյարի խմբագրութեամբ եւ կիսամսեայ դրութեամբ պիտի սկսէր լոյս տեսնել Pro-Armenia-ն:

2.- Խօսքը Ժընեւի նորակազմ Հ.Յ.Դ. «Ջանք» խումբի կամ կոմիտէի մասին է:

41

Մատեան No 81-3, էջ 31-34 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

մարտ [1900]

Արեւելեան բիւրոյին,

Վաղուց է ձեզ չենք գրել, բայց վերջին ժամանակները տեղի ունեցած ձերբակալութիւնները ձեզ մօտ եւ ձեր ցրուած դրութիւնը մեզ ստիպում էին լռել։ Ձեր գրածները ստացել ենք։ Զգիտենք, դուք էլ ստացել էք Բաթումի միջոցաւ մեր վերջին երկար գրութիւնը. այդ մասին ոչ մի խօսք չէք գրում ձեր նամակներում։

Ահա մի հարց, որի մասին հարկաւոր է ձեր շուտափոյթ կարծիքը. երկրի դրութիւնը համարեա ամէն տեղ վատ է, այնքան վատ, որ ինչպէս գիտէք, մեր պատասխանատու մարմինները մատնուած են անգործութեան։ Պէտք է միջոցներ ձեռք առնել գործին զարկ տալու համար։ Այդ նպատակով մենք առաջարկում ենք այս ամառ կատարել եթէ ոչ ընդհանուր ժողով (որ իրաւունք ունինք հրաւիրելու տարւայ վերջին եւ որը ներկայ հանգամանքներում իսկապէս չէ կարող կայանալ (գծած սահմաններում), գոնէ պատասխանատու մարմինների մի ժողով։ Ծաղկի(1) *եւ Կիլիկիայի համաձայնութիւնը արդէն ունինք։ Եթէ դուք էլ, ցուցահանդէսի*(2) *պատրւակով, մէկը ուղարկէք այստեղ, այն ժամանակ կարելի կը լինէր ընդհանուր համաձայնութեամբ որոշ վճիռներ ընդունել եւ իրար հասկանալով՝ գործին ուժ տալ։ Սա մի պահանջ է, որը եթէ չիրագործւի անյապաղ, այն ժամանակ, թողնելով ամէն մի մարմին իր պատասխանատու դրութեան մէջ, տեղիք կը տանք խառնաշփոթութիւնների, հրաժարականների եւայլն։ Մտածեցէք եւ շուտով ձեր կարծիքը յայտնեցէք։ Եթէ համաձայն էք, հեռագրեցէք մօտաւորապէս ժամանակը, երբ կարող է ձեզնից մարդ գալ այստեղ (հեռագրէք, օրինակ,* Exposition, voir), *թէ ոչ՝ նոյնպէս հեռագրէք (օրինակ՝* ne pas)։ *Այստեղ ձեր կազմից մէկի գալը լաւ կը լինէր եւ այն պատճառով, որ այս րոպէիս մեր առաջ կան մի շարք կարեւոր խնդիրներ, որոնց սահմանում մենք անկարող ենք առանց ձեր համաձայնութեան վճռական քայլեր անել։ Այդպիսիք են՝* 1) *նոր ծագած միութեան խնդիրը Վերակազմեալ հնչակեանների հետ, որի վերաբերմամբ մենք կ՚ուղարկենք ձեզ առանձին շրջաբերական (Բիւրոյիդ համար, տարածել հարկաւոր չէ).* 2) *ցուցահանդէսի ժամանակ բոլոր կուսակցութիւնների յեղափոխականներից կոնգրէս կազմելու խնդիրը, որ վաղուց արդէն հրապարակի վրայ է, եւ* 3) *Ֆրանսիա, Իտալիա եւ Անգլիա յայտնի հասարակական գործիչներից հայկական-քաղաքական կոմիտէներ կազմակերպելու խնդիրը։ Վերջինիս համար կարեւոր հողը արդէն պատրաստ է եւ այդ մասին առաջ էլ գրել ենք ձեզ. մեզ մնում է վճռական քայլ անելը։ Եթէ դուք չգաք, դուցէ ստիպւած լինենք մեզնից մէկին ձեզ մօտ ղրկելու։ Ահա ինչու կրկին խնդրում ենք շուտով ձեր վճռական կարծիքը մեզ հե-*

ռադրով յայտնէք։ Հեռագրել կարող էք այս հասցէին Genève, Roseraie 26, Nersissian. *Ձեր պատասխանը չպիտի ուշանայ աւելի քան ապրիլի* 12-15-*ը ձեր տարեթուով*(3)։ *Գալուց առաջ լաւ կը լինէր, որ եկողը մտնէր Ոսկանապատ*(4)՝ *դրամ հետը բերելու համար։ Ժողովարարութիւնը*(5) *դիւրացնելու համար, ահա ինչ նիւթ կարող էք ունենալ՝ բացի ձեզ արդէն յայտնի բոլոր մեր կարիքներից։*

(*Արտագրել Եղիշէի նամակից բոլոր կարեւոր մասը*(6), *ոչ յեղափոխական եւ յեղափոխական գործեր աւելցնելով, Փարիզից ստացած վերջին տեղեկութիւնների հիման վրայ, որ Ֆրանսիական կոմիտէն կը կազմակերպի նոյն տեսակ կոմիտէներ Իտալիայում եւ Անգլիայում, իրենց կառավարութիւնների վրայ ազդելու եւ մեր հարցը օրակարգի անցկացնելու նպատակով*)։

Բացի դրանից լաւ կը լինէր խսկոյն Ոսկանապատ մի մարդ ուղարկել։ Այնտեղ այժմ սովեալների օգտին վաղուց ժողովւած դրամ կայ՝ 9000 *ռ.։ Թող կէսը տան մեզ* (*եւրոպ. պրոպագանդայի գործին*)։ *Նրանք վճռել են այդ փողը մսխել գերմանացիների միջոցով։ Հայր Շարմտանը, որին այնքան երկար ժամանակ համակրում էինք, այժմ դիմակը բացել է։* «*Մշակից*» *եւ* «ՍՊՔ. Վ.»(7)-*ից իմացած կը լինէք եւ կաթոլիկներից։ Բողոքականներից՝ մենք Դրօշակում գրել ենք պատւոյ նամուսի մասին. Որբախը յայտնի է որքան կարեւորութիւն է տալիս գերմանական շահերին Հայաստանում. նորերս էլ յայտնի Բէլքն է գերմանական լրագրերում, յարձակւելով Դաշնակցութեան վրայ, բացարձակապէս յայտարարում, որ գերմանացիք պէտք է իրենց այնպէս պահեն Տաճկաստանում, որ թիւրք կառավարութիւնը նրանց միշտ դիւրութիւններ տայ. նոյն Բէլքն էր, որ վերջերս թրքական ցենզուրայով հեռագրեր էր ուղարկում Եւրոպա մեր զինակիրների, Սերովբի*(8), *պարսկական սահմանագլխում պատահած անցքերի մասին։ Դէհ, հերիք է, դրանց մենք ինքներս նպաստեցինք այդ մարդասպանների ազդեցութիւնը մեր ժողովրդի վրայ ուժեղացնելուն։ Ասէք-խօսէք յիմարների հետ այս բոլորի մասին։ Եթէ չեն ուզում մեզ տալ, այս կամ այն գործի համար, թող տան մեզ բաժանելու համար։ Վերցրէք եւ ուղարկէք Դժոխքին*(9), *թող Մուշում բաժանի, միայն ինքը բաժանի։*

Նախորդ նամակում ուզել էինք «Ներսէս V»(10) *Երիցեանի գիրքը, որ չէք ուղարկել։ Այժմ կրկնում ենք, պէտք է շուտով ուղարկել մեզ՝* 1) *այդ գիրքը,* 2) *Արարատի* 1885 (*թէ* 84) *թւի այն համարը, որտեղ տպւած է Սենատի պատասխանը* «Կավկազ»(11)-*ին, դպրոցների փակման հարցի մասին, նաեւ Էջմիածնի տպագրած հաշիւը դպրոցների մասին։* 3) *Մշակի* 1878 (*թէ* 77) *թւի այն համարը, որտեղ տպագրւած է Թիֆլիզի հայերի ուղերձը կայսրին թիւրքահայերի ազատութեան մասին,* 4) *աշխարհաբարի մի քանի քերականութիւններ. դա ուզել է մեզնից սպանական* (*Լիսաբոնից*) *մի պրոֆեսսոր, որ մեզ շատ համակրում է։*

Կրկին խնդրում ենք ուղարկել այս բոլորը անյապաղ. շատ հարկաւոր է. եթէ ժամանակ չունենաք ինքներդ, խնդրեցէք Գալուստին Էլլէնի կողմից. միայն փող տւէք իրեն։

«*Դրօշակը*» *ոչ միայն չենք յաճախակիացնում, այլեւ ամէն ամիս էլ չենք հրատարակում։ Ծաւալը մեծացրել ենք — բաւական է։ Ձեր կողմերը այժմ-*

եանից ուղարկելու ենք 7-800 հարիւր. կանոնաւորեցէք տարածումը. մի քանի տեղերից գանգատւում են, որ քիչ են ստանում։

Վահաբը(12) *վաղուց է Ամերիկա։ Ամբողջ տարին գործիչ էին խնդրում եւ նա համաձայնւեց ինքը գնալ։ Նամակներից երեւում է, որ դժգոհ չէ գնալուց։ Եգիպտոսի ընկերները յուսահատ դրութեան մէջ են, բայց սպասում ենք Վահաբից չօշափելի օգնութիւն։ Բոլղարիա ամէն բան տակնուվրայ է եղել։ Վերջերս էլ այնտեղ եղած մեր զէնքերն են ծախւել, որով առիթ է ստեղծւել մեր հակառակորդների համար մի նոր արշաւանք սկսել մեր դէմ։ Ռոստոմը այնտեղ է, զբաղւում է տեղական հարցերով եւ յոյս ունենք, որ շուտով էլ կը կանոնաւորի։*

Մեր շրջանում մխիթարական երեւոյթներից է եւրոպական ուսանողութեան մէջ որոշ աստիճանի մեր յաջողութիւնը։ Այս մասին հետաքրքիր կը լինէր մի փոքր երկար գրել, բայց այս անգամ նամակս ծաւալւեց եւ այդ հարցը թողնում ենք։ Ո՞ւր է Մելիքը(13) *(Իւս.)։ Խնդրեցէք նրանից մեզ ուղարկի իր բոլոր յարաբերութիւնների պատմութիւնը Շահնազարի հետ («Հայրենիքի» տնօրէն), կցելով միանգամայն իր կարծիքը այդ մարդու մասին՝ թէ որքա՞ն հաւատով կարելի է վերաբերել դրան եւ ի՞նչ տեսակ գործերում։ Դա մեզ շատ հարկաւոր է։ Եթէ չկարողանաք ինքներդ Մելիքից ստանալ մեր ուզածը, յայտնեցէք մեզ նրա հասցէն, որպէսզի մենք դիմենք։*

Լսեցինք, որ Նատալիան արձակւել է։ Հետաքրքիր է իմանալ նրա հարցաքննութեան ամբողջ պատմութիւնը։ Չէ՞կարող արդեօք գրել։ Լաւ կը լինէր, որ դուք այս տարւայ բոլոր ձերբակալութիւնների մասին լիակատար տեղեկութիւններ տայիք մեզ. ե՞րբ, ո՞րտեղ, ո՞վքեր են ձերբակալւել, ինչո՞ւմ են մեղադրել, ո՞րքան են բանտ նստել, եւն եւն։ Տեղեկութիւնները պէտք է լինեն ամենաճիշտ եւ հարկաւոր դէպքերում թւերով։

Ընկերական կարօտագին բարեւներով եւ համբոյրներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ծաղիկ – ծածկանուն Կ. Պոլսոյ:
2.- Ակնարկութիւն 1900 թ. կայանալիք Փարիզի համաշխարհային ցուցահանդէսին:
3.- Այսինքն՝ Կովկասի եւ ընդհանրապէս Արեւելքի մէջ գործածական հին տոմարով: Ապրիլի 12-15-ը նոր տոմարով պիտի համապատասխանէր Ապրիլ 25-28:
4.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:
5.- Ժողովարութիւն, դրամահաւաքի, հանգանակութեան իմաստով:
6.- Փակագծի մէջ առնուած պարբերութիւնը կը նշանակէր, որ այս նամակի գաղտնի թանաքով արտագրութեան ատեն այս բաժնին մէջ պէտք էր զետեղել Եղիշէին (Թոփչեան) ուղղուած գրութեան համապատասխան մասը:
7.- Բնագրին մէջ ռուսատառ՝ «Սանկտ Պետերբուրգսկիէ Վեդեմոստի»:
8.- Խօսքը կը վերաբերի հանրածանօթ ֆետայապետ Սերոբ Աղբիւրի (Վարդանեան):
9.- Հրայր-Դժոխք (Ղազարեան Արմենակ):
10.- Բնագրին մէջ ռուսատառ:
11.- Բնագրին մէջ ռուսատառ:
12.- Վահաբ – ծածկանուն Օննիկ Դերձակեանի, աւելի ծանօթ Արշակ Վռամեան անունով:
13.- Մելիք – ծածկանուններէն մէկը Իւսուֆեան Յովհաննէսի (1850-1920):

42

Փաստ. 39-74

Քրիստափորի ձեռագրով շարադրուած եւ կուսակցական մարմիններուն ուղղուած այս շրջաբերականին (մակագրուած «գաղտնի») նիւթը կը կազմէ հնչակեան կուսակցութենէն անջատուած Վերակազմեալներու եւ Դաշնակցութեան միջեւ միութիւն կամ համերաշխութիւն գոյացնելու հարցը՝ հերթական անգամ արծարծուած 1896 թ. սկսեալ եւ մնացած անհետեւանք: 1900 թ. սկիզբները պոլսահայ ծանօթ հրապարակագիր Յովհաննէս Շահնազար, անկուսակցական, չէզոք անձնաւորութիւն, վերստին նախաձեռնարկ հանդիսանալով՝ դիմած էր Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան բիւրոյին, որուն անունով Քրիստափոր նոյն տարուան 22 Յունուարին պատասխանած էր «Դաշնակցութեան կողմից պայմաններ» խորագիրը կրող նամակով մը (տես «Քրիստափոր Միքայէլեանի նամակները», Պէյրութ, 1993, էջ 108-109): Ներկայ շրջաբերականի առաջին բաժինը, գրեթէ բառացի վերյիշեցնելով այդ պայմանները, կը ներկայացնէ միութեան հարցին ստացած հետագայ հոլովոյթը եւ Դաշնակցութեան դիրքորոշումը, պահանջելով միաժամանակ կուս. մարմիններուն տեսակէտը այդ մասին:

Ժընեւ, 2 *ապրիլ* 1900 *թիւ*

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Պատասխանատու մարմիններին,

Ընկերնե՛ր,

1900 *թւի յունվարին հայ հասարակութեան մէջ որոշ չափով յայտնի մի անձնաւորութիւն, ոչ հնչակեան եւ ոչ դաշնակցական, բայց որ ունի մօտիկ ծանօթութիւններ վերակազմեալների մէջ* (*ըստ իւր պահանջման, առ այժմ մենք կ՚անուանենք նրան պ. Մխիթար*(1) *կեղծ անունով*), *Ժընեւ գալով, առաջարկեց միութիւն հաստատել Վերազմակեալ հնչեակեան կուսակցութեան հետ: Տեղի ունեցան երկար խօսակցութիւններ, որոնցից յետոյ Արեւմտեան բիւրօն ամփոփեց իր առաջարկները միութեան խնդրին մասին հետեւեալ կերպով.*

«Դաշնակցութիւնը», ինչպէս անցեալում, այնպէս եւ այժմ, սկզբունքով դէմ չէ հայ յեղափոխական կուսակցութիւնների միութեան խնդրին. բայց՝ ի նկատի ունենալով, որ յատկապէս Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան հետ միանալու խնդրի մասին՝ «Դաշնակցութեան» ընդհանուր ժողովը 1898 թւին կայացրել է որոշում, որի գլխաւոր պատճառները մինչեւ այժմ էլ չեն կորցրել իրենց ոյժը,— Արեւմտեան բիւրօն, իբրեւ նախնական պայմաններ, առաջարկում է.

1.- Դադարեցնել այն սիստեմատիքական յարձակումները ամէն-մի յեղափոխական երեւոյթի եւ ձեռնարկի վրայ, որ արտայայտւում է այդ կուսակցութեան պրօպագանդայի մէջ եւ ընդունել բացարձակ յեղափոխական ուղղութիւն։

2.- Հեռացնել կուսակցութիւնից Արփիար Արփիարեանին եւ ապագայ միացեալ կուսակցութեանը թողնել դատել Արփիարեանին, եթէ այդ պահանջւի ոչ թէ իր՝ Արփիարեանի կողմից, այլ մի քանի պատուաւոր անձնաւորութիւնների առաջարկութեամբ։

3.- Հեռու պահել կուսակցութեան վարիչ գործերից այն մարդկանց, որոնց անունները Բիւրօն կ՚առաջարկի եւ որոնք ապագայում պիտի ենթարկուեն դատի, եթէ ուզենան միացեալ կուսակցութեան մէջ մնալ (Աղասի, Սուրէն, Ռշտունի, Ատոմ)։

4.- Դադարեցնել այն պրօպագանդան, որ թշնամութիւն է սերմանում թրքահայերի եւ ռուսահայերի մէջ։

5.- Այժմեանից փոխել բարոյական սկզբունքներին հակասող այն բոլոր ձեւերը, որոնք յաճախ գործ են դրւում Հնչակեան կուսակցութեան օրգաններում։

6.- Միութեան բանակցութիւնները կը սկսւին այն դէպքում, երբ Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան մեծամասնութիւնը կը յարի միութեան խնդրին։

Այս նախնական պայմանները իրականանալուց յետոյ՝ Արեւմտեան բիւրօն իր լիազօրութեան սահմաններում անմիջապէս կը ձեռնարկի միութեան գործին հետեւեալ հիմնական պայմանների շրջանում.

1.- Միութեան խնդրի առթիւ բանակցութիւնների ժամանակ ծրագրական հարցեր քննադատութեան չեն ենթարկւում։ Միացեալ կուսակցութիւնը կ՚ընդունի այն ծրագիրը, որ կը մշակւի նրա ապագայ ընդհանուր ժողովում — այն պայմանով սակայն, որ ընդհանուր ժողովում մեծամասնութեամբ ընդունւած ծրագիրը պարտաւորեցուցիչ լինի բոլոր միացեալ յեղափոխականների համար։

2.- Երկու կուսակցութեան պատասխանատու մարմինները կարող են քննել եւ փոփոխել գործունէութեան տաքտիկը։

3.- Ընդունել ապակետրոնացման սիստեմը։

4.- Ընդունել հետեւեալ անունը՝ «Հայ միացեալ յեղափոխական դաշնակցութիւնը»։

5.- Ճանաչել «Դրօշակը» իբրեւ միացեալ կուսակցութեան միակ օրգան։

6.- Միութեան խնդրի առթիւ երկու կուսակցութիւնների կողմից բանակցող լիազօր մարմինները՝ համաձայնութեան գալով, ա) հռչակում են միութիւնը, բ) մշակում են երկու կուսակցութիւնների ի մի ձուլման ձեւը, գ) որոշում են առաջիկայ ընդհանուր ժողով կազմելու եղանակը եւ դ) կազմակերպում են երկու կուսակցութիւնների կողմից ամբաստանուող անձնաւորութիւնների դատը(2)։

Պ. Մխիթարը, վստահ չը լինելով, որ ներկայ պայմանները կարող են ամբողջովին ընդունուել Վերակազմեալների կողմից, յայտարարեց մեզ, թէ ինքը բաւականաչափ ծանօթացաւ մեր տրամադրութիւններին եւ որ առ այժմ թող ոչ մի համաձայնութիւն, խօսակցութիւն կամ պայմաններ չեղած նկատուին, մինչ ինքը կը տեսնուի նաեւ Վերակազմեալների հետ եւ նոյն չափով կը հասկանայ նրանց տրամադրութիւնները եւս։

Այս վճռով նա մեկնեց այստեղից Փարիզ, եւ ահա վերջերս ստանում ենք նրանից մարտի 16*-ից գրած մի նամակ, որի մէջ առաջադրւած պայմանները հետեւեալներն են.*

«1. Յեղափոխական ոգւոյն զօրացումը, եւ այս՝ «Մարտի»(3) հրատարակութեանց ոգին ու նիւթը փոխելով.

2. Ռուսահայերու դէմ հալածանքի դադարումը, եւ այս՝ «Մարտի» հրատարակութեանց բարեփոխութեամբ:

3. Արփիարի յեղափոխական ասպարէզէն հեռանալը, ընդ միշտ. իսկ գալով իր անձնական վէճին, ենթարկել զայն չէզոք անձերու կողմէ ընտրւած մի պատւոյ ատեանի դատարանին.

4. Նոր մարմինը կոչել «Միացեալ հայ յեղափոխականաց եղբայրութիւն»: Աւելորդ է ցոյց տալ թէ եղբայրութիւն եւ դաշնակցութիւն գրեթէ նոյնիմաստ են եւ ֆրանսերէնի մէջ կրնան fédération բառով ներկայացուել: Եղբայրութիւն բառը ունի սա առաւելութիւնը, որ միութեան հոգին աւելի ճիշտ կը բացատրէ եւ ժողովրդին սրտին վրայ աւելի տաք տպաւորութիւն մը կը թողու քան գիտական կերպ եւ ձեւ ունեցող դաշնակցութիւն բառը.

5. Նոր մարմնին օրկանը պիտի կոչւի Դրօշակ.

6. Նոր մարմինը պիտի ունենայ, միութեան առթիւ միայն, առժամեայ մի ատեան, երկու կողմի ամբաստանեալներու համար.

7. Նոր մարմնին ընդհանուր ժողովին թողուլ որ քուէից մեծամասնութեամբ որոշէ վերջնականապէս յեղափոխութեան ծրագիրը որ ա՛լ եւս պարտաւորիչ կը լինի.

8. Սոյն ժողովին թողուլ որ կետրոնացման եւ ապակետրոնացման խնդիր-

ները ենթարկէ վիճաբանութեան եւ ատոնց մասին տայ վերջնական որոշում մը քուէից մեծամասնութեամբ.

9. Երկու կուսակցութեանց ձեռնհաս մարմինները (դաշնակցականաց ընդհ. կամքը ներկայացնող մարմինը եւ հնչակեաններուն կետրոն. վարչութիւնը երկուքական կամ երեքական լիազօրներ կ՚ընտրեն, եւ ասոնք կ՚ընտրեն կամ երրորդ մը կամ հինգերորդ մը*: Այս լիազօրներու ժողովը, քուէից մեծամասնութեամբ

ա) Կը կատարէ երկու կուսակցութեանց ձուլումը.

բ) Կը հռչակէ միութեան կատարուած ըլլալը.

գ) Կը կազմակերպէ միացեալին դատարանը.

դ) Կ՚որոշէ միացեալին թաքթիկան մինչեւ ցնոր ընդհանուր ժողով.

ե) Կ՚որոշէ միացեալին առաջին ընդհանուր ժողովին բաղկացման եղանակը, գումարման օրը, տեղը, այնպէս որ ոչ ոք ներկայանայ ժողովին հնչակեանի կամ դաշնակցականի ձգտումով ու գոյնով, այլ իբրեւ արդէն միացած մարմնի մը հաւասար եւ համանման անդամներ:

……

Տարակոյս չունիմ որ վերեւ գրուած պայմանները… բառ առ բառ կ՚ընդունուին: Հարկ է խորշել երկրորդական նկատումներ յերեւան հանելէ: Պէտք է զանոնք ընդունել կամ մերժել իրենց ամբողջութեամբ, առանց վերապահութեան: Այս ձեւով արդէն առաջարկս ըրած եմ միւս կողմին ալ»:

*) ***Երեւի, հինգերորդ կամ եօթերորդ մէկը.*** ծանօթ. բիւրոյի:

*

* *

Ինչպէս տեսնում էք, ընկերներ, Մխիթարի առաջարկութիւններում, նախ՝ չեն զատուած <u>նախնական</u> պայմանները <u>հիմնականներից.</u> երկրորդ՝ մեր նախնական պայմաններից նա բաց է թողել 3-րդ, 5-րդ ու 6-րդ կէտերը, երրորդ՝ մինչդեռ Արփիարեանի դատը մենք թողել ենք <u>ապագայ միացեալ</u> կազմակերպութեան, նա, անորոշ ձեւով, այդ գործը չէզոք անձնաւորութիւնների ցանկութեան է վստահում,— մի հանգամանք, որ կարող է ամենամօտիկ ժամանակում ստիպել մեզ դատի դուրս գալ Արփիարեանի հետ. չորրորդ՝ հիմնական պայմաններում նա առաջարկում է «Դաշնակցութիւն» անունը փոխել «եղբայրութիւն» խօսքով, եւ հինգերորդ՝ ապակետրոնացման հարցը թողնում է ապագայ ընդհանուր ժողովին։

Ինչ վերաբերում է մեզ, Արեւմտեան բիւրօ-ին, այս բոլոր փոփոխութիւններում մենք կարեւորութիւն ենք տալիս՝ 1) <u>նախնական պայմանների</u> զատելուն, որպէսզի մի որոշ ժամանակամիջոց մեզ իրաւունք տրւի սպասողական դիրքի մէջ մնալ, եւ 2) կազմակերպութեան անունը «Դաշնակցութիւն» պահելուն, ի նկատի ունենալով մի կողմից «եղբայրութիւն» ասւած տի-

բացուական բառի անբովանդակութիւնը եւ միւս կողմից՝ Դաշնակցութեան երկարամեայ գոյութեան եւ քաղաքացիութեան բոլոր իրաւունքները։

Միւս կէտերում, որպէսզի չը չատացնենք դժւարութիւնները առանց այն էլ բաւական դժւար գործում, մեր կարծիքով, մենք կարող ենք զիջանել։ Այդպիսի զիջումներ մենք նպատակայարմար ենք համարում եւ այն պատճառով, որ ինքնըստինքեան դրանք առանձին վտանգ էլ չեն պարունակում իրենց մէջ։ Այդպէս, օրինակ, բարոյականի խնդիրը մասամբ ապահովւած կը լինի Արփիարեանի հեռացնելով եւ ուրիշ կասկածելի անձնաւորութիւնների դատի ենթարկելով. Արփիարեանի դատը մենք կ՝աշխատենք, մասնաւոր համաձայնութեամբ, յետաձգել տալ. ապակետրոնացման հարցը ընդհանուր ժողովին թողնելով, մենք աւելի հեշտացրած կը լինինք միութեան գործը, որովհետեւ հաւանական է, որ բանակցող մարմինները այդ խնդրում աւելի խիստ դիրք կը բռնեն, քան ապագայ խառն ընդհանուր ժողովի անդամները, որոնք չեն ուզենալ հռչակւած միութիւնից յետոյ դրա պատճառով կրկին բաժանուել, եւն եւն։

Այժմ ձեր հայեցողութեանը թողնելով այս ամէնը, խնդրում ենք ըստ կարելոյն չուտ յայտնել մեզ ձեր կարծիքները։ Մեր գործը դիւրացնելու համար՝ ի հարկէ դուք կը բաժանէք ձեր նկատողութիւնները երկուսի — անպայման պահանջներ եւ երկրորդական ցանկութիւններ։ Անպայման պահանջները կը սահմանափակեն մեր լիազօրութիւնը, իսկ միւսների վերաբերմամբ մենք որոշ չափով ազատ կը լինենք յարմարուելու բանակցութիւնների ընթացքին։ Ի վերջոյ՝ այն դէպքում, եթէ գտնէք, որ մեր բռնած դիրքը ընդհանուր առմամբ համապատասխանում է ձեր տրամադրութիւններին, խնդրում ենք չմերժէք տալ մեզ ներկայ հարցում ձեր կատարեալ լիազօրութիւնը։ Դա շատ կը դիւրացնի գործը, թէեւ միաժամանակ կ՝աւելացնի եւ մեր պատասխանատուութիւնը։

Ընկերական բարեւներով՝

[*Արեւմտեան բիւրոյի կնիք*]

1.- Մխիթար, այլուր Չէզոք, գործածուած է իբրեւ ծածկանուն Յովհ. Շահնազարի (1854-1942):

2.- Մինչեւ հոս գրեթէ նոյնութեամբ կրկնութիւն է Յ. Շահնազարին ուղղուած Յունուար 22-ի գրութեան բովանդակութեան:

3.- Վերակազմեալ հնչակեաններու կողմէ հրատարակուող թերթ:

43

Մատեան No 85, *էջ* 276

3 *ապրիլ* 1900

Պրն Մխիթարին(1), *Փարիզ*.

Յարգոյ պարո՛ն,

Մարտի 28-*ից գրած մեր նամակում մենք արդէն նկատել էինք, որ՝ քաջ տեղեակ լինելով մեր տրամադրութեան, դուք չպէտք է այժմեանից բարձրացնէիք դատի հարցը*(2), *որի շնորհիւ այժմ ստեղծուել է մեզ համար բաւականին անյարմար դրութիւն։ Եթէ Փարիզում, նոր հանգամանքներ պատահելով, դուք դատի հարցը անյետաձգելի գտաք, նախօրօք գոնէ երկու խօսքով պէտք է իմաց տայիք մեզ այդ մասին։ Այն ժամանակ դուցէ մենք ցոյց տայինք Ձեզ աւելի յարմար ելք։ Այն ինչ այժմ, մի կողմից՝ մենք անկարող ենք մեր ընկերների առաջ պաշտպանել մի բան, որին հակառակ էինք ինքներս, եւ միւս կողմից՝ դուք հրապարակաւ մեզ դէմ առ դէմ էք կանգնեցրել կողմնակի անձնաւորութիւնների հետ, չնայելով, որ միութեան խնդիրը*(3) *հրապարակից դուրս է եւ դուք «միշտ մութին մէջ» էք կամենում մնալ։*

Միեւնոյն նամակում մենք յայտնել ենք նաեւ, որ պպ. Յակոբեանի եւ Իսկէնտէրի նամակը այնուամենայնիւ կը տպագրենք, կցելով նրան մեր նկատողութիւնները(4)։ *Այժմ, այդ նկատողութիւնների ձեւը որոշելու համար, մենք խնդրում ենք գոնէ յայտնել մեզ, թէ արդեօ՞ք Ձեր կազմած նամակը ստորագրել են պպ. Յակոբեան եւ Իսկէնտէր գիտէին որ Ձեր ու մեր մէջ միութեան խնդրի մասին խօսակցութիւններ կան եւ որ այդ նամակը անմիջական կապ ունի խնդրի հետ, թէ միայն մեր Յաւելուածն էք դուք բաւականաչափ առիթ համարել դատի գործին հէնց այժմեանից ընթացք տալու համար։*

Ընդունեցէք մեր յարգանաց հաւաստիքը։

(*կնիք*)

1.- Մխիթար – ծածկանուն Յովհաննէս Շահնազարի:

2.- Խօսքը Արփիար Արփիարեանի դէմ բացուած դատին կը վերաբերի:

3.- Խօսքը Վերակազմեալ հնչակեան եւ Դաշնակցական կուսակցութեանց միջեւ միութիւն կամ համերաշխութիւն հաստատելուն կը վերաբերի:

4.- Արդարեւ յիշեալ նամակը, խմբագրութեան մանրամասն նկատողութիւններով միասին, լոյս տեսած է «Դրօշակ»ի 1900 թ. մարտ ամսուան Յաւելուածով:

44

Մատեան No 85, *էջ* 320

8 *մայիսի* 1900

Ֆիլիպպէի ընկերոջ(1)

Սիրելի!

Քո նամակից իմացանք, որ պ. Gaspar Nemtzé-*ն*(2) *կարեւոր տեղեկութիւններ ունի Արփիարեանի եւ Նազըմի*(3) *յարաբերութիւնների մասին։ Այդ առթիւ խնդրում ենք դիմել պ.* Gaspar Nemtzé-*ին եւ առաջարկել, եթէ կամենում է նա աջակցել մի ճշմարտութեան պարզելուն. երկուսից մէկը. կամ իր ունեցած տեղեկութիւնները գրաւոր կերպով ինքը յայտնի քեզ, կամ թէ թոյլ տայ քեզ արձանագրել նրա իմացածը եւ միայն իր ստորագրութեամբ վաւերացնի այն, ինչ դու գրի կ՝անցկացնես*(4)։

Ջերմ բարեւներով

1.- «Ֆիլիպպէի ընկերը» շատ հաւանաբար Ռոստոմն է, որ այդ շրջանին հաստատուած էր Պուլկարիոյ Ֆիլիպպէ քաղաքը (Այժմ Փլովտիւ):

2.- Գասպար Նեմցէ – անցեալին Պոլիս պետական ծառայութեան մէջ եղող անձնաւորութիւն:

3.- Նազըմ փաշա – Թուրքիոյ ոստիկանութեան նախկին տեսուչ:

4.- Ռոստոմին ուղղուած Քրիստափորի այս գրութիւնը հետեւանք է իր՝ Ռոստոմի այն առաջարկին, որ Դաշնակցութեան կողմէ պաշտօնապէս դիմուի Գասպար Նեմցէին խնդրելով որ գրաւոր յայտնէ իր ունեցած տեղեկութիւնները Արփիարեանի եւ Նազըմ փաշայի յարաբերութեանց մասին (Տես Ռոստոմ, Նամականի, 1999 թ., էջ 212): 1/14 Յունիս 1900-ի նամակով, Ռոստոմ կ՝իմացնէ արդէն, «Նեմցէ Գասպարին յայտնեցի. նա խոստացաւ գրել եւ յանձնել» (նոյն, էջ 215):

45

Մատեան No 85, *էջ* 490

25 *մայիս* 1900, *Ժընեւ*

Նովրուզին, բժիշկ

Յարգելի ընկե՛ր,

Ստացանք մայիսի մէկից Ձեր գրած նամակը։ Հարցնում էք Ձեր բարեկամ N-*ի*(1) *Բոլղարիայից ստացած նամակի մասին եւ նրա մի քանի կէտերի բացատրութիւններ էք խնդրում։ Ձենք ծածկում, որ այդ կէտերը մեզ համար հասկանալի են, բայց ներկայ դէպքում մենք անյարմար ենք գտնում երկու բարեկամների մասնաւոր յարաբերութիւնների մէջ մտնել, որովհետեւ այնպէս է, որ նամակը վերաբերում է մի հարցի, ուր մենք անմիջապէս շահագրգռուած ենք։ Այն, ինչ կարող էր թոյլ տալ իրեն ասելու իր անձնական բարեկամ պ.* N-*ին իր ընկերը**, *մենք չենք կարող կրկնել՝ թէկուզ միայն իբր թարգմանիչներ։*

Այս բոլորը ասում ենք Ձեզ, որովհետեւ Ձեր նամակը մեզ հասաւ այն ժամանակ, երբ մեր ընկերը արդէն Ռուսաստան էր անցել են մենք, ի նկատի ունենալով մի կողմից, որ նամակի բովանդակութիւնը առանձին կարեւորութիւն չունի եւ միւս կողմից, որ Ռուսաստանից կրկնուած նամակը — ըստ տեղական հանգամանքների — կարող է էլի մութ ոճով գրուել,— չուղարկեցինք իրեն Ձեր նամակը։ Սակայն եթէ կամենաք, մենք ունենք նրա հասցէն եւ կարող ենք ուղարկել Ձեր նամակի այն մասը, որը նրան է վերաբերում. իմաց տուէք, եւ մենք կ՚ուղարկենք։

Լեւոն պէյի մասին ոչ մի որոշ քայլ չէ ձեռնարկուած. պատճառը — չենք հաւատում, որ ապարդիւն չի լինի թէկուզ նոյնիսկ ապագայի վերաբերմամբ։ Սակայն տեսնենք. գուցէ, կրկին դառնանք այդ հարցին։

Ձերմ բարեւներով
Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] ԲԻԻՐՕ

*) *Խօսքը Նիթրայի (Շահրիկի) վրայ է, որը նամակ է գրել Շահնազարին միութեան հարցի առիթով։*

46

Մատեան No 85, *էջ* 494-5

31 *մայիսի* 1900

Կարիճին(1), *Ֆրայբուրգ*

Սիրելի՛,

Մայիսի 18-*ից գրած նամակդ եւ* 29-*ից բաց-գիրդ ստացուած են։ Լիազօր կոմիտէի ժողովը կայացաւ այստեղ, եւ ի հարկէ քո չգալու մասին նախազգուշացրել էինք։ Ընդունուած վճիռների մասին երեւի իրենցից կ՚իմանաս։ Մեզ համար աւելի հետաքրքիր կէտերից կը յիշենք այստեղ հետեւեալները* 1) P[ro] A[rmenia]-*ին որոշեցին նպաստ* 1000 fr., 2) *յեղափոխական հրատարակութիւնների համար* — 500 *եւ* 3) *ուսումնասիրութեան նպատակով Երկիր մտնողներին* — 500։ *Ընդհանուր առմամբ քիչ է, բայց ի՞նչ արած, երբ աւելին անյարմար համարեցին տալ։*

Բաղդադից քո ստացած տեղեկութիւնը շատ ուրախալի է։ Դժբախտաբար՝ խսկոյն որոշ հասցէներ անկարող ենք տալ քեզ։ Սղերդ բնաւ կապեր չունինք, Խարբերդում ունինք կոմիտէ, որի կողմից մեզ գրում է Ասլան(2) *անունով մի ընկեր (դա այն մարդն է, որի մասին ասում են, թէ Պոլսոյ «Հայրենիքի» ամենալաւ գաւառական թղթակիցն է եղել) եւ յետոյ՝ Տիգրանակերտից գալիս են երբեմն թղթակցութիւններ, բայց դրանք, ինչպէս եւ Խարբերդի (Աւար-Աւերի) նամակներ* (3), *միշտ ստացւում են Եգիպտոսի միջոցով։ Ժամանակ է հարկաւոր ուրեմն, որ մենք դիմենք Գալֆայեանին*(4) *(որին է այժմ թողել Սեպուհը*(5) *բոլոր ներքին յարաբերութիւնները) եւ ստանանք նրանից ինչ կարելի է։ Գալով քրդերէն հրատարակութիւններին՝ այսուհետ ուղարկում ենք քեզ* 10 *օրինակ «Քիւրդիստանի» վերջին համարից (փետրվար) եւ* 10 *հատ էլ «Քիւրդիստանի» խմբագիր Բէտէր-խանի որդի Աբդուրահման-բէյի հայերին ուղղած վերջին կոչից։ Թէեւ այս կոչից* 35 *օրինակ արդէն ուղարկւած է Եգիպտոս՝ Տիգրանակերտի համար, բայց եւ այնպէս, մեզ թւում է, «նոր ընկերոջ» համար դա այնքան նպատակայարմար հրատարակութիւն է, որ շատ լաւ կ՚անես նրան էլ առանձին ուղարկես։*

Յայտնիր Բաղդադի թղթակցիդ մեր բոլոր գոհունակութիւնը այդ «նոր ընկերոջ» վերաբերմամբ եւ, ապագայում յարաբերութիւնները արագացնելու համար՝ խնդրիր, որ կապեն դրան նաեւ քեզ հետ, յանձնարարելով, որ ուր ընկնի, հասցէ տայ մեզ, եթէ կարելի է։ Հարցրու նոյնպէս, որքան յարմարութիւն ունի Բաղէշի եւ Մուշի հետ կապւելու։ Չէ՞ որ դրանք մի քանի անգամ աւելի մօտ են Սղերդին՝ քան նոյնիսկ Խարբերդ։ Չէ՞ կարող արդեօք

մի ընկերոջ գտնել Բաղէշում եւ ժամանակի ընթացքում կապուել Մուշի եւ Վանի հետ։ Յամենայն դէպս մենք կը գրենք Վան, որ Բաղէշի մի հասցէ ուղարկեն մեզ։

Առանձնապէս շեշտիր թղթակցութիւնների պահանջի վրայ։ Թող գրի ամէն կարգի երեւոյթների մասին՝ ի նկատի առնելով, որ բոլոր հաղորդած տեղեկութիւններից պիտի օգտուենք այս կամ այն կերպով։ Նախազգուշացրու, որ ամենեւին չհոգայ իր գրելիքների գրական ճեւի կամ մեծուփոքրութեան մասին. օրի օրին ինչ կ'իմանայ, ինչ կը դիտի, թող իսկոյն գրչի առնի եւ ուղարկի,— ահա գլխաւոր պահանջը։

Տաքտիքի վերաբերեալ Ընդհ. ժողովի որոշումների այն մասը, որ կարող էր ուղեցոյց ծառայել «նոր ընկերոջ» իր գործունէութեան շրջանում,— թողնում ենք հաղորդել իրեն ապագայում, երբ այս յարաբերութիւնները մի փոքր ինչ կ'ամրանան եւ մեզ համար փոքրիշատէ կը պարզուի այն միջավայրը, ուր նա պիտի գործի։

Սեպուհից դեռ պատասխան չկայ Գահիրէ ուղարկուած գրքերի մասին։ — P.A.*-ի* NN 11, 12 *եւ* 13*-ը քեզ արդէն ուղարկուած են։ Բօրիսը*(6) *մի շատ տխուր հեռագիր ստացաւ մօր հիւանդութեան մասին եւ անմիջապէս մեկնեց Կովկաս։ Անցեալ օրը նամակ ունէինք նրանից Հիւսիսային Կովկասից գրած։ Այժմ ուրեմն վաղուց նա Տփխիս է։*

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Կարիճ – ծածկանուն Գուլումճեան Միսաքի:
2.- Ասլան – ծածկանունն էր հանրածանօթ գրող Ռուբէն Զարդարեանի (1874-1915), որ այդ ծածկանունով Խարբերդէն կը գրէր «Դրօշակ»ին:
3.- Աւար-Աւեր – կուսակցական ծածկանունն էր Խարբերդի:
4.- Յարութիւն Գալֆայեան, Կիլիկիոյ գործիչներէն, որ աւելի ուշ պիտի կանչուէր Ժընեւ՝ Արեւմտեան բիւրօ – «Դրօշակ»ի խմբագրութեան գործավարի պաշտօնին համար:
5.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):
6.- Բորիս – ծածկանուն Սմբատ Խաչատրեանի:

47

Մատեան No 81-3, *էջ* 35-36 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

15 *յուլիսի*, 900

Տփխիս
(*Գնացողի միջոցով գաղտնի թանաքով*)
Ա. Ներսիսեանին։ Տիգր. Յովս.)

Սիրելի Արշա՛կ(1),

Ոսկանապատից գրածդ ստացանք։ Ինչու չե՞ս շուտ շուտ եւ ըստ կարելոյն մանրամասնօրէն գրում։ Այդտեղից այստեղ գրելը առանձին անյարմարութիւններ չունի։ Նիսի Օրիորդի հասցէին առայժմ ոչինչ չուղարկես։ Նա մեկնել է այնտեղից Փարիզ, իսկ Փարիզի հասցէն ես չգիտեմ։— Քեզնից ուզած գրքերը շտապիր օր առաջ ուղարկել։— Ստացանք փոխադրած 3840 fr. 40 *սանտիմից միայն* 3477 *ֆր.* 40 *ս.*, *որովհետեւ օր*[*խորդ*] *Զ-եանը, որի հասցէին ղրկել էր՝ վերցրեց* 273 fr. *Օր. Ե. Ս-եանին եւ* 130 *Սէմերճեանին տալու համար։ Զիմացանք՝ յիշեալ գումարները ժողոված փողից էիր կարգադրել վճարելու, եթէ ինքդ էիր ուղարկել մասնաւոր պարտքերու համար։ Այս մասին մի բան գրիր, որպէսզի մենք իմանանք թէ՝ թերթի եւ մեր մուտքի մէջ որ գումարը պէտք է մտցնել, ընդհանո՞ւրը* (*քեզ վրայ պարտք գրելով բաժանուած գումարները*) *թէ միայն մեր ձեռքը հասածը։*

Ծերուկի գործը, խորհուրդ ենք տալիս վերջացնել. դրանից ոչ գործին, ոչ քեզ ոչ մի օգուտ չէ կարող գալ. դա բացարձակապէս ուզում է միայն իր դրութիւնը ապահովել։ Բայց այն էլ հերիք է դրան, որ մի գրքոյկի անունով կարողացաւ աշխարհս պտտել, մի ամբողջ տարի Եւրոպա ապրել, գիրքը ձրի տպագրել եւ ամբողջ արդիւնքը իրեն յատկացնել։ Այդպիսի պատուի չի արժանացել մեր գրողներից նոյնիսկ արժանաւորագոյնը։ Մեր կարծիքով, դու պէտք է շտապես լրացնել տպարանին այն գումարը, որ դու պարտ էիր ծերուկին եւ յետոյ առաջարկես իրեն գրքերի ծախւելուց լրացնի տպարանի մնացեալ ծախսը։ Նոյն ձեռնպահութիւնը պահպանիր, խորհուրդ ենք տալիս, վարդապետի վերաբերմամբ։ Թող մեր ձեռքին լինի ուժ, միջոցներ,— վարդապետներ եւ ծերուկից աւելի կարեւոր անձինք մեզ հետ կը լինեն ինքնըստինքեան։ Վերջապէս, եթէ դու դրանց առանձին կարեւորութիւն ես տալիս, պարզիր կարծիքներդ այդտեղ եւ ինչ անելու է ընդհանուր հաւանութեամբ թող անի։ Էդ որտեղ կը գնայ, եթէ ըէակցիայի ներկայ ճնշող շրջանում մեզնից ամէն մէկը բաժան-բաժան ծրագրեր էլ ունենանք եւ այդ ծրագրերով մտնենք հասարակութեան մէջ։— Առանձին ցանկութիւններ

չունենք։ Orient-*ի*(2) *խնդիրը յետաձգուեց սեպտեմբերին։ Այդպէս են կամենում Քիառը եւ մերոնք։ Ցուցահանդէսը*(3) *եւ ամառուայ տօթերը Փարիզում — գրել էին մեզ — բարեյաջող հանգամանքներ չեն նոր գործը հէնց սկզբից նկատուել տալու համար։ Բայց Ֆրանսիացիների տրամադրութիւնները դէպի մեզ օրէցօր լաւանում են։ Քիառը նոյնիսկ սկսել է հայերէն սովորել։ Ուրբէն Գոյէն նորերս Ժընեւ էր եկել, տեսնուեցինք հետը եւ առանձին ստորագրութեամբ մի ճաշ էլ տուինք իրենք։ «Ամօթահար արիք ինձ», ասաց Գոյէն մեզ հետ բաժանուելիս։ Ֆավօնը նոյնպէս հրաւիրուած էր այդ ճաշին։ Ընդհանրապէս լաւ անցաւ։*

Բարեւներով
ԷԼԼԷՆ

1.- Արշակ Տէր Թադէոսեան, անդամ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին:

2.- Սկզբնապէս Փիեռ Քիյարի պնդումով այդ անունով (Orient) թերթի հրատարակութիւնը ծառայեցնել Եւրոպայի մէջ հայկական հարցի քարոզչութեան: Ի վերջոյ պիտի ընդունուէր Pro-Armenia կոչել նոր թերթը, որուն գլխաւոր խմբագիրը պիտի դառնար Քիյարը:

3.- Խօսքը 1900 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդէսին մասին է:

48

Մատեան No 85, *էջ* 242-44

8 *յունիսի* 1900

Պ. Մխիթարին(1), *Մանչեսթեր*

Յարգոյ պարո՛ն,

Ապրիլի 15-*ից Ձեր նամակում հաղորդած տեղեկութիւնները ստանալով մենք — ինչպէս այդ մասին Ձեզ գրել էինք — որոշեցինք մեր նկատողութիւնների ձեւը։ Այսուհետ մեզ մնում է հերքել Ձեր նամակում յայտնած կասկածները մեր ընկեր Վռամեանի բռնած դիրքի մասին Ամերիկայում։ Ձը նայելով մեր բոլոր ատելութեան դէպի այն «ասէկօսէ»ները, որոնց սիրահարները դժբախտաբար շատ կան աշխարհում, մենք սակայն՝ Ձեր դիւրազգացութիւնը ի նկատի ունենալով, անմիջապէս դիմեցինք Վռամեանին խնդրելով բացատրութիւն։ Ահա նրա պատասխանը այդ մասին։*

«*Կատարելապէս սուտ է թէ ես շրջաբերական մը ուղղած ըլլամ կոմիտէներուն այդ խնդրի մասին։ Յարդ ոչ մէկ խնդրի առթիւ ես շրջաբերական գրած եմ։ Կեդրոնական կոմիտէն միայն կարճ շրջաբերական մը հանեց (այն ալ շատ ուշ, մայիս* 18-*ին), ուր երկու կէտ շեշտուած էր.* 1.- *թէ Դաշնակցութիւնը, մինչեւ գոհացում չստանայ իրեն եղած նախատինքի համար, անհատական խնդիրներով չի կրնա՛ր զբաղիլ.* 2.- *Այդ գրգռումներուն նպատակն է միութեան խնդիրը ձգձգել եւ այլասերել»... Սակայն այդ լուրը չի զարմացներ ինձի. հոս սուտերու երկիրն է արդէն, մարտականներու*(2) *ջոջերն ալ բաւական անբարեխիղճ, եթէ ոչ հնարելու, բայց ամէն լսածին հաւատալու կամ լսածը խեղաթիւրելու»... «Միութեան մասին ո՛չ միայն աննպաստ խօսած չեմ, այլ ընդհակառակը չափէն աւելի նպաստաւոր. վկայ՝ իմ յօդուածներս եւ ընդհանրապէս իմ բոլոր խօսածներուն ընդհանուր ֆոնը։ Պարոններ կրնա՞ն մատնանիշ ընել թէ ուեւէ քաղաքի մէջ թոյլ տւած ըլլամ ինձի* dissonant(3) *բան մը ըսելու»...*

Կարծում ենք, որ Վռամեանի այս բացատրութիւնները կարող կը լինին փարատել Ձեր կասկածները։ Հակառակ դէպքում՝ Ձեր այն խօսքերի առթիւ թէ՝ «ի սրտէ կը մաղթեմ, որ սուտ լինի այս լուրը, որուն արդիւնքը պիտի ըլլայ ցոյց տալ թէ առերեսս միայն միութեան խօսք կ՚ընէք, իսկ ձեր սրտին խորը հակառակ էք միութեան»,— մենք բացարձակապէս յայտարարում ենք. մենք չենք ճանաչում աւելի զզուելի մի ընթացք, քան կարող է լինել «առերեսս խօսք ընելու» ընդունակ մարդկանց ընթացքը, չենք էլ ճանաչում աւելի լաւ քաղաքականութիւն քան «բաց թղթերով խաղալու» քաղաքականու-

թիւնը. ուստի եթէ մենք՝ ոչ թէ մեր «սրտի խորը», այլ դրանից էլ շատ թոյլ՝ հակառակ լինէինք միութեան, վաղուց արդէն յայտնած կը լինէինք Ձեզ՝ թէ մենք միութիւն չենք ուզում — ո՛չ աւել, ո՛չ պակաս։ Սակայն կարծում ենք, որ միութիւն ցանկանալ՝ դա չէ նշանակում ընդունել ամէն-մի պայման որ մեզ կ՚առաջարկւի։ Մենք շատ կը ցանկանայինք, որ համաձայնութիւն կայանայ, բայց երբեք մենք տրամադիր չենք եղել (ինչպէս դուք այդ լսեցիք անձամբ էլ) այնքան գրաււել խօսքերով, որ հրաժարուէինք մեր որեւէ հիմնական տեսակէտից գործի վրայ։ Ահա ինչու մենք — նոյնպէս բացարձակապէս — կ՚ասենք, ինչպէս մեր ընկերները, նոյնպէս եւ մենք ունինք զիջողութիւնների մի maximum, որից դէնը անցանող պահանջները մեզ միայն յետ մղել կը տան միութիւնից։

Դուք գրում էք, որ Վռամեանի յօդուածները եւս Ձեզ վրայ լաւ տպաւորութիւն չեն թողնում։ Դա արդէն ծայրայեղութիւն է։ Իր բոլոր յօդուածներում նա ոգեւորուած է միութեան գաղափարով եւ բացարձակ անարգաբութիւն է վերագրել նրան որեւէ manœuvre(4)։ Կրկին բերենք նրա խօսքերը յիշեալ նամակից.

«Համագումարի խնդիրը հրապարակ նետելու գլխաւոր շարժառիթն է. ընդհակառակը ցոյց տալ թէ «Դաշնակցութիւնը հակառակ չէ միութեան գաղափարին, որովհետեւ մեր հակառակորդները ամէն տեղ կը ջանան հաստատել թէ մենք ենք, որ չենք ուզած եւ արգելքներ յարուցած այդ քայլերուն առջեւ»։

Դուք գովում էք «Ձայն հայերնեաց» թերթը, որովհետեւ նա չպատասխանեց մեր Յաւելուածին։ Բայց հետեւում էք արդեօք եւ այն անվերջ insinuationներին(5), որոնք միաժամանակ տպագրւում են այդ թերթում մեր կազմակերպութեան եւ ընկերների հասցէին եւ որոնք, ըստ երեւոյթին, այնքան աւելի պատրաստականութեամբ են հիւրընկալւում, որքան աւելի հեռու են իրականութիւնից։

Դիմենք այժմ մեր գործերին։

«Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան»(6) Ձեր ուղղած նամակը վերջանում է հետեւեալ խօսքերով.— «Դուք որոշեցէք՝ չի խօսիլ եւ չհրատարակել ոչ մի բան առանձնաբար պատուոյ ատեանի մասին նախ քան յայտարարել ինձ Ձեր որոշումը միութեան միւս բոլոր պայմաններու մասին» — իսկ «Մարտի» մայիսի համարում կեդրոնական վարչութիւնը հրապարակօրէն արդէն մեզնից դատ է պահանջում։ Հետաքրքիր է իմանալ այդ յայտարարութիւնը դուք համարում էք հակառակ Ձեր գրութեան թէ՞ ոչ։ Ձեր բացատրութիւնը այդ կէտի վերաբերմամբ մեզ համար անհրաժեշտ է, որպէսզի մենք կարողանանք վերջապէս որոշել՝ թէ ի՞նչ խնդրի առաջ ենք մենք այժմ կանգնած — ատեանի խնդրի թէ՞ միութեան հարցի առաջ։ Խնդրում ենք այս բացատրութիւնը չուշացնել եւ որքան կարելի է շուտով մեզ պատասխանել։

Պատասխանատու մարմիններին մեր ցրուած շրջաբերականի առթիւ մենք ստացել ենք արդէն բոլորի կարծիքները բացի մէկից, որը, երեւի տեղական պատճառներով միայն, մինչեւ այժմ դեռ չէ պատասխանել։ Այժմ դրան ենք սպասում։

Ընդունեցէք մեր յարգանաց հաւաստիքը

(*կնիք*)

1.- Մխիթարը Յովհաննէս Շահնազարն է, անկուսակցական, ջերմ կողմնակից կուսակցութիւններու միջեւ միութեան իրականացումին:
2.- Մարտականներ – Լոնտոն հրատարակուող «Մարտ» թերթի անունով այդպէս կը կոչէին Վերակազմեալ հնչակեանները, որոնց կեդր. վարչութեան մէկ անդամն էր Արփիար Արփիարեան – գլխաւոր խոչընդոտներէն մէկը միութեան իրականացման:
3.- Ֆրանսերէն՝ ոչ-ներդաշնակ, անախորժ իմաստով:
4.- Ֆրանսերէն՝ խորամանկ հնարքի իմաստով:
5.- Ֆրանսերէն՝ չարամիտ ակնարկութիւն իմաստով:
6.- Պէտք է հասկնալ Վերակազմեալ հնչակեան:

49

Մատեան No 85, *էջ* 373-4

1 *օգոստոս* 1900

Փարիզի ընկերներին

Սիրելի՛ք,

Ստացանք Միքայէլի(1) *վերջին նամակը։* Effort-*ի*(2) *համար գրածը տւինք Բաղիեվին եւ նա ասաց, որ թերթում արդէն շատ քիչ ազատ տեղ ունենալու պատճառով՝ կը տպի մի մասը։*

Առաջւայ ձեր գրածներից երեւում էր, որ համագումարի առիթով (միութիւն առաջարկած համագումարի) մի տեսակցութիւն պէտք է ունենայիք Զերազի եւ Բասմաջեանի հետ(3)*։ Մի փոքր յետոյ գրել էինք, որ Մխիթարի*(4) *հետ եւս տեսակցութիւն է նշանակւած։ Այդ տեսակցութիւններից եւ ոչ մէկի մասին մեզ ոչինչ չգրեցիք։ Մխիթարը այստեղից մեկնել էր Վենետիկ եւ այնտեղից մի նամակով դիմել էլ մեզ խնդրելով, որ մեզնից մէկը գնայ իր հետ տեսնւելու։ Մենք բացասական կերպով պատասխանեցինք՝ շեշտելով, որ երաշխաւորութիւն չունինք թէ տեսակցութեան արդիւնքը կը գերակշռէ դրա համար պահանջած ժամանակը եւ ծախսը։ Այնուհետեւ դրանից ոչ մի տեղեկութիւն չունինք։*

Մամուլի կոնգրէսը այդտեղ բացւած է։ Մի բան արի՞ք արդեօք այդ կոնգրէսում մեր հարցի վերաբերմամբ առաջարկութիւն անելու համար թէ ոչ։ Այս մասին առաջ էլ շատ էինք խօսել, Գարոյի(5) *հետ էլ այդտեղ գալիս շատ ենք խօսել.— Հետեւա՞նքը։ Երկուսից մէկը պէտք է էր յաջողեցնել, կամ Ֆրանսիական մամուլի ներկայացուցիչները՝ իրենք, կամ նրանց խորհրդով եւ ցուցմունքներով՝ դուք, իբրեւ հայ գրողներ, հայ խմբագրութիւնների ներկայացուցիչներ, պէտք է մուտ գործէիք կոնգրէսը եւ առաջարկէիք համաշխարհային մամուլին, իբր եօթերորդ մի պետութիւն*(6)*, իր ձեռքը վերցրնի հայկական դատը, որ մոռացւում է միւս վեց պետութիւններից։ Եթէ ոչինչ չէ արւել, շատ ցաւալի պէտք է լինի... Գոյէն*(7) *այստեղ ասում էր, որ սեպտեմբերին պէտք է լինի մամուլի միջ*[*ազգային*] *կոնգրէսը։ Գոյէն է սխալւել թէ նա էլ ուրիշ բան է։*

Առաջիկայ համարի համար սպասում ենք օրէ օր Ղարիբի եւ Միքայէլի լումաներին(8)*։*

Ներփակում ենք այդ տեղից բժիշկի(9) *մեզ ուղարկած նամակը. այն ի՞նչ տեղական միութեան մասին է խօսքը։ Մենք գրում ենք իրեն, որ ազատ է ամէն տեսակ փորձերը անել, ինչպէս թելադրում է մեզ եւ մեր ծրագիրը։ Բայց կան արդեօ՞ք արժանահաւատ տարրեր։ Ի՞նչ է ձեր կարծիքը։ Նամակը կարդալով, ի հարկէ չէք մոռանայ վերադարձնել։*

Պատւոյ ատեանի մասին հետեւեալ համարում ուզում ենք դնել Պատասխանատուների [*մարմինների*] *կարծիքը — մերժողական։ Եթէ ուշացաւ՝ պատճառը կը լինի Մխիթարը, որին դիմում ենք այսօր խնդրելու թոյլ տալ մեզ մի կերպ յիշատակել մեր պատասխանում նրա յարուցած միութեան հարցը։*

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Քիառը միթէ՞ ժամանակին ոչինչ չպատասխանեց Ժակլարի(10) *այն նամակին, որը ուղղած էր Թայինեանին*(11)*։ Յատկապէս Ժակլարի ցուցմունքների մասին մենք կարծիք չը յայտնեցինք ձեզ՝ վճռելով սպասել Քիառի պատասխանին։ Այժմ այդ մասին աւելորդ է խօսել, ի նկատի ունենալով, որ սեպտեմբերը ահա մօտենում է, եւ այստեղից մեզնից մի երկու մարդ ձեզ մօտ կը գան, կը տեսնուեն, կը խօսեն եւ համաձայնութեան կէտերը միասին կ՚որոշեն։ Հարցրել էիք նաեւ պատասխանատուների*(12) *ապագայ ժողովի մասին։ Դա էլ թողնենք անձնական տեսակցութեան ժամանակ պարզելու։ — Նորերս մի տեսակցութիւն ունեցանք Մախմուդ-Դամադ փաշայի հետ։ Գուցէ մի նամակ տայ «Դրօշակ»ին, ուրկէ պէտք է պարզէ,* 1) *թէ ինչպէս կատարուեցին հայկական կոտորածները եւ* 2) *թէ ինչպէս է ինքը նայում թիւրքերի ապագային եւ հայկական հարցի վրայ* (13)*։ Ընդհանրապէս մեզ վրայ*

խելօք մարդու տպաւորութիւն թողեց եւ, եթէ հաւատանք իր անկեղծութեանը, բաւականին յուսահատ հայեացք ունի Թիւրքիայի վրայ։ Միութիւն բոլոր դժգոհ տարրերի — ահա նրա կոնվան[?], *որի վրայ շրջում էին նրա առաջարկութիւնները, բայց այս կէտում Ահմէդ-Ռիզայից*(14) *աւելի վճռողական գործողութիւնների կողմնակից է։ Երեւի կրկին կը տեսնենք հետը։ Կողմնակի կերպով լսեցինք, որ Ռիզայի հետ գժտութիւններ է ունեցել։ Սկսել է անգլիական լեզուով հրատարակել մի շաբաթաթերթ։*

ՆՈՅՆԸ

1.- Միք. Վարանդեանի:

2.- Effort – Փարիզի մակեդոնացի յեղափոխականներու կողմէ հրատարակուող թերթ:

3.- Մինաս Չերազ եւ Կարապետ Պասմաճեան: Վերջինս՝ ծանօթ պատմաբան:

4.- Մխիթար – ծածկանուն Յովհաննէս Շահնազարի:

5.- Արմէն Գարօ (Փաստրմաճեան):

6.- Մամուլի մասին Քրիստափոր կը խօսի իբրեւ եօթներորդ պետութիւն, նկատի ունենալով որ այդ շրջանի Եւրոպայի վեց պետութիւնները կը տնօրինէին աշխարհի ճակատագիրը:

7.- Urbain Gohier:

8.- Ղարիբ – ծածկանուն Աւետիս Ահարոնեանի, Միքայէլը՝ Վարանդեանն է, որոնց ուղղուած է, խորքին մէջ, Քրիստափորի այս նամակը: Երկուքը Փարիզ կը գտնուէին Pro-Armenia հրատարակութեան համար հարկ եղած նախապատրաստական աշխատանքները տեսնելու համար: «Լումաները», որոնց մասին կը խօսուի, լոյս տեսնելիք թերթին համար գումարներ ապահովելու խնդրին կը վերաբերի:

9.- Բժիշկ գործածուած է, շատ հաւանաբար, Յովհաննէս (Ժան) Լոռու-Մելիքեանի համար:

10.- Պիեռ Քիյար եւ Ժակլար. նկատի առնուած էին Pro-Armenia-ի խմբագրական կազմի համար:

11.- Թայիեան – ծածկանուն բժ. Յովհ. Լոռու-Մելիքեանի:

12.- Պատասխանատու մարմիններ կը կոչուէին, բացի Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոներէն այն կեդր. կոմիտէները, որոնց վստահուած էր, ըստ Հ.Յ.Դ. երկրորդ Ընդհ. ժողովի (1898) որոշման, «խոշոր ձեռնարկի մը իրագործման պատասխանատուութիւնը՝ Երկրի որոշ շրջանի մէջ». այդպիսիք էին Սասնոյ, Կիլիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Վասպուրականի Կ. կոմիտէները:

13.- Մահմուտ Տամատ փաշա – Սուլթան Համիտի բռնակալ վարչակարգէն դժգոհ եւ ընտանեօք Փարիզ ապաստանած թուրք բարձրաստիճան պաշտօնատար: Քրիստափորի ակնարկած նամակը յանձնուած է արդարեւ «Դրօշակ»ի խմբագրութեան եւ տպուած թերթի 1890 թ. No 7-ի մէջ, էջ 101-2:

14.- Ահմէտ Ռիզա, ուրիշ թուրք ընդդիմադիր անձնաւորութիւն մը, աւելի պահպանողական, որ տարիներէ ի վեր տարագիր էր Փարիզ եւ կը խմբագրէր «Մեշվերէթ» անունով թերթը:

50

Փաստ. 1264-56

Այս նամակը տպուած է Հ. Տասնապետեանի խմբագրած «Քրիստափոր Միքայէլեանի նամակները» հատորին մէջ (էջ 174), սակայն խիստ կրճատուած ձեւով: Երեքուկէս էջերէ բաղկացած ձեռագրին միայն առաջին եւ վերջին էջերը տպուած են, յայտնաբար շարուածքի ժամանակ ուշադրութենէ վրիպած մոռացութեան մը հետեւանքով: Արդէն Հ. Տ. անդրադառնալով բացին՝ ծանօթագրութեան մէջ կը գրէ. «պարբերութիւն մը – թերեւս էջ մը – յայտնապէս կը պակսի»: Պակսողը արդարեւ 2 էջ է:

Կը հրատարակենք Քրիստափորի ձեռագրին ամբողջութիւնը:

11 *սեպտեմբ.* 1900, *ՓարիզՍիրելի՛ք.*

Չէի գրում մինչեւ այժմ, որովհետեւ ոչինչ որոշ բան չէր երեւում մէջտեղ։ Հարցը ներկայումս հետեւեալ դրութեան մէջ է։

Երկու բաւականին խոշոր անձնաւորութիւններ վերջ ի վերջոյ յանձն առան ձեռնարկել այստեղ ժողովարարութեան(1)*։ Այդ մարդկանց անունները չեմ տալիս նամակումս՝ ի նկատի ունենալով իմ նրանց տւած խոստումը որ ոչ մի թղթում չպիտի պատահեն նրանց անունները եւ որ առհասարակ մենք ամէն կերպ պէտք է աշխատենք անյայտ պահել նրանց։ Երկուսն էլ ի հարկէ մեր կողմերից են եւ վճռել են հաւաքել* 50.000 *ֆր. «պակաս չարժէ եւ անպտուղ էլ կը լինի» — ասում եւ պնդում է դրանցից մէկը։ Կազմել են արդէն մի փոքրիկ ցուցակ այստեղ եղող հայերի եւ երեւի այսօրւանից կը սկսեն նրանք իրենց այցելութիւնները։ Մարդիկ (Կովկասից եկած) այժմ շատ կան այստեղ եւ մերոնք դիմելու են դրանցից ամենախոշորներին՝ մի կողմ թողնելով նոյնիսկ միջին հարստութեան տէր մարդկանց։ Ինչ կը լինի հետեւանքը՝ չը գիտեմ, չեմ կարող նախատեսել, որովհետեւ ամենախոշորների (ցուցակագրուածների) տրամադրութիւնը յայտնի չէ առայժմ։ Եթէ անյաջողութեան հանդիպեցին, այն ժամանակ դուցէ էլի մենք մէջտեղ ընկնենք՝ միջիններից մի բան հաւաքելու համար։ Տեսնենք՝ ինչ կը բերի այս շաբաթ։ Մինչեւ այժմ լոկ տեսակցութիւններ ենք ունեցել եւ դրանց չնորհիւ յաջողել ենք մէջ ձգել վերոյիշեալ երկու անձնաւորութիւններին։ Յամենայն դէպս՝ ի նկատի ունենալով՝ որ ձեռնարկը ընդհանուր առմամբ համակրութիւն է գտնում մեր պատահած շրջաններում, Քիյառին*(2) *գրեցինք, որ թերթի գործը վատ*

չէ գնում եւ որ նա աշխատի պատրաստութիւններ սկսելու համար։ Պատասխանել է, որ ամսիս 16*-ին այստեղ կը լինի եւ մեզ հետ տեսնուելով՝ կը սկսի իր անելիքը։*

Ժակլարին տւինք Վարդանեան անունը. Միքայէլը(3) *կը գնայ։ Իր կողմից էլ Ժակլարը խոստացել է մեր հարցը կամ ծրագրի մէջ մտցնել իբր առանձին հարց կամ որեւէ կերպով՝ Միքայէլից անկախ՝ ինքը եւս զարթեցնել սոցիալիստական մամուլի կոնգրէսում։ Միջազգային սոցիալիստական կազմակերպութիւնների կոնգրէսումն էլ մեր հարցը իբր առանձին հարց ծրագրի մէջ է դրուած։ Ժակլարին տւինք նաեւ Ռադիեւի անունը —* Effort*-ի կողմից։ Այդ մասին ես իրեն գրել եմ առաջարկելով այնտեղ գնալ ամսիս վերջին։ Պատահած ժամանակ դուք էլ ասէք նրան։ Եթէ համաձայն չէ, պէտք է վաղօրօք անունը յետ վերցնենք։*

Երէկ հեռագրեցի Գարոյի(4) *վերաբերմամբ, որ այստեղ հարկաւոր չէ։ Այդտեղից եկող օր. Սա…եանը*(5) *ինձ ասաց, որ շուտով այդ մասին մի բան յայտնեմ, ես էլ հեռագրեցի։*

Յուցահանդէս գնացել եմ երկու անգամ եւ դեռ ոչինչ չեմ տեսել։

Ջերմ Բարեւներով՝
ՔՐԻՍՏԱՓՈՐ

Ինչպէ՞ս է գնում թերթը։

Ստիպւած եմ Վանիայի(6) *բնակարանը թողնել եւ ինձ համար առանձինը վարձել։ Փող ուղարկէք Վանիային.*

Mr. J. Loris-Melikoff,
6, Place de la Sorbonne, 6.

Բնակարանս փոխելուն պէս՝ կը գրեմ նոր հասցէս։

1.- Ժողովավարութիւնը՝ գործածուած է հանգանակութեան, դրամահաւաքի իմաստով։ Արդարեւ, խօսքը կը վերաբերի մօտ ատենէն լոյս տեսնելիք Պրօ-Արմենիա-ի համար Քրիստափոր ձեռնարկած էր դրամահաւաքին։

2.- Քիյաոը՝ նոր լոյս տեսնող Pro-Armenia-ի ֆրանսացի խմբագրապետն է։

3.- Միքայէլը՝ Վարանդեանն է։

4.- Գարոն՝ Արմէն Գարոն է, բուն անունով Գարեգին Փաստրմաճեան։

5.- Անընթեռնելի ազգանուն, որ կրնայ կարդացուիլ Սանամեան։

6.- Վանիան՝ Յովհաննէս Լորիս Մելիքեանն է, Արեւմտեան բիւրոյի անդամ եւ Եւրոպայի մէջ Հայ Դատի աշխատանքներու պատասխանատուն։

51

Մատեան No 81-3, *էջ* 38-40 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

30 *Հոկտ.* 900

Ամիրեան Արսէն — «Կռունկ» խմբի ներկայացուցիչ, Կիեվ

Սիրելի՛,

Թէ երկու բաց նամակներդ եւ թէ վերջին փակ նամակդ ստացել ենք։

1. *Մաթէօյի հետ ինչ ուզում էք՝ կարող էք անել, թէեւ կրճատուած է, եւ ձեզ համար աւելի յարմար կը լինէր վերցնել բնագիրը։*

2. *Դիմումը չենք կարող ձեզ հասցնել, որովհետեւ արտօնութիւն չունենք դեռ. նոյեմբերին մենք տեսնուելու ենք ում հետ հարկաւոր է եւ այն ժամանակ թոյլտուութիւն ստանալով՝ կ'անենք այդպիսի մի բան։ Թէեւ, մեր կարծիքով, դուք չափազանցնում էք դրա կարեւորութիւնը, բայց եւ այնպէս դա ձեր գործն է, եւ մեր վերաբերմամբ հաւատացած կարող էք լինել, որ բացի ձեր գործը դիւրացնելու պատրաստականութիւնից՝ ուրիշ ոչ մի նկատումներ չունենք։*

3. *Ձեր պահանջը՝ թէ գործի հետ հասարակութիւնը ծանօթ չէ — այնքան ընդհանուր կերպով է ձեւակերպւած, որ դժւար է դրան որոշ պատասխան տալ։ Ի՞նչ են ուզում մարդիկ իմանալ։ Եթէ ընդհանուր տեղեկութիւններ, ընդհանուր գաղափար — դրա համար բաւական է անցեալ* 10 *տարւայ գործունէութիւնը, որ հրապարակի վրայ է եւ որ բնորոշում է մեր ուղղութիւնը։ Եթէ մանրամասնութիւններ յատկապէս վաղւայ մեր հոգսերի համար,— այդ, արդէն մի խնդիր է, որ ձեր ուզած չափերով հասարակութեան սեփականութիւնը դարձնել չենք կարող, եթէ ոչ շատ հեշտ կը լինէր, վերցնելով վերջին ընդհանուր ժողովի վճիռներից մեր տաքտիքի մասին, տպագրել դրանց եւ ցրւել՝ առանց մտածելու թէ ում ձեռք կ'ընկնեն դրանք։ Եթէ, վերջապէս, շրջիկ ընկերներով վստահելի շրջաններում պրօպագանդի գործը ուժեղացնելու վրայ էք խօսում, պէտք է ասել, որ այդպիսի բաներ որոշ չափով միշտ արւել է եւ անւում է։ Աւելի՛ն անելու համար՝ ներկայ հանգամանքներում, կը պահանջէր մեզնից խլել թէ գործողներ եւ թէ նիւթական միջոցներ երկրից ու նուիրել դրանց Ռուսաստանի զանազան քաղաքները պտտելու եւ երկաթուղիներ ու հիւրանոցները հարստացնելու գործին՝ առանց հաւատացած լինելու, թէ այդ ծախսերը կրկնապատիկ-քառապատիկը կը բերեն։ Աւելի լաւ չէր լինել արդեօ՞ք, որ մեր ընկերները առայժմ մնային իրենց գործի վրայ, իսկ իւրաքանչիւր տեղ, իւրաքանչիւր քաղաք իր ազ-*

գաբնակութիւնից դուրս բերէր մի-երկու հոգի, որոնք իրենց տեղերումը անէին այն, ինչ ե՛ւ կարող են, ե՛ւ պարտաւոր են անելու։

Նամակի միւս դիտողութիւնները նկատողութեան կ՝առնուեն։

Գաղղիերէն լրագրի գործը արդէն կազմակերրպւած է. վարիչները — Ֆրանիացի ամենաականաւոր մարդիկն են։ Ծախսը մեծ է լինելու, ոչ պակաս 18,000 ֆր. տարեկան։ Սկսում ենք ամենաչնչին գումարով, յուսալով, որ այդ գործին համակրողները շուտով մեզ օգնութեան պիտի գան։ Կասկած չկայ, որ ձեր շուտափոյթ աջակցութեան վրայ եւս յոյս ունինք։

Մասնաւորապէս ձեզ եթէ որեւէ լրացուցիչ տեղեկութիւններ հարկաւոր են, ի հարկէ կը հարցնէք։

Ինչ վերաբերում է նուիրատուութիւնների մանրամասն հաշուետուութեան — դա մի մեղադրանք է, որ նոյնպէս չէ հասկացւում խօսքը. նուիրատուութիւնները տպագրէ՞ թէ ի՞նչ բանի վրայ մսխած լինելու մասին։ Եթէ տպագրելու մասին է, մենք ճշդութեամբ տպագրում ենք բոլորը ինչ ստանում ենք մենք կամ միւս մարմինները, եւ եթէ որեւէ նուիրատուութիւն լոյս չէ տեսնում թերթում — դա նշանակում է՝ կամ նուիրողը չէ ուզեցել որ տպագրւի կամ որեւէ տեղի նուիրատուութիւններ մեզ չեն ուղարկել։ Սակայն գործի տեսակէտից այս հանգամանքը ոչ մի նշանակութիւն չունի, որովհետեւ, ինպէս կարող էք գտնել Ընդհ. ժ[ողովի] վճիռներում, ամէն մի մարմին պահում է իր օրահաշիւը՝ վաւերացած մարմնի բոլոր անդամների ստորագրութեամբ։ Իսկ եթէ ձեր խօսքը վերաբերւում է ինչ պէտքերի վրայ մսխած լինելուն — դա անտեղի մի պահանջ է, որովհետեւ մանրամասն հաշիւ տալը միեւնոյն կը լինէր թէ յեղափոխական թէ յեղափոխական գաղտնիքները հրապարակ հանել։ Ընդհանուր, բայց ոչ մանրամասն հաշիւ (գործիքներ, զէնք, հրատարակութիւններ եւայլն) բոլոր մարմինների օրագրերից կազմում է ընդհանուր ժողովը, բայց ցրւում են դրանք կազմակերպութեան մէջ եւ ի հարկէ իւրաքանչիւր մարմնու գործն է, ում ուզում է ցոյց տայ կամ ոչ։

Բարեւներով
ԱՐԵՒՄ. ԲԻԻՐՕ

52

Փարիզէն Քրիստափորի կողմէ գրուած նամակ Աւետիք Իսահակեանին. բնագիրը կը գտնուի ԳԱԹ (Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Երեւան) Գարեգին Լեւոնեանի ֆոնդին մէջ No 2759: Արտասահման մեկնելէ առաջ, «ի թիւս մի շարք ինքնագրերի, Իսահակեանը պահ է տուել Գ. Լեւոնեանին» կը գրէ Ալիկ Իսահակեան – (Տես նոյնի՝ Աւետիք Իսահակեան, գիտական ուսումնասիրութիւն, Գիրք Առաջին 1875–1900, Երեւան 2000, էջ 583):

20 *սեպտ.* 900, *Փարիզ*

Սիրելի Աւետի՛ք,

Նամակդ եւ ոտանաւորները վաղուց եմ ստացել, բայց գլուխս խառն էր եւ չկարողացայ իսկոյն պատասխանել.

Ոտանաւորները շարելու բաներ են եւ երկուսն էլ լոյս կը տեսնեն առաջիկայ համարում(1)*։ Հրացանին ուղղուած երգի վերջին խօսքերը միայն՝ եթէ իբր ցանկութիւն յայտնէին, ինձ թւում է աւելի բնական եւ հետեւաբար աւելի արտայայտիչ կարող էին լինել, ոչ թէ «դու պիտի փորես ինձի գերեզման», այլ եթէ ասէիր՝ կուզենայի, որ դու փորես ինձ գերեզման եւն — ահա ինչ եմ ուզում ասել»։*

Մանթաշովին էլ, Արամեանին էլ այստեղ առաջարկութիւն եղաւ Համբարձում Մելիքեանի եւ պրոֆեսոր Ղամբարեանի միջոցով, բայց բան չդուրս եկաւ։ Աւետարանումը շատ լաւ է ասած. «աւելի շուտ ուղտը կանցնի քան...»։

Թերթի մասին ամէն կերպ աշխատում ենք(2)*։ Ինչ եւ լինի գլուխ կը բերենք. գուցէ նոյնիսկ մի ամսից յետոյ լոյս կը տեսնի առաջին համարը։ Ծախս, ինչպէս պարզւում է այժմ, պահանջւելու է աւելի քան ես ենթադրում էի, բայց էլ ճար չկայ. մի կողմից աշխատելով այդ ծախսերը շատ էլ չբարձրացնել եւ միւս կողմից աւելի ջանք թափելով դրամ ժողովելու վրայ — պէտք է գլուխ բերենք գործը։*

Այսօր այստեղ բացւում է սոցիալիստ ուսանողների կոնգրէսը, որ տեւելու է մինչ 23*-ը. 23-ից մինչ* 28*-ը տեղի կունենայ միջազգային սոցիալիստ կազմակերպութիւնների կոնգրէսը եւ յետոյ* 28—1 *սոցիալիստական մամուլի կոնգրէսը։*

Վերջինումս մենք կ՚ունենանք մեր ներկայացուցիչը (Վարդանեան անունով կերթայ Միքայէլը(3)*, իսկ առաջիններում ուզում ենք ծանօթ սոցիալիստների միջոցով մեր հարցը արծարծել։ Երեք հոգի խոստացել են այդ մասին։ Երէկ ես էլ մի կոնֆերանս կարդացի ցուցահանդէսում բացւած միջազգային դպրոցի ռուսաց բաժնում։ Ինձնից յետոյ խօսաց պրոֆ. Կովալեւսկին (յայտնի գիտնական) եւ հաւատ յայտնեց, որ հայերս չենք կորչի, որ մեր դա-*

տը լաւ վախճանի կը բերի։ Նրա այդ ճառը մենք գրի կանցկացնենք։

Մի քանի խնդիրներ, գլխաւորապէս թերթի վերաբերմամբ, ինձ կուշացնեն երեւի այստեղ մինչ ամսիս վերջը։

Համբոյրներով՝ քո ՔՐԻՍՏԱՓՈՐ

1.- Հարցը կը վերաբերի Աւետիք Իսահակեանի աշխատակցութեան «Դրօշակ»ին, որուն համարներուն մէջ սկսած էին լոյս տեսնել երիտասարդ բանաստեղծին «Հայդուկի երգերը», Հայ-գուսան ստորագրութեամբ:

2.- Ակնարկութիւնը Pro-Armenia թերթին մասին է, որուն առաջին թիւը արդարեւ լոյս տեսաւ նոյն տարուան Նոյեմբերին, իբրեւ կիսամեայ:

3.- Միքայէլը՝ Վարանդեան:

53

Մատեան No 81-3, *էջ* 40-41 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Բաթում

2 *Նոյեմբեր* [1900]

Սիրելի՛ք,

N 7-*ը յանձնուել է Կադէի «Արմէնիա»-ին*(1), *որ պիտի ճանապարհուէր հոկտեմբերի* 31-*ին առաւօտեան* 8 *ժամին։*

Մէտրի(2) *հետ խօսած է, որ երբեք* 20-*ից աւել չուզէ։ Նախընթացը բացարձակապէս անազնուութիւն է արել։ Մենք ամէն անգամ այստեղ խօսում ենք վճարի մասին եւ դուք մեր ցուցմունքների համաձայն էլ վարուեցէք։ Կը փորձենք այսուհետ հայերէն գրուած փոքրիկ տոմսեր եւս տալ բերողներին, ուր նշանակուած կը լինի այն վարձը, որի մասին համաձայնութիւն կը լինի կայացած։*

Տեսնենք, կը յաջողի՞։ Յամենայն դէպս դուք ի նկատի ունեցէք, որ մենք 20-25*ից* [*ֆրանկ*] *աւել չենք տալիս։*

Ինչու չէք ձեր նամակներում մեզ տեղեկութիւններ եւս գրում ձեր կողմերի մասին կամ հաղորդում երկրից եկող լուրեր։ Ծովափի(3) *եւ նրանց միջոցով ներսի հետ ամէն կերպ աշխատէք պահպանել մշտական յարաբերութիւն ու դրդել Ծովափին չուտ-չուտ մեզ թղթակցելու։*

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Պաքում – Մարսէյլ ծովային ճամբու վրայ գործող նաւային ընկերութեան «Արմէնիա» անունով նաւ:

2.- Խօսքը կը վերաբերի նաւու պատասխանատու պաշտօնեային:

3.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոնի:

54

Մատեան No 85, *էջ* 411-414

16 *նոյեմբեր* 1900

Կիլ[*իկիայի*] *Պատ*[*ասխանատու*] *մարմնին*

Սիրելի՛ք,

Ձեզ արդէն նամակ էինք գրել եւ դրամ ուղարկել (100 fr.), *որ ձեզնից ամսոյս* 08-20-*ին մարդ լինէր նշանակւած տեղը, մեր կողմից էլ միաժամանակ պատրաստւում էինք Էլլէնին*(1) *ճանապարհելու համար, երբ անցեալ օրը յանկարծ հեռագիր եկաւ Մեծից*(2) *այսպիսի բովանդակութեամբ.* "Ne pouvons pas. Ajournez si c'est possible"(3): *Եթէ մինակ* "ne pouvons pas"-*ը*(4) *լինէր, մենք գուցէ յետ չկենայինք մի անգամ արդէն կայացած որոշումից, բայց* ajournez-*ի խնդիրը պարզ նշան էր, որ նրանք դժւարութիւնների են հանդիպել ժամանակի վերաբերմամբ: Այդ հիման վրայ էլ մենք իսկոյն հեռագրեցինք ձեզ՝ «Մեծը չէ գալիս: Յետաձգւում է: Սպասիր նամակիս»: Երբ եւ ինչ հանգամանքներում հասաւ ձեզ մեր հեռագիրը՝ չգիտենք, բայց հեշտութեամբ երեւակայում ենք տխուր տպաւորութիւնը, որ պիտի գործէր: Մասնաւոր նամակում՝ Սեպուհին*(5) *գրած՝ Էլլէնը նոյնպէս հաղորդել էր, որ ինքը շուտով ճանապարհւելու է,— եւ երեւակայեցէք, մի ժամ միայն այդ նամակը փոստը ձգելուց՝ եկաւ Մեծի հեռագիրը: Այժմ որոշեցինք իսկոյն նամակ գրել Մեծին եւ առաջարկել՝ անմիջապէս նոր ժամանակ որոշեն ու մեզ հեռագրով իմաց տան: Տեղի մասին, համաձայնութիւն արդէն կայացել է, իսկ ժամանակը, մենք պահանջում ենք Մեծին, ոչ ուշ քան դեկտեմբերի* 20 (*նրանց տոմարով, ծննդեան տօներ*): *Ահա այս նամակից* (*Մեծին գրած նամակից*) *յետոյ մեր բռնելիք ընթացքը: Հեռագրով նրանց պատասխանը կ՚ստացւի յամենայն դէպս դեկտեմբերի սկզբին* (*նոր տոմար*): *Եթէ այդ հեռագրով նրանք որոշեն ժամանակ մեր ուզած սահմաններում — լաւ. եթէ ոչ՝ դեկտեմբերի երկրորդ կիսում* (*մեր տոմարով*) *մենք ժողովւում ենք* (*երեք մարմինների կողմից* (*դուք, Ծաղիկ ու մենք*(6)), *որոնք կազմում են «Արեւմտեան շրջանը»: Եթէ այս դէպքում մենք չկարողացանք էլ մի քանի խնդիրների մասին վերջնական որոշումներ կայացնել, կարող ենք գոնէ, երեք մարմինների պատասխանատուութեամբ, մեր շրջանի գործերը այսպէս կամ այնպէս կարգադրել ու մեզնից իւրաքանչիւրի դրութիւնը ամենապարզ կերպով որոշել: Կարող ենք նոյնիսկ այդպիսի մի տեսակցութիւնից յետոյ, եթէ այդքան նպատակայարմար համարուի, մեզնից մէկին ուղարկել Արեւելք՝ նրանց հետ եւս տեսնւելու ու որեւէ ժամանակաւոր համաձայնութեան*

գալու մինչ կը հրաւիրուի ընդհանուր ժողով։

Գալով Բօրիսի(7) մասնաւոր հարցին, մտնելով հանդերձ նրա դրութեանը[?], էլի լաւ ենք համարում սպասել ժողովին, չնայելով հարցի ձգձգման, ժողովը մի այնպիսի խիստ պահանջ է այժմ մեզ համար, որ այսպէս կամ այնպէս եթէ նա չկայանայ շուտով ցանկալի սահմաններում, անշուշտ կը կայացնենք մեր շրջանի համար։ Այսպիսի հանգամանքներում կարճ ժամանակի համար առանձին որոշումներ ընդունել Բօրիսի վերաբերմամբ չարժէ, որովհետեւ դա էլ իր անյարմարութիւնները ունի։ Այդ բոլորի փոխարէն աւելի նպատակայարմար է շտապեցնել ժողովը, ուր եւ կ՚որոշենք մեր անելիքները։ Շտապեցրէք ժողովը դուք էլ ձեր կողմից, դուք էլ գրեցէք Մեծին եւայլն, ու քիչ ժամանակից յետոյ դուրս եկած կը լինինք ներկայ դրութիւնից։

Դրամի հարցը ձեզ նեղում է։ Եգիպտոսը մի շրջան է, որ ուզում էր ընդհանուր ժողովի մէջ ձայն ունենալ. ինչո՞ւ չէք աշխատում գոնէ այդ շրջանի մուտքով տեղական ծախքերը ծածկել. չէ՞ որ ասում էք, որ պարապ էք, գործ չունէք. կազմակերպէք գոնէ Եգիպտոսը, որ տարիների ընթացքում ոչինչ չէ տուել մեզ, բայց որը ունի բաւականաչափ հայ ազգաբնակութիւն։ Եթէ այդ անկարելի մի բան է, եթէ Եգիպտոսի վրայ պէտք է խաչ դնել, այն ժամանակ, իբր պատասխանատու մարմին, դուք կարող էիք դիմել ուր եւ ուզէիք։ Երկրում եղած գործիչները անգամ դժուար րոպէներում դրսից փող ստանալու համար Ռուստաստան մարդիկ էին ուղարկում, զանազան վայրեր դիմումներ էին անում եւայլն։ Ձեզ համար միեւնոյնը անելն աւելի հեշտ կը լինէր։ Փորձեցէք ձեզնից մէկին ժողովավարութեան(8) ուղարկելու. ինչ վերաբերում է մեզ՝ մենք արել ենք ձեզ համար՝ ինչ կարողացել ենք։ Աւելին անելու համար՝ պէտք է այստեղ նստէին աւելի տաղանդաւոր եւ աւելի հեղինակաւոր մարդիկ քան մենք ենք։ Միանգամայն սուտ կամ սխալ է այն լուրը՝ իբր թէ մենք ձեր անուան ստացել ենք Բաքւից 1200 ռուբլի։ Այդպիսի բան չի եղել. եղածը այն է, որ Ռուսաստան մեր ղրկած մարդկանց մենք միշտ չեշտել ենք ձեր պահանջները. նոյնը արել ենք եւ գրագրութեան մէջ, իսկ ստացած պատասխաններս եղել է հասարակութեան կողմից՝ թէ այդ անել առ այժմ «պէտք է թողնել մեր խնամքներից ազատ»։ Ձեն համակրել այդ շրջանի գործին եւ չեն տուել։ Դրամ ի հարկէ պէտք է ունենայ կազմակերպութիւնը, բայց չգիտենք, որտեղից կը լինի դրամ, եթէ կազմակերպութեան <u>բոլոր մարմինները</u> <u>չը</u> հոգան այդ մասին եւ մանաւանդ այն մարմինները, որոնք երկրումը չեն կամ ազատ ժամանակ քիչ չունին։ Եւ եթէ դրսի մի մարմնի համար նեղելի է արդարանալ դրամ չժողովելու խնդրում՝ ինչու ներելի չպիտի լինի միեւնոյնը նաեւ ուրիշ մարմինների համար։ Եթէ մի տեղ կայ մի տեսակի անյարմարութիւններ, միւս տեղն էլ կարող են լինել միեւնոյն կամ ուրիշ տեսակի անյարմարութիւնները. «թող առաջին քարը նետէ նա, որ մեղք չունի» — սա արդէն հին ճշմարտութիւն է, եւ մենք մեղանչած կը լինինք արդա-

բաուլթեան դէմ պահանջելով ուրիշներից ինչ ներում ենք մեզ։ Ահա ինչու, կարծում ենք, կազմակերպութեան վերաբերեալ խնդիրներում չհեռանալ ընդհանուր պատճառների հողից եւ բոլորովս՝ մնալով մի ամբողջութիւն, մի մարմին՝ հէնց այդ ամրութեան առաջ կանգնած արգելքների վրայ էլ ծանրացնենք մեր ճիգերը։ Իրար շատ նայելով՝ մենք չենք նկատի մեր առաջ կուտակւող խոչընդոտների կոյտերը, եւ մի գեղեցիկ օր կարող ենք տեսնել, եթէ ոչ անելանելի, գոնէ շատ դժուար կացութեան մէջ։ Այժմ կացութիւնը նախանձելի չէ, բայց, փառք Աստծոյ, բոլորս դեռ ձեռին ունենք մեր Դրօշակը եւ թէ մենք ինքները չը թուլացնենք մեր ձեռքերը, թշնամին երբեք չի կարող խլել նրան մեզանից։

Ներփակ դնում ենք մի նամակ, որ գրել է Մարին(9) *իր եղբայրը։ Եթէ կարելի է՝ իրեն հասցրէք այդ նամակը եւ յամենայն դէպս հարցրէք՝ ուզում է արդեօ՞ք իր մասին լուր տանք եղբայրներին։ Նրա եղբայրները — մէկը Երեւանից*(10)*, միւսը Վարշաւայից — ահա մի ամբողջ տարի է մեզ հետ կռւի մէջ են եւ ամենախիստ կերպով մեզնից պահանջում են Մարի հասցէն։ Մենք, ասելով, որ «Մարը չի ուզում, որ իր հասցէն տրւի ոչ ոքի» մերժում ենք։ Հարցրէք, եթէ համաձայնութիւն կը տայ, հաղորդենք իր մասին։— Ի միջի այլոց, ի՞նչ էք մտածում Մարի վերաբերմամբ։ Կան խորհուրդ տւողներ, որ նա բաց անի իր հպատակութիւնը։ Բայց դրանով արդեօ՞ք չեն սկսւի նորից երկար եւ բարակ քննութիւններ եւն*(11)*։ Ասում են, որ եղբայրները դրսից աշխատելով կարող են հանել տալ նրան։ Ի՞նչ է մտածում ինքը։ Հարցրէք իրեն, եթէ յարմար կը համարէք։ Արդեօ՞ք դրամ ունի կամ հասցւում է իրեն, չլինի թէ բանտում մնայ առանց միջոցների — դա արդէն աներեւակայելի դրութիւն կը ստեղծէր նրա համար։ Բոլգարիայից ոչ մի լուր, ոչ մի խաբար չառանք։ Այսօր նորից հարցնում ենք Ռոստոմին, որ Լեպովին*(12) *դիմի եւ մի բան իմանայ։ Դուրս եկաւ մամուլի տակից «Դրօշակից» արտատպած Ղարիբի պատկերներից հինգ հատը՝ առանձին գրքոյկով*(13)*, որ վճռեցինք դրամով ծախել. մի անգամ այդ նիւթը ձրի տւած լինելով հասարակութեան, միւս անգամ միեւնոյնը այլեւս ցանկութիւն չունենք կրկնելու։ Գրքոյկի գինն է* 50 *սանտիմ*, *ճանապարհածախսով* 60։ *Մի հատ ուղարկում ենք ձեզ նմուշի համար։ Եթէ ուզում էք, բաժանորդագրութիւն բաց արէք եւ դրամները ժողովելուց յետոյ՝ պահանջեցէք մեզնից հարկաւոր քանակութիւնը։ Ուրիշ դիմումներ պէտք է մնան անհետեւանք։ Նոյնը գրում ենք եւ բոլոր միւս կոմիտէներին, ոմանցից պահանջելով նոյնիսկ, որ դրամը մեզ չուղարկած՝ ոչինչ չուզենան։ Հերիք է պահանջկոտութիւն զարգացնելը առանց պարտաճանաչութիւն ներշնչելու։ Ով միայն իրաւունքներ է ուզում ունենալ՝ առանց աւելի չափով պարտաւորութիւններ իր վրայ վերցնելու, թող նեղանայ ինչքան ուզում է։*

«Դրօշակի» 8*-րդ համարը այսօրւանից ցրւում ենք։* 9*-ը դուրս կը գայ մինչ դեկտ.* 5*-ը, իսկ դեկտեմբերի համարը* (N 10) *ուզում ենք նւիրել ամբողջապէս*

«Դաշնակցութեան» տասնամեակին, որ լրացաւ ամառը, օգոստոսին(14)։ *Ահա այդ առթիւ ինչ ենք առաջարկում ձեզ. նախ՝ ուղարկել մեզ ձեր բոլոր խորհուրդները, թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ նիւթերից կազմւած լինի այդ համարը եւ երկրորդ՝ անպատճառ մի-մի բան էլ դուք գրէք։ Մենք կուզենայինք, որ այդ համարում արտայայտւէր «Դաշնակցութեան» ներկայ ընդհանուր պատկերը (յեղափոխական, բարոյական) եւ դրա համար աւելի լաւ միջոց չկայ, քան ներկայիս գործիչները արտայայտւեն իրենց տանջող խնդիրներով, ցաւերով, հոգսերով, մտածմունքներով, անցեալի յիշողութիւններով եւայլն եւայլն։ Սպասում ենք անպատճառ։*

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Գարօն գնաց Ամերիկա (չարունակութիւնը — մէկ տող լուսանցքին գրուած — անընթեռնելի է)։

1.- Էլլէն – ծածկանուն նամակի հեղինակ Քրիստափոր Միքայէլեանի:
2.- Մեծից – պէտք է հասկանալ Մեծ քաղաքից, այսինքն Թիֆլիսից, աւելի ճշգրիտ՝ Արեւելեան բիւրոյին:
3.- Ֆրանսերէն՝ «Չենք կարող – յետաձգեցէք եթէ կարելի է»:
4.- Ֆրանսերէն՝ «Չենք կարող»:
5.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):
6.- Այսինքն՝ Կիլիկիա (դուք), Կ. Պոլիս (Ծաղիկ), Արեւմտեան բիւրօ (մենք):
7.- Բորիս – ծածկանուն Սմբատ Խաչատրեանի:
8.- Հանգանակութեան:
9.- Մար – ծածկանուն Միքայէլ Տէր Մարտիրոսեանի, որ 1899 թ. Յուլիս ամսուն ձերբակալուած էր Կիլիկիոյ մէջ եւ փոխադրուած Մարաշի բանտը, ուր պիտի մնար մինչեւ 1904 վերջը:
10.- Մարի Երեւանի եղբայրը – Տէր Մարտիրոսեան Յովհաննէսն է, ծանօթ ազգագրագէտ Ա-դօ:
11.- Ակնարկութիւն այն իրողութեան, որ Մար ձերբակալուած էր կեղծ անցագրով իբրեւ պուլկարացի, մինչ նոր քննութիւնները երեւան պիտի բերէին իր ռուսահպատակութիւնը:
12.- Դաշնակցութեան բարեկամ մակեդոնացի յեղափոխական գործիչ Գուրին Լեապով:
13.- Խօսքը կը վերաբերի «Ազատութեան ճանապարհին» խորագրով Ղարիբի (Ահարոնեան Աւետիս) պատմուածքներու շարքին:
14.- Քրիստափորի այս վկայութիւնը կարելի է վերջնական պատասխան համարել այն վէճին՝ թէ ճշգրիտ 1890 թ. ո՛ր ամսուն հիմնուած է Հ. Յ. Դաշնակցութիւնը:

55

Մատեան No 81-3, *էջ* 41-43 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

17 *Նոյեմբեր* 900

Արեւելեան բիւրոյին

Ձեր հեռագիրի շնորհիւ ժողովը(1) *կրկին ջուրն ընկաւ։ Սակայն անհրաժեշտ է կայացնել. կարիքը մեծ է, եւ ինքներդ էլ վաղուց կողմնակից էք։ Ձեր ցանկութեան համեմատ յետաձգեցինք։ Բայց որպէսզի շատ չուշանայ՝ ահա մեր առաջարկը ձեզ.*

Ի նկատի ունենալով, որ տեղի մասին արդէն կայացել է համաձայնութիւն, որոշեցէք ժամանակը. մենք համաձայն ենք սպասել մինչ դեկտեմբերի 20 (*ձեր տոմարով*)(2)։ *Եթէ մինչեւ այդ ժամանակ անկարելի գտնէք ձեր կողմից մարդ հասցնելը՝ այդ դէպքում մենք մտադիր ենք հրաւիրել «Արեւմտեան շրջանի» պատասխանատու ժողովին, ուր կը մասնակցեն ծաղկեցիք, լեռնավայրցիք*(3) *եւ մենք։ Այս ժողովի լիազօրութիւնը ի հարկէ սահմանափակ կը լինի, բայց գոնէ մեր շրջանի գործերին, երեք մարմնու պատասխանատուութեան տակ, մի որոշ ուղղութիւն կարող է տալ։ Այսուհետ, որպէսզի դրութիւնը ըստ կարելոյն շուտով պարզւի, խնդրում ենք այս նամակին պատասխանել հեռագրով։ Դա կարեւոր է այն դէպքի համար, որ եթէ դուք չէք կարող մինչ դեկտեմբերի* 20-*ը ապահովել ձեր մասնակցութիւնը, այն ժամանակ մենք մեր ժողովը կը նշանակենք աւելի շուտ, դեկտեմբերի* 10-15 (*նոր տոմարով*) *եւ այդպիսով ի զուր տեղը չենք երկարացնի մի շարք առկախ մնացած խնդիրներ մեր շրջանում։*

Խնդրում ենք առանձին ուշադրութիւն դարձնել Ֆրանսերէն թերթի(4) *համար երկրից լուրեր մեզ հաղորդելու վրայ։ Այդ մասին ձեզ եւ ուրիշներին ուղարկել ենք արդէն շրջաբերական, բայց կրկին չեշտում ենք։ Ցաջողութիւնը մեծ է լինելու, եթէ կարողացանք մեր վրայ վերցրած պարտաւորութիւնները կատարել։ (Ֆրանսիական ամբողջ մամուլը այժմ հետաքրքրւում է մեր կեանքով եւ Ֆրանսիերէն թերթն է, որ պիտի պատշաճ նիւթ մատակարարէ եւրոպական հասարակութեան։ Կրկին եւ կրկին խնդրում ենք ձեր առանձին ուշադրութիւնը)։ Պէտք է աշխատել չարաչար այդ մասին — ահա թերթը ղեկավարողների պահանջը։ Ձեր կողմից նոյնիսկ կարող էք մի նոր շրջաբերական տարածել որպէսզի Երկրից բոլորեքեան ինչ լուրեր ունեն՝ ձեզ եւ ձեր միջոցաւ՝ մեզ հասցնեն։ Թերթը պէտք է տանուի այնպէս, որ չերեւայ նրանում ուղղակի մեր նախաձեռնութիւնը, այլ մեզնից անկախ մի ձեռնարկի տպաւորութիւն գործէ։ Այդ պատճառով չպէտք է տարածել՝ թէ*

դաշնակցական թերթ է։ Փարիզում Էլլէնը տեսել էր Ոսկանապատից(5) եկած մի քանի տուգերի[?] եւ նրանք խոստացել են տարեկան 20,000 fr. օժանդակութիւն այդ թերթին. մինչ այժմ դեռ ոչ մի կոպէկ չէ եկել։ Ամէն յարմար դէպքում յիշեցրէք այդ մասին Ոսկանապատում գտնուող մեզ մօտիկ մարդկանց, գնացողների միջոցով մենք նրանց իմաց ենք տուել՝ թէ ով ինչ է խոստացել։

«Դրօշակի» դեկտեմբերի համարը ուզում ենք ամբողջապէս նուիրել «Դաշնակցութեան» տասնամեակին, որ լրացաւ ամառս, օգոստոսին(6)։ Խնդրում ենք այդ առթով հաղորդել մեզ շուտով ձեր խորհուրդները թէ ինչպէս եւ ինչ նիւթերից կազմենք համարը։ Շատ ցանկալի է նմանապէս, որ այդտեղի հին ընկերներից եւս մի քանիսը մի-մի բան ուղարկէին տպագրելու համար։ Տասը տարուայ կեանքից յետոյ ոչ մի ուրիշ բան չէր կարող աւելի լաւ բնորոշել Դաշնակցութեան ներկայ յեղափոխական ու բարոյական պատկերը եւ տրամադրութիւնները քան հին գործիչների գրութիւնները, ուր նրանք կ՚արտայայտէին իրենց ցաւերով, տանջանքներով, իրենց մտքերով, անցեալի յիշողութիւններով եւ ապագայի յոյսերով եւն եւն։ Շատ եւ շատ խնդրում ենք անպատճառ մի-երկու բան ուղարկել։ Համարը բաց կը թողնենք մեծ ծաւալով, տեղի կարօտութիւն չի լինի. գրեցէք ինչքան ուզում էք։ Դրսից եկած յօդուածները մի առանձին համ ու հոտ, մի առանձին թարմութիւն էլ կը տային համարին. Զէ՞ որ ամէն գրող ունի իր որոշ լեզուն, իր մտածելու եղանակը, ոճը եւայլն։

Մեր ունեցած ուրախալի լուրերն են. Ֆրանսերէն թերթի համար ամենաականաւոր մարդկանց խմբելը եւ Փարիզի մի քանի համաժողովներում (կօնգրէս) ունեցած աջողութիւնը։ Զենք երկարում սրանց մասին, քանի որ առաջին կէտի մասին գիտէք մեր շրջաբերականից, իսկ երկրորդի վերաբերմամբ երկար հաշուետուութիւն կայ «Դրօշակի» հոկտեմբերի համարում։

1.- Ակնարկութիւն «Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմնի» ժողովին, որ նախատեսուած էր գումարել Պուլկարիոյ Ֆիլիպէ (այժմ Փլովտիւ) քաղաքին մէջ:

2.- Այսինքն հին տոմարով, ինչ որ նոր տոմարով պիտի համապատասխանէր 1904 թ. Յունուար 2-ին:

3.- Ծաղկեցիք, այսինքն՝ Պոլսոյ Յուցական մարմինը, լեռնավայրցիք՝ կիլիկեցիները, մենք՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոն:

4.- Խօսքը կը վերաբերի Pro-Armenia-ին, որ արդէն 1900 թ. Նոյեմբերին սկսած էր լոյս տեսնել:

5.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:

6.- Քրիստափոր հոս որոշակի կը յիշատակէ Հ. Յ. Դաշնակցութեան կազմութիւնը՝ 1890 թ. Օգոստոս ամիսը: Տասնամեակին նուիրուած «Դրօշակ»ի համարը լոյս տեսած է 1901 թ. Յունուարին, խմբագրականին կը յաջորդէ Աւետիք Իսահակեանի (Հայ-Գուսան) բանաստեղծութիւնը՝ Դաշնակցութեան Տասնամեակին:

56

Մատեան No 85, *էջ* 410

23 *Նոյեմբեր* 1900, *Ժընեւ*

Սարգսեանին, *Միւնխէն*

Յարգելի պարո՛ն,

«*Խաբրիկները*»(1) *թարգմանելու Ձեր միտքը մեզ համար էլ համակրելի է։ Կարող էք ուրեմն օգտուիլ ազատօրէն։*

Սակայն, մեր կարծիքով, եթէ աջողեցնէիք առանձին գրքով հրատարակել, դա աւելի լաւ կը լինէր (ռուսերէն) թերթում — իբրեւ ռուս կառավարութեան հետ բացարձակ կռւի մէջ գտնուող մի օրգանում —։ Այդ նիւթերը, որ ունին իրենց յատուկ տոնը, գուցէ չգործէին ընթերցողի վրայ այն տպաւորութիւնը, որ ցանկալի է։ Տպագրութիւնը թանկ չի նստի, եւ եթէ համաձայնութիւն տաք, Ժընեւի ռուսաց տպարաններում կարելի է հեշտութեամբ աջողեցնել այդ։

Եթէ վճռէք գրքով հրատարակել, այն ժամանակ կը խնդրէինք թարգմանութիւնը տպագրութեան յանձնելուց առաջ՝ նախ մեզ ուղարկել. գուցէ նպատակայարմար լինի տեղ-տեղ սրբագրել եւ նոր նիւթեր մտցնել Ակնունու դեռեւս չտպագրած նամակներից։

Յարգանքներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Խաչատուր Մալումեանի (Է. Ակնունի) «Կովասեան խաբրիկներ» խորագրուած յօդուածաշարք:

57

Մատեան No 85, *էջ* 424-426

6 *դեկտեմբեր* 1900

Փարիզի ընկերներին(1)

Սիրելի՛ք,

Վերջապէս երէկ ստացանք Pro-Armenia-*ի*(2) *կապոցը եւ այսօր առաւօտեան Միքայէլի*(3) *փակ նամակը։ Մենք չը գիտենք, երբ է կապոցը ուղարկուած Փարիզից, բայց որոշ է Քիառ* .....(4) petite vitesse-*ով. եթէ կարելի է, կարգադրեցէք ուրիշ կերպ ուղարկեն։*

Դուք դժգոհ էք, որ թերթի մասին(5) *մենք մինչեւ այժմ արտաքինի վերաբերեալ մի քանի նկատողութիւններ ենք արել, իսկ բովանդակութեան, ներքին կողմի մասին, ոչինչ չենք գրում. բայց դա շատ հասկանալի է, որովհետեւ արտաքին կողմը ամբողջապէս կարող էր եւ կարող է ձեզնից կախուած լինել եւ հետեւաբար ցանկալի փոփոխութիւններ դուք կարող էք մտցնել հէնց իսկոյն հետեւեալ համարներում, իսկ ինչ վերաբերում ներքինին — այդտեղ դուք թէ մենք արդէն անզօր ենք Կլէմանսօներին կամ Ֆրանսիս Պրէսանսէներին*(6) *որեւէ բան մեղադրել։ Ի՞նչ պէտք է գրէինք ձեզ. հաւանում ենք թէ չե՞նք հաւանում Քիառի, Կլէմանսօյի, Պրեսանսէյի յօդւածներին... Բայց դա, ներկայ հանգամանքներում, ծիծաղելի չէ՞ր լինի։ Միակ բանը, որ մենք կարող էինք — գուցէ, քաղաքավարական տեսակէտից, նաեւ պարտաւոր էինք անել եւ չենք արել — այդ այն է, որ չենք հաղորդել ձեզ այն անսահման ուրախութիւնը, որով մենք համարեա հարբած էինք թերթը ստանալու առաջին օրերը, եւ չենք շնորհաւորել ձեզ... յաջողութեամբ... բայց դա էլ, մեզ թւում է, մի այնպիսի յանցանք չէ, որ ընկերների մէջ կարելի չը լինէր ներել։ Յամենայն դէպս այդ կողմից մեր գործած մեղքը քաւելու համար՝ աւելացնում ենք, որ մեր ուրախութիւնը այնքան մեծ է եղել, որ թերթը՝ ձեռքներս առնելով առաջին անգամ, համբուրել ենք համարը... Ձէ՞ք կարող դուք այս բոլորը ենթադրել առանց մեր գրելուն։ Քիառին շնորհակալութիւն գրելու մասին խօսւել եւ վճռւել է սրանից մի շաբաթ առաջ եւ եթէ ուշացաւ այդ նամակը, դրա պատճառները բոլորովին պատահական են։ Յամենայն դէպս այս անցքերի առթիւ Թայիներանի*(7) *կողմից դէպի մեզ բռնած ընթացքը մենք դատապարտում ենք միանգամայն։ Կ՚աշխատի ինքը ուղղել իր այդ սխալը թէ չէ — դա իր գործն է, բայց երբեք մենք չենք կարող արդարացնել նրան։*

Տեղեկութիւնների ուշանալու մասին նոյնպէս շատ էք դանդատւում.

ի՞նչ ասենք ձեզ։ Եթէ ցանկանալ եւ խկոյն ստանալը այդպէս հեշտ լինէր կեանքում, մենք բոլորս ով գիտի ինչեր կը լինէինք դառած մեր ներկայ հասակներում։ Pro-Armenia-ն *Փարիզից այստեղ հասնելու համար պահանջեց* 10 *ամբողջ օր՝ ձեր կամքից ի հարկէ միանգամայն անկախ պատճառներով։ Բաքւից միչեւ այսօր կոպէկ չկայ՝ չնայելով ամիսներ առաջ տւած բազմաթիւ խոստումներին, իսկ դուք զարմանում էք, որ տաճկական դժոխքից մինչեւ այժմ մենք չենք կարողանում թարմ եւ բազմազան տեղեկութիւններ ձեռք բերել։ Կարելի է շնորհաւորել ձեր լաւատեսութիւնը եւ պահանջկոտութիւնը, բայց այդ բոլորը լաւ միջոցներ են ձեր ջղերը քայքայելու համար, բայց ոչ թէ մարդկանց կարելի սահմաններում մեղադրելու համար։ Տեղեկութիւնների անհրաժեշտութեան մասին գրւած է արդէն մեր բոլոր ընկերներին. այդ առթիւ նոյեմբեր ամսւայ ընթացքում ցրւել ենք նոյնիսկ երկու շրջաբերական՝ մէկը միւսից խիստ տոնով գրած եւ երկուսումն էլ խնդրել ենք, որ աշխատեն տեղեկութիւններ հասցնել ամենակարճ ժամանակամիջոցում։ Ցոյս ունինք, որ այդ բոլորը ապարդիւն չպէտք է անցկենայ, բայց որովհետեւ դեռ ոչինչ չենք ստացել, պարզ է, որ չէինք էլ կարող ձեզ բան ուղարկել։*

Գրել էր Էլլէնը, այսօր էլ գրեց մի կտրական նամակ։ Գրում ենք նաեւ Բերլին. եթէ մինչ երկու օր ոչ մի տեղից փող չստանանք, այստեղ մենք որեւէ կերպով կը գտնենք եւ ամսիս 10-11*-ին ձեզ մի գումար կը հասցնենք։ Սառնասրտութի՛ւն... Եթէ դուք մինչ ամսիս 7-ը փող ստացած լինէք մեզ իմաց տւէք հեռագրով, թէ մինչ երբ մենք կարող ենք ձեր վերաբերմամբ միամիտ լինել։*

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Փարիզի ընկերները – Միք. Վարանդեանն ու Աւետիս Ահարոնեանն են:
2.- Pro-Armenia-ի առաջին համարը լոյս տեսած էր 1900 թ. Նոյեմբերին:
3.- Միք. Վարանդեան:
4.- Մէկ տող բաց է, պատճէն չէ ելած: Petite vitesse-ը՝ ճեպընթաց շոգեկառքն է:
5.- Խօսքը միշտ Pro-Armenia-ի մասին է:
6.- Յիշուած անունները, եւ շատ հանրածանօթ ուրիշ դէմքեր մաս կը կազմէին Փրօ-Արմենիա-ի խմբագրական կազմին: Գլխաւոր խմբագիրն էր Պիեռ Քիյառ:

58

Մատեան No 85, *էջ* 429-30

10 *դեկտեմբեր* 1900

Միսակին(1), *Ցիւրիխ*

Սիրելի՛,

Գրածդ՝ կրճատուած՝ կը դնի այս համարի «Մամուլի տեսութիւն» բաժնում։ Թէեւ յօդուածը այդ ձեւով դառաւ մի ամփոփ նկատողութիւն միայն, բայց երեւոյթը հետաքրքիր էր, եւ էլէնը որին էիր թողել այդ մասին որեւէ կարգադրութիւն, չուզեց զրկել «Դրօշակը» ուշադրութեան արժանի մի փաստից եւ «Հայրենիքին»(2) *չուղարկեց։ Անշուշտ դու կը շարունակես հետեւել գերմանական գրականութեան եւ մեզ տեղեակ կը պահես հայերի վերաբերեալ գրածներին։*

Pro-Armenia *ուղարկեցինք Շխեանի*(3) *միջոցով։ Եթէ բաժանորդներ գրւել ցանկացողներ գտնւեն, այդտեղ աշխատել ինքներդ ընդունել բաժանորդագրութիւն եւ մեր միջոցով Փարիզ ուղարկել, որովհետեւ Փարիզի* administration-*ը իւրաքանչիւր* abonnement-*ից*(4) *իր համար մաս է հանում* 1/3-*ը, մենք կ՚աշխատենք իջեցնել այդպիսի մի խոշոր վարձատրութիւն, բայց առայժմ այդ պայմանը ընդունւած է եւ պէտք է ըստ կարելոյն խոյս տալ* administration-*ից։ Լաւ կը լինէր եթէ Ցիւրիխից հայերը մի հեռագրով չնորհաւորէին* Pro-Armenia-*ի խմբագրութիւնը ու իրենց երախտագիտական զգացումները արտայայտէին։ Հեռագիրը պէտք է ուղղել Քիյառի հասցէին։*

Pro-Armenia-*ի համար տեղեկութիւնների պահանջը մեծ է։ Մենք ստիպւած եղանք նորերս մի երկրորդ շրջաբերական ցրւել։ Դրանից մի օրինակ ներփակում ենք քեզ համար էլ։ Այդ բնաւորութեամբ դու էլ կրկնիր դիմումներդ եւ առհասարակ ուշադրութիւն դարձրու այդ խնդրի վրայ։ Եթէ երկրում քո ունեցածդ կապերից չկարողանաս օգտւել, թուլութիւն պիտի լինիս գործած։ Հասկացրու թղթակիցներիդ, որ տեղեկութիւնները կարող են վերաբերել անցեալին էլ, մանաւանդ եթէ ճշտւում են լաւ աղբիւրներից կամ կարող են յարակցւել նորանոր պարզաբանութիւններով։ Թող, ի միջի այլոց, ուշադրութիւն դարձնեն — առանձին ուշադրութիւն — պաշտօնական տեղեկագրեր, կառավարութեան գրաւոր կարգադրութիւններ եւայլն ձեռք բերելու վրայ։ Քեզ վրայ առանձին <u>յոյս ունինք</u> ու խնդրում, եւ չէինք ուզենալ յուսախաբւել։ Որքան մեզ յայտնի է, Բաղդադ, Հալէպ, Խարբերդ, Կեսարիա, Բէյրութ եւ դրանց շրջաններում դու կապեր ունես. պէտք է <u>չարաչար աշխատել</u> ունեցած կապերիցդ օգտւելու համար։ Մի մոռանար նաեւ <u>շտա-</u>*

պեցնելու բոլորին, որովհետեւ թերթը՝ ամիսը երկու անգամ դուրս գալու է, պէտք է աշխատի իւրաքանչիւր համարում երկրից տեղեկութիւններ տալ։

Բէյրութի ընկերողդ դժուար է առայժմ առանձին ցուցմունքներ տալ։ Թող՝ տեղի հետ ծանօթանալով, գրի տեղական պայմանների մասին, տեղական տարրերի, դրսի եւ ներսի հետ յարաբերութիւնների մասին,— միաժամանակ գուցէ կարելի լինի որեւէ բան ուղարկել, իսկ առայժմ թող կանոնաւոր կերպով թղթակցութիւններ ուղարկէ, աշխատէ դրամական խմբեր կազմակերպել, օտար տարրերի տրամադրութիւններին ծանօթանալ, թիւրքերէն ԼԱԻ հրատարակութիւններ ցրւել մահմեդականների մէջ եւայլն։

Ներփակում եմ Մարտինի(5) *մի գրութիւնը, որ նորերս ենք ստացել եւ որը, պէտք է ներկայացւի Դ. Կամքը*(6) *ներկայացնող մարմնուն։ Որովհետեւ խնդիրը վերաբերում է քեզ ծանօթ եւ իրեն հետաքրքրող շրջանին (Ոսկեհանք — կարմիր Դղեակ*[?](7)*, խնդրում ենք կարդաս եւ շուտով յետ ուղարկես հանդերձ նկատողութիւններով, լրացումներով եւ կամ կարծիքներովդ։ Աւելացնում ենք միայն, որ այս տեսակ խնդիրներում, չէ կարելի բաւականանալ լոկ տեսական վերաբերմունքով դէպի հարցը, այլ հարկաւոր է նաեւ կշռել խնդրի բոլոր գործնական դժուարութիւններ եւ պահանջները — դրամի, ժամանակի եւ ուժերի վերաբերմամբ, միշտ ի նկատի առնելով ի հարկէ կազմակերպութեան ներկայ ծաւալը, բիւդժէն եւայլն։*

Բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Միսակ – ծածկանուն գրող Գոյումճեան Միսակի (Կարիճ, Առանձար – 1877-1913):

2.- «Հայրենիք» – պաշտօնաթերթ Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէի:

3.- Սիմէոն Շխեան (1865-1947) – կուսակցական գործիչ, այդ օրերուն Ժընեւի մէջ «Դրօշակ»ի խմբագիրներէն:

4.- Ֆրանսերէն՝ բաժանորդագրութիւն:

5.- Մարտին – Մուրատեան Մարտիրոս, Ամերիկայէն եկած գործիչ, անդամ Կիլիկիոյ պատասխանատու մարմնին:

6.- Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմին, որ բաղկացած էր երկու բիւրոներու եւ Պատասխանատու մարմիններու ներկայացուցիչներէն:

7.- Կարմիր-Դղեակ – ծածկանուն Էնկիւրի-Անգարայի:

59

Մատեան No 81-3, *էջ* 43 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

Ամփոփ ուրուագիծ Անուշաւանին (հաւանաբար Քալանթարեան) յղելի գրութեան մը:

դեկտ. 20-*ին* 900

Բաքու, Անուշաւանին

Մանրամասն նամակ Փարիզի թերթի վերաբերեալ, որպէսզի՝

1) *Շտապեցնէ այն մարդոց, որոնց Էլլէնը տեսել էր Փարիզում եւ խոստում առել շուտով դրամ հասցնելու։*

2) *Ինքը ժողովարարութիւն ձեռնարկի եւ*

3) *Որպէսզի խմբագրութեան համար եւս դրամ ուղարկի։*

Գրուած է Էլլէնի կողմից

60

Մատեան No 81-3, *էջ* 44-45 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

12/25 *փետրվար* 901

Արեւելեան բիւրոյին

Սիրելի՛ք,

Օհանի նամակը երէկ ստացուեց. 300-*ը եւ Գիսակի*(1) *նամակները նոյնպէս։ Շնորհակալ ենք։ Ափսոս ուշ-ուշ էք մտաբերում մեզ, իսկ մեր վերջին նամակին չպատասխանեցիք անգամ, թէեւ երկար սպասեցինք։ Ուրախ ենք, որ Նիթրան*(2) *կը գայ եւ կը տեսնուենք, եղած հարցերի մասին կը խորհրդակցենք։ — Ռուսաստանի դէմ* Pro-Armenia-*ում չգրելու մասին խօսք չէ կարող լինել։ Դա ոչ միայն անարդար եւ վնասակար պահանջ է, այլ եւ այսպիսի մի պահանջի առաջ՝* P[ro]A[rmenia]-*ի խմբագրութիւնը մեզ կ՚անուանէ դաւաճաններ, ռուսաց լրտեսներ եւ կը թքի թերթի վրայ էլ, մեզ վրայ էլ։ Այն ինչ* P. A. *օր օրին աւելի եւ աւելի ազդեցութիւն եւ դիրք է ստանում։ Պրեսանսէն Առաջնորդողներ է նւիրում* Temps-*ի մէջ.* Aurore-*ում, բացի Պրեսանսէից, ունենք Գոյէին եւ* P.A.-*ի խմբագիր Քիառին,* La Petite République-*ում* P. A.-*ի խմբագիր Լոնգէյին։ Ուրիշ բազմաթիւ լրագիրներ* (*ֆրանսիական, գերմանական, իտալական, զւիցարական*) *ամբողջ յօդւածներ են արտատպում* P.A.-*ից եւ որ գլխաւորն է՝ քաղաքական գործիչների ուշադրութիւնն է գրաւում թերթը։ Այդ դուք կը տեսնէք հետզհետէ* P. A.-*ի համարներից։ Այդ բոլորը անհետեւանք չի մնալ. շարունակ մեզ խրախուսում եւ վառ յոյսեր են տալիս։ Ահա ինչու չպէտք է ոչ մի ջանք չխնայել* P. A.-*ի համար։ Պրեսանսէն եւ ուրիշները կապեր ունեն Դելկասէի*(3) *հետ։ Նորերս, երբ մենք հեռագրեցինք* P. A.-*ին եւ ուրիշ թերթերի՝ նոր կոտորածների երկիւղի մասին, երկու նշանաւոր մարդիկ էին ուղարկել Դելկասէի մօտ եւ խօսք առել նրանից՝ ծովային ցոյց անել Իսկէնտէրիայում, եթէ լուրը ճշտուի։ — Էլլէնը յատկապէս խնդրում է Օհանին գնալ Ա. Մ. Արգ. մօտ եւ խնդրել նրանից անպատճառ,* .....(4) *այն թղթերը* (*բարեգործական հիմնարկութիւնների վերաբերեալ քաղաքի ունեցած կանոնագրութիւններ, դոկումաններ, ամէն տեսակի, հին կամ նոր*), *որ նա խոստացել է Էլլէնին աշնանը։ Անպատճառ եւ անպատճառ, շատ կարեւոր է։ Էլլէնի հասցէն գիտէ ինքը, պէտք է պնդել, որ ուղարկի՝ թէ ոչ, ինչպէս երեւում է, ինքնաբերաբար չի անելու։ — Նամակս բերողը ծանօթացել է իր հետ Համօ-ի*(5) *բարեխօսութեամբ։ Լաւ մարդ է երեւում, եւ թէեւ վրացի, բայց շատ մարդասէր է եւ մեզ համակիր։ Եթէ յար-*

մար համարէք, խօսէք հետը իր գալիք տեղի մեր գործերի մասին։ Կարող է բան անել եւ գուցէ նոյնիսկ իր ազդութեամբ ամաչեցնի մեր հայերին...

Եթէ կարող էք, Պրեսանսէին ուղարկէք այդտեղից չնորհակալութեան մի ուղերձ կամ այդ նպատակով՝ այդտեղ ստորագրութիւններ ժողովէք, իսկ ուղերձը մենք այստեղ կը գրենք, երբ արտագրութիւնների ցուցակը կը ստանանք ձեզնից։ Շատ կարեւոր ուժ է Պրէսանսէն. արժէր մի բան անել այդտեղից էլ։

1.- Գիսակ – ծածկանուն Սերենկիւլեան Յովհաննէսի (1871-1915):
2.- Նիքրա – ծածկանուն Շահրիկեան Յարութիւնի (1860-1915):
3.- Թէոֆիլ Դելկասէ – ֆրանսացի քաղաքական ազդեցիկ անձնաւորութիւն:
4.- Սղագրուած ռուսերէն տառեր:
5.- Համազասպ Օհանջանեանի:

61

Փաստ. 1143-1

Երեքուկէս էջնոց նամակ ուղղուած Արեւմ. բիւրոյին՝ Ժընեւ, ուրկէ ան եկած էր մասնակցելու համար Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմնի ժողովին:

14/27 *մարտ* 901, *Փիլիպպոպոլ*

Սիրելի՛ք.

Երէկ հասայ այստեղ։ Մտել եմ ճանապարհին Վիեննա եւ Սոֆիա, մնալով իւրաքանչիւր տեղում մի-մի օր։ Վիեննա Աւոյին(1)*, որը այժմ Վենետիկ պիտի լինի, եւ Սոֆիայում՝ Ռադեւին, Սարաֆովին, Լեապովին*(2) *եւ ուրիշ մի քանիներին։ Նրանց բոլորի տրամադրութիւնները դէպի մեզ շատ եւ շատ լաւ են։ պատրաստւում են իրենց համագումարին, որ պիտի կատարւի ամսի* 18 / 31*ին։ Երկար խօսել հետները որեւէ գործնական խնդիրների մասին չէի կարող, որովհետեւ ինքս դեռ տեսնւած չէի մեր ընկերների հետ։ Վերադարձիս կրկին կը լինեմ Սոֆիա եւ այն ժամանակ կը մնամ այնտեղ մի քանի օր։*

Այստեղ գալով՝ գտայ միմիայն Ռոստոմին։ Ռուսաստանից եկողը (երեւի Շահր[իկեանը] եւ ոչ թէ Սիմոնը) Օդեսա նստած նաւի է սպասում եւ գուցէ միայն 6-7 *օրից յետոյ այստեղ հասնի։ Աշոտ եւ Արամը Վառնա սպասում են եկողներին։ Այդպիսով ուրեմն մինչ մեր պարապմունքների սկսւելը հաւանական է դեռ եւս պահանջւի* 7-8 *օր, մանաւանդ որ Սեպուհից*(3) *դեռ խաբար էլ չունենք։*

Առանձին նորութիւններ չկայ։ Առ այժմ կարող եմ ասել, որ կազմակերպութիւնը այստեղ բաւականին լաւ է եւ «Դաշնակցութիւնը» ընդհանրապէս հեղինակութիւն ունի։ — Պոլսից էլ տեղեկութիւն կայ ստացւած որ Խաժակը(4) *մինչ* 10 *օր այստեղից Ռուսաստան կ՚արտաքսւի։*

«Դրօշակի» համարը լոյս տեսնելուց յետոյ, երբ կը սկսէք առաքումը, չմոռանաք միաժամանակ անել եւ հետեւեալը. "Effort"*-ի, «Ռեֆորմի»*(5)*, «Քիւրդիսանի», ալբանական թերթի (որ մենք ստանում ենք), «Օսմանլիի»,* "L'Arménie"*ի եւ* "Pro Armenia"*-ի խմբագրութիւններին մի-մի համար ուղարկելով՝ կցէք այդ համարներին եւ մի-մի նամակ մօտաւորապէս այսպիսի բովանդակութեան.*

«Դրօշակի» ներկայ տարւայ առաջին համարը նուիրւում է «Դաշնակցութեան» տասնամեակին, որ լրացաւ անցեալ տարւայ Օգոստոսին։ Տարաբախտ հայ ժողովրդի կրած անօրինակ սարսափներից յետոյ՝ հանդիսաւոր,

տօնական տրամադրութիւններով չէ որ մենք ոտք ենք դնում «Դաշնակցութեան» երկրորդ տասնամեակը. ո՛չ։ Մեզ զբաղեցնող միակ խնդիրն է այժմ — մեր կազմակերպութեան անցեալում ունեցած գործունէութեան եղանակը եւ ապագայում բռնելիք ընթացքը։ Ահա ինչու, սրա հետ ուղարկելով Ձեզ «Դրօշակի» վերոյիշեալ համարը, խնդրում ենք ձեզանից, իբր միեւնոյն ըէ-ժիմի դէմ բողոքող, կուսող տարրերի (գործակիցների), յայտնել մեզ Ձեր կարծիքը «Դաշնակցութեան» անցեալ տասնամեակում արտայայտած կեանքի եւ նրա գործունէութեան տաքտիքի վերաբերմամբ։ Ձեր գրելիքները (պատասխանները) մենք ցանկութիւն ունենք հրատարակել «Դրօշակ»ի հետեւեալ համարներում ի գիտութիւն մեր բոլոր ընկերների, եւ շատ ուրախ կը լինէինք՝ ստանալով ամենաանկեղծ կերպով արտայայտած ձեր հայեացքները»։

Սա, ի հարկէ, մի ձեւ է, որը դնում եմ իմ գլխաւոր միտքը արտայայտելու համար — այն է՝ անել մի դիմում, որի համաձայն յիշեալ մարմինները մեր տասնամեակի առիթով գրեն մեզ իրենց կարծիքները «Դաշնակցութեան» անցեալ տաքտիքի եւ ընդհանուր յեղափոխական ֆիզիոնոմիայի մասին։ Մնացածը դուք գիտէք, խմբագրեցէք ինչպէս կ՚ուզէք։ Effort-*ին*, Ռեֆորմին(5) *եւ* Pro-Armenia-*ին կարելի է նոյնիսկ աւելի մտերմական ձեւով դիմել քան միւսներին։ Եթէ աւելորդ չհամարէք, կարող էք մի հատ էլ Տամադ-Մահմուտ փաշային ուղարկել։ Իմ կարծիքով՝ կարելի է ուղարկել. ծայրայեղ դէպքում՝ եթէ վայրիվերոյ բաներ գրեց, կարող ենք կցել նրա նամակին մեր խմբագրական ծանօթութիւնները։*

Ի դէպ. այսօր ստացանք Տամադ փաշայի որդիների դիմումը։ «Դրօշակում», ի հարկէ, կը դնէք մեր դրական պատասխանը, յայտնելով, որ մենք ուրախութեամբ կը մասնակցենք առաջարկւող ժողովին։ Այդ բրոշիւրը պարզ հետեւանք է Եգիպտոսից մեզ հետ սկսած նրա բանակցութեան եւ մերոնց արած առաջարկութեան։ Պէտք է ուրեմն իսկոյն արձագանք տալ։

Ցգրութիւն
Ձեր ՔՐԻՍՏԱՓՈՐ

Chemin des Pittons 8
Mr. Ginsburg

1.- Աւոն՝ Իսահակեան Աւետիքն է։

2.- Ռադեւ, Սարաֆով, Լեապով,– մակեդոնացի յեղափոխական դէմքեր էին եւ Դաշնակցութեան բարեկամ գործակիցներ։

3.- Աշոտ (Եղիկեան Կարապետ, Սեւ-Աշոտ, Աշոտ Բագրատունի) եւ Արամ (Յակոբեան). երկուքն ալ Վիշապի (Պոլիս) Պատ. Կ. կոմիտէի ներկայացուցիչներ «Կամք»ի մէջ։ Սեպուհը՝ Պանքայի Հրաչն է, իսկական անունը՝ Հայկ Թիրեաքեան, նոյնպէս անդամ «Կամք»ի իբրեւ ներկայացուցիչ Լեռնավայրի (Կիլիկիա) Պատ. Կ. կոմիտէին։

4.- Խաժակը՝ Գարեգին Խաժակն է։

5.- Բնագրին մէջ՝ ռուսատառ։

62

Փաստ. 1143-2

27 *ապրիլ* 901, *Ֆիլիպպէ*

[*Արեւմտեան բիւրոյին, Ժընեւ*]
Սիրելի՛ք.

Երէկ երեկոյեան միայն տղերքը եկան։ Այստեղ ենք ուրեմն վեց հոգի (Սեպուհ, Աշոտ, Արամ, Շահրիկ, Ռոստոմ, ես)։ Բորիսին(1) *էլ երէկ հեռագրեցինք, որ գայ. եկած ընկերները ուզում են լսել նրա հայեացքները եւ հրաժարման պատճառները։ Քիյառից*(2) *նամակ եկաւ։ Նրա առաջարկները նոյնն են, ինչ արդէն ընդունել է մեր անցեալ Ընդհանուր ժողովը։ — Այսօր (առաւօտ է այժմ) սկսում ենք մեր պարապմունքները։ — Նիկոլի*(3) *գրածը ստացայ։ Սաստիկ ցաւեցի այն կրճատումների համար, որ արել էք «Դրօշակ»ի համարում։ Պէտք էր ուրիշ մի ելք գտնել, քանի որ համարը առանց այն էլ հարուստ չէր։ — Դամատ-Մահմուտ փաշայի*(4) *որդոց դիմումի առթիւ իմ առաջարկը վերաբերում էր «Դրօշակում» մեր տալիք պատասխանին. «Մամուլի տեսութեան» բաժնում պէտք է յիշատակել* «appel»*-ը եւ ասել, որ «Դաշնակցութիւնը» ամենայն պատրաստականութեամբ կ'ուղարկի իր ներկայացուցիչը. ուրիշ ոչինչ։ — Այստեղ եկած ընկերների մի քանիսի հաղորդած տեղեկութիւնների հիման վրայ նախազգուշացնում եմ Նիկոլին եւ Սարգսին, <u>որ պ. Նշանին ամէն կերպ հեռու պահեն խմբագրութիւնից։</u>*

Շատ կասկածելի անձնաւորութիւն է. ենթադրում են նոյնիսկ, որ նա այդտեղ յատուկ պաշտօն ունի։ Ի սէր Աստծոյ, զգոյշ եղէք ամէն կերպ. ինչպէս պատմում են, վերին աստիճանի տխմար արարած է. փաստերը հետս կը բերեմ, իսկ առայժմ կրկին խնդրում եւ աղաչում եմ, եթէ կարելի է, այդ մարդու հետ կտրէք նոյնիսկ ձեր բոլոր յարաբերութիւնները։

Բոլորեքեան բարեւում են՝
Ձեր ՔՐԻՍՏԱՓՈՐ

1.- Յաջորդաբար՝ Հայկ Թիրեաքեան (Հրաչ, Սեպուհ), Կարապետ Եղիկեան, Արամ Յակոբեան, Յարութիւն Շահրիկեան, Ստեփան Զօրեան (Ռոստոմ): Բորիսը՝ Սմբատ Խաչատրեանն է: Բոլորն ալ անդամ Ցուցական մարմնի:
2.- Պիեռ Քիյառ, խմբագրիր Pro-Armenia-ի:
3.- Նիկոլ Մատինեան:
4.- Եւրոպա անցած թուրք ազատական դէմք:

63

Փաստ. 1143-3

Նամակը ուղղուած է Արեւմտեան բիւրոյին. գրուած է Ֆիլիպպէ (այժմ Փլովտիւ) քաղաքէն, ուր եկած էր Քրիստափոր մասնակցելու համար Դաշնակցութեան «Կամք»ը ներկայացնող մարմնի ժողովին, որ գումարուեցաւ 1901 թ. Ապրիլ 7-16 (նոր տոմարով) եւ ուր պիտի որոշուէր ստեղծել «Փոքորիկ»ը, դրամահաւաքի նպատակով: Բոնի դրամահաւաքի համար ստեղծուած մարմնին մաս կը կազմէին Քրիստափոր, Ռոստոմ, Կարէն (Արամ Յակոբեան), Սեւ Աշոտ (Եղիկեան Կարապետ) եւ Յարութիւն Շահրիկեան՝ Պոլսոյ Պատ. Կեդր. կոմիտէ անունով:

Նամակին մէջ այս մասին ակնարկութիւնը յստակ ըլլալով (քանի նամակը կը սկսի «մեր պարապմունքների մեծ մասը աւարտել ենք» խօսքերով), պէտք է հետեւցնել, որ նամակին թուականը՝ 30 Մարտ հին տոմարով է, որ նոր տոմարով պիտի ըլլար 12 Ապրիլ. այդպէս ալ նամակի վերջաւորութեան կը գրէ Քրիստափոր – ձեզ մօտ ամսի 12:

30 *մարտ* 901, *Ֆիլիպպէ*

Սիրելի՛ք.

Մեր պարապմունքների մեծ մասը աւարտել ենք։ Գլխաւոր խնդիրներից մէկը — տաքտիկի խնդիրը — պարզուեց, որ մենք իրաւունք չունենք չօշափելու։ Միակ բանը, որ արինք այդ կէտի վերաբերմամբ՝ վերջին Ընդհանուր Ժողովի ծրագրած գործերի սահմանափակումն էր նիւթականի պայմանով՝ այն է վերակազմել որոշ ձեւով եւ որոշ անձնաւորութիւններից երկրի պատասխանատուների կազմը, երբ այդ կը ներեն մեզ մեր նիւթական միջոցները։ — Միւս երկար վիճաբանութիւնների տեղիք տուող հարցը — յայտնի միջոցներով դրամ ձեռք բերելու խնդիրն էր։ Ժողովը, մերժելով կազմակերպութեան անունից ընդունել այդպիսի մի վճիռ, ազատութիւն տուեց որոշ մարմնի փորձել այդ միջոցը ուրիշ համակիր մարմինների աջակցութեամբ։ — Ժողովին տուած տեղեկագրերը ընդհանուր առմամբ մխիթարական չէին։ — Քիյառը(1) *պատասխանեց մեր հարցերին տաքտիկի վերաբերմամբ։ Նա ցոյց է տալիս գործունէութեան որոշ տեղեր, որ անյարմար եմ համարում այստեղ յիշել, հաւատացած չլինելով, որ նամակներս Բոլղարիայի փոստում վտանգի չեն ենթարկուում։ Մակեդոնացիների հետ՝ ներկայ քաղաքական հանգամանքներում առաջարկուում է զգոյշ լինել գործնական քայլերում, որովհետեւ օտարները ուզում են որոշ ծրագրի ենթարկել այժմ մակեդոնա-*

կան շարժումը։ Այս բոլորի հետ նա առաջարկում է նաեւ, որ մեր բոլոր վճիռները այստեղ վերջնական չլինեն եւ պայմանաւորուեն Փարիզի մեր յայտնի բարեկամների սանկցիայով(2)։ *Ցանկութիւն էր յայտնել նոյնիսկ անձամբ այստեղ գալ եւ մեզ ու մակեդոնացիների հետ խօսել, բայց մենք նպատակայարմար չգտանք, մանաւանդ ի նկատի ունենալով մակեդոնացիների ներկայ տագնապը*(3)։

Այսօր կ'ուղարկեմ մի թղթակցութիւն Գերագոյն Կոմիտէի գլխին եկած փորձանքների մասին։ Լրագրերից այդ մասին դուք արդէն իմացած կը լինէք ի հարկէ։

«Դրօշակի» համար էլ կը բերեմ հետս մի բան այդ մասին կամ այդտեղ կը գրեմ։

Բօրիսին(4) *երէկ հեռագրեցի, որ սպասի ինձ։ Գալը արդէն ուշ էր։ Ցաւում եմ, որ Խաչատուրի*(5) *տւած հասցէն* (congrès des étudiants) *առաջ բերեց այսպիսի մի չփոթութիւն։ Միւնխէնից ինձ վերադարձրած նամակս եւ հեռագիրս կը բերեմ հետս։*

Ջերմ բարեւներով
Ձեր
ՔՐԻՍՏԱՓՈՐ

«Դրօշակը» դեռ չենք ստացել. այսօր ուրբաթ է — աւագ ուրբաթ, ձեզ մօտ ամսի 12-*ը։*

1.- Քիյառը գլխաւոր խմբագիրն էր Pro-Armenia-ի, որ սկսած էր լոյս տեսնել 1900 թ. Նոյ. 25ին, Եւրոպայի մէջ հայ դատի քարոզչութեան նպատակով:

2.- Հաստատումով, վաւերացմամբ:

3.- Ակնարկութիւն մակեդոնացիներու համագումարին կողմէ իրենց ղեկավար մարմնի մէջ եղած փոփոխութեանց, որոնց հետեւանքով չէր ընտրուած իրենց աւանդական ղեկավարներէն Բորիս Սարաֆովը:

4.- Բորիս ծածկանունն էր դաշնակցական գործիչ Սմբատ Խաչատրեանի:

5.- Խաչատուրը (Մալումեան) Է. Ակնունին է:

64

Մատեան No 85, *էջ* 496-7

4 *յունիս* 1901

Պ. Մխիթարին(1), *Գահիրէ*

Դեռ անցեալ տարւայ օգոստոսի 22-ին մենք գրել ենք Ձեզ հետեւեալը.

«Անկասկած յիշում էք, որ դեռ յունիս 8-ից գրած մեր նամակում ի միջի այլոց մենք դիմել ենք Ձեզ մի հարցով Վերակազմեալների բռնած ընթացքի մասին։ Մեր հարցին Դուք չպատասխանեցիք՝ առաջարկելով գոնէ մի ամիս եւս սպասել։ Այժմ երրորդ ամիսն է անցնում, եւ մենք չունենք Ձեզանից ո՛չ Ձեր խոստացած պատասխանը մեր հարցին եւ ո՛չ որեւէ բացայայտ տեղեկութիւն՝ բոլոր անցուդարձածից յետոյ՝ Ձեր բռնելիք ընթացքի մասին։ Սակայն մենք կ՚ուզենայինք դրութիւնը որոշ պահել եւ խնդրում ենք ցրւել այն մթութիւնը, որի մէջ գտնւում ենք։ Մենք չգիտենք, օրինակ, Դուք կարելի՞ էք համարում շարունակել բանակցութիւնները թէ ոչ. եթէ ոչ՝ ինչո՞ւ, ո՞ւմ պատճառով. եթէ այո՝ ի՞նչ շրջանում ենք գտնւում այժմ. արդեօ՞ք Ձեր արած առաջարկութիւնների en bloc(7) *պայմանը մինչ այժմ էլ մնում է իր ուժի մէջ թէ ոչ. արդեօ՞ք սպասում էք Դուք Ձեր առաջարկած պայմանների վերաբերմամբ հնչակեանների եւ «Դաշնակցութեան» պատասխանին թէ ոչ, եւն. եւն.»։*

Այդ մեր վերջին շատ որոշ հարցերին եւս Սեպտեմբերի 2-ից Ձեր գրած նամակում Դուք մեզ պատասխանեցիք հետեւեալ ընդհանուր խօսքերով.

«Գալով ձեր այն հարցին՝ թէ կարելի՞ համարում եմ բանակցութիւնները շարունակել, այսքանը կ"ըսեմ ձեզ, որ Եգիպտոս անոնց կարեւոր կեդրոն է եւ ուր դեռ անհնար չեմ տեսներ կոր օգտակար բան մ՚ընելու, բայց ոչ անմիջապէս։

Այդպիսով Դուք կրկին բացատրութիւն չտուիք մեզ, առաջարկելով էլի սպասել... թէեւ ահա լրացաւ ինը ամիս, բայց դեռ Ձեզնից մի տող անգամ չունինք, որից կարելի լինէր եզրակացնել՝ թէ մենք դեռ եւս մի մեռած հարցի շուրջը չենք գտնւում։ Այժմ նոյն խնդրի առթիւ երրորդ անգամը դիմելով Ձեզ՝ խնդրում ենք վերջապէս Ձեր պատասխանը մեր վերոյիշեալ հարցերին եւ այն մի ըստ միոջէ, եթէ կարելի է։

Ձեր նամակին կ՚սպասենք մի ամիս այս մեր դիմումից յետոյ եւ եթէ Ձեզնից որոշ պատասխան չստանանք, հարցը կը համարենք փակւած։

(կնիք Արեւմտեան Բիւրոյի)

1.- Մխիթար – Յովհաննէս Շահնազար, խմբագիր, անկուսակցական, միջնորդ Վերակազմեալ հնչակեաններու եւ Դաշնակցութեան միջեւ միութեան կամ համերաշխութեան:

65

Մատեան No 86, *էջ* 5

19 *յունիս* 1901

Միսակին(1), *Ֆրայբուրգ*

Սիրելի՛,

Յունիսի 4-*ից գրածդ ստացել ենք։ Շնորհակալ ենք «Նորընծային» գրածներիդ համար։ Միայն կրկնում ենք, ըստ կարելոյն նամակներումդ չեշտիր Բաղէշի հետ կապուելու մասին։ Դա մի կէտ է, որը անմիջապէս կարող է միաժամանակ օգնել թէ Վասպուրականի եւ թէ Սասունի գործերին։ Ի նկատի առ, որ այս վերջին երկու կէտերը, «կեդրոնացման վայրերի» շարքն են դասուել ընդհ. ժողովի կողմից եւ հետեւաբար ընթացիկ կազմակերպական հոգսերում նախապատիւ տեղ պիտի ունենան։*

Ուղարկում ենք քեզ Խարբերդի հասցէն, որ արդէն ստացել ենք։ Ահա դա՝

Պ. Տիգրան Պաղտիկեան

Եղէգի գիւղ

[Օսմաներէն-արաբատառ] — *Մամուրէթ-իւլ Ազիզ, Եղէգի գիւղ, Տիգրան Պաղտիկեան*

Միւս հասցէները երեւի դեռ ժամանակ պիտի պահանջեն։

Մասնաւոր նամակդ «Միութեան» նախագահի հասցէին յանձնուած է ըստ պատկանելոյն։

Ներփակ ծրարը խնդրում ենք նամակս ստանալուն պէս տեղիդ փոստին յանձնես. կարեւոր նամակ է, եւ չենք ուզում, որ Զուիցերիայից Ռուսաստան գնայ։

Ջերմ բարեւներով՝

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Միսակ Գույումճեան (1877-1913):

66

Մատեան No 86, *էջ* 8-9

6 *յուլիս* 1901

Ռոստոմին, Ֆիլիպպէ

Սիրելի!

Քու գրածները բոլորը ստացուել են։ Դու իրաւամբ կարող ես զարմանալ, որ այսքան ժամանակ քեզ նամակ չենք գրում. իսկ որ շատ ուշացրինք։ Եթէ կարող ես ներել՝ ներիր. եթէ ոչ՝ կ՚աշխատենք մի կերպ քաւել մեղքներս։

Ալթըբարմաքեանից(1) *մինչեւ այսօր մեզ ոչ մի դիմում չէ արուած — ի՞նչ արիր այդ մասին դու։ Վճիռը յայտնուած է, ...*(2)*, ժամանակ տրուած եւ այնպիսի մի պատասխան ստացուած, որ ոտից մինչ գլուխ պիտի մերժուէր։ Դու երեւի սպասում ես Մարտիրոսեանի խնդրի ելքին*(3)*, բայց լաւ չէ՞ր լինել, եթէ նախօրէն պաշտօնապէս իմաց տայիր իրեն, որ ոչ մի զիջում չի անուելու եւ թէ ձգձգելով հարցը՝ կը ստիպի միայն խստացնել Դ*[*աշնակցութեան*] *կոմիտէի որոշումը։*

Փարիզից ստացած քո դրամի մասին հեռագրեցինք արդէն, որ դա մեր ուղարկածը չէ եւ չը գիտենք որտեղից է։ Երեւի այժմ արդէն պարզել ես խնդիրը։

Ուզածդ 500 *ֆր. քեզ փոխադրել ենք փոստով. հեռագրով՝ ոչ մի կերպ չկարողացանք յաջողեցնել։ Երէկ էլ ուղարկեցինք կրկին* 500 *— Սեպուհին*(4) *հասցնելու համար։ Անշնորհքը երկու ամսից ի վեր մեզ հասցէ չէր ուղարկել Վառնայից եւ դրա պատճառով էլ ուղարկեցինք քեզ, որ նրան հասցնես։ Այդ բոլորը արդէն արուած էր, երբ այսօր Էլլէնը*(5) *մասնաւոր մի նամակ ստացաւ նրանից, ուր յայտնում է նա իր ամուսնութեան եւ Սուխում գալու ու այնտեղից Ոսկեհանք*(6) (*կնոջ հետ*) *գնալու մասին։ Այս նորութիւնը ի հարկէ չէր կարող փոխել մեր որոշումը, եւ դու դրամը իսկոյն իրեն կը հասցնես, որպէսզի նա կարգաւորի գործերը ինչպէս ուզում է։ Այսօր մեզնից մի քանիսը կը շնորհաւորեն նրան հեռագրով եւ այդ հեռագրում իմաց կը տանք* 500*-ի մասին։*

Արամը Բուրգազից գրել էր մեզ ի միջի այլոց, որ «Վիշապի»(7) *անունով մի կոչ հրատարակենք թերթում, եւ որպէսզի մինչ աշուն համարը տեղ հասնի (այսինքն Կովկասում ստացւի), այդ անենք հէնց հիմա յունիս-յուլիսի թուերում։ Յայտնիր այդ մասին քո կարծիքը։ Մենք աւելորդ ենք համարում, որովհետեւ նախ՝ այդ կոչը չի հասնիլ այն շրջաններին, որոնք ներկայ դէպքում մեզ հետաքրքրում են, եւ երկրորդ՝ չէ՞ որ կոչերից արդէն յոյսներս կտրել ենք...*

Ներփակում ենք մի նամակ Պոլսից. չգիտենք ո՛վ է - ի՞նչ է։ Ի՞նչ է կտրում։ Ուզում ես պատասխանիր. մենք ոչինչ չենք գրելու։

Պոլսի ուղարկած թղթակցութիւնը գնաց «Դրօշակի» 4րդ համարում։ Խնդրիր[?] *որ շարունակ գրի եւ անպատճառ։ Քիառն էլ*(8) *խնդրում է յանձնարարել, որ Պոլսից տեղեկութիւններ իմանան Բերդակում տեղի ունեցած նոր կոտորած-թալանների մասին։ Շեշտի՛ր ուրեմն յատկապէս եւ այս մասին եւ որքան կարելի է շուտ — հէնց նամակս ստանալուն պէս։*

Վահան Մանուէլեանի(9) *մօտ մնաց այդտեղ «Մուրճի» մի համար, որ բերել էր հետը Էլլէնը։ Որովհետեւ այստեղի ժողովածուն քայքայւած է, խնդրում ենք վերցնել նրանից այդ համարը եւ ուղարկել մեզ։*

Դու գրում ես, որ պէտք է շտապել՝ Կովկաս գնալու։ Նոր նամակ ստացանք Աշոտից, որ գրում է, որ Անտոնը(10) *այժմ յարմարւում է*[?] *կայացած որոշման (կարգապահութեան տեսակէտից), թէեւ ինք համաձայն չէ։ Ուրեմն երկիւղ կրել այնտեղի անհամաձայնութեան մասին՝ աւելորդ է։ Գնալ եւ պարապ մնալն էլ մի բան չէ։ Սակայն այս մասին կրկին կը գրենք քեզ (մասնաւորապէս մեր կողմից Էլլէնը գրէ) այս քանի օրերս։ Յամենայն դէպս մինչ քո եւ Էլլէնի միջեւ չկայանայ որոշ համաձայնութիւն, դու չշտապես ճանապարհւելու։ Գարօն*(11) *գնում է 2-3 օրեր յետոյ. նրան կը յանձնենք մի քանի հարցերի մասին խօսալ եւ ըստ այնմ մեզ հեռագրել գնալու մասին։*

Ո՞ւր է Թորգոմը(12)*։ Ի՞նչ է չինում։ Տղերքը (խումբը) գնացին արդեօ՞ք. ի՞նչ լուրեր ունես։*

Պոլիս գրիր տղերանց, որ հոգան մեր բանտարկեալների վրայ։ Տորքից(13) *սոսկալի նամակներ ենք ստանում, որ նկարագրում է թէ որքան են նրանք նեղւում եւ որքան են դժգոհ մեզանից։ Մենք մի քանի բաներ ենք ձեռնարկում նրանց դրութիւնը թեթեւացնելու համար։ Դու էլ տղերանց գրիր եւ դրամ ուղարկիր, թող նրանց հասցնեն։ Չես կարող արդեօ՞ք մի ազդու դիմում անել Օրմանեանին*(14)*, որ միջամտի։*

Բարեւներով
ԱՐԵՒՄՏ. ԲԻԻՐՕ

1.- Հարցը կը վերաբերի Պուլկարիոյ մէջ Դաշնակցութեան պահեստներէն զէնքերու գողութեան, որուն համար գլխաւոր մեղաւոր ճանչցուած էր Կարապետ Մարտիրոսեան, իսկ զէնքի վաճառական Ալբըբարմաքեանը՝ անտեղի կերպով կասկածուած իբրեւ անոր մեղսակիցը:

2.- Անընթեռնելի մէկ բառ:

3.- Տես թիւ 1 ծանօթագրութիւնը:

4.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):

5.- Էլլէն – ծածկանուն նամակագիր Քրիստափոր Միքայէլեանի:

6.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիրի:

7.- Վիշապ – ծածկանուն Կ. Պոլսոյ:

8.- Pro-Armenia-ի խմբագիր Պիեռ Քիյառ:

9.- Վահան Մանուէլեան – բուն անունով՝ Կարապետ Տողրամաճեան (1866-1904), Պուլկարիոյ գործիչներէն, որ երեք տարի ետք, իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչ պիտի ղեկավարէր Սասնոյ 1904 թ. ապստամբութիւնը եւ պիտի նահատակուէր այդ կռիւներու ընթացքին:

10.- Անտոն – ծածկանուն Սիմոն Զաւարեանի:

11.- Արմէն Գարօ (Փաստրմաճեան). խօսքը կը վերաբերի հաւանաբար անոր Թիֆլիս մեկնելուն:

12.- Թորգոմ – ծածկանուն Արտաշէս Սերեմճեանի (1870-1915), Պուլկարիոյ յեղափոխական գործիչներէն:

13.- Տորք – ծածկանուն Աշըգկէօզեան Յովակիմի, Դաշնակցութեան առաջին յեղափոխական գործիչներէն, որ 1898-ին Վանի մէջ ձերբակալուելով կը տարուի Պոլիս եւ կը դատապարտուի ցմահ բանտարկութեան: Աւելի քան 9 տարի կը մնայ Պաղեստինի Աքիա քաղաքի բանտը եւ ի վերջոյ, 1907 թ. Դեկտեմբերին կը մեռնի ի սպառ հիւծուած վիճակի մէջ:

14.- Մաղաքիա Արք. Օրմանեան, պատրիարք հայոց Կ. Պոլսոյ:

67

Մատեան No 86, *էջ* 15-17

29 *յուլիս* 1901

Ռոստոմին, Ֆիլիպպէ

Սիրելի !

Վերջին երկու նամակներդ (մէկը առանց թուի, միւսը՝ յուլիսի 11-*ից գրած) ստացուել են։*

Երէկ այստեղ Բաղիեվից(1) *լուր ստացանք, որ Մակեդոնիայում տեղի ունեցած ընդհարման ժամանակ սպանուել են՝ Մերջանով, Սօկալով եւ... Պետրոս*(2)*, ու երկու հայեր եւ երկու մակեդոնացիներ ձերբակալուել են։ Միթէ՞ լուրը ճիշդ է. միթէ՞ Պետրոսն էլ է մասնակցել խմբին։ Եւ ինչպէս էիր դու համաձայնուել դրան՝ քանի որ նա արդէն ընտրուած էր թեկնածու ուրիշ, աւելի կարեւոր եւ աւելի պատասխանատու գործի համար՝ այն ինչ այդ կարգի «գործերի» համար կարելի էր ուրիշ շատ մարդիկ, շատ ցանկացողներ գտնել։ Միւս կողմից նամակ ենք ստանում Նեվրուզից՝ գրած Աթէնքից։ Սա ի՞նչ բան է։ Շտապիր, ի սէր Աստուծոյ, շուտով իմացածդ մեզ հաղորդելու։*

Սեպուհին(3) *ուղարկած* 500 fr. *լաւ էր իրեն ուղարկել. թող կարգադրէր ինչպէս ուզում էր, իսկ Եգիպտոսի ընկերոջ մենք մտադիր էինք այստեղից ուղարկել։ Հիմա չգիտենք ինչ ես արել, որ նրան նայած՝ մենք էլ բան*

բռնենք։ Ինչ վերաբերում է P[ro] A[rmenia]*-ի օգտին երեկոյթից ստացած գումարին, դրան չպէտք է խառնել ոչ մի կերպ մեր ընդհանուր մուտքերի մէջ. պէտք է ճշտել գումարը եւ մակեդրոնական ընկերների-մասնակցողների դիտութեամբ մեզ ուղարկել կամ մեզնից ստացական պահանջել (եթէ, ի հարկէ, գումարը մեծ չէ, որպէսզի մենք կարողանանք իսկոյն փոխադրել նոյնքան Փարիզ՝ իբրեւ Ֆիլիպպէից ստացած)։ Ուշադրութիւն դարձրու այս «եթէ»-ի վրայ, որովհետեւ մենք էլ հարուստ չենք։*

Համբարձում Տնտեսեանը մեզ հարցրել էր՝ թէ ուր պիտի ներկայանայ ինք եւ խնդրել էր, ըստ կարելոյն, մօտիկ տեղ նշանակել։ Մենք, համաձայն քո ցանկութեան, պատասխանել ենք յունիսի 26-ին այսպէս.

«Ձեր 22 յունիսի նամակը ստացած ենք եւ՝ ի նկատի առնելով ձեր ցանկութիւնները, սորանով կը տեղեկացնեք Ձեզ, որ դուք կը հրաւիրուիք Ռուսչուք, երբ Դաշնակցութեան քննիչը այնտեղ կը գնայ»։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ալթըբարմագեանի գործը(4) *մակեդոնացիներին յանձնելովդ՝ խնդիրը երեւի միայն կաղայ։ Նրանք առհասարակ այժմ աւելի .....*(5) *քան առաջ։ Իսկ վերջին ժամանակները Փարիզում տեղի ունեցած մի կոնֆերանսի առիթով բաւականին անախորժ ընդհարումներ են տեղի ունեցել բուլղար ուսանողների եւ մեր բժշկի*(6) *մէջ։ Բադիեւ այդ միջոցին այդտեղ գտնուելով տարաբախտաբար ուսանողների հետ է ընթացել եւ մեր ընկերոջ արհամարհել է։ Մեր կարծիքով, մի առժամանակ պէտք է որոշ բեզերվով դրանց հետ վարուել, մինչեւ զանազան տարրեր կը մաքրուեն կամ մինչեւ մենք աւելի կը ճանաչենք մարդկանց։ Թէ ոչ՝ արդէն մի քանի տեղ լսել է դրանց խօսքեր* «արմիանէ վը խվոստ ունաս», «վը խվոստ մակեդոնցեվ»(7)։

Այդ տեսակ բաներից արդէն վատ հոտ է փչում. հարկաւոր է դրանց սովորեցնել որ մի փոքր աւելի յարգանքով վերաբերուել դէպի մի դատ, որ իր յետեւից հարիւր հազարաւոր զոհեր է տարել[?]։

Վերջին նամակովդ ուղած վկայականը ուղարկում ենք Լեապովի(8)։ *Այսուհետ կը գրես մի* reçu(9), *որով կը ստանաս այդտեղ շորեր. այդ շորերը նուիրեց այդտեղ մի տիկին (տիկին Ադամեան), որ այստեղ է ապրում իր սովորող երկու աղջիկների հետ, ... խնդրելով ուղարկել ուր ուզում ենք. չգիտենք՝ որքան մեծ բան է. երեւի մի քանի կտոր հին շորեր են։ Տուր այդտեղ «Շաքէին»*(10), *թող բաժանի աղքատ գաղթականներին կամ տայ կարմիր խաչին։ Ստացէք «Շաքէի» կողմից մի թուղթ, մի ստացական թէ մի շնորհակալագիր, ուղարկէք մեզ, որ իրեն յանձնենք։ Ծախսը վճարիր դու այդտեղ եւ գրիր մեզ՝ ինչ ես տուել. տիկինը մեզ կը վերադարձնի այդ գումարը։*

Ձը մոռանաս, խնդրում ենք, շարունակ շեշտել — ինչպէս գրել էինք այդ

մասին նախորդ նամակում — մեր Ծաղկի(11) *ընկերներին՝ թէ բանտարկեալ-ների մասին եւ թէ շուտ-շուտ թղթակցութիւններ եւ ամէն տեսակ նորու-թիւններ մեզ հաղորդելու համար։ .....*(12) *որ մի քանի օր առաջ Ռազգ-րադից*(13) *Արտաշէս (Սուրէն) Անդրէասեանի* (14) *եղբայր Սմբատ Անդրէաս-եանից՝ մի նամակ ստացանք, ուր նա խնդրում է իր մօրը նպաստ տալ՝ Պոլ-սում ապրելու կամ Բուլղարիա փոխադրուելու համար։ Այս քանի օրերս մենք կ՚ուղարկենք ուղղակի Պոլիս տիկնոջ անուան* 100 fr.։ *Ապահովութեան համար կ՚ուղարկենք* "Samoens"*-ից (Ֆրանսիա)* E. Babouchkine*-ի անունից եւ իբրեւ պարտք որ* Babouchkine*-ը պէտք է վճարէր Սմբատին։ Թող մեր ընկեր-ները իմաց տան, որ դա խմբագրութեան ուղարկած փող է եւ իմանան Ար-տաշէսի մօր դրութիւնը մանրամասնօրէն։*

«Մուրճի» համարը միթէ՞ կորաւ։ — Բաղիեվը այստեղ է եւ մոլորուած դրութեան մէջ. ինքն էլ չգիտէ՝ ինչ է անում. գուցէ, շուտով փորձի կրկին Սոֆիա գալ. բայց այս մասին ոչ ոքի ոչինչ մի ասիր դու։

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Մակեդոնացի յեղափոխական գործիչ, բարեկամ Դաշնակցութեան:

2.- Պետրոս Սերեմճեան, ծանօթ Պուլկարացի Պետո անունով (1874-1901), սպայի աստիճանով վկայուած Սոֆիայի զին. վարժարանէն, քաջասիրտ մարտիկ, մասնակցած ֆետայական մարտերու Ատրպատականի եւ Վանի մէջ. ապա վերադարձած Պուլկա-րիա, ուրկէ 1901-ի ամառը հայ եւ մակեդոնացի մարտիկներու գլուխ անցած կը մտնեն Թուրքիոյ սահմաններէն ներս. կռուի մէջ կը ձերբակալուի երեք ընկերներով (մէկը՝ հայ՝ Օննիկ Թորոսեան), ապա, 1901 թ. դեկտ. 9-ին կը կախուին Էտիրնէի մէջ: Հերոսն է «Վէր-քերով լի» ծանօթ երգին:

3.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):

4.- Ալթընբարմաքեանի գործը կը վերաբերի Պուլկարիոյ Դաշնակցութեան պահեստ-ներէն գողցուած եւ վաճառուած զէնքերու խնդրին:

5.- Անընթեռնելի մէկ բառ:

6.- Բժիշկը՝ Յովհաննէս Լոռու-Մելիքեանն է:

7.- Բնագրին մէջ ռուսերէն՝ «հայերը մեր պոչի վրայ են, մակեդոնացիների պոչի վրայ են»:

8.- Լեապով Գուրին – մակեդոնացի յեղափոխական դէմք, բարեկամ Դաշնակցու-թեան:

9.- Ֆրանսերէն՝ ստացագիր:

10.- «Շաքէ» – Ֆիլիպպէի կանանց դաշնակցական խումբ:

11.- Ծաղիկ կամ Կռուածաղիկ – ծածկանուն Կ. Պոլսոյ:

12.- Անընթեռնելի երեք բառ: Արդեո՞ք «պահանջկոտ են»:

13.- Քաղաք Գերմանիոյ մէջ:

14.- Արտաշէս Անդրէասեան (Սուրէն) – Պոլսոյ դաշնակցական յեղափոխական հին դէմքերէն, որոնք Խաչիկ Գնունիի եւ Արտաշէս Միսաքեանի հետ, Պանք Օթոմանի գրաւ-ման զուգահեռ, պիտի ղեկավարէին Սամաթիոյ կռիւները եւ հոն զոհուէին:

68

Մատեան No 86, *էջ* 22

1 *օգոստոսի* 1901

Փարիզ, պ. Մխիթարին(1)

Ստացել են Ձեր յունիսի 29-*ի եւ յուլիսի* 24-*ի նամակները։*

Նախ ուզում էք իմանալ՝ թէ ինչի համար է մեզ հարկաւոր Ձեր կարծիքը բանակցութիւնները բաց թէ փակուած համարելու մասին։— Դա մեզ հարկաւոր է մեր ընկերներին եւ առհասարակ խնդրով հետաքրքրուողներին բացատրութիւններ տալու համար։ Ուրիշ ոչինչ։

Գալով Ձեր առաջարկութեան՝ կրկին սպասել, պէտք է ասենք, որ մենք ամենեւին չենք հաւանում Ձեր մշտական ուղղութեանը՝ անվերջ ձգձգել եւ մթութեան մէջ պահել մի խնդիր, որ հասարակութեան սեփականութիւն է վաղուց ի վեր։ Այդ պատճառով էլ ահա յայտնում ենք Ձեզ, որ այսօրուանից մենք միանգամայն ազատ ենք համարում մեզ, երբ ուզենանք, ինքներս փակուած համարել Ձեր միջոցով սկսուած բանակցութիւնները։

Յարգանօք
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— «Հայրենիքի»(2) *թուերից ուղարկում ենք՝ ինչ ի հարկէ ունէինք, մնացածները ցրուած են ընկերների մէջ. յետ ստանալուց՝ կ՚ուղարկենք։ Ա. Վռամեանին (Օ*[*ննիկ*] *Դ*[*երձակեան*]) *կարող էք դիմել «Հայրենիքի» խմբագրութեան հասցէով։*

1.- Մխիթար – ծածկանուն Յովհաննէս Շահնազարի:

2.- «Հայրենիք» – պաշտօնաթերթ Ամերիկայի Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէի: Արշակ Վռամեան իբրեւ գործիչ արդէն կը գտնուէր Ամերիկա եւ կը վարէր «Հայրենիք»j խմբագրութիւնը:

69

Մատեան No 81-3, *էջ* 47-51 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

2 *օգոստ.* 901

Արեւելեան բիւրօյին

Սիրելի՛ք,

Ուրախութեամբ ստացանք Օհանեանի(1) *գրած երկու նամակները (մէկը յուլիսի* 4-*ից Օրտանսին, միւսը* 5-*ին մեզի)։ Ստացանք շնորհակալութեամբ նաեւ* 300 *ռուբլի։ Բագուից առ այժմ չենք ստացել* 1000-*ը։ Թերթի շուտ ստացուելու մասին շատ լաւ բան էք մտածել Ռաշտի*(2) *գիծը գտնելով. մենք արդէն ուղարկել ենք այդ գծով* 4-*րդ եւ* 5-*րդ համարները. միաժամանակ շատ լաւ կը լինի եթէ աշխատուէր Սեւ ծովի վրայ, բացի Բաթումից ուրիշ քաղաքներ էլ գտնել, օրինակ* Նովորոսիսկ(3), *ուր իւրաքանչիւր ամիս Մարսէյլից նաւեր կայ — 3 անգամ Մեսաժըրի Մարիտիմ եւ երկու անգամ* Օրեխ(4), *ու երբեմն նոյնիսկ աւելի։ Անշուշտ ծովեզերքում դրա նման ուրիշ տեղեր էլ կան, եւ շուտով մենք ձեռքի տակ կ՚ունենանք այդ բոլոր տեղերի ցուցակը. պէտք է այսուհետ մարդիկ ունենալ, ուր յարմար է։ Անպատճառ հարկաւոր է ուշադրութիւն նւիրել այդ գործին. Կովկասից արտասահման ընկնող ծանօթներ, ուսանողներ միշտ գանգատւում են, որ թերթը շատ քիչ է ստացւում Կովկասում։ Եթէ ունենանք շատ գծեր, այն ժամանակ մենք կ՚աւելացնենք քանակութիւնը։ Անշուշտ հարկաւոր է աւելացնել. ցաւալի է, որ մեր թերթի ամենամեծ մասը ցրւում է հայութեան թափթփուքների մէջ, արտասահմանեան գաղութներում եւ ոչ երկրում ու Կովկասում։*

Խարբերդի ժողովը տեղի է ունեցել եւ խրախուսող տպաւորութիւն է թողնում։ Ներկայ են եղել 5 *շրջաններից։ «Դրօշակ»ի* 5-*րդ համարի հետ կ՚ուղարկենք ձեզ թէ այդ ժողովի եւ թէ «կամքը» ներկայացնող մարմնու արձանագրութիւնները, աղով գրած*(5)*։ Հետամուտ եղէք Նաւահանգստից*(6) *ստանալու։*

Երիտասարդ թիւրքերից դժբախտաբար խելքներս բան չի կտրում։ Ամէն բանից երեւում է, որ նոյնիսկ համագումարը չի կայանալու, ուր մնաց մեր ուզած վճիռները ընդունեն։ Այդ առաջարկութիւններն էլ, որ արեցին, մեր ստիպմամբ եւ դրդելովն էր, թէ ոչ եզի գլուխները այդ էլ չէին մտածում։ Ինքներս նախաձեռնութիւնը չուզեցինք. թո՛ղ մի քիչ էլ համոզւեն իրենց անկարողութեան։ Գուցէ, յետոյ մենք մի բան անենք։

Առայժմ այդ անյարմար է, որովհետեւ հետեւանք չի ունենայ, բայց շատ ծախսեր կը պահանջի մեզնից։ Պէտք է երկար ճանապարհորդել գանազան

տեղեր, մասնաւոր կերպով համոզել, համաձայնութեան գալ եւ յետոյ միայն հրապարակի վրայ դնել խնդիրը, թէ ոչ՝ ներկայ հանգամանքներում ամէն մի դիմում նրանց՝ միայն գոհացում է նրանց ազգային փառասիրութիւնը եւ մեր թուլութեան եւ յուսահատութեան մի արտայայտութիւն է ընդունում,— արտայայտութիւն՝ որ լրբացնում է նրանց եւ պահանջկոտ է դարձնում դէպի մեզ։ Ցեղափոխականներ չկան, չկայ եւ համոզմունք. հասարակ ազգասէրներ են, որոնք մեծ մասամբ ներկայացնում են միմիայն պալատական «ազատամիտ» կուսակցութեան թափթփուքները։ Բոլորն էլ բղաւում են լոկ այն յոյսով, որ Համիդից յետոյ կը հաստատուի նոր ռէժիմ եւ այն ժամանակ իրենք ամբողջապէս կը հրաւիրուեն պաշտօնների։ Եւ որովհետեւ Համիդն էլ ու ծեր է եթէ չսպանուի՝ ինքը կը մեռնի շուտով։

Կարծում են, որ իրենց համար փայլուն օրերի գալուստը այնքան մօտ է, որ իրենք իրենց պէտք է հեռու պահեն թէ ըիսկից եւ թէ ազատամիտ փաշաների չսիրած գաղափարներից. այլ կերպ նրանք կը զրկուեն իրենց երեւակայութիւնը փայփայող անձնական հաշիւներից, յոյսերից — վաղուց են արդէն նրանք մերժում «հայկական դատը» իբր ուրոյն խնդիր. այժմ էլ դադարել են հային հայ, արաբին արաբ, ալբանացուն ալբանացի եւն անուանել, ու բոլորին մկրտել են «օտոմաններ» անունով. «Թուրքի թուրը միշտ կախուած կը լինի այն բոլորի վզին, որոնք չեն ընդունում այդ անունը եւ հետեւում են այնպիսի ընթացքի, որ տեղիք կարող է տալ դրսի միջամտութեան եւ վնասել թիւրքերի ամբողջութեան» — ահա ինչ լեզու են գործածում դրանք այժմ։ Ֆեդերալիստական կազմը ընդունելով իբր նպատակ, նրանք ի հարկէ յաջողութիւն կ՚ունենային այլազգիների մէջ նոյնիսկ իրենց տեսակէտից։ Բայց բոլոր այլազգիները կուռում են եւ ընդունակ են կռուելու, իսկ իրենք անընդունակ են կռուելու եւ չեն էլ ուզում կռուել (միջամտութեան տեղիք չտալու համար) կամ այնպիսի ֆանտաստիկ ծրագիրներ են առաջարկում, որ միայն ապշում ես... Անձնական կապեր այնուամենայնիւ պահում ենք շատերի հետ եւ վստահ ենք, որ ամենալաւ տարրերը դրանց մէջ եթէ մի օր ուզենան յարել հայերին՝ այդ «Դաշնակցութիւնը» կը լինի, որին նրանք կը դիմեն։

Շնորհակալ ենք շատ այն քաջալերական արտայայտութիւնների համար, որ ձեր եւ Բագուի ընկերների կողմից անում էք արտասահմանեան ձեր ընկերներին։

Շնորհակալ ենք եւ այն յիշատակարանների համար, որ մեզ պէտք է ուղարկէք, անչափ կ՚ուրախացնէք։ Երանի կազմակերպէք այդտեղ կանոնաւոր թղթակցութիւն մեզ հետ։ Լուրեր, տեղեկութիւններ երկրից, յիշողութիւններ, թղթակցութիւններ բոլոր դաւառներին պէտք է պարտաւորեցնել մեզ ուղարկել. Բացի «Դրօշակից» այժմ ունինք եւ P[ro] A[rmenia], *կ՚օգտուենք այդ բոլորից։ Տեղեկութիւններ պէտք է հաղորդել եւ տեղական կեանքից։ Էլ չենք ասում ամէնօրեայ երեւոյթների մասին, մենք ոչինչ չստացանք մեր ընկերներից նոյնիսկ այնպիսի հարցերի մասին, ինչպէս էր Գանձակի*

դէպքը եւ Մայիսի 1-ը Թիֆլիզում։ Սա մեր թոյլ կողմերից մէկն է, որի առաջ պէտք է առնել։

Օհանեանը գրում է, որ Սամսոնի համար պահած է իմ մի համարը։ Իբր Նիթրայի(7) հետ ուղարկած է. դա ոչ թէ Սամսոնի համար էր, որի հետ դուք էլ կարող էիք իմանալ, այլ Ստեփան Տէր-Զաքարեանցի, իմ մօրաքրոջ եւ ոչ թէ քրոջ որդի։ Նա հիանալի տղայ է եւ երեք տարի զինուորութիւն է արել։ Զգիտեմ, ուր է, կ՚իմանայմեր Լեւոնը։ Հարցրէք եւ գտէք նրան անպատճառ. շատ լաւ ուժ է, Գուրգէնի աշակերտը եւ ընկերն է եղել։ Եթէ համաձայնի՝ դա մի գիւտ կը լինի։

Էլլէնը գալուց առաջ խօսելու է թէպէտ — քանի դրա հետ եւ խօսք է անելու, որ եթէ մենք հրաւիրենք նրան՝ գայ Կովկաս։ Պարսկաստանից մեզ եկած նամակներին նայելով՝ այնտեղ ձեռնտու տրամադրութիւններ են նկատւում քրդերի մէջ։ Եթէ եկաւ, նրան մեզնից մէկը կը տանի Պարսկաստան՝ անձամբ քրդերի հետ տեսնուելու համար։

Այս քանի օրերս ուղարկում ենք Փարիզ Pro Arm[enia] խմբագրութեան հայկական պահանջների մի մինիմում, որը մի յատուկ պատգամաւորութիւն պիտի ներկայացնի Վալդեկ Ռուսօյին(8), իսկ աշնանը պէտք է կազմակերպւի մի ընդհանուր արշաւանք եւրոպական պարլամենտներում կուսակցութիւնների վրայ։ Մաղթեցէք յաջողութիւն։

Ռուսերէն ինչ հրատարակութիւններ որ գան ձեզ՝ տուէք դեադեւսկային(9)։ Այս բանն էլ, սիրելի Սմբատ(10), ստորագրիր եւ տուր նրան.....

--------- (11)

Ասա, որ սա այստեղի սոցիալ դէմոկրատների հասցէն է. թող տայ նրանց, ում յանձնում է գրքեր եւ յայտնի, որ այստեղից ուղարկւած է նրանց մեզ 2 փուլթ հրատարակութիւններ եւ որ անհամբեր սպասում են այստեղ նրանցից 1) դրամ, 2) թղթակցութիւններ եւ 3) հասցէ նամակների համար։ Փող թող ուղարկեն Սերգեեվի հասցէով, որը ստանալուն պէս կրկին կը ճանապարհի էլի 2 փուլթ։ Նախազգուշացրու, որ թւանշաններով բերած հասցէն պէտք է գրւի գերմաներէն։

Գարօն(12) այդտեղ է. տեղեկութիւններ կ՚իմանաք։ Սեպուհն(13) էլ կնոջ հետ Սոխում է. գալու է Բաթում. աշխատէք տեսնուել հետը, իսկ եթէ հարկաւոր համարէք, պահէք մինչ Ռոստոմի եւ Էլլէնի գալը. գուցէ փոխենք նրա մարշրուտը։

Գալիս է այստեղից «Հայ Գուսանը»(14). դրան անդադար յիշեցրէք թէ իր շրջանից տեղեկութիւններ մեզ ուղարկելու (սահմանին մօտ է) եւ թէ իր սկսած երգերը «Դրօշակում» շարունակելու համար։

Համբոյրներով
ԱՐԵՒՄՏ. Բ[ԻՒՐՕ]

Էլլէնը 40 օրից կը ճանապարհւի այստեղից։

1.- Օհանեան կամ Սմբատ Օհանեան – ծածկանուններէն մէկը Սիմոն Զաւարեանի:
2.- Հիւս. Իրանի քաղաքներէն:
3.- Բնագրին մէջ ռուսատառ:
4.- Բնագրին մէջ ռուսատառ:
5.- Այսինքն՝ գաղտնի թանաքով գրուած:
6.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:
7.- Նիթրա – ծածկանուն Յարութիւն Շահրիկեանի:
8.- Ֆրանսացի քաղաքական գործիչ (1846-1904). Ֆրանսայի վարչապետ 1899-1902 տարիներուն:
9.- Բնագրին մէջ ռուսատառ՝ հօրեղբօր:
10.- Նոյնինքն Սիմոն Զաւարեանը:
11.- Մէկ տող կիտաւոր, բաց ձգուած, հաւանաբար ստորագրութեան համար ուղարկելի գրութեան փոխարէն:
12.- Խօսքը կը վերաբերի Գարեգին Փաստրմաճեանին, ծանօթ Արմէն Գարօ ծածկանունով:
13.- Սեպուհ – ծածկանուն Պանք Օթոմանի գրաման ղեկավարներէն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):
14.- «Հայ-Գուսան»ը Աւետիք Իսահակեանն է, որ այդ ծածկանունով կը ստորագրէր «Դրօշակ»ի համարներուն մէջ լոյս տեսնող հայրենասիրական իր բանաստեղծութիւնները:

70

Մատեան No 86, *էջ* 22-*ի եւ* 27-*ի միջեւ*

August 9, 1901

Mr. Jerome Raymond, Paris

My dear friend,

We attend you about the 20th of august. We know some of the "Young Turkey" party. When you are here, you will have the occasion to see some of them.

Our friend, Dr. Melikoff is recommended to deliver you the books.

For instant we send you some pictures. We regret very much that we have no more. One of our acquaintance has promised to send us some slides regarding Armenia. Unfortunatly we did not obtain them. You can rigorously use the book pictures.

If, till you will be here, our friend would send us the slides, it will be very good; moreover we will have to show you other photographs more or less interesting.

Hoping to see you again, with kindest regards

Cordially yours
MIKAELIAN

Թարգմանութիւնը.—

օգոստոս 9, 901

Պ. Ժերոմ Ռէյմոնդին, Փարիզ

Սիրելի բարեկամ(1),

Ձեզ կը սպասենք օգոստոս 20-*ի ատեները։ Կը ճանչնանք «Երիտասարդ Թուրքիա» կուսակցութենէն քանի մը հոգի։ Երբ հոս ըլլաս, առիթ պիտի ունենաս տեսնելու անոնցմէ ոմանց։*

Յանձնարարած ենք մեր բարեկամ դոկտ. Մելիքովին(1), *որ ձեզի յանձնէ գիրքերը։*

Առայժմ կ'ուղարկենք քանի մը նկարներ։ Կը ցաւինք չափազանցօրէն, որ աւելի չունինք։ Մեր ծանօթներէն մէկը խոստացած էր ուղարկել Հայաստա-

նի վերաբերեալ քանի մը մոգական պատկերներ։ Դժբախտաբար չենք ստացած զանոնք։ Կարող էք, ի հարկէ, օգտագործել գրքին նկարները։

Շատ լաւ պիտի ըլլար եթէ մինչեւ ձեր հոս գալը մեր բարեկամը ուղարկէր մոգական պատկերները։ Այսուհանդերձ ձեզի ցոյց պիտի տանք առաւել կամ նուազ հետաքրքրական լուսանկարներ։

Ձեզ վերստին տեսնելու յոյսով, յարգանօք եւ սիրով՝

Ձերդ
ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Ծ. խմբ.– Նամակի լուսանցքին վերեւ, հասցէատիրոջ մասին Քր. Միքայէլեան կու տայ հետեւեալ ծանօթութիւնը.– *Չիքակոյի համալսարանի պրոֆեսոր. համակիր մեզ եւ պատրաստ ամէն կարգի ծառայութիւնների: Հասցէն՝ Չիքակօ, համալսարան:*

1.- Ծանօթ Յովհ. Լոռու-Մելիքեանն է:

71

Մատեան No 86, *էջ* 31

13 *օգոստ.* 1901, *Ժընեւ*

Յարգոյ Աչըգկէօզեա՛ն,

Ստանալով Ձեր եւ մեր սիրելի ընկեր Յովակիմի(1) *նամակները, այսօր փոստով ուղարկեցինք Ձեր հասցէին հարիւր* (100) fr., *որը խնդրում ենք հասցնել շուտով Յովակիմին։*

Փոխադրելով նրան այդ գումարը, միաժամանակ, խնդրում ենք, հասցը-ըէք նրա անձնական հասցէն Աքիայում, որպէսզի մենք կարողանանք հար-կաւոր դէպքերում օգտւել այդ հասցէից։

Յարգանօք՝
Խմբագրութիւն

1.- Յովակիմ Աչըգկէօզեան (Տորք) – Պաղեստինի Աքիա քաղաքին մէջ բանտարկեալ. տես 6 Յուլիս 1901-ի նամակի թիւ 13 ծանօթագրութիւնը, էջ 154:

72

Մատեան No 86, *էջ* 32

Ժընեւ, 13 *օգոստ.* 901

Պ. Սմբատ Անդրէասեանին, Ռազգրադ

Յարգելի պ. Սմբա՛տ,

Համաձայն Յունիսի 28-*ից Ձեր գրած նամակին՝ մենք փոխադրեցինք Ձեր յարգելի մօր հասցէին ուղղակի Պոլիս* 100 (*հարիւր*) fr.։

Դորա հետ միասին հարկաւոր ենք համարում Ձեզ հաղորդել, որ ապահո-վութեան համար՝ յիշեալ գումարը ուղարկւած է Ֆրանսիայի Սամօէնս քա-ղաքից (Haute Savoie – Samoëns) *տիկին Բաբուշկինի անունից եւ իբրեւ պարտք, որ յիշեալ տիկինը պիտի վճարէր Ձեզ։*

Երբ նրանից այդ մասին տեղեկութիւն կ՚ստանաք, խնդրում ենք չզլանաք մեզ եւս հաղորդել։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

73

Մատեան No 86, *էջ* 44

ԾՐԱԳԻՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.- *Գաւառի կամ ազգաբնակութեան (հայ, թիւրք եւայլն — առանձին). ազգաբնակութեան սովորական զբաղումները եւ դրանց ներկայ դրութիւնը. հունձքերի վիճակը. տուրքերի տեսակները եւ հաւաքումը. երթեւեկի ազատութիւնը։*

2.- *Հարստահարութիւններ, սպանութիւններ, բռնաբարութիւններ, առեւանգումներ — միշտ անուններով, թւականներով, տեղեկագրական ճիշդ ծանօթութիւններով եւ դէպքերի մանրամասնութիւններով։*

3.- *Օտար ցեղերի բռնած դիրքը դէպի հայերը եւ դէպի կառավարութիւնը։*

4.- *Գաղթականութիւն եւ պանդխտութիւն։*

5.- *Կրօնափոխութիւն — կամաւոր եւ ստիպողական — դէպքերի մանրասներով։*

6.- *Կառավարութեան ձեռքով հայաբնակ վայրերի մէջ մահմեդական տարրեր լցնելը։*

7.- *Քաղաքական բանտարկեալների թիւը, անունները, նրանց վիճակը բանտերում եւայլն։*

8.- *Ձեռք բերել գաւառական քահանաների, փոխանորդների կամ առաջնորդների տեղեկութիւնները (ժողովրդի դրութեան եւ կառավարութեան ճնշումների մասին)։*

9.- *Աշխատել ձեռք ձգել նաեւ կառավարութեան գրաւոր հրահանգներ եւ պաշտօնական ամէն տեսակ թղթեր։*

10.- *Արձանագրել մանրամասնօրէն յեղափոխական բնաւորութիւն կրող եւ կեանքում արտայայտուած իւրաքանչիւր երեւոյթ, դէպք եւայլն։*

11.- *Արտասովոր դէպքերի եւ դրութիւնների մասին հեռագրով հաղորդել։*

74

Մատեան No 86, ***էջ*** 46

Այս ձեւի հրահանգ նախորդ ծրագիրների հետ միասին (էջ 44, 45) տուած են 1) Պզտիկեանին (Կիլիկեանց) Ադանա գնալիս եւ 2) Խրիկեանին, որ Տիւրիկ պէտք է գնայ:

1.- *Հաստատել, դիտել, գաղափար կազմել շրջանի յեղափոխական տրամադրութեան մասին եւ տեղեկագրել մեզ։*

2.- *Կազմակերպել կանոնաւոր աշխատասիրութիւն* «Pro-Armenia»*-ի եւ* «*Դրօշակ*»*ի համար — թէ տեղից եւ թէ շրջանակներից։*

3.- *Ձեռնարկել կազմակերպութեան — տեղական կոմիտէի եւ դրամական խմբերի։*

4.- *Սկիզբ դնել մարտական-մարզական խմբերի։*

5.- *Առանձին ուշադրութիւն նուիրել զէնքի խնդրին. ա) Կա՞յ արդեօք (եւ ի՞նչ տեսակի ու քանակի) զէնք տեղական ժողովրդի ձեռքին, բ) կարելի՞ է տեղումը գնել եւ ի՞նչ գնով (չերքէզների, թիւրքմէնների, արաբների, յոյների, հրեաների միջոցով) գ) չկա՞ն արդեօք արհեստանոցներ, որոնք հին ձեւի հրացաններ կարողանային փոխել արագաձիգների, դ) կա՞յ արդեօք դրանից ստանալու կարելիութիւն։*

6.- *Կապուել հարեւան կէտերի եւ Լեռնավայրի կենտրոնական կոմիտէի հետ։*

7.- *Հասցէ, ծածկագիր եւ դեղ տուած է։*

8.- *Շրջանի մանրամասն քարտէզ, ուր նշանակուած լինեն բոլոր հայաբնակ վայրերը եւայլն։*

75

Մատեան No 86, *էջ* 50

Ժընեւ, 1 *սեպտեմբեր* 901

Գալֆայեանին(1), *Ալէքսանդրիա*

Սիրելի ընկե՛ր,

Նամակս ներկայացնող պ. Կիլիկեանցը(2) *մեր բարեկամն է։ Խնդրում ենք ծանօթանալ հետը եւ տալ իրեն Ադանայի մեր ընկերոջ անունը եւ հասցէն, որ հարկաւոր է իրեն մի որոշ գործի համար։ Մանրամասնութիւնների մէջ չենք մտնում։ Նայած հանգամանքներին՝ նա գուցէ ինքը պատմի ձեզ իր անելիքի մասին. բայց եթէ հարկաւոր չգտաւ այդ անել ինքը, խնդրում ենք չհետաքրքրւել եւ բաւականանալ լոկ մեր խնդիրը կատարելով։*

Վերջին անգամ Ձեր ուղարկած նամակը Ադանայից (27/10 *յուլիս*) *ստացել ենք։*

Ձերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

1.- Գալֆայեան Յարութիւն (1870-1915), Լեռնավայր-Կիլիկիոյ հին գործիչներէն, որ Եգիպտոս անցած էր եւ քանի մը տարի ետք պիտի հրաւիրուէր Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյի եւ «Դրօշակ»ի խմբագրութեան գործավարութիւնը ստանձնելու:

2.- «Կիլիկեանցը» ծածկանուն է, բուն անունով Պզտիկեան Զաքարիա, բժիշկ, որ այնուհետեւ Կիլիկիոյ յայտնի գործիչներէն մէկը պիտի ըլլար:

76

Մատեան No 86, *էջ* 51-52

Ծայրայեղ վատ վիճակի մէջ հասած գրութիւն, գունաթափ մանաւանդ երկրորդ էջը, ինչ որ տեղ-տեղ անընթեռնելի կը դարձնէ նամակը: Աշխատած ենք ըստ կարելւոյն վերականգնել Քրիստափորի այս գրութեան պատճէնը:

Ժընեւ, 7(?) *սեպտեմբ*. 901

Ռոստոմին, Ֆիլիպպէ

Սիրելի !

Պատասխանում ենք վերջին չորս նամակներիդ (30/13, 3/14, 7/20, 13/26). *«Շաքէ»-ի կողմից մի ընկալագիր կամ շնորհակալութեան մի թուղթ ուղարկիր տիկին Ադամեանի անւան, որ հաշւի հետ ներկայացնենք։*

Բաֆֆու գրքերը Ծաղիկ(1) *ուղարկելու համար գրել ենք Լոնդոն. մէկ էլ կը գրենք։*

Հարցնում ես ուսանողական մի փոքրիկ ընկերութեան մասին, որ նամակագրոշմներ է ժողովում։ Դա մի քանի ջահել տղերք են, մեծ մասամբ սրբեր, որոնք գերմանական Զուիցերիայի դպրոցներում խնամւում են տեղական բարեգործների միջոցներով. բոլորն էլ մոլեռանդ դաշնակցականներ են եւ իրենց հետ միացնելով 5-6 *գերմանացի իրենց ընկերներին՝ կազմել են* Armenia Liberanda *մի խումբ, որ դրամ է ժողովում, հրացանաձգութեան է վարժեցնում իր անդամներին եւայլն։ Դժւար է ասել՝ թէ ինչ դուրս կը գայ դրանից. բայց անշուշտ կը տայ մեզ անհատ-գործիչներ։ Ցամենայն դէպս դրոշմներ կարելի է ուղարկել, նոյնիսկ, եթէ ունէք, պէտք է ուղարկել. թո՛ղ չսառեն այդ համակրելի երիտասարդ-պատանիները, թէեւ մի փոքր թեթեւսոլիկ։*

Սրա հետ ուղարկում ենք «եւրոպական ուսանողական միութեան» ծրագիրը, որ վաղուց է տպւած (*հէնց մենք ենք տպել մեզ մօտ*)։

Զէնքի կորուստին վերաբերեալ թղթերը դեռ չենք նայել. եթէ բան լինի Տնտեսեանի եւ Լեւոնի մասին — կը հաղորդենք։ Ի դէպ, «Իրաւունքի» մէջ անցեալները առաջնորդող կար՝ «Վարագոյրի ծայրը», թէ ինչ՝ մի այսպիսի վերնագրով. դա անշուշտ, «Դրօշակում» մեր տպած յայտարարութեան արդիւնքն է։ Եթէ չես տեսել, հետաքրքրւիր։

Վերակազմեալների մէջ եղած փոփոխութիւններից,
հետեւեալների
1) *խմբագրութեան անդամ*
2) *«Նոր Կեանքը» կը լինի միակ հրատարակութիւնը կուսակցութեան.*
3) *Արգուեանը հրաւիրում էք վարչութեան անդամ.*
4) *«Նոր կեանքի» համար հրաւիրած ..... Պարթեւեանը*
(«Վաղուան Ձայնի» խմբագիրը .....
աշխատակցել։

«Նոր Կեանքը» ծայրայեղ յեղափոխական գոյն է ստանում։ .....
Մխիթարը դեռ չէ յուսահատւել իր .....
ժողովից ..... այստեղից դիմեցինք .....
ժամանակ չէ՞ արդեօք խնդիրը փակւած համարել
դրանից յետոյ մենք յայտնեցինք, որ մեզ վերապահում ենք մի բան,
երբ ուզենանք, ինքներս խնդիրը փակւած համարել .....
տալ անցած-դարձածի մասին։ Դրան պատասխանեց, որ ինքը դեռ երկու ամիս եւս պիտի հետաքրքրւի եւ զբաղւի այդ հարցով։ Եթէ ժամանակամիջոցից յետոյ էլ չհասնի արդիւնքի եւ յուսահատւի, այն ժամանակ ինքը պարտք կը համարի անձամբ հաշիւ տալ հասարակութեան՝ եղած բանակցութիւններ-ի մասին (երկու ամիսը դեռ չէ լրացել)։ Մեր կողմից ներկայ հանգամանքներում որեւէ քայլ անել այդ խնդրի, մանաւանդ կոնդրէի եւայլն խնդիրներ-ի մէջ բերելը — միանգամայն աննպատակայարմար կը լինէր։

Ադրիանապոլսի թղթակցութիւնը չնորհակալութեամբ ստացանք։ Թէեւ ուշ էր եւ մենք արդէն քո նամակներից կազմել եւ շարել էինք տւել մի բան, բայց քանի որ եկաւ, մեր գրածը քանդել [?] *ենք։*

Ներփակ նամակը ուղարկիր Ծաղիկ. գրւած է մեր կողմից մի խնդրի մասին — այն է Ծովափում (2) 15 *տարւայ բանտարկութեան դատապարտւած մեր ընկեր Տաշրացու*(3) *մասին. պէտք է այդ առթիւ տեսնւել փաստաբանի հետ։ Նամակը հէնց մենք գրեցինք, որ չուշանայ գայ։*

Գիսակը(4) *ուզում էր կապւել Ծաղկի հետ։ Ուղարկեցինք Կօշի*(5)։ *Եթէ Վրէժից*(6) *նամակ գայ Կօշի հասցէին՝ գրած Ծաղկի համար — դա Ծաղկի համար գրել է Գիսակը։*

1.- Ծաղիկ – ծածկանուն Պոլսոյ:
2.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոնի:
3.- Տաշրացի – ծածկանուն Տրապիզոնի կուսակցական գործիչ Վրէն Գասպարեանի:
4.- Գիսակ – ծածկանուն Յովհաննէս Սերենկիւլեանի, որ այդ օրերուն Ատրպատականէն անցած է Վան:
5.- Կօշ – հաւանաբար խօսքը Անտոն Գոշի մասին է (Պոյաճեան):
6.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի (Թաւրիզ):

77

Մատեան No 86, *էջ* 78-85

Քրիստափորի խիստ կարեւոր եւ միեւնոյն ատեն հետաքրքրական այս նամակը ուղղուած է Դժոխք-քաղաք Կռունկին. Կռունկը ծածկանունն էր Սղերդ քաղաքի, իսկ Կռունկը՝ տեղւոյն կուսակցական գործիչներէն Արշակ Իգիտեանի: Շրջանի կազմակերպութեան, մօտակայ Սասնոյ եւ Մշոյ հետ յարաբերելու եւ, Միջագետքի Բաղդադ քաղաքի միջոցաւ Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյի հետ մշտատեւ յարաբերութեան մէջ գտնուելու խորհուրդներուն առընթեր, Քրիստափոր կը յորդորէ շրջանին՝ կապ ստեղծելու քրտական այն շրջանակներուն հետ, որոնք հայութեան նկատմամբ ցոյց կու տային բարեկամական տրամադրութիւններ:

Այլապէս հետաքրքրական են թուանշային (շիֆրէ) ծածկագրով աղիւսակը եւ անոր գործածութեան մասին տրուած բացատրութիւնները: Ի դէպ, այդ աղիւսակը՝ բոլորովին տժգոյն պատճէնահանումով՝ կարելի պիտի չըլլար վերականգնել, եթէ մեր հաւաքածոյին մէջ չունենայինք անոր հարազատ մէկ օրինակը:

Քրիստափորի այս երկար նամակին պատճէնը, շահեկան իր կազմակերպական եւ խորհրդապահական երեսներով, այսուհանդերձ, խոցելի է իբրեւ որակ, որովհետեւ թիւ 86 մատեանի մէջ պահուած անոր պատճէնը (իսկականը ըստ հրահանգի՝ պատռուած-այրուած ըլլալով) վատորակ վիճակի մէջ կը գտնուի եւ անոր վերծանումը մէկէ աւելի դժուարութիւններ կը յարուցանէ: Ամբողջութիւնը սակայն հասկնալի է: Արձանագրած ենք տեղ-տեղ բոլորովին սպիտակ մնացած տողերու թիւը. անընթեռնելի բառերը նշուած են բազմակէտերով:

9 *Հոկտեմբերի* 901

Կռունկին, Դժոխք-քաղաք

Սիրելի ընկե՛ր,

Անհուն շնորհակալութեամբ ստացանք ձեզնից Բաղդ[ադ]ի միջոցով, 1) *առաջնորդական նամակների քաղուածքները,* 2) *Տեղեկագիրը եւ* 3) *Զանազան լուրերը։ Առաջնորդական նամակները արդէն տպւում են Պրօ-Արմէնիայի մէջ, Տեղեկագիրը եւ լուրերը, Երկրէն գրած վերնագրի տակ կը տպւեն թերթին մէջ — Առաջնորդին* [Չորս տող անընթեռնելի]:

Գալով ձեր «խնդիրներ եւ առաջարկներին», ահա մեր ասելիքները.

«Դրօշակի» համարներից կանոնաւոր կերպով կ՚ուղարկենք ձեզ 2-2 օրինակ, ինչպէս նաեւ ուրիշ հրատարակութիւններ (հայերէն, թիւրքերէն եւ քրդերէն), ըստ կարեւորութեան։ Խնդրում ենք միայն՝ տաճկերէն եւ քրդերէն թերթերը չտարածէք նախ քան նրանց .....

[Երեք տող անընթեռնելի]

մեր դատի համար աննպաստ յօդուածներ են տպում անպիտանները։

Պրօ-Արմէնիայի բաժնեգինը հարկաւոր չէ մեզ ուղարկել. դանձեցէք ի նպաստ տեղական կոմիտէի։

«Դաշնակցութեան» անդամ կոչւում է իւրաքանչիւր հայ, որ ընդունելով մեր ուղղութիւնը եւ գործունէութեան ծրագիրը, մտնում է որեւէ տեղ դաշնակցական մարմնու մէջ — դրամական խմբի, ենթակոմիտէի, կոմիտէի, մարտական խմբի եւայլն եւայլն։ Հետեւաբար այդ հարցի վերաբերեալ որոշումներ իւրաքանչիւր տեղում կախումն ունեն նոյն տեղի գործիչներից կամ կոմիտէից։

Սասունի նման մի գործող մասնաճիւղ ձեր կողմերում հաստատելու առաջարկը, պէտք է թողնել ապագային. երբ ժամանակի ընթացքում դուք կը կապւէք Սասունի եւ Բաղէշի հետ, այն ժամանակ խորհրդակցելով այնտեղերի մարմինների հետ, համաձայն տեղական պէտքերին եւ յարաբերութիւններին, կ՚ընդունէք այս կամ այն որոշումը։

Մեհմէդ աղայի հետ յարաբերութիւններ մշակելու ձեր միտքը միանգամայն համապատասխանում է «Դաշնակցութեան» ուղղութեանը։ Մենք արդէն ուղարկել ենք ձեզ Բէդէրխան-բէյի որդի Աբդիւրահմանի մի կոչը (քրդերէն եւ տաճկերէն), որը գրւած է յատկապէս մեր թելադրութեամբ եւ ուղղուած է քիւրդ ցեղապետներին։ Այսօր էլ ներփակ ուղարկում ենք Աբդիւրահմանի մի սեփական ձեռագիր նամակը Աղայէ Սօրին։ Այդ երկու թղթերով անձամբ ներկայացէք իրեն, խօսեցէք հետը, ծանօթացէք նրա հիմնական հայեացքներին, իմացէք թէ ինչ աջակցութիւններ կը սպասեն հայերից եւ ի վերջոյ պարզեցէք ձեր ակնկալութիւնները, ուզածները նրանից։ Կարծում ենք, որ տեղիք չի ունենայ հաւատով չվերաբերելու դէպի ձեզ. մնացածը կախումն կ՚ունենայ ձեր շրջահայեացութիւնից եւ աչալրջութիւնից։ Ցամենայն դէպս պէտք է զգոյշ լինել առանձին խոստումներ չտալու հայերի կողմից։ Քանի որ դեռ եւս այդտեղ չունենք որեւէ շօշափելի ուժ, ամէն մի էական կամ դժւար իրագործելի խոստում կարող է ապագայում միայն հիասթափութիւն պատճառել այն մարդուն, որ բնաւ ցանկալի չէ։ Եթէ հարկաւորւի, կարող ենք «Հ. Յ. Դաշնակցութեան» կողմից եւս մի դիմում ուղարկել աղային. առայժմ նպատակայարմար չհամարեցինք անել այդ՝ մինչ որեւէ չափով կը պարզւեն ձեր յարաբերութիւնները նրա հետ։ Ի

հարկէ, չէք յապաղի անցած-դարձածի մասին մանրամասն տեղեկագրել մեզ։

Տեղումդ կոմիտէ հիմնելու խնդրին վերաբերեալ ցուցմունքները կը գտնէք մասամբ Ձեզ ուղարկուած «ընդհանուր ժողովի ատենագրութիւններից», մանաւանդ 12-13-14 էջերից։ Ձեզ համար մութ կէտեր չթողնելու համար մենք կ'աւելացնենք. ա) Կռունկը կամ ..... կը ներկայանայ, Արեւմըտեան Բիւրոյի յանձնարարութեամբ, Կոմիտէ կազմակերպող պատւիրակ. բ) կետրոնական կոմիտէ ..... համար, որ կը հաստատւի ապագայում, իսկ առայժմ, համաձայն 13րդ էջի, 10րդ ծանօթագրութեան, յարաբերութիւն կ'ունենայ արեւմտեան [?] բիւրօ-ի հետ .....

Կոմիտէի գլխաւոր պարտականութիւններն են.

1) *Եռանդուն պրոպագանդ մղել յօգուտ յեղափոխական գաղափարի ընդհանրապէս եւ մասնաւորապէս յօգուտ «Հայ Յեղափ. Դաշնակցութեան» սկզբունքների եւ գործունէութեան ծրագրի (եղանակի).*

2) *Կազմակերպել դրամական խմբեր*

3) *Կազմակերպել զինամարզական-մարտական խմբեր տեղում եւ շրջակայքում ու զինել դրանց.*

4) *Ղեկավարել տեղական յեղափոխական իւրաքանչիւր ձեռնարկ.*

5) *Աջակցել շրջանի Կետր. կոմիտէի կամ Պատասխանատու Կետր. կոմիտէի բոլոր ձեռնարկներին.*

6) *Մշակել յարաբերութիւններ օտար տարրերի հետ.*

7) *Երկրի վիճակի մասին կանոնաւոր թղթակցութիւններ մատակարարել «Դաշնակցութեան» հրատարակութիւններին.*

8) *Պահել տեղական մուտքի եւ ծախսի կանոնաւոր հաշիւները եւայլն՝ ըստ «Ատենագրութիւնների».*

9) *Կազմել շրջանի մանրամասն աշխարհագրական քարտէզը, ուր նշանակւած լինին բոլոր հայաբնակ տեղերը եւայլն։*

Կարեւոր ենք համարում այս կէտերից 2րդի, 3րդի եւ 7րդի վերաբերեալ մի քանի լրացուցիչ բացատրութիւններ տալ։

<u>Դրամական խմբեր.</u> դրամական խմբեր կազմում են «Դաշնակցութեան»

համակիր անհատներ, որոնցից իւրաքանչիւրը կանոնաւոր կերպով որոշ ամսավճար է նուիրում կազմակերպութեան։ Դրամական խմբերի թիւը միեւնոյն տեղում (քաղաքում, գիւղում) չէ սահմանափակւած, բայց իւրաքանչիւր խմբի անդամների թիւը սահմանափակւում է ըստ տեղական յարաբերութիւնների եւ գաղտնապահութեան պահանջների։ Դրամական խմբերը կարող են աւելացնել իրենց նիւթական միջոցները նաեւ միանւագ նւէրներ ժողովելով ու վիճակախաղեր կամ երեկոյթներ կազմակերպելով։

<u>Զինամարզական-մարտական խմբեր</u> — Կոմիտէն պէտք է ամէն կերպ ջանայ տեղական երիտասարդներից կազմակերպել զէնք գործածելու ընդունակ խմբեր, պատրաստ հարկաւոր ժամանակ ամէն տեսակ գործերի դուրս գալու։ Անհրաժեշտ է հրացանաձգութեան յատուկ վարժութիւններ անել նրանց հետ եւ շատացնելով այդպիսի խմբերի թիւը՝ ստւարացնել ու ծաւալել գաւառի յեղափոխական կռւող ուժը։

Տեղական-զինամարզական-մարտական խմբերի կոչումն է՝

ա- Ծառայել ժողովրդի պաշտպանութեանը ամէն կարգի յարձակումների, թալանների եւ աւերումների ժամանակ։

բ- Պատրաստ լինել շրջանի Պատասխանատու մարմնի ձեռնարկներին մասնակցելու՝ ըստ իրա պահանջման։

գ- Կետրոնական կոմիտէի հաւանութեամբ եւ ըստ որոշման տեղական կոմիտէի՝ տերրորներ կատարել թիւրք թէ հայ, պաշտօնական թէ անպաշտօն անձնաւորութիւնների վրայ։

դ- Այնպիսի ասպատակութիւններով, որոնք չեն հակասում «Դաշնակցութեան» սկզբունքներին եւ ընդհանուր ժողովի վճիռներին, դրամ կամ զէնք ձեռք բերել Պատասխանատու կետրոնական կամ տեղական կոմիտէի համար։

<u>Թղթակցութիւններ</u> — Ձեզ արդէն ուղարկւած է թղթակցութիւնների ծրագիր(1)*. աւելացնում ենք միայն*

1) *Հարկաւոր է միշտ առանձին ուշադրութեամբ հետեւել տեղական եւ շրջակայքի կեանքին, որպէսզի ոչ մի ուշադրութեան արժանի երեւոյթ չմնէք բաց թողած։ Ձեր մինչեւ այժմ մեզ ուղարկած նիւթերը պարզ ապացոյց են, որ դուք միանգամայն կարող էք այդ պահանջին լիովին բաւարարութիւն տալ։ Շարունակեցէք արիաբար։*

2) *Եթէ լսէք լուրեր ձեր շրջանից դուրս տեղի ունեցած դէպքերի մասին, նոյնպէս արձանագրէք եւ մեզ ուղարկէք. շատ իրողութիւններ այդ ձեւով երբեմն աւելի շուտ են իմացւում այստեղ, քան բուն այն շրջաններից, ուր տեղի են ունեցել այս կամ այն դէպքերը։*

3) *Արտասովոր երեւոյթների մասին (ձեր կամ հարեւան շրջաններում) խնդրում հաղորդակցէք Բաղդ[ադ], խնդրելով որ այնտեղից հեռագրով հաղորդեն մեզ։ Մենք այդ մասին գրել ենք Բ[աղդադ] եւ յոյս ունենք, որ որեւէ կերպով կը յաջողեցնեն։ Յամենայն դէպս փոստով մեզ ուղարկելիք ձեր թղթակցութիւններում այն տեղեկութիւնները, որ ձեր կարծիքով (ըստ ձեր ստացած տպաւորութեան) կարելի էր հեռագրով մեզ հաղորդել, եթէ դիւրութիւններ ունենայիք,— խնդրում ենք միշտ մատնացոյց անել փոքրիկ ծանօթութիւններով։*

Այս առաջին եւ վերջին անգամն է, որ մենք գրում ենք ձեզ բաց թանաքով եւ պաշտօնական թղթի վրայ։ Այսուհետ պէտք է գրենք դեղով(2) եւ հասարակ թղթի վրայ։ Նոյնը պէտք է ընդունէք եւ դուք։ Գործի վերաբերեալ կարեւոր նամակները, ապահովութեան համար, պէտք է գրել դեղով։ Երկու տեսակի դեղ ունենալու է. մէկը՝ գրելու, միւսը՝ ձեր ստացած նամակները բանալու համար — սաջը գբրըզ (երկուսն էլ ներկարարների [?] մօտ կը գտնուի)։ Սաջը-փոթասից իւրաքանչիւր անգամ վերցրէք մի շատ փոքրիկ կտոր եւ աղեցէք քիչ քանակութեան ջրի մէջ, յետոյ մաքուր գրիչը թաթախելով՝ կարող էք գրել։ Սակայն ձեր նամակներին անմեղ ձեւ տալու համար, պէտք է թերթի առաջին երեսի վրայ գրել սովորական, հասարակ մի նամակ՝ իբր թէ գրուած ազգականի, վաճառականի, ուսանող ընկերոջ եւայլն՝ միանգամայն անվնաս բովանդակութեամբ, իսկ երկրորդ եւ միւս երեսներին գրել գաղտնի թանաքով։ Գրածը բանալու համար նոյնպէս վերցնում էք փոքրիկ կտոր սաջը-գբրըզ եւ գրում. հալելուց յետոյ՝ բամբակը թրջում էք այդ ջրում եւ քսում գրուած տեղերին։ Միեւնոյն նպատակի համար, այսինքն գաղտնի թանաքով գրածը բանալու համար, աւելի դիւրին է գործածել պեռ կլօռուր դը ֆեռ (per chlorure de fer), *որը ծախւում է դեղարաններում։ Որպէսզի կասկածի չենթարկուէք, կարող էք դեղատանը ասել, որ քթից արիւնահոսութիւնն կանգնեցնելու համար պիտի կաթեցնէք բամբակի վրայ եւ քսէք քթին։ Այսպէս կամ այնպէս, բայց ի հարկէ այդ դեղերը ձեռք բերելուց յետոյ մի քանի անգամ փորձեր կ՝անէք գրելու եւ գրածը բանալու համար՝ մինչեւ բոլորովին կը վարժուէք եւ յստակ գրելու չափը կը գտնէք։ Այնուհետ՝ նոյնիսկ գաղտնի թանաքով գրած նամակներում պէտք է յատուկ անունները, հասցէները եւ այլ կարեւոր բաները չիֆրէ անէք (ծածկագրով գրէք), այսինքն ոչ թէ տառերով, այլ թւանշաններով։ Դրա համար ուղարկում ենք ձեզ հետեւեալ աղիւսակը, որ երբեք գրած չպահէք ձեզ մօտ, այլ հասկանալով ինչպէս է կազմուում, միտներդ պահէք միայն աղիւսակի բանալին, որով հարկաւոր ժամանակ դուք կարող էք իսկոյն կազմել եւ գործածելուց յետոյ անմիջապէս այրել (առհասարակ թղթերը ոչնչացնելիս պէտք է այրել եւ ոչ թէ պատռել)։*

	1	2	3	4	5	6	7	8	9
1	պ	ջ	ռ	ս	վ	տ	ր	ց	ւ
2	օ	ֆ	ա	բ	գ	դ	ե	զ	է
3	հ	ձ	ղ	ճ	մ	յ	ն	շ	ո
4	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ
5	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
6	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ	ս	վ
7	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի
8	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ
9	ւ	փ	ք	եւ	օ	ֆ	ա	բ	գ
10	ղ	ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ
11	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ
12	ր	ց	ւ	փ	ք	եւ	օ	ֆ	ա

Ուշադրութեամբ նայելով աղիւսակին կը տեսնէք, որ վերեւից (վերէն վար) առաջին ուղղահայեաց շարքը կարդացւում է «Պօհթան գիւղեր»։ Ահա դա է ձեր շիֆրէ բանալին, որ դուք պէտք է միտներդ պահէք։ Գրելով մի ուղղահայեաց գծով այդ երկու բառերը, դոցա տնակներից իւրաքանչիւրի ձախ կողմը գրում էք թւանշաններ կարգով, 1-ից մինչեւ 12, եւ յետոյ հորիզոնական գծերում նոյն տառերի աջ կողմից շարունակում էք այբուբենական կարգով ինը տառ։ Օրինակ, առաջին գծում պ տառից յետոյ՝ ջ, ռ, ս, վ …, Օ տառից յետոյ ֆ, եւ որովհետեւ դա այբուբենի վերջին տառն է, սկսում էք այբուբենը սկզբից· հ-ից յետոյ՝ ձ, ղ, ճ…։ 9րդ կարգում ւ-ից յետոյ դնում էք փ, ք, եւ, օ, ֆ ու դէնը դարձեալ սկզբից՝ ա, բ, գ։ Այդ հորիզոնական գծերում տառերը զետեղւում են շարք-շարքի տակ այնպէս որ ի վերջոյ ստաց-

ւում են նաեւ 9 ուղղահայեաց շարքեր, որոնք վերեւից նոյնպէս նշանակւում են թւանշաններով, 1-ից մինչեւ 9։

Այդպիսի աղիւսակ կազմելուց յետոյ, եթէ ուզենաք, օրինակ, գրել Սասուն, դուք գտնում էք այդ բառի իւրաքանչիւր տառի տեղը եւ նշանակում ուղղահայեաց ու հորիզոնական կարգերի թւանշաններով։ Այդպիսով Սասուն կարելի է գրել 14, 23, 68, 63, 91, 37։ *Ինչպէս կը նկատէք, աղիւսակում միեւնոյն տառերը յաճախ կրկնւում են. ի նկատի ունենալով այդ, աշխատելու է միեւնոյն տառի համար միշտ վերցնել թւանշաններ զանազան կարգերից եւ ոչ թէ միշտ միեւնոյն տեղից։ Դա անհրաժեշտ է ծածկագիրը ըստ կարելոյն բարդացնելու համար, երբ շատ են կրկնւում միեւնոյն թւանշանները միեւնոյն տառերի համար։ Փորձւած մարդիկ հասկանում են ծածկագրի գաղտնիքը։ Այդ պատճառով է, որ Սասուն խօսքը գրելիս ս տառի համար մենք վերցրինք առաջին անգամ* 14, *իսկ երկրորդ անգամ* 68։

Ինչքան եւ այսպիսի մի աղիւսակ դիւրացնէր ամէն կարգի գաղտնիքները ծածկագրելու համար, այնուամենայնիւ չափազանց խնդրում ենք, որ առհասարակ ամէն կերպ խուսափէք ձեզ մօտ թղթեր պահելուց. իւրաքանչիւր խուզարկութեան ժամանակ շատ բան, որ հեշտութեամբ անյայտ կարող էր մնալ, բացւում է շնորհիւ թղթերի, նամակների։ Ձեր գրած նամակները արդէն այստեղ պահւում են. ձեր գրածների պատճէնները նոյնպէս. ուրեմն եթէ մեզ հետ ունեցած գրագրութեանը վերաբերեալ որեւէ պարագայ ուզենաք՝ միշտ կարող էք մեզ դիմել։ Ուրիշ տեղերի հետ յարաբերութիւնների վերաբերեալ թղթեր նոյնպէս կարող էք մեզ ուղարկել՝ այստեղ պահելու համար։ Ինչ վերաբերում է տեղական կարիքներին, պէտք է ջանալ ամէն կերպ յիշողութեամբ գրել շատ բան եւ միմիայն անհրաժեշտ դէպքերում՝ ծածկագրի դիմել։ Ի սէր ամենայնի, խնդրում ենք ձեր առանձին ուշադրութիւնը այս մեր խորհրդի վերաբերմամբ [մէկ տող անընթեռնելի] *կարդալուց յետոյ անմիջապէս պատռել-այրել, կամ ուղարկել արտասահման (մեզ) եւ կամ ծայրայեղ դէպքում համառօտ կերպով ծածկագրել։*

Այժմ մի կնճռոտ հարց։ Ունէ՞ք արդեօք դժւարութիւններ Սասունի հետ յարաբերութիւն ստեղծելու համար։ ..... կարո՞ղ էք այնտեղից նամակներ ստանալ ապահով կերպով եւ Բաղ[դադի] *գծով մեզ ուղարկել։ Դա մի կարեւոր խնդիր է, որի մասին կը սպասենք ձեր կարծիքը իմանալու, եթէ առանձին արգելառիթ պատճառներ չունիք. մենք կը խնդրէինք յատկապէս մի մարդ ուղարկել Սասուն, այնտեղ վերջերս անցած-դարձածի մասին լիակատար տեղեկութիւններ հաւաքելու եւ մեզ ուղարկելու համար։ Միաժամանակ ուրիշ գծով մենք կը հաղորդենք Սասունի եւ Մշոյ մեր ընկերներին ձեր հասցէն, որպէսզի աշխատին կապւել ձեզ հետ։*

Կ'ուզէինք մի քանի նորութիւններ եւս հաղորդել ձեզ արտաքին քաղաքական աշխարհից, բայց այս անգամ նամակը շատ ծանրացաւ եւ մենք ստիպւած ենք խնդրել Ձեզ առայժմ բաւականանալ «Դրօշակի» վերջին թւերի լու-

ըերով։ Կա՛ն սրանց մէջ մի քանի խրախուսիչ երեւոյթներ։

Եթէ ներկայ նամակի ցուցմունքներով, առաջարկներով եւ հրահանգներով մի փոքր ծանրաբեռնեցինք ձեզ, յոյսով ենք, որ ներողամիտ կը լինիք դէպի մեզ։ Անարժան թշնամու չտեսնուած վայրագութիւնների եւ ազգային մեր սրբազան իդէալների դիմաց, մենք պարտաւոր ենք հաւասարապէս պահանջկոտ լինել թէ դէպի մեզ եւ թէ դէպի մեր բոլոր ընկերները։ Այո՛, չխնայենք ոչինչ մեր սուրբ դատի համար, որ սրբագործուած է այսքան զոհերի արիւնով, տա՛նք մեր անբախտ ժողովրդի անպաշտպան շահերին այն ինչ կարող ենք եւ պարտաւոր ենք տալ։ Իւրաքանչիւր անկեղծ յեղափոխական իրեն դժբախտ պէտք է համարի ոչ թէ այն ժամանակ, երբ նա գործ ունի, այլ այն ժամանակ, երբ նա ամենայն օր մի քանի քայլ առաջ չէ գնում եւ մնում է զուրկ իր օգտակարութեան սփոփիչ գիտակցութիւնից։ Ի բոլոր սրտէ ցանկանալով ուրեմն ձեզ, սիրելի ընկերներ, եռանդ եւ ամենայն յաջողութիւն ձեր նուիրական պարտքի ճանապարհի վրայ, մնում ենք

Սրտագին բարեւներով՝
[ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ]

1.- Տես էջ 165-66:

2.- Խօսքը գաղտնի թանաքին մասին է, որուն լուծոյթին բացատրութիւնը տրուած է արդէն յաջորդ տողերով:

78

Մատեան No 86, *էջ* 92-3

Ժընեւ, 28 *հոկտեմբ*. 901

Պ. Մխիթարին(1), *Փարիզ*

Հոկտեմբերի 20-*ից Ձեր գրածը ստացանք։ Մենք, ի հարկէ, ինչպէս մինչեւ այժմ նոյնպէս եւ այս անգամ, պատրաստ ենք Ձեզ տալու ամէն դիւրութիւններ Ձեր ստանձնած գործը ի կատար ածելու համար. սակայն ի նկատի առնելով, որ մենք չէինք ուզենալ կողմնակի ճնշումներ ի գործ դնել հնչակեանների վրայ եւ միւս կողմից Քիառը*(2) *անձնապէս մեզ տեղիք չէ տուել նրան կտրուկ պայմաններ առաջարկելու համար, մենք անյարմար ենք համարում մեր անունից գրել նրան այն ընթացքի մասին, որ, Ձեր կարծիքով, նա պիտի բռնէ ներկայումս դէպի հնչակեանները։*

Ուստի յայտնում ենք Ձեզ, որ մենք կը գրենք պ. Քիյառին Ձեր ուզած մտքով մի նամակ, եթէ դուք իրաւունք տաք մեզ յիշել մեր նամակում Ձեր անունը։ Այդ դէպքում մենք կը գրենք Քիյառին եւ կ՚ասենք, որ յանձնարարում ենք Ձեր կարծիքը նրա առանձին ուշադրութեան, ենթադրելով, որ հնչակեաններից ոմանք ի չարն են գործ դնում իր օբիեկտիվ(3) *վերաբերմունքը դէպի հայ կուսակցութիւնները։*

Ի դէպ. չէ՞ք գտնում արդեօք հակասութիւններ Ձեզ հետ բանակցող հնչակեանների խօսքերի եւ այն հրապարակային «երկդիմութիւնների» մէջ, որոնք ահա երրորդ անգամն է տպագրւում են հնչակեան պաշտօնական օրգանում։ Ինչո՞վ բացատրել այս տարօրինակութիւնները։

Գալով Փարիզի մեր ընկերոջ(4) *հետ յարաբերութեան մտնելու հարցին, մենք պէտք է խնդրենք, որ դուք շարունակէք մեզ հետ բանակցել անմիջապէս, որովհետեւ այդտեղի մեր ընկերը անտեղեակ է միութեան խնդրի վերաբերեալ պարագաներին։*

«Դրօշակի» համարը Ձեզ ուղարկւած է արդէն։ Վստահ ենք, որ միութեան առիթով մեր հրատարակած յայտարարութեան դէմ ոչինչ չպիտի ունենաք։

(*Բիւրոյի կնիք*)

1.- Մխիթար – ծածկանուն Յովհաննէս Շահնազարի, որ միջնորդի դեր ստանձնած էր Դաշնակցութեան եւ Վերակազմեալ հնչակեաններու միջեւ միութիւն կամ համերաշխութիւն գոյացնելու խնդրին մէջ։ Քրիստափորի նամակին մէջ յիշուած հնչակեանները պէտք է հասկնալ Վերակազմեալ հնչակեան իմաստով։

2.- Պիեռ Քիյառ – խմբագիր «Փրօ-Արմենիա»-ի։

3.- Առարկայական։

4.- «Փարիզի մեր ընկերը» – խօսքը կը վերաբերի Յովհաննէս-Ժան Լոռու-Մելիքեանի։

79

Փաստ. 441-1

Ձեռագիր 4 էջ: Pro Armenia-ի հրատարակութեան, բայց մանաւանդ «Փոքորիկ»ի հանգանակութեան գործին թափ տալու նպատակով 1901 Նոյեմբերի սկիզբը Քրիստափոր Ժընեւէն անցաւ Փարիզ, Պերլին, Մոսկուա, Ռոստով եւ վերջապէս Պաքու, ուր պիտի տեսնէր իր գլխաւոր գործը եւ ուր մնաց շուրջ տարիուկէս:

17/30 *Նոյեմբեր*, 901, *Մոսկվա*

[*Արեւմտեան բիւրոյին, Ժընեւ*]

Սիրելիք,

Ամբողջ ութ օր, այստեղ մնալուց յետոյ՝ այսօր ուղեւորւում եմ դէնը։ Ահա մի քանի խօսքով եղածը։

1) *Բանաստեղծի*(1) *մօտ երկու ամբողջ օրւայ խօսակցութիւններս ոչ մի հետեւանք չունեցան։ Ոչ միայն իր բաներն են այստեղ վատ, այլեւ ինքը անասնացած-յիմարացած է աւելի քան կարելի էր երեւակայել։ Այն սառը վերաբերմունքը, որ նկատեցի դրա կողմից՝ այնքան թուլացրին իմ հաւատը, որ ես այլեւս փորձեր չարեցի բուրժուազիային որեւէ կողմից մօտենալու։ Եթէ այդպէս էր երեք տարի առաջ ինձ ոգեւորութեան, խրախուսանքի եւ վճռողականութեան խօսքեր ասողը, ի՞նչ պիտի լինէին ուրիշները, հայ վաճառականները — Ղարաբաղի, Նոր-Նախիջեւանի, Աստրախանի կամ Զոկստանի*(2) *բախտախնդիր այդ թափթփունքները։*

2) *Ուսանողութեան մէջ համեմատաբար աւելի յաջողութիւն գտայ, քան սպասում էի։ Անշուշտ կայ այստեղ ոչ պակաս* 50 *հոգուց, որոնք ջերմ համակրում են մեզ։ Ունեցանք գումարումներ, խօսակցութիւններ եւն։ Իմ ներկայութեամբ կազմակերպւեց կոմիտէ հինգ հոգուց, որոնց նիստերին խորհրդակցական ձայնով պիտի մասնակցեն նաեւ մի-երկու առանձին պարապող ուսանողութեան խմբակների ներկայացուցիչները։ Այն* 1328 fr., *որ ուղարկւեց այստեղից Միքայէլի*(3) *հասցէին, այդ կոմիտէի անդրանիկ գործն է։ Կոմիտէն ընտրւած է ուսանողական ամբողջ «ժողովի» կողմից եւ ոչ թէ միայն համակրողների շրջանում։*

3) *Տեսնւեցայ եւ այն տիկնոջ հետ, որը վատ էր պահել իրեն անցեալում։ Այդ տեսակցութիւնը ուզել էր ինքը։ Ինձ ոչինչ չը տւաւ, ես էլ ոչինչ չէի ուզել, բայց մի ուրիշի միջոցաւ յայտնել էր, որ մի գումար կ՚ուղարկի ինձ Թիֆլիզ։ Չը հասկացայ՝ ի՞նչ հաշիւներ ունի։ Բօրիսը*(4) *այստեղ չէր. եթէ*

այստեղ լինէր, նրա հետ միասին կարող կը լինէինք աւելի յաջողութիւն ունենալ տիկնոջ մօտ։

4) Մի օր մի նորաւարտ փաստաբանի մօտ, որ իմ հայրենակիցներից է, ինձ տեսնելու եկան 3 հոգի տեղի «երիտասարդ» վաճառականների կողմից։ Խօսակցութիւններն այնքան անճոռնի կերպարանք ստացան, որ վերջացան միմիայն փոխադարձ վիրաւորական խօսքերով. պարզ ասած՝ մի անճոռնի սկանտալով։ Բանից դուրս եկաւ, որ սկանտալի առիթ տուողը մի հոգեկան հիւանդ է, մօտ գժւելու, եւ որ չնայելով իր կոպտութեան՝ իբր թէ ամենալաւ, ամենաբարի, ամենազգայուն մարդն է իր շրջանում։

5) Տւել եմ Կ[ոմիտէ]ին մի քանի հասցէներ, որոնցով օգտւելու են ձեզ հետ յարաբերութիւններ պահպանելու համար։ Նամակները ստորագրած կը լինին «Զանգակ» եւ կը տան ձեզ էլ հասցէներ իրենց գրելու համար։ Պէտք է ծրարներով եւ միշտ առանց յապաղումների կանոնաւոր կերպով ուղարկել թերթը, յաւելւածները եւ P[ro] A[rmenia](5) նամակներ գրելիս եթէ ամէն անգամ աւելցնէք օրւայ նորութիւնները երկրից կամ Եւրոպայից — դա մեծապէս կը նպաստի Կ-ի գործին եւ այդ մասին ձեզ գրելու յատկապէս խնդրել են ինձ, թէեւ իրենք եւս պիտի գրեն։ Նամակները գուցէ երբեմն գրեն աղով(6). զգոյշ լինէք ուրեմն այս հանգամանքը անտես չառնելու։ Երբեմն գուցէ նաեւ գրեն բանդերոլի(7) վրայ, լրագիրներ ձեզ ուղարկելիս։ Այդ էլ չմոռանաք եւ այստեղից որեւէ տպագրած բան ստանալիս՝ փորձէք բանդերոլները։

Դուք նամակ գրելիս՝ գրեցէք կարմիրով(8)։ Այստեղ կ՚ունենան միայն բաց անելու հեղուկը։ Ծածկագիր եւս տւել եմ, վերջին բանալիների սիստեմով։ Բանալին ես կը հաղորդեմ ձեզ, Կովկասից, երբ գրում կը լինեմ ձեզ դեղով։

Խնդրել եմ հետեւեն ռուսաց գրականութեան եւ հետաքրքիր յօդւածներ կամ գրքեր միշտ ուղարկեն ձեզ։ Առայժմ ուղարկում եմ ձեզ գրադարանի համար

ա) Գամառ-Քաթիպայի 2 հատորները

բ) Ահարոնեանի պատկերները

գ) Պրիսոեդինենիէ Գռուզիի(9) — կը տաք Խաչատուրին(10)

դ) Հաքստհաուզենի 2 հատորները

ե) Ռօզէնի պատմութիւնը

զ) Էրմօլովի Յեղափոխութիւնը

է) Տոի Մեսյացա վը Գռուզիի(9)

ը) Ախվերդովա V վիպուսկ(9) եւ էլի մի-երկու փոքրիկ բաներ

Մնաք բարեա՛ւ։ Ճանապարհին 2 օրով մտնելու եմ Ռ[ոստով]։ Տեսնենք, ինչ խաբարներ կարող կը լինեմ ուղարկել ձեզ այնտեղից։

Ձեր ՔՐ.

Այս բոպէիս տղերքը կրկին մի առաջարկութիւն արին. խնդրում են ձեզ շուտ-շուտ ուղարկել իրենց ֆրանսիական կամ գերմանական լրագիրներից հետաքրքիր կտորներ. «Արգոս»ից ստացուող կտորներից չարունակաբար կարող էք մաս անել սրանց։ Որովհետեւ տեղիս խումբը կը լինի կետր[ոնական], ուստի այս կարեւոր խնդիր է. այստեղ պիտի թարգմանեն այդ կտորները եւ շրջաբերականներով տարածեն։ Ուղարկեցէք ըստ կարելոյն յաճախ եւ շատ։

Մի ժամից գնում եմ։

Բարեւներ բոլորին

Յ. Գ.— Խաչատուրին ասա, եղբայրը շատ լաւ է. տեսնուեցանք մի քանի անգամ. առողջ է, լաւ պարապում է, եւ բարեւում է։

ՔՐԻՍՏԱՓՈՐ

1.- Բանաստեղծը Յովհ. Շահնազարն է, որ քանի մը տարիէ ի վեր ջանքեր կը թափէր Վերակազմեալ հնչակեան եւ Դաշնակցութիւն կուսակցութեանց միացման համար: Քրիստափորի եւ Շահնազարի հանդիպումը տեղի ունեցած էր Փարիզ:

2.- Զոկ անունը կը տրուէր Գողթն գաւառի Ագուլիս քաղաքի եւ շրջակայ գիւղերու հայ բնակիչներուն, որոնք կը խօսէին իրենց յատուկ բառբարով՝ զոկերէնով: Զոկստանը, ըստ երեւոյթին, Քրիստափորի յօրինած բառն է՝ բնորոշելու համար Մոսկուա եւ Ռուսիոյ այլ շրջաններուն մէջ հաստատուած ագուլիսցիները, որոնք հռչակուած էին առեւտուրի եւ գործարար աշխարհի մէջ իրենց ծաւալած գործունէութեամբ:

3.- Միք. Վարանդեանի:

4.- Բօրիսը ծածկանունն է Սմբատ Խաչատրեանի, անդամ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի:

5.- Pro Armenia – Դաշնակցութեան եւ յատկապէս Քրիստափորի նախաձեռնութեամբ Փարիզի մէջ հրատարակուող եւ հայկական հարցին սատարող ֆրանսերէն երկշաբաթաթերթ:

6.- Իմա՝ գաղտնի թանաքով:

7.- Փաթեթ, փաթաթան:

8.- Գաղտնի թանաքի լուծոյթ մը, որ «բացուելու» պարագային կարմիր գոյն կը ստանար:

9.- Բնագրին մէջ ռուսատառ: Յաջորդաբար՝ «Վրաստանի միացումը», «Երեք ամիս Վրաստանում» եւ Հախվերդովի V հատորը:

10.- Խաչատուր Մալումեանին (Է. Ակնունի):

80

Փաստ. 12-9

Քրիստափորի այս նամակը յաւելուած է Լալվար ստորագրութիւնը կրող համառօտ գրութեան մը՝ գրուած 3 ապրիլ 1902ին Պաքուէն եւ ուղղուած Հ.Յ.Դ. Կարսի Կեդր. կոմիտէին: Յանձնարարականի բնոյթ ունեցող զոյգ գրութիւնները խորքին մէջ սահմանուած էին Կարինի համար, ուր պէտք է երթար ենթական Կարսի ճամբով: Լալվար ծածկանունն էր Արեւելեան բիւրոյի անդամ Աւետիք Սահակեանի (Հայր-Աբրահամ), որ այդ օրերուն Քրիստափորի հետ կը գտնուէր Պաքու:

Սիրելի՛ք,

Նամակս ներկայացնողը մեր ընկերներից է եւ թէեւ մի փոքր անփորձ, բայց այնքան սիրահար գործին, որ թւում է՝ թէ անպայման ծառայութիւն կը մատուցանի մեր դատին, եթէ կարելիութիւն ունենայ փոքր ի չատէ ապահով կերպով հիմնւել Կարինում: Ամենագլխաւոր յանձնարարութիւնը, որ անւում է իրեն — այդ Կարնոյ նահանգի կեանքին հետեւելու եւ սիստեմատիք կերպով մեզ թղթակցելու խնդիրն է: Եթէ յաջողւի իրեն, օրինակ, առաջնորդարանի հետ որոշ կապեր հաստատել գաւառներից ստացւող տեղեկութիւնները ձեռք բերելու համար կամ եթէ այդ դժւար լինի՝ կարողանայ ուրիշ կերպերով տեղեկութիւններ հաւաքել, եւ միաժամանակ, ինչքան այդ կարելի կը լինի, հետեւի Կարնում եղած հիւպատոսների բռնած դիրքին եւ մանաւանդ ռուսաց հիւպատոսի ընթացքին — մենք միանգամայն գոհ կը լինէինք այդ արդիւնքներից: Խնդիրը, ի հարկէ, հեշտերից չէ, եւ այդպիսի մի միսսիայի համար հարկաւոր էր գուցէ մի աւելի եփւած ու քաղաքագէտ մարդ Կարնում ունենալ, բայց ի՞նչ արած, երբ փորձւածներից չկարողացանք մարդ գտնել, իսկ տեղը մի շարք տեսակէտներից այնքան կարեւոր է մեզ համար, որ այլեւս անկարելի համարեցինք կտրւած մնալներս շարունակել:

Մեր ընկեր Մենակը (Առստամեան Եգոր) ժամանակի ընթացքում, ի հարկէ, կարող է լայնացնել իր անելիքների շրջանը Կարինում, բայց սկզբի համար մեզ թւում է, որ բաւական է, թէ նա սահմանափակւի լոկ մի դիտողի, լոկ մի թղթակցի դերով, որ համեմատաբար անմեղ գործ է:

Գալով Կարին գնալու եւ հաստատւելու հարցին, տեխնիքական մասին մենք այդ բոլորը վստահանում ենք ձեզ թողնելու. ինքը ունի հետը մի նա-

մակ այստեղ ապրող մի կարնեցուց իր ընկերոջ վրայ, բայց դա շատ չնչին բան է։ Մենք յոյս ունենք, որ այդտեղ դուք կարող էք մշակել մանրամասնօրէն թէ սահմանը անցնելու, թէ այնտեղ մի ապահով ապաստարան ունենալու եւ թէ նոյնիսկ Կարնում իրեն պահելու (անհրաժեշտ ձեւերի, հագուստի, խօսալ — ման գալու վերաբերմամբ) պայմանները։ Ի միջի այլոց ինձ ասացին այստեղ, որ ձեզ մօտ կան, կարծեմ, Ղօնդաղճեաններ, որոնք մշտական կապ ունին Կարինի հետ եւ նրանք կարող են Մենակին նամակ տալ։ Ես ի հարկէ չեմ պնդում այս մասին. այդ բոլորը դուք աւելի լաւ կ'իմանաք եւ անշուշտ հարկաւոր նամակներ ձեռք կը բերէք։ Ինձ մնում է միայն աւելացնել, որ շատ ուրախացրած կը լինէիք թէ այստեղի եւ թէ արտասահմանի մեր ընկերներին՝ ամէն ջանք թափելով Մենակի գնալ ու հաստատուելը յաջողեցնելու համար։ Շուտով, խնդրում ենք, ձեր կարծիքը մեզ գրէք։

Ընդունեցէ՛ք ջերմ բարեւներս
Ձեր ԷԼԼԷՆ

Յ. Գ.— Հասցէ այստեղի համար՝ վերցրէք Մենակից։

81

Մատեան No 87, *էջ* 204

Le 13 juillet 1903

Cher camarade

Nous venons de recevoir de Tiflis la dépêche suivante:
"La situation à Sassoun et à Mouch est alarmante.
"La population est en danger".
On ajoute qu'il faut de secours immédiat et on nous prie de prévenir la presse.
Vous trouverez peut-être utile de publier cette communication sur la première page de "Pro Armenia" ainsi qur dans d'autres journaux de Paris.
Les détails manquent et nous ne sommes pas bien renseignés pour expliquer la cause du danger et de la dépêche actuelle. Il y a là, c'est vrai, un mouvement révolutionnaire ainsi que une petite concentration des forces arménennes, mais cela ne suffit pas comme explication.
Le gouvernement turc sait-il quelque chose? Voilà la question importante. D'après nos renseignements reçus il y a un mois, les hamidiés kurdes arrivés de Khnous, d'Alachkert et de Manaskert sont concentrés dans les environs de Mouch sous le pretexte d'exercise militaire. La dépêche reçue nous donne le droit de faire quelques suppositions sur les intentions du gpuvernement turc.
Ne trouvez-vous pas qu'il faut jeter l'alarme?

Bien à vous
REDACTION "DROSCHAK"

Թարգմանութիւնը.—

13 *յուլիս* 1903

Սիրելի ընկեր,

Նոր ստացանք Թիֆլիսէն հետեւեալ հեռագրաւուրը՝
«Սասնոյ եւ Մշոյ կացութիւնը զարհուրելի է։ Բնակչութիւնը վտանգի մէջ է»։

Կ՚աւելցնեն որ պէտք կայ անմիջական օգնութեան եւ կը խնդրեն հիմակուց տեղեակ պահել մամուլը։

Հաւանաբար օգտակար գտնէք այս հաղորդագրութիւնը հրատարակել Պրօ-Արմենիայի առաջին էջով, ինչպէս նաեւ [հրատարակել տալ] Փարիզեան այլ թերթերու մէջ։

Մանրամասնութիւններ չունինք եւ լաւ տեղեկացուած չենք՝ բացատրելու համար վտանգին եւ ներկայ հեռագրալուրին տուն տուող պատճառը։ Ճիշտ է որ հոն յեղափոխական շարժում կայ, ինչպէս նաեւ որոշ կեդրոնացում հայկական ուժերու, բայց ասիկա բաւական չէ իբրեւ բացատրութիւն։

Թրքական կառավարութիւնը բան մը գիտէ՞։ Ահա կարեւորագոյն հարցը։ Ասկէ ամիս մը առաջ մեր լրատուներէն ստացած տեղեկութիւններուն համաձայն, քիւրտ համիտիէ զօրքեր՝ Խնուսէն, Ալաշկերտէն եւ Մանազկերտէն եկած են եւ, զինուորական վարժանքներու պատրուակին տակ, կեդրոնացած Մշոյ շրջակայքը։ Մեր ստացած հեռագրալուրի հիման վրայ կարելի է կարգ մը ենթադրութիւններ կատարել թրքական կառավարութեան [հետապնդած] նպատակներուն մասին։

Ձէ՞ք կարծեր որ հարկ է ահազանգ հնչեցնել։

Ձերմ բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

82

Մատեան No 87, *էջ* 228-29

Le 28 juillet 903

Cher camarade

Les derniers renseignements reçus de Sassoun, via Tiflis, affirment malheureusement le contenu de notre dépêche que vous avez reçue et insérée dans "Pro Armenia", et les craintes inspirées par elle.

Le gouvernement turc a appelé à Mouch les hamidiés et on a même, d'après nos lettres, invité la population turque faire une démonstration hostile contre les Arméniens. Les chrétiens se trouvent, par conséquant, dans une situation peu rassurante, ce qui a obligé deux de nos groupes révolutionnaires, campés sur les hauteurs de Sassoun, de descendre vers Mouch pour prévenir toute évantualité. "Un secours immédiat est nécessaire" et voilà pourquoi une certaine quantité de nos camarades se préparent pour passer la frontière et pour donner un coup de main à la population mise dans une anxiété vive.

Tous les détails ainsi que l'opinion de nos camarades nous obligent de penser qu'il est opportun et même nécessaire de soumettre encore une fois devant l'Europe la situation dangereuse de Sassoun et de Mouch.

Ne trouverez-vous pas que c'est en même temps une occasion favorable pour le Comité permanent, crée à Bruxelles, d'ouvrir son activité en lançant une circulaire, adressée aux arménophiles de tous les pays. Pour commencer une propagande générale en faveur de notre question, se serait, il nous semble, une action doublement utile.

Voilà pourquoi nous vous prions, cher ami, de prendre la peine de parler avec votre ami de Pressensé pendant votre voyage à Paris, pour l'ouverture dudit Comité permanent et pour publier comme sa première œuvre une circulaire sur les événements de Sassoun.

Si vous avez besoin d'une certaine somme pour la fondation d'un bureau spécial (pour le Comité permanent) ainsi que des renseignements complémentaires pour les circulaires, nous sommes entièrement à votre disposition.

Salutations fraternelles
REDACTION "DROSCHAK"

Թարգմանութիւնը.—

28 *յուլիս* 903

Սիրելի ընկեր,

Թիֆլիսի ճամբով՝ Սասունէն ստացուած տեղեկութիւնները դժբախտաբար կը հաստատեն մեր հեռագրալուրին բովանդակութիւնը, զոր ստացաք եւ հրատարակեցիք Պրօ-Արմենիայի մէջ, ինչպէս նաեւ այդ լուրէն հետեւցուցած մեր վախերը։

Թրքական կառավարութիւնը Մուշ կանչած է Համիտիէ զօրքերը եւ նոյնիսկ, ըստ մեր ստացած նամակներուն, հրաւիրած թուրք ամբոխը հակահայ ցոյց մը կատարելու։ Հետեւաբար, քրիստոնեաները կը գտնուին անհանդիստ վիճակի մէջ, ինչ որ ստիպած է Սասնոյ բարձունքներուն վրայ գտնուող մեր խումբերէն երկուքին իջնել դէպի Մուշ՝ առաջքն առնելու համար ամէն հաւանականութեան։ «Անհրաժեշտ է անմիջական օգնութիւն», եւ ասոր համար է, որ մեր ընկերներէն որոշ թիւ մը կը պատրաստուի [պարսկական] սահմանը անցնելու եւ օգնութեան փութալու բուռն անձկութեան մատնուած ժողովուրդին։

Բոլոր մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ մեր ընկերներու տեսակէտը, մեզի մտածել կու տան, թէ պատեհ է, եւ նոյնիսկ անհրաժեշտ, Եւրոպայի առաջ հարց բարձրացնել Սասնոյ եւ Մշոյ վտանգալի կացութեան մասին։

Չէ՞ք կարծեր որ ասիկա նպաստաւոր առիթ մըն է, որպէսզի Պրիւքսէլի մէջ հիմնուած Մնայուն կոմիտէն իր գործունէութիւնը սկսի բոլոր երկիրներու հայասէրներուն շրջաբերական-կոչ մը ուղղելով։ Ի նպաստ մեր [հայկական] հարցին նկատմամբ ընդհանուր քարոզչութիւն մը սկսելու համար, մեզի այնպէս կը թուի, որ այս մէկը կրկնապէս օգտակար գործողութիւն մը պիտի ըլլար։

Ահա թէ ինչու, սիրելի բարեկամ, կը խնդրենք որ ձեր Փարիզ ուղեւորութեան ընթացքին խօսիք մեր բարեկամ [Ֆրանսիս] տը Փրեսանսէին, որպէսզի յիշեալ Մնայուն Կոմիտէն սկսի իր գործունէութեան եւ, իբրեւ առաջին ձեռնարկ, Սասնոյ անցուդարձերուն մասին շրջաբերական մը լոյս ընծայէ։

Եթէ որոշ գումարի մը պէտք ունիք,— (Մնայուն կոմիտէին յատուկ) գրասենեակի հիմնումին, ինչպէս նաեւ շրջաբերականներուն [անհրաժեշտը] լրացուցիչ տեղեկութիւններու համար,— ամբողջովին ձեր տրամադրութեան տակ ենք։

Եղբայրական բարեւներով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»ի

83

Մատեան No 87, *էջ* 234

Le 7 août 903

Notre Cher Camarade,

A l'instant nous avons reçu votre lettre d'A……, par laquelle vous demandez des nouvelles sur les événements de Mouch et Sassoun.

Après notre lettre, adressée à Paris, nous n'avons rien reçu. Dès que nous l'aurons, nous l'expédierons tout de suite.

Une chose est certaine: la situation est grave et nos bandes sont entrées en lutte. Cette lutte, nous le savons bien, sera acharnée, mais étant donné l'insuffisance des forces arméniennes, elle ne sera pas – probablement – durable. En tout cas ce n'est pas encore le moment d'en parler ouvertement.

Nous vous remercions bien cordialement pour la décision prise avec notre ami de Pressensé, comme la circulaire en question, ainsi que pour les articles dans "L'Européen".

Trouvez-vous utile une démarche auprès des Puissances, faite de la part de la Rédaction "Droschak" ou au nom de la Fédération? Ou peut-être vous jugez le moment peu favorable.

Salutations fraternelles
REDACTION "DROSCHAK"

Թարգմանութիւնը.—

7 *օգոստոս* 903

Սիրելի ընկեր,

Այս պահուն ստացանք ձեր նամակը Ա……էն, որմով Մշոյ եւ Սասնոյ դէպքերուն մասին տեղեկութիւններ կը խնդրէք։

Փարիզ ղրկած մեր նամակէն ետք, ոչինչ ստացած ենք։ Անմիջապէս որ [լուր] ստանանք, իսկոյն կը ղրկենք։

Մէկ բան յստակ է.— կացութիւնը լուրջ է եւ մեր խումբերը մտած են կռուի մէջ։ Գիտենք որ այս պայքարը պիտի ըլլայ կատաղի, բայց հաշուի առնելով հայկական ուժերու անբաւարարութիւնը, հաւանաբար տեւական չըլ-

լայ ան։ Ամէն պարագայի, դեռ այդ մասին բացայայտ կերպով խօսելու ժամանակը չէ։

Ջերմագին շնորհակալութիւններ ձեզի եւ մեր բարեկամ [*Ֆրանսիս*] *տը Փրեսանսէին, որ միասին որոշում կայացուցած էք, ինչպէս խնդրոյ առարկայ շրջաբերականին, նոյնպէս նաեւ* «L'Européen» *յօդուածներուն համար։*

Օգտակար կը գտնէ՞ք «Դրօշակ»ի խմբագրութեան կամ Դաշնակցութեան անունով դիմում մը Տէրութեանց, կամ կը դատէք որ պահը շատ նպաստաւոր չէ։

Եղբայրական բարեւներով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

84

Մատեան No 81-3, *էջ* 105-108 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

9 *օգոստ.* 903

Ջրաբերդի կոմիտէին(1)

Սիրելիք,

Ստացանք ձեր ընդարձակ նամակը յուլիսի 14-*ից եւ շրջաբերականը ձեր հասցէն փոխելու մասին։ Շնորհակալ ենք ձեր տւած տեղեկութիւնների համար, բայց էլի պիտի կրկնենք, որ առանձնապէս ուշադիր լինէք թէ շուտով մեզ ամէն բան հասցնելու եւ թէ առհասարակ երկրից եկող տեղեկութիւնները հարստացնելու վերաբերմամբ։ Ինչ գալիս է այդտեղ. իսկոյն պատճէններ վերցրէք բիւրօյի կամ կոմիտէների համար եւ օրիգինալները մեզ ուղարկեցէք առանց ուշացնելու։ Բոլոր երկիր գնացող, եկող կամ այնտեղից թղթակցող ընկերներին էլ առանձնապէս շեշտեցէք թարմ եւ ճիշտ տեղեկութիւնների կարիքը այստեղ, թող ով ինչ նկատում է, լսում է, դիտում է՝ գրէ եւ յորդորէ ուրիշներին էլ — ում հետ երկրում շփւում է — որ միշտ գրեն։ Գրելու ձեւին, գրողի զարգացման կամ գրագիտութեան աստիճանին առանձին նշանակութիւն չպէտք է տալ, գլխաւորը՝ նիւթն է, ընթացիկ կեանքին մեզ տեղեակ պահելն է, որ կարեւորագոյն զէնք կը ծառայի մեր ձեռքին, եթէ հասնենք տեղեկութիւնների <u>քանակի, թարմութեան</u> եւ <u>ճշտութեան</u> ցանկալի աստիճանին։*

<u>Նիւթականի մասին</u> արած պահանջներին մենք չտապեցինք բաւարարութիւն տալ։ Ուղարկել ենք Մ. Ֆ. հեռագրով 10 *հ*[*ատոր*](2) *Ֆ. Մարսէլից, չէ-*

քով՝ 10 հ[ատոր] ֆ. Փարիզից եւ Մոսկվա գնացողի միջոցով՝ կրկին 10 հ[ատոր] ֆ.։ Վերջինս այնտեղից պիտի փոխադրէր Մեծին(3)։ *Դա կազմւում է 11,5 համարեա, եւ եթէ դրա վրայ աւելացնենք նոր աշխարհից նորերս փոխադրւած 2 հ[ատոր] եւ ձեր 650 օմ-ը*(4) — *դա արդէն կը կազմի մօտաւորապէս Բարձրաւանդակի*(5) *ուղած գումարը։ Գալով այդ միջոցները գործածելու խնդրին, պէտք է յարմարւենք ներկայ հանգամանքներին։ Հազիւ-հազ Բարձրաւանդակում մի փոքր բան դրած՝ հիմա է, որ մենք պէտք է սկսէինք լուրջ պատրաստողական հոգսեր — եւ յանկարծ թղթերս բաց արինք։ Դա, ի հարկէ, ակամայ եղաւ, բայց թոյլ տւէք խոստովանել, որ այն աղմուկը, որ բարձացրւեց «Մրրկի»*(6) *առթիւ թէ երկրում (դրօշակներ, հրացանաձգութիւն, հանդիպումներ) եւ թէ դուրսը շրջաբերականներով, բազմաթիւ նամակներով եւն) — արդէն մի չարագուշակ նշան էր, որ ապագայի մեծ գործը իր բոլոր պահանջներով եւ չափերով մի լոպէ նսեմացվէր մեզ համար՝ մի մասնակի, մի երկրորդական ձեռնարկի յաջողութեան դիմաց։ Այն ինչ՝ լռութիւն, գաղտնապահութիւն, սառնատեսութիւն, համեստութիւն եւ մշտական շրջահայեցողութիւն (գլխաւոր գործի յաջողութեան որեւէ պայմանի դէմ չմեղանչելու համար) — ահա ինչ պիտի մշտապէս ղեկավարէ բոլորիս։*

Ինչեւիցէ, բայց համոզւած եղէք, որ այս նկատողութեամբ մեր անձնւէր ընկերներին որեւէ չափով մեղադրելու ցանկութիւն չունենք, եւ ասածներս զգուշութեան մի հասարակ խորհուրդ է, որ թելադրում են մեզ փորձերը։

Դառնանք ներկայ կացութեան։

Կը յաջողի՞ արդեօք յետ մղել Թիւրքին, հեռացնել սարին եւ դաշտին(7) *սպառնացող բիրտ ուժը — դժւար է ասել։ Մենք աշխատում ենք այդ ուղղութեամբ, եւ Փարիզի մեր բարեկամները արդէն ցրւում են մի շրջաբերական եւրոպական բոլոր հայասէրներին, յորդորելով իւրաքանչիւրին իր շրջանում անել կարելին։ Բացի դրանից՝ բանակցում ենք մեր բարեկամների հետ պետութիւններին մի դիմում անելու մասին, որը սակայն գուցէ յարմար չհամարւի։ Յամենայն դէպս Փարիզում կարելին կ'անւի Մուշ հիւպատոս ուղարկելու համար։ Ուրախալի է համարւում, որ եւրոպական թերթերը արդէն բաւականին հետաքրքրւել են հարցով եւ ուշադրութեամբ հետեւում են Հայաստանի անցքերին։ Երեւում է նոյնպէս, որ Կարինի, Խարբերդի եւ Բիթլիսի հիւպատոսներից Պոլսոյ դեսպանները ստացել են կառավարութեան համար աննպաստ տեղեկագրեր։ Այդ բոլորը՝ լրագրական աղմուկի հետ միասին՝ կարող է կաշկանդել Թիւրքին եւ մակեդոնական հարցի կողքին հայկականը չբուսցնելու համար՝ յետ կասեցնել*[?] *կառավարութիւնը մեծ աւերումներից։ Մենք էլ դրան չմիտելով, ուրեմն պէտք է աշխատենք ամէն կերպ տեղիք չտալ նոր ընդհարումների։ Ահա ինչու մեր կարծիքով* 1) *յարձակողական որեւէ դիրք ոչ մի տեղ չպէտք է բռնել, եւ* 2) *ձեռքի տակ եղած միջոցների մեծ մասը փոխադրել շուտով երկիր, որպէսզի կրակի մէջ գտնւող-*

ները օրւայ պահանջների առաջ անզօր չլինին եւ կարողանան, ըստ տեղական պայմանների, կարելին անել հէնց անմիջապէս, այսինքն՝ ժողովել, եթէ հարկաւոր լինի, եղած բոլոր ուժերը, գտնել տեղում զէնք եւն, եւ կամ, եթէ ընդհարումը անխուսափելի չէ, ցրւել խմբերը դէսուդէն, կորցնել իրենց հետքերը, հանգստացնել ամբողջ շրջանը։

Ընդհանուր ժողովի(8) *մասին շրջաբերական արդէն ցրւել ենք։ չտապեցէք եւ երկրի ընկերներին էլ չտապեցրէք կարեւոր կարգադրութիւնները անելու,որպէսզի չուշանայ ժողովը։ որքան աւելի յետաձգւի ընդհ։ ժող*[*ովը*]*, այնքան աւելի անվճռողական պիտի լինի այսպիսի սուր հանգամանքներում մեր բռնելիք դիրքը ընթացիկ խնդիրների, հոգսերի վերաբերմամբ։*

Ջերմ բարեւներով
ԱՐԵՒՄՏ։ ԲԻՒՐՕ

1.- Ջրաբերդ – ծածկանուն Կարսի: Նկատի պէտք է ունենալ, որ կը գտնուինք 1904 թ. Սասնոյ ապստամբութեան նախօրէին, երբ մէկ կողմէ ֆետայիներու զգալի թիւ մը կը համախմբուէր Սասուն, միւս կողմէ թուրք բանակայինները եւ քիւրտ աշիրէթներու զօրքերը շրջափակման մէջ կ՝առնէին լեռնաշխարհը:

2.- Հ. կամ հատոր – կուսակցական ծածկագրութեան մէջ համազօր էր հազար ֆրանքի. հետեւաբար 10 հատորը հաւասար էր 10 հազար ֆրանքի: Նոր աշխարհը անշուշտ Ամերիկան է:

3.- Մեծը գործածուած է իբրեւ Մեծ Քաղաք, որ Թիֆլիսն էր, կամ Արեւելեան բիւրոն:

4.- Հաւանաբար օսմանեան ոսկի:

5.- Բարձրաւանդակ – ծածկանուն Սասունի:

6.- Ակնարկութիւն Թուման Թումեանցի (Թորգոմ) գլխաւոր ձիաւորներէ կազմուած «Մրրիկ» խումբին, որ 1903 թ. Մայիսին սահմանը ճեղքելով ռազմամթերք եւ մարտիկներ հասցուցած էր Սասուն:

7.- Սարը գործածուած է Սասունի համար, իսկ Դաշտը՝ Տարօնի, Մշոյ դաշտի:

8.- Ակնարկութիւն Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուէր Սոֆիա, 1904 թ. առաջին ամիսներուն:

85

Մատեան No 87, *էջ* 235

Le 12 août 903

Cher Camarade,

Ci-joint vous trouverez une lettre, en arménien, reçue à l'instant de Bassen, sur la situation actuelle du pays. Elle est, comme vous le voyez, alarmante et digne d'une attention particulière.

Dans les conditions données une chose qui est nécessaire, c'est la présence du consul français, le seul représentant qui est capable d'intervenir et d'arrêter le malheur. Nos camarades de Bassen attirent votre attention sur ce point.

Nous n'avons rien à ajouter, parce que vous savez mieux que nous la manière ……

Monsieur de Pressensé est-il de retour?

Salutations fraternelles
REDACTION "DROSCHAK"

Թարգմանութիւնը.—

12 *օգոստոս* 903

Սիրելի ընկեր,

Ներփակ պիտի գտնէք այս պահուն Բասենէն ստացուած հայերէն նամակ մը՝ երկրի ներկայ կացութեան մասին։ Ինչպէս կը տեսնէք, ահազանգ կը հնչեցնէ ան, եւ արժանի է յատուկ ուշադրութեան։

Տուեալ պայմաններուն մէջ բան մը որ անհրաժեշտ է, այդ՝ ներկայութիւնն է Ֆրանսացի հիւպատոսին — միակ ներկայացուցիչը, որ կարող է միջամտել եւ դադրեցնել դժբախտութիւնը։ Բասենի մեր ընկերները ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեն այս կէտին վրայ։

Աւելցնելու ոչինչ ունինք, որովհետեւ դուք մեզմէ աւելի լաւ գիտէք այն եղանակը… — [Նախադասութեան շարունակութիւնը անընթեռնելի]։

Պարոն տը Փրեսանսէն վերադարձա՞ծ է։

Եղբայրական բարեւներով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

86

Մատեան No 87, *էջ* 237

Le 17 août 903

Notre Cher Ami,

Du 6-9 septembre aura lieu à Vienne, comme vous le savez, le Congrès Interparlementaire, et du 22-26 du même mois le Congrès de la Paix à Rouen.

Nous croyons opportun de soumettre à l'examen de ces deux importantes réunions la question arménienne.

Sans entrer dans les détails qui vous sont déjà bien connus, nous prions, par votre intermédiaire votre ami Monsieur de Pressensé de bien vouloir prendre part à cette assemblée, en qualité de député.

Permettez-nous d'espérer que vous vous chargerez de représenter la question arménienne au Congrès de la Paix, comme vous l'avez fait en 1902. Si vous êtes d'accord, ayez la bonté de prévenir le Bureau de Berne.

Si pour une cause quelconque Mr. de Pressensé ne peut pas partir pour Vienne, dans ce cas-là il faut le remplacer par un autre ami. C'est à vous que nous laissons le choix.

Les frais de ces deux voyages, il va sans dire, sont à la charge de notre Rédaction.

C'est aujourd'hui seulement que nous avons reçu de Tainian une petite lettre, comme information qu'il est de retour de Londres.

Salutations fraternelles
REDACTION "DROSCHAK"

Թարգմանութիւնը.—

17 *օգոստոս* 903

Սիրելի բարեկամ,

Ինչպէս գիտէք, Սեպտեմբեր 6-9 *Վիեննայի մէջ տեղի պիտի ունենայ Միջխորհրդարանային կոնգրէսը եւ նոյն ամսուան* 22-26-*ին՝ խաղաղութեան կոնգրէսը Ռուանի*(1) *մէջ։*

Կը խորհինք որ պատեհ առիթ է կարեւոր այս երկու ժողովներուն քննութեան դնել հայկական հարցը։

Առանց մտնելու մանրամասնութիւններուն մէջ, որոնց լաւապէս ծանօթ էք արդէն, կը խնդրենք՝ ձեր միջոցաւ՝ մեր բարեկամ Պարոն տը Փրեսանսէ-էն, որ հաճի մասնակցիլ այս խորհրդաժողովին՝ իր երեսփոխանի հանդամանքով։

Թոյլ տուէք մեզի յուսալ, որ դուք պիտի ստանձնէք [*պաշտպանել*] *հայկական հարցը, այնպէս ինչպէս ըրիք* 1902*-ին։ Եթէ համաձայն էք, բարի եղէք կանխաւ իմացնել Պեռնի գրասենեակին։*

Եթէ որեւէ պատճառով Պարոն տը Փրեսանսէն չի կրնար մեկնիլ Վիեննա, այդ պարագային պէտք է զինք փոխարինել այլ բարեկամով մը։ Ընտրութիւնը ձեզի կը թողունք։

Ըսելու պէտք չկայ, որ այս երկու ճամբորդութեանց ծախսերը պիտի ստանձնէ մեր խմբագրութիւնը։

Միայն այսօր Թայինեանէն(2) *ստացանք հակիրճ գրութիւն մը, որմով կ՚իմացնէ որ վերադարձած է Լոնտոնէն։*

Եղբայրական բարեւներով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

1.- Ռուան – քաղաք Ֆրանսայի մէջ:
2.- Թայինեան – ծածկանուն Յովհ. Լոռու-Մելիքեանի:

87

Մատեան No 81-3, *էջ* 108-110 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

29 *օգոստ.* 903

Արեւելեան բիւրոյին

Սիրելի՛ք,

Ստացել ենք Ռոստոմի գրածները եւ ուղարկածները։ Շարունակեցէք, խնդրում ենք, տեղեակ պահել մեզ անցքերին։

Այս քանի օրս կրկին կը գրենք ձեզ՝ ընդհ. ժողովի տեղի եւ ժամանակի մասին վերջնական եզրակացութեան գալու համար։ Իսկ առայժմ կարող էք հետեւեալները ի նկատի ունենալ.

1) *Ձեզ փոխադրուած է Մարսէլից հեռագրով* 10 *հ*[*ատոր*](1) (*Աբ. Գիւլեանին՝ Քարվանսարա*), *Փարիզից չէքով* 10 *հ.* (*Բժշկից բժշկին*(2)), *Մոսկվայից չէքով* 8 *հ.* (*օրիորդից Բժշկին*) *եկողի հետ* 5 *հ.*, *որ կը յանձնի Ռուբէն Իվանիչին*(3)։ *Ձեր նամակից իմացանք նաեւ, որ Գրիգորից էլ ստացել էք* 20-*ը* (*կամ* 53 *ֆ.*) — *ընդամէնը ուրեմն* — 86, *որի համար ընդհ. ժողովի առաջ հաշուետու պիտի լինիք, ի հարկէ, դուք։*

2) *Ձեզ մօտ պիտի լինի Ամերիկայից եկած մեր ընկերներից Յովհաննէս Նահիկեանը, որին մի փոքրիկ տոմսակ էր միայն տրուած ձեզ նեկայանալու համար։ Դա ինքն է ուզել երկիր գնալ, առանց Կեդր. կոմիտէի համաձայնութեան։ Վահաբը*(4) *գրում է, որ ինքնահաւան տղայ է եւ ընկերների հետ շատ էլ վարուել չգիտէ, բայց երբ այս նկատողութիւնները իրեն արել են, ասել է, որ յոյս ունի լաւ շրջանում բժշկուել, թէեւ արուած դիտողութիւնները գտել է չափազանցրած։ Ի վերջոյ Վահաբը ասում է, որ* (*պէտք է ընդունել սոսկ իբր դաշնակցական մի ընկերոջ*), *եւ եթէ յարմար չգտնէք երկիր գնալը, կարող էք չուղարկել — նա խոստացել է այդ դէպքում մնալ եւ ապրել իր աշխատանքով։ Մեր կարծիքով, լաւ չէր լինիլ առաջը փակել։ Եթէ արդէն չէ գնացել, թող միանայ մի խմբի կամ աշխատի երկրի եւ կամ Վրէժստանի*(5) *որեւէ կէտում առանձին հաստատուել։ Մի փոքր զինուորական կրթութիւն էլ ունի եւ խօսելում էլ վատ չէ։*

3) *Այսօր դուրս եկաւ դէպի ձեր կողմերը նոյնպէս Ամերիկայից եկած մի երիտասարդ — Արտաշէս Յովսէփեան*(6) *անունով։ Դա ինտելիգէնտ եւ մաքուր տղայ է։ Գնում է Պարսկաստան* (*Աւարայր*)(7) *ուսուցչութեան եւ այստեղից նպատակ ունի երկիր անցնելու։ Ընդունեցէք, խնդրում ենք, իբր վստահելի ընկերոջ եւ դիւրութիւններ ու խորհուրդներ տուէք ճանապարհը շարունակելու։ Խօսք չկայ, որ ինչ յանձնարարութիւն ուզենաք — կարող էք տալ իրեն։*

Ինչպէս Նահիկեանը, նոյնպէս եւ Յովսէփը մինչեւ ձեզ հասնիլը բոլոր ժամանակ իրենք են հոգացել իրենց բոլոր ծախսերը, ոչ մի տեղ կազմակերպութիւնից կոպէկ չվերցնելով։ Բայց շատ կարելի է, որ այդտեղ փողերը պակասի։ Այդ դէպքում, ի հարկէ, չէք մերժել ճանապարհները շարունակելու համար օգնել թէ մէկին եւ թէ միւսին։

Մակեդոնացիք վերջին ճիգն են թափում՝ նպատակ ունենալով անպատճառ պատերազմ յարուցանել բոլգարների եւ թիւրքերի մէջ։

Այս վճռում Սարաֆովի(8) *կողմնակիցները եւ ներքին կազմակերպութիւնը միանգամայն համերաշխ են եւ ոչինչ չպիտի խնայեն ուզածները առաջ տանելու համար։ Ֆերդինանդը*(9), *որ հակառակ է պատերազմի, գուցէ իր այդ քաղաքականութեան զոհ գնայ։*

Մեզ դիմումներ արեցին Վիշապում(10) *իրենց հետ միացած հէնց այժմ մի բան անել, բայց մենք անկարող եղանք ընդունել այդ առաջարկը։*

Եկեղեցական կալւածների խլման մասին ուղարկեցէք թարմ տեղեկութիւններ ընկերներին հասցնելու եւ մանրամասն թղթակցութիւններ՝ «Դրօշակում» տպելու համար։

1.- Հ. կամ հատորը հաւասար էր հազար ֆրանքի:

2.- Բժիշկներէն մէկը ապահովաբար բժ. Տէր Դաւթեան Յովսէփն է (1870-1946), անդամ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին:

3.- Ռուբէն Իվանիչը Յովի. Քաջազնունին է:

4.- Վահաբ – ծածկանուն Արշակ Վռամեանի, իսկական անունով Օննիկ Դերձակեան:

5.- Վրէժստան – ծածկանուն Ատրպատականի:

6.- Արտաշէս Յովսէփեանը նոյնինքն Մալխասն է,

7.- Աւարայր – ծածկանուն Ատրպատականի Խոյ քաղաքի:

8.- Բորիս Սարաֆով – մակեդոնացի հանրածանօթ յեղափոխական գործիչ:

9.- Ֆերդինանդ – Պուլկարիոյ Իշխան, ապա 1908-1918 Ցար Պուլկարիոյ:

10.- Վիշապ – ծածկանուն Պոլսոյ:

88

Մատեան No 87, *էջ* 247

29 *օգոստոսի* 903

Թորգոմին(1) — *Ռուսչուք*

Սիրելի ընկեր!

Վերջին Ձեր երկու գրածները Կ. Մ.ի գործի մասին ստացել ենք։ Ստացանք ժամանակին նաեւ Կ[ենտ.] Կ[ոմիտէի] գրածը միեւնոյն խնդրի վերաբերմամբ, ուր ի միջի այլոց ասուած է, որ պիտի հոգան ընկերոջ փոխադրելու, ապահովցնելու մասին։ Այդ խօսքերը ի նկատի ունենալով՝ մենք ժամանակին դրամ չուղարկեցինք Ձեզ։ Սակայն մինչեւ օրս ո՛չ մի տեղեկութիւն այլեւս չունինք ոչ Ձեզնից, ոչ Կ.Կ.ից։ Գրեցէք, խնդրում ենք, ի՞նչ արւեց, ո՞ւր է ընկերը։ Եթէ դրամի պէտքը չէ հոգացւել մինչեւ այժմ, անմիջապէս գրեցէք կամ հեռագրեցէք մեզ՝ տալով նաեւ ապահով հասցէ։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Թորգոմ – ծածկանուն Սերեմճեան Արտաշէսի (1870-1915):

89

Մատեան No 87, *էջ* 247

Ժընեւ, 29 *օգ*. 903

Յարգելի պարո՛ն,

Ստացանք Ձեր նամակը։ Թերթ եւ P[ro] A[rmenia] *ուղարկում ենք Ձեզ այսօր, բայց անծանօթ լինելով հետեւեր՝ դժբախտաբար Կովկասի հասցէ*

անկարող պիտի լինենք Ձեզ տալ։

Մարզպետունին(1) *եւս չկարողացաւ մտաբերել Ձեր ով լինելը։*

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Մարզպետունի – ծածկանուն Ղազարոս Ղազարոսեանի (1878-1918):

90

Մատեան No 87, *էջ* 247

Ժընեւ, 29 *օգոստ*. 903

Յարգելի ընկե՛ր,

Ձեր ուղարկած լուսանկարը, պոստ-կարտերը եւ «Կուի համարը» շնորհակալութեամբ ստացել ենք։

Ուղարկում ենք Ձեզ Բ.Ա. *վերջին համարից* 6 *օրինակ — մէկը ձեզ համար, միւսները ուղարկելու ըստ հասցէների։ Վերջիններս կը ստուգենք եւ կ՚ուղարկենք ձեզ նոր ցուցակ։*

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

91

Մատեան No 87, *էջ* 252

Ժընեւ, 1 *սեպտեմբեր* 903

Քրիսին – Վիշապ(1)
Ընկեր!

Շատ ցաւում ենք, որ մեր պատասխանը ուշացաւ, բայց մենք չէինք կարող աւելի շուտ գրել, որովհետեւ մենք ինքներս ազատ չէինք վերջնականապէս կարգադրելու այդտեղի գործերը։ Դուք շարունակ ձեր նամակներում մեղադրում էք մեզ՝ առանց մի րոպէ ենթադրելու, որ մենք էլ կարող ենք կաշկանդւած լինել որոշ պայմաններով։ Չէ՞ որ մենք մեր յայտնի դերն ունենք եւ ամէն բան ենթակայ չէ մեր իրաւասութեան։

Ահա այն եզրակացութիւնը, որ այժմ ունենք այդտեղի վերաբերմամբ։

1) *Ձեր առաջարկած ձեռնարկներից եւ ոչ մէկի մասին չպիտի մտածէք դուք այժմ ամենեւին։ Կը լինի դա լաւ թէ վատ – այդ պէտք է թողնել նրանց պատասխանատուութեան, որոնցից գալիս է ներկայ վճիռը։*

2) *Ձեր անելիքը պէտք է լինի միմիայն մի պահեստ ունենալ, եւ ոչ իւղ*(2) *հաւաքել այդ պահեստում – ուրիշ ոչինչ։ Ե՞րբ կը հարկաւորի այդ իւղը, որտեղ կը գործածւի կամ ինչպէս – այդ հարցերը ձեզ չպիտի հետաքրքրեն եւ դրանցով դուք չպիտի զբաղւէք։*

3) *Ոչ ոք, բացի ձեզանից, չպէտք է իմանայ ձեր այդ վաճա[ռա]կանական գաղտնիքը։*

4) *Իւղի արժէքը կը վճարւի դրսում. հետեւաբար այդտեղ ձեր ծախսերը պէտք է լինեն՝ ա) անձնական, բ) պահեստի եւ գ) մասամբ փոխադրութեան։*

Խնդրում ենք ըստ կարելոյն շուտով ուղարկել մեզ մօտաւորապէս կազմած նախահաշիւ վերջին 3 կէտերի վերաբերմամբ, եւ մենք՝ նայած ծախսի մեծութեան՝ իսկոյն իմաց կը տանք ձեզ՝ կարող ե՞նք արդեօք ամենայն ճշդութեամբ այդ ծախսերը մշտապէս հոգալ թէ ոչ։ Պահեստի համար, գուցէ, կարելի համարենք մի աւելի համեստ տեղ գտնել, քան այն խանութը, որի համար 2000 fr.*ից աւելի են պահանջում։ Դա մեծ ծախս է եւ հետեւաբար դժւար կատարելի։*

Սառնասրտութեամբ կշռեցէք յիշեալ նախապայմանները, եւ եթէ համաձայնւէք ընդունել մեր առաջարկը մի համեստ նախահաշւով, այն ժամանակ ձեր նամակը ստանալուն պէս՝ մենք կ՚սկսենք անելիքներս։

Սրա հետ ձեր փոխադրւում է 500 fr.։

Բարեւներով՝
ԱՐԵՒՄ. Բ[*ԻՒՐՕ*]

1.- Վիշապ – ծածկանուն Պոլսոյ։ Քրիս Ֆեներճեանը (1884-1926), ինչպէս նաեւ նախորդ նամակին մէջ Սերեմճեան Արտաշէսը (Թորգոմ) պիտի ներգրաւուէին Ցուցական մարմնի գործունէութեան մէջ, որուն գլխաւոր ձեռնարկը պիտի հանդիսանար Ապտիլ Համիտի ահաբեկման գործը։

2.- Իւղը՝ կուս. ծածկագրութեան մէջ կը նշանակէր պայթուցիկ նիւթ, ուժանակ։

92

Մատեան No 81-3, *էջ* 110-111 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

3 *սեպտեմբեր* [1903]

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ [*Բաթում*]

Սեպտեմբերի 2-*ին մեկնող շոգենաւի հետ ուղարկուեց ձեզ թերթի* No 6, *մի ծրար գրքոյկներ եւ* «*Հայրենիք*» NN 210-214, *պատրաստ եղէք ստանալու։ Յանձնակատարը նոյնն է* — M.E։ *Ի նկատի ունենալով դրա մշտական պատրաստականութիւնը, խնդրենք այս անգամ իրեն տաք* 25 *ֆ*[*րանկ*] (10 *ռ*[*ուբլի*])։ *այդ չափ է խոստացած իրեն, եւ դուք, ի հարկէ, խոստացողին վատ դրութեան մէջ չէք դնիլ պարոնի առաջ։*

Bithynie *մեթրի*(1) *մասին հարցրել էինք — վճարել է՞ք դուք վերջին անգամ նրան որեւէ գումար թէ ոչ եւ եթէ վճարել էք, ինչքա՞ն։ Մինչեւ օրս պատասխան չստացանք, այն ինչ շուտով նա վերադառնալու է եւ, ի հարկէ, իր պահանջը կրկնելու։ Հետեւաբար կրկին վատ դրութեան մէջ պիտի լինինք։*

Ստացանք Վահան ստորագրութիւնը կրող ձեր նամակը։ Փաստը, որի մասին այդ նամակում խօսւում է առանձին շեշտով, մեզ միանգամայն զարմացրեց։

Մի կողմ թողնելով ձեռնարկի նպատակայարմարութիւնը, ձեր քաղաքում եւ կամ դիմումի համար արած ընտրութիւնը, հարցնում ենք՝ ո՞վ իրաւունք տուեց ձեզ այդպիսի քայլ անել։ Չը գիտէ՞ք միթէ, որ դրա համար «*Կամքի*»(2) *կողմից յատուկ ղեկավար մարմին է կազմուած, եւ այդ մարմնից դուրս ո՛չ մի ուրիշ մարմին եւ ո՛չ մի տեղ՝ իրաւունք չունի, առանց կարգապահութեան դէմ սաստկապէս մեղանչելու, որեւէ դիմում անելու։ Մենք ուրախ կը լինենք իմանալու, որ ունեցել էք պատշաճ թոյլտուութիւն, թէեւ մենք միանգամայն կասկածում ենք եւ շատ ցաւում ձեր արածի առթիւ։*

Երկրի վերաբերեալ ձեր տուած տեղեկութիւններից օգտուեցինք։ Վերջին նամակում խնդրել էինք եւ Սամսոնի մի հասցէ։ Յոյս ունինք շուտով կը հաղորդէք։

Մի ուշացրէք ամէն մի լուր, որ ստանում էք երկրից։ Ի՞նչ տրամադրութիւն կայ այդտեղ եկեղեցական կալւածների խլման վերաբերմամբ։

1.- Bithynie – Սեւ եւ Միջերկրական ծովերու միջեւ երթեւեկող նաւու անուն է: Մեթրը՝ նաւուն վրայ ծառայող վերակացու:

2.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. ժողովէն ետք կեանքի կոչուած յատուկ մարմնին՝ Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմին անունով: Քրիստափորի դիտողութեան առիթ տուող հարցը կապուած է, հաւանաբար, Պաթումի (Նաւահանգիստ) Կ. կոմիտէի կողմէ նախաձեռնուած դրամական հանգանակութեան մէկ քայլին:

93

Մատեան No 87, *էջ* 253

սեպտեմբեր 903

Պ[ալքանի] Կեդր. կոմիտէին

Սիրելի ընկերներ!

Այսօր ուղարկում ենք ձեզ հինգ հարիւր ֆրանկ – Վիշապ փոխադրելու համար։

Նամակ եւ որոշ պայմաններ Քրիսին արդէն գրուած է. խնդրում ենք անյապաղ փոխադրել այդտեղից եւ այս դրամը։

Խնդրում ենք նաեւ շտապել ընդհ. ժողովի համար կարեւոր տեղեկագրեր, հաշիւներ եւ պատգամաւոր ժամանակին ունենալու համար։ Ուրիշ խնդիրների մասին ձեզ պէտք է գրէր առանձին։

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

94

Մատեան No 87, *էջ* 254

Ժընեւ, 4 *սեպտ*. 903

Պատերսոն(1)

Յարգելի ընկերներ!

Գրքոյկների եւ բաց-նամակների հաշւին ձեր ուղարկած 8 *տոլարը* (41 *ֆր*. 20 *ս*.) *ստացանք ժամանակին*։

Պետոյի, *Բաբկէնի*, *Սերոբի*, *Կարօ-ի եւ Բուլղարացու* (2 *տեսակ*) *պատկերներից ուղարկում ենք* 10-10 *օրինակ*։ *Դրանք էլ կցելով ձեզ մօտ մնացած եւ չծախսածներին՝ առանձին հաշւով տեղեկութիւն կը տաք մեզ ապագային*։

Ընկերական բարեւներով՝
ԽՄԲ. «*ԴՐՕՇԱԿԻ*»

1.- Գրութիւնը ուղղուած է Միացեալ Նահանգներու Փեքրրսըն (Պատերսոն) քաղաքի ընկերներուն:

95

Մատեան No 87, *էջ* 254

Ժընեւ, 4 *սեպտ*. 903

Յարգելի ընկերներ!

Շնորհակալութեամբ ստացանք «Հրաբուխ» խումբի հանգանակած քսան գաղղիական ոսկին (400 *ֆր*.)։ *Այդ մասին կը տպագրւի նաեւ «Դրօշակ»ի «նւիրատւութիւն» բաժնում։*

Եթէ գրքոյկների, յեղափոխական հերոսների պատկերների եւ պատկերազարդ բաց-նամակների պահանջ կայ տեղդ, յայտնեցէք մեզ երկու տողով — կ'ուղարկենք ձեզ։

Ձերմ բարեւներով խումբի անդամներին եւ առհասարակ տեղիդ հայ գաղութին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

96

Մատեան No 87, *էջ* 255-56

Ժընեւ, սեպտեմբեր 903

Լոնդոնի «Ալբիոն» խմբին

Սիրելի հայրենակիցներ!

Այսօր ստացանք ձեր բաց-գիրը եւ ցաւելով գտանք, որ իրաւ որ օգոստոսի 2-ից ձեր գրածը մինչեւ այժմ անպատասխան է եղել թողած։ Ձեր նամակից վերցրած լինելով հասցէն (թերթ եւայլն ուղարկելու համար), ինչպէս նաեւ նուիրատուութիւնների ցանկը («Դրօշակում» տպագրելու համար),— նամակներ դրել ենք պատասխանած թղթերի ծրարում եւ մոռացել, որ հարկաւոր էր նաեւ ձեր գրածի ուրիշ կէտերին էլ պատասխանել։ Շնորհակալ ենք, որ ձեր երկրորդ գրութեամբ սխալը ուղղելու հաճոյքը պատճառեցիք մեզ։

Ժողովրդից եւ հայ կեանքից հեռու, մաշող օտարութեան մատնուած, բայց տանջւող հայրենիքի ցաւերով միացած երիտասարդներիդ յոյզերը մեզ հասկանալի են միանգամայն եւ պատւաբեր ձեզ համար։ Այո՛, անբան, թուլամորթ եւ բոլորովին անսիրտ մարդիկ միայն կարող են ներկայ սեւ օրերում՝ չանդրադառնալ մեր ընդհանուր վիճակի վրայ եւ չմտածել, ըստ իւրեանց հանգամանքների, կարելին անելու յօգուտ անբախտ հայրենիքի անպաշտպան շահերին։ Ողջունելով ուրեմն ձեր միութիւնը այնպիսի մի լաբիրենթոսում, ինչպէս Լոնդոնն է, ուր տարագիր հայ մարդիկ հեշտութեամբ կարող են իրարից զատւել եւ ստոր կեանքի ազդեցութեամբ տարւել, ի սրտէ ցանկանում ենք ձեզ ամենայն յաջողութիւն։

Գալով ձեր անելիքներին այդտեղ, մեր կարծիքով, դրամական գործից դուրս, դուք կարող էք նաեւ՝

1) Երբեմնապէս ժողովւել միասին կարդալու, իրար տեղեկութիւններ ու տպաւորութիւններ հաղորդելու եւ կամ խմբից անդամներին հետաքրքրող հարցերը ըստ կարելոյն պարզաբանելու համար։

2) Եթէ որեւէ հնարաւորութիւն կայ, տօն օրերին դաշտ կամ դրա համար ուրիշ յարմար տեղեր ժողովւել հրացանաձգութեան մէջ վարժւելու նպատակով։

3) Նպատակ դնելով հարկաւոր բոպէին երկիր անցնելու, իւրաքանչիւրը ձեզնից թող վաղօրօք մտածէ դրա համար միջոցների մասին (անցագիր, հպատակութիւն, պարապմունքի ձեւ եւայլն) ու, բացի դրանից, ջանայ նաեւ առանձին մի գումար խնայել յատկապէս ճանապարհածախսի համար։ Վերջին կէտը կարեւոր է այն տեսակէտից, որ երբ մարդիկ են պահանջւում երկ-

րից, մենք՝ պարտաւոր լինելով խնայել կազմակերպութեան միջոցները, ընդհանրապէս ուղարկում ենք մարդիկ ամենամօտիկ վայրերից եւ խուսափում ենք ընկերներ հրաւիրել այնպիսի վայրերից, որոնք երկրի սահմաններից շատ են հեռու։ Նաւերին եւ երկաթուղիներին այդ դէպքերում տալիք դրամները կազմակերպութեան դրամարկղը մնում է զէնք գնելու համար։

Ձեր պատասխանը ստանալուց յետոյ, ուր յոյս ունենք գտնել աւելի մանրամասն տեղեկութիւնների մասին, գուցէ առիթ ունենանք խօսալու ուրիշ խնդիրների մասին։

Սրա հետ ուղարկում ենք 10 *օրինակ «Դրօշակ» խմբիդ եւ անդամներին եւ ուրիշներին բաժանելու համար,* 3 *օրինակ ծրագիր եւ* 10 *հատ գրքոյկ ընթերցանութեան համար։ Կարող ենք ուղարկել ձեզ նաեւ յեղափոխական հերոսների պատկերներից ու պատկերազարդ բաց նամակներից, եթէ կարող են այդտեղ առանց դժւարութեան ծախւել։*

Ձերմ բարեւներով՝
ԲԻՒՐՕ-ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

97

Մատեան No 87, *էջ* 270

Ժընեւ, 18 *հոկտեմբեր* 903

Պարոն Ղազարեան(1),

Այսօր ուղարկուեց Ձեր անուան en Gare(2) *հասցէին* 60 *թերթ։ Խնդրում ենք ստանալ*[?] *եւ նախորդ ուղարկուածների հետ ըստ կարելոյն շուտով ճանապարհել։* Bithynie(3) *մասին դժբախտաբար մինչեւ այժմ ոչ մի լուր չունենք, չնայելով, որ երկու անգամ գրել ենք։ Տեսնուեցէք մարդու հետ եւ ըստ նրա տրամադրութեան՝ յատկացրեցէք*[?]. *ծայրայեղ դէպքում, եթէ չուզենայ սպասել, վճարեցէք մեր հաշուին։ Ձեր միւս հարցերին կը պատասխանենք այլ անգամ։*

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վրթանէս Ղազարեանը Մարսէյլի այն ընկերն էր, որուն վստահուած էր ծովու ճամբով դէպի Կովկաս այլազան ապրանքներու (նամակ, թերթ, զէնք եւայլն) առաքման գործը:

Հարկ է նշել որ Մատեան No 87, էջ 270-ի այս, ինչպէս նաեւ միւս երկու գրութեանց պատճէնները խիստ անորակ են:

2.- Ֆրանսերէն՝ շոգեկառքի կայարանին մէջ տրուած հասցէ իմաստով:

3.- Կովկասի (Պաթում) եւ Եւրոպա երթեւեկող նաւային ընկերութիւն:

98

Մատեան No 87, *էջ* 270

Ժընեւ, 18 *հոկտ*. 903

Յարգելի ընկերներ!

Ըստ կրկնակի Ձեր պահանջի՝ ուղարկում ենք ձեզ 10 *հատ մեծադիր պատկեր* (*Սերովբի*)։

Ինչ վերաբերում է ձեր ուզած «Զէյթունի անցեալէն եւ ներկայէն» գրքի II *հատորին — այդ գիրքը Ալենակի հրատարակութիւն է եւ, ինչպէս յայտնեց մեզ հեղինակը, կարող էք ստանալ Ամերիկայում, դիմելով նրա որդուն, որի հասցէն է՝*

H. Semerjian
c/o James P. Block, 115 state st.
Boston — Mass.

Ընկերական բարեւներով՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

99

Մատեան No 87, *էջ* 270

Ժընեւ, 18 *հոկտ*. 903

Յարգելի տնօրէն!

«Դաշնակցութեան» հրատարակութիւնները վաճառականական ձեռնարկի բնոյթ չունին եւ այդ պատճառով, ներեցէք մեզ, անկարող ենք Ձեր ցանկացած պայմաններով գրքեր ուղարկել ձեզ։

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

100

Մատեան No 87, *էջ* 272

16 *հոկտ.* 903, *Ժընեւ*

Յարգոյ հայրենակի՛ց,

Այսօր փոստին յանձնեցինք Ձեր անուան ներկայ տարւայ «Դրօշակի» բոլոր համարները։ Ապագայում եւ շարունակ կը ստանաք։ Թերթը բաժանորդագրութիւն չունի եւ ուղարկւում է բոլոր ցանկացողներին ձրիաբար։ Եթէ կամենաք՝ կարող էք որեւէ գումար ուղարկել՝ իբրեւ նւէր։

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

101

Մատեան No 87, *էջ* 272

16 *հոկտ.* 903, *Ժընեւ*

Յարգելի հայրենակի՛ց, (*Վրէժստան*)

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր նամակում ներփակածը, որ անշուշտ մեզ համար էր։ Վստահ ենք, որ եթէ ապագայում եւս կրկնւին նմանօրինակ դէպքեր, չէք զլանալ առանց ուշացնելու դէպի մեզ ուղարկել։ «Դրօշակը» կ՚ուղարկւի Ձեզ նոր հասցէով։

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

102

Մատեան No 87, *էջ* 272

16 *Հոկտ.* 903, *Ժընեւ*

Յարգելի հայրենակի՛ց,

Տասը մարկի ձեր նւէրը ստացել ենք եւ Ձեր անւան ուղարկւում է «Դրօշակ» No 6*ից սկսած։ Անշուշտ ապագայում եւս շարունակ կ՚ուղարկւի Ձեզ։*

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

103

Մատեան No 87, *էջ* 272

18 *Հոկտ.* 903, *Ժընեւ*

Յարգելի Օրիո՛րդ,

Այսօր փոստին յանձնեցինք Ձեր անւան ներկայ տարւոյն «Դրօշակի» բոլոր համարները բարակ թղթի վրայ. բաժանորդագրութիւն չունի «Դրօշակը» եւ ուղարկւում է բոլոր ցանկացողներին ձրիաբար։ Եթէ կամենաք՝ կարող էք որեւէ գումար ուղարկել՝ իբր նւէր։ Ապագայում եւս շարունակ կը ստանաք։

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

104

Մատեան No 87, *էջ* 274

23 *Հոկտ.* 903, *Ժընեւ*

Երջանեանին, Փարիզ

Սիրելի,

Նամակդ ստացւեց։ Դրամ եւայլն կը լինեն։ Դուք խոստանում էք conférence-*ի նկարագրութիւնը ուղարկել։ «Դրօշակը», այո՛, պէտք ունի այդ նկարագրութեան եւ սրանով յատուկ խնդրում ենք, օրը օրին, եթէ երկրից է, մանրամասն հաղորդէք մեզ անցած-դարձածը եւ Ձեր անմիջական տպաւորութիւնները։ Գուցէ, յաւելւածով հրատարակենք՝ այս սեւ օրերում ժողովրդին գոնէ վայրկենական մի մխիթարութիւն տալու համար։ Եթէ շատ զբաղւած լինէք կամ գործը մի մարդու ուժից վեր լինի, խնդրում ենք մեր կողմից Բաղդասարեանին հրաւիրել Ձեզ օգնելու։*

Յարգանօք
ԱՐԵՒՄ. ԲԻՒՐՕ

105

Մատեան No 87, *էջ* 279

«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՈՒՂՂՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՒԱՔՈՅԹԻՆ

(Գումարուած Հայաստանի եւ Մակեդոնիոյ զօրակցութեան համար)

[Le 24 octobre 1903]

Paris
Hôtel Continental
Au Président de la Réunion Arméno-Macédonienne

Avec un sentiment de profonde reconnaissance la rédaction de Droschak, au nom de la Fédération Révolutionnaire Arménienne, salue la deuxième Réunion Internationale organisée pour la défense des droits les plus sacrés, les plus élémentaires de deux peuples.

Ayant perdu la confiance en bonne volonté de la diplomatie contempoaine, nous ne comptons que sur la force de notre résistance nationale et sur le concours des nobles représentants de la civilisation.

Ce concours nous est indispensable surtout aujourd'hui, lorsque à l'œuvre d'extermination du grand assassin vient de s'associer la politique farouche des bourreaux moskovites, lorsque aux flots de sang arménien versé en Turquie s'ajoute celui des arméniens du Caucase.

Nous espérons que la seconde Conférence International des Eminents arménophiles, en vue de cette situation critique, se prononcera pour une action étendue, systématique, qui puisse forcer la main à la diplomatie et arracher enfin les deux peuples agonisants aux griffes du despotisme.

DROSCHAK

Թարգմանութիւնը .— «*Դրօշակ*», 1903, No 9, *էջ* 152։

Խորին երախտագիտութեան զգացումով՝ «Դրօշակի» խմբագրութիւնը ողջունում է, յանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, երկրորդ միջազգային համաժողովը, որ գումարուած է՝ պաշտպանելու համար երկու ժողովուրդների ամենասրբազան եւ ամենատարրական իրաւունքները։ Կորցրած լինելով մեր հաւատը դէպի դիւանագիտութեան բարի կամեցողու-

թիւնը, մենք մեր յոյսը դրել ենք միայն մեր ազգային դիմադրութեան ուժի եւ քաղաքակրթութեան ազնիւ ներկայացուցիչների աջակցութեան վրայ։ Այդ աջակցութիւնը անհրաժեշտ է մեզ մանաւանդ այժմ, երբ մեծ մարդասպանի ընաջնջման գործին գալիս է միանալու մոսկովեան դահլիճների դաժան քաղաքականութիւնը, երբ Անատոլիայի մէջ թափուած հայկական արեան հոսանքին աւելանում է Անդրկովկասեան հայերի արիւնը։

Մենք յոյս ենք տածում, որ մեծանուն հայասէրների երկրորդ միջազգային խորհրդաժողովը, ի տես տագնապալից մի վիճակի, պիտի որոշէ ձեռնարկել ընդարձակ ու սիստեմատիկ պրոպագանդի, որը կարողանար մղել դիպլոմատիային դէպի միջամտութիւն եւ խլել վերջապէս երկու հոգեվարք ժողովուրդները բռնութեան ճիրաններից։

* * *

Ծ. Խմբ.— 1903 *թ. Հոկտ.* 23-*ին Փարիզի մէջ գումարուած են միջազգային երկու հաւաքոյթներ, առաջինը Օթել Քոնթինանթալի, իսկ երկրորդը՝ միեւնոյն օրը երեկոյեան՝ Սառա Պեռնար Թատերասրահին մէջ, մասնակցութեամբ մեծաթիւ բազմութեան։ Ի պաշտպանութիւն հայ եւ մակեդոնացի ժողովուրդներու դատերուն, խօսք առած են տասնեակէ մը աւելի ականաւոր անձնաւորութիւններ, ինչպէս Ժան Ժորէս, Մաք-Քոլ, Սեմիոնով, Վիկտոր Պերար, Ֆրանսիս տը Փրեսանսէ, Քիյար եւ ուրիշ շատ մը համբաւաւոր դէմքեր։ Հաւաքոյթներու աւարտին, միաձայնութեամբ ընդունուած է հետեւեալ բանաձեւը.—*

«Յանուն տիեզերական խղճի, որ նշաւակում է եւ պիտի շարունակէ նշաւակել սուլթալ Աբդիւլ Համիդի ոճիրները,

«Միջազգային միթինգը, գումարուած Սարա Բերնարի Թատրոնում, 25 հոկտեմբեր 1903,

«Թախանձում է պետութիւններին՝ վախճան դնել, վերջապէս, Հայաստանի եւ Մակեդոնայի կոտորածներին, նշանակելով պատասխանատու կառավարիչ եւ սահմանելով իրական հսկողութիւն»:

(«*Դրօշակ*», 1903, No 9, *էջ* 152)

106

Մատեան No 87, *էջ* 277

29 *հոկտեմբեր* 903

Մխիթարեան տպարանին, Վիեննա
Արժանապատիւ հայրե՛ր,

Ձեր տպարանից մեր գնած տառերի մէջ մի շարք տառեր, համեմատած միւսների հետ, քիչ քանակութեամբ են վերցրած։ Յանկանալով լրացնել այդ պակասը, խնդրում ենք, չզլանալ ըստ կարելոյն շուտով, ուղարկել մեզ ներփակ ցուցակի համեմատ՝ կրկին մի փոքր քանակութիւն։

Տառերը կարող էք ուղարկել վ.....(1) *վճարով կամ, եթէ այդ անյարմար է Ձեզ համար, իմաց տալ մեզ, որպէսզի վճարը իսկոյն ուղարկենք։*

Յարգանօք՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Անընթեռնելի մէկ բառ:

107

Մատեան No 87, *էջ* 280

29 *հոկտեմբեր* 903

Պ. Ղազարեանին, Մարսէյլ
Յարգելի Պ. Ղազարեան,

Այսօր փոստից յայտարարութիւն ստանալով իմացանք, որ «Դրօշակի» համարները թափած են Gare-*ում եւ չնայելով մեր գրած նամակին* (*հոկտեմբերի* 12-*ից*)՝ *դուք մինչեւ այժմ նեղութիւն չէք կրել ստանալու։ Չէ՞ որ դուք էիք Ձեր նախորդ նամակներում պահանջում, որ այդպէս Ձեզ ուղարկուէր եւ ոչ ուրիշ հասցէի։ Բան չենք հասկանում եւ խնդրում ենք վերջապէս տաք մեզ մի հաստատ հասցէ, որով թէ կարողանաք օգտուել առաքումների համար ապահով կերպով, թէ Ձեզ չը բարկացնենք ամէն անգամ, թէ ինչո՞ւ այդպէս արինք կամ այնպէս...*

Բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

108

Մատեան No 87, *էջ* 281-82

30 *հոկտեմբերի* 903

Գալաց(1) «*Ծերունի*» *խմբին*

Սիրելի հայրենակիցնե՛ր,

Ձեր երկու նամակները (*օգոստոսի* 20-*ից եւ սեպտեմբերի* 26-*ից*) *ինչպէս նաեւ* .....(2) *կը ցուցնեն եւ վերջին նամակներիդ հետ ուղարկած* 60 *ֆրանկը, ստացել ենք։*

Դուք կամենում էք մեզ հետ անմիջապէս թղթակցել եւ դրա համար խնդրում էք մեր հասցէն։ Մեր հասցէն տալուում է «Դրօշակի» իւրաքանչիւր համարում եւ կարող էք ապահով կերպով օգտուել։ Իսկ եթէ ուզում էք, որ արդէն բոլորովին միամիտ լինէք եւ չգործածէք «Դրօշակի» անունը, այն ժամանակ գրեցէք այսպէս՝

Mr. E. Sissagui
Roseraie, 29
Genève – Suisse

Հարկաւոր չէ ցաւել, որ ձեր մէջ չկայ լաւ գրագէտ անձնաւորութիւն։ Գրեցէք ինչպէս կարող էք – մենք միշտ կը հասկանանք ձեր միտքը եւ ուրախ էլ կը լինենք տեսնելով մեր պաշտած գաղափարի կողմնակիցները ոչ միայն գրագէտների շրջանում, այլեւ հասարակ ժողովրդի մէջ. այս ամենից թանկը, ամենից աւելի խրախուսողն է մեզ համար։

Ցանկանալով խմբիցդ ամենայն յաջողութիւն, միաժամանակ այս նամակի հետ ուղարկում ենք ձեզ 4 *օրինակ «Դաշնակցութեան» ծրագիր,* 8 *«Նախագիծ զինուորական խմբերի»,* 4 *«Կարնոյ յիշատակին» եւ երեքական օրինակ հետեւեալ հրատարակութիւններից – «Ազատութեան ճանապարհին»* I *գրքոյկ, նոյնը* II *գրքոյկ, նոյնը* III, *«Ամբոխային տրամաբանութիւն», «Հայուհիներին», «Հայրենասէրի տաղերը», «Հերոսը», «Ապստամբ Սասունը», «Ազատութեան երգեր»։*

Ի նկատի ունենալով ձեր պայմանները, մեզ թւում է, որ ընթերցանութիւնից եւ երկրի վիճակով անդադար հետաքրքրուելուց զատ՝ «Ծերունի» խումբը միանգամայն կարեւոր գործ արած կը լինէր նաեւ վարժեցնելով իր անդամներին գէնքի գործածութեան մէջ։ Դա, ի հարկէ, չէ նշանակում, որ ձեզնից իւրաքանչիւրը անպատճառ պիտի զինագրւի (*դա միանգամայն անձնական տրամադրութեան խնդիր է*), *բայց ո՞վ գիտէ ում ի՞նչ է սպասում կեան-*

քում, ո՞վ ձեզնից վաղը կամ միւս օրը ո՞ւր կը լինի եւ ի՞նչ հանգամանքների ազդեցութեան տակ։ Հայկական կեանքի ներկայ բնաւորութիւնը այնպէս է, որ ամէն-մէկ հայ իրեն պիտի համարի ամենուրեք հալածանքի, թալանի եւ կոտորածների առարկայ, եւ դրա համար է, որ զինավարժ լինելը ներկայումս մի կարեւոր պահանջ է բոլորիս համար։

Եթէ կապեր, յարաբերութիւններ ունէք երկրի հետ՝ մի խզէք այդ կապերը, այլ ամէն կերպ պահպանեցէք եւ նոյնիսկ լայնացրէք՝ միշտ հետեւելով այնտեղի կեանքին։ Հետաքրքիր տեղեկութիւններ — եթէ ստանաք երկրից, մեզ էլ իսկոյն հաղորդեցէք։

Ձեր ուղարկած 60 fr. *մասին*, No 8 «*Դրօշակում*» — «*Նուիրատուութեան*» *բաժնում, կը գտնէք յիշատակութիւն։*

Ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Գալաց – քաղաք Ռումանիոյ մէջ։
2.- Անընթեռնելի մէկ բառ՝ պատճէնին մէջ բաց մնացած ըլլալու հետեւանքով։

109

Մատեան No 87, *էջ* 284-85

Ժընեւ, 30 *հոկտ*. 903

Սիրելի ընկե՛ր(1),

Ձեր վերջին նամակները (15 *սեպտ*., 8 *հոկտ*. *եւ* 24 *հոկտ*.) *ժամանակին ստացուել են։ Մինչեւ այժմ չէինք պատասխանում, որովհետեւ կրկին դուք դրիք մեզ դժուար դրութեան մէջ։*

Չնայած սեպտեմբերի 1-*ից մեր արած շատ պարզ եւ որոշ առաջարկներին՝ դուք շարունակում էք պնդել Ձեր առաջւայ պահանջների վրայ եւ ներկայացնում էք մի նախահաշիւ, որը մեզ համար միանգամայն նոր չէ։ Այն ժամանակ, երբ մենք խնդրել էինք ամէն ինչ սահմանափակել երեք կէտերով — անձնական, պահեստի եւ փոխադրութեան ծախսերով — դուք էլի բերում էք* 5 *կէտ եւ պահանջում ամսեկան* 990 *ֆր*.։ *Խանութի մասին մենք յայտնել էինք մեր կարծիքը՝ թէ իբր պահեստ՝ դա շատ թանկ է*...։ *Դուք պատասխանում էք, որ դա պահեստի համար չէ։ Բայց չէ՞ որ միեւնոյն նամակում ասուած էր եւ դուք համաձայնւում էիք, որ փոխադրութիւնից դուրս՝ որեւէ ձեռնարկի մասին այժմ խօսք չպէտք է լինի. ինչո՞ւ էք ուրեմն էլի մտցնում այդ խանութը ձեր նախահաշիւի մէջ։*

Դուք շարունակ գանգատւում էք, որ Ձեզ ստակ չէ ուղարկւում։ Դրամ Ձեզ փոխադրելը ինքնըստինքեան, ի հարկ է, մի դժուար գործ չի, բայց շատ դժուար է մեծ ծախսերի համար պատասխանատուութիւն վերցնելը, որովհետեւ դրամը այնքան հեշտ կերպով չէ ձեռք բերւում, որքան հեշտութեամբ կարելի է մսխել(2)։ *Եւ յետոյ, եթէ մենք էլ, հետեւելով Ձեր գանգատների սիստէմին, շարունակ գրէինք Ձեզ, թէ գործ չենք տեսնում այդտեղ, ի՞նչ պիտի հասկացուէր այս բոլորից. դրամ շատ-քիչ Ձեզ ուղարկւել եւ ուղարկւում է, իսկ շատ բա՞ն է փոխադրւած է արդէն՝ չնայելով որ դուք վաղուց այդտեղ էք։ Բայց թողնենք այս անարժան խօսակցութիւնները։ Ամբողջ խնդիրը նրա վրայ է, որ դուք մնում էք Ձեր առաջւայ կարծիքին, իսկ մենք մեր պատասխանատուութիւնից բարձր ենք համարում Ձեր պահանջած ամսեկանը յատկացնել։ Եթէ կարող էք թողնել խանութը եւ ամսեկան* 400-500 *ֆր*[*անքով*] *սկսել փոխադրութեան՝ գրէք մեզ. թէ ոչ՝ մենք ստիպւած կը լինինք դադարեցնել ամէն բան։ Ահա մեր պարզ եւ վերջնական խօսքը։ Վստահ ենք, ընկե՛ր, որ դուք չէիք կամենալ, որ մենք մեր իրաւասութիւնից վեր վճիռներ ընդունէինք, եւ ուրեմն՝ կը հասկանաք այն շարժառիթները, որոնք թելադրում են մեզ ներկայ որոշումը։*

Այսօր Բ. Կ.ի միջոցով փոխադրւում է Ձեզ 400 fr.։ *Նւիրատուութիւնը* N 8-*ում*

տպւած է. երբ ուշանում է տպագրութիւնը — դա նշանակում է թերթում տեղ չէ եղել — ուրիշ ոչինչ։

Ժօրիսին(3) *կը գրւի առանձին. միամիտ եղէք։*

Ջերմ բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Հասցէատէր չէ նշուած, բայց բովանդակութենէն դատելով՝ նամակը պէտք է ուղղուած ըլլայ Պոլիս (Վիշապ)՝ Ցուցական մարմնի անդամներէն Քրիս Ֆեներճեանին: Տեսնել այս մասին սեպտ. 1-ին վերջինիս ուղղուած գրութիւնը, էջ199:

2.- Մխսելը Քրիստափոր միշտ կը գործածէ ծախսել իմաստով:

3.- Պոլիս հաստատուած պելճիքացի երիտասարդ, որ պիտի ներգրաւուէր հետագային Սուլթան Ապտիւլ Համիտի դէմ ձեռնարկուած մահափորձին մէջ:

110

Մատեան No 87, *էջ* 287

31 *հոկտեմբեր* 903

Բալք[*անեան*] *կեդր. կոմիտէին, Ֆիլիպպէ,*

Սիրելի ընկերնե՛ր,

Հոկտեմբերի 25-*ից պատասխանուած է Ձեր վերջին գրութիւններին։ Յոյս ունենք, որ թիւրիմացութիւնների առաջ կանգ չառնելով՝ արդէն պատրաստուած լինէք ժողովի համար։*

Այսօր նամակ կար Սոֆիայից, որով մեզ աւետում են այնտեղի դաշնակցական կոմիտէի վերակազմուելը։ Մենք կը գրենք իրենց, եւ ի հարկէ, կը խնդրենք անմիջապէս կապուել Ձեզ հետ։ Ահա նրանց հասցէն՝

M. Arzrouni

…… N 19(1)

Նամակը ստորագրել են Ղուկաս Մինասեան եւ Մ. Արծրունի։ Ճանաչո՞ւմ էք դրանց։ Կոմիտէի կնիք էլ ունին մօտները՝ հնից մնացած։ Անդամների թիւն է 27։

Մոռացմամբ չէ պատասխանուած ընկեր Գօշի(2) *մի բաց գրին, որով հարցը՝ թէ թռուցիկներն ի՞նչ շրջանի համար են ուղարկուած (կալուածների յափշտակման վերաբերեալ, թռուցիկները)*(3)։ *Ամբողջ Բալքանեան թերակղզու համար էր այդ կապոցը. ուրիշ ոչ մի տեղ ոչինչ չէ ուղարկուած։*

Ներփակ չորս հարիւր ֆրանկը փոխադրեցէք, խնդրում ենք, Էդկարին(4)։

Ջերմ բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Հասցէն անընթեռնելի. կը կարդացուի միայն N 19:

2.- Անտոն Գօշ – ծածկանուն Պոյաճեան Անտոնի, այդ օրերուն անդամ Պալքանեան Կեդր. կոմիտէի:

3.- Հարցը կը վերաբերի ցարական իշխանութեանց կողմէ հայ եկեղեցական կալուածներու գրաւման դէմ հրատարակուած բողոքի թռուցիկներուն:

4.- Էդկար – ծածկանուն Այվազեան Կարապետի, որ նոյնպէս պիտի ներգրաւուէր Ապտիւլ Համիտի դէմ ձեռնարկուած մահափորձին մէջ:

111

Մատեան No 87, *էջ* 335

Ժընեւ, 10 *դեկտեմբեր* 903

Ընկե՛ր(1),

Նոյեմբերի 16/29-*ից Ձեր նամակը մեզ զարմանք պատճառեց։ Մենք պատասխանել ենք Ձեր նախկին գրածներին դեռ հոկտեմբերի* 30-*ին, եւ սակայն Ձեր այս նամակից չի երեւում, որ դուք մեր գրածը ի նկատ էք ունեցել։ Ենթադրելով, որ չէք ստացել, կրկնում ենք նրա բովանդակութիւնը։*

Մենք, մեր պատասխանատուութեամբ, կարող ենք ընդունել միայն հետեւեալ ծախսերը՝ 1) *անձնական,* 2) *պահեստի եւ* 3) *փոխադրութեան։ Դրանցից դուրս ո՛չ մի տեսակ ձեռնարկի կամ պատրաստութիւնների մասին խօսք չէ կարող լինել եւ հետեւաբար Ձեզնից ուզած մեր նախահաշիւը այդ կարգի ո՛չ մի պահանջ չպէտք է պարունակի իր մէջ։ Հաշւելով Ձեր ապրուստի ծախսը* 100 fr., *պահեստի եւ ամէն տեսակ մանր ծախսերի համար* 150 fr. *եւ իւրաքանչիւր ամիս* 40 *կիլօ իւղ փոխադրելու համար* 160 fr.— *կը ստանանք ընդամէնը* 410 fr. *ծախսի գումարը, որ մենք կարող ենք յանձն առնել՝ այն էլ միակ պայմանով, որ տարուց ի վեր փոխադրութեան համար գնացած լինելով, դուք վերջապէս սկսէք Ձեր ստանձնած գործը։ Դրամ մսխել եւ մէջտեղ ոչինչ չտեսնել — այդ ոչ ոք չի անում, մանաւանդ չպէտք է անւի յեղափոխական եւ ոչ մի ղուրուշի վերաբերմամբ։ Բաւական է անվերջ խօսել եւ բանակցելներս։ Եթէ համաձայն չէք հետեւել այս նախահաշւին, յայտնեցէք։ Եթէ համաձայն էք, իսկոյն ձեռնարկէք փոխադրութեան գործը։ Մենք չենք կարող մեզ համար պարտաւորեցուցիչ համարել ո՛չ մի ծախս, պարտք եւայլն, որոնք դուրս կը լինեն մեր ներկայ պայմաններից եւ արւած կը լինեն լոկ Ձեր անհատական նախաձեռնութեամբ։*

Դրամ մենք փոխադրել ենք Ձեզ (*Ֆիլ*[*իպպ*]*էի միջոցով*) 400 fr. *եւ ոչ թէ* 200։ *Օտարազգի բարեկամին ուղարկւած են գրքեր* 2 *անգամ եւ մի անգամ էլ նամակ է գրւած։ Մակեդոնական թերթ այժմ չկայ արտասահմանում։*

Ձերմ բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ

1.- Ընկերոջ անունը չէ յիշուած, բայց յայտնապէս ուղղուած պիտի ըլլայ Պոլիս՝ Քրիս Ֆեներճեանին, որուն միեւնոյն հարցերու մասին գրուած էր արդէն նախապէս: Տես էջ 216-17, հոկտ. 30-ի նամակը:

112

Փաստ. 1167-89

Փաստաթուղթին վերը տրուած համարակալման թիւը պէտք է ըլլայ 1267-89, ինչպէս կայ արխիւներու ընդհանուր ցուցակին մէջ: Թիւ 1167-89 փաստաթուղթը բոլորովին այլ գրութիւն է, այն ալ 1924 թուականի:

Երկրորդ, թուականի կողքին գրուած Ժընեւը ակնյայտնի սխալ է, արդիւնք՝ անուշադրութեան, որովհետեւ Քրիստափորի այս հակիրճ նամակը գրուած է փարիզեան բացիկի մը վրայ (carte postale), որուն վրայ գտնուող դրոշմանիշը ֆրանսական է: Արդարեւ, Քրիստափոր Դեկտ. 21ին Ժընեւէն անցած էր արդէն Փարիզ, հաւանաբար նոր հասած: Դեկտ. 17 թուակիր նամակի մը մէջ ան կը գրէ՝ «Շաբաթ օր գնալու եմ Փարիզ»: Արդարեւ Սեպտ.ի կէսերէն իր կինը՝ Ժենիա եւ որդին՝ Ռուբէն կը գտնուէին Փարիզ, ուր նոր տարին անցընելէ ետք, Քրիստափոր մեկնեցաւ Սոֆիա՝ Հ.Յ.Դ. Գ. Ընդհ. ժողովի նախապատրաստական աշխատանքները տեսնելու համար:

Այս բացիկը ունի յատկանշական ուրիշ երես մը:

Փարիզեան բացիկի կեդրոնական մասը կը գրաւէ «Հանրապետութեան յաղթանակը» պատկերացնող յուշարձանին նկարը. աջին՝ Քրիստափորի նամակն է. ձախին՝ Սիմոն Զաւարեանին ուղղուած բանաստեղծ Ատոմ Եարճանեան-Սիամանթոյին երկտողը (տեսնել հանդիպակաց էջ): Ծանօթ է որ այդ տարիներուն Սիամանթօ Փարիզ՝ Սորպոնի համալսարանի ուսանող էր:

21 *դեկտ.* 903, *Ժընեւ*

Սիրելի՛ք,

Երէկ սաղ-սալամաթ տեղ հասայ։ Ռուբէնը լաւանում է. այսօր 1/4 *ժամով դուրս տարայ ման գալու եւ իրեն լաւ էր զգում։ Տեսայ մի քանի տղերանց։ Ուզում են «Դաշնակցութեան» Բ. Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնները։ Ուղարկեցէք* 10 *հատ «ծրագիր». ինչ որ կայ նրա մէջ բաւական է. բաց թողած կէտերը ես կը բացատրեմ։ Բացի դրանից՝ ուղարկէք հայդուկային խմբերի լուսանկարներից* 2 *հատ։ Դա հարկաւոր է «Հայրենիքի» կլիշէի համար։ Ժենիան, Վոլիան եւ Ռուբէնը բարեւում են։*

Ձեր՝ ՔՐԻՍՏԱՓՈՐ

Յարգելի պարոն Զաւարեան,

Կը խնդրեմ ընտրեցէք հայդուկային խմբի այն պատկերներէն, որոնք բռօֆիլ նկարուած են. եթէ չկայ խումբերուն մէջ, ուրիշ ոեւէ հայկական տիպարի մօտեցող նկար ղրկեցէք, միշտ նախամեծար սեպելով բռօֆիլը։

Այս անգամ «Դրօշակ»ները 10 կամ 20 թիւ աւելի ղրկեցէք, որովհետեւ... Փարիզը այժմ փոխուած է ...։

Ա. ԵԱՐՃԱՆԵԱՆ



113

Չհամարակալուած եւ մեզի անծանօթ ձեռագրով գրուած այս նամակը կը գտնուի Հ.Յ.Դ. Գ. Ընդհ. ժողովի թղթածրարներուն մէջ: Գրուած է Ընդհ. ժողովի նախօրէին կազմուած «մասնաժողով»ի կողմէ եւ ուղղուած Վրէժի (Ատրպատական) Կեդր. կոմիտէին: Ստորագրած են Սիմոն[?], Մամօ, Էլլէն եւ Գարեգին: Առաջին երկուքին ինքնութիւնը կը մնայ ստուգելի, մինչ Էլլէնը Քրիստափորն է, իսկ Գարեգինը՝ Թադէոսեան Ստեփանը (1870-1945) –Ատրպատականի Կեդր. կոմիտէի պատգամաւորը Գ. Ընդհ. ժողովին:

26ն *Յունվարի* 904, *Սոֆիա*

Վրէժի Կեդրոնական Կոմիտէին

Սիրելի ընկերնե՛ր,

Ընդհանուր ժողովը՝ իր մի շարք վճիռների գործադրութիւնը չուշացնելու նպատակով՝ հաստատել է մի մասնախումբ, որի պարտականութիւնն է ժողովի ընդունած որոշումները անյապաղ հաղորդել պատշաճ մարմիններ եւ ընկերներ։ Ահա այդ մասնախմբի կողմից է, որ գրւում է Ձեզ այս նամակը։

Պէտք է աշխատել ամեռուայ ընթացքում, որքան ծայր կամ կոթ(1) *կը լինի պատրաստ, փոխադրել Մինարէթ*(2)*. իսկ եթէ յարմարութիւններ կան Մինարէթից էլ Շամիրամ*(3) *փոխադրել (սուրհանդակների միջոցաւ), պէտք է ջանալ փոխադրել ծայրերը։*

Հարկաւոր է հոգալ նաեւ Գաղթաշէնից(4) *գիծ պատրաստել եւ այնտեղի իրերը փոխադրել Շամ։ Խորհրդակցեցէք Շամի ընկերների հետ եւ գործը առաջ մղէ՛ք։*

Այսօր գրում ենք Մեծ-Քաղաք(5)*, որ Ձեզ փոխադրեն* 1200 *ռուբլի։ Այդ գումարից* 1000 *ռուբլով պէտք է գնել նոր տեսակի ծայրեր եւ փոխադրել Մինարէթ, իսկ մնացած* 200 *ռուբլին յատկացնւում է տեղիդ արհեստաւորների ապրուստին։*

Ամերիկայից այդտեղ ստացւած 540 *թումանը պէտք է գործադրել այսպէս. գնեցէք* 1000 *նոր տեսակի ծայրեր, իսկ մնացած դրամով հին ձեւի կոթեր։*

Խմբագրութիւնից Մինարէթ է ուղարկուել 1500 *ֆր. դրանից* 1000 *ֆր. փոխադրելու է Շամ, իսկ մնացած* 500 *ֆր. ստացէք այդտեղ եւ ձեռք բերէք նոր տեսակի ծայրեր։*

Ժողովը խնդրում է ոչ մի կերպ չչեղչիլ այս կարգադրութիւններից եւ ջանալ արագացնելու դրանց գործադրութիւնը։

Ընկերական բարեւներով՝

Մասնաժողով՝
ՍԻՄՈՆ[?]
ՄԱՄՕ
ԷԼԼԷՆ
ԳԱՐԵԳԻՆ

1.- Ծայրը փամփուշտն է, կոթը՝ հրացան։
2.- Սալմաստ։
3.- Շամիրամ, Շամիր կամ Շամ՝ Վան-Վասպուրականն է։
4.- Գաղթաշէն՝ Ս. Թադէի վանքի շրջան, Ատրպատականի Մակուի շրջան։
5.- Մեծ-Քաղաքը Թիֆլիսն է, կամ Արեւելեան բիւրոն։

114

Չհամարակալուած նամակ, գրուած Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովի օրերուն եւ ուղղուած Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան անդամներէն մէկուն:

25 *փետրվ.* 904, *Սօֆիա*

Սիրելի՛,

Ստացայ նամակդ հանդերձ ներփակեալներով (Մաթէոսի եւ Աշոտի(1) *նամակներով)։*

Բօրիսին(2), *երեւի, այստեղ կը պատահենք, որովհետեւ մեր պարապմունքները բաւական դանդաղ են առաջանում։*

Ներփակ ուղարկում եմ սուլուխցի Սերոբի պատկերը (հայր իր երկու որդիներով(3))՝ *նահատակուած Բասենում։*

Անպատճառ դիր 2րդ համարում։ Միայն, ի սէր Աստծոյ, ֆոնը պարզեցնել տաս. այս խալիչի(4) *անշնորհք նաշխերը աչքեր են ծակում ու ցրւում են գեղեցիկ դէմքերի տպաւորութիւնը։*

Ծրագրի մասին փոփոխութեան առաջարկ կար, որն արդէն անցել է. այդ փոփոխութիւնների պրօժէն պէտք է մշակւի «Դաշնակցութեան Խորհրդի» կողմից («Կամք ներկայացնող մարմինը» այժմ այդպէս է կոչւելու) եւ պիտի առաջարկւի հետեւեալ Ընդհ. ժողովին (1906 *դեկտ.*)։

Բիւրօ-Խմբագրութիւնը կը մնայ հին ձեւով, միայն լայն կազմով — լինելու են 5 հոգի, բացի Եւրոպայի մայրաքաղաքներում երկու ներկայացուցիչներից։

Ստացայ Խաչատուրի(5) *նամակը եւ յայտնեցի ժողովին կարեւոր մասը։*

Շտապում եմ։

Համբոյրներով՝
ՔՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Ներփակը տուր Խաչատուրին եւ ասա, որ Պետերբուրգից ուզել եմ «Ցերկովնի Իզբորնիկ»-ի(6) *համարը։*

Եթէ չէք ստացել արդէն, կ՚ըստանաք։ Թո՛ղ «Խաբրիկներում» չտապի տպագրել։

1.- Մաթէոս – արդեօք Մինասեա՞նն է: Աշոտը՝ Եղիկեան Կարապետն է:
2.- Բորիս – ծածկանուն Սմբատ Խաչատրեանի:
3.- Յիշուած նկարը տպուած է արդարեւ «Դրօշակ»ի 1904 թ. No 2 համարին մէջ:
4.- Պարսկերէն՝ փոքր գորգ իմաստով:
5.- Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի):
6.- Բնագրին մէջ ռուսատառ՝ «Ցերկովնի Իզբորնիկ» – եկեղեցական ժողովածու:

115

Փաստ. 1146-29

Հ.Յ.Դ. Գ. Ընդհ. ժողովի օրերուն գրուած բացիկ (1904, Փետրուար-Մարտ), ուղղուած հաւանաբար «Դրօշակ»ի խմբագրութեան՝ Ժընեւ:

7/20 *մարտ*, 1904, *Սոֆիա*

Սիրելի՛ք,

Պատասխանում եմ վերջին երկու հեռագիրներիդ.

1) *Լեւոնեանի*(1) *հասցէին ստացած* 10 *հ*[*ատոր*]*ը*(2) *պահէք այդտեղ. դրա փոխարէնը մենք կը տանք իրեն այստեղ։ Եաշայից*(3) *ստացուածը մեր մօտ է, այստեղ։*

2) *Բոստոնին պատասխանեցէք, որ Շամին*(4) *չուղարկեն ոչինչ. նրանց պահանջները լրացուած են արդէն եւ ապագայի համար էլ պատշաճ կարգադրութիւն է արուած — կարգադրութիւն, որով ղեկավարւելու ենք եւ որի մասին ժամանակին կը տեղեկանան բոլոր մարմինները։*

Լեւոնեանը կատաղել է ձեր շուտափոյթ եւ այդքան միամիտ պատասխանի առթիւ զուրնաչիներին(5)։ *Մի քանի օրից կը վերջանայ այստեղ*(6)։

Ձեր ԷԼԼԷՆ

1.- Արմենակ Լեւոնեան (1871-1904) – յայտնի յեղափոխական, ծանօթ Աշոտ-Երկաթ ծածկանունով: Ընդհ. ժողովին կը մասնակցէր իբրեւ պատգամաւոր Սասնոյ Պատ. մարմնին: Սասուն վերադարձին, իր խումբը Արճէշի մօտ կուի կը բռնուի թրքական զօրքին հետ, ուր եւ կը նահատակուի 1904 թ. Յունիսի 2ին:

2.- Հատորը՝ կուսակցական գաղտնագրութեան մէջ կը նշանակէր հազար: 10 հատորը հետեւաբար 10 հազար ֆրանք է:

3.- Եաշան բժ. Յ. Զաւրիեւն է, ծանօթ նոյնպէս Եաշա Վիգէն ծածկանունով:

4.- Շամ՝ Վան, Վասպուրական:

5.- Հնչակեաններին:

6.- Այսինքն՝ Ընդհ. ժողովը կը փակուի:

116

Փաստ. 43-70

Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի պաշտօնական թուղթի վրայ գրուած (մէկ էջ եւ չորս տող) եւ ստորագրուած Արեւմտեան բիւրո: Ձեռագիրը վստահօրէն Քրիստափորինն է:

Երրորդ Ընդհ. ժողովէն անմիջապէս ետք գրուած այս նամակով կը հաղորդուի Սուլթանի ահաբեկման զուգահեռ Ոսկեհանք-Իզմիրի մէջ խափանարարական ձեռնարկներու համար տեղական օժանդակ մարմնի մը ստեղծման մասին:

15 *ապրիլ* 1904

Ոսկեհանքի(1) *ընկերներին,*

Սիրելի՛ք,

Ընդհ. ժողովի(2) *վճռի համաձայն՝ Ոսկեհանքում ծրագրուած է ներկայ տարւայ համար որոշ գործունէութիւն, որն եւ յանձնուած է ընտրուած պատասխանատու մարմիններից մէկին։ Ի նկատի ունենալով սակայն, որ նոյն այդ մարմնի վրայ դրուած են եւ ուրիշ պարտաւորութիւններ եւ որ այդ պատճառաւ նա անկարող կը լինի ոչ միայն ամբողջովին, այլեւ իր ուժերի մեծ մասով նուիրուել այդտեղի գործերին, ուստի Պատասխանատու մարմինը, որի յանձնարարութեամբ գրւում է ձեզ այս նամակը, յարմար է համարել հաստատել այդտեղ Ժամանակաւոր օժանդակ մի կոմիտէ՝ խառն տեղացի եւ դրսի ընկերներից։ Այդ օժանդակ կոմիտէն պիտի բաղկանայ չորս հոգուց, որոնցից երկուսը պիտի լինեն տեղիդ ընկերներից Էդկարն եւ Անդրանիկը*(3)*, իսկ միւս երկուսը՝ Պատասխանատու մարմնի կողմից Մարթինն եւ Էլլէնը*(4)։

Այս մասին հաղորդելով ձեզ ի գիտութիւն՝ խնդրում ենք այսուհետ տեղիդ գործերի վերաբերմամբ օրինաւոր համարել միմիայն այն որոշումները, որոնք կը ծրագրուեն Ցուցական պատասխանատու մարմնու եւ իր օժանդակ կոմիտէի կողմից։

Նշանակւած չորս ընկերներին է թողնւում տեղիդ ընկերներից հրաւիրել նաեւ գործակիցներ։ Մօտակայ անելիքների մասին խօսւած է Մարթինի եւ Էդկարի հետ։

Խնդրում ենք շուտով յարաբերութեան մտնել դրանց կամ ընկեր Էլլէնի հետ (որն այժմ արտասահման կը գտնուի եւ որին կարող էք գրել խմբագրութեան հասցէով) եւ անմիջապէս գործի սկսել։



Ընկերական ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիրի:

2.- Խօսքը 1904 թ. Փետրուար – Մարտ ամիսներուն Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ գումարուած Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. ժողովին մասին է, որու որոշումներէն մէկն էր՝ Պոլսոյ (Վիշապ) եւ Իզմիրի (Ոսկեհանք) համար ստեղծել Պատասխանատու Ցուցական մարմին մը: Այս վերջինին ղեկավարութիւնը վստահուեցաւ Քրիստ. Միքայէլեանին: Անոր նպատակը պիտի ըլլար մէկ կողմէ «արձագանգել» Սասնոյ մէջ արդէն պաշարման ենթարկուած ապստամբներուն, միւս կողմէ՝ խափանարարական գործողութիւններու ձեռնարկել Պոլսոյ եւ Իզմիրի եւրոպական շարք մը հաստատութիւններու դէմ, որպէս միջոց մեծ պետութիւնները մղելու, որ վերստին արծարծեն մոռացութեան մատնուած հայկական հարցը:

3.- Էդկար – ծածկանուն Այվազեան Կարապետի. Անդրանիկ – ծածկանուն Երամեան Պօղոսի:

4.- Մարթին – ծածկանուն Մուրատեան Մարտիրոսի. Էլլէնը՝ Քրիստափորն է:

117

Մատեան No 88, *էջ* 74-5

16 *ապրիլ* 904

Ցուցական մարմին

Թորգոմին(1), *Վառնա*,

Սիրելի Թորգո՛մ,

Ես վերջապէս ժամանեւ հասայ։ Խնդրում եմ այդտեղ գնալուցդ ի վեր անցած-դարձածի մասին ըստ կարելոյն շուտով մանրամասն տեղեկութիւններ գրի՛ր. ես կ՚ուզենայի, որ մինչեւ մեր ճանապարհուելը ամէն բան կարգադրած լինենք, որպէսզի այսուհետ դրսի աշխարհի հետ յարաբերութիւններս, որքան կարելի է, քիչ լինէին. գործի տեսակէտից դա նպաստաւոր հանգամանք կը լինէր մեզ համար։

Էդկարն ու Մարթինը, ի հարկէ, արդէն միացած կը լինեն։ Նրանք պէտք է բերէին բաւական ապրանք։ Ահա այդ իրերի ցուցակը եւ դրանց դասաւորումը — Ո՞րտեղի համար, ո՞րքան իւրաքանչիւրից։

	Վիշապի համար	*Ոսկեհանքի համար*
1. *Դետոննատոր* (*կապսիւլ* 9 *գրամ ծանրութեան*)	100 *հատ*	60 *հատ*
2. *Ամորս էլէքտրական* 8 *գրամ կապակալներ թելերով*	100 *հատ*	60 *հատ*
3. *Ալլիմոր* (*էլէքտրական, թելերով եւ սպիտակ գլխով*)	60 »	50 »
4. *Բամբակ, Վառօդի*	*Եղածի կէսը*	*կէսը*
5. *Պատրոյգ* (*մոխրագոյնը, դանդաղ վառող*)	100 *մետր*	100 *մետր*
6. *Պատրոյգ* (*սպիտակը, շուտ վառուող*)	100 *մետր*	100 *մետր*
7. *Դետոննատոր* (*կապսիւլներ*, 4 *գրամ ծանրութեան արագ վառող պատրոյգի համար գործածելի*	36 *հատ*	36 *հատ*
8. *Մեքենաներ էլէքտրական*	1	1
9. *Բօբին* 9/10 (*թելերի կծիկներ*)	2	2
10. *Բօբին* 8/10 (*թելերի կծիկներ*)	2	2
11. *Կապլ* (*հաստ, երկար թելը*) 15/20	1	1
12. *Էլէքտրական պիլ* (*սեւ փոքրիկ էլէքտրական արկղիկներ*)	7	7
13. *Ջանգակներ*	2	2
14. *Սեւացրած կտաւ*	1	1

15. *Պետարդներ երկաթուղու գծերին հագցնելու համար*	3	3
16. *Սեւ տախտակներ*	2	2
17. *Ատրճանակ Լաբելի*	10	2
18. » *Նագանի*	4	2
19. » *Բրաունինգ*	—	4
20. 200 *կիլո իւղ*(2)	—	200

Այս ցուցակով տա՛ր փոխադրութիւնը՝ չտապելով եւ չտապեցնելով ուրիշներին եւս, ի հարկէ զգուշութեան սահմաններից դուրս չգալով երբեք։

Այստեղից մի մօտիկ ընկերոջ միջոցով որոնում եմ ճանապարհ նաեւ Ֆրանսիայից։ Սաֆօ-ից (Մարտիրոսից), ինչպէս նաեւ Յոնանից կամ Նիկոլից(3)*, լուր չունիմ։*

Մինչեւ Պարիզի գործերը կարգադրելը կամ առանց ինձ իմաց տալու՝ տեղիցդ առայժմ չշարժուես, թէ ոչ գործերը կը խառնուին։ Մի անգամ եւս թոյլ եմ տալիս ինձ խնդրելու քեզ՝ 1) *որ այդտեղ ոչ ոքի ոչինչ չասես, կամ մեր գործերին մասնակից չանես եւ* 2) *որ Ոսկեհանքի կամ այլ տեղերի հետ այլեւս առանձին գրագրութիւն չը շարունակես։ Մարթինը կամ Էդկարը պատմել են քեզ, որ Ոսկեհանքի համար յարմար համարեցինք մի օժանդակ կոմիտէ հաստատել բաղկացած՝ Էդկարից եւ Անդրանիկից (իբրեւ տեղացիներից) եւ Մարթինից ու ինձնից (Պատասխ. մարմնու կողմից)։ Զգուշութեան սոյն խորհուրդը խնդրում եմ տուր նաեւ Քրիսին, եւ թող այսուհետ բացի քեզանից ոչ ոքի ոչինչ չը գրի եւ քեզ էլ գրի կարեւոր դէպքերում՝ կարճ եւ փոխաբերական լեզու գործածելով։*

Ջերմ բարեւներով՝
ԷԼԼԷՆ

1.- Թորգոմ – ծածկանուն Յուցական մարմնի անդամ ընտրուած Արտաշէս Սերեմճեանի:

2.- Իւղ – պայթուցիկ նիւթ, ուժանակ (տինամիթ):

3.- Յիշեալ անձերը ընդհանրապէս Յուցական մարմնի անդամներ են: Սաֆօ կամ Կարմրաթշիկ՝ ծածկանունն է Մարգարեան Մարտիրոսի: Յոնանը՝ Դաւթեան Յոնանն է: Նիկոլը՝ Նիկոլ Դումանն է, որ նախատեսուած էր զինեալ խումբով օգնութեան հասնիլ Սասնոյ ապստամբներուն, բայց որ թուրք-պարսկական սահմանին վրայ կռուի բռնուելով թրքական զօրքին հետ, ստիպուեցաւ նահանջել:

118

Մատեան No 88, *էջ* 80-83

1 *մայիս* 904

Ցուցական մարմին

Թորգոմին(1), *Վառնա*,

Սիրելի՛ս,

Ստացայ ապրիլ 9/22 *գրածդ։ Պատասխանում եմ բոլոր հարցերիդ կէտ առ կէտ։*

Ցաւալի է, որ փոխադրութիւնը դանդաղել է սրիկայ-յոյնի պահանջների առիթով։ Ի հարկէ, եթէ նեղն ընկնենք, ստիպւած պէտք է լինենք զիջանել սրիկային, բայց մինչ այդ՝ չե՞նք կարող արդեօք խնդիր դնել ուղղակի մեր մարդկանց միջոցով փոխադրելու։ Ես չը գիտեմ բոլոր մանրամասնութիւնները, բայց թէ այդտեղ եւ թէ Վիշապում մենք ենք նաւարկում եւ նաւից դուրս բերում, այն ժամանակ աւելի լաւ չէ, որ հէնց մեր ընկերները զբաղւեն փոխադրութեամբ՝ Պիրէ(2) *գնալ-գալով։ Կշռի՛ր այս պայմանները եւ եթէ դիւրութիւններ կան, այդ դէպքում թքիր այդ յոյնի վրայ եւ սկսենք մեր մարդկանց միջոցով գործ տեսնել։ Սա կ՚ունենայ մի քանի յարմարութիւններ.* 1) *գնացողը հետը կը վերցնի ապրանք թէ Վիշապի*(3) *եւ թէ Պիրէյի համար,* 2) *գաղտնապահութիւնը ապահովւած կը լինի, որովհետեւ կ՚ազատւենք կողմնակի մարդկանց (մանաւանդ մի շահամոլ յոյնի) գործակցութիւնից, որ բաւական վտանգաւոր է (Խաժակի օրինակը).* 3) *իւրաքանչիւր անդամ շատ քանակութիւն ուղարկելով՝ ծախս էլ շատ չենք ունենալ եւայլն։ Գալով դրամի խնդրին՝ կարեւոր սահմաններում խելքդ կտրածը արա, բացի դրանից՝ հին ծախսերիդ վերաբերմամբ հաշիւ ներկայացնելով եւ նոր պահանջների համար նախահաշիւ ուղարկելով, միշտ կարող ես այստեղից դրամ ուզել։ Այդ մասին ես կը գրեմ քանի այստեղ եմ, ինձնից յետոյ էլ կարգադրութիւն կ՚անեմ։ Նախահաշիւ կազմելիս (անմիջական ծախսերի համար՝ մօտիկ ապագայի փոխադրութեան վերաբերմամբ) ի նկատի ունեցիր եւ Ոսկեհանքի*(4) *փոխադրութիւնը. չէ՞ որ Ոսկեհանքն էլ ցուցական պատասխանատու մարմնին է թողւած եւ դու էլ այդ մարմնու անդամ ես։ Իմ հաշւով քեզ մօտ դեռ պիտի լինի մօտ* 800 fr., *մսխիր դրանից, իսկ նոր պահանջիդ համաձայն՝ էլի կ՚ուղարկենք քեզ։*

Փոքրիկ ժամացոյցներից չունէր Թ-վը(5), *որ վերցնէի. կազմը ես գիտեմ, եւ այստեղ պատրաստել կը տամ։ — Քոնթրոլի համար հասարակ էլէքտրա-*

կան զանգ պէտք է վերցնել. այդ տեղերը ամենուրեք կարող ես ձեռք ձգել։ — Մեծ տուփը, իմ կարծիքով, գոնէ եղած մի հատը, պէտք է փոխադրել։ Այս րոպէիս ես որոշակի չեմ կարող ասել՝ ինչի՞ նա մեզ կը հարկաւորուի, բայց պնդում եմ ուղարկելու վրայ, որովհետեւ փոքր բիլերը մի քիչ հեռու տարածութեան վրայ բան չեն տեսնում, մանաւանդ որ շուտով փչանում էլ են։ Ատրճանակների վերաբերմամբ արա, ինչպէս ուզում ես. ես չը գիտէի, որ տեղումը կարող ենք գնել։ Պահիր ուրեմն Ոսկեհանքի համար. Էդկարը(6) իրենց համար հարկաւոր էր համարում։ Շատ ուրախ եմ անցագրիդ համար, որովհետեւ, ինչպէս երեւում է, հեշտութեամբ չենք կարողանալու ուզած թւով ձեռք բերել։

Մարթինին(7) ես ասել էի թէ դու միջոց ունիս. Պիրէ է գնում եւ ի նկատի ունենալով, որ Վիշապ տանող յոյնը մինչեւ Պիրէ է գնում եւ հետեւաբար այստեղի համար էլ կարող է վերցնել. իսկ Պիրէում ստանալը խոստացել են կազմակերպել իրենք եւ ես այդ մասին ոչինչ չեմ ասել նրանց։

Առ այժմ այդտեղ մնալդ ես կարեւոր էի համարում, մտածելով որ փոխադրութիւնը ներկայումս մեր առաջնակարգ հոգսը պիտի լինէր քանի որ առանց իւղի(8) անզօր պիտի լինենք բան տեսնելու։

Աշոտին(9) կը գրեմ, ինքս էլ շտապում եմ չտեւելու, բայց դժբախտաբար մի շարք պատճառներ ուշացնում են ինձ. 1) դեռ անցագիր չունիմ, 2) առաջ քան Վիշապ մտնելս՝ պէտք է Ոսկեհանք իջնեմ, իսկ այդ միտք ունի այն ժամանակ միայն, երբ Մարթին ու Էտկարն արդէն այնտեղ կը լինեն. 3) լուր չունիմ ոչ միայն Մարտիրոսից, Յոնանից(10) եւ ուրիշ երկու տղաներից, որոնց ուզել եմ, այլեւ օտար բարեկամից, որ կարող էր մեզ մեծ ծառայութիւն մատուցանել. 4) մի քանի բաներ հարկաւոր է ուսումնասիրել եւայլն եւայլն։ Ահա ինչու ես քո ներս մտնելուն(11) բնաւ հակառակ չեմ, եթէ այդտեղի փոխադրութեան գործերը կարողանաս մի վստահելի ընկերոջ յանձնել եւ հաւատացած լինես, որ հեռանալովդ փոխադրութիւնը չպիտի տուժի։ Այդտեղ ունինք ամբողջ Կեդր. կոմիտէ. եթէ կարողանային քեզ տալ մի բերանը փակ, բայց աչքը բաց մարդ, ի հարկէ՝ օր առաջ քո գնալը կը լինէր ցանկալի։ Տես եւ գրիր վերջնական կարծիքդ այդ մասին։

Մի կարեւոր խնդիր։ Գրիգոր Սայեանը, ինչպէս գիտես, պիտի գնար Լեռնավայրի(12) գործին, բայց Սիմոնը(13) դեռ Կովկաս եւ յետոյ այստեղ ուշանալու է. Միսակ Գուլումջեանը 3 ամսից յետոյ միայն խօսք տուեց պատասխանել՝ կը մտնի Լեռնավայրի Պատ. մարմնի մէջ թէ՞ ոչ։ Աղասէրն(14) էլ վճռել է սպասել Սիմոնին եւ մարմնու վերջնական կազմակերպելուն։ Այնպէս որ Գրիգորը մնացել է շւարած եւ երեւի պիտի սպասողական վիճակի մէջ մնայ մի քանի ամիս։ Այս բոլորը իմացայ ես Սայեանի գրած մի նամակից Բիւրոյին։ Ես Աղասէրին (իբրեւ Լեռնավ[այրի] պատ. մարմնի անդամ) խնդրեցի գրել նրան, որ եթէ ուզում է՝ թող մեր գործին գայ իսկոյն։ Եթէ դու կարող ես նրան համոզել, դու էլ գրիր քո եւ իմ կողմից (ինձ հետ չծանօ-

թացաւ Սօֆիայում) եւ հրաւիրիր Վիշապ։ Այստեղ ես իմացայ, որ նա կարող է ռումանական անցագիր վերցնել եւ իբրեւ ռումանացի ներս մտնել, ապրել, եւայլն։ Դա մեծ յարմարութիւն է մեզ համար։ Եթէ համաձայնուի, իսկոյն նրան միջոցներ կը տանք Վիշապ մտնելու, բնակարան վարձելու եւայլն։ Այսօր Բիւրոյի կողմից էլ նրան այդ մտքով առաջարկ կը գրուի։ Եթէ դայ, իմ կարծիքով, լաւ կը լինի։ Աշխատի՛ր նրան մեր գործին կցել, եթէ միայն դու էլ համաձայն ես նրա օգտակարութեանը. դու նրան մօտից ծանօթ ես, իսկ ես՝ ընաւ։

- Ի՞նչ եղաւ Սանոսեանը, որի մասին դու ասել ես ինձ որ Էդուարդը՝(15) *ժողովից վերադառնալիս, գրել էր ինձ Վիեննայից, որ Վիեննայում նա պատահեց Արշակ Սանոսեանին, որը գնում էր իբրեւ թէ Ժընեւ։ Ժընեւ նա չի եկել. ի՞նչ եղաւ այդ մարդը, եւ կամ ո՞վ է եղել Էդուարդի հետ, իբրեւ Սանոսեանի կապողը — յայտնի չէ։*

Սպասում եմ պատասխանիդ։

Համբոյրներով՝
Քո ԷԼԼԷՆ

1.- Թորգոմ – ծածկանուն Ցուցական մարմնի անդամ Արտաշէս Սերեմճեանի:
2.- Աթէնքի մօտ նաւահանգիստ:
3.- Վիշապ – ծածկանուն Պոլսոյ:
4.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիրի:
5.- Հաւանաբար Թիւֆենկչեվ, պուլկարացի վաճառական:
6.- Էդկար – ծածկանուն Այվազեան Կարապետի:
7.- Մարթին – ծածկանուն Մուրատեան Մարտիրոսի:
8.- Իւղը՝ կուս. ծածկագրութեան մէջ, ունի պայթուցիկ նիւթի, ուժանակի իմաստ:
9.- Աշոտ կամ Աշոտ Բագրատունի – ծածկանուն Ցուցական մարմնի անդամ Կարապետ Եղիկեանի:
10.- Յոնան Դաւթեան:
11.- Ներս մտնել, այսինքն՝ Թուրքիա՝ Պոլիս կամ Իզմիր մտնել:
12.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:
13.- Սիմոն Զաւարեան:
14.- Աղասէր – ծածկանուն Յակոբ Գրիգորեանի (1881-1915):
15.- Կրնայ գործածուած ըլլալ Պոյաճեան Սմբատի կամ Քենտիրեան Վռամշապուհի համար, որոնք երկուքն ալ նոյն ծածկանունով մասնակից էին Ցուցական մարմնի աշխատանքներուն:

119

Մատեան No 88, *էջ* 86-87

Ժընեւ, 5 *մայիս* 904

Ոսկեհանքի ընկերներին,

Սիրելի՛ք,

Ձեր ապրիլ 27 *նամակը մեզ վրայ կրկին այն տպաւորութիւնը թողեց, ինչ տարիներից ի վեր այդտեղից ստացւող նամակները։ Միշտ խօսել եւ հակաճառելու, միշտ իրաւասութեան խնդիրների հետ նիւթականի վրայ ծանրանալու մի տեսակ թուլութիւն՝ կարծես ճակատագրականօրէն կապւած են Ոսկեհանքի մթնոլորտի հետ։*

Այդպէս, օրինակ, հարցնում էք.

1) «*Ի՞նչ չափ ժամանակի համար Օժանդակ մարմին կը կազմւի*» *այդտեղ։*

- *Ի՞նչ պատասխանենք ձեզ,* 6 *ամսւայ, մի տարւայ թէ* 15½ *ամսւայ համար։ Ոչի՛նչ չենք կարող ասել։ Օժանդակը կը լինի՝ մինչեւ կը լինի Պատասխանատուն կամ մինչեւ որոշ գործ կը կատարւի. իսկ քանի ամիս կը տեւի այդ, որքան ժամանակ գործ կը կատարւի — չենք կարող նախատեսնել։*

2) «*Ի՞նչ ընդարձակութեամբ ծրագիր պիտի իրագործւի*».

- *Կրկին անկարելի է որոշակի պատասխան տալ ձեզ։ Ձեզ գրւած է, որ մօտակայ անելիքների մասին խօսւած է Մարթինի եւ Էդկարի հետ». մարդոց հետ պէտք է յարաբերութեան մտնել, իսկ թէ ի՞նչ վերջնական ծրագիր պիտի իրագործւի — դա մի խնդիր է, որ կ՚որոշւի ապագայում, երբ այդտեղ կը լինին խմբւած Օժանդակ մարմնի բոլոր անդամները՝ ընդհանուր հրահանգ եւ որոշ լիազօրութիւն ունենալով Պատասխանատուի կողմից։ Առ այժմ յայտնի է միայն այն ընդհանուր որոշումը, որ ձեզ հաղորդել ենք մենք մեր նախորդ նամակով։*

3) «*Ցուցական մարմնին տեղին մէջ ներկայութիւնը անհրաժեշտ կը նկատէք դուք*»։

- *Բայց ձեզ գրւած էր, որ այդ անկարելի է, որովհետեւ մի մարմին չէ կարող միաժամանակ իր ամբողջ կազմով մի քանի տեղ գտնւել։ Եւ եթէ Ընդհ. Ժ*[*ողովը*] *կարելի է համարել մի մարմնու մի քանի տեղեր յանձնարարել, էլ ի՞նչ կարիք կայ այնպիսի պահանջներ դնել, որոնք հակասում են ժողովի այդ որոշման։ Բացի դրանից, միթէ՞ ակներեւ չէ, որ եթէ Պատասխանատուն կարողանար ամբողջ կազմով այդտեղ գալ, այն ժամանակ Օժանդակ մարմին չէր ստեղծւել հէնց այժմեանից, այլ ամէն ինչ կը թողնւէր նրան։*

4) Երկար ու բարակ խօսակցութիւններ էք անում «տեղական մարմնու ձայնը հաւասար իրաւունքով ընդունելու», «ձեր իրաւունքները յարգելու», «նիւթական մասին ոչինչ գլանալու», «<u>բաւականաչափ դրամի</u> մասին չուտով ձեզ պատասխանելու» մասին։

Ձեր նամակի այս մասերը այնպիսի տպաւորութիւն են թողնում, որ կարծես՝ դուք խօսում լինէք օտար կազմակերպութեան պատկանող մի մարմնի հետ՝ մոռանալով որ միեւնոյն կազմակերպութեան մէջ զանազան մարմինների փոխադարձ յարաբերութիւնները որոշուած են ընդհանուր ժողովներում եւ ոչ ձեր, ո՛չ էլ մեր ցանկութիւններից է կախուած այսպէս կամ այնպէս անել։ Ինչ վերաբերում է նիւթականին՝ մենք համոզուած ենք, որ ձեր նամակը մեզ չհասած՝ դուք արդէն դրամ ստացած կը լինիք Աթէնքից, եւ այդ մէկը գիտէինք, երբ ձեզ գրում էինք խնդրելով «չուտով յարաբերութեան մտնել Մարթինի եւ Էդկարի հետ»։ Դրամը այդ ժամանակ արդէն փոխադրած էր Պատասխանատուի կողմից եւ էլի կը փոխադրեն. ջանալու է միմիայն իւրաքանչիւր սանտիմ վերին աստիճանի խնայողութեամբ մսխել, որպէսզի կարողանաք ըստ կարելոյն շատ գործ տեսնել — սանտիմներով ֆրանքների գործ կատարել, ինչպէս վայել է յեղափոխականին։

Վերջապէս խնդրում, աղաչում ենք մի կողմ թողնել Ոսկեհանքին յատուկ այդ կասկածների եւ վէճերի ուղղութիւնը ու սրտով գործին եւ ընկերներին փարելով՝ աշխատէք կարելին անել. ժամանակը չէ սպասում, երկրի շարժումները արդէն սկսել են, գործի պահանջը մեծ է եւ մեզնից իւրաքանչիւրը կարող է եւ պէտք է օգտակար կերպով գործ դնէ իր ժամանակը, ուղեղը եւ բարոյական բոլոր ուժերը ոչ միայն որեւէ ընկերների որեւէ սրտնեղութիւն չպատճառելով, այլ ընդհակառակը՝ զոհողութեան ամենաբարձր աստիճանին պատրաստ՝ միշտ խրախոյս հանդիսանալով միւսների համար։ Մենք պատրաստ ենք ամէն կերպ աջակցել ձեզ եւ ներողութիւն խնդրելով ներկայ նամակի մի քանի նկատողութիւնների առթիւ, խոստանում ենք, որ սրանից յետոյ մեր նամակները կը լինին շատ կարճ եւ միայն գործի անմիջական կարիքների մասին. նոյնը խորհուրդ կը տայինք ձեզ անել, թէեւ մեզ թւում է, որ աւելի գործնական կը լինէր, եթէ այսուհետ բաւականայիք ձեր յարաբերութիւնները Մարթինի եւ Էլլէնի հետ պահելով։

Ընկերական ջերմ բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

120

Մատեան No 88, *էջ* 90

5 *մայիս* 904

Թ. Յակոբեանին, Սոֆիա

Յարգելի բարեկամ,

Գիւլպէնկեանների առեւտրական տան կողմից Պոլսից Ձեզ վերադարձը-ված չորս հազար (4000) *ֆրանկի գումարը խնդրում ենք ըստ կարելոյն շու-տով փոխադրել այդ տեղից Աթէնք* (*Յունաստան*) *հետեւեալ կերպով.*

Դրամը յանձնելով Սոֆիայի Banque Narionale-*ին՝ կ՚առնէք* 4000 *ֆրանկի մի չէք որեւէ բանկի այս անուան* — Mardiros K. Mooradian: *Յետոյ այդ չէքը մի երկտողի հետ ձեր կողմից՝ հայերէն գրուած՝ թէ այս գումարը ուղարկը-ւում է Ձեզ «Դրօշակի» խմբագրութեան կարգադրութեամբ, կը դնէք մի ծրարի մէջ եւ վրէն գրելով՝ յանձնելի Աշոտին, կը փակէք մի ուրիշ ծրարի մէջ եւ* recommandռ *նամակով կ՚ուղարկէք հետեւեալ հասցէին.*

Mr. B. Doktorian
Fabrique de parapluies. Z. Tsimonidis
Rue d'Eol, No 147
Athènes – Grèce

Վստահ, որ անմիջապէս կը կարգադրէք այս մեր խնդիրը, խնդրում ենք ընդունել կանխաւ մեր շնորհակալութիւնները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ներփակ կը գտնէք Գիւլպէնկեան եղբարց եւ ընկ. Ձեզ ուղղած նամակը:

121

Մատեան No 88, *էջ* 91-92

8 *մայիս* 904

Ցուցական մարմին

Սայեանին, Բուքրէշ,

Սիրելի ընկե՛ր,

Թէ Բիւրոյից եւ թէ Աղասէրից տեղեկութիւն ստացայ, որ Դուք համաձայն էք Ցուցական մարմնու շրջանը մտնել(1)։ *Սակայն ի մօտոյ ծանօթանալով այդ Ձեր համաձայնութեան պայմաններին, հարկաւոր եմ համարում ճշտել հետեւեալ կէտերը.*

Բիւրոյին դուք հեռագրում էք՝ թէ համաձայն էք «աշխատակցել». Աղասէրին գրում էք՝ թէ «մինչեւ մեր (Լեռնավայրի) գործերը աւելի կարգի մտնեն եւայլն եւայլն, յարմար համարեցի Ցուցական մարմնին աշխատակցել»։ Այնուհետ Կիլիկիայի քարտէզ էք ուզում եւ կամ Բէյրութ Ձեր անցնելու կարելիութեան առաջարկներ էք անում։

Այս բոլորից պարզ է, որ դուք ձեր համաձայնութիւնը տալիս էք ժամանակաւոր կերպով աշխատակցելու մասին եւ ոչ թէ վճռել էք նւիրւել ցուցական շրջանի գործերին, ինչպէս առաջարկւել էր Ձեզ Բիւրոյի կամ Աղասէրի կողմից։ Եթէ ճիշդ եմ հասկանում Ձեզ, ուրեմն պէտք է ասեմ, որ այդ պայմաններով Ցուցական մարմինը դժբախտաբար անկարող է օգտւել Ձեր պատրաստականութիւնից։

Ցուցական մարմինը ուրախութեամբ կը հրաւիրի Ձեզ իր շրջանը հետեւեալ պայմաններով միայն.

1) *Անպայման նւիրւել այդ շրջանի գործերին մինչեւ գոյութիւն կ՚ունենայ Ցուցական Պատասխ[անատու] մարմինը եւ Ընդհ. ժողովի որոշումները իրագործւած կը լինին Ցուցական շրջանում։*

2) *Այդպիսի համաձայնութեան գալով՝ դուք պէտք է բոլորովին հրաժարւէք միաժամանակ որեւէ ուրիշ վայրի կամ մարմնի գործունէութեանը մասնակցելու կարելիութիւնից՝ յատկացնելով Ձեզ միմիայն ցուցական շրջանի աշխատանքներին։*

3) *Անհրաժեշտ է լաւ իմանալ ռումաներէն եւ ձեռք բերել հոն ռումանացու (եւ ոչ թէ ռումանահպատակ հայի) փաստաթուղթ, որով պէտք է մտնէք Ձեզ ցոյց տրւելիք քաղաքը (նայէք, սոսկ իբրեւ մի բնիկ ռումանացի)։ Այդ դիմակն է, որ կարող է Ձեզ շատ օգտաւէտ դարձնել ցուցական գործունէութեան մէջ։*

Եթէ այս պայմաններից մէկը կամ միւսը Ձեզ համար անյարմար կամ անիրագործելի է, այդ դէպքում աւելի լաւ է սպասէք Լեռնավայրի գործին։ Իսկ եթէ կարող էք սրտով յարիլ մեր գործին՝ համաձայնութիւն տալով ընդունել ներկայ պայմանները, այն ժամանակ խկոյն տեղեկութիւն տուէք այստեղ, եւ պատշաճ կարգադրութիւններ անյապաղ կ'անուեն։

Ընկերական բարեւներով՝
Յուցական մարմնի կողմից
ԷԼԼԷՆ

1.- Յուցականի շրջանը պէտք է հասկնալ Պոլիս եւ Իզմիր իմաստով։

122

Մատեան No 88, *էջ* 101

Ժընեւ, 12 *մայիսի* 904

Հայ Յեղափոխական Միութեան յանձնախմբին

Յարգելի հայրենակիցնե՛ր,

Ստացանք ժամանակին ձեր մարտ 24-ից մեզ ուղղած հրաւէրը՝ մասնակցելու «Հայկական առաջին ընդհանուր կոնգրէսին», որի նպատակը պէտք է լինի մի ծրագրով եւ գործունէութեան մի եղանակով միացնել ներկայումս գոյութիւն ունեցող հայ յեղափոխական կուսակցութիւնները։

Պատիւ ունենք յայտնելու Յանձնախմբիդ, որ այդ առթիւ «Դաշնակցութեան» պատասխանը կը գտնէք այն որոշման մէջ, որ ընդունել է վերջերս մեր կազմակերպութեան Երրորդ Ընդհանուր ժողովը եւ որը հրատարակւում է, ի գիտութիւն հասարակութեան, «Դրօշակ» N 4*-ի մէջ։*

Այդ որոշումն է, որ անկարելի համարելով «Դաշնակցութեան» եւ ձեր հրաւիրած միւս երկու կուսակցութիւնների հետ ընդհանուր հողի վրայ միութիւն կամ համերաշխութիւն հաստատելու խնդիրը, պարտաւորեցնում է մեզ տեղեկացնել Յանձնախմբից, որ «Դաշնակցութիւնը» դժբախտաբար անկարող կը լինի արձագանք տալ ձեր առաջարկին։

Խնդրում ենք ընդունել մեր յարգանաց հաւաստիքը։

Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

123

Մատեան No 88, *էջ* 102-3

Ժընեւ, 12 *մայիս* 1904

Յուցական մարմին

Աշոտ Բագրատունուն(1), *Աղեքսանդրիա*

Սիրելի Աշո՛տ,

Ստացայ նամակդ եւ շատ ցաւեցի Վիշապի(2) *գործից հրաժարւելուդ առթիւ։ Սպասում էի Մարտիրոսից*(3) *ուրախալի լուրերի, բայց երկու օր առաջ ստացւած նրա նամակում դժբախտաբար ոչինչ չգտայ քո նիւթականի վերաբերմամբ։ Ի նկատի ունենալով սակայն գործի պահանջը, ես վճռեցի հետեւեալը.*

1) *Գրել անմիջապէս Մարտիրոսին, որ դիմի իսկոյն մեր կողմից «Կարմիր խաչի» կանանց ընկերութեան եւ աշխատի հետը վերցնել ինչքան կարող է, ու պարտաւորեցնի տարւայ ընթացքում երկու անգամ եւս գոնէ* 200-*ական ռուբլի մեզ փոխադրել։*

2) *Առաջարկել եմ քեզ, իմ եւ Մարտիրոսի պատասխանատուութեան տակ, վերցնել իսկոյն այդտեղ բժիշկ Փաշայեանից*(4) 2000 fr. *եւ մի մասը պարտքի եւ միւս մասը ընտանիքիդ թողնելով, ինքդ, առանց նիւթականի մասին երկար մտածելու, ճանապարհւես դէպի Վիշապ։ Այս մասին ես խնդրել եմ մեր Բիւրոյին՝ իմ կողմից նամակ գրել Փաշայեանին եւ առաջարկել նրան, որ «եթէ Աշոտ Բագրատունին ընկեր Էլլէնի նամակի համաձայն իրենից դրամ ուզի, անմիջապէս վճարի* 2000 fr.»։ *Այդ նամակը կը գրւի հէնց այսօր, եւ դու կարող ես ուզածդ օրը վերցնել դրամը։ Կը լրացնենք ես ու Մարտիրոսը այդ գումարը թէ ոչ — դա քեզ չպիտի վերաբերի։ Գումարը մտցւելու է Բիւրոյի կամ Վիշապի հաշիւների մէջ իբրեւ պարտք իմ եւ Մարտիրոսի վրայ։*

Դու գիտես արդէն, որ երկիրը արդէն կռւի մէջ է(5) *եւ ժամանակը չէ սպասում։ Գիտես նաեւ, որ մեր գործը երկար տարիների գործ չէ եւ ամենաշատը կարող է տեւել մինչեւ ձմեռւայ վերջը։ Երկար ուրեմն մի մտածի՛ր. եթէ ողջ դուրս եկանք գործից՝ ժամանակ կ՚ունենանք ընտանիքներին վրայ մտածելու, իսկ եթէ այնտեղ մնացինք, միեւնոյն է — երկու չէ երեք տարւայ ապահովութիւնն էլ մի առանձին բան չէ ընտանիքների համար։*

Ահա իմ խորհուրդը, որ յուսամ չպիտի արհամարհես։

Մարտիրոսի նամակում կային տեղեկութիւններ Յոնանի եւ Նիկոլի(6) *մասին։ Նիկոլը արդէն պատրաստւում է Սասուն գնալու, իսկ Յոնանը չէ ու-*

զում կնոջ հետ գալ եւ ապահովութիւն է ուզում նրա համար։ Մարտիրոսը գրում է, եւ ես էլ համաձայն եմ նրա հետ, որ այդ պայմաններով մենք նրան չենք կարող հրաւիրել։ Հետեւաբար՝ մնում ենք չորս հոգի, եւ քո հրաժարականով այդ չորսը պիտի իջնի երեքի ու [Ցուցական] մարմինը պիտի թուլանայ։

Քրիսի մասին գրեցին Թորգոմին(7), *որ միանգամից ընդմիշտ հասկացնի այդ երիտասարդին իր դերի սահմանափակ բնաւորութիւնը, եւ եթէ չէ ուզում բաւականանալ այդ դերով, թող անկեղծութեամբ հրաժարւի մեզ գործակցելուց։ Տեսնենք վերջը ինչ կը լինի։*

Փոխադրութիւնները առաջ են գնում(8) *երկու տեղի համար էլ։ Մարթինը համաձայնուեց Ոսկեհանք*(9) *գնալու. ինձնից առաջ նա այնտեղ կը մտնի։ Գտայ գծեր թէ ապրանք եւ թէ մարդ փոխադրելու համար նաեւ Ֆրանսիայից։ Դու կարող ես Պիրէյում նստել նաւ եւ Վիշապ մտնել։ Առանց որեւէ օգնութեան ներսից՝ քեզ կը հանեն քաղաք։*

Նամակս կարդալուց եւ Փաշայեանին ցոյց տալուց յետոյ (*դրամը ստանալու համար*), *այրի՛ր, ոչնչացրու։ Կօպիան*(10) *ես այստեղ վերցնում եմ. եթէ հարկաւորւի երբեւիցէ* (*դրամական խնդրի առիթով*), *միշտ կարող ես ուղել Բիւրոյից սրա պատճէնը։*

Սպասելով համաձայնութեանդ եւայլն։

Մնում եմ քո

ԷԼԼԷՆ

1.- Աշոտ Բագրատունի – ծածկանուն Կարապետ Եղիկեանի, անդամ Ցուցական մարմնի:

2.- Վիշապ– ծածկանուն Պոլսոյ:

3.- Մարտիրոս Մարգարեան, նոյնպէս անդամ Ցուցական մարմնին. ծանօթ էր նաեւ Սաֆօ եւ Կարմրաթշիկ ծածկանուններով:

4.- Բժ. Կարապետ Փաշայեան – Դաշնակցութեան ներկայացուցիչ Եգիպտոսի մէջ:

5.- Ակնարկութիւն Սասնոյ մէջ բռնկած ապստամբութեան:

6.- Յոնան Դաւթեան – անդամ Ցուցական մարմնին: Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան), որ հիւս. Պարսկաստանէն զինեալ խումբով Սասնոյ ապստամբներուն օգնութեան փութալու համար բախում ունեցաւ սահմանի թրքական զօրքերուն հետ եւ ստիպուեցաւ իր զինեալ խումբով ետ դառնալ:

7.- Քրիս Ֆեներճեան: Թորգոմ ծածկանունն էր Արտաշէս Սերեմճեանի, նոյնպէս անդամ Ցուցական մարմնի:

8.- Խօսքը կը վերաբերի զէնք-զինամթերքի եւ խափանարարական ապրանքներու փոխադրութեան դէպի Պոլիս եւ Իզմիր:

9.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիրի:

10.- Պատճէնը, օրինակը:

124

Մատեան No 88, *էջ* 104

12 *մայիսի* 1904

Դոկտոր Փաշայեանին, Ալեքանդրիա

Սիրելի ընկեր,

Բարեհաճեցէք կատարել մեր հետեւեալ խնդիրքը։—

Եթէ ընկեր Աշոտ Բագրատունին, որ այժմ այդ քաղաքի մէջ է, դիմի ձեզ, եւ համաձայն ընկեր Էլլէնի նամակի, խնդրի երկու հազար ֆրանկ (2000 fr.), *նեղութիւն կրեցէք նրան յանձնել այդ գումարը, եւ գրել մեր հաշւին։*

Գումարը ժամանակին կ'ուղարկւի ձեզ։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ



125

Մատեան No 88, *էջ* 107

Ժընեւ, 14 *մայիս* 904

Թ. Յակոբեանին, Սոֆիա

Յարգելի բարեկա՛մ,

Ստացանք Ձեր նամակը, որով գրում էք, թէ բանկայով սուղ կը լինի Ձեզ մօտ գտնուող 4000 (*չորս հազար*) *ֆրանքը Ամէնք փոխադրել։ Թէպէտ զարմանալի է, որ այդտեղից Ամէնք փոխադրութեան համար* 80 fr. *ծախս են պահանջում, քանի որ այստեղից միեւնոյն տեղը նոյն գումարի համար* 30 fr.[*ից*] *աւել չէ հարկաւորւում, բայց եւ այնպէս պէտք էր շտապել եւ այդ պատճառով այսօր հեռագրեցինք Ձեզ՝ դրամը անմիջապէս փոխադրէք չէքով, ինչպէս առաջ էլ գրել էինք Ձեզ։ Յոյս ունինք, որ մինչեւ նամակի Ձեզ հասնելը դրամը արդէն փոխադրած եւ ծախսերի հաշիւը որեւէ անդորրագրի հետ մեզ ուղարկած կը լինէք ի միամտութիւն։*

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

[*ՀԵՌԱԳԻՐ*]

AGOPIAN – MAGASIN ROUGE, SOFIA

ANMIDJABES POKHADRETZEK TCHEKOV ATENK, INTCHPES DZEZ GRELEINK ARADJ.

DROSCHAK

126

Մատեան No 88, *էջ* 108-109

16 *մայիս* 1904

Ցուցական մարմին

Սայեանին, Բուքրէշ

Սիրելի ընկե՛ր,

Ստացայ Ձեր նամակը, որով գրում էք, որ «վերջնականապէս ուզում էք ցուցական գործերին նուիրուել»։ Շատ ուրախ եմ, որ խնդիրը պարզուեցաւ եւ կարելի կը լինի գործակցել Ձեզ հետ ցուցական շրջանում մինչեւ վերջ։

Ահա ուրեմն Ձեր անելիքը։

Վերցրէք բուն ռումանացու անցագիր եւ անմիջապէս ճանապարհուեցէք Վառնա, Թորգոմի մօտ։ Մանրամասնութիւնները, որ աւելորդ է այստեղ կրկնել, հէնց այսօր ես կը գրեմ Թորգոմին եւ դուք այնտեղ նրա հետ խորհրդակցելով՝ կամ միաժամանակ կը մնաք Վառնա փոխադրութեան գործերի համար՝ եւ կամ իսկոյն կը ճանապարհուէք Վ[իշապ]։

Ուղարկում եմ հարիւր յիսուն (150 fr.) *անցագրի, ճանապարհի ու Ձեր ծախսերի համար։ Ինչ վերաբերում է Ձեր պարտքերին (Ոսկանապատի* 7 *տոմսակի համար* 93 fr. *եւ* 27 fr. 9 «*Կովկ. Վէրքերի*» *համար — ընդամէնը* 120 fr.) *այստեղ Բիւրօն այդ գումարը նշանակում է Ձեզնից ստացած՝ յատկացնելով Լեռնավայրի արած ծախսերին։ Այդ կողմից դուք ուրեմն ազատ էք։*

Այժմ մի-երկու խորհուրդ-խնդիրք։

1) *Ձեր ուր մեկնելու մասին միանգամայն ցանկալի է, որ ոչ ոքի ոչինչ չասէք եւ առ հասարակ սովորութիւն դարձնէք գործերի մասին ամենեւին չխօսել՝ մեր մարմնու մէջ չմտած ընկերների հետ անգամ, ինչպէս նաեւ դադարեցնել գրագրութիւններ զանազան տեղերի եւ ընկերների հետ, մանաւանդ մեր գործերի վերաբերմամբ, որ պահանջում են ամենախիստ գաղտնապահութիւն։*

2) *Վառնա գնալով ծանօթութիւններ ունենալ միայն անհրաժեշտ անձնաւորութիւնների հետ եւ երբեք ոչ ոքի չյայտնել Ձեր ռումանական անցագրի անունը, որ պիտի իմանան Վ[իշապ]ի մի-երկու ընկերները միայն.*

3) *Այդտեղից (Բուքրէշից) գնալուց առաջ ուղարկել Բիւրոյին մի փոքրիկ տեղեկագիր՝ թէ ի՞նչ ունի կազմակերպութիւնը այդտեղ, այսինքն՝ ի՞նչ խմբեր կամ անհատներ, քանի հոգուց, որոնք են ամենավստահելիները դրանց մէջ տեղական գործերի համար, ի՞նչքան վաճառելու գրքեր, պատկերներ,*

տոմսակներ եւայլն կան այդտեղ, ո՞ւմ մօտ են դրանք եւայլն եւայլն. ուրիշ ինչ որ հարկաւոր կը դատէք ինքներդ ասելու։

Ձերմ բարեւներով՝ ցանկանում եմ Ձեզ բարի ճանապարհ եւ ամենայն յաջողութիւն, որ բոլորիս յաջողութիւնը կը լինի։

Ձեր՝ ԷԼԼԷՆ



Յ. Գ.— Դրամը ուղարկում եմ այս մանտաթով այսպէս գրած հասցէի՝
Monsieur Grigor Sayan
Calea Mazilov, 191, chez G. Bodiguian

Նամակը ստանալով, խնդրում ուրեմն իմաց տուէք պ. Պոտիկեանին, որ ձեզ կանչէ իր մօտ դրամը բերած ժամանակ։

127

Մատեան No 88, *էջ* 110-11

16 *մայիսի* 1904

Յուցական մարմին

Թորգոմին, Վառնա

Սիրելի Թորգո՛մ(1),

Վերջին նամակդ 27/30 [?] *ապրիլ թւականով ստացի։ Խոստովանում եմ, որ նամակդ այս անգամ բաւարարութիւն չտուեց ինձ։ Զը հասկացայ՝ ինչո՛ւ այդչափ յամառութեամբ Ոսկեհանքի*(2) *համար չես ուզում ոչինչ փոխադրել, գնալ կամ մնալուդ մասին ոչինչ չես գրում եւ հրաժարւում ես նախահաշիւ ղրկելուց՝ քանի որ քեզ մօտ եղած գումարները ու նոր ստանալիք դրամները մսխւել են եւ պիտի մսխւեն քո ձեռքով։ Յամենայն դէպս ես չէի ուզենալ, որ դրամի պատճառով ուշանար գործը եւ հէնց այսօր փոխադրում եմ քեզ հազար ֆրանկ* (1000)։ *Ի սէր Աստծոյ՝ միայն Ոսկեհանքի հետ եւս հաշտւիր ու նրան էլ մտցրու մեր հոգացողութեան առարկաների շարքը։*

Սայեանից նամակ ստացայ, ուր նախ գրում էր՝ թէ կը մտնի մեր շրջանը ժամանակաւորապէս, մինչեւ Լեռնավայրի(3) *մարմնու կազմակերպւելը. ես պատասխանեցի, որ այդ պայմանով մենք չենք կարող ընդունել նրա պատրաստականութիւնը, եւ երէկ նորից նամակ առի, ուր յայտնում է նա իր վերջնական որոշումը՝ նւիրւել մեր շրջանին։ Այսօր ես պատասխանում եմ նրա այդ առաջարկին, ուղարկելով* 150 fr., *որպէսզի մեր ուզած անցագիրը առնելով՝ անմիջապէս քեզ մօտ գայ։ Երբ նա կը լինի այդտեղ, դու պէտք է վճռես խսկոյն նրա անելիքը։ Նայած գործի ընթացքին՝ նրան կամ պիտի թողնես տեղդ փոխադրութեան գործում քեզ փոխարինելու համար եւ կամ պէտք է ճանապարհես Վիշ*[ապ](4) *մեզ հետաքրքրող թաղերից մէկում յարմար բնակարան կամ խանութ վարձելու նպատակով։ Ինձ թւում է, որ աւելի լաւ կը լինէր վերջինս անել, որպէսզի մի կողմից դա էլ այդտեղ չճանաչւի ամէնից եւ միւս կողմից, որ օր առաջ այնտեղ յարմարութիւններ ստեղծւեն եւ իրեն էլ իր հարեւանները մինչեւ ուրիշների գնալը մի փոքր սովորած լինին։ Զը գիտեմ միայն այս դէպքում Քրիսի*(5) *հետ ինչպէս պէտք է անել եւ այդ պատճառով Սայեանին այդտեղ թողնելու կամ ուղարկելու խնդիրը քո վճռին եմ յանձնարարում։ Ի դէպ, Աշոտից*(6) *ստացած մի նամակից երեւում է, որ նա Եգիպտոս գնալիս տեսել է Քրիսին եւ մի շարք ափեղցփեղ բաներ է լսել նրանից. օրինակ՝ թէ ինչո՞ւ են այնտեղ նոր մարդիկ ուզում*

մտնել, թէ այնտեղ դպրոց չէ, որ տեղին անծանօթ մարդիկ գան բան սովորելու, եւայլն եւայլն։ Ես չեմ հասկանում այս բոլորի միտքը, բայց երեւի նա շատ է ոգեւորուած իր ուժերով եւ կարողութիւններով։ Այդպիսի մի մեծ անձնավստահութիւն կարող է մի փոքր վնասել մեր ծրագրերին եւ կարծում եմ, որ մեր ընկերական պարտականութիւնն է մի անգամ ընդմիշտ նրան հասկացնել տալ, որ յամենայն դէպս նրա գործը չէ, թէ ինչ պիտի անի այնտեղ. իսկ եթէ նա ուզում է քշել իր էշը, ինչպէս այդ արել է մինչեւ այժմ, այն ժամանակ թող բացայայտ կերպով մեզ յայտնէ՝ թէ ինչ դեր է ուզում ունենալ նա Վ.[իշապ]ի գործերում, եւ մենք կարող կը լինենք մեր գլխի ճարը տեսնել, այսինքն՝ վճռել՝ ընդունել նրա առաջարկները թէ ոչ եւ եթէ ոչ, ում հետ եւ ինչպէս գործներս տանենք։

Աշոտը(6) գրել էր, որ ընտանիքը անկարող լինելով ապահովել, հրաժարւում է մեզ անդամակցելուց։ «Կարմիր Խաչի» կողմից առաջարկեցի 2000 fr. նրա պարտքերի եւ ընտանիքի համար։ Եթէ ընդունի, ուրեմն կը գայ, եթէ ոչ — հրաժարւած պէտք է նկատենք։ Յոնանը(7) չէ ուզել կնոջ հետ գալ, այլ մենակը, այն էլ ընտանիքի ապահովութեան խնդիր դնելով։ Մարտիրոսը(8) մերժել է այդ առաջարկը, ես էլ համաձայն եմ։ Ուրեմն այսօր նաղդ(9) կանք ընտրւածներից երեքս միայն։ Մարտիրոսին հեռագրեցի, որ հետը առնելով երկու ինձ ծանօթ տղայք անմիջապէս ճանապարհւեն։ «Էնֆորմասիոն» թերթի լուրից աւելի խայտառակները երեւացին լրագիրներում, ի՞նչ արած։ Սարաֆովի(10) անպիտան հակառակորդներն են այդ լուրերը տարածողները. ես չեմ կասկածում, Տատարչեվ, Մատով, Յօնչեվ եւ մակեդոնացի գործիչների շրջանից են տարածւել դրանք, Տէ՛ր իրենց հետ։

Բարեւներով

ԷԼԼԷՆ

1.- Թորգոմ – Ցուցական մարմնի անդամներէն Արտաշէս Սերեմճեան։ Նշուած թուականը (27/30) պէտք է ըլլայ 17/30։

2.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիրի։

3.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ։

4.- Վիշապ – ծածկանուն Պոլսոյ։

5.- Քրիս Ֆեներճեան։

6.- Աշոտ, Աշոտ Բագրատունի, Սեւ Աշոտ – ծածկանուններ միեւնոյն Կարապետ Եղիկեանի, որ նոյնպէս ընտրուած էր Ցուցականի մարմնի անդամ։

7.- Յոնան Դաւթեան, անդամ Ցուցական մարմնի։

8.- Մարտիրոս Մարգարեան, ծանօթ Սաֆօ եւ Կարմրաթշիկ ծածկանուններով։

9.- Պատրաստ։

10.- Բորիս Սարաֆով, մակեդոնացի ծանօթ յեղափոխական, սերտ գործակից Դաշնակցութեան։

128

Մատեան No 89ա-1, *էջ* 1-3 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

89ա-1ը գաղտնի թանաքով առաքուելիք նամակներու մատեան է. առաջին երեք էջերուն կը գտնուին Քրիստափորի ձեռագրով Մշոյ կոմիտէին եւ Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղղուած նամակները, որոնք արտագրուելով՝ պիտի յղուէին իրենց հասցէատէրերուն:

8/21 *մայիս* 904, *Ժընեւ*

Մուշ — Ասքանազեան կոմիտէին(1).

Սիրելի ընկերներ,

Երէկ ստացանք Վիշապի(2) *վրայով Վահանի*(3) *նամակը ապրիլի* 8*ից եւ Ասքանազեանների կողմից՝ «Ծաղիկի»*(4) *եւ «Գուրգէնի»*(5) *նամակները ապրիլի* 11-17*ից։ Շտապում ենք յայտնել, որ նամակները մեր ձեռքը հասան բոլորովին ապահով կերպով եւ որ կարող էք դուք այդ ճանապարհից օգտուել եւ շարունակ մեզ տեղեկութիւններ հաղորդել, մանաւանդ որ այդ գիծը աւելի կարճ է քան Կովկասի գծով։ Գիտէք արդէն, որքան կարեւոր են մեզ համար այսպիսի ճակատագրական րոպէներում թարմ եւ ճշգրիտ տեղեկութիւններ։ Թիւրքական աղբիւրներ՝ Պոլսում կազմւած հեռագիրներ օրէ օր ձգտում են խեղաթիւրել իրողութիւնները Եւրոպայի առաջ, եւ միակ մեր զէնքը երկրից ստացւած տեղեկութիւններն են, որոնցով կարող ենք դրութիւնը ճշդել եւ ցանկալի միջամտութեան համար կարեւոր հոսանքներ ստեղծել։ Վայրերի եւ մարդկանց անուններ, դէպքերի թւականներ, նոյնիսկ ժամեր, կորուստների թւեր եւ այլ մանրամասնութիւններ ճշդութեան առաձին գոյն են տալիս մեր փաստերին եւ կը խնդրէինք ձեզ, սիրելիք, այդ պայմանը միշտ ի նկատի ունենալ ձեր գրելիքներում։ Հաւատացած եղէք, ընկերնե՛ր, որ այս րոպէիս մտահոգութեան ուրիշ առարկայ չունինք, բայց եթէ միայն Տարօնի տագնապը եւ ոչինչ չպիտի խնայենք եւրոպական միջամտութիւն առաջ բերելու համար։*

Վերջին մեր դիմումների առթիւ հիւպատոսներին պատշաճ հրահանգներ ուղարկւեցին իրենց կառավարութիւնների կողմից. այդ յայտնի է մեզ ամենաբարձր պաշտօնական աղբիւրից։ Հետեւեցէք այդ հիւպատոսների քայլերին եւ եթէ պատշաճ պաշտպանութիւն չեն ցոյց տալիս, գրեցէք մեզ մանրամասնօրէն որը դրանցից, որքան, ինչպիսի ընթացքի է հետեւում։ Ժողովրդի

կողմից էլ դիմումներ թող անեն դրանց՝ միշտ բողոքելով կառավարութեան դէմ եւ միշտ բարենորոգումներ պահանջելով։ Դրութիւնը արդէն չափազանց սուր է եւ ոչ մի միջոց ձեռքից չպէտք է բաց թողնել։ Լարեցէք նաեւ Դաշտի(6) եւ Խնուսի ամբողջ զինուորական ուժը՝ ժողովրդի պաշտպանութեան կամ յարմար պարագաներում յարձակողական փոքրիկ ձեռնարկների համար։ Սարուստանում(7) պատրաստութիւններ են տեսնում սահմանից ձեզ արձագանգ տալու։ Ըստ որոշման Ընդհանուր ժողովի՝ Վասպուրականը եւս պիտի ձայնակցէ Բարձրաւանդակին(8)։ Այդ որոշումը ուր հարկն է յայտնուած է արդէն։ Գրեցէք, պահանջեցէք դուք եւս։

Այսօր ձեր եւ ուրիշ նամակների հիման վրայ 1) ուղարկեցինք դէպքերի մանրամասն նկարագրութիւններ եւրոպական մեծ թերթերին, որ այսուհետ էլ պէտք է անւի կանոնաւոր կերպով. 2) հեռագիրներ տւինք չորս պետութեանց (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Աւստրիա) արտաքին գործոց նախարարներին եւ 3) մասնաւոր նամակներով մեր ազդեցիկ եւրոպացի բարեկամներին հրաւիրեցինք իրենց ամբողջ հեղինակութիւնը գործ դնել կառավարութիւնները դէպի իրական քայլի թեքելու համար։ Բացի դրանից՝ մեր ընկերներից մէկը(9) շարունակ ճանապարհորդութեան մէջ է եւ աշխատում է մայրաքաղաքներում անձնական տեսակցութիւններով ամէն ինչ փութացնել։

Ողբում ենք ձեզ հետ միասին անմահ Հրայրի(10) եւ միւս նահատակ ընկերների կորուստը։ Անսահման համակրութեամբ եւ ցաւակցութեամբ խոնարհւում ենք նաեւ այն ծանրագոյն վիճակի առաջ, որ ստեղծել է պատմութիւնը տարաբախտ հայ ժողովրդի համար։

Ցաւով եւ կարօտով համբուրում ենք բոլորիդ՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Այս րոպէիս հեռագիրը բերաւ հետեւեալ լուրը։

«Անգլիական արտաքին նախարարութեան վարիչ Կոմս Պերսի յայտարարեց պարլամենտի առաջ Հայաստանի վերջին խռովութիւնների առթիւ, որ անգլիական կառավարութիւնը յարաբերութեան մէջ է Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հետ, եւ յոյս ունի որ Բաղէշի ռուսաց եւ ֆրանսիական հիւպատոսները համաձայնութեան գան բրիտանական կոնսուլի հետ որեւէ լուծման յանգելու համար։

Մեր ընկերը Լոնդոնումն է եւ մանրամասնութիւնները շուտով կը ստանանք այս առթիւ։ Եթէ հարկաւոր տեղեկութիւններ լինին, մենք ձեզ իսկոյն կը հաղորդենք։

Նամակները գրելիս, յիշեցէք, խնդրում ենք, Սարուստանից(7) վերջերս այդտեղ եկած կամ գալիք ընկերների անունները։ Եկողներից մէկը հետը պիտի բերի այն յայտագիրը, որ Ընդհ. ժողովի վճռով պէտք է տրւի հիւպատոս-

ներին։ Թէ այդ եւ թէ ուրիշ բողոքներ, յայտագիրներ եւայլն երբ տուին հիւ-պատոսներին՝ խնդրոյն հաղորդեցէք մեզ։ Նամակս թէ կարող էք Վահանին(3) ուղարկեցէք կամ գոնէ իմաց տուէք նրան, որ Վիշապի(2) վրայով իր գրածը եւս ստացուել է Արեւմտեան Բիւրոյում։

1.- Քրիստափոր Միքայէլեանի ձեռագիր. խիստ մանրատառ: Ասքանազեան՝ Մշոյ կոմիտէին տրուած ծածկանուն:

2.- Վիշապ՝ Կ. Պոլսոյ Կեդր. կոմիտէին ծածկանունը:

3.- Վահան (Մանուէլեան-Տողրամաճեան Կարապետ (1866-1904) – Դաշնակցութեան ներկայացուցիչը Սասնոյ մէջ: Նահատակուած նոյն տարին, 1904 թ. Մայիս 16ին, Սասնոյ կռիւներուն մէջ:

4.- Ծաղիկ կամ Բիւրակնեան Ծաղիկ (1865-1918) – Դուրան բարձրաւանդակի Կեդր. կոմիտէութեան անդամ Գեղամ Տէր Կարապետեանի (Տատրակ) ծածկանուններէն մէկն էր:

5.- Գուրգէնի անձնաւորութիւնը կը մնայ անորոշ: Անշուշտ չի կրնար ըլլալ 1899ին Ցրօնքի յայտնի կռուին նահատակուած Գուրգէնը (Մալեան Բաղդասար): Աւելի հաւանական է, որ ըլլայ Քրիստափորի քրոջ որդիներէն Սամսոն Թադէոսեանը, Ատրպատականէն դէպի Երկիր զէնք-զինամթերք ու մարդոյժի փոխադրութեան յայտնի պատասխանատուն: Այս վերջինը ծանօթ էր Գարեգին, Սամսոն ծածկանուններով, բայց եւ իրեն համար գործածուած է, ճիշդ է, հազուադէպ պարագաներու, նաեւ Գուրգէն անունը:

Միեւնոյն ծածկանունը տրուած է նաեւ Ալեքսանդրապոլի ռուսական զինապահեստը «կողոպտող» յայտնի «Պատուալի Վաղոյին»: Այս վերջինը 1904ի Յունիսի վերջերուն պիտի զոհուէր «Ռուսական» արշաւախումբի միւս ֆետայիներուն հետ, երբ կը փորձէին Օլթիի մօտ սահմանը անցնելով օգնութեան հասնիլ Սասնոյ ապստամբներուն: Վերջապէս կար ուրիշ Գուրգէն մը, որ այդ օրերուն մարտական վարիչն էր Սալնոյ Ձոր-Բաղէշի ուժերուն:

6.- Դաշտը՝ Տարօնի եւ Մշոյ դաշտի գիւղերն են:

7.- Սարուստան՝ հաւաքական ծածկանուն՝ տրուած Անդրկովկասի եւ Ռուսիոյ կուսակցական կազմակերպութեանց:

8.- Բարձրաւանդակը Սասունն է:

9.- Խօսքը կը վերաբերի Յովհ. Լոռու-Մելիքեանին, որ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի անդամ էր եւ պատասխանատու Հայ դատի քարոզչական աշխատանքներուն:

10.- Հրայր-Դժոխք, նահատակուած Սասնոյ ապստամբութեան ընթացքին:

129

Փաստ. 659-199

Արժէքաւոր փաստաթուղթ՝ գտնուած անսպասելի կերպով Վան-Վասպուրականի թղթածրարին մէջ: 6 էջնոց ձեռագիր այս նամակը ուղղուած է Վանայ Սարգիսին (Օտապաշեան Պողոս, ծանօթ նաեւ Բարսեղեան Սարգիս անունով). աջակցած է Քրիստափորին «Փոթորիկ»ի գործին մէջ, որու ընթացքին ձերբակալուեցաւ Շուշիի մէջ. ընկերներու աջակցութեամբ փախուստ տուաւ բանտէն եւ անցաւ նախ Ատրպատական, ապա, ինչպէս ի յայտ կու գայ այս նամակէն, Պուլկարիա մասնակցութիւն բերելու համար Սուլթան Համիտը ահաբեկելու գործին: Բարսեղեան Սարգիս 1905-6ին հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին կը վարէր Գանձակի շրջանի ինքնապաշտպանութեան կոմիտները, 1906-7ին անդամ էր Վան-Վասպուրականի Կեդր. կոմիտէութեան: 1915ին Պոլիս էր եւ զոհ գնաց Մեծ Եղեռնին: Փաստաթուղթին Վան-Վասպուրականի թղթածրարին մէջ գտնուիլը պէտք է բացատրել անով՝ որ ենթական Վան գտնուած միջոցին իր մօտ գտնուող Քրիստափորի նամակը յանձնած է տեղւոյն մարմնի արխիւին:

24 *մայիս* 904, *Ժընեւ*

Իմ հերոս, իմ անոյշ ընկե՛ր.

Ձեզ կարող երեւակայել որքա՛ն ուրախութեամբ լսեցի քո ազատման լուրը, որ բերեց Բուլղարիա Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչը։ Իմ անձնական կեանքում ամենաերջանիկ օրերից մէկն էր այդ օրը, որը ես անցկացրի կատարեալ տօնական տրամադրութեամբ։ Իսկ այժմ ստանալով քո սեփական ձեռագրով Վրէժից(1) *գրած նամակդ՝ ես չգիտեմ ինչ անեմ եւ ինչպէս խօսեմ հետդ։ Դու ազատ ես եւ ես ագահութեամբ ու սիրով կարդում եմ իւրաքանչիւր տողդ, իւրաքանչիւր բառդ, սրտի առանձին բերկրանքով եւ գոհունակութեամբ։ Մինչեւ նամակիդ գալը ես միայն ենթադրում էի, որ Վրէժստան կը լինես անցած, բայց Ոսկանապատ*(2) *այդ առթիւ իմ ուղղած հարցերին, ստացել էի միայն մի դրական պատասխան. թէ «այո՛, դու ազատ ես եւ ապահով». ուր լինելդ չլինելդ չգիտէի։ Որքա՛ն ցաւում եմ որ այս կողմերը չես անցել։ Այդ դէպքում ես ուխտել էի այլեւս կեանքում չբաժանուել*

քեզանից գործի ասպարէզում։ Երէկ լուր առայ, որ մի քանի ընկերներ պատրաստւում, մտածում են նաեւ մեր միւս հերոսին — Մաթէոսին(3) *— ազատել։ Ո՛հ, այդ ի՞նչ օր կը լինէր մեզ, նրան ճանաչող ընկերներիս համա՛ր։ Երեւի դա կ՚ուրախացնէր նաեւ մեր «երախտամոլաւորներին», որոնք տեսնելով նրան ազատ, այլեւս երկիւղ չպիտի ունենային, որ նա «բոլորին մատնելու է»... Յիմար ստրկամիտնե՛ր, որոնք իւրաքանչիւր լուրի եւ երեւոյթի առիթով՝ ամէնից առաջ երկիւղի կրիտերիումը, երկիւղի զգացումն են խոսեցնել տալիս, իրենց մէջ։ Խե՛ղճ մարդի՛կ... Մաթէոսից նամակ ստացայ, Գանձակի բանտից գրած եւ լի ամենաբուռն գանգատներով թիֆլիզեցոց հասցէին. բայց ի՞նչ կարող ես անել, երբ վէրքը հասցրել են արդէն սրտին. բողոքեցի եւ էլի կը բողոքեմ. խօսողները ներողութիւն էլ կը խնդրեն, ի հարկէ, բայց ոչ մեզ եւ ո՛չ իրա՝ Մաթէոսի համար այդ այլանդակ դէպքը անհետեւանք չպիտի մնայ. մեր կսկիծը եւ դառն մտածմունքները չեն փարատւիլ դրանով եւ մենք, ցաւ է ասել, պէտք է դանք այն համոզման, որ մինչեւ չսատկենք, պէտք է լինենք հալածական նոյնիսկ այնպիսիների շրջանում, որոնք այսօր եթէ գործի մէջ են, այսօր յեղափոխական են, դա միայն շնորհիւ այն մարդկանց զոհաբերութեան եւ վճռողականութեան, որոնց իրենք հալածում են։ Այո՛, ի՞նչ ես կարծում. եթէ կայ մարդ-անասունի համար գոյութեան, պատւի, հացի անասնական խնդիրը, անասնական կռիւը, կայ դրա հետ միասին նրա մէջ նաեւ ներքին, հոգեկան ինքնաբաւարարութեան, մարդկային խնդիրը, մարդկային բարոյական «ես»-երի կռիւը։ Շատ բաներ, շատ անարդարութիւններ եւ անիրաւութիւններ են կատարւում այդ ներքին աշխարհների չափման շրջանում, եւ հոգեկան ու բարոյական «ես»-երը իրենց հաւասարակշռութիւնը պահպանելու համար իրենց պահանջներում պակաս խիստ չեն քան ֆիզիքական պահանջներին բաւարարութիւն տալու համար մղւող գոյութեան կռւում անասնական «ես»-երը։*

Բայց թողնենք այս փիլիսոփայութիւնները։ Գրում ես, որ ուզում ես Երկիր անցնել եւ թեկնածութիւն ես դրել Երկրի համար։ Ընդհ. Ժողովին այդ մասին ոչինչ չի յայտնւել, եւ ընտրելիների ցանկը մտցնել քեզ ոչ ոք չի առաջարկել։ Մենք չէինք կարող այդ անել չիմանալով քո ցանկութիւնը, չունենալով քո համաձայնութիւնը, իսկ այնտեղ եղողներից Բիւրոյի ներկայացուցիչը միայն բերել էր քո ազատման թարմ լուրը, որ լսել էր Ոսկանապատով անցնելիս, ուրիշ ոչինչ։ Բայց դա, ի հարկէ, խնդրի ձեւական կողմն է եւ այս կամ այն քո վճռին արգելք չէ կարող լինել։ Երբ ուզենաս, ուր ուզենաս — քեզ համար միշտ դռները բաց կը լինեն։ Սակայն, իմ կարծիքով, եթէ այն կողմերը չանցար, աւելի լաւ է առժամանակ մնաս այդտեղ՝ մի փոքր հանգստանալու, մի փոքր էլ երկիրը, երկրի պայմանները եւ երկրի գործող շրջանները նախ քեզ համար փոքր ի շատէ խաղաղ հանգամանքներում ուսումնասիրելու համար։ Ասում եմ «եթէ մեր կողմերը չգաս», ի նկատի ունենալով Ոսկանապատից ընկեր Մարտիրոսից(4) *ստացած մի նամակը, որի մէջ*

գրում է, որ հրաւիրել է քեզ, մեր ձեռնարկներին գործակցելու համար։ Խնդիրը նրանում է, որ Ընդհ. Ժողովը ի միջի այլ պատասխանատու մարմինների, ընտրել է Տաճկաստանի համար մի «Յուցական» մարմին, որի անելիքները հեշտ է եզրակացնել իր անունից։ Այդ մարմնու մէջ մտանք ուրիշների հետ նաեւ Մարտիրոսը եւ ես։ Մարտիրոսը, ըստ իւր հեռագրի, այս քանի օրս դուրս կը գայ Ոսկանապատից, ես էլ երեւի մի երկու շաբաթից կը հեռանամ նրան պատահելու նպատակով ու այուհետ շարունակելու ենք ճանապահներս դէպի ներս։ Եթէ դու գայիր, քեզ պէտք է մտցնէինք մեր մարմնու մէջ՝ թողնելով քեզ սակայն դուրսը, սահմանակից որեւէ վայրում, մեր յարաբերութիւնները պահպանելու եւ կարիքները հոգալու համար։ Չգիտեմ հիմա, ստացել ես դու ժամանակին այդ հրաւէրը (Մարտիրոսի նամակը) եւ ի՞նչ ես վճռել։ Դրա համար էլ ասում եմ, «եթէ չգաս», «եթէ մնաս այդտեղ եւն»։ Այժմ երեւի որոշ վճիռ դու արդէն ընդունել ես եւ ես չգիտեմ ո՞ւր պիտի լինես, ուստի կրկնում եմ վերեւի խօսքերս. «եթէ մեր կողմերը չանցար, մնացի՛ր առայժմ այդտեղ եւ մի շտապիր Երկիր»։ Վասպուրականի շրջանը այս տարի բաւական ինտելիգենտ ուժեր կ'ունենայ եւ քո գնալդ այնքան անհրաժեշտ չէ, որչափ մի փոքր հանգստանալ, կազդուրւելու ու մի շարք պայմանների հետ ծանօթանալու համար, մանաւանդ որ այդտեղ եւս այս տարի մեծ գործ քիչ չպիտի ունենանք։

Կովկասի մասին, արտայայտած կարծիքներիդ ընդհանուր առմամբ միանգամայն համամիտ եմ։ Եթէ այդ խնդրի վերաբերմամբ Ընդհ. Ժողովի վճիռը գիտես, ինձ թւում է այդ վճիռը բաւականին մօտ է քո կարծիքներին։ Ընդունեց միաձայնութեամբ, որ «Դաշնակցութիւնը» Կովկասում եւս իր վրայ է վերցնում հայերի պաշտպանութեան խնդիրը եւ որ դրա համար պէտք է ստեղծւի յատուկ Պատասխ. մարմին (Ինքնապաշտ[պանութեան] կոմիտէ) բայոնական ժողովի ընտրութեամբ։ Մարմինը պէտք է կռւի ռուս կառավարութեան ոտնձգութիւնների դէմ սովորական բոլոր միջոցներից սկսած մինչեւ տէրրօրի, ցոյցերի եւ մասսային զինւած դիմադրութեան միջոցները։ Ուրիշ ազգութիւնների հետ համերաշխութեան կարիքը նոյնպէս շեշտւած է։ Այդ երեւում եւ մասնաւորապէս մատնացոյց է արւած «Ռեվոլյուցիոննայա Ռոսիյա»(5) ռուս եւ «Սակարտվելօ» (La Géorgie) վրացական նոր կուսակցութիւնների հետ, որոնք իրենց աշխարհայեացքով եւ տաքտիքի խնդիրներում մեզ շատ են մօտենում։ Այս տարւայ համար «Կովկասեան Պատասխանատու մարմնուն» տւած է նաեւ 50 հազար ֆրանքի նախահաշիւ իր անելիքների համար։ Ամբողջ խնդիրը ուրեմն այժմ «Պատասխ. մարմնի» կազմից է կախւած. թէ դա լաւ եղաւ, որոշումը նրա — նաչպէս եւ գաւառական բոլոր մարմինների — համար բաց է անւում ընդարձակ ասպարէզ կովկասեան գործունէութեան վերաբերմամբ։

Վանից Ընդհանուր Ժողովին էր եկել մեր ընկերներից մէկը — Վարդան(6) անունով. նա Ժողովից չուտ մեկնեց Սամսոնի(7) հետ. չգիտեմ ճանաչում ես,

պատահել ես այդտեղերը թէ՞ ոչ, բայց՝ կարծելով, որ մինչեւ նամակս այդ-տեղ գալը, նա Երկիր կը լինի անցած, իրեն առանձին նամակ չեմ գրում եւ խնդրում եմ քեզ Սամսոնին կամ մի ուրիշի (Մինարէթում(8), օրինակ, պէտք է ճանաչեն նրան Ֆրանգեան կամ Մալխաս(9)) միջոցով նրան տեղեկութիւն հասցնես, որ իր նամակը ստացել եմ եւ յայտնում եմ մեր շրջանի ընկերների կողմից, որ երբ ուզենայ՝ մեզ մօտ նա միշտ կ'ընդունի ուրախութեամբ։ Ես շատ յուզւեցի նրա նամակով, որը բարոյական պարտաճանաչութեան սքանչելի մի արտայայտութիւն էր, եւ ինչ ասել կ'ուզի, որ կարող ենք նրան ըստ արժանւոյն գնահատել եւ կը ջանանք ամէն կերպ բաւարարութիւն տալ այն հրաշալի իղձերին, որով տոգորւած է այդ սքանչելի մարտիկը։ Յաջողութի՛ւն նրան դէպի ներս գնալիս եւ յաջող վերադարձ։

Բիւր համբոյրնե՛ր եւ մնաս բարեա՛ւ։

Ես շուտով մեկնելու եմ. եթէ գրելու կարիք լինի՝ գրիր այստեղ. ընկերները ինձ կը հասցնեն։

Անսահման կարօտով՝
Քո ՔՐԻՍՏԱՓՈՐ

1.- Վրէժ, Վրէժստանը՝ Ատրպատականի կուս. ծածկանունն է:

2.- Ոսկանապատը՝ Պաքուի կուս. ծածկանունն է:

3.- Մաթէոս՝ (Մինասեան – 1873-1915) հին ֆետայի, Բարսեղեանի մատնիչ Իսահակ Ժամհարեանը ահաբեկող մարտիկն է, որ բանտարկուեցաւ եւ աքսորուեցաւ Սիպիր, ուրկէ յաջողեցաւ փախուստ տալ եւ վերստին լծուիլ յեղափոխական գործին: Աշակերտած է Պուլկարիոյ Հ.Յ.Դ. զինուորական դպրոցին եւ տարիներ գործած Ատրպատականի, Վասպուրականի եւ Բաղէշի շրջաններուն մէջ:

4.- Մարտիրոս (Մարգարեան), ծանօթ Կարմրաթշիկ ծածկանունով, ուրիշ մէկը չէ եթէ ոչ Ցուցական մարմնի անդամ Սաֆոն, որ պիտի փոխարինէր Քրիստափորը այդ մարմնին իբր ղեկավար, վերջինին եղերական մահէն ետք:

5.- Բնագրին մէջ ռուսատառ՝ Յեղափոխական Ռուսաստան:

6.- Վարդան Շահպազն է, Պանք Օթթոմանի գրաւման մասնակիցներէն:

7.- Սամսոն Թադէոսեան, Քրիստափորի քրոջ որդին, որ կը ղեկավարէր Ատրպատականէն դէպի Երկիր զէնք-զինամթերքի եւ մարտիկներու փոխադրութեան գործը:

8.- Մինարէթը Սալմաստն է:

9.- Ֆրանգեան Երուանդ – Դաշնակցութեան տեսաբաններէն: Մալխասը ծածկանունն է Արտաշէս Յովսէփեանի (1877-1962), Ամերիկայէն եկած կուս. գործիչ, որ հաստատուած էր Ատրպատական:

130

Մատեան No 88, *էջ* 128

2 *յունիսի* 1904

Ցուցական մարմին

Թորգոմին, Վառնա

Սիրելի Թորգո՛մ.

Ստացայ վերջին երկար նամակդ (առանց ամսաթուի)։ Ցաւալի է, թէ Լեւոնի հետ է պատահել արկածը։ Մի բան միայն. չը լինի՞ թէ ճանաչող է եղել նրան. չէ՞ր կարող պատահել, որ, օրինակ, քեզ հետ Լեւոնին տեսնելով, յոյն փոխադրողները բան հասկացած եւ մատնած լինին։ Հետաքրքիր է ստուգել, երբ Լեւոնից լուր բռնես։

Նախահաշիւների մասին, ի հարկէ, չեմ պնդում։ Կ՚անեմ, ինչպէս ասում ես, ինքս կազմելով մօտաւոր նախահաշիւ։ Միայն այդ դէպքում հետզհետէ դու ուղարկիր այստեղ Բիւրոյին բոլոր արած ծախսերիդ մանրամասն հաշիւները, որ պիտի արձանագրւեն ընդհանուր տոմարում։ Այս մասին, կարծեմ, մի անգամ էլ գրել եմ քեզ։

Սայեանը չէ հասկացել իմ գրածները։ Այստեղից թէ Բիւրօն եւ թէ ես նրան գրել ենք, որ <u>իսկական ռումանական, բուն ռումանացու</u> անցագիր վերցնի եւ ոչ թէ ռումանահայի։ Նամակդ ստանալով՝ նրա քեզ գրածից հասկացայ, որ ընդհակառակը՝ նա առնում է ռումանահայի անցագիր եւ իսկոյն հեռագրեցի, որ սխալւել է եւ որ պէտք է վերցնի բուն ռումանացու անցագիր։ Չը գիտեմ՝ ուշ չէ՞ր արդէն նրան, իմ կարծիքով, կարելի էր բոլորովին անկախ մեզանից ուղարկել։ Իբրեւ մի ռումանացի երիտասարդ, ինձ թւում է, նա կարող էր մտնել Վիշապ եւ իմանալով, օրինակ, ի՞նչ արհեստով կամ ի՞նչ նպատակով են այնտեղ մնում ռումանացիք, դրա համեմատ մի փոքր գործ ձեռնարկել այնտեղ — մի քիչ ապրանքով, կամ գործիքներով։ Եթէ դժւար լինէր հէնց սկզբից մեր ուզած թաղում տեղաւորւել, այդ կարող էր անել առժամանակ մի տեղ հաստատւելով եւ յետոյ աւելի յարմար տեղ փոխադրւելով։ Սակայն, վերջ ի վերջոյ, Սայեանի խնդիրը թողնում եմ քո կարգադրութեան եւ շրջանկատութեան։ Միակ բանը, որ ի նկատի ունիմ — այդ այն է, որ առաջ քան մեր շարժւելը՝ տեղում ունենանք մի փոքր նախապատրաստական ուժ հարկաւոր իրերով։

Ինչ վերաբերում է ըստ կարելոյն շուտով բոլորի գործատեղում գտնւե-

լու խնդրին, ես միանգամայն համամիտ եմ գործեր շտապեցնելու տեսակէտին։ Միայն ինձ թւում է, որ մի քանի հարցեր մենք սկզբունքով պէտք է վճռած լինենք առաջ քան գնալը։ Այնտեղ գործի տեղ է եւ ոչ խօսակցութիւնների ու վէճերի. պարզ որոշումներ, ընդունւած վճիռներ պէտք է իրագործել այնտեղ, եւ խորհրդակցութիւններ կարող են լինել այնտեղ միմիայն այդ որոշումները իրագործելու միջոցների մասին եւ ոչ թէ դեռ մեր անելիքների վերաբերմամբ։ Ահա այդ նպատակով այս քանի օրս մի քանի տեղեկութիւններ Կովկասից ստանալուս պէս՝ ես իմաց կը տամ քեզ՝ ո՞ւր պէտք է — առաջ քան դէպի ներս շարժւելներս — մենք հանդիպենք իրար. մենք՝ այսինքն՝ Մարտիրոսը, դու, Յոնանը(1) *(երէկ նամակ ստացայ նրանից, ուր յայտնում է իր համաձայնութիւնը) եւ ես։ Այս նախնական խորհրդակցութիւնը ես կարեւոր եմ համարում մանաւանդ քո վերջին նամակում յարուցած խնդիրները ի նկատի առնելով։ Բացի դրանից լաւ կը լինէր լրացում կատարել մասնաւորապէս նաեւ մեր աշխատանքի .....*(2) *կամ աւելի լաւ ասած՝ մեր ստանձնած գործերի ընդհանուր կազմակերպութեան մասին։ Մեզ վրայ են դրւած, ինչպէս գիտես, նաեւ «Փոթորիկը»*(3)*, Ոսկեհանքը, մակեդոնացիների հետ կապերը եւ այս գործերից մէկն կամ միւսը — գուցէ նոյնիսկ իւրաքանչիւրը — ունենալու է իր այլեւայլ հետեւանքները։*

Գրում ես ինչ որ նամակի մասին Վարդանին գրած եւ ինչ որ կարծիքների մասին, որ ես յայտնել կամ հարցրել եմ Վարդանից։ Այդպիսի բան չէ եղել։ Բոլոր իմ նամակները գրել եմ միայն քու անւան, այսպէս Rédaction du "Jarjoum", *<u>յանձնել Թորգոմին</u>։ Դրանից դուրս Վառնա ես գրել եմ մի բաց նամակ. չեմ յիշում՝ քո թէ Ղազարեանի անւան դրամը փոխադրելու ժամանակ, ուրիշ ոչինչ։ Ուրեմն ես ոչինչ չեմ հասկանում այդ ինչ նամակների եւ կարծիքների մասին ես խօսում։ Պարզ է, որ մի ինչ որ թիւրիմացութիւն կայ։*

Ջերմ բարեւներով՝
ԷԼԼԷՆ

1.- Մարտիրոսը (Կարմրաթշիկ) Մարգարեան Մարտիրոսն է. Յոնանը՝ Դաւթեան:
2.- Մէկ բառ անընթեռնելի:
3.- «Փոթորիկ» – Բռնի հանգանականութեան ձեռնարկ: Ոսկեհանքը ծածկանունն է Իզմիրի, իսկ Վիշապը՝ Պոլսոյ: Վարդանը՝ Վարդան Շահպազն է. Թորգոմը՝ Սերեմճեան Արտաշէս:

131

Մատեան No 88, *էջ* 138-139

Քրիստափորի այս նամակը կը սկսի էջին վարի բաժնին մէջ եւ յայտնաբար գրութեան առաջին բաժնին պատճէնը չէ օրինակուած: Հոն պէտք է խօսուէր Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմեան Ա. կաթողիկոսի (Խրիմեան Հայրիկ) Եւրոպա ուղարկած առաքելութեան մասին, որ բաղկացած էր Պարսկա-Հնդկաստանի Այվատեան եւ Ամերիկայի Սարաճեան եպիսկոպոսներէն եւ որ Եւրոպայի, ինչպէս եւ Ամերիկայի կեդրոնական քաղաքները շրջելով՝ Սասնոյ դէպքերուն առիթով բողոք պիտի բարձրացնէր թրքական վայրագութեանց դէմ, վերարծարծելով Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով խոստացուած բարենորոգումներու իրագործման խնդիրը: Պիտի խօսուէր յատկապէս այդ առթիւ հայկական գաղութներէն բողոքի հեռագիրներ ուղղելու կարեւորութեան մասին: Այս բոլորի փոխարէն, բնագրի պատճէնին բաց ձգուած ընդարձակ տարածութեան վրայ, մատիտով եւ այլ ձեռագրով մը կան հետեւեալ՝ հազիւ ընթեռնելի գրութիւններ.–

5 ՅՈՒՆԻՍ – ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՍՊԱՀԱՆ
ՆԱՄԱԿԸ ՍՏԱՑԻԼ Է – ՍԱՀԱԿ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԳՐՈՒՄ ԵՆ – ԴԻՄՈՒՄՆԵՐ ՊԱՏՃԷՆԱՀԱՆԵԼ – ՇԱՏ ՏԵՂԵՐԻՑ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՅԱՍԷՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

……: *Գուցէ աւելորդ չը լինի այստեղ դնել մի քանի մեր բարեկամների անունները* — Francis de Pressensé (*Ֆրանսիայում — Փարիզ*), James Bryce (*Անգլիայում — Լօնդօն*) *եւ* Frascassi (*Իտալիայում — Հռոմ*), *որոնց հարկաւոր դէպքերում նոյնպէս կարելի է դիմումներ անել եւ մանաւանդ իմաց տալ նախարարութիւններին արւած դիմումների մասին: Սրանց կատարեալ հասցէները ունենալու համար՝ բաւական է անուններին աւելացնել* Député(1) *խօսքը եւ ամէն ինչ ձեռքները կը հասնի: Ուրախութեամբ այստեղ ես կարող եմ ասել, որ վերջերս Լօնդօն յղած*[?] *մեր մի հեռագրի առթիւ՝ պատասխան ստացանք Լանսդաունի*(2) *կողմից. «Դրօշակի»* No 4-5-*ում կը կարդաս այդ պատասխանը, միայն հասկանալի պատճառներով մենք ծածկել ենք մեր անունը:*

Խմբական նկարներ սկսել ենք տալ «Դրօշակում»: Մինչեւ այժմ այդ չէինք անում վախենալով, որ բազմաթիւ կենդանի ընկերներ Տաճկաստանում եւ Ռուսաստանում ձերբակալւած ժամանակ՝ կարող են ճանաչւել: Բայց ինչ հարկաւոր էր, երբ գտնւում էինք նախապատրաստութեան շրջանում, այժմ արդէն աւելորդ է: Այժմ, երբ կռիւը սկսւել է, երբ հին ընկերները արդէն

զինուորական գործի մէջ են, երբ այլեւս երկար ամիսների ընթացքում, ռուսաց սահմանից սկսած մինչեւ Վասպուրական, Մուշ, Ախլաթ եւայլն, պիտի շարունակուեն ընդհարումները,— այժմ, ասում եմ, այդ զգուշութիւնը անհրաժեշտ չէ եւ ընդհակառակը պէտք է անել այն բոլորը, ինչ կարող է փութացնել կուող ռազմիկներին հասցնելիք օգնութիւնը։ Սակայն «Դրօշակում» տպագրած կամ տպագրելիք խմբանկարների մասին չէ միայն քո խօսքը, այլ դրանց առանձին հրատարակութիւնների մասին եւ այն էլ՝ գունաւոր. մեր ունեցած կլիշէներից, ի հարկէ, շատ հեշտ է միայն խմբանկարները առանձին հաստ թղթի վրայ տպագրել տալ, ինչպէս մինչեւ այժմ հրատարակել ենք անհատ հերոս-ընկերների պատկերները, իսկ ինչ վերաբերում է գունաւոր հրատարակութիւններին — ինչքան էլ առաջարկը խելացի ենք գտնում — այս րոպէիս որոշ բան չենք կարող ասել։ Որոշեցինք տեղեկութիւններ հաւաքել եւ եթէ փոքր ի շատէ նպաստաւոր պայմաններով կարելի լինի այստեղ ձեռնարկել այդ տեսակ հրատարակութիւնների, պիտի անենք։

Հնդկաստանից համարեա մենք յոյս չունենք։ Ահա 10 տարուց աւելի է՝ ինչ «Դրօշակ» է գնում ոչ միայն երկու Հնդկաստանները, այլեւ բազմաթիւ կղզիներ եւ Չինաստան։ Այդ տարիների ընթացքում, զանազան առիթներով, նամակներ եւ շրջաբերականներ էլ են ուղարկուել միեւնոյն տեղերը, բայց, երեւակայի՛ր, բոլոր ժամանակ <u>միայն մի բաց նամակ</u> ենք ստացել հայագէտ Սէթեանից, որ շնորհակալութիւն էր յայտնում թերթը իրեն ձրի ուղարկելու համար։ Տասը տարուայ ընթացքում — ասում եմ — Սէթեանի բաց նամակից դուրս՝ ո՛չ մի անասունից, ո՛չ մի տող, ո՛չ մի արձագանք, ո՛չ մի կոպէկ, թէեւ «Դրօշակ ուղարկուում էր այդ կողմերը ամենապակասը 50-60 մարդու անուան (Կուկունեանի խմբից առաջին փախածները այդ կողմերը ընկնելով՝ բազմաթիւ հասցէներ էին ուղարկել)։ Ի նկատի ունենալով մի կողմից այդ դառն փորձը եւ միւս կողմից վերջին ընդհանուր ժողովի վճիռը, մենք ապրիլ-մայիսի համարից դադարեցրինք Հնդկաստան թերթ ուղարկելը եւ այսուհետեւ էլ ոչ ոքի այլեւս չպիտի ուղարկենք մինչեւ իրենք չդիմեն եւ դրամ էլ չուղարկեն։

Օրիորդ Գալստեանին ճանաչում եմ. իրաւ որ նա առաջ այստեղ էր, իսկ այժմ Փարիզ է։ Ըստ իմ տպաւորութեան՝ չկարծեմ,նա համապատասխանի քո առաջարկած պաշտօններին, բայց վերջնական մի բան կը գրեմ մի քանի օրից յետոյ, երբ նրա մասին աւելի տեղեկութիւններ կը հաւաքեմ՝ քան ունիմ եւ իրեն էլ կը հարցնեմ։ Ցգրութիւն ուրեմն՝

Ամենաջերմ բարեւներով՝
Քո ՔՐԻՍՏԱՓՈՐ

Թերթ ես սկսել հրատարակել. ինչո՞ւ չես մեզ էլ ուղարկում։ Հետաքրքիր է։

1.- Ֆրանսերէն՝ երեսփոխան, խորհրդարանի պատգամաւոր:
2.- Լորտ Լանսդաուն – Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար:

132

Մատեան No 88, *էջ* 140-41

6 *յունիս* 904

Ցուցական մարմին

Սայեանին, Բուքրէշ

Ստացայ Ձեր 20/2 *յունիսի գրութիւնը։ Իմ կարծիքով՝ ահա Ձեր անելիքը։*

Պէտք է մտնել Վիշապ(1) *իբրեւ մի ռումանացի, որ ցանկութիւն ունի այնտեղ որեւէ շահաւէտ գործ սկսել։ Այդ նպատակով կամ հէնց այժմեանից տեղեկութիւններ ժողովեցէք՝ թէ ռումանացիք գլխաւորապէս ինչ տեսակի առեւտրով կամ արհեստներով են զբաղւում Վիշապում եւ կամ եթէ այդ յարմար չէ այժմ անել, Վիշապ մտնելուց յետոյ հետաքրքրուեցէք այդ խնդրով եւ նայած ընտրութեան մի փոքրիկ գործ ձեռնար[կե]ցէք։ Միջոցներ դրա համար կը յատկացուեն։ Փոյթ չէ թէ սկզբում ո՛ր քաղաքամասում կը լինէք։ հիմնուեցէք մի տեղ։ յետոյ կարելի է փոխադրուել այն մասը, որը կ՚ընտրի Պատասխ[անատու] Մարմինը։*

Դրամ ահա ուղարկում եմ՝ 200 fr. *կրկին, իսկ պահեստ կ՚ստանաք ըստ կարիքի։ Աշխատեցէք միայն միշտ ըստ կարելոյն խնայող լինել ծախսերում, որպէսզի ապագայում նեղութիւնների չմատնուենք։*

Քանի որ անձամբ ծանօթ էք Քրիսին՝(2) *հարկաւոր դէպքում նրա հետ էլ գործ ունեցէք եւ, ի հարկէ, զգոյշ կերպով, անհրաժեշտ խնդիրների մասին միայն խորհրդակցելու նպատակով։ Նրան կարող էք գրել այսպէս։*

Mr. Recci Silvio(3)
Pera, Tarlabachi, rue Hale, 13
Poste Autrichienne – Constantinople

Շուտով Վիշապ կը մտնի նաեւ Աշոտ Բագրատունին(4) (*Սեւ Աշոտը, որին երեւի Սոֆիայում տեսել էք*)։ *Սակայն առ այժմ խնդրում եմ նրան ինքներդ չորոնէք — ո՛չ մինակ ինքներդ, ո՛չ էլ Քրիսի միջոցով։ Երբ նա կը մտնի եւ կը հաստատուի, մենք Ձեզ իմաց կը տանք։*

Այս բոլորը ասելուց յետոյ՝ աւելացնում եմ սակայն, որ աւելի լաւ կը լինէր այս գրածներիս վերաբերմամբ նախօրօք խորհրդակցէիք Թորգոմի(5) *հետ եւ ըստ նրա ցուցմունքների շարժուէիք։ Իբրեւ տեղի հանգամանքներին աւելի ծանօթ ընկեր՝ նրա կարծիքը աւելի հեղինակաւոր պէտք է համարուի։ Ես Թորգոմին գրել եմ։ դուք էլ հարցրէք* (*նամակով, հեռախօսով եւայլն*)։ *Բացի դրանից չը գիտեմ, դուք ծանօթ էք թէ՞ ոչ մեր մէջ ընդունուած ծած-*

կագրերին — այսինքն գաղտնի թանաքով եւ հարկաւոր տեղերը թւանշաններով գրելու ձեւերից մէկին։ Լաւ կը լինէր, որ այդ մասին էլ պայմանաւորուէք Թորգոմի հետ, եթէ ժամանակը կամ հանգամանքները ներեն։ Ես այստեղ կը լինեմ երեւի 15-20 *օր եւս, բայց ոչ աւել։ Դրան նայած՝ յարաբերութիւններդ շարունակեցէք այսուհետ Թորգոմի հետ։*

Ջերմ բարեւներով եւ յաջողութեան ցանկութիւններով՝
Ձեր ԷԼԼԷՆ

1.- Պոլիս:
2.- Ֆեներճեան Քրիս:
3.- Միեւնոյն Քրիսն է, որ իբրեւ իտալացի Սիլվիո Ռիչի պիտի գործէր Պոլսոյ մէջ, իբրեւ Ցուցական մարմնի օժանդակ անդամ:
4.- Եղիկեան Կարապետ, անդամ Ցուցական մարմնի:
5.- Սերեմճեան Արտաշէս, անդամ Ցուցական մարմնի:

133

Մատեան No 89*ա*-1, *էջ* 3 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

16 *յունիս* 904

Արեւելեան բիւրոյին

Նամակս ներկայացնող 5 *ընկերները գալիս են Ամերիկայից Կետը. Կոմիտէի յանձնարարութեամբ, բացի վեցերորդից, որին միացրել են առաջին հինգին Նիւ Եորքի ընկերները։ Այդ վեցերորդը Արշակ Սանոսեանն է Թիֆլիզին ծանօթ, գուցէ եւ Ձեզ, որը այժմ անւանւում է ընկերների շրջանում — Գրքо։ Դրա մասին մենք ունենք աննպաստ տեղեկութիւններ։ Դրանից դժգոհ են նաեւ հետը եկող միւս ընկերները։ Մեր խորհուրդն է կամ բոլորովին հեռացնել դրան գործից եւ կամ առնւազն բաժանել միւս հինգ հոգուց, որոնք նւիրւած եւ մաքուր տղայք պիտի լինին։ Մինչ երկու օր ձեզ կը տրւի մանրամասն տեղեկութիւններ այս կողմերի մասին, իսկ այս նամակը գրւում է շտապ՝ միմիայն եկողներին ճանապարհելու համար։ Ինքներս այստեղ չխափանեցինք, չհեռացրինք Սանոսեանին մի կողմից չուզենալով հիասթափեցնել Նիւ Եորքի ընկերներին եւ միւս կողմից որպէսզի այդ անհամակրելի պարոնը այդ առթիւ թշնամութիւններ չբանեցնէ միւս ընկերների վերաբերմամբ, որոնք իրենց անփորձութեամբ հանդերձ դեռ երկար ճանապարհ պիտի գնան մինչեւ ձեզ հասնելը։*

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

134

Փաստ. 1530-10

1907 թ. Վիեննա գումարուած Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. ժողովի թիւ 1530 թղթածրարը յատկացուած է Ցուցական մարմնի գործունէութեան, այսինքն Սուլթան Ապտիլ Համիտի մահափորձի քննութեան: Այդ թղթածրարին մէջ կը գտնուին Քրիստափորի գրչին պատկանող 6 փաստաթուղթեր. անոնցմէ մէկն է Ցուցական մարմնի կայացուցած նիստերէն այս «Յաւելուածը», գրուած, ինչպէս նշուեցաւ, Քրիստափորի կողմէ Արեւելեան բիւրոյի պաշտօնական թուղթի երեք էջերուն վրայ:

Յաջորդող էջերուն, թուականի կարգով կը տրուին նոյն թղթածրարի միւս հինգ փաստաթուղթերը, բոլորը ուղղուած Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյին եւ ստորագրուած Ցուցական մարմնի կամ ուղղակի Էլլէն-Քրիստափորի կողմէ:

ԻԲՐ ՅԱՒԵԼՈՒԱԾ ՅՈՒԼԻՍ 16, 1904, *ԱԹԷՆՔԻ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ*

Երրորդ Ընդհ. Ժողովը ներկայ 1904 *թուականի տաքտիքը որոշելիս՝ ընդունել է ի միջի այլոց այն մեծ նշանակութիւնը, որ ներկայացնում է կուսի տեսակէտից Վիշապը*(1)*։ Վիշապի այդ նշանակութիւնը՝ հիմնուած մի շարք լուրջ հիմքերի վրայ, որ բերուած են Ընդհ. Ժողովի արձանագրութիւններում, պատճառ եղաւ Ընդհ. Ժողովի համար ընտրել այնտեղ գործելու համար առանձին Ցուցական մարմին՝ տալով նրան նշանաւոր դրամական միջոցներ եւ յանձնարարելով կատարել «մի մեծ, փայլուն գործ»։*

Ցուցական մարմինս՝ Ժողովի ցրուելու օրից սկսած ջանալով պարզել այն տարբեր ձեռնարկները, որոնք կարող են ներկայ հանգամանքներում իրագործուել Վիշապում, պարտաւոր էր ուրեմն, համաձայն Ժողովի ցանկութեան, ընտրել այդ ձեռնարկներից «ամենամեծը», «ամենափայլունը», որ ասել է՝ ամենաուժեղը իր գործելի տպաւորութիւնով եւ հաւանական հետեւանքներով։

Զինուած այս տեսակէտով Մարմինս բոլոր հնարաւոր ձեռնարկներից կանգ առաւ «Նժոյգի գործի»(2) *վրայ։ Ահա, ամփոփ կերպով, այն շարժառիթները, որոնցից բխում է այդ վճիռը.*

1 - *Իբրեւ ձեռնարկ դա ամէնուրեք բոլորի կողմից համարւում է անկա-*

ըելի, եւ «Դաշնակցութիւնը» յաղթահարելով այդ անկարելիութիւնը, համոզուած ենք պիտի զարմացնէ ամբողջ աշխարհը եւ յարգանք ու ակնածութիւն ներշնչելով դէպի հայ տարրը, մեծապէս պիտի նպաստէ տարաբախտ հայկա[կա]ն դատի զարգացման։

2 - *Այն ժամանակ, երբ ուրիշ բնաւորութեան ձեռնարկներ տարիներ տպաւորութիւններ են թողնում այլեւայլ շրջաններում, մանաւանդ Եւրոպայում՝ մի տեղ հաւանութիւն գտնելով, իսկ միւսներում դատապարտուելով, Նժոյգի գործը միանգամայն հասկանալի պիտի լինի ոչ միայն բոլոր տառապող ժողովուրդների համար, այլեւ բոլոր իշխող դասակարգերին, որոնց պակաս ծանօթ չեն «մեծ մարդասպանի» բոլոր աններելի ոճրագործութիւնները։*

3 - *Վիշապում ներկայումս տիրող ոստիկանական դժուար պայմաններում գուցէ անկարելի լինէր ծրագրել եւ իրագործել մի շարք իրար հետեւող ուրիշ ձեռնարկներ, որոնք ընդունակ լինէին լուրջ տպաւորութիւն գործել դրսի աշխարհների վրայ, իսկ մի կամ երկու ձեռնարկներ անպատճառ պիտի նմանուէին առաջները* (90 *թուականից ի վեր*) *եղածներին։ Արդ՝* 97 *թուականից ի վեր*(3), *ամբողջ եօթ տարուայ մեր լռութիւնից յետոյ, ձեռքի տակ ունենալով նաեւ նշանաւոր դրամական միջոցներ՝ հնի կրկնութեամբ երեւան գալը, մեզ թւում է, անկարող կը լինէր նկատելի ցնցում առաջ բերել եւ գուցէ աննպաստ գաղափար ներշնչէր դրսի աշխարհին «Դաշնակցութեան» ուժերի եւ ընդհանրապէս հայ տարրի մարտական տրամադրութեան մասին։*

4 - *Այդ դժուար ծրագրի իրագործումը կրթիչ մեծ նշանակութիւն պիտի ունենայ հայ տարրի եւ աճող սերնդի համար՝ ներշնչելով բոլորին սուրբ, փրկարար հաւատ, որ ամենայն դժուարութիւն չքանում է ամենաթոյլերի իսկ առաջ, երբ դրանք ձգտում են իրենց նպատակին անպայման անձնուրութեամբ եւ անդարձ վճռողականութեամբ։*

5 - *Դա կը լինէր ամենաարդար պատիժ մի ոճրագործի համար, որ միակ հեղինակն է հայ ժողովրդին տւած բոլոր անհամար, բոլոր մահաբեր հարուածներին՝ սկսած* 94 *թ. Սասունի եւ ապա ամբողջ Հայաստանի բոլոր տարածութեան վրայ տեղի ունեցած ահեղ կոտորածներից մինչեւ ներկայ թուականի սոսկալի անցքերը։*

6 - *Դա — այդպիսի մի հատուցում — կը սրբէր հայ ժողովրդի ճակատից այն արատը, որին նա պիտի մնայ արժանի, եթէ չկարողանայ իր միջից արտադրել այնքան ուժ, որ հանդիսանար արտայայտիչը նրա սրտում կուտակուած անսահման զայրոյթի, ատելութեան եւ վրէժի։*

7 - *Եւրոպական միջամտութեան տեսակէտից, Նժոյգի գործը համեմատաբար նախապատուելի է ուրիշ ձեռնարկներից։ Եւ իրաւ, բացի այն բոլոր ընդհանուր հետեւանքներից, որ կարող է ունենալ այդ գործը ոչ պակաս քան որեւէ ուրիշ ձեռնարկ իբր Թուրքիայի սրտում, Եւրոպային մօտիկ ու նրա շահերի հետ կապւած մի վայրում, Նժոյգի գործը՝ հարւածելով ուղղակի պե-*

տութեան գլխին, անհրաժեշտաբար տակնուվրայ պիտի անէ Նժոյգի(4) ձեռքով ստեղծուած եւ ներկայումս պահպանուող քաղաքական յարաբերութիւնները մի կողմից թուրքերի եւ միւս կողմից՝ եւրոպական իւրաքանչիւր պետութեան միջեւ։ Հետեւաբար այն օրը, երբ չի լինի այդ յարաբերութիւնները ղեկավարող ձեռքը, իւրաքանչիւր պետութիւն՝ առանձնապէս շահագրգռուած ապագայ յարաբերութիւններով, անկարող կը լինի այս կամ այն կերպ չխառնուել, անմասնակից մնալ նոր հաստատելիք կարգերում։

8 - *Համոզուած ենք, որ ներկայ Նժոյգի օրով ոչ միայն որեւէ փոփոխութիւն չի կարող տեղի ունենալ երկրի սոսկալի պայմաններում, այլեւ որ այդ պայմանները աւելի եւս պիտի ծանրանան։ Այն ինչ՝ Նժոյգից յետոյ նոր կառավարութիւնը՝ հանդիսանալով ներկայացուցիչ արդի դրութեան հակառակ կուսակցութիւն, ինչպէս եղել է միշտ Թուրքիայում, պիտի ընթանայ փոքր ի շատէ ազատամիտ ուղղութեամբ։ Երկրի ներկայ ահաւոր պայմաններում, երբ ճնշւում եւ ջնջւում է հայ ժողովուրդը, մի-երկու տարով անդամ փութացնելով նոր կառավարութեան հաստատելը, գուցէ մեծապէս նպաստած լինենք հայ ժողովրդի ջնջման գործը կասեցնելուն։*

9 - *Այդպիսի մի խոշոր գործ, որ համարձակութեան եւ անձնուիրութեան հետ՝ պահանջում է նաեւ տաքտ ու ընդունակութիւններ, կարծում ենք կարող է այնքան ակնածութիւն ներշնչել տիրող տաճկական բիւրոկրատիային եւ ինտելլեկենցիային, որ նրանք՝ բացարձակապէս ուժ տեսնելով հայի մէջ, յարգանքով վերաբերին դէպի հայը եւ չչարունակեն ապագայում արհամարհել նրա դրութիւնը երկրում, հաշուի չառնել նրա հասունացած պահանջները։*

1.- Վիշապը Պոլիսն է, Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք:

2.- «Նժոյգի գործ» անունը տրուեցաւ Սուլթան Ապտիլ Համիտը ահաբեկելու նպատակով նախաձեռնուած Ցուցական մարմնի գործողութեան:

3.- Կ՝ակնարկուի Խանասորի արշաւանքին:

4.- Սուլթան Համիտի:

135

Փաստ. 1530-9

1904 *թիւ* 1/14 *օգոստ.* *Աթէնք*

Արեւմտեան Բիւրոյին, Ժընեւ

Սիրելի՛ ընկերներ,

Պատասխանում ենք ձեր վերջին գրութիւններին. Ժակ-Լեւոնի(1) *մասին մեր հայեցակէտը պարզել ենք իրեն գրած նամակում, որի պատճէնը ուղարկել ենք եւ ձեզ։ Սակայն ձեր նամակը պարունակում է աւելի մանրամասնութիւններ, քան կարելի էր հասկանալ նրա հեռագրից, եւ այդ ամէնը նկատի ունենալով՝ մենք որոշեցինք առ այժմ հրաժարուել նրա գործակցութիւնից։ Եթէ բանը մնալու է սեպտեմբերի վերջերին, որ կը նշանակէ հոկտեմբերին, այն ժամանակ էլ մենք կը մտածենք նրա մասին՝ նայած գործերի ընթացքին եւ մեր կարիքին. իսկ ներկայումս նրա պայմանները մենք չենք կարող ընդունել։ Հարցը սրանով ուրեմն թող փակւած համարւի։*

Հայաստան գնացող իտալացի պրոֆֆեսորի մասին՝ ի հարկէ, նախօրօք տեղեկութիւնները հաւաքած կը լինէք վստահելիութեան վերաբերմամբ։ Չը գիտենք յայտնի է՞ ձեզ, որ նա միաժամանակ միեւնոյն թղթերով, նամակներով եւ իրեն նպաստելու առաջարկներով դիմել էր Փարիզ (P. A.*ին*)(2) *եւ ուրիշ տեղեր։*

Պ.ի մասին (ենթադրենք, որ դա Պրիտոնովն է) այսօր հեռագրում ենք ձեզ մեր կարծիքը, թէ minimum *համարել* 60000 fr.։ *Ոչ ոքի համար ռուբլին ֆրանքից պակաս չէ զիջւել, իսկ եղել են մեր ուզածի հաւասար (Շուշեցի Թաթոսեան) կամ քիչ պակաս տւողներ (Տէր Յակոբեան)։ Անկարելի է ուրեմն ռուբլին ֆրանկի վերածելուց էլ դէնը գնալ եւ չպէտք է գնալ երբեք*(3)։

Շնորհակալութիւն տւած տեղեկութիւնների եւ այն բացատրութիւնների մասին, որոնք պարզում են մի-երկու թիւրիմացութիւններ։

Հիմա գանք մեր ասելիքներին։

1) *Մեզ շարունակ հարկաւորւելու են զանազան անցագրեր (ոչ հայերի)։ Էլլէնը այդտեղ եղած ժամանակ՝ ի միջի այլոց խնդրել էր Միքայէլին*(4) *Բիւրոյի կողմից ուզել անցագրեր ազատ երկրներում գտնւող մեր կոմիտէներից, եւ Ամերիկայից արդէն պատասխանել էին, որ յոյս ունեն հրէական անցագրեր շատ գտնել (գնում են Ռուսաստանից այնտեղ գաղթած հրեաներից)։ Խնդրում ենք հետեւել այդ հարցին եւ աշխատել այդտեղ ունենալ անցագրերի մի պաշար, որ պէտք է կամ ուղարկել մեր դրսի անդամին (Յոնանին*(5)*, որին թողնում ենք դուրսը՝ սահմանակից վայրերից ներսի հետ յարաբերութիւններ պահպանելու համար) եւ կամ ուղղակի մեզ՝ հարկաւոր ժամանակը։ Լոնդոնի տղայոց կարելի է դիմել։ Անցագրերը կարող են լինել հրէական, ռուսական, վրացու, թիւրքի (Պարսկաստ.), արաբի, յոյնի, սիւրիացի-*

ների, ռումանացիների, բոլղարի եւայլն, որոնք բացի մեզնից կը յատկացուեն ուրիշների։

2) *Էլլէնը Ընդհ. Ժողովից դառնալիս՝ Միւնխէնում թողել էր նկարիչ-ուսանող Հազարապետեանի մօտ (որ ուզում էր մի մեծ նկար ստեղծագործել՝ նուիրուած մեր շարժման) հետեւեալ պատկերները ա) 10 խմբանկար, բ) մեծ պորտրէտներ մատիտով նկարած, գ) 8 հատ կաբինէտ-պորտրէտներ եւ դ) 16 հատ վիզիտ-պորտրէտներ։*

Եթէ պարոնը մինչեւ այժմ չէ վերադարձրել այդ բոլորը, հարկաւոր է յիշեալ ցուցակով յետ ուզել, մանաւանդ որ չար լեզուները հաւատացնում են, որ Հազարապետեանը, չնայելով իր բարի ցանկութիւններին, իսկապէս բան չինողներից չէ եւ մեր նիւթերը նրա մօտ մնալով՝ կարող են միայն կորչել։

Հազարապետեանին կարելի է դիմել Վահաբի(6) *քրոջ հասցէով։*

3) *Լեւոն Գիւլումեանը, որ հրաւիրուած էր մեր մարմնուն աջակցելու, իր անտեղի պահանջների եւ դեր խաղալու տենչի պատճառով, մեզ ստիպեց հրաժարուել իր գործակցութիւնից։ Թէեւ նրան տուած է ճանապարհածախս Ռուսաստան վերադառնալու, բայց եւ շարունակում է մնալ Բոլղարիա եւ դէս ու դէն գրաւոր դիմումներ է անում՝ նոր գործ խնդրելով։ Մեր մէջ պատահածը յայտնում ենք ձեզ ի գիտութիւն՝ առանձին քնքուշութիւն այդ պարոնին ցոյց չտալու համար։ Արեւելեան Բիւրոյում երկու տարի սրանից առաջ՝ մի առժամանակ իշխելուց յետոյ, ինչպէս երեւում է, դա կորցրել է չուվստւս մեռի*(7) *եւ կարող է գլխացաւանք պատճառել այն ընկերներին, որոնց շլինքին կը փաթաթի։ Դրան էին վերագրում Բագւայ պարապետի վրայ մաղթանքի ժամանակ նետուած ռումբը, բայց այժմ պարզւել է, որ դա վառել է պատրոյդը եւ յետոյ վախեցել եւ հանգեցրել է, եւ Մրաւն է (Ժամ.*(8)*), որ այդ տեսնելով՝ խլել է ձեռքից ռումբը եւ նորից վառելով՝ նետել է։*

4) *Ծանօթանալով մի քանի խնդիրների հետ, որոնք կապւած են Լեռնավայրի շրջանի հետ, ու տեսնելով, ի միջի այլոց Պատ. մարմնի մէջ մտնելու դեռ խօսք չտւած, բայց կարգադրութիւններից չհրաժարւող ընկերների ընթացքը, պարտք եմ համարում յայտնել ձեզ պաշտօնապէս, որ մենք Կիլ[իկիոյ] Պատ. մարմինը կազմակերպւած չենք տեսնում եւ առաջարկում ենք՝ ներկայ հանգամանքներում շրջանի վերաբերմամբ՝ իւրաքանչիւր գործում ի նկատի ունենալ Բիւրոյիդ պատասխանատուութիւնը*(9)։

5) *Զանազան ալան-թալանների առաջն առնելու, մեր նախահաշիւները պահպանելու, տակ ու վրայ տանելու եւ մարդկանց որեւէ չափով համոզելու համար, որ իրօք Բիւրոյում պէտք է հաշիւներ պահւեն՝ խնդրում ենք Բիւրոյիդ ոչ մի մարմնի եւ ոչ մի սանտիմ չբաց թողնել այն բոլոր դէպքերում, երբ չէ նախատեսւած՝ Բիւրոյիդ համար այդ պարտականութիւնը եւ երաշխիք չունէք, որ ձեր տւածը կը վերադարձւի ճշտութեամբ։ Իբրեւ օրինակ յիշում ենք այստեղ Ամերիկա եւ խնդրում ենք պահանջել նրանցից անմիջապէս Բիւրոյիդ ուղարկել՝* 1) *Սարգսին տւած (Ամերիկա մեկնելիս)* 300 fr., *թէ ոչ աւել.* 2) *Պարգեւին (Ամերիկայի ներկայացուցիչ) Սոֆիա, Ժընեւ*

տւած փողերը (300-ից աւել է), *ինչպէս եւ Վահաբին տւածները։ Թէ ոչ՝ դուրս կը գայ այսպէս բան, որ ամէն մարդ որտեղ ուզի եւ որքան ուզի՝ կարող է մնալ, ապրել, ճանապարհել եւայլն, որովհետեւ եթէ մի մարմնու նրան յատկացրածը չբաւէ, կը գտնուեն միւս ուրիշ մարմիններ, որոնք նրան միւս բաւարարութիւն կը տան եւ ոչ ոքի հաշուին էլ չեն գրի կամ այնպէս կը գրեն, որ միայն իրենք կ'իմանան։*

6) *Յայտնում ենք ձեզ ի գիտութիւն հետեւեալ որոշումները, որ տուեց մեր մարմնու կողմից «Փոթորիկի» վերաբերմամբ. խնդրեցինք «Փոթորկի» անունով գործող խմբից.*

ա) Ուղարկել մեզ մանրամասն տեղեկագիր մինչեւ մեր նամակը ստանալու օրը բոլոր եղած դիմումների, պահանջների քանակը, ծախսի, մուտքի եւ այլ անցած-դարձածների մասին։ Այդ տեղեկագիրը պիտի ստանայ մեր դրսի ընկերը (Յոնանը)։

բ) Մինչեւ «Դաշնակցութեան» Խորհրդի կայանալը ոչ ոքի, ոչ մի մարմնու եւ ոչ ալ գործի չտալ եւ ո՛չ մի սանտիմ, որքան եւ խիստ լինի պահանջը։ Սա վճռւած է Ընդհ. Ժողովում։

գ) Կատարել խիստ քննութիւն Բաթումում շարունակւող գանձումների վերաբերմամբ. մեզ մօտ եկած (մի քանի օր է) մեր մի ընկերը յայտնեց մեզ, որ այդ քաղաքը շարունակում է գանձումներ իր անունից եւ որ միայն ինքը, այդ մեր ընկերը, հրաւիրւած լինելով իրենց օգնելու, մեկնելուց մի քանի օր առաջ՝ յանձնեց Կոմիտէին իր ստացած 22,000 *ռուբլին։*

Ջերմ բարեւներով՝
ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

P.S. *Վաղը կրկին կը գրենք ձեզ։*

1.- Ժակ-Լեւոնը, ինչպէս պիտի յայտնէ Քրիստափոր, ծածկանունն է Լեւոն Գիլլումեանի:

2.- Pro Armenia-ի խմբագրութիւն:

3.- Հարցը կը վերաբերի դրամահաւաքի («Փոթորիկ») համար նշանակուած գումարներուն, որոնց համար կատարուած զեղչը, ըստ Յուցական մարմնի որոշման, «երբեք չպէտք էաւելի լինի քան ռուբլին ֆրանքի վերածելը»: Առ ի լուսաբանութիւն յայտնենք որ այդ օրերուն մէկ ռուբլին կ'արժէր 2.5 ֆրանք:

4.- Միքայէլը Ռոստոմի ծածկանուններէն մէկն է: Աւելի հաւանական է, որ կ'ակնարկուի Միքայէլ Վարանդեանին:

5.- Յոնան Դաւթեան:

6.- Արշակ Վռամեան:

7.- Բնագրին մէջ ռուսատառ. չափի զգացում:

8.- Մարգար Ժամհարեան, որ տարի մը ետք, 1905 թ. Սեպտեմբերին, վաղահաս մահով պիտի զոհուէր Շուշիի ինքնապաշտպանութեան կռիւներու ընթացքին:

9.- Բնագրին մէջ թիւ չորս պարբերութիւնը ջնջուած է նկատի ունենալով, երեւի, որ հոն արծարծուած հարցը առնչութիւն չունի Յուցականի գործունէութեան, որուն քննութեան յատկացուած է այն թղթածրարը, ուր եւ կը գտնուի այս նամակը:

136

Փաստ. 1530-13

14 *հոկտ.* 904, *Ֆիլիպպէ*

[*Արեւմտեան բիւրոյին, Ժընեւ*]

Սիրելի՛ք

Համբերութիւններս հատաւ խնձորների(1) *սպասելուց եւ վերջիվերջոյ վիճակւեց ինձ առնել այս վերին աստիճանի անհաճոյ ճանապարհորդութիւնը գործի վայրից*(2) *դէպի դուրս։ Դժբախտաբար, անցեալ օրը այստեղ հասնելով՝ չգտայ նաեւ մինչեւ այժմ փորձերով զբաղւած ընկերներից ոչ մէկին* (*նրանք աքսորւել են Բուլղարիայից եւ այժմ երեքը Աթէնք են*), *այնպէս որ ամէն բան ինքս պէտք է կրկնեմ։ Ինչ որ է, ի հարկէ կ՚անեմ հարկաւորը. իսկ մինչ այս մինչ այն՝ խնդրում եմ շուտով կարելին անել հետեւեալ առաջարկների վերաբերմամբ.*

1) *Լիսից*(3) *խնդրել էինք ձեզ Զիլբեռշտէյն-ի*(4) *անունով ձեզ պահ տւած անցագիրը այստեղ յետ ուղարկել. եթէ դեռ չէք ուղարկել, ուղարկեցէք այստեղ Գօշի*(5) *հասցէին՝ ինձ տալու։*

2) *Մեզ հարկաւոր են էլի անցագիրներ* (2 *ռուսական-հրեայի, վրացու, լեհացու եւն.*) *եւ երկու ֆրանսիական։ Ֆրանսիականի համար ես դիմում արել եմ մի երկու տեղ։ Գուցէ դուք էլ կարողանաք մի բան անել Փարիզ, Բրիւսէլ, Անվերս* (*Ատոմ-Շահէնը*(6) *այնտեղ է*)։ *Ես յիշում եմ, որ մի ժամանակ Հրաչը*(7) *մեզնից ֆրանսիական անցագիր ուզեց եւ խմբագրութիւնից դիմելով Փարիզ Զատիկին*, 40-50 *ֆրանկով ձեռք բերինք մի լաւ անցագիր։ Դրա համար եթէ կարիք լինի դէս ու դէն մարդ ուղարկել, այդ էլ մեր հաշւին կարող էք անել։ Գուցէ կարելի լինի նոյնիսկ Զուիցերիայում գտնել* (*Ժընեւ, Լօզան — հայերին համակրող ֆրանսիական շրջաններում*), *փորձեցէք։ Ինչ վերաբերում է ռուսականին՝ պէտք է դիմել տեղիդ վրացիներին, ծանօթ լեհերի եւ որ գլխաւորն է՝* սեվեռ ամեր[իկանսկիյ] ռեուլիուցիոնէրներին(8), *որոնք ունեն հրէականներ։ Եթէ* Պոչեմու արմեանէ բունտույուտ(9) *բրօշիւրի հեղինակը Լոնդոն է, նա կարող է հեշտութեամբ այնտեղէն գտնել։ Ի վերջոյ շուտով պէտք է մի բան անել եւ հետեւանքների մասին հեռագրել. բառարան չունիմ հետս*(10). *այստեղինը տարել է Սարգիսը*(11)։ *Այդ պատճառով գործածէք հեռագրում գիրք խօսքը անցագրի տեղ, իսկ ֆրանսերէն կամ ռուսերէն գիրք ասելով՝ ես կը հասկանամ այս կամ այն անցագիրը։ Անցագրերում տարիքի եւ արտաքին նշանների վրայ առանձին ուշադրութիւն չպէտք է*

դարձնել, մենք կը յարմարեցնենք այստեղ կամ Լիսում(3)։ *Ռուսական անցագրերից մէկում եթէ լինի մարդու հետ նաեւ կին — դա շատ լաւ կը լինի։*

3) *Այդտեղ մենք ունենք մի քանի տուփ Ամերիկայից ուղարկուած թանաք հանելու հեղուկ։ Այդ տուփերից երկուսը կամ առնուազը մէկը իսկոյն այստեղ ուղարկէք Գօշի*(5) *հասցէով՝ իբր* échantillon sans valeur(12), *ի հարկէ, լաւ արկղիկում։*

4) *Մեզ մօտ, այդտեղ, գտնուող զանազան անցագրերի մէջ կան մի քանի հատ «համիդիէ թեսկերեսի»-ներ*(13)։ *Երկու կամ երեք հատը ուղարկէք այստեղ՝ ինձ հասցնելու համար։*

5) *Մի ժամանակ մենք հետաքրքրուում էինք անձայն հրացաններով, արդեօ՞ք այդ մասին նոր տեղեկութիւններ ունի՞ք։ Եթէ դրանցից կարելի է ձեռք բերել, մենք կ՚ուզենայինք մի երկու հատ ունենալ։ Գրէք, խնդրում եմ, եթէ մի բան գիտէք այդ մասին կամ թէ մի բան կարող էք անել շուտով։ Գործարանը Ֆրանսիայում Սէնտ-Էտիէն քաղաքումն է եւ մենք ունէինք գործարանի կատալոգը։*

Համբոյրներով
ձեր **ԷԼԼԷՆ**

Յ. Գ.— Ընկերներս, համարեա զինադադարի մէջ, ինձ են սպասում։ Կարող էք ուրեմն երեւակայել՝ թէ որքան եմ շտապում շուտ վերջացնել այստեղ ինչ հարկաւոր է։ Խնդրում եմ ձեր աջակցութիւնը չուշանալու համար։

ՆՈՅՆ

1.- Ձեռնառումբերու, նռնակներու:

2.- «Գործի վայրը»՝ Պոլիսն էր, ուր անցած էր նախապէս Քրիստափոր՝ Ապտիլ Համիտի մահափորձի գործողութիւնը պատրաստելու նպատակով:

3.- Լիս (ինչպէս նաեւ Կռուածաղիկ, Ծաղիկ) Պոլսոյ կուս. ծածկանունն էր:

4.- Ձեռագրին մէջ ռուսատառ:

5.- Գօշ, Անտոն Գօշ – ծածկանուն Պոյաճեան Անտոնի (1849-1927), անդամ Պալքանի Կ. կոմիտէին. շուտով պիտի կանչուէր Ժընեւ, «Դրօշակ»ի խմբագրատուն հաստատուելու:

6.- Ատոմ-Շահէն – գրող, իսկական անունը Ատոմ Երիցեանց:

7.- Հրաչ – ծածկանուն Թիրեաքեան Հայկի, Պանք Օթթոմանի գրաման ղեկավարներէն:

8.- Ձեռագրին մէջ ռուսատառ՝ ինչո՞ւ են հայերը ըմբոստանում:

9.- Ձեռագրին մէջ ռուսատառ՝ հիւսիս. ամերիկեան ռեւոլիուցիոնէրներ:

10.- Խօսքը կը վերաբերի Ցուցական մարմնի անդամներուն համար ներքին հաղորդակցութեան համար կազմուած ծածկանուններու մասնաւոր բառարանին:

11.- Սարգիսը՝ Բարսեղեանն է, ծանօթ Շամիլ ծածկանունով. իսկական անունը՝ Պօղոս Օտապաշեան:

12.- Ֆրանսերէն՝ մաքսային հարկէ զերծ նմոյշ իմաստով:

13.- Թրքական անցագիրներու տրուող անուն:

137

Փաստ. 1530-19

Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովի փակումէն ետք, Ցուցական մարմինը Աթէնքի եւ Կ. Պոլսոյ մէջ կայացուցած էր շարք մը նիստեր՝ իրեն վստահուած պարտականութիւնը, այսինքն Սուլթան Ապտիւլ Համիտի ահաբեկման գործը կազմակերպելու համար: Ստորեւ ներկայացուածը արձանագրութիւնն է հերթական այդ նիստերէն մէկուն. Վայրը չէ յիշուած, սակայն «մեր բարեկամ Կրինի տունը» յիշատակութիւնը կռահել կու տայ, որ ժողովը գումարուած է Պոլիս (Կրինը Պոլսոյ մէջ Ցուցականի գործին օժանդակողներէն մէկն էր):

Արձանագրութիւնը արեւմտահայերէն է եւ կազմուած պէտք է ըլլայ ժողովին մասնակցողներէն մէկուն կողմէ: Ստորագրողներու շարքին է Էլլէն-Քրիստափորը, որ ժողովէն անմիջապէս ետք պիտի անցնէր Պուլկարիա, «խնձորներ ճարելու եւ փորձելու համար» կ՚ըսէ ատենագրութիւնը: Խնձորը՝ ձեռնառումբն է:

ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԻՍՏԵՐԷՆ

Նիստ 5 *դեկտ.* 1904

Նիստը գումարուեցաւ երեկոյեան ժամը 4*ին, մեր բարեկամ Կրինի տունը։ Ներկայ էին. Էլլէն, Սաֆօ, Աշոտ, Թորգոմ եւ Շապուհ*(1)*։ Օրակարգն էր. Ոսկեհանքի*(2) *խնդիրը եւ Էլլէնի խնձորներ ճարելու եւ փորձելու համար Պուլկարիա մեկնումը։*

Ոսկեհանքի գործադիր առժամեայ կոմիտէէն՝ Մարտին(3) *ասկէ առաջ գրուած նամակով (տես Նոյեմբերի նամակները), հաղորդած էր իրեն եւ միւս երեք ընկերներուն, Անդրանիկի եւ Սուրէնի*(4) *միջեւ տեղի ունեցած անհամաձայնութիւնն եւ ատոր իբր հետեւանք՝ կռիւ եւ բաժանումը։*

Ցուցական մարմինը, այն ատեն, արժան դատած էր սպասել հակառակ կողմը ներկայացնող Անդրանիկին եւ Սուրէնին տեղեկագրին, համոզումով տալու համար այդ մասին իր որոշումը։ Սպասելով սակայն այդ տեղեկագրին, գրուեցաւ Անդրանիկին եւ Սուրէնին որ իրենց մարմինը, ըստ օրինի, կազմալուծուած ըլլալով, պարտաւոր էին Դաշնակցութեան նիւթերը, դրամն ու գոյքը անձեռնմխելի պահել ցնոր տնօրինութիւն։ Միեւնոյն ատեն որոշուեցաւ ղրկել Մարտինին եւ Էդկարին(5)*, իրենց խնդրանքին վրայ,*

400ական ֆրանք եւ զանոնք ազատ նկատել Ցուցական մարմինի մասնակցութենէն, նրանց համար յարմար գործ ի նկատի չունենալով։

Մարտինի վերոյիշեալ նամակէն քանի մը օր առաջ Ոսկեհանք ղրկուած էր, առ հաշիւ իրենց յատկացուած գումարին, 2000 ֆրանք, զոր, հասցէի սխալման մը հետեւանքով, չէին ստացած ընկերները։ Ցուցական մարմինը որոշեց ետ բերել այդ դրամը, եւ առ այդ հարկ եղածը կատարուեցաւ։

Թէ այդ 2000 ֆրանքը եւ թէ Անդրանիկին եւ Սուրէնին տեղեկագիրը հասած ըլլալով, Ցուցական մարմինն իր ներկայ նիստին մէջ ցաւով հաստատեց կատարուած իրողութիւններու տգեղութիւնը, որոնցմով գործը կը տուժէր։ Եւ որովհետեւ խնդիրը բարդ եւ գործն ու ժամանակը ստիպողական էին, Ցուցական մարմինը չէր կրնար քննութիւններով զբաղիլ եւ այսպէս՝ գործը անորոշ ժամանակի մը համար ձգձգել. հետեւաբար որոշուեցաւ՝ ցաւ յայտնել տեղի ունեցած պախարակելի արարքներուն համար, արարքներ որոնց պատասխանատուութիւնը աւելի կամ նուազ կերպով կը ծանրանար երկու կողմին վրայ ալ, եւ Անդրանիկն ու Սուրէնը Ոսկեհանքի գործադիր կոմիտէի անդամ պահելով, անմիջապէս ընտրել եւ ճամբայ հանել երրորդ ընկեր մը, որպէսզի մարմինը ստանայ օրինական կազմ եւ գործը չկաղայ եւ շարունակուի ինչ որ սկսուած էր արդէն։

Այս որոշումին վրայ՝ խորհրդակցութիւն կատարուեցաւ Ոսկեհանքի գործադիր մարմինին 3րդ անդամին ընտրութեան մասին։ Ընտրելիներ էին Աշոտ ու Թորգոմը Ցուցական մարմինէն՝ եւ Սարգիսն ու Լեւոնը(6), որոնք առ այժմ Պուլկարիա կը գտնուին։ Թեր ու դէմ կարծիքներու փոխանակութենէն ետքը, որոշուեցաւ նախապատուութիւն տալ Աշոտին կամ Թորգոմին ընտրութեան։ Բայց այս հարցը լուծելու համար, առաջարկուեցաւ նախ եւ առաջ Վիշապի գործն(7) եւ անոր պէտք եղած մարդիկն որոշել, տեսնելու համար թէ Աշոտ եւ Թորգոմ հոս ուրէք գործի պիտի չունենայի՞ն կատարելիք։ Ցուցական մարմինը միաձայն հաւանութեամբ անցաւ Վիշապի գործին։

Վիշապի գործին մասին շատոնց արդէն տրուած էր որոշումը, այն է Նժոյգի հարցը եւ այս հարցին համար ալ կար երկու լուծում։ 1.- Խնձորներու(8) գործածութիւն հիւրանոցէն(9), 2.- Մէկ կամ երկու կառք նիւթ խնձորներու հետ միաժամանակ պայթեցնել։

<u>Հիւրանոցի համար</u>.— Պուլկարիոյ մէջ կատարուած ձերբակալութիւններու առթիւ, այս գործին համար անմիջապէս ցանկութիւն յայտնողներէն Քրիսի(10) անունն ու հասցէն վտագնուած ըլլալով, գործի օգտակարութեան համար որոշուեցաւ անոր մասնակցութիւնը յապաւել։

Հիւրանոցի գործին մասնակցելու համար որոշուեցան հետեւեալ վեց ընկերները, իրենց յօժարութեամբ։ Ասոնցմէ դուրս են կանայք, որոնց գործը պիտի ըլլայ խնձորները իրենց վրայ կրել եւ զանոնք ներս մտցնել։

1. Էլլէն, 2. Սաֆօ, 3. Կարօ, 4. Շապուհ, 5. Մանօլ, 6. Աշոտ։

Այս ընկերներէն Կարոն(11) արտասահման գտնուելով մօտ օրէն տեղս

հասնելու է. Շապուհ եւ Աչոտ անցագիր չունենալով՝ նոր անցագիրներ ձեռք բերուելու են անոնց համար. գալով Մանօլի անցագրին, այն ալ ապահով չնկատուելով՝ վերջերս Պուլկարիա բռնուած հասցէներու մէջ անորն ալ գտնուելուն համար՝ պիտի աշխատուի անոր ալ ուրիշ անցագիր մը ճարել, եթէ կարելի ըլլայ։

Յաջողութեան պարագային, վերոյիշեալ վեց ընկերներն ալ պիտի մտնեն հիւրանոց, բայց եթէ ընկերներու մէջ կամքէ անկախ պատճառներով (ձերբակալութիւն կամ մահ) արգիլուողներ գտնուին, պիտի աշխատուի վեց թիւն ամբողջացնել՝ արգիլուողներու տեղ թէ քաղաքումս եւ թէ արտասահման գտնուող կամաւորներ ընդունելով։ Իսկ ամէնէն աննպաստ պարագային, հիւրանոց պիտի մտնեն չորս(4) ընկերներ։ Չորսը նուազագոյն թիւ համարուելով, եթէ նախատօնակին՝ չորս թոյլտուութիւն ունենանք, գնալը պարտաւորիչ պիտի ըլլայ, եւ հետեւեալ օրը որոշեալ ժամանակին, որոշեալ տեղը չեկողը՝ փախուստ տուած պիտի համարուի։

Կիներն այս թիւերէն դուրս ըլլալով, չորսը կամ վեցը անոնցմով ամբողջացած պիտի չհամարուի։

Կանանց հարցը.— Նախորդ նիստի մը մէջ յարուցուած էր կանանց մասնակցութիւնը ընդունելու եւ կամ, նկատելով իբր թարմ ուժեր, նրանց խնայելու հարցը։ Խնայելու այս հարցը, նոյնիսկ վիրաւորանք մը նկատուեցաւ կանանց կողմէ, որոնք ամենաբուռն ցանկութիւնով կ'ուզէին մասնակից ըլլալ եւ գաղափար յայտնած էին զանազան առիթներով որ, հակառակ պարագային, իրենք առանձինն պիտի փութային գործի տեղը։

Յուցական մարմինը, կանանց բացակայութեամբ գումարուած իր նիստին մէջ, միաձայնութեամբ ընդունեց անոնց մասնակցութեան կարեւորութիւնն եւ անգնահատելի օգտակարութիւնը, բայց եւ այնպէս, ոեւէ կերպով բարոյական ճնշում մը բանեցուցած չըլլալու համար իրենց որոշումին վրայ, եւ կամ ուրիշ կերպով, թոյլ տալու համար որ, իրենք իրենց բացարձակ կամքովը վճռեն իրենց ճակատագիրը, ընդունեց ծանօթ բանաձեւը որ եւ առաջարկուեցաւ, մինչեւ յաջորդ (ներկայ) նիստը պայմանաժամ տրուելով իրենց խորհելու։

Յուցական մարմինը ներկայ նիստին մէջ տեղեկացաւ կանանց մասնակցելու որոշումին, ինչ որ արդէն անտարակուսելի էր։ Հետեւաբար որոշուեցաւ, որ վերոյիշեալ վեց ընկերներուն գործակցին,

1. Տիկ. Միշէլ, 2. Օր. Էմիլ, 3. Օր. Ռուպինա(12)։

Կառքի հարց.— Որոշուեցաւ ունենալ մէկ կառք եւ երեք կառապան պարտաւորիչ կերպով։ Կառապաններէն մէկը պիտի ծառայէ իբր պահեստի։ Կառապան մը եւ ուրիշ ընկեր մը գործին օրը ներկայ եւ պատրաստ պիտի ըլլան իրենց կառքին քով։ Եթէ սակայն կարելի ըլլայ, պիտի աշխատուի ունենալ երկու կառք։ Կառապաններն են. 1. Զարեհ(13), 2. Երուանդ, 3. Մկրտիչ։

Զարեհ արդէն սովրած է արհեստը Յունաստանի մէջ, Երուանդը սկսած է գործի, իսկ Մկրտիչի համար որոշուեցաւ դիւրութիւններ տալ անմիջապէս գործի սկսելու համար։

Գործին ապահովութեան համար, կառապաններու իւրաքանչիւրին հետ պիտի ըլլան մէկ մէկ ընկեր։

Ասոնցմէ զատ ընդունուեցաւ առաջարկ մը, վերոյիշեալ գլխաւոր կառքերէն զատ երեք երկրորդական կառքեր ունենալու մասին։

Երկրորդական կառքեր.— Ասոր համար հրապարակի պարզ վարձու կառքեր բաւական պիտի ըլլան։ Ընկերները պզտիկ ծրարներով պիտի մտնեն այս կառքերը, եւ դէպի գործի տեղը պիտի երթան, ուր Հիւրանոցի առաջին պայթումին անմիջապէս կրակ տալով պատրոյգին, իրենք պիտի հեռանան։ Այս ձեռնարկին նպատակն է խուճապը մեծցնել եւ ուժ մը տալ գործին։ Ասոր համար որոշուած են.

1. Քրիս, 2. Արամ, 3. Լեւոն։

Առաջին երկուքը արդէն հոս ըլլալով, միայն Լեւոնը Ոսկեհանքէն պիտի բերուի, ուր նա կը սպասէ տրամադրելի։

Գործը պիտի կատարուի հետեւեալ կարգով.

1.- Հիւրանոցի խնձորների արձակում։

2.- Գլխաւոր կառքերի անմիջական կրակ, հէնց առաջին խնձորի արձակումին։

3.- Երկրորդական կառքերի պարագային կրակ, հէնց առաջին խնձորի արձակումին։

Այս վերջի կարգադրութիւնը վերջնական չէ. ժամանակի ընթացքում կարգը կրնայ բարեփոխուիլ։

Վիշապի համար հարկաւոր ընկերներն որոշուած ըլլալով, Ոսկեհանքի համար ընտրելի կը մնան Պուլկարիա գտնուող Սարգիսն ու Լեւոնը։

Մեր ընկեր Էլլէնը արդէն մեկնելու ըլլալով դէպի Պուլկարիա, հոն պիտի խօսի Սարգիսին եւ Լեւոնին, եւ երկուքէն մէկը անմիջապէս պիտի ղրկուի Ոսկեհանք։

Մեր Դեկտ. 4ի նիստին մէջ (որուն համար առանձինն արձանագրութիւն չբռնուեցաւ), ցաւով կարդացուեցաւ Յոլակի մէկ նամակը, որով կը յայտնուէր իր, Կարոյին, Լեւոնին եւ ուրիշ մէկ ընկերոջ ձերբակալուիլը՝ փորձերի հետեւանքով։ Առաջին երեքը Սարաֆովի(14) միջամտութեամբ ազատուած էին, բայց Լեւոն ամէն յանցանք իր վրայ առած ըլլալով, կը մնար բանտը եւ արձակմանը համար կը պահանջուէր Ֆրանք 3000 իբր երաշխաւորութիւն։ Բացի այդ, Յոլակի եւ Լեւոնի վրայէն գտնուած էին Վիշապի եւ Ոսկեհանքի բոլոր հասցէները։

Որոշուեցաւ ուրեմն՝ ի նախազգուշութիւն՝ Քրիսի մօտ գտնուած նիւթերն ուրիշ տեղ փոխադրել եւ իմացնել իրեն որ մի ժամանակ ուրիշ բնակարան ընտրէ. բարեկամ Կրինին քովի նիւթերը փոխադրուեցան Միշէլի հօր

բնակարանը։ Այս առթիւ հեռագրուեցաւ Ժընեւ, գրուեցաւ Ֆիլիպէ եւ Ոսկեհանք։

Ասկէ զատ վարձուեցան երկու նոր տուփեր, մին գերմանական փոստան Արամի ձեռքով, եւ միւսը ֆրանսական փոստան Սաֆոյի ձեռքով։

Ժամանակը անցած ըլլալով, էլլէնի ճամբորդութեան մասին խորհրդակցութիւնը թողուեցաւ յաջորդ նիստին։

ՇԱՊՈՒՀ, ԷԼԼԷՆ, ԱՇՈՏ, ՍԱՖՕ, ԹՈՐԳՈՄ

1.- Յաջորդաբար՝ Քրիստափոր, Մարտիրոս Մարգարեան, Կարապետ Եղիկեան, Արտաշէս Սերեմճեան եւ Վռամշապուհ Քենտիրեան:

2.- Ոսկեհանք – Իզմիրի Օժանդակ մարմինը պէտք է «արձագանգէր» Ապտիլ Համիտի ահաբեկման գործին՝ թուրք պետական, ինչպէս նաեւ եւրոպական շարք մը հաստատութիւններու դէմ խափանարարական արարքներով:

3.- Մարտին կամ Մարթին – Մարտիրոս Մուրատեան

4.- Սուրէն եւ Անդրանիկ – Իզմիրի տեղական կոմիտէի անդամներ: Անդրանիկի բուն անունն էր Պօղոս Երամեան:

5.- Մարտիրոս Մուրատեան եւ Կարապետ Այվազեան (Էտկար):

6.- Սարգիս – Բարսեղեան Սարգիս, բուն անունով Օտապաշեան Պօղոս: Լեւոնը հաւանաբար Գիլումեանն է:

7.- Վիշապի գործ – իմա Սուլթանի ահաբեկում, որուն կը տրուէր նաեւ Նժոյգի գործ անունը:

8.- Ձեռնառումբերու:

9.- Քրիս Ֆեներճեան (1884-1926): Կը գործածէր իտալական կեղծ անցագիր՝ Սիլվիո Ռիչչի անունով:

10.- Հիւրանոց – Հոս եւ այսուհետ յիշուած «հիւրանոց»ը գործածուած է այն վայրին համար, որ աւելի ծանօթ էր մարգարան անունով: Այս վերջինը հրապարակ մըն էր, որ կը բացուէր Եըլտըզի պալատին կից գտնուող այն մզկիթին դիմաց, ուր ամէն Ուրբաթ սուլթան Ապտիլ Համիտ աղօթելու կ՝երթար: Սելամլըք կոչուող այս արարողակարգի ընթացքին, պաշտօնական հիւրերը կը տեղաւորուէին հրապարակին մերձակայ պատշգամը (պաւիլիոն), որուն մօտ կը նախատեսուէր կանգնեցնել ու պայթեցնել Սուլթանը ահաբեկելու սահմանուած կառքը:

11.- Կարօ կամ Աստրախանցի Կարօ – ծածկանուն Համբարձում Աղաջանեանի (1877-1908):

12.- Տիկին Միշէլ – Պաքուէն եկած օտարական կին: Օր. Էմիլ – բուն անունով Զէյս Մարիա զուիցերուհի կամ գերմանուհի: Օր. Ռուբինա – բուն անունով Սոֆիա Արէշեան, յետագային ամուսնացած Համօ Օհանջանեանի հետ:

13.- Զարեհ Խաչիկեան – Սուլթանի մահափորձին ատեն դժոխային մեքենան փոխադրող կառքին վարորդը:

14.- Բորիս Սարաֆով, մակեդոնացի յայտնի յեղափոխական ղեկավար դէմք:

138

Փաստ. 212-3

Արեւմտեան բիւրոյին ուղղուած նամակի մը շարունակութիւնն է, որ կը սկսի յետ գրութեամբ: Մէկուկէս էջնոց այս գրութեան ձեռագիրը եւ ստորագրութիւնը կը պատկանին Քրիստափորի: Ճշգրիտ թուականը կը մնայ անյայտ: Ընդհանուր ցուցակին մէջ թիւ 212 թղթածրարի թիւ 2-12 փաստաթուղթերուն դիմաց թուական նշանակուած է 6 Դեկտ. 1904, Աթէնքէն: Ինչ կը վերաբերի բուն պակսող նամակին, կրնայ ըլլայ որ այս Յ. Գ.-եանը պատկանած ըլլայ նախկին գրութիւններէն մէկուն, որմէ անջատուած ըլլայ հոն շօշափուած նիւթին՝ Ցուցականի դատին հետ կապ չունենալուն պատճառաւ:

Յ. Գ.— Վառնայի Վարդօն(1) վերջին ժամանակ ինչ որ յատուկ վերակազմեալական(2) ուղղութեամբ «պատրաստւինքի» եւ «խոհեմութեան» քարոզներ է կարդում իր լրագրի առաջնորդողներում եւ այնքան «յաջող», որ ողջունւեց «Իրաւունքի» եւ երկրի իրեն արժանի մի ընկերոջ կողմից (տես 682 համար)։ — Ես չատ հիմքեր ունեմ ասելու, որ այդ ընկերը Ոսկեհանքի(3) ամբարտաւան Անդրանիկն է, մեր «գործադիր կոմիտէի» անդամը, որը ժամանակին չկարողացաւ ինձ համոզել, որ Ոսկեհանքի գործը առնւազը երկու տարի ժամանակ է պահանջում։

Հրապարակօրէն մեր յեղափոխութեան տաքտիքի վրայ խօսող Վարդօ-ի հետ խնդրեմ ի նկատի ունենաք յամենայն դէպս նաեւ հրապարակօրէն ընկերներին բամբասող պ. Անդրանիկին — Ոսկեհանքում տեղի ունեցած մի շարք խայտառակութիւններին, դրա, ըստ իս, միակ պատճառին։

Վարդօն, երեւի, ուզում է «Խորհրդին»(4) հրաւիրւել «իբր հարազատ զաւակ» ժողովրդի (իր դարձւածքն է առաջին յօդւածում), ըստ Ջահանգիւլեան(5) ոճի։ Բայց որովհետեւ լկտիութիւն եւ ամբարտաւանութիւն այն առաքինութիւնները չեն, որ յարգանք աւելացնեն դէպի մի «ընկեր», ես գտնում եմ, որ նա չպիտի հասնի իր նպատակին այս անգամ...

Առ հասարակ ուզում եմ հաւատալ, որ «Խորհուրդը» կը կազմւի վայել լրջութեամբ եւ ըստ մեր սիրելի Սիմոնի լեզւով ռուսական[?] սիստեմի չի վերածւիլ «Արեւմտեան շրջանի բայոնակա՛ն ժողո՛վի»...

Ձեր ԷԼԼԷՆ

1.- Վարդ-Պատրիկեան. նախկին հնչակեան, ապա յարած Դաշնակցութեան. Պուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ կը հրատարակէր «Շարժում» թերթը: Բարոյական սայթա-

քումներու եւ նիւթական իւրացումներու հետեւանքով յետագային (1907) պիտի դատապարտուէր մահապատիժի:

2.- Կ՚ակնարկուի Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան:

3.- Ոսկեհանքը Իզմիրի կուսակցական ծածկանունն է:

4.- Դաշնակցութեան Խորհուրդին:

5.- Ջահանկիւլեան կամ Յարութիւն Ճանկիւլեան. հնչակեան ծանօթ գործիչ, որ ապարդիւն ճիգեր թափած էր Դաշնակցութեան հետ «միութեան» ուղղութեամբ:

6.- Անընթեռնելի բառ: Սիմոնը՝ Զաւարեանն է:

139

Փաստ. 1530-14

30 *դեկտ.* 904, *Ֆիլիպպոպոլ*

[*Արեւմտեան բիւրոյին, Ժընեւ*]

Սիրելի՛ք,

Ստացայ ձեր բոլոր գրածները, ինչպէս եւ ներփակ անցագիրը, շրջաբերականը եւն. շնորհակալութիւն:

Իմ այստեղ գալու մասին պէտք է ասեմ հետեւեալը. նախ՝ Վիշապի(1) *ընկերների կողմից, բացի ինձ յանձնարարուած եւ մեր գործերին անմիջապէս վերաբերող խնդիրներից դուրս՝ ես չեմ կարող խօսել որեւէ ընդհանուր հարցի մասին. չունեմ նրանց կարծիքները. երկրորդ՝ մենք այնքան շտապում ենք, որ եթէ այստեղի անելիքները վերջացնելուց յետոյ՝ չմնայ որեւէ զգալի պակաս, որը հարկաւոր լինի լրացնել Եւրոպայում, իմ այդտեղ գալը դժուար կը լինի արդարացնել, որովհետեւ Վիշապից կը խլի առնւազը մի շաբաթ. 10-12 ինձ սպասող հոգու համար դա զգալի ժամանակամիջոց է՝ ներկայ մեր փափուկ դրութեան մէջ: Այս նկատումներով ես գրեցի Լիս*(1) *եւ ձեզի. որոշ պատասխան տալու համար սպասում եմ այնտեղի ընկերներ կարծիքին ու այստեղ անելիքներիս վախճանին: Յամենայն դէպս, եթէ իմ ձեզ մօտ գալը չյաջողուի, Վիեննայում կամ Բուդապեշտում կարող ենք հանդիպել: Վերջնական մի բան ուրեմն կը գրեմ կամ կը հեռագրեմ յետոյ:*

«Խորհրդի» մասին ինձ թւում է, որ քանի որ դա Ընդհ. ժողովի կողմից մի վճռւած խնդիր է, պէտք է անպատճառ կայացնել — եւ մեր մարմինը(2)*, որ ունի կատարեալ կազմ, չպէտք է ո՛չ մի կերպ տեղիք տայ «Խորհրդի» կազմը*(3) *անկատար լինելուն կամ նոյնիսկ չկայանալուն: Այդ միեւնոյն միտքը ես յայտնել եմ իմ ընկերներին, եւ եթէ մեզանից (ընտրւած պատասխանա-*

տուներից) մէկը անկարող լինի ներկայ մեր պարագաներում հեռանալ գործի վայրից (որ համարեա անտարակուսելի է) մենք կ՚ուղարկենք մէկին, որը մեր գործերին մօտ է, մեզնից նշանակւած միւս ընկերների կողմից «Յուցականը» ներկայացնել։ Ինչ վերաբերում է «Խորհուրդը» ուր հրաւիրելու խնդրին՝ ես ձայն կը տայի արտասահմանին, ի նկատի ունենալով, որ այդտեղ միայն կարելի է կարգին կերպով ստուգել Ընդհ. ժողովի որոշածները, քննել հաշիւները եւ հաշւապահութիւնը ու վերջապէս այդտեղ կայացնելով է, որ դուք չէք ստիպւիլ ձեր կողմից բաւական նկատելի ժամանակով մարդ հանել Կովկաս ուղարկելու համար. մնացած պայմանները այդտեղի կամ Կովկասի համար եթէ ունին որոշ առաւելութիւններ, ունին նաեւ պակասութիւններ։

Ուղարկեցէք, խնդրում եմ, պատրաստ, ձեր ձեռքի տակ գտնւող անցագրերից պաբսկինը եւ ամերիկեան հայինը։ Դրանք մեզ կարող են պէտք գալ եւ շատ չնորհակալ կը լինենք ստանալով։

Անձայն հրացանների մասին գրել եմ նաեւ Թայինեանին(4). դա մի շատ կարեւոր բան չէ մեզ համար. իմ դուրս գալուց խնդրել էին տեղացի ընկերները ճարել, հասարակ տեղական գործողութիւնների համար։ Սակայն եթէ կայ, պէտք է գնել։ Դժբախտաբար ես չհասկացայ այդ ինչ բան է Ֆլօբերը(5), որ առաջարկել է զինագործը. եւ ի հարկէ, այդ մասին ոչ այո, ոչ էլ ոչ չեմ կարող ասել։

Զիլբեռչտէյն-ի(6) անցագիրը բերած պէտք է լինի Յոնանը(7) Աթէնքից ուրիշ իրեն յանձնւած թղթերի հետ։

Անվերջ բարեւներս Մինօրին(8), կարօտալի համբոյրներս ձեզ։ Հրէական անցագիր բաւական է. կարող էք ուղարկել միայն այն դէպքում, երբ աւելի յարմարութիւն ունենան, քան մեզ ուղարկածները. վերջին ինձ ուղարկւածում, օրինակ, կայ 11 ամսեկան երեխայ. ի հարկէ, այդ հասակի երեխային չէ կարելի թողնել տանը, երբ ծնողները հեռու տեղ են գնում, որովհետեւ 903 թւից մինչեւ այժմ շատ չէր լինի մեծացած...(9) Ստիպւած պէտք է ամբողջ 3 տող թէ աւել ջնջել։ Եթէ լինի բուն ռուսի անցագիր, նախապատւեցէք։ — Ֆրանսիական déclaration-ի մասին կը գրեմ վաղը։ Այժմ շտապում եմ փոստի հասցնել։ Իմ դրութիւնը այստեղ վատ չէ. եկել եւ մտել եմ տիկ. Իւղաբերեանի տունը ու դուրս չեմ գալիս։ Փորձերի էլ գնում եմ(11) հեռու տեղ, բօլղար սպայի հետ — անվտանգ։

Նամակս ստանալուն պէս՝ փոխադրեցէք Գօշի(12) հասցէին 1000 fr.։ Սարգիսը(13) եկաւ այստեղ երէկ։

Ձեր Էլլէն

1.- Սիեւնոյն Արեւմտեան բիւրոյին՝ Ժընեւ գրած 14 Հոկտեմբերի նամակով, Քրիստափոր կը խօսէր Պոլիսէն (Լիս, Վիշապ) իր դուրս գալու մասին (տես էջ 265-66)։ Այժմ՝

դարձեալ նոյն քաղաքէն (Ֆիլիպպէ կամ Ֆիլիպպոպոլ – այժմու Փլովտիւ), ան կը գրէ. բայց նկատել տանք, որ միջոցին արդէն (երկուքուկէս ամիս անց) երկրորդ անգամ է որ, միշտ Ապտիւլ Համիտի մահափորձի կազմակերպման գործով, ան մտած էր Պոլիս ու այժմ վերադարձած է Պուլկարիոյ Ֆիլիպպէ քաղաքը:

2.- Այսինքն՝ Ցուցական մարմինը:

3.- «Խորհրդի կազմ» – Յիշեցնենք որ 1898-ին Թիֆլիս գումարուած Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. ժողովը որոշած էր կեանքի կոչել «Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմինը», անոր տալով կուսակցութեան անունով գործելու լայն իրաւունքներ, իսկ 1904-ի Սոֆիայի Ընդհ. ժողովը «Կամք»ը փոխարինած էր «Դաշնակցութեան Խորհուրդ»ով, դարձեալ լիազօրուած լայն իրաւասութիւններով: Ընդհ. ժողովներու կանոնաւոր եւ որոշուած ժամանակաշրջանին գումարումը կախուած ըլլալով քաղաքական եւ անկախատեսելի ուրիշ բազմազան հանգամանքներէ, Խորհուրդը կը լիազօրուէր Դաշնակցութեան անունով երեւան գալու ամէն անգամ, որ հարկ կը տեսնուէր: Դաշնակցութեան գերագոյն մարմինն էր ան, յաչս թէ ներքին կազմակերպական մարմիններուն եւ թէ արտաքին քաղաքական աշխարհին: Իր որոշումները պարտադիր բնոյթ ունէին կուսակցութեան բոլոր մարմիններուն համար, ներառեալ՝ բիւրոներուն: Խորհուրդը բաղկացած էր Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոներու եւ 4 Պատասխանատու Կեդր. կոմիտէներու ներկայացուցիչներէն: Վերջիններու շարքին էին Վան-Վասպուրականը, Տարօն-Սասունը, Կիլիկիան եւ Պոլիսը՝ իր Ցուցական մարմնով:

4.- Թայինեան – ծածկանուն Արեւմտեան բիւրոյի անդամ ու Եւրոպայի մէջ հայ դատի քարոզչութեան պատասխանատու բժ. Յովհաննէս Լոռու-Մելիքեանի (1862-1931):

5.- Քրիստափորի հարցին՝ «ի՞նչ բան է Ֆլօքերը», Ռոստոմ, որ առհասարակ Ժընեւէն կը պատասխանէր իրեն, 5 Յունուար 1905-ի Քրիստափորին ուղղած իր նամակին մէջ, կու տայ հետեւեալ բացատրութիւնը. «Ֆլօքերը այն փոքրիկ հրացաններն են, որով սենեակի մէջ նշան առնել են սովորում, պաւիլիոններում նշանառութեան համար են ծառայում: Մարդ սպանել ի հարկէ չի կարող» (Ռոստոմ, Նամականի, էջ 365):

6.- Բնագրին մէջ ռուսատառ:

7.- Յոնան Դաւթեան, անդամ Ցուցական մարմնի:

8.- Ռուս յեղափոխական եւ քաղաքական գործիչ, անդամ սոց. ռեւոլուցիոնէր կուսակցութեան, կը գտնուէր Եւրոպա:

9.- Քրիստափորի այս առարկութեան առթիւ, Ռոստոմ վերոյիշեալ նամակին մէջ կը գրէ. «11 ամսեկան երախայի մասին ի՞նչ շատ ես մտածում. մե՞ղքդ է գալիս, ասա մեռել է, պրծաւ գնաց, անցագիրը ինչո՞ւ ես փչացնում»:

10.- Ֆրանսերէն՝ յայտարարութիւն:

11.- Խօսքը ռումբերու փորձարկման մասին է:

12.- Անտոն Գոշ, բուն անունով՝ Պոյաճեան Անտոն:

13.- Սարգիս Բարսեղեան, որ կեղծանուն է. բուն անունը՝ Օտապաշեան Պօղոս, ծանօթ նաեւ Վանայ Սարգիս եւ Շամիլ ծածկանուններով: Հրաւիրուած էր Ցուցականի գործերուն մասնակցելու:

140

Փաստ. 1530-11

4/16 *յունվար* 905 *Փիլիպպէ*

Սիրելի՛ք [*Արեւմտեան բիւրոյին, Ժընեւ*]

Նախորդ նամակումս մոռացայ գրել, որ Ֆրանսերէն պրոկլամասիոնը լաւ է եւ որ պէտք է արդէն տպագրել տալ, պատրաստել։

Դրամը (1000 fr.) *եւ պարսկի անցագիրը ստացայ։ Ափսոս, չեղաւ ամերիկականը. դա մեր ընկերներից մէկի համար շատ յարմար էր. անունը միայն կը փոխէինք հրէականի եւ գործը շատ լաւ շտկւած կը լինէր. եթէ ամերիկական ուրիշը ձեռքներդ ընկնի եւ կամ եթէ կարող էք ձեռք ձգել շուտով, կը խնդրենք ջանք չխնայել։*

Ծաղիկից(1) *վերադարձրած ձեր նամակը ինձ շատ մտատանջութիւն պատճառեց։ Եթէ կարող էք աւելի մանրամասնութիւններ հաղորդել այդ դէպքի մասին՝ շատ լաւ կը լինի։ Հետաքրքիր է իմանալ.*

1- *Ի՞նչ հասցէով էր գրւած նամակը — առաջւայ՝ վտանգւած, թէ ձեզ յետոյ տւած նոյն հասցէով.* 2- *պարզ է արդեօ՞ք թէ փոստն է վերադարձրել այդ նամակը.* 3- *ո՞վ է «նամակի տէրը», որի մասին գրած էք, թէ «նրան տեսել է եւ ճանաչել մի հրեայ, որը այդ մասին պատմել է Ռուսչուքում»։ Մեր կողմից հարկաւոր նախազգուշութիւնները ձեռք են առնւած։ Ձեզ էլ պէտք է խնդրեմ, որ Վիշապ գրելիս երբեք այլեւս ոչինչ չուղարկէք Ժընեւից — ուղարկեցէք Անեմասից, Սէն-Ժիւլիէնից, Փարիզից կամ չվեցարական ու գերմանական որեւէ քաղաքից։*

Եթէ յիշում էք, Թայինեանի(2) *մօտ անցեալ տարի իր բիւդժէից աւելի մնացած դրամները Փարիզից իմ անցնելիս՝ փոխադարձ համաձայնութեամբ, թողինք կրկին իր մօտ՝ մեզ, ըստ պահանջման, փոխադրելու համար։ Այդ դրամների մի մասը ժամանակի ընթացքում ստացանք, իսկ միւս մասի — այն է՝ մնացած* 9000 fr.*ի վերաբերմամբ՝ նա գրում է այժմ.* «Ստաւշիեւսեա զա վաշ սչեոտ 9000 fr. եա վնեոս վը բեուտոետ P. A., տակ-կակ օժիտաեուստեա իզ Բակու ի Ամերիկի 9 տիսեաչ պոլուչենի Բեուրօ վժենեւէ»(3)։

Խօսքը այն դրամների մասին է, որ ըստ ընդհանուր նախահաշւի Ամերիկան եւ Բաքուն պէտք է տային տարւայ ընթացքում «Արտասահմանեան պրոպագանդին»։ Ես հիմա լաւ չեմ յիշում նախահաշւի այդ թւերը եւ ստիպւած եմ հարցնել. կարող ե՞նք ուրեմն Փարիզում մնացած մեր 9000*-ը հաշւել ձեզ վրայ։*

Կոստանդինը (Tgon) *եկաւ*(4)*-, Թիւֆեքչեւի*(5) *մօտ եղել է եւ կարելին տեսել. այստեղ էլ կը մնայ մի փոքր ժամանակ մեր սիստեմներին ծանօթանալու եւ, գուցէ, ձուլելու արհեստը սովորելու համար։ Կ՚աշխատեմ ի զուր չլինի գալը։* Geduse*-ի*(6) *վերաբերմամբ, որի մասին Ռոստոմը գրում է թէ փորձը յաջող էր, ես էլի մնում եմ այն կարծիքի, որ դրանից կարելի է օգտւել այն դէպքերում, երբ պէտք է շուտով գործածւի։ Ես սարսափում եմ այն մտքից՝ թէ Ղարսի նման մի դէպք*(7) *էլի կարող է մեր մէջ տեղի ունենալ, որ եւ կը լինի վերին աստիճանի վրդովեցուցիչ խայտառակութիւն։ Ի հարկէ* geduse*-ը*

կարող է երբեմն 3 տարի էլ պահուել, բայց երբեմն երեք ամիս պահելն էլ վտանգաւոր է. գոնէ այս է ամենահեղինակաւոր քիմիկոսների կարծիքը պոտասային խառնուրդների մասին։

Լաւ է ասում Ռոստոմը հրէական անցագրի մէջ յիշուած 11 ամսեկան երեխայի մասին, բայց երանի թէ հաւատային մեզ՝ երբ ինչ ուզում ենք՝ ասենք։ Երբ յայտնես՝ թէ երեխան մեռած է, պահանջում են այդ մասին վկայութուղթ եւ յամենայն դէպս հիւպատոսի վաւերացումը անցագրի մէջ։ Իսկ այս տեսակ պահանջ մի քիչ դժուարացնում է հեշտ պատասխան տուողների դրութիւնը։ Ուր կարելի է՝ պէտք է խուսափել դժուարութիւններից — չէ՞։ Հէնց իմ անցագրի հետ պատահեց մի այդպիսի դրութիւն, բայց լաւ պրծայ։ Եթէ իմանայի՝ թէ ամէն հանգամանքներում կարելի է «լաւ պրծնել», ի հարկէ բան չէի ասի։

Գոչի մասին հարցրել էի նրան այդտեղ բերելու համար։ Բան չէք գրում. ենթադրում եմ, որ յարմար չէք համարում։ Սխալւած եմ արդեօ՞ք։

Tgon nisamex *եւն լաւ է չարչարել ձեզ. դա արդար հատուցումն է իմ չարչարանքների փոխարէն, որ կրեցի ձեր ձեռագիրը կարդալիս. մինչեւ այժմ էլ մի խօսք —* renatamo *— մնում է ինձ համար անյայտ*(8)։

Իմ հարցերը տակաւին չվերջացան. փորձերը տանում եմ երեք սիստեմով։ Սրանց մասին պարտք կը համարեմ ձեզ ուղարկել մի փոքրիկ տեղեկագիր, երբ կ՚աւարտեմ ամէն ինչ։ Մնում են մեծ փորձերը դրսում, իւրաքանչիւր տեսակից ոչ-պակաս քան հինգը պայթեցնելով։ Այն ժամանակ էլ կ՚որոշեմ Ժընեւ գալ-չգալը։ Դուք գիտէք, որքան մեծ հաճոյք, ուրախութիւն կը պատճառի ինձ ձեզ հետ կրկին տեսնուելը, ինչպէս նաեւ Ռուբիկիս(9) *հանդիպելը — եւ ի հարկէ, կը հասկանաք, որ միմիայն խիստ պահանջի ստիպմամբ ես կարող կը լինեմ այդտեղ գալուց հրաժարուել։*

Կարօտագին համբոյրներով
Ձեր ԷԼԼԷՆ

Սարգիսը ասում է՝ թէ եթէ «Խորհրդի» ժողովը կայանայ Կովկասում՝ ինքը չի գալ։

1.- Ծաղիկ կամ Կռուածաղիկ կուսակցական ծածկանուններ են Կ. Պոլսոյ համար:

2.- Յովհաննէս Լոռու-Մելիքեանն է, անդամ Արեւմտեան բիւրոյին եւ պատասխանատու Եւրոպայի մէջ Հայ դատի աշխատանքներուն:

3.- Բնագրին մէջ ռուսերէն. «Ձեր հաշւից մնացած 9000 fr. ես մուծել եմ Բ. Ա.ի բիւդժէի մէջ, որովհետեւ Բաքւից եւ Ամերիկայից սպասւած 9 հազարը ստացել են Բիւրոյի կողմից Ժընեւում»:

4.- Կոստանդինը ռումբերու պատրաստութեան համար կանչուած վարպետն է (Կոստի Համբարձումեան):

5.- Պայթուցիկ նիւթերու մակեդոնացի վաճառականը:

6.- Պայթուցիկի պատրաստութեան բաղկացուցիչ նիւթ:

7.- Ակնարկութիւն 1903 թ. Օգոստոս 29-ին Կարսի մէջ պատահած ռումբի պայթումին, որուն զոհ գացած էին հինգ երիտասարդ յեղափոխականներ:

8.- Քրիստափորին յղած իր պատասխան նամակին մէջ Ռոստոմ կը գրէ. «մեր հեռագրի մէջ renatamo խօսք կամ դրա նման մի բան չկայ» (փաստ. 213-50):

9.- Ռուբիկը Քրիստափորի երեխան է, 6-7 տարեկան:

141

Փաստ. 1530-12

19 *փետրվ.* 905, *Ֆիլիպպէ*

[*Արեւմտեան բիւրոյին*]
Սիրելի՛ք

Խնդրում եմ նամակս ստանալներուդ պէս՝ չէքով փոխադրէք այստեղ 2000 fr. Ervand Aladjadjian-*ի*(1) *հասցէին։ Հեռագրով չուզեցի, չնայելով, որ շատ հարկաւոր է, որովհետեւ, ըստ մեր ներքին կանոնագրութեան (Ցուցականի ներքին կանոնագրութեան) մեր մարմնու անհատ-անդամը իրաւունք չունի հեռագրով* 1.000 fr.[*է*] *աւելի պահանջելու, եւ եթէ աւելիի պէտք ունի, պարտաւոր է պատշաճ բացատրութիւններ տալ նամակով։ Ահա այդ իմ բացատրութիւնները, որ յուսամ ի նկատի կ"առնէք եւ չէք ուշացնել ուղածս։*

Փորձերս(2) *աւարտել եմ ամենագլխաւոր մասերում, բայց առ ժամանակ դեռ պիտի մնամ։ Հարկաւոր են ինձ միջոցներ՝*

1) *Այստեղ* 2-3 *ուրիշ ընկերների փող թողնելու,*

2) *Ցուցականին հարկաւոր բոլոր իրերի համար պատուէրներ տալու,*

3) *Մի քանի գնումների եւ նոր փորձերի համար, եւ*

4) *Բոլորիս ճանապարհածախսերը եւ պատշաճ պէտքերը հոգալու համար։*

Մօտս եղած դրամը, ինչպէս եւ ձեր ուղարկածը, արդէն մսխուել է(3). *ձեռքիս չկան աւել քան* 200 fr. *հաշիւները առ* 1 *յունուար ուղարկել եմ Վիշապ*(4) *մեր տարեկանը կազմելու համար։*

Ահա այն բոլորը ինչ կարող եմ անել. իմ առ ժամանակ այստեղ դեռ մնալը պայմանաւորուած է մի հանդիպումով, որ տեղի պիտի ունենայ այստեղ, Ռուսաստանից եկող մի զինուորական մասնագէտի հետ։ Խնդրեմ այս կէտը ձեր մէջ մնայ գաղտնիք։

Սարգիսը(5) *կը ճանապարհուի դէպի ձեզ մի քանի օրից յետոյ։*

Համբոյրներով՝
ԷԼԼԷՆ

1.- Երուանդ Ալաճաճեան, Պալքանի Կ. կոմիտէի անդամ։
2.- Խօսքը կը վերաբերի ռումբերու փորձերուն։
3.- Քրիստափոր միշտ կը գործածէ մսխել՝ ծախսել իմաստով։
4.- Վիշապ, Ծաղիկ, Կռուածաղիկ, Լիս՝ Պոլիս քաղաքի կամ Հ.Յ.Դ. կազմակերպութեան տրուած ծածկանուններ են։
5.- Վանայ Սարգիսն է, Բարսեղեան։

142

Թղթ. No 1914/80

24 *փետր.* 905, *Ֆիլիպպոպոլ*

Սիրելի Գօշ!

Խնդրում եմ ներփակ անցագրերից պատւիրես բաց երեսների երկու հատ կնիքը եւ մի կլիշէն. No 1-*ում — միայն կնիքը, իսկ* N *երկրորդում — կլիշէն եւ կնիքը. եթէ կարող է կնիքը դուրս բերել կլիշէի հետ՝ աւելի լաւ, իսկ թէ ոչ՝ թո՛ղ ջոկ-ջոկ լինեն։*

N 2-*ում ձեռագրով գրածը ի հարկէ չպէտք է լինի։ Եթէ վարպետը* 7-10 *օրից հասցնի — լաւ է. իսկ մեր առաջւայ պատւիրած բոլոր բաները յոյս ունեմ հետդ բերես։ Աշխատիր միայն ոչինչ չուշանայ եւ շուտ արի. տեղս էլ գործ ունենք։*

Շտապեցրու բոլորին կարելիին չափ։

Ջերմ բարեւներով՝
ԷՎԷՆ

143

Փաստ. 1567*ա*-14

Ծ. Խմբ.–

Քրիստափորի այս գրութիւնը սահմանուած էր Դաշնակցութեան Խորհուրդին, որ կը հանդիսանար կուսակցութեան գերագոյն մարմինը եւ որ գումարուած էր Ժընեւի մէջ 1905 թուականի Փետրուար-Մարտ եւ Ապրիլ ամիսներուն: Ըստ Հ.Յ.Դ. Կեդր. արխիւի ցուցակին, փաստաթուղթը բաղկացած պիտի ըլլար 9 էջերէ. գրութեան թուականը՝ Մարտ 1905: Այժմ, սակայն, նոյն փաստաթուղթի միայն 8 էջերը գոյութիւն ունին. պակսողը՝ ամենայն հաւանականութեամբ վերջին էջն է, ուր նշանակուած պիտի ըլլային թուականը, ինչպէս նաեւ Քրիստափորի ստորագրութիւնը (Էլլէն): Թէեւ փաստաթուղթին կցուած է առանձին էջ մը, բայց անոր բովանդակութիւնը կապ չունի գրութեան հետ:

Հակառակ Խորհուրդի անդամներէն Ռոստոմի եւ այլոց պնդումներուն, Քրիստափոր, ինչպէս կը գրէր 30 դեկտ. 1904-ի նամակով (տես էջ 272-73), պիտի չկարենար մասնակցիլ յիշեալ նստաշրջանին, որուն օրակարգին վրայ կը գտնուէին շարք մը հրատապ հարցեր, ինչպէս՝ Սասնոյ 1904 թ.ի ապստամբութեան գնահատութիւնը, կուսակցութեան Կովկասեան գործունէութեան Նախագծի մշակումը, այլեւ նոյն տարին, Խորհուրդի գումարման իսկ օրերուն, Կովկասի տարածքին բռնկած հայ-թաթարական ընդհարումները եւ նման անյետաձգելի բազմաթիւ հարցեր: Իսկ Քրիստափոր, ինք, տարուած էր ամբողջովին իր յղացած՝ Ապտիլ Համիտի մահափորձի կազմակերպման գործով, որուն համար 1904 թուականին եւ 1905ի առաջին ամիսներուն՝ Պուլկարիա է ան եւ գործը կը ղեկավարէր իբրեւ ներկայացուցիչ Ցուցական մարմնին: Այդ միջոցին յաջողած էր Սամուէլ Ֆայն կեղծ անցագրով երկու առիթներով մուտք գործել Պոլիս եւ ծանօթանալ ձեռնարկի մանրամասնութիւններուն: Ամբողջովին կլանուած ըլլալով այդ գործով, հասկնալի է որ Քրիստափոր պիտի չկարենար ընդառաջել ընկերներու կրկնուող դիմումներուն՝ Ժընեւ հանդիպելու, նախընտրելով տեղւոյն վրայ լիովին նուիրուիլ իր փայփայած ծրագրի իրականացման: Եթէ ճիշդ է գրութեան թուականի մասին Ցուցակին մէջ արձանագրուած թուականը՝ 1905, Մարտ ամիս, ապա ան պիտի զուգադիպէր Քրիստափորի եղերական մահուան օրերուն, որ պատահեցաւ նոյն տարուան Մարտի 17-ին (հին տոմարով՝ չորսին), Սոֆիայի մօտ Վիտոշ լերան լանջին ռումբի փորձարկման պահուն: Այնպէս որ՝ յստակօրէն սեւագրութեան բնոյթ ունեցող այս գրութիւնը կարելի է ստուգապէս ըսել որ չէ հասած իր հասցէատիրոջ, այսինքն Խորհուրդին, որովհետեւ այլապէս հեղինակը զայն մաքրագրած ու վերջնական տեսքի բերելէ ետք միայն պիտի ուղարկած ըլլար: Մեր տպաւորութեամբ, Քրիստափորի մահէն ետք այս սեւագրութիւնը, իբրեւ

կարեւոր փաստաթուղթ, տեղադրուած է Ժընեւի Կեղր. արխիւի՝ Դաշնակցութեան Խորհուրդի յատուկ թղթածրարին մէջ:

Սեւագրութիւն կոչեցինք փաստաթուղթը: Արդարեւ գրութեան մեծադիր իւրաքանչիւր էջ կը յատկանշուի ջնջում-սրբագրութիւններով, տողամիջի եւ լուսանցքային բազմաթիւ յաւելումներով, երբեմն մատիտով գրուած եւ մանրատառ, ինչ որ շատ տեղեր չափազանց անընթեռնելի կը դարձնեն գրութիւնը, հարկադրելով համբերատար եւ բծախնդիր աշխատանք՝ վերծանելի եւ ընդունելի տեսք ու իմաստ հաղորդելու համար անոր, միշտ հոգածու մնալով անշուշտ բնագրի հարազատութեան պահպանման:

Ինչ կը վերաբերի բովանդակութեան, ան կը շօշափէ Սասնոյ 1904 թ.ի ապստամբութեան, անոր ժամանակի ընտրութեան, որդեգրուած մարտավարութեան, ուժերու կեդրոնացման եւ յատկապէս այս առթիւ Արեւմտեան բիւրոյի կողմէ կուսակցական մարմիններուն յղուած շրջաբերականները, որոնց մէջ, Քրիստափորի կարծիքով սխալ գնահատականներ տրուած են ապստամբութեան պարագաներուն եւ անոր շնորհիւ ժողովրդական մակարդակի վրայ հայ յեղափոխութեան ձեռք բերած տարբեր առաւելութիւններուն մասին:

*

* *

Թոյլ տուէք, խնդրեմ, ընկերներ, Խորհրդիդ քննութեան ենթակայ մի քանի խնդիրների մասին իմ կարծիքները եւս ձեր տեղեկութեանը հասցնել։ Այս իմ ցանկութիւնը պայմանաւորող երկու շարժառիթ ունիմ ես։ Նախ, այն ընկերների, որոնք այժմ մեծամասնութեամբ գործի վայրը գտնուելով միմիայն իրաւունք ունեն մեր մարմնու կողմից խօսելու(1)*, կան հիմնական խնդիրներ, որոնց սահմանում ես տարբերուում եմ նրանցից, իսկ հեռու գտնուելով նրանցից, զրկւած եմ նրանց հետ խորհրդակցելու եւ գուցէ համաձայնութեան գալու կարելիութիւնից։ Երկրորդ, վերջերս շրջաններում արտայայտւում են որոշ տրամադրութիւններ, որոնք երբեմն այնքան խորը հակասում են իմ կարծիքներին, որ ես պարզապէս պահանջ եմ զգում իմ ձայնը խառնելու ինձ հետ միատեսակ մտածողների ձայնին։*

Սկսում եմ Բիւրոյիդ ցրւած շրջաբերականներից, որոնք ինձ վրայ ժամանակին ծանր տպաւորութիւն գործեցին։

Բիւրոյի առաջին շրջաբերականը գտնում է, որ անցեալ տարւայ դէպքերը (ճիշդ՝ ըստ Վառնայի «Շարժումի»(2)*) բացի «յեղափոխական տարրի կորովը հաստատելուց», ուրիշ կողմից ունեցան միայն «բացասական հետեւանք», որ «այդ արիւնոտ տարին չտւեց հայկական դատին այն մղումը, որ սպասւում էր, չնայած ներսի կռւողների անուրանալի հմտութեան եւ արշաւախմբերի ինքնամոռացման հասած անձնւիրութեան»...*

Ճիշտ է՞ արդեօք այդ. միթէ՞ միայն <u>բացասական</u> հետեւանք. միթէ՞ միայն կռւողների բարոյականը չուրանալու եւ նրանց կոմպլիմաններ ասւելու հիմք միայն։

Ես կարծում եմ ո՛չ։

Բայց դեռ թողնենք այդ։ Միեւնոյն ա. շրջաբերականը երեւի դէպքերի միեւնոյն «բացասական հետեւանքները» ի նկատի առնելով՝ քննելիք հարցերի շարքում՝ դնում է նաեւ «մասնաւորապէս կետրոնացման տաքտիքը»։ Նշանակում է Բիւրօյի համար անսպասելի չէ կարող լինել կետրոնացման սիստէմի վրայ խաչ դնելու ոեւէ առաջարկ։ Սա արդէն իմ տեսակէտով իրաւ որ ուշադրութեան արժանի «բացասական հետեւանք է» անցեալ տարւայ դէպքերի, եւ ես ստիպւած եմ կանգ առնել մի փոքր այս խնդրի վրայ։

Առաջին՝ ենթադրենք մի րոպէ, որ շրջաբերականը չէ սխալւում պնդելով, որ դէպքերը ունեցան միայն բացասական հետեւանք։ Ի՞նչ եզրակացութիւնների կարող է մեզ բերել այդ հետեւանքը. մեղաւոր է այդտեղ արդեօ՞ք կետրոնացման սիստէմը թէ ուրիշ մի բան։ «Կետրոնացման» խնդիրը(3) *«մասնաւորապէս» դնող շրջաբերականը կարծում է, որ դէպքերի անյաջողութեան պատճառը միայն այն է եղել, որ «կառավարութեան յարձակումը սպասւածից աւելի կանուխ սկսւեց եւ Սասունը ստիպւած եղաւ ընդունել կռիւը ոչ բոլորովին պատրաստ վիճակում»։ Բայց եթէ այդպէս է, յեղափոխական ձեռնարկը չէ կարող ենթարկւել նոյն բախտին — այսինքն՝ այս կամ այն կերպ վիժել դեռ նախապատրաստական շրջանում։ — Ո՛չ մէկը, որովհետեւ չէ կարելի պահանջել թշնամուց, որ նա միշտ նկատի ունենայ այն ժամանակ, երբ յեղափոխականները կ՚ուզենան այդ։ Ինչ եզրակացնել դրանից. միթէ՞ յեղափոխական բոլոր միջոցները եւ դրանց թւում կետրոնացումը անպէտք են։ Աւելի կը մօտենանք ճշմարտութեան, եթէ նոյնիսկ մի կողմ թողնելով կառավարութիւնը, ընդունենք, որ մենք ինքներս ուշացանք Սասունի գործին ուժ տալու։ Սա չի լինի չափազանցութիւն, այլ պարզ իրականութիւն։ Միայն այդ դէպքում ստիպւած կը լինենք մենք պատասխանատւութեան հրաւիրել, ոչ թէ կետրոնացման սիստէմը, այլ բոլորովին ուրիշ կարգի գործօններ։— Դրանց թւում ի հարկէ, առաջին տեղը պիտի բռնի այն մեծազօր ռէակցիան, որի շնորհիւ* [18]*98 ժողովում ընդունւած եւ 901-ի Կամքի*(4) *կարգադրութիւններով կրկին շեշտւած Սասունի կետրոնացումը,* [*որ*] *համարեա մեռած տառ էր մնում կազմակերպութեան համար մինչեւ 903 թիւը, եւ մենք բուն կետրոնացման նպատակի համար եռանդուն եւ լայն գործունէութիւն չունեցանք իսկապէս մի տարի անդամ։ Դրանից յետոյ կը գան Սասունի կետրոնացումը վիժեցնելու համար, այն կարգերը մեր մէջ, որոնցով կարելի եղաւ 903 աշնանից ընդհ. ժողովը ուշացնել մինչեւ 904-ը,— այն մեր թուլութիւնը, որի շնորհիւ երբ Սասունի, Մուշի եւ Վանի ներկայացուցիչները* (4 *հոգի երկրից*) *արդէն ժողովատեղիումն էին, մօտիկ վայրերից դեռ բացակայ էին շատերը,— այն մեր կարճատեսութիւնը, որով երբ երկրի ներկայացուցիչները՝ նախատեսնելով Սասունին սպառնացող վտանգը՝ խնդրում էին ժողովին շուտով արձակել նրանց, մենք պահում էինք նրանց «խօսալու» համար,— վերջապէս դուցէ այն քաղաքական անհոտառութիւնը, որով չը համարձակեցանք մի տարի եւս յետաձգել ընդհ. ժողովը, որովհետեւ 903-ին ունենալով արդէն նկատելի դրամական միջոցներ՝ մենք կարող էինք*

Սասունին ցոյց տալ այնպիսի մի օժանդակութիւն, որպիսին չէր յաջողուել երկար տարիների ընթացքում։ Ես համարում եմ, որ ոչ ներսի եւ ոչ դրսի ընկերների համար անսպասելի չէր թիւրք կառավարութեան անխուսափելի յարձակումը 904 թ.,դա սպասւում էր չեռ 903 թւին (թերթեցէք այդ ժամանակ երկրից եկած նամակները, որոնք «հրաշք» էին անւանում կառավարութեան այդ անվճռողականութիւնը), ուր մնաց 904-ի մասին կասկածներ ունենալներս։ Եթէ կար անսպասելիութեան խնդիր — դա միայն մի ամսով կամ մի ամիս ու կէսով շուտ կամ ուշ յարձակուելու հարցն էր. Վահանը(5) գրում էր եւ երկրից եկած նամակները միեւնոյնն էին ասում. «եթէ մի կերպ քարշ տւինք մինչեւ Մայիս, հակառակ դէպքում, պարտւած ենք»։ Եւ այնուամենայնիւ այդ հանգամանքներում մենք կարելի գտանք առնւազը 4-5 ամսով կտրել երկրից Սասունի եւ Վանի գործիչ-ընկերների մի մասը, չէզոքացնել Կարս-Ալեքսանդրապոլ-Սալմաստի օժանդակութիւնը երկրին եւ առհասարակ անորոշ դրութեան մատնել մի շարք մարմիններ, որոնք ստիպւած էին սպասել ընդհ. ժողովի վճիռներին։ Շրջաբերականը ասում է, որ «չիրականացաւ ընդհ. ժողովի որոշումը — տալ բոլոր կռիւներին ամբողջական շարժման կերպարանք»։ Այլ կերպ չէր էլ կարող լինել. փետրվարի վերջերին ժողովից ազատւած կարեւոր ուժերը չէին կարող եւ պատրաստւել եւ մարտի 31-ին սկսած կռիւին հասնել, եթէ նոյնիսկ ռուսական սահմանից մինչեւ Սասուն լինէր մի բոլորովին անվտանգ ճանապարհ։ Փետրվարի վերջին արձակւած վճիռները փոխադրութիւններ եւ արշաւախմբեր կազմելու մասին նոյնպէս չէին կարող իրագործւել մինչեւ մարտի վերջը։ Ի՞նչ անէ այստեղ սիստէմը, երբ գուցէ ամբողջ տարիների մի գործ պահանջւում է ի կատար ածել մի ամսում։

Այս բոլորը ես ասում եմ, մի բոպէ ենթադրելով դեռ, որ դէպքերը ունեցան միայն բացասական հետեւանք։ Բայց ես միանգամայն այդ կարծիքը չեմ բաժանում։ Թերթեցէք բիւրոյի երկրորդ շրջաբերականը, ուր թէեւ անմշակ եւ ժլատագոյն չափերով, բայց դուք կը գտնէք ուրիշ բաներ եւս(6). օրինակ Պարսկաստանում տիրող ոգեւորութիւնը, արտասահմանում աւելի ժողովրդականացած մեր դատը, Կովկասի բարձր տրամադրութիւնը, որը, ի հարկէ, բացառապէս տեղական կեանքի հետեւանք չէ, պահանջ «Դրօշակը» աւելի յաճախ հրատարակելու եւայլն։ Աւելացրէք այդ ամէնի վրայ Դաշնակցութեան համակիրների եւ խմբերի կրկնապատկւելը եւ կազմակերպութեան ծաւալւիլը ամէնուրեք, Սասնում ընկած հերոսների ժողովրդականութիւնը, նրանց կրթիչ, ոգեւորիչ յիշատակը հասարակութեան բոլոր խաւերում, եւ կը տեսնէք, որ «բացասական հետեւանքների» դիմաց չէր կարող առաջ գալ այս բոլորը։ «Բացասական երեւոյթների» առաջ երեւան են գալիս, որքան ես կարող եմ ինձ հաշիւ տալ, սովորաբար լքումն, ըէակցիա եւ ոչ ոգեւորութիւն։ Յետոյ ի նկատի առէք այն ամենակարեւոր պահանջները, որոնք պարզւեցին այդ դէպքերի ժամանակ — այն է՝ որ ա- մենք կարող ենք ուզած ժամանակ արշաւախմբեր կազմել,

բ- շարժել նաեւ երկրի այլեւայլ մասերը (Ախլաթ, Վան) ու վերջապէս

գ- այդ դէպքերով ակնյայտօրէն ապացուցւած փաստը՝ թէ իրաւ որ մի փոքր աւելի ուժով եւ դիմադրութեամբ մենք կարող էինք մեր հարցին տալ մեր ուզած «մղումը» Մեծ Հայաստանում։

Ես ուզում եմ յիշեցնել դիւանագիտական շրջաններում «Զէյթունի սիստէմով» Սասունի խնդիրը լուծելու առաջարկը։ Մենք դրանից աւելն էլ չենք ուզում «կետրոնացման սիստէմից, իսկ ոչինչ չկայ, որ հաստատէր՝ թէ մենք չէինք կարող մի փոքր աւել ուժով հանդէս գալ Սասունում։

Վերջապէս Սասունի անյաջողութեան մէջ գուցէ դեր խաղաց մասամբ նաեւ յեղափոխական տաքտի ու գաղտնապահութեան պակասութիւնը մեր մէջ։ Պարզ է, որ երբ մենք ուզում ենք գործել մի տեղ փոքր ի շատէ երկար ժամանակ, մենք պէտք է աշխատինք այդ կէտից հեռացնել թշնամիի ուշադրութիւնը եւ հետաքրքրութիւնը. գաղտնապահ գործելու տաքտն ունեցող յեղափոխականը, երբ պատասխանատու դերով հիւսիս է գնում, նա պէտք է ասէ, որ իր ճանապարհը դէպի հարաւ է, եթէ արեւելք է գնալու՝ պէտք է ուրիշների առաջ ջրէ արեւելքի կարեւորութիւնը եւ պնդէ թէ ինքը հաւատում է միայն արեւմուտքի գործին եւայլն։ Այդպէս չտարին մենք Սասունի գործը։ Ամէն բան այնտեղ կատարւում էր բաց-աշկարայ. յեղափոխական խմբերը փոխանակ թաքնւելու՝ ոչ միայն փոքրիկ ընդհարումներից չէին խուսափում, այլեւ երբեմն իրենք առաջ բերում. ամբողջ Մշոյ դաշտը գիտէր Սասունում տեղի ունեցող իւրաքանչիւր քայլը. ռուսական սահմանում գաղտնիք չկար Մշոյ եւ Սասունի մասին. Թորգոմին(7) հրացանի ձայներով էին ընդունում եւ Ղարսը հպարտ թռուցիկներով կէտ առ կէտ պատմում էր ամէն ինչ։ Զարմանալի է՞, որ ոչ միայն կառավարութիւնը, այլեւ ամբողջ թիւրք ազգաբնակութիւնը գիտէր Սասունի տրամադրութիւնը եւ դեռ 903 [թ.] ինքը՝ այդ թիւրք հասարակութիւնը այնպիսի կատաղութեան էր հասել, որ առանց կառավարութեան սպասելու ինքն էր ուզում իր ձեռքով Սասունի խնդիրը վերջացնել։ Ի՞նչ անէ այստեղ սիստէմը։ Ի հարկէ մեծ գործը, մեծ փոխադրութիւնների, մեծաքանակ մարդկանց հետ կապւած գործը դժւար է կծկել մի քսակում եւ հեռու պահել ամէն տեսակ աչքերից, եւ այդ չէ որ ես մատնացոյց եմ անում — ո՛չ, այլ մեր այն անլրջութիւնը, «չտեսութիւնը», որ կարծում ենք, թէ մեր գործերի քսակի բերանը միշտ պէտք է բաց պահել՝ որ քսակի մէջ դրած իւրաքանչիւր քարը մենք պարտք ենք համարում բոլորին ցոյց տալ, կարծես այդ քարերից իւրաքանչիւրը արդէն գործին կապւած ամբողջ մի շինութիւն է։

Դառնանք երկրի կեանքին, որի վերաբերմամբ մեծ նշանակութիւն պիտի ունենայ մեր ապագայ ընթացքը։ Անցեալ տարւայ ընդհ. ժողովի առաջ պարզած տրամադրութիւնները երկրում, խմբերի բազմանալը, ինքնապաշտպանութեան, դիմադրութեան եւ զէնքի պահանջը բուն ժողովրդի մէջ զարգանալու փաստերը եւ երեւոյթները — ինձ թւում է — որ անցած-դարձածից յետոյ չէին կարող միանգամից չքանալ, այլ ընդհակառակը, գուցէ աւելի շեշտւեցին։ Եթէ 90-ական թւականներից առաջ կեանքը արտադրում էր Ծաթо[?]-Շերօներ, Յունօներ, ըէակցիայի ամենածանր շրջաններում՝ Սերովբ-

ներ, Վարդգէսներ — չկայ ոչ մի հիմք կարծելու, որ այժմ պիտի անհետանան բոլորը։ Ամբողջ մի սերունդ է գալիս արիւնոտ օրերում երկրում մեծացող, երիտասարդ խանդով, ինքնուրոյն մտածումներով եւայլն, եւ մեր կողմից զգուշութիւն է հարկաւոր ոչ մի դրական երեւոյթ չհարուածելու, այլ ընդհակառակը ընդգրկելու համար։ Որեւէ որոշում, որ չի համապատասխանել այս պահանջին նա կը լինի անկար եւ վնասակար։ Իսկ ներկայ պարագաներում «մասնաւորապէս» կետրոնացման հարց դնելը պարզապէս մատնում է մի տրամադրութիւն՝ երես դարձնել կեանքից՝ փոխանակ օգտուելու դրութիւնից, արդէն ստեղծուած երեւոյթներից, կռւի մեր տենչացած հետեւանքներից։ Եթէ կարելի լինէր պայմանների անիւը շուռ տալ, ես կ՝ասէի՝ դա կը լինէր վերադարձ դէպի յետ։ Բայց ես այդ չեմ ասում, այլ ասում եմ, որ այդ տրամադրութեան լինել կը նշանակէ քարեր նետել դէպի առաջ ընթացող անիւի առաջ։ Օրւայ պարտութիւնները ոչինչ չեն ապացուցում. գուցէ մենք էլի պարտւինք, բայց դա չէ խանգարում մեր կռւի սիստէմը, երբ ունինք ուրիշ շատ դժւարութիւններ մի մեծ գործ մինչեւ յաղթական պսակը տանել-հասցնելու համար։ Հակառակ կերպ վարւելով մենք կազմակերպութեան, հասարակութեան եւ ժողովրդական կեանքի հետ ստիպւած պիտի լինենք վարւել ինչպէս Տրիշկան(8) իր հռչակաւոր կաֆտանի հետ — 8 ամիսը մի անգամ տակնուվրայ անելով մեր անելիքները մինչեւ մի գեղեցիկ օր բոլորովին դէն կը շպրտւինք գործի ասպարէզից։ Ես մնում եմ կողմնակից կետրոնացման սիստէմին՝ համարելով փոքր խմբերի գործունէութիւնը աւելի աննկատելի, եւ կարծում եմ, որ Վասպուրականի կողքին այժմ պէտք է դնել նաեւ Մուշ-Ախլաթի կետրոնացման խնդիրը։ Թող նա ներկայանայ մեզ իբր մի ծանր, այո, շատ ծանր խնդիր, բայց Տրիշկա(8). կը մտածենք եւ կը գտնենք նոր միջոցներ, մարդիկ ու զէնք փոխադրելու կամ տեղական ժողովուրդը կազմակերպելու համար։ Արհեստական կերպով՝ այսինքն գներ բարձրացնելով՝ երկրում զէնքի շուկայ ստեղծել, դրամի ուժով քրդերին փոխադրութիւններով զբաղեցնել, կետրոնացման վայրերից դուրս շրջաններում զէնքեր յափշտակել եւայլն, եւայլն։

Միակ բանը, որ կարծում եմ, ներկայ հանգամանքներում նպատակայարմար կը լինէր չեշտել — դա թէեւ վաղուց (մեր ծրագրի ա[ռաջին] հրատարակութեան մէջ) ընդունւած, բայց սովորաբար շատ քիչ կիրառւող տեռորական գործողութիւններ եւ աւերումներ են ուղղած բարձրաստիճան թիւրք պաշտօնեաների եւ կառավարական հիմնարկութիւնների վրայ։ Կետրոնացման վայրերից դուրս միշտ որոշ առիթներից օգտւելով՝ կարծում եմ տեղական կոմիտէները կարող էին այդ խնդրի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել, եթէ «Խորհուրդը» այս անգամ առանձնապէս չեշտէ։ Օրինակ, Զեքիէ[?] փաշայի նման մի անձնաւորութեան մահւան դատապարտելը վաղուցւայ մեր պարտքն է, որ մնացել է մինչեւ այժմ անվճար։

Այսչափ ես արդէն գրած էի, երբ վրայ հասաւ ձեր մի նամակը այդ հարցերով։ Այդ նամակը եկաւ իմ բոլոր կասկածները — շրջաբերականով ներշնչւած կասկածները — ամենաանխնայ կերպով արդարացնելու, եւ ես ստիպւած եմ

կրկին դառնալ կետրոնացման խնդրին։

Մեծ Հայքի վերաբերմամբ Խորհրդի մէջ դրուած հարցերից առաջինում, Վասպուրականը առաջարկւում է ուժեղացնել ոչ թէ այն պատճառով, որ դա կարեւոր մի կէտ է կետրոնացման տեսակէտից, այլ որովհետեւ մարդիկ կան, որոնց դուրս բերելը այնտեղից Մարֆա Ալեքսէյեւնա-*ներին*(9) *խօսեցնել կը տայ։ Նախ՝ ի՞նչ անենք. թէեւ մեզ հարկաւոր չեն կամ չգիտենք հարկաւորւելու են երեսները*[?] *թէ ոչ այդ* Մարֆա Ալեքսէյեւնա-*ները*(9), *էլ ինչու ենք ահագին զոհողութիւններ յանձն առնում նրանց համար։ Երկրորդ.— Այդպէս դրուած հարցը արդէն վիրաւորում, խախտում է սկզբունքը — կետրոնացման սիստէմը, եւ մեզ առաջարկում է ամբող Մեծ Հայքում ոչ մի յեղափոխական տաքտիք չունենալ, այլ կեանքի տեղում օրօրւելու աննախանձելի դրութեան մատնւել։ Ի՞նչ ասեմ. բաւական այդ մասին խօսել եմ վերեւ. մի անգամ էլ կրկնեմ, որ ժողովրդից կտրւելու, նրանից հեռանալու այդ առաջարկները աւելի քան անժամանակ են։ Ո՞վ պէտք է արձագանք տայ ժողովրդի ներկայ պահանջներին, տեղ-տեղ նրա զինւելու-կազմակերպւելու ծարաւին, մի երրորդ տեղ նրա օգնութեան կամ թշուառութեան ու յուսահատութեան. դոքա ո՞վ գիտէ, ինչ նոր դրութիւն կամ կոտորածների հոսանքներ կարող են առաջ բերել Տաճկաստանում։ Այո՛, ձեռք քաշելով երկրում կետրոնանալու տաքտիքից մենք անտես առած կը լինինք մի կողմից այն ժողովրդականութիւնը, որ այժմ ստեղծել է մեր խնդիրը երկրում, նորագոյն զգացմունքների այն լայն աշխարհը, որ մուտք գործեց այնքան անթափանցիկ անկիւններ եւ հասարակական խաւեր՝ ստեղծելով այնքան երգեր, այնքան յարգանք, սէր եւ հաւատ դէպի մեր կռւի եւ նրա ներկայացուցիչների մեծ ու արդար գործը, եւ միւս կողմից՝ այն ծով դժբախտութիւններ, արտասունքներ եւ ուժից վեր զոհողութիւնները, որ վիճակւեցին մեր խեղճ ու անկազմ ժողովրդին. այժմ նրանից չբաժանւելը յուսոյ փրկարար* .....(10) *.մեր մարդկային եւ յեղափոխական պարտքն է։*

Այսպէս նայելով հարցին ես չեմ կարող հաշտւել նաեւ Մեծ Հայքի վերաբերմամբ դրւած երկրորդ առաջարկի հետ։ Իւրաքանչիւր միտք այդտեղ հակասում է իմ ամբողջ յեղափոխական աշխարհայեացքին եւ ես անսահման ցաւ եմ զգում այն տրամադրութիւնների առաջ, որ կարող էր ներշնչել այդ կէտը։ «Որովհետեւ 15 *տարւան գործունէութեան եղանակը Մեծ Հայքում* de facto *ունեցաւ միայն մի հետեւանք — ժողովրդի յեղափոխական ուժին զարթնումը»... — Նախ, այն ինչ եղել է, դա քիչ բան չէ. եւ եթէ դա եղած լինէր այն չափերով, ինչ մենք երազել եւ երազում ենք, դա կը լինէր ամենամեծ, հրաշագործ, հիմնական պայմանը հաշտութեան ձգող մի ժողովրդի համար եւ մենք կարող կը լինէինք այլեւս հանգիստ նայել ապագային՝ համոզւած որ մեր դատը արդէն ապահովւած է։ Բայց այդ չափերը դեռեւս չկան եւ յետոյ՝ զարթնումը պահանջում է շարունակել գործը, օգնել ժողովրդին կազմակերպւելու, եւ ոչ թէ զարթեցնելուց յետոյ՝ փախչել նրանից, կամ գործի համար քչիկ զարթեցնելուց յետոյ նրան կրկին քնել առաջարկել.*

Երկրորդ. ինչո՞ւ միայն զարթնումը. 15 *տարւայ մէջ մենք ճանաչեցինք*

երկիրը. մենք սովորեցրինք եւ վարժեցրինք կռւել եւ մեռնել. մենք ձեռք բերինք փորձառութիւն, մենք կրթեցինք ամէն կարգի ուժեր, մենք ճանաչեցինք մեր դատը պայմանաւորող հանգամանքները եւ դրսի աշխարհում մեր անելիքները, մենք իրար խառնեցինք ընդհանուր դատի առաջ ամբողջ աշխարհի հայութիւնը եւ իբրեւ յեղափոխական կազմակերպութիւն մենք առաջդիմեցինք շատ — մենք այսօր աւելի ենք ուժեղ թէ երկրում եւ թէ դուրսը՝ քան մինչեւ այժմ։ Աւելի՞ն էք ուզում. շատ լաւ, բայց մենք 15 տարում կապալով չէինք վերցրել Մեծ Հայքի ազատութիւնը. ի՞նչ կրիտերով(11) է ուրեմն, որ այժմ de facto այդքան բացասական կերպով ենք վերաբերում 15 տարուայ գործունէութեան եղանակին։ Ի՞նչ պէտք է անէինք այդ եղանակով, որ չէ արւել, ու այդ պատճառով դատապարտւում է։ «Կետրոնացումը չի յաջողւում մեզ եւ եթէ յաջողւի անգամ չէ ապահովում մեր դատի շահը, որովհետեւ մեր դատը կը տանինք միայն այն ժամանակ, երբ մի խոշոր ձեռնարկ ունենանք», ասում էք դուք։ Ո՞րտեղից գիտենք, որ կետրոնացումը չէ ապահովում մեր դատը, երբ նա երբեք չէ յաջողւել։ Այնպէս, թէորիապէ՞ս։ Ուրեմն 97 թւից ի վեր երկու ընդհ. ժողովներ եւ բոլոր կազմակերպական մարմինները 8 տարուայ ընթացքում սխալւում են եղել։ Յետոյ միթէ՞ իւրաքանչիւր ձեռնարկ պիտի տարւի միայն «մեր դատը ապահովելու» նպատակով. եթէ մի ձեռնարկ մի պատ աւելացնի մեր դատը տանելու մեծ շէնքի համար — միթէ՞ ժխտելի է նա. եթէ ենթադրութիւն կայ մի ձեռնարկով մեր դատը ապահովել՝ չէ նշանակո՞ւմ արդեօք որ բազմազան ձեռնարկների վերածւող մեր տաքտիքը միշտ սխալ է եղել։ Եթէ մի ճանապարհ տանում է մի տեղից միւսը՝ նշանակում է արդեո՞ք, թէ մի անգամ ձի նստելով պէտք է մարդ տեղ հասնի՞։ Եւ եթէ կարիք եղաւ ձի փոխել, օրեր կորցնել ճանապարհին, հիւանդութիւն ունենալ եւայլն։ Այդ տրամաբանութիւնով՝ Հայաստանը, երեւի, ազատել կարելի էր մի լաւ ձեռնարկով նոյնիսկ 90 թւականին։

«Արշաւախմբերը նոյնպէս չեն յաջողւում»։ Բայց եղել են դէպքեր, երբ յաջողւել են. յետոյ՝ միթէ՞ ակներեւ չէ եղած փորձերից, որ արշաւախմբերի յաջողութիւն կամ անյաջողութիւնը մեծ չափերով կապ ունի նրանց տւած նպատակների հետ եւ որ մենք միշտ կարող ենք նրանց նպատակները աւելի ճշդել յաջողութեան տեսանկիւնից։ «Մեր դատը կը տանինք միայն այն ժամանակ, երբ մի խոշոր ձեռնարկ ունենանք»։ Այդ ի՞նչ խոշոր ձեռնարկ է առանց կետրոնացման։ Մեծ արշաւանք դրսի՞ց, թէ Մեծ Հայքից դուրս մի ձեռնարկ, եւ ինչ ձեռնարկ, որ կարելի չէ կետրոնացում անւանել։ «Յանձնել մի մասնաժողովի ուսումնասիրել յեղափոխական եւ մարտական տեսակէտէ երկրի մի քանի մասերը եւ սահմանագլուխները, կազմել յատակագծումը որեւէ խոշոր ձեռնարկի եւ ներկայացնել ընդհ. ժողովի»։ Այս արդէն ես բոլորովին չեմ հասկանում. եւ ներեցէք ինձ. կարծես կարդում եմ մի լրագրական յայտարարութիւն այս կամ այն ձեռնարկի համար արդիւնքները որեւէ մարմնու ներկայացնելուն։ Շրջաբերականը ուզում է մի խոշոր ձեռնարկ։ Ես ի հարկէ ուսումնասիրութիւնների դէմ չեմ, բայց հակամէտ ուսումնասիրելի կոնկրետ գործի առաջ։ Ի՞նչ պէտք է ուսումնասիրէ խեղճ

մասնաժողովը եւ ո՞ւր։ Մնա՞ց Մեծ Հայքում մի կարեւոր կէտ, ուր ոտ չլինին կոխած մերոնք, կամ որոնցով զբաղւած չը լինէր այս կամ այն մեր մարմինը։ Մնա՞ց մի սահմանագլուխ, որը աւելի լաւ չլինի յայտնի մեր Սալմաստի, Վանի, Ղարսի, Բասենի եւ այլ ընկերներին, քան որեւէ կազմւելիք մասնաժողովի, որը միայն օրինական մի ձեւակերպութիւն պիտի կատարէ տեղեկութիւններ հաւաքելով եղած աղբիւրներից եւ բազմաթիւ թանկ նստող ճանապարհորդութիւններ պիտի կատարէ, որպէսզի իր գոյութեամբ գայ ապա[ցու]ցանելու միայն, որ մենք դատապարտելով մեր բոլոր անցեալը, ուզում ենք սկսել մեր յեղափոխութիւնը նորից — այն ժամանակներից, երբ Լեւոն Սարգսեան, Արշակ Բարխուդարեան եւ յետոյ՝ Յովհաննէս Սաղաթէլեան դեռ 80-ական թւականներին ուսանողական նստարանների վրայ եւ ապա մեր կեդրոնի կողքերին, միշտ պնդում էին ուսումնասիրութիւնների վրայ, երբ մենք արդէն կենդանի գործին վրայ էինք։ Տաքտիք որոշելու համար խօսք բաց անել — դա բացարձակապէս խնդրի այլասերումը կը լինի։ Եթէ կացութիւնը դժւար է, այստեղ մեռելութեան քարոզներով չէ, որ պէտք է հանդէս գանք, այլ լաւ կազմակերպւած պատասխանատու մարմինների՝ (փորձւած եւ այլ ինչ տեսակ մարդկանցից ուզում էք), ու արդէն այդ մարմնու պարտքը կը լինի ինչպէ՞ս, ի՞նչ անել։ Ինչ կասկած, որ ինչպէս ամէն մարդ երկրի ուժով ստիպւած է գիտակցաբար կամ անգիտակցաբար, կամայ թէ ակամայ իր անելիքի համար ընտրել ամենանպաստաւոր պայմաններ, այնպէս էլ լուրջ մարմինը ինքը կը մտածէ իրեն համար կարեւոր ուսումնասիրութիւնների մասին։ Բայց դորա համար, ի հարկէ, պէտք է նախ՝ սկզբունքով համաձայնւենք, որ գործներս պիտի լինի ժողովրդի մէջ, երկրի ծոցում, որտեղից լսւող ձայները մեծ կարեւորութիւն ունին մեր դատի համար։ Դրանից դուրս գործը մատնւած կը լինի խնդրով հետաքրքրւող բոլոր ֆատալիստների(12) անզուսպ երեւակայութեան, որոնք իւրաքանչիւր շաբաթ առատօրէն կարող են մեր առաջ դնել մէկը միւսից աւելի մեծ, մէկը միւսից աւելի ցնորական ծրագիրներ՝ միմիայն մեր հաւատքը, մեր միամտութիւնը, մեր ժամանակը, մեր խանդը եւ մեր միջոցները անխնայ կերպով հազարաւոր փորձութիւնների ենթարկելու համար — ուրիշ ոչինչ։ Օդապարիկների, նաւերի ու տօրպիլիօրների, պուլիմիոտների(13) եւ էլէքտրական ուժով հեռաւոր տարածութիւններից օգտւելու, մեզ համար անյայտ աշխարհներէ, որ մի տեղ 5000, միւս տեղ 30000 ժողովելու համար, մի տեղ քաղաքներ եւ բերդեր կործանելու, միւս տեղ ամբողջ զօրաբանակներ ջնջելու համար — անմիտ կօշմարի(14) կը մատնի մեր կազմակերպութիւնը։ Եւ ի՜նչ դժբախտ դրութիւն, հէնց այն ժամանակ պէտք է ծալենք ձեռներս եւ պտտենք՝ սպասելով Մասնաժողովի ուսումնասիրութիւններին եւ յետոյ էլ ընդհ. ժողովի վճիռին, երբ ինչպէս ասինք «Դաշնակցութիւնը թէ դրամական եւ թէ մարտական բաւականաչափ ուժեր ունի այժմ»։ «Մենք ընդունեցինք կետրոնացում երբ միջոցներ, ուժեր չունէինք բաւականաչափ» եւ գործը երեսի վրայ մնաց։ Երբ ունեցանք միջոցներ, ժամանակ չունեցանք կետրոնացման գործը առաջ մղելու։ Այժմ էլ, երբ ունինք ե՛ւ միջոցներ ե՛ւ ժամա-

նակ «բաւականաչափ» — մենք պէտք է պահենք դրանց՝ պարապ թողնելով ժողովուրդը կազմակերպելու գործը։ Ի՞նչ սիստեմ կարող է արդարացնել իրեն այդ տեսակ պայմաններում։ Այլեւս բաւական է. իմ կարծիքով ոչ սիստէմ փոխելու եւ ոչ էլ Մեծ Հայքի գործը կանգնեցնելու տրամադրութիւններ պիտի արտայայտի Խորհուրդը։ Սիստէմը ընդունուած է երկու ընդհ. ժողովներում, Սասունը մեզ համար ազդարար չէ դրա աննպատակայարմարութեան, եւ Խորհուրդը լաւ կ՚անէր 9 ամսից յետոյ տակնուվրայ չանել մի հիմնական կէտ կազմակերպական տաքտիքում։ Եթէ չընդունէք այս եւ թողնէք գործը մասնաժողովների եւ ընդհ. ժողովի, ես նախատեսնել կարող եմ որ «բաւականաչափ դրամական եւ մարտական ուժերը» ժամանակի ընթացքում պիտի հալւեն ամենամեծ մասամբ երկրից դուրս եւ այն ժամանակ մեր հիասթափութիւնը գուցէ աւելի դառը լինի քան այժմեանն է Սասունի դէպքերի առիթով։

1.- Խօսքը կը վերաբերի Յուցական մարմնի անդամներուն, որոնց մեծ մասը, ինչպէս կը գրէ Քրիստափոր, կը գտնուէին «գործի վայրը», այսինքն Պոլիս, մինչդեռ ինք Սոֆիա էր, ուր եւ զոհ պիտի դառնար ռումբի ծանօթ փորձարկման։

2.- Յակոբ Վարդ-Պատրիկեանի (Արվախի, Վարդօ) խմբագրութեամբ Վառնա հրատարակուող թերթ, որուն մասին բացասական կարծիք ունէր Քրիստափոր։

3.- Հոս եւ շարունակութեան մէջ յաճախ գործածուող «կեդրոնացման խնդիր»ը կը վերաբերի զինեալ ուժերու կեդրոնացման։

4.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. ժողովի կողմէ կեանքի կոչուած «Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմնին, որ օժտուած էր լայն իրաւասութիւններով եւ որ Երրորդ Ընդհ. ժողովին պիտի փոխարինուէր Դաշնակցութեան Խորհուրդով։

5.- Վահան – բուն անունով Տողրամաճեան Կարապետ (1866-1904) Դաշնակցութեան պատասխանատու ներկայացուցիչն էր 1904 թ. Սասնոյ ապստամբութեան, որու ընթացքին ալ պիտի նահատակուէր։

6.- Յիշուած շրջաբերականները Արեւմտեան բիւրոյի կողմէ Հ.Յ.Դ. մարմիններուն ուղղուած էն 1904 թ. Նոյեմբերին (տես փաստ. 43-80 եւ 43-81)։

7.- Թորգոմ – ծածկանուն Թուման Թումեանցի (1879-1904), որ 1903-4 տարիներուն մէկէ աւելի անգամներ ռազմամթերք եւ ռազմիկներ հասցուցած էր Սասնոյ կռուողներուն. ի վերջոյ 1904ի Յունիսին ռուս-թրքական սահմանին վրայ կռուի ընթացքին նահատակուած։

8.- Բնագրին մէջ ռուսատառ՝ կեղծանուն-ծածկանուն։

9.- Բնագրին մէջ ռուսատառ։ – Մարիա Ալեքսէյեւնան քոյրերէն մէկն էր Մեծն Պետրոսի։ Ի տարբերութիւն վերջինիս, Սարֆան եւ իր քոյրը՝ Սոֆիան ծնած էին Ալեքսէյ Միքայլովիչ ցարի առաջին կնոջմէն։ Երկու քոյրերը (Մարֆա եւ Սոֆիա) Մեծն Պետրոսի պատանեկան շրջանին մասնակցած էին իրեն դէմ կազմակերպուած դաւադրութիւններու, բայց պարտուած եւ մեկուսացուած էին վանքի մէջ՝ դառնալով միանձնուհի։ Քրիստափորի կողմէ Մարֆա Ալեքսէյեւնաներու յիշատակումը թերեւս կը վերաբերի իրեն դէմ եւս դաւեր նիւթած բայց ձախողած անձերու։

10.- Անընթեռնելի երեք բառ։

11.- Չափանիշով։

12.- Ճակատագրապաշտներու։

13.- Տորպիլիոր – ռազմանաւերէն արձակուած ռումբ. պուլիմիոտ – գնդացիր։

14.- Մղձաւանջ։

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

1)

1896

Յաւելուած 1

Փաստ. 1914-80

Քր. Միքայէլեանի ձեռագրով շարադրուած այս յոյժ կարեւոր փաստաթուղթը կը գտնուի Պոսթոնի Հ.Յ.Դ. արխիւներուն No 1914/80 թղթածրարին մէջ. թղթածրար՝ որ կը պարունակէ այլազան նիւթեր՝ Քրիստափորի գրած եւ ստացած նամակներէն սկսեալ մինչեւ ֆրանսերէն լեզուի ուսուցման տետրեր եւայլն:

Ներկայացուած փաստաթուղթը բաղկացած է 8 մեծադիր էջերու վրայ խիստ մանր տառերով շարադրուած հետաքրքրական տեղեկատուութիւն՝ հանրածանօթ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի 1 Մայիս 1896 թ. Ալեքսանդրապոլ-Գիւմրիի մէջ ձերբակալութեան եւ նախնական հարցաքննութենէ ետք Երեւանի բանտ փոխադրութեան մասին. ապա մանրամասնօրէն կը տեղեկագրուի Ա. Իսահակեանի ենթարկուած հարցաքննութեանց, բանտային կեանքի անտանելի պայմաններուն, հուսկ, մեծ տարուան բանտարկութեան վճիռ ստանալուն մասին:

Փաստաթուղթը, ճիշդ է, Քրիստափորի ձեռագրով է. յայտնապէս, սակայն, ան շարադրողն է միայն առաջին պարբերութեան՝ ներածականի բաժնին, մինչ մնացեալը ամբողջութեամբ կը նկարագրուի Իսահակեանի կողմէ՝ առաջին դէմքով: Բանաստեղծին թոռը՝ Աւիկ Իսահակեան, որ ամենայն մանրամասնութեամբ գրի առած է մեծ հօր կենսագրութիւնը, ձեռքի տակ չունենալով այս փաստաթուղթը, կը դիմէ կողմնակի այլազան աղբիւրներու՝ շարադրելու համար երիտասարդ բանաստեղծի կեանքին կապուած այս կարեւոր իրադարձութիւնը (Տես Աւիկ Իսահակեան՝ «Աւետիք Իսահակեան – Գիտական կենսագրութիւն», էջ 354-375): :

Վերջապէս, այս փաստաթուղթը անգամ մը եւս կը վկայէ ի մասին հայ յեղափոխական շարժման եւ յատկապէս Քր. Միքայէլեանի հետ Ա. Իսահակեանի ունեցած սերտ կապերուն, որոնք քիչ ետք շօշափելի արտայայտութիւն պիտի գտնէին Հայ Գուսան ստորագրութեամբ «Դրօշակ»ի էջերուն լոյս տեսած անոր բանաստեղծութիւններուն միջոցով:

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

1896 *մայիսի* 1-*ին Ալէքսանդրապօլում ձերբակալւում է։ Օրը ցերեկով, ճաշից յետոյ մտնում են տունը։*

Երեւանում մի ձերբակալւածի մօտ (*Գաբրիէլ Մնացականեանի մօտ գնացողի*) *գտնում են նամակ Դիլիջանի տղերանց վրայ. այդ նամակը իրեն չէ*

եղած գրած, բայց Դիլիջանի տղերքը ցուցմունքների ժամանակ անւանում են եւ Աւետիքին։ Ոստիկանութիւնը Դիլիջանում հեռագրում է ձերբակալել Ալէքսանդրապօլի ոստիկանութեան. ոստիկանութիւնը հրաւիրում է եւ պահում է ոստիկանատանը. ժանդարմները դեռ հեռագիր չեն ունեցել. մի միայն գիշերից յետոյ ժանդարմները գալիս են, տանում կապիտանի մօտ, որը բանտարկում է. հին չինութիւն. յատակը ցօղ[ուն]. պառկելու համար խար։ Երրորդ օրը քննութիւն, ներկայութեամբ դատախազի օգնականի — մի վերին աստիճանի լիրը արարած, ազգով ռուս. կապիտանը՝ Մինկեվիչ։ Ժանդարմները նոյնպէս թղթեր չունէին. ինչպէս եւ ոստիկանները. ստացել էին միայն կարճ հեռագրական կարգադրութիւն։

Քննութիւն

Մեղաւոր չեմ զգում ինձ. չեմ պատկանում որեւէ յեղափոխական կազմակերպութեան. Դիլիջանի տղերանց, որոնց անունները յիշւում է, չեմ ճանաչում։ Սրանով վերջանում է առաջին քննութիւնը. միւս օրը եկաւ մօտս կապիտանը եւ նորոգեց կրկին իր հարցերը, որոնց նոյն պատասխանը տւի։ Երրորդ օրը էլի կանչելով ցոյց տւին ինձ իմ մի ձեռագիրը, որ մի ստացագիր էր Դիլիջանի տղերանց տւած 15 հրացան նրանցից առնելու եւ Ալէքսանդրապօլ տանելու համար։ Դա ստիպում է խոստովանել, որ այն Դիլիջանից բերել է 15 հրացան եւ տւել է մի տաճկահպատակի՝ իրենց գիւղը ինքնապաշտպանութեան համար տանելու համար։ Դատախազը այդ ժամանակ սկսում է նախատել, որ քաջութիւն չունեմ ճշմարտութիւնը խօսալ. ես պատասխանում եմ այդ աւելորդ քարոզներին, որ մենք դիմելով յեղափոխական կուի, նւիրւելով մի ժողովրդի դատին, մի փոքր աւելի լայն սիրտ ունինք քան ինքներդ։

Այս միջադէպը տաք ընդհարման տեղիք տւեց։ Բերին թէյ, մի փոքր հանգստացանք, յետոյ կրկին սկսւեց։

Հարցնում են ում եմ ճանաչում Թիֆլիզ. ես ասում եմ, ոչ ոքի, որ նրանք անյայտ են.

— Ինչպէ՞ս մտաք յեղափոխութիւն։

— Պարզ կերպով՝ լուրեր տեղում էին ամէն կողմից՝ Տաճկաստանում տանջւող եւ կոտորւող ժողովրդի մասին. ես էլ մտածեցի նպաստել ժողովրդի զինման գործին։

— Ձեզ ի՞նչ. թողէք տաճկահպատակները իրենց մասին հոգան, իսկ դուք ռուսահպատակ էք։

— Մենք զանազանութիւն չենք դնում. մեր եղբայրներն են իբրեւ հայեր, մեր եղբայրներն են իբր մարդիկ։

— Ինչո՞ւ էք զէնք գողանում, կառավարութեան զէնքերը։

— Մենք չենք գողանում, այդ ձեր սպաներն են գողանում եւ մեզ ծախում. այլ կերպ ոչ մի հայ չէ կարող կառավարական զինանոցներին մօտենալ։

— Ճանաչո՞ւմ էք այդ սպաներին։

— Ոչ, մի ղազախեցի թիւրքից ենք առել Դիլիջանի անտառում։

— Եւրոպայում եղած ժամանակ դուք կարդացել էք յեղափոխական գրուածքներ։

— Այո· չէ կարելի Եւրոպայում մնալ եւ այնպէս ապրել ու մտածել, ինչպէս այստեղ կամ Տաճկաստանում։

Այս հարցերից շատերը, երբ ոչ մէկ [չէին ուզում] արձանագրութեան մէջ մտցնել, չէի համաձայնում, եւ մնում էին։ Դիլիջանի տղերանց անունները իսկապէս չէի էլ իմանում, դէմքերը նոյնիսկ չէի յիշում· տեսել էի միայն իմ մի ծանօթի մօտ մի անգամ, որը յանձնեց ինձ հրացանները Ալէքսանդրապոլ տանելու։ Ես վերցրել էի Դիլիջանից մի քանի Դրօշակ*· այդ էլ չէր ծածկւել Դիլիջանում հարցաքննուողների կողմից եւ մինչեւ անգամ աղաւաղուած ձեւով· ոչ թէ ինձ էին տւել, այլ իբր թէ ես էի տւել բոլորին։ Ամենասոսկալի ցուցմունքներ էր տւել Լեւոն Վարդանեան — դիլիջանցի անիւագործ** արհեստով։

Երկու շաբաթ ընդամէնը մնացի Ալէքսանդրապոլի բանտում։ Այդ բոլոր ժամանակ մի անգամ միայն ստացայ Ֆր. Լ.** ամսագրի մի հին համար կարդալու համար· բոլոր ժամանակ ուրիշ ոչինչ չեմ ունեցել· այդ էլ ստացայ բանտապետից։

Յետոյ տարան Երեւան· ուշադրութեան արժանի է, որ դեռ մի օր առաջ ինձ յայտնեցին, որ տանելու են ինձ, բայց չասացին թէ ուր, այնպէս որ բոլոր ժամանակ եւ մինչեւ անգամ մինչեւ Դիլիջան, ես կարծում էի, որ աքսոր են ուղարկում։ Դիլիջանում միայն երբ ճանապարհը ծռւեց դէպի Երեւան, ինքս հասկացայ այդ։ Երեւան տարան գնդապետ Կլիկով, ադիւտանդ (համհարզ) Գրեկով** — երկուսն էլ սոսկալի մարդիկ· մէկը աղէս, միւսը գազան։ Բանտում 4-5 օր մնացի մինչ հարցաքննութեան տարան։ Այդտեղ իմացայ, որ Դիլիջանի տղերքն եւս այստեղ են եւ որ նրանք են անւանել ինձ։ Այդ տղերքը արդարացնում էին իրենց նրանով, որ խաբւել են։ Դիլիջանում ասել են նրանց, որ նրանք խեղճ արհեստաւոր մարդիկ են, որ իրենք էլ գիտեն թէ նրանք մեղաւոր չեն եւ որ իսկոյն կ'արձակւեն հէնց որ ցոյց տան իրենց գլխից հանողներին։ Դիլիջանում առաջին քննութեան ժամանակ Արտաշէս Սիմոնեանց անունով մի տղայի այնտեղ գնացած Գրեկով**-ը նոյնիսկ ապտակահարւում է, որպէսզի ամէն բան պարզ ասի։ Երբ ինձ կանչեցին՝ նոյն քննութիւն սկսւեց։ Իմ պատասխանները, չնայելով տղերանց տւած ցուցմունքներին, մնացին նոյնը ինչ Ալէքսանդրապոլի խոստովանքից յետոյ էր։ Ի միջի այլոց Գրեկովը** յայտարարեց ինձ մի առթիւ. «Եթէ դուք հանգիստ չմնաք, մենք, որ անպատճառ տիրելու ենք Տաճկահայաստանը, կը վերացնենք ձեր լեզուն էլ, ձեր գրականութիւնն էլ, ձեր էջմիածինն էլ»։

— Կլիկով** — ինչ էք սիրում դուք ձեր հայրենիքի մէջ·

— Իմ ազգը, իմ մայրենի լեզուն։

---

*) Ծ. Խմբ.– Խօսքը՝ Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Դրօշակ»ի մասին է։

**) Բնագրին մէջ ռուսերէն։ Այսուհետ բոլոր ռուսերէնները՝ զոյգ աստղանիշով։

— Է՛հ ինչ լեզու ձեր լեզուն ծիծեռնակ, ծիծեռնակ**. *Թողէք դրանք, միացէք մեզ եւ ապրեցէք իբր հզօր պետութեան անդամներ։*

Բանտ

Բանտապետը մի թուրք է, տգէտ, անուսում, լեզուն՝ փողոցներում միայն սովորած եւ Երեւանից դէն աշխարհ չտեսած։ Այդ պաշտօնը ստացել է իբր ռուս-տաճկական պատերազմում մասնակցող (միլիցիայի** *մէջ եղել)։ Ոչ մի պարտաճանաչութիւն. բանտարկեալներին վերաբերւում են ինչպէս շների. ոչինչ չկար որ իրեն թոյլ չտար բոլորի հասցէին.* «դեհ գործիր, դեհ լռիր, դու մարդ չես**». *անդրադէտ, օրինազանց։ Բանտում այնտեղ մնացի* 11 *ամիս ուղիղ. այդ բոլոր ժամանակ թէեւ ես ունէի բաւականաչափ դրամ տնից ուղարկւած՝ ոչ մի անգամ չկարողացայ ինքս ինձ համար կերակուր պատրաստել կամ բերել տալ. ստիպւած ուտում էի բանտի կերակուրը, որ ներկայացնում է միշտ միեւնոյն կերակուրը. եզան գլխի ջուրը, երբեմն միայն մսի կտորներ, որ անկարելի է ուտել. բոլոր ժամանակ մենակ. ստանում էինք մի «ունդակ» հաց օրեկան եւ այդչափ մսաջուր. տաք ջուր* 2 *անդամ թէյի համար. իմ փողով ունէի թէյ, շաքար եւ ծխախոտ միայն. գնողները միշտ գողնում էին. հինգ ֆ. փոխարէն գնում էին* 2-3 *ֆ. եւ գինը* 5-10 *կոպէկով աւել. ծխախոտը բացւած թաշկինակի մէջ՝ կիսով չափ պակաս. թէյը նոյնպէս։ Դիմել եմ բանտապետին, դիմել եմ ժանդարմներին, ոչինչ չէր յաջողւում։ Դրսից պանիր անդամ չկարողացանք ունենալ. երբեմն ուղարկում էին ուտելիք իրենց տներից ստացած մսի կամ պանրի կտորներ թիւրք քրէական յանցաւորները։ Երեւանցի բանտարկեալների համար բերում էին մայրերը, բայց միայն կիրակի օրերն էին ընդունում, իսկ հասարակ օրերը երբեք կամ վերցնում, իրենք էին ուտում. կիրակի օրերը անդամ՝ եթէ ուղարկում էին փլաւ ու հաւը, բրինձն էր միայն տեղ հասնում, կամ հաւի մի աննշան մասը։ Ինձ հետ* [*պատահեց*] *հետեւեալ դէպքը։ Մայրս եկել էր յատկապէս Ալէքսանդրապօլից Երեւան ինձ տեսնելու համար.— (մօրս վրայ այնպէս էր ազդել, որ կուչ եկել, քսան տարով աւելի ծերացել էր. Ղզմալեանի մայրը նոյնիսկ գժւեց որդու ձերբակալումից յետոյ. մի հիանալի, մի մաքուր արարած, որ օր ու գիշեր մտատանջւում էր թէ եարաբ ինչ պիտի անեն որդուն. եւ վերջապէս մի տարուց յետոյ, դեռ որդին չազատւած՝ վախճանւեց) բերել էր բանտը կերակուր, խորոված, գաթա եւայլն։ Այս բոլորից հասաւ ինձ միայն չոր հացը, որ տւեց ինձ* Գրեկով-*ը***ասելով, «սա մնաց քեզ բաժին, մնացածը մենք կերանք»։ Ուրեմն բանտի ծառայողների մէջ, նոյնիսկ ժանդարմների վարչութիւնը անում է միեւնոյնը։ Զմեռը չէին վառում։ Սենեակները մենք էինք մաքրում, պարոշկաները** նոյնպէս ինքներս էինք դուրս*

---

*) Ծ. Խմբ.– Պարոշկա՝ զուգարանակոնքի դեր խաղացող անօթ։

**) Գրեկովը կը ծաղրէ Գ. Դոդոխեանի յայտնի ազգային երգը։

տանում։ Ման գալու թողնում էին մի անգամ միայն, այն էլ 4-5 րոպէով՝ բացի կիրակի եւ անձրեւային օրերից, իսկ հոկտեմբերի կէսից մինչ ապրիլի վերջերը՝ նոյնիսկ ամենեւին։ Ձմեռը չէին վառում. ահագին քանակութեամբ փայտից, որ գնւում էր, մեծ մասը ծախւում էր յօգուտ բանտապետի։ Միս նոյնպէս ծախւում էր։

Բանտապետը երբեք չէր դիմում բանտարկեալներին ուրիշ տեսակ, քան հայհոյանքներով։ Շատ անգամ է պատահել, որ մենք փոխանցել ենք իրար ամենասոսկալի հայհոյանքները։ — Մի անգամ ամբողջ շաբաթւայ ընթացքում ինձ չտւին ոչ ծխախոտ, ոչ թէյ ու շաքար. այդ իմ բողոքներից մէկի հետեւանքն էր, իբր պատիժ։

Բանտապետի մասին էլի. սիրուն տղաներին տալիս էր ազատութիւն եւ անդադար իր մօտ ծառայութեան էր տանում որոշ նպատակներով. ոչ մի գեղեցկադէմ պատանի չէր ազատում այդ հրէշի ձեռքից։

Բաւական էր որեւէ փոքրիկ բողոք՝ խսկոյն կարցեր* էին դնում. մի, երբեմն 2 օրով (2 երկարութիւն,1 լայնութիւն**, առանց պատուհանի եւ ծակ դռան մէջ, առանց անկողնի կամ որեւէ շորի քարէ յատակի վրայ. տալիս էին չոր հաց, ջուրը խողովակով դռան ծակից. դուրս են բերում օրեկան 2 անգամ միայն։ Աղմուկի համար զրկում էին հացից)։

Երկու ամիս թոյլ չէին տալիս տուն նամակ գրել։ Ֆրեզէի բարեկամն էր բանտապետը. երբ ասում էի՝ թէ կը գանգատւեմ դուրս գալուց յետոյ՝ պատասխանում էր՝ «ոչ ոքից երկիւղ չունեմ, նոյնիսկ թագաւորից»։ Կաշառակեր էր վերին աստիճանի. եղբայրս վերջին ամիսը դուրս գալուցս առաջ այցելութեան գալու ժամանակ (Ալէքսանդրապօլից էր եկել) 15 ռուբլի կաշառք էր տւել եւ այդ ամսում միանգամայն փոխւեց նրա վերաբերմունքը. գրքեր էր ուղարկում ինքը, թողնում էր նամակներ գրել ծնողներիս ինչքան ուզէի. ծածուկ երեկոները մի ծանօթ տղայից ինձ համար կերակուր էր ընդունում եւ միշտ ինձ հասցնում։ Իսկ առա՞ջ. ուզում ես 9-ին նամակ գրել. դրա համար պէտք է տանեն բանտապետի գրասենեակը. չեն տանում. սկսում եմ կանչել վերահսկիչ**ներին, չեն երեւում. բղաւում եմ, գալիս են եւ սկսում ամենաանվայել հայհոյանքները. ես պատասխանում եմ միեւնոյնով. ծեծում եմ դուռը եւայլն։ Բարձրանում է աղմուկ. գալիս է բանտապետը. յայտնում եմ, թոյլ չեն տալիս նամակ գրել. «միւս շաբաթ կը գրես»։ «Այդպէս էք դուք ասում ահա 5 շաբաթ է. ե՞րբ է գալու «միւս շաբաթը»։ — «Ձէ կարելի, ժամանակ չկայ. լռեցէք անպիտան»։ — «Անպիտանը դուք էք, գող-աւազակներ»։ Բանը վերջանում է առանց հացի կամ կարցերով։ Իսկ ժամը 12-ից դէնը այլեւս չի կարելի նամակ գրել. փոստը մի անգամ տարւում է, եւ թոյլտւութիւն կայ գրելու միայն առաւօտները։ Սենեակում երբեք ոչ թուղթ, ոչ թանաք, ոչ գիրք չէինք ունենում։

Մի օր այցելութեան եկաւ փոխ նահանգապետը (Աբաշիձէ). մօտենալով պատուհանիս՝ հարցրեց. չունեմ արդեօք որեւէ ասելիք։— թոյլ տւէք մի

*) Ծ. Խմբ.– Պատժախուց:

*խնդիր գրել բարձր իշխանութեան։— Դուք իրաւունք ունիք, եւ դառնալով բանտապետին. ինչո՞ւ չէք թոյլ տալիս. — Ողողեցին մեզ իրենց խնդիրներով, շարունակ գրում են։ — Երբեք ոչինչ չենք գրել, դա սխալ է։ — Ուրեմն, պ. բանտապետ, թոյլ կը տաք գրել։ — Ճիշդ այդպէս**, բայց երբեք չկարողացայ գրել։*

Մեր աչքի առջեւ մի քիւրդ ինքնիրեն խեղդեց. բանտարկութեան էր դատապարտուած 6 ամսով, եւ գժի նման տանջւում էր. ամբողջ [օրը] ման գալով բղաւում էր թէ երբ է վերջանալու իր բանտարկութիւնը. եւ երբ մնացել էր միայն 40 օր՝ յուսահատութիւնից ինքն իրեն խեղդեց։ Եթէ մի փոքր մեղմ վերաբերմունք լինէր կամ որեւէ զբաղմունք տուէր, երեւի այդ չէր պատահի։

Կարցերում մի հայ (Նահապետ Վաղարշապատցի) եւ թիւրք (հայը փող կտրող էր) կռւում են իրար հետ։ Բանտապետը գոցում է նրանց միեւնոյն կարցերում. հայը 25-26 [տարեկան] նոր պսակուած տղայ էր. թիւրքը մի փոքր աւել, մի շատ գեղեցիկ տղամարդ։ Կռիւը շարունակւում է եւ կարցերում. թիւրքը հնամաչ պատից առնում է մի քար եւ խփում է հային։ Վերջինն ընկնում մեռնում է. թիւրքը ապշած սկսում է բղաւել «մեռա՛ւ, մեռա՛ւ...»։ Վրայ են հասնում եւ խկոյն ծեծելով հանում են թիւրքին եւ ջախջախուած գլխով հային։ Սոսկալի տպաւորութիւն բոլոր բանտարկեալների վրայ... Անցնում է մի փոքր ժամանակ. դատախազը յայտնում է թիւրքին, որ նա 20 տարուայ տաժանակիր աշխատանքի պիտի դատապարտուի։ Թիւրքը յուսահատութիւնից գիշերը վերցնում է լամպը, բաց անելով նրա թիթեղը պատռում է իր փորը։ Վրայ են հասնում ընկերները, տանում են հիւանդանոց բժշկւում է, բայց յետոյ խելագարւում... երեք տարի բանտում մնացել էր եւ այժմ սպասում էր վճռի պալատից։

Մի հայ եւս, դատապարտուած 4 տարուայ աշխատանքի, գժւել էր։

Մի օրւայ մէջ, եկել էին բանտ եւ իրար յետեւից կանչում էին։ Գալիս էր բանտ ժանդարմի բանտապետը. խնդրում էի մի կերպ գրքեր եւ կերակուր ստանալ։ Գնդապետը ասում է բանտապետին. խնդրեմ կատարէք պարոնի ցանկութիւնները. — ամենայն պատրաստակամութեամբ։ Եւ երբեք ոչինչ չտուեց ինձ, արդարանալով նրանով, որ ինձ մօտ այդպէս էր խօսում ժանդարմը, իսկ յետոյ ծածուկ պատւիրում էր ոչինչ չտալ ոչ ոքի։ Նոյն բանի մասին դիմել եմ դատախազին — ամէն անգամ խոստացել է նոյնիսկ իմ ներկայութեամբ կարգադրութիւն է արել, բայց անհետեւանք. միւս անգամ գալիս՝ երբ յիշեցնում էի, որ ոչինչ չյաջողւեց ինձ ստանալ, սառնութեամբ ասում էր՝ էլի կ'ասեմ։ Ես արդէն հաւատացած՝ սկսում էի սպասել եւ բանտապետին հարցնել՝ արդեո՞ք չպիտի ունենայ դատախազի կարգադրութիւնը ոչ մի հետեւանք, բանտապետը՝ ծիծաղելով բացականչում էր — ի՞նչեր էք խօսում դուք — միամի՛տ մարդ։ Իսկ դատախազի օգնականը՝ իր հայատեացութեամբ մի հրէշ — պարզապէս ասում էր, որ շատ բան իրենից է կախ-*

---

*) Ծ. Խմբ.– Աստղանիշերու մէջ առնուած պարբերութիւնը գրուած է լուսանցքին եւ շարունակուած յաջորդ էջին՝ առանձին թերթի վրայ։

*ւած եւ նա ոչինչ չպիտի տայ մեզ**։

Ժանդարմները մատնութիւնների եւ խոստովանութիւնների դրդելու համար հետեւեալ միջոցների էին դիմում.

1.- *Խոստանում էին ազատութիւն, փող (մէկէն 100 ռուբլի), ոսկէ ժամացոյց եւայլն։*

2.- *Սպառնալիքներ — Սիբիր ուղարկելու եւայլն։*

3.- *Կեղծ վճիռների ընթերցում. կանչում են եւ կարդում վճիռներ. մէկին՝ թէ 6 տարով տաժանակիր աշխատանքի է նա դատապարտուած. եկաւ բանտը լալով։ Միւսին՝ թէ չորս տարով աքսոր Սիբիր. եկաւ նոյնպէս լալով։ Ինձ՝ «Ոչինչ նոր բան չունիք ասելու»։— Ի՞նչ կարող եմ ասել. իմացածս ասել եմ։ Գիտէ՞ք ձեզ ինչ է պատիժ նշանակուած. Ոչ. Ձեզ վճռուած է 4 տարով Սիբիր։ — Եթէ արդէն վճռուած է, ապա ինչո՞ւ էիք նոր հարցնում՝ թէ չունիմ արդեօ՞ք ուրիշ ցուցմունքներ։ — Մենք կարող ենք միջնորդել փոփոխելու.— Կարելի՞ է բողոքել այդ վճռի դէմ։ Չէ կարելի։ — Տեսնեմ վճիռը։ Չէ կարելի. ես կը կարդամ, եթէ ուզում էք.— Ոչ, ուզում էք 14 տարով դատապարտեցէք։*

Ես հասկացայ որ կեղծ է. եկայ եւ բղաւեցի ընկերներիս, որ չվախենան։

Եւ այս բոլորը կատարում էր կապիտանը, եւ դատախազի օգնականը հաւասարապէս։

Վարչութեան կառավարիչ գնդապետը ներկայ չէր լինում այդպիսի անօրինական քննութիւնների ժամանակ։ Նա էլ աշխատում էր համոզել, որ մենք սխալ ճանապարհի վրայ ենք։

1) *Նա դրդում էր մեզ գլխաւոր ղեկավարների դէմ, որոնց ձեռքին մենք գործիք ենք իբր թէ։*

2) *Նա պնդում էր, որ մեր ուզածը ներկայումս անիրագործելի է։ Հայաստանին պէտք է տիրէ մեր կառավարութիւնը. դա էգուցւայ մեր գաւառն է եւ ձեր ուզածը երազ է։*

3) *Դուք հակակառավարական ուղղութեան էք հետեւում, յոյսներդ դրած Անգլիայի վրայ. Անգլիան ոչինչ չի անի ձեզ համար եւ մենք թոյլ չենք տալ մի բան անել, քանի որ գիտենք թէ որքան դէմ է մեզ Անգլիան։ Դուք պէտք է դիմէիք միմիայն Ռուսաստանի օգնութեան եւ ինքներդ բաւականայիք միմիայն խնդրելով։ Ինքներս իմաց կը տանք ձեզ. եթէ չլսէք այժմ, մենք, ինչպէս փակեցինք ձեր դպրոցները, նոյնպէս էլ կը հալածենք ձեր գրականութիւնը, եկեղեցին եւայլն — եւ այն ժամանակ դուք բոլորովին կորած կը լինէք։*

Հիւանդութեան ժամանակ մեզ չյաջողուեց հիւանդանոց մտնել. մէկը երեք ամիս պառկեց եւ ոչ միայն չընդունեցին հիւանդանոց, այլեւ՝ չնայելով թուլութեան եւ մարսողութեան կատարեալ խանգարման, նոյնիսկ չյաջողուեց մեզ կերակուրը փոխել տալ։

1890 – 1891

„Prozess"

Յաւելուած 2

Փաստ. 1819-1

Մէկ էջ գրառում Քրիստափորի կողմէ, ուր կը կատարուին սեղմ բայց եւ կարեւոր ճշդումներ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան օրերուն հրատարակուած զոյգ թռուցիկներուն եւ «Դրօշակ»ի առաջին տարիներու տպագրութեան վայրերու եւ այլ հանգամանքներու մասին: 1890 թ. առաջին թռուցիկի մասին կատարուած նշումը՝ «դժբախտաբար ձեռքի տակ չունինք» կը վերաբերի այն իրողութեան, որ «Դրօշակ»ի թիւ 1 թռուցիկ համարուող այդ թերթին բոլոր օրինակները օրին ցարական ոստիկանութիւնը գրաւած էր: Տարիներ ետք, 1917 թ. Ռուսում Պետերբուրգի գաղտնի ոստիկանութեան պահոցներուն մէջ յայտնաբերելով այդ թռուցիկը՝ օրինակ մը ուղարկեց Ժընեւ: Այդ օրինակը այժմ Հ.Յ.Դ. Պոսթոնի կեդր. արխիւատան մէջ կը կրէ No 1-1 համարակալումը:

ԹՌՈՒՑԻԿՆԵՐ
1890-1891

Իր հիմնուելուն պէս, 1890-*ին թուին*, «*Դաշնակցութիւնը վճռելով ունենալ իր օրգան «Դրօշակը», մինչեւ դրա համարների լոյս տեսնելը՝ հրատարակել է երկու թռուցիկ Ռուսաստանում**: *Այդ թռուցիկներից առաջինը տպագրուած* 1890 *թուին՝ դժբախտաբար ձեռքի տակ չունինք: Երկրորդը բաց է թողնուած* 1891 *թուի սկզբին եւ ներկայացնում է մի ընդհանուր տեսութիւն, «Կռիւը սկսած է» վերնագրով: Այդտեղ բերուած են ժամանակակից կեանքից մի շարք փաստեր, որոնք* ..... *տաճկական ճնշումը հայերի պիտի* ..... *վրայ, միւս կողմից՝ ժողովրդի աճումը:*

*) Դաշնակցութեան այս եւ ուրիշ հրատարակութիւններում պատահող «Վիէնա, Դաշնակցութեան ազատ տպարան» ստորագրութիւնը կեղծուած է գաղտնապահական նպատակներով:

«*ԴՐՕՇԱԿ*»

Մինչեւ ներկայ 1901 *թուականը ընդամէնը լոյս է տեսել «Դրօշակի»* 111 *համար: Դրանցից առաջին երկու համարները տպագրուել են Ռուսաստանում, Դաշնակցութեան գաղտնի տպարանում, երրորդ եւ չորրորդ համարները՝ Ռումանիայում, իսկ հինգերորդ համարից սկսած՝ «Դրօշակը» հաստատուել է Ժընէվում: Ահա այդ համարներում պարունակւող նիւթերը:*

Յաւելուած 3

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ցարական Ոստիկանութեան Դեպարտամենտի Յատուկ բաժնի 1905 թուականի թղթածրարը*

«Նրա տունը միշտ բաց էր եւ մշտապէս այցելու ժողովրդով լցուած, որը գնում էր այնտեղ այնպէս, ինչպէս եկեղեցի են գնում աղօթքի»:

Քր. Միքայէլեանի նահատակութեան առիթով՝
Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի 1905 թ. մարտի 13-ի
վրացերէն թռուցիկից

Քրիստափոր Միքայէլեանի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ ժամանակին լոյս են տեսել բազմաթիւ յիշողութիւններ(1), *նամակներ*(2), *իսկ վերջին տարիներին նաեւ՝ արխիւային փաստաթղթեր*(3)։ *Բայց ներկայացուող վաւերագրերի թղթածրարը ոչ միայն լրացնում, այլեւ նկատելիօրէն ընդլայնում ու թարմացնում է Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից մէկի ու ամենաճանաչուած առաջնորդի մասին առկայ գիտելիքներն ու պատկերացումները։ Պատճառն այն է, որ մենք գործ ունենք ցարական Ոստիկանութեան Դեպարտամենտի կուտակած փաստաթղթերի լայն հէնքի վրայ հիմնուած՝ ամփոփիչ, համահաւաք ժողովածուի հետ։*

Քրիստափոր Միքայէլեանի նահատակութիւնից յետոյ՝ 1905 *թուականի ընթացքում, Ոստիկանութեան Դեպարտամենտի Յատուկ բաժնում հաւաքուել ու ամփոփուել են* 1890-*ականներից Հ.Յ.Դ. առաջնորդի վերաբերեալ Կովկասի կառավարչապետի, Թիֆլիսի ու Բաքուի նահանգապետերի գրասենեակներում եւ ժանդարմական վարչութիւններում կուտակուած ու հետագայ տարիներին հարստացուած նիւթերը։ Ստեղծուել է վաւերագրերի մի հարուստ ժողովածու, որը բաղկացած է ցարական Ռուսաստանի զանազան*

*) Այս թղթածրարը տպագրուել է «Վէմ»-ի 2009 թ. թիւ 3-ում:

1) Տե՛ս Քրիստափորի յիշատակին, Կ. Պոլիս, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, 1909:

2) Տե՛ս Քրիստափոր Միքայէլեանի նամակները, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, խմբ. Հրաչ Տասնապետեան, Պէյրութ, 1993:

3) Տե՛ս Գէորգ Խուդինեան, Նորայայտ վաւերագրեր Հ. Յ.Դաշնակցութեան հիմնադիրների (Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան, Ռոստոմ) 1890-ական թուականների գործունէութեան մասին, «Բանբեր Հայաստանի արխիւների», 2003, թիւ 1, էջ 15-26:

պետական մարմինների կողմից ժամանակին Ոստիկանութեան Դեպարտամենտի տրամադրութեան տակ դրուած զեկուցագրերի ու թղթածրարների առանձին հատուածներից, եւ բազմաթիւ նորայայտ ու հետաքրքրական փաստաթղթերից։ Այսինքն՝ սա ցարական Ռուսաստանի պետական մարմիններում կուտակուած հարուստ նիւթերի համադրութիւնն ու ամփոփումն է՝ Վիտոշի լանջին Հ.Յ.Դ. առաջնորդի նահատակութիւնից անմիջապէս յետոյ։

Նման ներքին հետաքննութեան կազմակերպումը վկայում էր իր կեանքին արդէն հրաժեշտ տուած Քրիստափոր Միքայէլեանի անձի ու գործի հանդէպ ցարական Օխրանայի է՛լ աւելի ուժեղացած հետաքրքրութեան մասին։ Թէեւ Հ.Յ.Դ. առաջնորդը ֆիզիքապէս այլեւս չկար, սակայն նրանով շարունակում էր զբաղուել մի ողջ կայսրութեան պետական ապարատը, որովհետեւ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսում եւ այլ բնակավայրերում Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպած սգոյ արարողութիւնները մեծ հետաքրքրութիւն էին ստեղծում Քրիստափոր Միքայէլեան մարդու եւ քաղաքական գործչի հանդէպ։ Անհրաժեշտութիւն էր առաջացել պարզելու, թէ ով էր այն «Հայ Քրիստափոր Միքայէլեանցը», «Միքալիանցը», կամ՝ «Միքալեանցը», որի թարմ յիշատակը խնկարկում է մի ողջ ժողովուրդ։

Ըստ այդմ՝ հրապարակուող թղթածրարը առանձնայատուկ է մի քանի առումով։

Առաջին, սա «յետմահու հետաքննութիւն» է, ինչը պայմանաւորուած է նրանով, որ Բուլղարիայում զոհուած Քրիստափոր Միքայէլեանի գործը շարունակւում էր նրա նահատակութիւնից յետոյ՝ ողջ Կովկասը ցնցող Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական պայքարի տեսքով։

Երկրորդ, սա ներքին հետաքննութիւն է, այսինքն՝ նախորդ տարիներին Ոստիկանութեան Դեպարտամենտում քաղաքական գործերի քննութեամբ զբաղուող հիմնական օղակի՝ 3-րդ բաժանմունքի միջոցով Քրիստափոր Միքայէլեանի մասին կուտակած առաւել կարեւոր տեղեկութիւնների մատուցումն այդ չարագուշակ հաստատութեան Յատուկ բաժնին։ Դրանց մի մասը համառօտ քաղուածքներ են՝ նախորդ շրջանում կատարուած հետաքննութիւններից, միւսները՝ ամբողջական փաստաթղթեր։ Բնական է, որ այդ ամէնին գումարուել են նաեւ վերջին պահին Թիֆլիսից ստացուած թարմ տեղեկութիւնները՝ Քրիստափոր Միքայէլեանի մահուան կապակցութեամբ Հ.Յ.Դ. կազմակերպած սգոյ արարողութիւնների մասին։

Երրորդ, սա Ոստիկանութեան Դեպարտամենտի կողմից հաւաքած ու բազմիցս ստուգուած թերեւս ամենաճշգրիտ տեղեկութիւնների ամփոփումն է, քանզի Յատուկ բաժնի փաստաթղթերում շարադրւում էր այն ամէնը, ինչին ի զօրու էր տեղեկանալ միայն կայսրութեան բարձրագոյն ղեկավարութիւնը։

Այսպիսով մենք գործ ունենք իր ընոյթով եզակի փաստաթղթերի ժողովածուի հետ, որը ԽՍՀՄ-ի գոյութեան շրջանում՝ 1967 թուականին Ոստիկանութեան Դեպարտամենտի կենտրոնական մարմինների արխիւներն ամփո-

փող՝ Հոկտեմբերեան յեղափոխութեան եւ սոցիալիստական շինարարութեան կենտրոնական պետական արխիւում (ք. Մոսկուա) ֆոտոպատճէնի է վերածել, այսինքն՝ լուսանկարել ու տեղափոխել է ժապաւէնի վրայ ԽՍՀՄ Մինիստրների սովետի Գլխաւոր արխիւային վարչութեան միկրոֆոտոլաբորատորիայի աշխատակից Տարասկինան։ Նոյն շրջանում նշուած արխիւից, այժմ՝ Ռուսաստանի Դաշնութեան պետական արխիւ, ֆոտոժապաւէնը տեղափոխուել է Երեւան եւ պահուել Հայաստանի ազգային արխիւի Հաւաքածուների ֆոնդում, որն ամփոփում է նախկին ԽՍՀՄ-ի տարբեր քաղաքներից ստացուած՝ Հայաստանին ու հայերին վերաբերող փաստաթղթերի ֆոտոպատճէնները։

Տարիներ առաջ մենք ամբողջովին արտագրել ենք Մոսկուայից ստացուած այդ ծաւալուն եւ դժուարընթեռնելի ֆոտոպատճէնը։ Ներկայ հրապարակումը պատրաստելու ընթացքում փորձելով ՀԱԱ Հաւաքածուների ֆոնդից կրկին պատուիրել նոյն ժապաւէնը՝ պարզեցինք, որ ան այլեւս իր տեղում չէ։ Յուսանք, որ կորուստը ժամանակաւոր անփութութեան արդիւնք է, բայց կարեւորն այն է, որ այս եզակի ֆոտոժապաւէնի պարունակութիւնը փրկուել է մոռացութիւնից եւ հրապարակւում է իր ամբողջական տեսքով։ Դա հնարաւորութիւն կը տայ ո՛չ միայն օգտուել հրապարակուող փաստաթղթերում առկայ կոնկրետ նիւթերից, այլեւ Մոսկուայում գտնուող Ռուսաստանի Դաշնութեան պետական արխիւում յայտնաբերել ժապաւէնի թղթային բնօրինակը։ Աւելին, նրանում նշուող Ոստիկանութեան Դեպարտամենտի կազմած գործերի կոնկրետ համարների միջոցով հնարաւոր է գտնել նաեւ այն փաստաթղթերը, որոնց թուական տուեալները բերուած են Յատուկ բաժնի այս ամփոփ թղթածրարում։

Սոյն հրապարակման մէջ ներկայացուող՝ 34 թերթից բաղկացած ֆոտոպատճէնում առկայ փաստաթղթերի մեծագոյն մասը տպագրւում է առաջին անգամ։ Միայն առաջին երեք թերթերից ոչ մեծ մէջբերումներ են արուել մինչ օրս լոյս տեսած ընդամէնը մէկ աշխատութեան մէջ(4)։

ՅԱՍՄԻԿ Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

---

4) Տե՛ս Գէորգ Խուդինեան, Հ. Յ. Դաշնակցութեան քննական պատմութիւն, Եր., 2006, էջ 163, 177, 184, 198: Վերջում ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել «Քրիստափոր Միքայէլեան. կեանքը. գործունէութիւնը, աշխարհայեացքը» ատենախօսութեանս գիտական ղեկավար, պատմական գիտութիւնների դոկտոր Գէորգ Խուդինեանի, որի յամառ պահանջով՝ ժամանակին կարողացայ արտագրել ու թերեւս նաեւ՝ անհետացումից փրկել Ոստիկանութեան Դեպարտամենտի Յատուկ բաժնի այս ընդարձակ թղթածրարի ֆոտոպատճէնը:

No 594
Յատուկ բաժին

ԳՈՐԾ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԿՐՏԻՉԻ (ՆԻԿԻՏԻՆ) ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑԻ (ՄԻՔԱԼԻԱՆՑԻ) ՄԱՍԻՆ

Սկիզբ՝ 1898 թ.
Վերջ՝ 189- թ.

Մտ. N 17887 Տեղեկագիր կազմելու ժամանակը «24» հոկտ. 1895 թ.	կովր. 8933 Տեղեկանք 3-րդ գործավարութեան	Գործ N 18-- թ.
Ազգանուն, անուն, հայրանուն	Միքայէլեանց Քրիստափոր Մկրտիչի (Նիկիտին)	Գործեր, որոնց հիման վրայ կազմուած է տեղեկանք
Կոչումը եւ ծագումը	Երեւանի նահանգի Նախիջեւանի գաւառի Ագուլիս գիւղի բնակիչ	
Դաւանանքը	Հայ-Գրիգորեան	
Ծննդեան թիւը եւ տեղը		
Բնակութեան վայրը	ք. Թիֆլիս	
Դաստիարակութեան վայրը (միջնակարգ եւ բարձրագոյն)	Թիֆլիսի Ալեքսանդրեան Ուսուցչական ինստիտուտ	
Զբաղմունքները եւ ապրուստի միջոցները		
Գտնւո՞ւմ է ոստիկանութեան գաղտնի հսկողութեան տակ եւ սահմանափակուած չէ՞ արդեօք բնակավայր ընտրելու իրաւունքի մէջ		
Ընտանեկան դրութիւնը եւ ազգակցական կապերը	Սպանուել է 1905 թ. մարտի 17-ին Կնեաժեւոյում (Բուլղ.) պայթիւնի արդիւնքում	

1890 թ., էջ 378
(Թերթ 2)

Ոստիկանութեան Դեպարտամենտում գաղտնի որոնումների միջոցով ստացուել է ոստիկանութեան գաղտնի հսկողութեան տակ գտնուող ազնուականուհի Եւգենիա Կոստանտինովնա Լաւրուսեւիչի(5) կողմից (ծնունդով՝ Բաբուշկինա) 1890 թ. ապրիլի 6-ին Թիֆլիսից գրուած նամակն իր նախկին ամուսնուն՝ Միխայիլ Կոնդրատեւ Լաւրուսեւիչին(6), որում, խօսելով յարմար զբաղմունք փնտռելու անհնարինութեան պատճառով Թիֆլիսից այլ քաղաք բնակութեան տեղափոխուելու իր մտադրութեան մասին, նա ի միջի այլոց յայտնել է հետեւեալը. «Եւ զուտ իմ անձնական տեսանկիւնով եւս ինձ համար իմաստ չունի այստեղ քարշ դալ. Քրիստափորը Ագուլիսում է եւ հաւանաբար այնտեղ կը մնայ նաեւ յաջորդ ձմռանը։

1890 թ., էջ 607
(Թերթ 2)

Յուլիսի 15-ին Եւգենիա Լաւրուսեւիչը յայտնում էր իր ամուսնուն. «Շաբաթ օրը՝ 7-ին, եկաւ Քրիստափորը եւ տեղաւորուեց Արշակի(7) մօտ։ Քրիստափորն աշնանը նորից մեկնում է Ագուլիս,— դրանով արդէն շատ բան է ասուած»։

1890 թ., էջ 647
(Թերթ 2)

1890 թ. օգոստոսի 15-ին Լաւրուսեւիչը ամուսնուն գրել է հետեւեալը.

«Քրիստափորի ընկերները գրեթէ պարտաւորեցրել են մնալ Թիֆլիսում, բայց Ագուլիսի հասարակութեան առջեւ նա պարտականութիւններ ունի, որոնք անտեսել բացարձակապէս չի ցանկանում։ Սակայն նկատի ունենալով, որ այստեղ գործն աւելի լայն է ու ծաւալուն (իսկ թէ ինչ գործ է դա, ես կը բացատրեմ քեզ նամակով, որը կ՚ուղարկեմ Սեմիբրատովայի հետ, հիմա այդ մասին յարմար չէ գրելը), եւ նրան այստեղ ոչ ոք չի կարող փոխարինել, նա որոշել է մնալ այստեղ, բայց մտածում է մէկ-երկու ամսով գնալ Ագուլիս, որպէսզի այնտեղ ինչ-ինչ գործեր կարգաւորի եւ հասցնի իր փոխարէն այլ մարդու նշանակել։ Այստեղ այնպիսի լարուած ժամանակներ են, որ իւրաքանչիւր օր կարող ենք սպասել ինչ-որ սարսափելի նորութիւնների եւ իրադարձութիւնների։ Ամէն դէպքում դժուար թէ կարելի է դէպքերի խաղաղ ընթացք ակնկալել»։

1890 թ., էջ 650
(Թերթ 2-3)

Սուսաննա Քանանովան(8) 1890 թ.օգոստոսի 24-ին Թիֆլիսից իր քեռուն՝ Մոսկուայի համալսարանի պրոֆեսոր Եուրի Ստեփանով Գամբարովին(9) յայտնում էր հետեւեալը. «Միքայէլեանցը՝ Ագուլիսի դպրոցի տեսուչը, Թիֆլիսում միանգամայն յստակ կերպով ինձ ներկայացրեց այստեղի բոլոր խմբակցութիւնները, խօսեց դրանց մասին առանց որեւէ խորհրդաւորութեան, միագամայն պարզ եւ յստակ՝ չվախենալով որեւէ հետեւանքից։ Նրա կողմից գործի նկարագրումից յետոյ, ինձ մօտ է՛լ աւելի ցանկութիւն առաջացաւ, որքան հնարաւոր է շուտ ծանօթանալ գործի բոլոր մանրամասնութիւնների, նրա մասնակիցների եւ մասնակցուհիների հետ, ցանկացայ նրանում հնարաւորին չափ ջերմ մասնակցութիւն ունենալ։ Արիւնոտ տեսարանները, ամէնուր տեղի ունեցող ապստամբութիւնները, խլրտումները, թոյլ չէին տալիս ինձ գիշերները հանգիստ քնել։ Այսքան բարի նպատակների համար գումարներն այնքան անհրաժեշտ են, որ իւրաքանչիւր ազատ կոպէկ ցանկանում եմ այնտեղ յանձնել»։

1889 թ., գ. 1061, մ. 2
մտ. 11015
(Թերթ 3-4)

Արուած հարցմանն ի պատասխան՝ Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչութեան պետը 1890 *թ. սեպտեմբերի* 27-*ի* N 463 *գրութեամբ տեղեկացրեց, որ Անդրկովկասեան երկաթգծի վարչութիւնում ծառայող Եւգենիա Լաւրուսեւիչը խելացի կին է, հետեւողական սոցիալիստ է, փայլուն կերպով տեղեակ է ընդյատակեայ ագիտացիայի հնարքներին, եւ նրա ծանօթների նեղ շրջանակին են պատկանում՝ ոստիկանութեան յատուկ հսկողութեան տակ գտնուող Եակով Աֆանասեւ Դանկոն իր կնոջ՝ Մարիայի հետ, հեռագրավարուհի Մելանիա Գրաժդանկինան եւ* 1890 *թ. ամռանը Ագուլիսից ժամանած Քրիստ. Միքալիանցը, որի հետ Լաւրուսեւիչը գտնւում է մտերմիկ կապի մէջ։ Գեներալ-մայոր Եանկովսկու կարծիքով՝ Միքալիանցի գործելակերպը «բերում է նրա լիակատար քաղաքական անբարեյուսութեան մասին համոզմանը»։ Նա Երեւանի նահանգի, Նախիջեւանի գաւառի Ագուլիս գիւղի բնակիչ է, Թիֆլիսի Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտի գիտութիւնների դասընթացն աւարտելուց յետոյ գնացել է Ռուսաստան՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար, վերադառնալով այնտեղից, Թիֆլիսում որոշ ժամանակ ապրել է առանց որոշակի զբաղմունքների, իսկ յետոյ ստանձնել է Ագուլիսի ծխական դպրոցի աւագ ուսուցչի պաշտօնը։* 1890 *թ. յունուարի վերջին կամ փետրուարի սկզբին նա Թիֆլիսից մեկնել է Ագուլիս՝ մտադրուելով այնտեղ մնալ երկար ժամանակ։*

Ամրանը վերադառնալով Ագուլիսից, նա սկզբում բնակուել է «Եուժնիէ նոմերա» հիւրանոցին մօտ գտնուող թաղամասում, որտեղ ապրում էր Լաւրուսեւիչը, բայց քանի որ այդ ժամանակ վերջինիս նկատմամբ գաղտնի հսկողութիւն էր իրականացւում, նա, հաւանաբար զգուշանալով յայտնաբերուելուց, տեղափոխուել է այլ բնակարան՝ Նաբերեժնայա փողոցի Էմինովին պատկանող N 32 տուն, որը նոյնպէս երեք օրից լքել է, իսկ յետոյ յայտնի չէ որտեղ է ապրել, ընդ որում պարզուել է միայն, որ նա շատ յաճախ գալիս էր գիշերելու ժառանգական պատուաւոր քաղաքացի Արշակ Իւանով Տէր-Գրիգորեանցի մօտ։ Իրեն լաւ ծանօթ Վարտանէս Պապազեանցի միջնորդութեամբ Միքալիանցը աշխատակցի տեղ ստացաւ հայկական «Մշակ» թերթում։ Լաւրուսեւիչի եւ Միքալիանցի այլ ծանօթների թուին են պատկանում, հրէուհի Ռախա Լեւիտեսը, Նինա Միխայլովա Սեմիբրատովան, Մարիա Բաքրաձէն, Նաչվալովան, Եւգենիա Կարպուխովան,— քաղաքական յանցագործ Նիկուլինի քոյրը եւ ոմն Վասիեւա, որը գեներալ-մայոր Եանկովսկու կարծիքով՝ «եօթանասունական թուականների սկզբին «նարոդնիկների» խմբակցութեանը պատկանող մութ անցեալով անձնաւորութիւն է»։ Այդ բոլոր անձինք՝ Լաւրուսեւիչի ղեկավարութեամբ, քիմիա էին պարապում մօտ ապագայում մանկաբարձական դասընթացներ ընդունուելու համար։ 1890 թ. գարնանը նշուած խմբակը հաւաքւում էր Բուսաբանական այգում, իսկ յուլիսի վերջից՝ Տէր-Գրիգորեանցի մօտ, որն ապրում էր քաղաքի հեռաւոր, խուլ մասում։ Միքալիանցի գալուց յետոյ հաւաքները տեղի էին ունենում մէկ նրա եւ Լաւրուսեւիչի ընդհանուր բնակարանում, մէկ էլ առաջուայ նման Տէր-Գրիգորեանցի մօտ։ Այս կամպանիայի մէջ էր պտտւում նաեւ Թիֆլիսում գաղտնի հսկողութեան տակ գտնուող Եգոր Զերենկովը, որը խմբում կրում էր «Ֆեդեա» մականունը(10)։

1890 թ., էջ 906
(Թերթ 4)

Վերոյիշեալ Մարիա Բաքրաձէն 1890 թ. նոյեմբերի 4-ին Փարիզից հաղորդել է Եւգենիա Լաւրուսեւիչին հետեւեալը. «Քրիստափորի եւ Կ-ի գործունէութեան, աւելի ճիշտ՝ գործերի վիճակի մասին ընդհանրապէս, որոնցում նրանք մասնակցութիւն են ունենում, ես այստեղ իմանում եմ այն նոյն Զաքոյից(11), որի մասին ես տեղեկացրել եմ, քանի որ հնարաւոր չէ Թիֆլիսից ինչ-որ բան ստանալ։ Հաւանաբար չի կարելի գրել այդ մասին, ես դրանով մխիթարւում եմ, որովհետեւ խնդրել էի Արշակին գրել։ Ինձ հետաքրքրեց՝ ի՞նչ առարկայ էր ուզում ուղարկել Քրիստափորը, թէ՞ դրա մասին էլ գրել չի կարելի։ Ցարգանքներս հաղորդիր Զաւրիեւային»։

1891 թ. գ., 180, մ. 1
1890 թ. — 922, 4-րդ գործ.
(Թերթ 4-5)

Վերոյիշեալ Արշակ Տէր-Գրիգորեանցը 1890 թ. նոյեմբերի 14-ին Թիֆլիսից Փարիզ՝ Մարիա Բաքրաձէին գրած նամակում տեղեկացնելով այն ոգեւորութեան մասին, որով պատրաստւում են ժողովրդական ազատագրութեան գործին գաւառում՝ Երեւանի եւ Ելիզավետպոլի նահանգներում եւ, գանգատուելով հայկական շարժման թիֆլիսեան պարագլուխների անգործութիւնից, ի միջի այլոց գրում էր հետեւեալը. «Երբեմն լինում են Քրիստափորի մօտ. նա Եւգենիա Լաւրուսեւիչի հետ ապրում է, այսպէս ասած, երգ ու պարով, Եւգենիան նոյնիսկ սկսել է սովորել հայերէն, հասկանալի է՝ ոչ թէ գործի, այլ մարդու համար։ Յիշէք իր իսկ բնակարանում նրա ճառերը՝ հայրենասիրութեան, կոսմոպոլիտիզմի եւ այլ «իզմերի» մասին, գիտէ՞ք ինչ, ես սիրում եմ, երբ մարդիկ ուղիղ են գնում եւ անում են այն, ինչն իրենք են զգում...»։

1890 թ., էջ 974
(Թերթ 5)

1890 թ. նոյեմբերի 24-ին Լաւրուսեւիչը Կիեւ՝ Նինա Սեմիբրատովային գրում էր հետեւեալը. «Քրիստափորը այնպիսի հրաշալի մարդ է, որ հնարաւոր չէ նրան չսիրել։ Նա կենդանի գործի, աշխատանքի մարդ է, որոնք նրա հետ ինչ որ մէկ ամբողջութիւն են կազմում, աշխատանք՝ յանուն գաղափարների — դա նրա միս ու արիւնն է։ Նա վերին աստիճանի գործունեայ մարդ է եւ սէրը մարդկանց նկատմամբ ու նրանց համար աշխատելու ցանկութիւնը նրա մօտ գերիշխում են մնացած ամէն ինչի հանդէպ։ Մեզ մօտ փնթփնթացող մարդիկ շատ կան, շատ են խօսողները, շատ են նաեւ զբաղուողները, բայց շատ քիչ են իսկապէս եռանդուն աշխատողները. նա պատկանում է այդ վերջին փոքրամասնութեանը։ Ես չեմ տարուել նրանով։ Քրիստափորի սէրն ինձ համար շատ մեծ բան է, եւ ես չգիտեմ, թէ ինչպէ՞ս կ՚ապրէի առանց դրա։ Բայց երկա՞ր է տեւելու արդեօք այս երջանկութիւնը։ Չէ՞ որ դու գիտես, թէ ինչ ժամանակներ են հիմա. եթէ ոչ այսօր, ապա վաղը նա կը գնայ աշխատանքների շրջապտոյտի մէջ, մեծաթիւ զոհեր են լինելու, շատ կեանքեր են խորտակուելու, իսկ նա կը դիմանա՞յ արդեօք։ Այդ մասին երազելն անգամ աւելորդ կարող է լինել ու քանի որ այլ ելք չկայ, ապա հարկ է լինում հաշտուել այն մտքի հետ, որ ես էլ կը գնամ նրա յետեւից՝ ամէն տեղ, եւ ինձ հետ էլ կը կատարուի այն, ինչը նրա հետ է լինելու։ Բայց ի՞նչ կը լինի, ինչո՞վ այս ամէնը կը վերջանայ, ոչ ոք հաստատ ասել չի կարող։ Մնում է միայն սպասել։ Հասկացա՞ր դու ինձ արդեօք։ Յաճախ գրիր(12)»։

1890 թ., էջ 975
(Թերթ 5)

Նոյն ամսաթուով Եւգենիա Լաւրուսեւիչը գրում էր Կիեւ՝ Միխայիլ Լաւրուսեւիչին, հետեւեալը. «Մենք առաջուայ պէս ենք ապրում, նախկինի պէս Քրիստափորը սակաւ է տանը լինում, քանի որ շատ գործեր ունի, առաջուայ պէս օրերով ժողովուրդը մեզ մօտ է հաւաքւում»։

1890 թ., էջ 1013
(Թերթ 5)

Նինա Սեմիբրատովան 1890 թ. դեկտեմբերի 1-ին գրում էր Եւգենիա Լաւրուսեւիչին. «Ես այնքա՛ն լաւ հասկացայ, թէ ինչ ես դու գրում Քրիստափորի մասին. նոյն տպաւորութիւնն է թողնում նաեւ Միխայիլը (այսինքն՝ Լաւրուսեւիչը), տեսնում ես, որ մարդն իր կեանքում շատ բան է տարել, բայց միեւնոյն ժամանակ այդ մարդը ոչ մի բանի առաջ կանգ չի առնի, պատրաստ է իրեն ամբողջովին նուիրել ուրիշներին։ Իսկ մի՞թէ շատ են նմանները։ Մէկ, երկու եւ հաշիւը վերջացաւ»։

1891 թ., էջ 108
(Թերթ 6)

1891 թ. յունուարի 9-ին Եւգենիա Լաւրուսեւիչը գրում էր Մարիա Բաքրաձէին՝ Փարիզ. «Մենք առաջուայ պէս ենք ապրում։ Քրիստափորը նոյն կերպ զբաղուած է առաւօտից երեկոյ, իսկ եթէ տանն էլ լինում է, ապա ժողովուրդն անդադար գալիս ու գնում է, շարունակաբար ինչ-որ բանակցութիւններ են տարւում։ Արշակը նոյնպէս անընդհատ վազում է՝ առաւօտից երեկոյ...»։

1891 թ., գ. 131, 3-րդ գործ.
1891 թ., էջ 286
(Թերթ 6)

Գաղտնի որոնումների միջոցով Դեպարտամենտում ստացուել էր նամակ. «Արա-Գեղեցիկ՝ Ռուշչուկից(13), 1891 թ. փետրուարի 23-ին, հասցէագրուած Եւգենիա Լաւրուսեւիչին՝ «Քրիստափորի համար» ստորագրութեամբ, հետեւեալ բովանդակութեամբ. «Ժամանելով Ռուշչուկ՝ մենք սկսեցինք հաւաքել տեղեկութիւններ այստեղի հայերի մասին։ Պարզւում է, որ նրանք բաժանւում են 3 խմբի, այսինքն՝ Մարսելցիների(14), Զէյթունցինե-

րի(15) *եւ Զուռնաչիստների*(16)։ *Առաջին երկու կուսակցութիւնները նախկինուն իրենցից բաւականին զգալի ուժ էին ներկայացնում եւ մեծ գումարներ էին կլանում։ Բայց ներկայումս Զուռնաչիստների գործողութիւնների ուժեղացման հետեւանքով նրանք կորցրել են իրենց նշանակութիւնը։ Իմ այստեղ մնալը նպատակ ունէր նաեւ ամրապնդել միութիւնը Ժնեւցիների հետ, որի հետեւանքով ես նրանց յայտնեցի պայմանները, բայց պարզուեց, որ նրանք դրանք չեն ստացել։ Այժմ մնում է միայն գնալ այնտեղ եւ անձամբ վերջացնել այս հարցը։ Ես վստահ եմ, որ դա յաջողութեամբ կը պսակուի եւ ամէն ինչ լաւ կը լինի։ Այնուհետեւ մենք կը զբաղուենք տեղացի գաղթականների մէջ մեր տպագիր ստեղծագործութիւնների տարածումով, եւ վերջապէս՝ այն կարեւոր հարցով, որը քեզ եւ ինձ է յայտնի։ Այժմ մնում է միայն քեզնից ստանալ քրդական քոլոզներ։ Զ-ն*(17) *ուզում է միանալ ձեր կուսակցութեանը, բայց դուք նրան մի ընդունէք, քանի որ հակառակ դէպքում ձեր գործիչներից շատերը կը հրաժարուեն ձեր կուսակցութեանը մասնակցելուց։ Գլխաւորն այն է, որ նա ոչինչ չպէտք է իմանայ ինձ եւ քեզ յայտնի հարցի մասին»։*

Այս ամէնը ի նկատի ունենալով՝ Ոստիկանութեան Դեպարտամենտը 1891 *թ. մարտի* 19-*ին* N 1241-286-*ով խնդրում էր Թիֆլիսի Նահանգային Ժանդարմական վարչութեան պետին յատուկ ուշադրութիւն դարձնել Միքալիանցի գործունէութեանը եւ յարաբերութիւններին։*

1891 *թ.*, *գ.* 180, *մ.* 2, 4-*րդ գործ.*
1891 *թ.*, *էջ* 321
(*Թերթ* 6-7)

1891 *թ. մարտի* 15-*ին Թիֆլիսից Քրիտափոր Միքայէլեանցը Ղարասու Բազարի հայկական դպրոցների աւագ ուսուցիչ Զախար Ումիկովին*(18) *է ուղարկել նամակ հետեւեալ բովանդակութեամբ. «Ձեր հաւաքած մարդկանց պահէք պատրաստ վիճակում եւ զինէք նրանց ինչպէս հարկն է, իսկ ճանապարհելու ժամանակի մասին հաղորդէք անմիջապէս։ Ներկայումս հրացանների մեծ պակաս ենք զգում։ Այստեղ՝ սահմաններին մօտ գտնուող քաղաքներում, աշխատել են հեռացնել ոստիկանութիւնում ծառայող բոլոր հայերին։ Երեւում է մեզ կասկածում են եւ սկսում են հետապնդել, բայց առայժմ մեզ ոչինչ չեն կարող անել։ Ժողովուրդը, տեսնելով նման արարքները, բացում է իր աչքերը եւ թուրքերից անկախ, աւելի ու աւելի է տրամադրւում իր թշնամիների դէմ։ Էրզրումից մենք ստանում ենք հաճելի նորութիւններ. հաղորդում են, որ այնտեղ գործերը շատ լաւ են ընթանում։ Առկայ են երկու զինապահեստներ եւ շուտով Մուշ կը մեկնեն երեք հրաշալի ուժեր։ Կռուել ցանկացողները շատ են... Շուտով Կ-ն*(19) *ձեր կողմերում կը լինի. նրան կարող էք լիովին վստահել»։*

Սոյն նամակի պատճէնը ուղարկուել է Կովկասի Քաղաքացիական մասի

կառավարչին՝ Ներքին գործերի նախարարի տեղակալի, Ոստիկանութեան պետի 1891 *թ. մարտի* 28-*ի* N 713 *նամակով եւ լրացումով, որ ի նկատի ունենալով Միքալիանցի ագիտատորական գործունէութիւնը, կարծում ենք, հարկ է նրան աքսորել Կովկասից։*

մտ. 2918
(*Թերթ* 7)

Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչութեան պետը 1891 *թ. մայիսի* 3-*ին* N 343-*ով տեղեկացրել է, որ գեներալ ադյուտանտ Շերեմետեւի կարգադրութեամբ Միքալիանցի եւ նրա բնակակցուհի Եւգենիա Լաւրուսեւիչի մօտ ապրիլի* 16-*ին խուզարկութիւն է կատարուել, ընդ որում, բացի ըստ երեւոյթին՝ քաղաքականապէս անբարեյոյս տարրերի պատկերող մի քանի ֆոտոնկարներից, դատապարտելի ոչինչ չի յայտնաբերուել։ Միքալիանցը ժամանակաւորապէս կալանուել է Մետեխի բանտում, որից յետոյ աքսորուել է Նովոչերկասկ՝ մէկ տարուայ ընթացքում Կովկաս վերադառնալու արգելքով։ Նրա հետ միասին մեկնել է նաեւ Եւգենիա Լաւրուսեւիչը։*

մտ. 3129
(*Թերթ* 7)

Դոնի Մարզային ժանդարմական վարչութեան պետը 1891 *թ. մայիսի* 14-*ին* N 412-*ով Դեպարտամենտին հաղորդել է, որ Քրիստափոր Մկրտիչի Միքալիանցը մայիսի* 6-*ին ժամանել է Նովոչերկասկ՝ Թիֆլիսի ոստիկանապետի տուած տեղափոխման վկայականով, եւ որ նրա նկատմամբ սահմանուած է գաղտնի հսկողութիւն։*

1891 *թ.*, *գ.* 131
1891 *թ.*, *էջ* 622
(*Թերթ* 7-8)

Եւգենիա Լաւրուսեւիչը Նովոչերկասկից՝ Թիֆլիս, բուժակուհի Եկատերինադարիդոնին 1891 *թ. յունիսի* 17-*ի նամակում դժգոհել է իր եւ Միքալիանցի հանդէպ Նովոչերկասկի Ոստիկանապետի կողմից գործադրուող ճնշումներից, ինչը ի նկատի ունենալով Դեպարտամենտը* 1891 *թ. յուլիսի* 3-*ին* N 2912-622-*ով խնդրել է Դոնի Մարզային ժանդարմական վարչութեան պետին հաղորդել տեղեկութիւններ Նովոչերկասկում Միքալիանցի զբաղմունքների եւ կապերի մասին։*

մտ. 7783
(*թերթ* 8)

Գնդապետ Ստրախովը 1891 *թ. յուլիսի* 10-*ի* N 623-*ով տեղեկացրել է, որ Միքայէլեանցը ցանկութիւն է արտայայտել ապրելու Քիշինեւում, որի հետեւանքով յունիսի* 25-*ին Նովոչերկասկի Ոստիկանապետի կողմից նրան տրուել է անարգել Քիշինեւ տեղափոխուելու վկայական, եւ այդ մասին հաղորդուել է Քիշինեւի ոստիկանապետին։*

գ. 510, *մ.* 1
(*թերթ* 8)

Կովկասում հայ ազգային շարժման ուժեղացման մասին տարբեր աղբիւրներից ստացուած տեղեկութիւնների հիման վրայ Ոստիկանութեան Դեպարտամենտը 1892 *թ. հոկտեմբերի* 14-*ին* N 5179-*ով առաջարկել է Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչութեան պետին սահմանել ամենամանրակրկիտ գաղտնի հսկողութիւն՝ առաւել յայտնի ագիտատորների, այդ թւում եւ Միքալիանցի նկատմամբ՝ նրանց հետաքննութեան մէջ ներգրաւելու համար բաւարար տուեալներ յայտնաբերելու նպատակով։*

մտ. 6568
(*թերթ* 8)

Գեներալ-մայոր Եանկովսկին 1893 *թ. մայիսի* 25-*ի* N 433-*ով հաղորդում է, որ առկայ տեղեկութիւնների հիման վրայ նա յանգել է այն համոզմանը, որ գինեվաճառ Արշակ Տէր-Գրիգորեանցը, Աբրահամ Դոստակովը*(20), *Գաւրիիլ (Գաբօ) Միրզոեւը, բժիշկ Իւան Լոռիս-Մելիքովը, Քրիստափոր Միքայէլեանցը, Յակոբ Դեւոսիանը, Վագարտան (Վարդան — Յ. Հ.) Մաթեւոսեանցը եւ Ստեփան Լիսիցիանը*(21) *կազմում են թուրքահայերի կարիքների համար անհրաժեշտ գումարների հաւաքման հարցում գործուն մասնակցութիւն ունեցող անձանց խմբակ։ Նախկինում նրանց հաւաքները տեղի էին ունենում տարբեր մասնաւոր բնակարաններում, վերջին ժամանակներում նրանք իրենց հաւաքները տեղափոխել են Բարոնսկայա փողոցի Սահակովի տանը գտնուող Հայկական գրքերի տարածման ընկերութեան*(22) *շէնք եւ Արշակ Տէր-Գրիգորեանցի գինու մառան։ Այդ խմբակի վրայ, այսպէս ասած գերագոյն ղեկավարութիւնն իրենց վրայ են վերցրել Թիֆլիսի Դումայի անդամ Իզմայիլովը՝ Քաղաքային վարչութեան փաստաբէն մշտական անդամը եւ Աբգար Իոննիսիանին*(23), *ինչպէս նաեւ Թիֆլիս նահանգի պետական գոյքի կառավարիչ Խատիսովը, այս երեք դէմքերը, կարելի է ասել իրենցից ներկայացնում են ամենալուրջ ուժը, քանի որ հայ հասարակութեան մէջ մեծ*

ազդեցութիւն եւ հայկական թերթերի աշխատակիցների թւում՝ հաւատարիմ մարդիկ ունեն։

[Ստորագրութիւն]

95 թ. մտ. 18406, էջ 1073, 1722 եւ 1986-92 թ.
մտ. 14671, գ. 510, մաս 4
(Թերթ 9-12)

Պատճէն

Ներքին գործերի մինիստրութիւն
Ոստիկանութեան Դեպարտամենտ
Ըստ «3-րդ» գործավարութեան
«9» նոյեմբերի 1895 թ.
N 234

Ընթացիկ տարուայ մայիսին Ոստիկանութեան Դեպարտամենտում ստացուել են գործակալական ցուցումներ, որ Թաւրիզում գտնուող հայ ագիտատորները Թիֆլիսի «Կովկաս» հայկական թերթի խմբագրութեան հաշուապահ Իոսիֆ Աւետով Կիրակոսովի միջոցով յարաբերութիւններ են պահպանում ոմն «Քրիստափորի» հետ, որին են յանձնարարել զինագործական արհեստանոցի համար լաւ պատրաստուած հրահանգիչների փնտռտուքը, այն հաշուարկով, որ յուլիսին նրանք արդէն Թաւրիզում լինեն եւ բաշխուեն ըստ տեղերի։ Ընդհանրապէս «Քրիստափորի» կապերի բնոյթը Պարսկաստանի իր համախոհների հետ ցոյց է տալիս նրա հայկական շարժման լուրջ գործիչ լինելը, որը Պարսկաստան է ուղարկում դրամի բաւական մեծ գումարներ։ Այս առիթով կատարուած հարցմանն ի պատասխան Կովկասի Քաղաքացիական մասի կառավարչի գրասենեակը Դեպարտամենտ է ուղարկել Թիֆլիսի նահանգապետի ս/թ օգոստոսի 30-ի N 869 կարծիքը, որից հետեւում է, որ Իոսիֆ Աւետով Կիրակոսովը մօտ է հետեւեալ անձանց. Նիկոլայ Մատինեանի՝ ծառայող ֆրանսիական հիւպատոսարանում, Ստեփան Քանանեանցի՝ Թիֆլիսի երեքդասեայ Արհեստաւորական ուսումնարանի աշակերտ, Բաքու մեկնած Յովհաննէս Բարխուդարեանցի, դրամափոխ Ալեքսանդր Ստեպանովի եւ պատրաստի հագուստեղէնի առեւտրական Մարգար Մովսէսեանցի հետ։ Նահանգապետի տեղեկացմամբ՝ բոլոր այս դէմքերը սերտ ընկերութեան մէջ են ինչպէս իրար հետ, այնպէս էլ «Մշակ» հայկական թերթի խմբագիր Ալեքսանդր Քալանթարի, նոյն թերթի աշխատակից Խաչատուր Մալումեանի(24) եւ Ղուկասեանի հետ, որն աշխատում է Էնֆիաջեանցի ծխախոտի գործարանում, ընդ որում՝ յաճախ հաւաքւում են «Մշակի» խմբագրութիւնում՝ տարբեր խորհրդակցութիւնների համար։

Դրանից յետոյ Ոստիկանութեան Դեպարտամենտի 4-րդ գործավարու-

թիւնում գաղտնի գործակալների միջոցով Բաքուից ստացուել է 1895 թ. սեպտեմբերի 18-ի անստորագիր նամակը՝ հասցէագրուած Կիրակոսովին՝ «Քրիստափորի» համար, հետեւեալ բովանդակութեամբ. «Նախորդ նամակին պատասխան չունեմ։ Պապիկը(25) գրում է, որ Պետոն շուտով պէտք է գայ մեզ մօտ, բացի դրանից, մենք լսել ենք, որ դուք էլ էք ստացել նամակ այդ վայրերից, որի պատճէնը ցանկանում էք ուղարկել մեզ։ Պապիկը դժգոհում է, որ իբր թէ դուք մոռացել էք նրա մասին, որ արդիւնքում նրան այնտեղ չեն ուզում ճանաչել որպէս առաջնորդ։ Մի՞թէ իրականում դա այդպէս է։ Որքան ես յիշում եմ, դուք նրան ուղարկեցիք բաւականին կարեւոր յանձնարարութեամբ։

Շուշիի ապրանքներից ստացանք 60 հատ։ Ինչ վերաբերում է մնացած ապրանքի ուղարկմանը, ապա մենք դժուարանում ենք, քանի որ գտնում ենք, որ ամէն մի ապրանքի ուղարկման համար երեք ռուբլու վճարը թանկ է։ Պէտք է անյապաղ եւ ինչքան հնարաւոր է շուտ զբաղուել ապրանքի անցկացման նոր ուղղութեան ընտրութեամբ, քանզի դժուարութիւններ եւ անյարմարութիւններ են հանդիպում։ Լուր է տարածուել Պետոյի(26) ժամանման մասին։ Մենք ենթադրեցինք, որ Իշխանի գալը կը ձգձգուի, ուստի 500 ռուբլի դրամը դեռեւս չենք փոխանցել։ Գրէք՝ շո՞ւտ փոխանցենք դրամը, թէ՞ ոչ։ Ի՞նչ նորութիւններ ունէք ընդհանրապէս, յատկապէս՝ Քոթոթից եւ Արիստակէսից։ Ի՞նչ ձերբակալութիւններ են տեղի ունեցել ձեզ մօտ եւ այլ վայրերում, եւ որո՞նք են ձերբակալութիւնների պատճառները։ Որտե՞ղ է հիմա Աշոտը։ Գրէք հետեւեալ հասցէով. Բաքու, Սամսոն Յովակիմեանցին, Արթիւր Շուբերտի գրասենեակ, Յովակիմեանց բառը երկու անգամ կ՚ընդգծէք»։

Յիշեալ նամակի վերաբերեալ, անցած սեպտեմբերի 29-ի N 7937-1722-ով լիակատար վստահութեամբ յայտնուել է Բաքուի Նահանգային ժանդարմական վարչութեան պետին՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել նամակի հեղինակին գաղտնի կերպով պարզելու համար։ Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչութեան պետին եւս, նոյն ամսաթուի N 7938-1722-ով առաջարկուել է Կիրակոսովին հետեւեալ միջոցով պարզել «Քրիստափորի» անձը։

Անցած հոկտեմբերի 22-ին Դեպարտամենտում ստացուել է գնդապետ Ֆոն-Ֆրանկի հեռագիրը հետեւեալ բովանդակութեամբ. «Թիֆլիսում եւ Բաքուում N 7937-ով նշուած անձանց մօտ պահնորդութեան կարգի համաձայն իրականացուած խուզարկութեան արդիւնքում ստացուել են տեղեկութիւնների փաստացի հաստատումները։ 19-ի եւ 20-ի 6 միաժամանակեայ խուզարկութիւնները տուել են մեծ քանակութեամբ նիւթեր եւ ցուցումներ։ Գանձապահ Դաւթեանցը(27) մեկնել է Թիֆլիս. իմ պահանջի ուշացած կատարումը նրան թաքնուելու ժամանակ է տուել։ Զնայած դրան, յաջորդ պահանջն այն մասին, որ կուսակցութեան ղեկավարը՝ Քրիստափորը, Թիֆլիսում է եւ պէտք է լինի Միքայէլեանցը, կամ Մալումեանը եւ նոյնիսկ Գենջեանը(28), չի կատարուել՝ ցուցումներ չտալու պատճառով։Խնդրում եմ տալ կարգադրութիւն՝ Թիֆլիսում իմ պահանջների յստակ եւ արագ կատարման

մասին։ Հայերը ծայրաստիճան զգօն են, արագութիւն է պահանջւում։ Իմ կողմից ձերբակալուել է Զալիեւը(29)։ 25-ին ստացուած N 688 զեկոյցով պարզել վերոնշեալը։ Մանրամասնութիւնները փոստով»։

Դեպարտամենտը, չունենալով տուեալներ գործի քննարկման համար, նոյն ամսաթուով ուղարկուած հեռագրով սահմանափակուել է գեներալ-մայոր Եանկովսկուն արուած առաջարկով՝ ձերբակալել Դեպարտամենտի N 7938-1722-ում յիշատակուած «Քրիստափորին» եւ միջոցներ ձեռք առնել գնդապետ Ֆոն-Ֆրանկի կողմից նշուած Դաւթեանցի հետախուզման ու ձերբակալման համար, իսկ Միքալիանցի, Մալումեանի եւ Գենջեանցի մասին Դեպարտամենտում առկայ տեղեկութիւնների աւելի ուշադիր քննութեան արդիւնքում Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչութեան պետին հոկտեմբերի 24-ի հեռագրով հաղորդուել է, որ ամենայն հաւանականութեամբ «Քրիստափորը» Ագուլիս գիւղի բնակիչ Քրիստափոր Մկրտիչի Միքալիանցն է։ Գեներալ-մայոր Եանկովսկին հոկտեմբերի 25-ին հեռագրել է Դեպարտամենտին, որ Միքալիանցը եւ Մալումեանը ձերբակալուած են եւ տեղափոխւում են Բաքու, որտեղ պէտք է գտնուի նաեւ հետախուզուող Դաւթեանցը։ Այնուհետեւ ստացուել է նաեւ Բաքուի նահանգային ժանդարմական վարչութեան պետի անցած հոկտեմբերի 16, 18 եւ 25-ի N 637, 692 եւ 728 զեկուցագրերը, որոնք բացատրութիւններ են պարունակում վերոնշեալ հեռագրի մասին եւ նկարագրում են Դեպարտամենտի սեպտեմբերի 29-ի N 7937-1722 կարգադրութեան հետ կապուած նրա գործողութիւնները։ Ըստ պատկանելութեան հաղորդելով վերը շարադրուածի մասին, Ոստիկանութեան Դեպարտամենտի 3-րդ գործավարութիւնը պատիւ ունի 4-րդ գործավարութեանը փոխանցելու. 1) Բաքուի նահանգային ժանդարմական վարչութեան պետի վերոնշեալ 3 զեկուցագրերի պատճէնները, 2) նրանց կցուած Դեպարտամենտի Տնօրէնի ս/թ նոյեմբերի 6-ի N 9309 նամակի տրամադրումը՝ յաւելուածով հանդերձ, 3) «Քրիստափորի» մասին տեղեկութիւններով՝ Դեպարտամենտի հաղորդագրութեան տրամադրումը եւ 4) տեղեկագրեր Քրիստափոր Միքալիանցի եւ խաչատուր Մալումեանի մասին՝ վերջիններս հնարաւորինս կարճ ժամանակուայ ընթացքում վերադարձնելու խնդրանքով։

Այս ամէնին 3-րդ գործավարութիւնը պատիւ ունի աւելացնելու, որ Իոսիֆ Կիրակոսովը անցած հոկտեմբերի 21-ին ձերբակալուել է Թիֆլիսում եւ երկու ժանդարմական ենթասպաների պահակախմբի հսկողութեամբ ուղարկուել է Բաքուի նահանգային ժանդարմական վարչութեան պետի տրամադրութեան տակ։

Ստորագրեց Յատուկ Յանձնարարութիւնների
պետական պաշտօնեայ Ռատաեւ

Ճիշտ է՝ [Ստորագրութիւն]

մտ. 20123
(Թերթ 13)

Պատճէն
Գաղտնի

Ներքին գործերի մինիստրութիւն
Ոստիկանութեան Դեպարտամենտ
Ըստ «4-րդ» գործավարութեան
29 նոյեմբերի 1895 թ.
N 2778

Նոյեմբերի 9-ի N 234 գրութեան հետեւանքով Ոստիկանութեան Դեպարտամենտի 4-րդ գործավարութիւնը անհրաժեշտութեան վերացման պատճառով պատիւ ունի 3-րդ գործավարութեանը վերադարձնել Քրիստափոր Միքայէլեանցի եւ Խաչատուր Մալումեանցի մասին տեղեկագրերը։

Ստորագրեց՝ գործավար
[Ստորագրութիւն]

Ոստիկանութեան Դեպարտամենտի
3-րդ վարչութեանը

մտ. 3414
(Թերթ 14)

Ներքին գործերի մինիստրութիւն
Ոստիկանութեան Դեպարտամենտ
Ըստ «3-րդ» գործավարութեան
1 դեկտեմբերի 1898 թ.
N 1031 [անընթեռնելի է]

Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչութեան պետը ոստիկանութեան գաղտնի հսկողութեան տակ գտնուող Եւգենիա Բաբուշկինային արտասահման հրաւիրելու մասին ս/թ-ի նոյեմբերի 19-ի N 2502 հաղորդագրութեան մէջ յիշատակում էր նաեւ նրա բնակընկերոջ, գաղտնի վերահսկողութեան տակ գտնուող Քրիստափոր Միքայէլեանցի արտասահման մեկնելու վերաբերեալ, ընդ որում, վերջինիս ս/թ-ի հոկտեմբերի 23-ին տրուել է արտասահմանեան անձնագիր՝ Թիֆլիսի նահանգապետի գրասենեակից։

[անընթեռնելի] գործ N 594
Ոստիկանութեան
Դեպարտամենտի Յատուկ բաժնին
[Ստորագրութիւն]

Նահանգապետի ս/թ-ի հոկտեմբերի 23-*ի* N 757-*ի մասին*
(*Թերթ* 15)

[*Որոշ բառեր անընթեռնելի են*]

Ոստիկանութիւնը վերոյիշեալ Բաբուշկինային մօտակայ սահմանային կէտեր...[*անընթեռնելի*]

Ոստիկանութեան Դեպարտամենտի 3-*րդ գործավարութիւնը Միքայէլեանցի արտասահման գնալու մասին պատիւ ունի յայտնելու Յատուկ բաժնին՝ տեղեկութիւնների եւ անհրաժեշտ կարգադրութիւնների համար։*

Գործավար [*Ստորագրութիւն*]

Մտ. N 3414
(Թերթ 16)

Տեղեկագրերը յանձնուած են 2 դեկտեմբերի 1898 թ.
---------- ստացուած են ----------189 թ.

Յատուկ բաժինը խնդրում է նշել այն գործերը, որոնցում յիշատակւում է հայ Քրիստափոր Միքայէլեանցը(30):

[Ստորագրութիւն]

Ըստ 3-րդ գործավարութեան 1061 մ. 2 / 22 771, 89 560 մ. 2 / 12310 98

510 մ. 4 / 17887, 92 510 մ. 5 / 18347, 18406 92

…….. 4-րդ 305 95 245 95 305 մ. 2 h. 1., 95 112, 96 245 [անընթեռնելի] 95

190, 97 80 98

[Ստորագրութիւն] 5/XII

---------- 5-րդ 3671 97

[Ստորագրութիւն]

---------- Յատուկ բաժնին

Ըստ 3-րդ գործավարութեան
(Թերթ 17)

22 [անընթեռնելի] 239 / 20186, 95 70 / 898, 95 510 մ. / 286, 92 91 622,

1388 / 20324, 96 1494 / 95 131 / 91 5586, 7783, 510 / 92 6568, 93 1061 / 89 մ./ h. 382 90 մ./ h.

8/XII

[Ստորագրութիւն]

305, 95 246, 95 305 մ. 2, 95 305, 95 112, 96 245[անընթեռնելի], 95 190, 97 80: 98

(*Թերթ* 18-19)

Գաղտնի
Շրջաբերականով

ՆԳՆ
Ոստիկանութեան
Դեպարտամենտի
Յատուկ բաժնին
դեկտեմբեր 1898 *թ.*
N 2224
Պ.պ. Սահմանային ժանդարմական պահակակէտի պետերին

Քաղաքական բարեյուսութեան առումով կասկածներ յարուցող ներքոյիշեալ անձինք ներկայումս բնակւում են արտասահմանում.

1) *Վասիլեւսկի Լեւ, Վարշաւայի համալսարանի նախկին ուսանող*

2) *Վայսման, Բենիամին Դուվիդով, Սորոկսկի քաղքենի, Բրեստ-Լիտովսկի սակրաւորների վաշտի պահեստային շարքային, անձնագրով՝ տրուած Օդեսայի Քաղաքապետի կողմից* 1898 *թ. յուլիսի* 31-*ի* N 4083։

3) *Մելնիկով Նիկոլայ Կոնստանտինովիչ, քաղքենի Իրկուտսկից։*

4) *Միքայէլեանց (Միքալիանց) Քրիստափոր Մկրտիչեւ (Նիկիտին), Երեւանի նահանգի, Նախիջեւանի գաւառի, Ագուլիս գիւղի բնակիչ, անձնագրով՝ տրուած Թիֆլիսի նահանգապետի կողմից* 1898 *թ. հոկտեմբերի* 23-*ին* N 757։

Յայտնելով վերոշարադրեալի մասին, Ոստիկանութեան Դեպարտամենտը պատիւ ունի խնդրելու Ձերդ Գերազանցութեանը նշուած անձանց Ռուսաստանի տարածք վերադարձի վրայ սահմանել վերահսկողութիւն եւ Ձեր դիտարկման տակ դրուած սահմանային կէտերով նրանց անցնելու դէպքում մաքսատան պաշտօնեաների ուշադրութիւնն ուղղել նրանց ուղեբեռների մանրակրկիտ զննման վրայ եւ ինչ-որ դատապարտելի բան յայտնաբերելու դէպքում ձերբակալել ու հեռագրել Դեպարտամենտին՝ հետագայ ցուցումներ ստանալու համար։ Հակառակ դէպքում, թոյլատրել հանգիստ շարժուել՝ Դեպարտամենտին եւ համապատասխան ժանդարմական վարչութեան պետին յայտնելով նրանց ընտրած ճանապարհի ուղղութիւնը, որպէսզի նշուած անձանց նկատմամբ երկու ամսուայ ընթացքում սահմանուի յատուկ գաղտնի հսկողութիւն, եւ նշուած ժամկէտը լրանալուց յետոյ, դրանց արդիւնքների մասին անպայման հաղորդուի Դեպարտամենտին։

Ստորագրեց Տնօրէնի փոխարէն՝
Սեմեակին
Կնք. Յատուկ յանձնարարութիւնների
պետական պաշտօնեայ Ռատաեւ

Ճիշտ է — *Գործավարի օգնական*
[*Ստորագրութիւն*]

1901 թ., էջ 5183
24 նոյեմբերի 1901 թ.
(Թերթ 20)

Գաղտնի գործակալների միջոցով ստացուած նամակի պատճէնը՝ «Քո Քրիստափոր» ստորագրութեամբ, Մոսկուա, 17 նոյեմբերի 1901 թ. Վ. Լունկեւիչին(31), Շարլոտենբուրգ, Վիլմերսդորֆերշտրասսէ, 125։

Թանկագին Վանիա։ Ես քեզ ճանապարհից արդէն քարտ էի ուղարկել։ Այժմ յայտնում եմ, որ այստեղ բարեյաջող ապրեցի 8 օր։ Կանգ եմ առել էյնարովների մօտ, որոնք ինձ հետ շատ սիրալիր էին եւ որոնց ես շատ շնորհակալ եմ։ Շատ բան չյաջողուեց։ Առայժմ փոխանցել եմ միայն 500 ռուբլի։ Խոստացել են հետագայ աջակցութիւն։ Ուսանողներն աւելի լաւը դուրս եկան, քան ես սպասում էի, իսկ մնացածները սրիկաներ են, որոնց առայժմ պէտք է հանգիստ թողնել(32)։ Ուղարկում եմ քեզ ժառանգականութեան մասին գրքոյկը։ Մէկ ժամից մեկնում եմ։

Պ. Բաժնի վարիչի նշումը. «Խորհրդակցել»
Նորին Գերազանցութիւն Ս. Վ.
Զուբատովին(33)
5 դեկտեմբերի
N 4391
[Ստորագրութիւն]

1901 թ., էջ 5184
24 նոյեմբերի 1901 թ.
(Թերթ 21)

Գաղտնի գործակալների միջոցով ստացուած նամակի պատճէնը՝ «Քո Քրիստափոր» ստորագրութեամբ, Մոսկուա, 17 նոյեմբերի 1901 թ., բժիշկ Լոռիս-Մելիքովին՝ Փարիզ, Լիւտօ փողոց, 18։

Թանկագին Վանիա։ Այստեղ մնացի 8 օր։ Առայժմ քիչ բան է յաջողուել։ Միքայէլի(34) հասցէով ուղարկել եմ 500 ռուբլի՝ այնտեղի պարտքերի վճարման համար։ Այսօր այստեղից մեկնում եմ։ Կ՚անցնեմ Ռոստով՝ 2 օրով։ Այստեղից ինչ-որ մէկը խոստացել է հետագայ աջակցութիւն։ Կան համակիրներ։ Ողջ առողջ եմ։

Պ. Բաժնի վարիչի նշումը. «Խորհրդակցել»
Նորին Գերազանցութիւն Ս. Վ.
Զուբատովին
5 դեկտեմբերի
N 4391
[Ստորագրութիւն]

5183-5184=*էջ*
1901 *թ.*
(*Թերթ* 22-25)
Մ. Ն. (*Մոսկուայի նահանգապետ*)
N 439 *Սերգէյ Վաղ*
5 *դեկտեմբերի*

Գաղտնի գործակալների միջոցով Ոստիկանութեան Դեպարտամենտում ստացուել են «Քո Քրիստափորով» ստորագրութեամբ երկու նամակների քաղուածքները, որոնց պատճէնները կից ներկայացուում են։ (Ստացուած շրջաբերականով՝ սահմանային կէտում խուզարկման)։

Նախիջեւանի գաւառի, Երեւանի նահանգի, Ագուլիս գիւղի բնակիչ Քրիստափոր Մկրտիչի Միքայէլեանցի կողմից Մոսկուայից, անցած նոյեմբերի 17-*ին, մէկը՝ Փարիզ, բժիշկ Իւան Զաքարի Լոռիս-Մելիքովի անունով* (*Գրութիւն սահմանային կէտերին* 1900 *թ. փետրուարի* 17-*ին* N 350-*ով*), *իսկ միւսը՝ Վ. Լունկեւիչին։*

Լունկեւիչի անունով նամակի բովանդակութիւնից պարզւում է, որ Միքայէլեանցը Մոսկուայում 8 *օր բնակուել է Էյնարովների մօտ, հաւանաբար, առանց գրանցման եւ անձնագրի, եւ այն հանգամանքը, որ մինչ այժմ սահմանային կէտերից չի տեղեկացուել նրա՝ Ռուսաստան ժամանելու մասին, հիմք է տալիս ենթադրելու, որ Քրիստափոր Միքայէլեանցը սահմանը գաղտնի է հատել։*

Նկատի ունենալով, որ Միքայէլեանցը 1890 *թ.-ից յայտնի է որպէս նշանաւոր յեղափոխական գործիչ, համաձայն* [*անընթեռնելի է*] *միջոցներ ձեռք առնել՝ գաղտնի կերպով պարզաբանելու համար, թէ Մոսկուայից կոնկրէտ ո՞ւր է մեկնել նշուած Քրիստափոր Միքայէլեանցը եւ հետեւանքների մասին տեղեկացնել։*

Ռատիեւ

175/V
00 15/II
(*Թերթ* 26-28)

Գաղտնի

ՆԳՆ

Մոսկուայի հասարակական անվտանգութեան եւ կարգի պաշտպանութեան բաժնի պետ

Յարգարժան Լէոնիդ Ալեքսանդրովիչ

1901 *թ. դեկտեմբերի* 5-*ի* N 4391-*ի նամակի հետաքննութեան արդիւնքում, Ձերդ Գերազանցութեանը պատիւ ունեմ յայտնելու, որ Քրիստափոր Մկրտիչի (Նիկիտին) Միքայէլեանցի Մոսկուա ժամանման եւ այնտեղից մեկնելու փաստը հաստատելը հնարաւոր չեղաւ։ Նամակագրութիւնում յիշատակուած էյնարովներ կոչուածները Ոստիկանութեան Դեպարտամենտին յայտնի էյնարովներ ամուսիններն են — առաջին կարգի գիւղատնտես, Թիֆլիս քաղաքի ծնունդ Ստեփան Պետրով էյնարովը*, 34 *տարեկան եւ Սուսաննա Եակովլեւա էյնարովան, ծննդեան ազգանունով Շկոդինսկայա*, 25 *տարեկան։ Նրանք* 1899 *թ.-ից ապրում են Մ. Տեպլայա նրբանցքում Կորոտովի* 2-*րդ տան, բնակարան* N 8-*ում, որտեղից էլ* 1900 *թ. մեկնել են արտասահման՝ ք. Փարիզ։ Անցած տարի էյնարովները գնացել են ք. Թիֆլիս եւ յետ են վերադարձել սեպտեմբերի* 13-*ին։ Նրանց հետ բնակւում է փոխգնդապետ Ալեքսանդր Անդրէեւ Պուրգասովի աղջիկը*, 37 *տարեկան, որը տան տէրերի բացակայութեան ժամանակ միշտ հետեւում է բնակարանին։* 1900 *թ. աշնանը էյնարովների բնակարանում բնակւում էին Ոստիկանութեան Դեպարտամենտին յայտնի ֆիզիկա-մաթեմատիկական գիտութիւնների թեկնածու Վալերիան-Վալենտին Վիկտորով Լունկեւիչը*, 34 *տարեկան, նրա կինը՝ Զոյա Պակլովան*, 32 *տարեկան եւ ազնուականի դուստր Եւա Թամազովա Լոռիս-Մելիքովան*, 34 *տարեկան։*

Անցած տարի Լունկեւիչ ամուսինները բնակւում էին «Վերսալ»-ի համարներում՝ Բոլշայա Դմիտրովկայի վրայ, պետական խորհրդարանի աղջիկ Ֆաինա Միխայլովա Լունկեւիչի հետ, 24 *տարեկան, որտեղից դուրս են եկել։ Ըստ նշումների՝ Վալերիան Լունկեւիչը ապրիլի* 9-*ին մեկնել է Թիֆլիս, Զոյա Լունկեւիչը՝ մայիսի* 9-*ին արտասահման, իսկ Ֆաինան՝ դեկտեմբերի* 17-*ին նոյնպէս Թիֆլիս։ Նշուած վայրում ապրելու ժամանակ Լունկեւիչները մօտիկից ծանօթ էին նշուած համարների տիրոջ՝ Երեւանի բնակիչ* [*անընթեռնելի անուն*] *Գրիգորի Աւետիսեանցի հետ*, 39 *տարեկան, նոյն համարների կառավարիչ, Արեւելեան լեզուների Լազարեան ինստիտուտի նախկին դասախօս Երուանդ Ֆադէեւ Տալիանոսովի* (*Տալիանոսեանցի*)(35), 36 *տարեկան, բնակուող նոյն վայրում, Երեւանի քաղքենի Յակոբ Քրիստափորի Թադեւոսեանցի հետ*, 26 *տարեկան եւ նրա բնակընկերուհու, կոլեգիական ասեսորի աղջիկ Կլաւդիա Ալեքսանդրի Ռուսինովայի*, 17 *տարեկան, Երեւա-*

նի նահանգի Նախիջեւան գաւառի բնակիչ Ռուբէն Արշակի Յովհաննէսով Սարգիսովի, 37 տարեկան եւ Մոսկուայի համալսարանի ուսանողներ. բժշկ. 5-րդ հոսք՝ Պետրոս Ալեքսանդրի Զաւրիեւի եւ Իրաւ. 5-րդ հոսք՝ Իոսիֆ Նիկոլայի Ստեփանովի հետ։

Այս ամէնին պարտաւորւում եմ լրացնել, որ Սուսաննա Էյնարովան ս/թ փետրուարի 9-ին փողոցում կալանաւորուել է այն մարդկանց թւում, որոնք խախտել են Մոսկուայի Գեներալ-նահանգապետի 1901 թ. մարտի 17-ի N 73-ի պարտադիր որոշումների 3-րդ կէտը եւ այդ որոշումների 1902 թ. յունուարի 23-ի լրացման նոյն կէտը ու ներկայումս գտնւում է կալանքի տակ։

Ամենախոնարհ կերպով խնդրում եմ Ձեզ, Ցարգելի Պարոն, ընդունէք իմ կատարեալ յարգանքի եւ անկեղծ նուիրուածութեան հաւաստիքը։

Ձեր խոնարհ ծառայ
[Ստորագրութիւն]

N 1835
14 փետրուարի 1902 թ.
Տեղեկանք
(Թերթ 29)

Քրիստափոր Մկրտիչեւ (Նիկիտին) Միքայէլեանցը (Միքալիանցը) սպանուել է 1905 թ. մարտի 4-ին Սոֆիայի արուարձաններում, Կնեաժեւս գիւղում, նոր հնարուած ռումբերի փորձարկման ժամանակ (տես. մուտք N N 10467 եւ 11310 Յատուկ բաժնի 1905 թ. N 8 գործի մէջ եւ N 10842-ում* գործում՝ մաս 1, 1905 թ.)։

* Այս գործի մասին մանրամասն զեկուցումը (մտ. 10842). զեկուցման համարը 43, 24 մարտի, 1905 թ.։

ապրիլի 6

(Թերթ 30)

Սոֆիայից՝ Լերմոնտովի(36) կողմից, Ոստիկանութեան Դեպարտամենտի տնօրէնի անունով 1905 թ. մարտի 11-ին N 17826-ով ուղարկուած ծածկագիր հեռագրի վերծանումը։

Սպանուած հայերը — Դրօշակիստներ են։ Մէկը Քրիստափոր Միքայէլեանցն է, միւսը բելգիացի Էդուարդ Ժորիս(37) կոչուողը, հաւանաբար՝ անլեգալ է։ Մարտի 8-ին Սոֆիայի հայկական կոմիտէի նիստում որոշուել է երեք հազար ձեռնառումբ տեղափոխել Բաթում եւ Էրզրում. այստեղի իշխանութիւնների վարքագիծը աւելի քան երկդիմի է։

Ռատաեւ [Ստորագրութիւն]

(*Թերթ* 31)

Սոֆիայից Ոստիկանութեան Դեպարտամենտի տնօրէնի անունով 1905 թ. մարտի 7-ին ուղարկուած N 16977 ծածկագիր հեռագրի վերծանումը:

Նշուած numero quarante un (38) ***մատնանշումով ռումբերը ճուլուած են եղել Կոստի*** [***չարունակութիւնը անընթեռնելի է***]: ***Ութ հատ ուրբաթ օրը Սոֆիայից՝ Սարաֆովի***(39) ***բնակարանից, տարուել են Կնեաժեւո, որտեղ երէկ փորձարկումներ էին տեղի ունենում, որոնց հետեւից պայթիւնը, սպանուել են ղեկավարող մակեդոնացին եւ ռուսը, որի անձը պարզւում է,*** situation très compliquée, car — ***Սարաֆովն այստեղ*** personna gratissima, ***հետաքննութիւնն իրականացնում է Սոֆիայի դատարանի դատախազը, որը մակեդոնացի է***(40):

Ռատաեւ
Lermontoff

11264
9/IV

Գաղտնի

(*Թերթ* 32)

Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի ղեկավարի անունից
«30» մարտի, 1905 թ.
N 654 ք. Թիֆլիս

Կիրակի օրը, ս/թ մարտի 13-***ին, Մուղնիի հայկական եկեղեցում, ժողովրդի հսկայական ներհոսքի պայմաններում անց է կացուել հոգեհանգիստ՝ արտասահմանում վերջերս մահացած, յայտնի հայ յեղափոխական գործիչ Քրիստափոր Միքայէլեանցի համար: Հոգեհանգստի ժամանակ եկեղեցում ցրւում էին հայերէն եւ վրացերէն լեզուներով հրապարակուած Միութենական յեղափոխական կուսակցութեան՝ «Դաշնակցութեան» Արեւելեան բիւրոյի թռուցիկները, սակայն ոստիկանապետին տրուած իմ հաղորդման հիման վրայ այնտեղ ուղարկուած ոստիկանութեան ուժեղացուած կարգախմբի դիտարկմամբ՝ փողոցում կարգ ու կանոնի ոչ մի խախտում չեղաւ:***

Շարադրուածի մասին պատիւ ունեմ հաղորդելու Զերդ Գերազանցութեանը՝ ներկայացնելով թռուցիկի թարգմանութիւնը:

Ռոտմիստր
[***Ստորագրութիւն***]

594
98
Նորին Գերազանցութիւն՝ Ոստիկանութեան Դեպարտամենտի տնօրէնին

(*Թերթ* 33-34)
Թարգմանութիւն Վրացերէնից

Քրիստափոր Միքայէլեան

Այսօր հայ յեղափոխական կուսակցութիւն «Դաշնակցութիւնը» պատմութեան յանձնեց իր հիմնադիրներից մէկի՝ Քրիստափոր Միքայէլեանի անունը։ Այդ մարդու ազնիւ սիրտը լցուած էր իր բազմաչարչար հայ ժողովրդի հանդէպ անսահման սիրով, նրա ձայնը, վայելելով լիակատար վստահութիւն, իւրաքանչիւր մարդու սրտում երեւան էր բերում մէկ սուրբ մտքով եւ մէկ ձգտումով առաջնորդուելու գաղափարը։

Քրիստափորն իր ողջ ուժը զոհաբերեց իր դժբախտ ժողովրդի ազատութեան համար պայքարի վեհ գործին։ Նա առանց հանգստանալու գործեց այդ մեծ ասպարէզում՝ սուրբ հաւատով նայելով ապագային։

Ո՛չ աղքատութիւնը, ո՛չ անողոք հետապնդումները, ո՛չ բանտի պատերը չկարողացան նրա սրտում կոտրել յոյսը, ոչ երկրային ուժով Միքայէլեանը տարաւ բոլոր հնարաւոր դժուարութիւնները։ Նա իր օրինակով ոգեշնչում էր իր ընկերներին եւ նոր կազմաւորուած «Դաշնակցութիւն» կուսակցութեան իւրաքանչիւր անդամին, որոնց միջեւ ստեղծել էր ամուր կապ եւ բարձրացրել յեղափոխութեան սուրբ դրօշը։ Քրիստափորը ջանասիրաբար հետեւում էր իր կուսակցութեան հեղինակութեանը, աշխատում էր վերջինիս սուրբ անունը պաշտպանել ամէն ինչից, եւ իրապէս, մինչեւ նրա կեանքի վերջին վայրկեանը «Դաշնակցութեան» հիասքանչ դրօշը հպարտօրէն ծածանւում էր այդ ազնիւ մարտիկի ձեռքում։ Նրա անունը պատուաւոր տեղ կը գրաւի այն անունների կողքին, ովքեր հիմնել են եւ խոնարհւում են մեծ գործի առջեւ, ովքեր իրենց կեանքի ընթացքում, ինչպէս սուրբը անշէջ կանթեղն է լուսաւորում պատմութեան էջերը, լուսաւորել են ստրկութեան մէջ գտնուող ժողովուրդների ազատութեան ճանապարհը, եւ մահից յետոյ էլ անմոռաց մնացել իրենց ժողովրդի սրտերում։

«*Մեր Քրիստափորը*», *ինչպէս անուանում էին նրան բոլորը, ծնուել է* 1859 *թ. Երեւանի նահանգի Ագուլիս գիւղում։* 70-*ական թթ., լինելով Թիֆլիսի Ուսուցչական ինստիտուտի ուսանող, նա միացել է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական շարժմանը։ Հայկական դպրոցների փակումը* 1884 *թ. նրա վրայ թողեց ցնցող տպաւորութիւն եւ միայն այդ ժամանակ նա ուշադրութիւն դարձրեց հայերի դրութեան վրայ։ Այդ նոյն տարում Քրիստափորը մեկնեց Մոսկուա եւ դասախօսութիւններ լսեց Պետրովսկի Ակադեմիայում։*

Այնտեղ նա ուշադիր ուսումնասիրում էր քաղաքատնտեսութիւնը, երբ ինքը Մարքսը այդ նոյն տարում մասնակցում էր հայ ուսանողների հաւաքներին, որոնք հետաքրքրուած էին ազգային հարցերով(41)։ 1887 թ. վերադարձաւ Կովկաս եւ միացաւ մի փոքրիկ ազգային խմբակի, նրանում կարեւոր տեղ զբաղեցրեց եւ դրա հետ միասին դարձաւ «Դաշնակցութիւն» կուսակցութեան կազմակերպիչը։

1898 թ. աշնանը այդ կուսակցութիւնը նրան ուղարկեց արտասահման՝ որպէս «Դրօշակ» պաշտօնաթերթի խմբագիր եւ Արեւմտեան բիւրոյի անդամ։ Եւրոպայում նա քարոզչութիւն էր տանում ազգային հարցերի հետ կապուած եւ ստեղծեց հայկական շարժում։ Բացի դրանից, Միքայէլեանը մասնակցեց արտասահմանում Հայ ուսանողական միութեան կազմակերպմանը։

Միքայէլեանը ակտիւ մասնակցութիւն ունէր «Դաշնակցութիւն» կուսակցութեան մէջ կատարուող բոլոր փոփոխութիւններում եւ միւսների համար անհնարինը, նրա համար դառնում էր հնարաւոր։ Քրիստափորն աշխատում էր առանց հանգստի, ամէնուրեք, ուր նա յայտնւում էր, արթնանում էր ընդարմացած ուժը եւ վերակենդանանում էր յուսահատուած սիրտը։ Միքայէլեանը միաւորում էր բոլորին եւ զարմանալի հմտութեամբ տիրոջը դարձնում էր հասարակական գործի ծառայ։ Քրիստափորը իւրաքանչիւր հաւաքի ժամանակ խոնարհման առարկայ էր դառնում, այդուհանդերձ, հասարակութեան այդպիսի մեծարանքները չկարողացան փոխել նրա պարզ եւ խաղաղ բնաւորութիւնը։

Նրա տունը միշտ բաց էր եւ մշտապէս այցելու ժողովրդով լցուած, որը գնում էր այնտեղ այնպէս, ինչպէս եկեղեցի են գնում աղօթքի։ Այո, ինչպէս եւ եկեղեցում, այնտեղ փայլում էր յեղափոխութեան մշտավառ կանթեղը, քանզի այնտեղ ապրում էր ազատութեան անյողդողդ նուիրեալը, որը խնկարկում էր ազատութեան սուրբ գաղափարին եւ այսօր սեւ հողին է յանձնուած նրա աճիւնը։

Հայ յեղափոխական կուսակցութիւն «Դաշնակցութիւնը» այսօր իր արիւնով ներկուած դրօշը խոնարհում է նրա թարմ գերեզմանի վրայ՝ դրանով արտայայտելով իր սէրն ու յարգանքը։

Ֆեդերատիւ յեղափոխական կուսակցութիւն
«Դաշնակցութեան» Արեւելեան բիւրո
13 մարտի 1905 թ.

Ճիշտ է՝ Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի կողմից

Ռոտմինիստր [Ստորագրութիւն]

Վերջ

5) Եւգենիա Կոստանտինովնա Լաւրուսեւիչ-Բաբուշկինան Սիբիր եւ ապա՝ Թիֆլիս աքսորուած ռուս յեղափոխական նարոդնիկ էր: Նա 1889 թուականին սիրահարւում է Քրիստափոր Միքայէլեանին, որից յետոյ իր ընկերոջ՝ Միխայիլ Լաւրուսեւիչի ընտանիքը չքայքայելու համար Քրիստափորը հեռանում է Թիֆլիսից՝ դառնալով աւագ ուսուցիչ Ագուլիսում: Ինչպէս հետագայում վկայում էր Սիմոն Զաւարեանը, այդ ամէնից յետոյ սիրահարուած կինն ինքն է ապահարզան պահանջում ամուսնուց: Երբ 1890 թ. յուլիսի սկզբին՝ Հ.Յ.Դ. հիմնադիր ժողովների նախօրէին, իր ընկերների պահանջով Քր. Միքայէլեանը վերադառնում է Թիֆլիս, Եւգենիա Կոստանտինովնան արդէն պարտադրել էր իր ամուսնուն հեռանալ Կիեւ: Աւելի մանրամասն տե՛ս Սիմոն Զաւարեան, Մի դրուագ Քրիստափորի ընտանեկան կեանքից, «Քրիստափորի յիշատակին», Կ. Պոլիս, 1909, էջ 27:

6) Լաւրուսեւիչ Միխայիլ Կոնդրատիի – ռուս յեղափոխական նարոդնիկ: Այդ շրջանում արդէն բնակւում էր Կիեւում, իսկ 1893 թուականին Քր. Միքայէլեանի խնդրանքով փորձում է Հ.Յ.Դ.-ի համար զէնք ձեռք բերել Տուլայի զինագործարանից, որի համար ձերբակալւում է՝ դառնալով հայկական դատի համար բանտարկուած առաջին օտարազգին:

7) Արշակը – նոյն ինքը՝ Արշակ Տէր-Գրիգորեան, հայ ազգային նարոդնիկ, Հ.Յ.Դ. հիմնադիր ժողովների մասնակից:

8) Սուսաննա Քանանովան (Քանանեան) Լազարեան ճեմարանի ռեկտոր Գէորգ Քանանեանի դուստրն էր, իսկ մօր կողմից՝ Թիֆլիսում բնակուող Ստեփան Ղամբարեանի թոռը, որի ընդարձակ տանը բնակւում էր նրա փեսան, Յովհաննէս Խատիսեանը՝ Կոստանդին եւ Ալեքսանդր Խատիսեանների հայրը:

9) Պրոֆեսոր Եուրի (Գէորգի) Ղամբարեանը (1850-1926) Ստեփան Ղամբարեանի որդին էր, այսինքն՝ Սուսաննա Քանանեանի քեռին: Նա եւս սերտ կապեր ունէր Քր. Միքայէլեանի հետ: Դասաւանդել է Մոսկուայի եւ Բրիւսէլի համալսարաններում, իսկ 1906 թուականից Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրաւունքի ամբիոնի վարիչն էր:

10) Այս բազմազգ նարոդնիկական խմբակը տեղատուութիւն ապրող նարոդնիկական շարժման բեկորներից էր: Իսկ ահա «Վարտանէս Պապազեանցին» դժուար է միանշանակօրէն կապել յայտնի գրողի հետ, քանի որ քիչ անց նման անձնագրով Ռումինիայում գործում էր Ռոստոմը: Տե՛ս Գէորգ Խուդինեան, նորայայտ վաւերագրեր Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների (Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան, Ռոստոմ) 1890-ական թուականների գործունէութեան մասին, «Բանբեր Հայաստանի արխիւների», 2003, թիւ 1, էջ 25-26:

11) Հաւանաբար Սաքօ, այսինքն՝ Աղամիրզովը, որը հէնց այդ ժամանակ Փարիզում էր: [Կարծում ենք, որ փաստաթղթի տողատակում առկայ այս բացատրութեան մէջ Ոստիկանութեան Դեպարտամենտի Յատուկ բաժինը սխալուել է, քանի որ Մարիա Բաքրաձէն ակնարկում էր ոչ թէ հնչակեան Սարգիս Աղամիրզեանի, այլ դաշնակցական Յովհաննէս Զաքարի Լոռու-Մելիքեանի մասին]:

12) Ռուս ազնուական տիկնոջ այս անկեղծ խոստովանութեան մէջ դժուար չէ նկատել Իւան Տուրգէնեւի «Նախօրէին» վէպի՝ բուլղար յեղափոխականին սիրահարուած հերոսուհու գաղափարների ազդեցութիւնը:

13) Ռուչշուկից «Արա Գեղեցիկ» ծածկանունով Քր. Միքայէլեանին ուղարկուած նա-

մակի հեղինակը Յովհ. Լոռու-Մելիքեանն էր՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր սերնդի նշանաւոր դէմքերից մէկը:

14) «Մարսելցիները» Մարսելում հրատարակուող «Արմենիա» թերթի գաղափարակիրներ-Արմենականներն էին:

15) «Զէյթունցիները» կովկասում ու մանաւանդ՝ Բալկաններում իր առանձին կազմակերպութիւնը հիմնած եւ դրամի աննպատակ ժողովարարութեամբ զբաղուող զէյթունցի Յարութիւն Չաքրեանի կողմնակիցներն էին:

16) «Զուռնաչիստներ» կամ ուղղակի՝ «Զուռնաչիներ» անունով բնորոշում էին Հնչակեաններին:

17) Չ-ն զէյթունցի Յարութիւն Չաքրեանն է: Իսկ «քրդական քոլոզները» պայմանական արտայայտութիւն է, որի բովանդակութիւնը հնարաւոր չեղաւ ճշտել:

18) Զաքար Ումիկովը (Ումիկեանը) Հայ Յեղափոխականների Դաշնակցութեանը յարած՝ հայ ազատամարտի հին գործիչներից մէկն էր:

19) Կ-ն այդ օրերին Հարաւային Ռուսաստանի քաղաքներով շրջող Կոստանդին Խատիսեանն է՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր սերնդի վառ ներկայացուցիչներից մէկը: Հետագայում գործել է Բաքւում՝ մնալով Հ.Յ.Դ. համակիրը:

20) Աբրահամ Դոստակովը Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան առաջին կենտրոնի անդամ Աբրահամ Դաստակեանն է:

21) Ստեփան Լիսիցեանը (1865-1947) այլ գիտնականների հետ միասին մասնակցել է նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան աշխատանքներին: 1907-ին Լ. Շանթի ու Յ. Թումանեանի հետ հրապարակել է «Լուսաբեր» մայրենի լեզուի դասագիրքը, 1928-ից Հայաստանի Պետական պատմական թանգարանի վարիչ:

22) Ցարական Օխրանայի կողմից «Հայկական գրքերի տարածման ընկերութիւն» կոչուող կազմակերպութեան իսկական անուանումն էր «Կովկասի հայոց հրատարակչական ընկերութիւն», որը 1891 թ. ապրիլից անցել էր նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան հակակշռի տակ. նախագահ՝ Ալ. Քալանթար, քարտուղար՝ Յակոբ Քոչարեան:

23) Աբգար Իոննիսեանի (Աբգար Յովհաննիսեան), 1849-1904,– Թիֆլիսում հրատարակուող «Փորձի» եւ ապա՝ «Արձագանքի» խմբագիր, հրապարակախօս, թատերական գործիչ: Ակնյայտ է, որ Ստ. Լիսիցեանին ու Աբգար Յովհաննիսեանին եւ այլոց համախմբելու միջոցով Քր. Միքայէլեանն ու նրա ընկերները ստեղծել էին որոշակի շրջանակ՝ դրամական միջոցներ հայթայթելու համար:

24) Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի), (1863-1915) Հ.Յ.Դ. հիմնադիր ժողովների շրջանում Գր. Արծրունու անպաշտօն ներկայացուցիչն էր համարւում Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան մէջ: Հետագայում Քր. Միքայէլեանի անմիջական ազդեցութեամբ, անմնացորդ կերպով նուիրուեց կուսակցութեանը: 1898-ից դարձաւ «Դրօշակի» աշխատակիցը, Եւրոպայում քարոզչութիւն ծաւալեց Հայկական հարցի օգտին: Սահմանադրութիւնից յետոյ հաստատուեց Կ. Պոլսում, Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի անդամ էր եւ Մեծ եղեռնի զոհերից մէկը դարձաւ:

25) «Պապիկը» Պարսկաստան ուղարկուած հին գործիչներից էր, որի անձը չյաջողուեց ճշտել: Հնարաւոր է՝ Տիգրան Ստեփանեանն է, Քրիստափորի բնորոշմամբ՝ «մալինկի գեներալը», որին չէին ցանկանում ընդունել իբրեւ ղեկավար Թաւրիզի դաշնակցականները: Տե՛ս Ռ. Սեւեան, Հ.Յ.Դ. առաջին գործիչներն ու հերոսները, «Հայրենիք», Բոստոն, 1937, N 10, էջ 126:

26) Պետոն դրամի հայթայթման համար Բաքու անցած Ալեքսանդր Պետրոսեանն է՝ Հ.Յ.Դ. առաջին գործիչը Վան-Վասպուրականում: Վերջինիս անուան յիշատակմանը յաջորդող՝ «Իշխանը» Յովսէփ Արղութեանն է (Խանասորի Իշխան), «Քոթոթն» ու «Արիստակէսը» Ռոստոմն ու նրա եղբայրն են, իսկ «Աշոտը» էրզրումցի Արամ Արամեանն է (Արշաւիր Յովասափեան):

27) Գանձապահ Դաւթեանցը Ներսէս Դաւթեանն է՝ Քր. Միքայէլեանի գործունէութեան նարոդնիկական շրջանից յայտնի «Հրաշալին», որը Կ. Խատիսեանի ու նրա կողմնակիցների հեռանալուց յետոյ դարձաւ Հ.Յ.Դ. Բաքուի կազմակերպութեան առանցքային դէմքերից մէկը:

28) Ենովք Գեոնջեանը Հայ Յեղափոխականների Դաշնակցութեանը ժամանակաւորապէս յարած գործիչներից մէկն էր:

29) Զալիեւը «Հայրենասէրների Միութեան» անդամ Միքայէլ Զալեանն է, որը Ներսէս Դաւթեանի նման անդամագրուեց Հ. Յ. Դաշնակցութեանը:

30) Ոստիկանութեան Դեպարտամենտի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ գործավարութիւններում պահուող այս վաւերագրերի ցուցակը կարող է հրաշալի նուէր դառնալ բոլոր նրանց համար, ովքեր Մոսկուայում գտնուող Ռուսաստանի Դաշնութեան պետական արխիւում նոր փաստաթղթեր կը փնտռեն Քր. Միքայէլեանի ու Հ.Յ.Դ. գործունէութեան մասին:

31) Լունկեւիչ Վալերիան Վիկտորի (Արարատսկի). լեհ աքսորական հօրից ու հայ մօրից Երեւանում ծնուած յեղափոխական նարոդնիկ, իսկ աւելի ուշ՝ սոցիալիստ-յեղափոխականների (էսէռների) կուսակցութեան գործիչ: Քր. Միքայէլեանի ու Հ. Յ. Դաշնակցութեան ջերմ բարեկամը: Հետագայում դարձել է խորհրդային գիտնական, ապրել է բաւականին երկար եւ մահացել Հայրենական պատերազմի ժամանակ՝ Լենինգրադից էւակուացիայի ենթարկուելուց յետոյ:

32) Քր. Միքայէլեանը Մոսկուայում էր «Փոթորիկի» գործով, ուստի նրա ակնարկած «սրիկաները», որոնք, ի տարբերութիւն ուսանողների, խնայում էին իրենց դրամը, տեղի հայ մեծահարուստներն էին: Քրիստափորը սկզբնական շրջանում արգելում էր նրանց հանդէպ գործադրել որեւէ բռնի միջոց:

33) Սա Մոսկուայի ժանդարմների պարագլուխ Ս. Վ. Զուբատովն է՝ տխրահռչակ «զուբատովշչինայի» կնքահայրը:

34) «Միքայէլը», որի հասցէով Քր. Միքայէլեանը արդէն հասցրել էր ուղարկել այդքան դժուարութեամբ հայթայթած 500 ռուբլին, Միքայէլ Վարանդեան-Յովհաննիսեանն է՝ Եւրոպայում հայկական հարցի օգտին քարոզչութեամբ զբաղուող առանցքային դէմքը:

35) Երուանդ Ֆաղէեւ Տալիանոսովը Երուանդ Թաղիանոսեանն է (1864-1948), որը Հայ Յեղափոխականների Դաշնակցութեանը յարեց Կոստանդին Խատիսեանի հետ միասին, բայց հետագայում յետ կանգնեց գործից: Այդ շրջանում ապրում էր Մոսկուայում: 1917-ին Բաքուում հրատարակել է «Գործ» ամսագիրը, եղել է Բաքուի Հայոց հրատարակչական ընկերութեան նախագահը: 1923-1929 թթ. Երեւանի հանրային գրադարանի տնօրէնն էր:

36) «Լերմոնտով» ծածկանունի տակ թաքնուող Ոստիկանութեան Դեպարտամենտի լրատուն թերեւս բուլղար-մակեդոնական շարժման ակտիւ գործիչ է: Պատահական չեն շարժման արմատական թեւը ներկայացնող Բորիս Սարաֆովի հասցէին նրա դիպուկ, բայց որոշ չափով ծաղրական բնորոշումները, քանզի գոյութիւն ունէր նաեւ նոյն շարժման չափաւոր թեւը: Յատկանշականն այն է, որ անգամ ցարական Ոստիկանութեան Դեպարտամենտի ամենակարեւոր՝ Յատուկ բաժնին տեղեկութիւններ հաղորդող գործա-

կալների ցանկում մենք չենք հանդիպում ոչ մի դաշնակցականի:

37) Վերջին անուն-ազգանունի տակ տուեալ պարագայում նկատի է առնւում Վռամշապուհ Քենտիրեանի անձը:

38) Այսինքն՝ 41-րդ:

39) Սարաֆով Բորիս – բուլղար-մակեդոնական շարժման ճանաչուած առաջնորդ, հայ ազատամարտի ու Հ. Յ. Դաշնակցութեան անկեղծ բարեկամ, որն այդ օրերին գտնւում էր բանտում, իսկ քիչ անց ինքն էլ արժանացաւ Քր. Միքայէլեանի ճակատագրին: 1907 թուականի դեկտեմբերի 1-ին եւ 8-ին Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի պաշտօնաթերթ «Յառաջի» անուանափոխումներից «Վտակը» (Թիֆլիս) տպագրել է Բ. Սարաֆովի ու նրա հետ միասին զոհուած՝ Գարվանովի յուղարկաւորութեան նկարագրութիւնը: Սոֆիայում տեղի ունեցած հրաժեշտի արարողութեանը մասնակցում էին Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոն ներկայացնող Ռուբէն Զարդարեանը եւ Անդրանիկ Օզանեանը: «Յուզիչ էր Անդրանիկի հրաժեշտը,– գրում է «Վտակը»:– Նա ընկած Սարաֆովի դիակի վրայ, սկզբում համբուրեց իր ընկերոջ ճակատը, ապա շրթունքները սեղմած նրա յաւիտենապէս սառած շրթունքներին, երկար, շատ երկար չէր կարողանում բաժանուել վիճակակից ժողովրդի ազատագրութեան հերոսի դիակից»:

40) Հեռագրի համարակալումը՝ 16997 ապացուցում է, որ իրականում սա եղել է առաջինը, քանզի նախորդ փաստաթղթի համարը 17826 է: Ակնյայտ է նաեւ, որ առաջին, այսինքն՝ 16997 հեռագիրն ուղարկուած է ողբերգութեան անմիջական տպաւորութեան տակ, ուստի հիմնուած է զոհուածների անձի մասին նախնական ոչ ճիշտ լուրերի վրայ: Սակայն, նրանում առկայ են նաեւ ճշգրիտ տեղեկութիւններ Բ. Սարաֆովի մեծ հեղինակութիւնից օգտուելով՝ մակեդոնացի քննիչի միջոցով գործը փակելու մասին: Սա կրկին հաստատում է, որ ռուս մեծ բանաստեղծ Լերմոնտովի անուան տակ թաքնուող՝ հեռագրի հեղինակը բուլղար-մակեդոնական շարժման «ներքին խոհանոցին» տեղեակ անձ է:

41) Թիֆլիսի Մուղնեցոց Ս. Գէորգ եկեղեցում 1905 թ. մարտի 13-ին վրացերէնով տարածուած այս թռուցիկում առկայ են որոշ անճշտութիւններ. Քր. Միքայէլեանը յարել է ոչ թէ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական, այլ սոցիալիստ-յեղափոխական, այսինքն՝ նարոդնիկա-էսէռական շարժմանը, հայ ուսանողների հետ հանդիպումներ է ունեցել ոչ թէ Կ. Մարքսը, այլ Ֆ. Էնգելսը: Հնարաւոր է, որ այս անճշտութիւնները փաստաթուղթը վրացերէն թարգմանած անձի անտեղեակութեան հետեւանքն են: Տեքստում առկայ են նաեւ վրացական լեզուամտածողութեանը բնորոշ դարձուածքներ:

ԱՆՁԱՆՈՒՆՆԵՐ

Աբաշիձէ (նահանգապետ) — 297։
Աբդուրահման բէյ — 116, 171։
Ադամեան (տիկին) — 155, 168։
Ալաճաճեան Երուանդ — 278։
Ալենակ — 207։
Ալթըբարմաքեան — 152, 153, 155, 156։
Ակնունի Է. — Տես Մալումեան Խաչատուր։
Ահարոնեան Աւետիս — Տես Ղարիբ։
Ահմէտ Ճելալետտին փաշա — 64, 65։
Ահմէտ Ռիզա — 73, 84, 124։
Աղայէ Սօր — 171։
Աղասէր (Գրիգորեան Յակոբ) — 231, 232, 236։
Աղասի — 109։
Աղբալեան Նիկոլ — 13։
Աղբեր (Մոկացի Յարութիւն) — 45, 48։
Ամիրեան Արսէն — 127։
Այվատեան եպս. — 255։
Անատոլ Ֆրանս — 73, 89։
Անդրանիկ (Երամեան Պօղոս) — 226, 229, 267, 268, 271, 272։
Անդրանիկ (Օզանեան) — 13։
Անդրէասեան Արտաշէս (Սուրէն) — 156։
Անդրէասեան Սմբատ — 156, 164։
Անուշաւան (Քալանթարեան) — 142։
Անտոն Գոշ — 59-61, 90, 169, 218, 265, 266, 274, 275, 277, 279։
Աշոտ — Տես Թաթուլ։
Աշոտ, Աշոտ Բագրատունի — Տես Եղիկեան Կարապետ։
Ապտիւլ Համիտ Բ. — 6, 9, 24, 48, 61, 62, 69, 79, 97, 124, 159, 212, 217, 218, 249, 259, 261, 267, 271, 275, 280։
Ասլան (Զարդարեան Ռուբէն) — 116, 117։
Ասլանեան Յարութիւն — 51։
Ատոմ — 109։
Ատոմ-Շահէն (Երիցեանց) — 265, 266։
Արաբօ (Առաքել) — 49, 50։
Արամ — Տես Յակոբեան Արամ (Կարէն)։
Արամ — 270, 271։
Արամեան — 129։
Արբակ Ռշտունի — Տես Միրզայեան Յովսէփ։
Արզուեան — 169։

Արծրունի Մ. — 23, 24, 26, 218։
Արմէն Գարօ (Փաստրմաճեան) — 13, 22, 24, 76, 78, 123, 124, 126, 134, 153, 154, 160, 161։
Արփիարեան Արփիար — 22, 24, 26, 27, 30, 32, 34, 35, 45, 48, 74, 75, 101, 109, 111, 112, 114, 122։

Բաբա (Գարեգին Խաժակ, Զագալեան) — 51, 53, 59, 61, 96, 97։
Բաբուշկինա — 156, 164։
Բագրատունի Ս. — 39։
Բագրատ վարդապետ — 255։
Բաղդասարեան — 71։
Բասմաջեան Կարապետ — 122։
Բարխուդարեան Արշակ — 288։
Բարսեղեան Սարգիս — 71, 76, 147, 249, 252, 265, 266, 270, 271, 274, 275, 278։
Բեկզադէ — 40, 43։
Բերար Վիկտոր — 89, 99, 212։
Բէլք — 95, 97, 99, 106։
Բէհբութեան Կ. — 67։
Բէտէրխան բէյ — 116, 171։
Բժիշկ (Օհանեան Քրիստափոր) — 67, 69։
Բորիս (Խաչատրեան Սմբատ) — 23, 24, 46, 48, 52, 53, 60, 61, 68, 69, 74, 75, 117, 132, 134, 147, 148, 154, 179, 181, 224։
Բրայս Ջէյմս — 99, 255։
Բրիսոն Հանրի — 73։

Գալստեան (օրիորդ) — 256
Գալփաքչեան — 71, 72, 80։
Գալֆայեան Յարութիւն — 116, 117, 167։
Գամառ-Քաթիպա — 180։
Գայլ-Վահան (Տոլպաչեան Մինաս) — 75։
Գանջեցեան Արտաշէս — 94։
Գասպար Նեմցէ — 114։
Գարեգին (Թադէոսեան Ստեփան) — 222, 223։
Գարեգին Խաժակ (Զագալեան) — 145, 146, 230։
Գարիբալտի — 86, 91, 100։
Գիսակ (Սերենկիւլեան Յովհ.) — 44, 48, 87, 89, 143, 144, 169, 285։
Գիրուկ — 21-23։
Գիւլումեան Լեւոն — 44, 262, 263, 264, 268, 271։
Գիո Իվ — 85, 91։
Գլըճճեան — 49։
Գնունի Խաչիկ — 156։
Գոլիցին — 88։
Գոշ — Տես Անտոն Գոշ։
Գուլումճեան Միսակ — Տես Կարիճ։
Գուրգէն (Մալեան Բաղդասար) — 45, 48, 60, 61, 87, 89, 160։
Գրեկով — 295, 296։
Գօշ — Տես Անտոն Գոշ։

Դադեան — Տես Տատեան։
Դամադ Մահմուտ փաշա — 123, 147։

Դաւթեան Յոնան — 229, 231, 232, 238, 239, 245, 254, 262, 264, 274, 275։
Դելկասէ Թէոֆիլ — 143, 144։
Դերձակեան Օննիկ — *Տես Վռամեան Արշակ*։

Ե

Երճանեան Ատոմ — *Տես Սիամանթօ*։
Եղիկեան Կարապետ (Աշոտ) — 69, 145-148, 153, 224, 231, 232, 235, 238-240, 244, 245, 257, 258, 267-269, 271։
Եղիշէ (Թոփչեան) — 106, 107։
Երիցեան Ա. — 88, 106։
Երուանդ (կառապան) — 269, 270։
Երջանեան — 210։

Զ

Զարեհ (Խաչիկեան) — 269-271։
Զարիֆեան — *Տես Լորիս-Մելիքեան Յովհաննէս*։
Զարուհի — *Տես Տէրոյեան Զարուհի*։
Զաւարեան Սիմոն (Անտոն) — 13, 58, 59, 69, 84, 86, 89, 143, 145, 153, 154, 158, 160, 161, 220, 221, 231, 232, 272, 273։
Զաւրեան Յակոբ — 225։
Զիլբեռշտէյն — 265, 274։
Զոլա Էմիլ — 72, 91։

Է

Էդկար (Այվազեան Կարապետ) — 218, 226, 228, 229, 231-234, 267, 271։
Էդուարդ — 232։
Էմիլ (Մարիա Զէյս) — 269, 271։
Էնվեր պէյ — 64, 65։
Էրմոլով — 180։

Թ

Թադէոսեան Ստեփան (Սամսոն) — 251, 252։
Թաթոսեան (չուշեցի) — 262։
Թաթուլ, Աշոտ (Արամեան Արամ) — 47, 48, 60, 61, 89։
Թայինեան — *Տես Լորիս-Մելիքեան Յովհաննէս*։
Թիւֆենկչեւ — 230, 232, 276։
Թորգոմ (Թուման Թումեանց) — 191, 284, 289։
Թորգոմ (Սերեմճեան Արտաշէս) — 153, 154, 197, 199, 228-230, 232, 239, 242, 244, 245, 253, 254, 258, 267, 268, 271։
Թորոսեան Օննիկ — 156։
Թումայեան — 94։

Ժ

Ժակլար — 123-125։
Ժամհարեան Իսահակ — 252։
Ժամհարեան Մարգար (Մռաւ) — 263, 264։

Ժենիա (Քրիստափորի կինը) — 220։
Ժորիս — 217։
Ժօրէս Ժան — 72, 77, 78, 80, 81, 85, 86, 91, 212։

Իզմիրլեան եպս. Մատթէոս — 44, 47, 48, 86, 89։
Իսագիւլ — 74։
Իսահակեան Աւետիք (Հայ Գուսան) — 129, 130, 136, 145, 146, 160, 161, 293, 294։
Իսահակեան Աւիկ — 293։
Իսկենտէր — 101, 113։
Իւղաբերեան — 274։

Լաբորի Ֆերնանդ — 72։
Լանսդաուն լորտ — 255, 256։
Լաւիս Էռնեստ — 72, 73, 91։
Լեապով Գուրին — 59, 61, 133, 145, 146, 155, 156։
Լեւոն — 168, 253, 270։
Լեւոնեան Արմենակ (Աշոտ Երկաթ) — 225։
Լեւոնեան Գարեգին — 129։
Լոնգէյ — 143։
Լորիս(Լոռու)-Մելիքեան Յովհաննէս — 25, 27, 30, 32, 123, 124, 126, 138, 155, 156, 162, 163, 178, 193, 194, 247, 248, 274-277։
Լուիս — 85։

Խաժակ — Տես Գարեգին Խաժակ։
Խուդինեան Գէորգ — 11, 302, 304, 328։
Խրիկեան — 166։
Խրիմեան Մկրտիչ (կաթողիկոս, Հայրիկ) — 47, 255։

Ծաղիկ — Տես Տէր Կարապետեան Գեղամ։
Ծերուկ — 118։

Կասանեակ Պօլ — 85, 91։
Կարիճ (Գուլումճեան Միսաք) — 26, 27, 116, 117, 140, 141, 151, 231։
Կարմրաթչիկ, Սաֆօ (Մարգարեան Մարտիրոս) — 34, 35, 78, 79, 229, 231, 238, 239, 245, 250-252, 254, 267, 271։
Կարօ Աստրախանցի (Աղաջանեան Համբարձում) — 268, 270, 271։
Կիլիկեանց — Տես Պզտիկեան Զաքարիա։
Կլեմանսօ Ժորժ — 72, 85, 86, 89, 91, 138։
Կլիկով — 295։
Կոմս դը Մէոն — 73։
Կոչեն Դընիս — 72։
Կոստանդին (Համբարձումեան) — 88, 276, 277։
Կովալեւսկի — 129։
Կորիւն — 52, 60։

Կուկունեան Սարգիս — 256։
Կռունկ (Իգիտեան Արշակ) — 170, 171։
Կրին — 267, 270։
Կօճ — Տես Տատեան Արթին փաշա։

Հաքստհաուզեն Աւգուստ — 180։
Համբարձումեան Յասմիկ — 10, 304։
Համիտ — Տես Ապտիւլ Համիտ Բ.։
Հայ Գուսան — Տես Իսահակեան Աւետիք։
Հանոտօ Գաբրիէլ — 92, 93։
Հաջի Արամ Տէր Եղիազարով — 54-56, 67, 87։
Հրայր-Դժոխք — 13, 87, 89, 106, 107, 247, 248։

Ղազար — 71։
Ղազարեան Վրթանէս — 206, 213։
Ղամբարեան Եուրի — 129։
Ղարա-Մելիք (Մելիք-Գրիգորեան Բարսեղ) — 22, 24։
Ղարիբ (Ահարոնեան Աւետիս) — 71, 73, 76-78, 80, 81, 86, 89, 123, 124, 133, 134, 139, 180։

Ճանկիւլեան Յարութիւն — 30, 32, 49, 50, 74, 75, 102, 272։

Մալումեան Խաչատուր (Լ. Ակնունի) — 13, 77, 78, 95, 97, 137, 149, 181, 224։
Մանաւեան Արամ — 23։
Մանթաշով — 129։
Մանոլ — 268, 269։
Մանուէլեան Վահան — 153, 246, 248, 283, 289։
Մանուկեան Արամ — 13։
Մատով — 245։
Մարթին (Մուրատեան Մարտիրոս) — 141, 226, 228, 229, 231-235, 239, 267, 268, 271։
Մար (Տէր Մարտիրոսեան Միք.) — 34, 35, 48, 60, 61, 69, 86, 87, 89, 133։
Մարիա, Մարֆա Ալեքսէյեւա — 286, 289։
Մարզպետունի (Ղազարոսեան Ղազարոս) — 198։
Մարտիրոս — Տես Կարմրաթչիկ։
Մարտիրոսեան Կարապետ — 152, 153։
Մաք-Քոլ — 212։
Մելիք (Իւսուֆեան Յովհ.) — 18, 20, 107։
Մելիքեան Համբարձում — 129։
Մեծատուրեան (փաստաբան) — 26։
Մեհմեդ աղա — 171։
Մեմտուհ փաշա — 64։
Մենակ (Առստամեան Եգոր) — 182, 183։
Մենելիք — 66, 67, 69։
Մինասեան Մաթէոս — 224, 250, 252։
Մինկեւիչ — 294։
Մինօր — 274։
Միշէլ (տիկին) — 269-271։
Միսակ — Տես Կարիճ։

Միսաքեան Արտաշէս — 156։
Միրբօ Օկտաւ — 73։
Միրզայեան Յովսէփ (Արբակ Ռշտունի) — 23, 24, 45, 46, 52, 53։
Միքայէլ — Տես Վարանդեան Միքայէլ։
Մխիթար — Տես Շահնազար Յովհաննէս։
Մկրտիչ (կառապան) — 269, 270։
Մնացականեան Գաբրիէլ — 293։
Մորգին (մայիոր) — 66։
Մուրատ (Պոյաճեան Համբարձում) — 33, 35, 86։

Յակոբեան Արամ (Կարէն) — 60, 61, 101, 113, 145, 147, 148, 152։
Յակոբեան Թ. — 235, 241։
Յովսէփեան Արտաշէս (Մալխաս) — 195, 196, 252։
Յունօ (Տէր Մարտիրոսեան Յարութիւն) — 284։

Նազարբէկեան Աւետիս — 30, 32, 87։
Նազարեանց Ոսկան — 25, 37։
Նազըմ փաշա — 114։
Նահապետեան Ղ. Պ. — 83։
Նահապետ Վաղարշապատցի — 298։
Նահիկեան Յովհաննէս — 195, 196։
Նատալիա — 107։
Նեվրուզ (բժիշկ) — 115, 154, 158։
Ներսէս Ե. կաթողիկոս — 88։
Ներսիսեան Ա. — 118։
Նիթրա — Տես Շահրիկեան Յարութիւն։
Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան) — 13, 25, 27, 47, 48, 67, 69, 229, 238, 239։
Նոգեր — 76։

Շահէն (Մելիք-Շահնազարեան Գէորգ) — 23, 24, 52, 87։
Շահնազար Յովհաննէս (Մխիթար) — 101, 107, 108, 110-113, 115, 120, 122-124, 150, 157, 169, 178, 181։
Շահրիկեան Յարութիւն (Նիթրա) — 115, 143-145, 147, 148, 160, 161։
Շարմբտան Ֆ. — 72, 85, 106։
Շխեան Սիմէոն — 140։

Ուրբէն Գոյէ — 85, 86, 91, 119, 123, 124, 143։

Զերազ Մինաս — 59, 68, 69, 72, 84, 96, 122։
Զիպրիանի Ամիլկար — 76-78, 81, 86, 91։
Զոպանեան Արշակ — 80։

Պաղտիկեան Տիգրան — 151։
Պերսի — 247։
Պզտիկեան Զաքարիա (Կիլիկեանց) — 166, 167։
Պիւլպիւլեան — 64, 65։
Պրեսանսէ Ֆրանսիս դէ — 72, 85, 86, 89, 91, 103, 138, 143, 144, 186-189, 193, 194, 212, 255։

Ջհանգիւլեան Յարութիւն — Տես Ճանկիւլեան Յարութիւն։

Ռադիեւ — 122, 126, 145, 146, 154-156։
Ռէյմոնդ Ժերոմ — 162։
Ռիչառ Ժեռար — 73, 76, 85, 91։
Ռշտունի — 109։
Ռոզէն — 180։
Ռոստոմ (Ստեփան Զօրեան) — 8, 13, 23, 24, 54, 59, 68, 88, 90, 102, 114, 133, 145, 147, 148, 152, 154, 160, 168, 195, 262, 264, 276, 277, 280։
Ռորպախ — 106։
Ռուբիկ (Քրիստափորի որդին) — 220, 277։
Ռուբինա (Արէշեան Սոֆիա) — 269։
Ռուանէ — 91։
Ռուսօ Վալդեկ — 160։

Սալման (Մանկունի Յարութիւն) — 17, 18, 20։
Սահակ եպս. — 255։
Սահակեան Աւետիք (Լալվար, Հայր-Աւետիք) — 182։
Սաղաթէլեան Յովհաննէս — 288։
Սամուէլ Ֆայն (Քրիստափոր) — 280։
Սայեան Գրիգոր — 231, 242-244, 253, 257։
Սանոսեան Արշակ — 232, 258։
Սարաճեան եպս. — 255։
Սարաֆով Բորիս — 145, 146, 149, 196, 245, 270, 271։
Սարգիս — Տես Բարսեղեան Սարգիս։
Սարգսեան Լեւոն — 90, 288։
Սաքօ (Սեւքարեցի, Ծովհանեան) — 45, 48-50։
Սաֆօ — Տես Կարմրաթշիկ — Մարգարեան Մարտիրոս։
Սեմիոնով — 212։
Սեպուհ, Հրաչ (Թիրեաքեան Հայկ) — 21, 24, 28, 29, 34, 35, 37, 38, 45, 48-53, 60, 61, 69, 74, 75, 87, 89, 116, 117, 131, 134, 145-147, 152-154, 160, 161, 265, 266։
Սերեմճեան Պետրոս — 154, 156։
Սերոբ (Սուլուխցի, «Տարօնի առիւծ») — 224։
Սերոբ Աղբիւր (Վարդանեան) — 8, 48, 86, 87, 89, 106, 107, 202, 207, 284։
Սեվերին — 73։
Սիամանթօ (Եարճանեան Ատոմ) — 220, 221։

Սիմիոնով — 212։
Սիմոնեան Յ. — 83։
Սիմոնեանց Արտաշէս — 295։
Սիսակեան Երուանդ — 78։
Սիւնի Վահէ (Թիրեաքեան) — 16, 87։
Սոկալով — 154։
Սուրէն — 109, 267, 268, 271։

Վազգէն (Տէրոյեան Տիգրան) — 21, 24։
Վահաբ — Տես Վռամեան Արշակ։
Վահան — Տես Մանուէլեան Վահան։
Վահան (Մատինեան Նիկոլ) — 17, 18, 20, 21-25, 27, 33-35, 37, 38, 49-53, 55-57, 67, 69, 74, 75, 88, 89, 147։
Վանդալ Ալբերտ — 72, 85, 91։
Վարաժնունի — 57։
Վարանդեան Միքայէլ — 13, 38, 54, 59, 86, 89, 95, 122-124, 126, 129, 130, 138, 139, 179, 181, 262։
Վարդան (Խանասորի, Մեհրաբեան Սարգիս) — 47, 48, 67, 69, 90։
Վարդանեան Լեւոն — 295։
Վարդան Շահպազ (Տօնիկեան) — 251, 252, 254։
Վարդապետ — 21, 28, 45, 52։
Վարդգէս — Տես Գիսակ։
Վարդօ (Վարդ-Պատրիկեան Յակոբ) — 272, 289։
Վորոնցով — 88։
Վռամեան Արշակ (Վահաբ) — 13, 33, 35, 51, 53, 60, 61, 82, 83, 90, 107, 120, 121, 157, 195, 196, 263, 264։
Վրացեան Սիմոն — 5, 11, 13, 62։
Վօգհառն Էռնեստ — 73։

Տամատեան Միհրան — 51, 53։
Տամատ Մահմուտ փաշա — 124, 146։
Տաշրացի (Գասպարեան Վրէն) — 169։
Տասնապետեան Հրաչ — 5, 6, 13, 15, 125։
Տատեան Արթին փաշա — 22, 24, 30-32, 45, 48, 61-65, 68, 69։
Տատեան Տիրան — 62։
Տատեան Տրդատ — 22, 24, 31, 32, 62, 63։
Տէր Զաքարեանց Ստեփան — 160։
Տէր Թադէոսեան Արշակ — 118, 119։
Տէր Կարապետեան Գեղամ — 246, 248։
Տէր Մարտիրոսեան Յովհաննէս (Ա-Դօ) — 134։
Տէր Մինասեան Ռուբէն — 13։
Տէր Յակոբեան — 262։
Տէրոյեան Զարուհի — 21, 24, 26, 27։
Տէրոյեան Տիգրան (Վազգէն) — 24, 27, 61։
Տնտեսեան Համբարձում — 155, 168։
Տողրամաճեան Կարապետ — Տես Մանուէլեան Վահան։
Տորք (Աչըգկէօզեան Յովակիմ) — 60, 61, 153, 154, 164։
Տրարիոյ Լուդովիկ — 73։

Ռադիեւ — Տես Ռադիեւ։
Ռաֆֆի — 168։

Յոնչեվ — 245։

Փամպուքեան Երուանդ — 7, 11, 15։
Փաշայեան Կարապետ — 238-240։
Փորթուգալեան Մկրտիչ — 74, 87։
Փրեսանսէ — Տես Պրեսանսէ Ֆրանսիս։

Քաջազնունի Յովհաննէս — 195, 196։
Քենտիրեան Վռամշապուհ — 267-269, 271։
Քեռի (Շիշմանեան Ռուբէն) — 34, 35, 87, 89։
Քեօբելեան — 57։
Քիառ Պիեռ — 72, 73, 77, 81, 85, 86, 89, 91, 103, 104, 119, 123-126, 138-140, 143, 147, 148, 153, 154, 178, 212։
Քոթոթ — Տես Ռոստոմ։
Քրիս (Ֆեներճեան) — 199, 201, 217, 219, 229, 239, 244, 245, 257, 258, 268, 270, 271։

Օհանեան Սմբատ — Տես Զաւարեան Սիմոն։
Օհանջանեան Համազասպ — 143, 144, 271։
Օրմանեան Մաղաքիա (պատրիարք) — 35, 153, 154։
Օրտանս (Դաւթեան) — 158։

Ֆաւո — 91, 119։
Ֆաւր — 91։
Ֆերդինանդ — 196։
Ֆերրի Էնրիկո — 91, 100։
Ֆրակասսի — 255։
Ֆրանդեան Երուանդ — 252։
Ֆրեզէ — 297։

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ադուլիս — 181։
Ադանա — 166, 167։
Ադրիանապոլիս — *Տես Էտիրնէ*։
Աթէնք — 40, 74, 102, 154, 232, 234, 241, 259, 262, 267, 272, 274։
Ալաշկերտ — 184, 185։
Ալեքսանդրապոլ-Գիւմրի — 283, 293-297։
Ախլաթ — 256, 283, 285։
Աղեքսանդրիա — 17, 19, 21, 25, 28, 32, 33, 37, 40, 51, 54-57, 67, 87, 90, 167, 238, 240։
Ամերիկա — 59, 68, 69, 82, 89, 107, 120, 134, 141, 157, 190, 191, 195, 207, 222, 252, 255, 258, 262, 9։
Անեմաս — 276։
Անի — 66։
Անվերս — 265։
Աստրախան — 179։
Ասքանազեան կոմիտէ — *Տես Մուշ*։
Ատրպատական — 27, 48, 69, 156, 169, 196, 222, 252։
Արաբկիր — 36։
Արճէշ — 225։
Աւար-Աւեր — *Տես Խանբերդ*։
Աւարայր (*Խոյ*) — 195, 196։
Աւստրիա — 247։
Աքիա — 61, 154, 164։

Բաբելոն (*Մուսուլ*) — 26, 27։
Բագու (*Տես նաեւ Ոսկանապատ-Բագու*) — 27, 66, 94, 107, 132, 136, 139, 142, 158, 159, 179, 182, 263, 276։
Բաթում (*Նաւահանգիստ*) — 17, 18, 34, 35, 59, 66, 130, 158, 161, 200, 201, 206, 264։
Բալու — 18։
Բալքանեան (*Բուլգարիա եւ Ռումանիա*) — 201, 218, 255։
Բաղդադ — 53, 116, 140, 170, 174, 176։
Բաղէշ-Պիթլիս — 116, 117, 171, 190, 252։
Բասեն — 192, 224, 288։
Բարձրաւանդակ — *Տես Սասուն*։
Բերդակ — 153։
Բերլին — 40, 58, 61, 66, 70, 96-98, 103, 179, 255։
Բէյրութ — *Տես Պէյրութ*։
Բոստոն — 5, 6, 13, 14, 225, 293, 301։
Բուդապէշտ — 273։
Բուլգարիա — 9, 40, 47, 54, 59, 68, 88, 90, 102, 107, 133, 136, 148, 153, 156, 227, 249, 263, 267-270, 272, 275, 280։
Բուրգաս —152։
Բուքրէշ — 236, 242, 257։
Բրիւսէլ — 265։

Գալաց — 214, 215։
Գահիրէ — 36, 37, 48, 117, 150։
Գաղատիա (*Անգարա*) — 60, 61, 141։
Գաղթաշէն (*Ս. Թադէ*) — 222, 223։
Գանձակ — 159, 249։
Գերմանիա — 91, 92, 97, 99։
Գողթն — 181։

Դերսիմ — 34, 35։
Դժոխք քաղաք (Սղերդ) — 170։
Դիլիջան — 293-295։

Եամբոլ — 83։
Եգիպտոս — 30, 49, 52, 56, 57, 67-69, 74, 75, 107, 116, 132, 146, 150, 154, 167, 244։
Եղէգի գիւղ — 151։
Եոֆֆէ — 67։
Երեւան — 293, 295, 296։
Երուսաղէմ — 24, 27, 44, 48։
Եւրոպա — 32, 72, 85, 92, 93, 97, 99, 100, 104, 106, 119, 147, 180, 206, 224, 246, 255, 260, 273, 275, 277, 295։

Զէյթուն (Տես նաեւ Ուլնիա) — 20, 29, 51, 53, 62, 207, 284։
Զոհ (Կոմիտէ, Պոլիս) — 66, 67, 69։
Զուիցերիա — 68, 91, 151, 168, 265։

Էջմիածին — 48, 106։
Էտիրնէ — 156, 169։

Թաւրիզ — 27, 48, 69, 89։
Թիֆլիս (Մեծ Քաղաք) — 6, 16, 21, 22, 24, 26, 27, 66, 67, 69, 74, 84, 86, 87, 89, 106, 117, 118, 134, 154, 160, 179, 184, 186, 187, 189-191, 222, 223, 246, 258, 275, 294։
Թուրքիա-Տաճկաստան — 20, 24, 35, 48, 61, 62, 85, 93, 106, 124, 156, 232, 251, 255, 260, 286, 294, 295։

Ժընեւ — 6, 48, 54, 61, 62, 76, 90, 91, 104, 106, 108, 115, 117, 119, 137, 145, 164, 167, 168, 178, 179, 197-199, 202-204, 206-210, 216, 219, 220, 225, 228, 232, 233, 237, 238, 241, 246, 249, 259, 262, 263, 265, 273-277, 280, 301։

Իզմիր (Տես նաեւ Ոսկեհանք) — 75, 90, 153, 226, 227, 232, 237, 239, 245, 254, 271-273։
Իտալիա — 86, 91, 92, 100, 103, 105, 106, 247, 255։

Լահէյ — 48, 58, 59, 61, 68, 70, 84, 91։
Լեռնավայր (Կիլիկիա) — 23, 24, 46, 48, 55, 68, 69, 86-90, 146, 166, 167, 244, 245, 263։
Լէյպցիք — 96։
Լիբանան — 48, 69, 75։
Լիսաբոն — 106։
Լոնդոն — 40, 73, 122, 168, 204, 247, 255, 262, 265։
Լորենս — 82։
Լօզան — 67, 96, 295։

Խանասոր — 47, 48, 69, 78, 261։
Խարբերդ — 17, 25, 34, 35, 53, 116, 140, 151, 158, 190։
Խնուս — 184, 185, 247։

Ծաղիկ — Տես Պոլիս։
Ծովափ (Տրապիզոն) — 60, 61, 69, 130, 169։

Կարին-Էրզրում — 22, 47, 48, 66, 182, 183, 190, 214։
Կարմիր Դղեակ — Տես Գաղատիա-Անգարա։
Կարս — 66, 182, 189, 191, 276, 277, 283, 284, 288։
Կեսարիա — 140։
Կիեւ — 127։
Կիլիկիա (Լեռնավայր) — 24, 29, 48, 53, 57, 69, 75, 105, 117, 124, 131, 134, 141, 146, 167, 231, 232, 236, 242, 245, 275։
Կիպրոս — 26։
Կովկաս — 9, 27, 48, 73, 88, 89, 94, 107, 117, 125, 152, 153, 158, 160, 180, 197, 206, 212, 231, 246, 248, 251, 254, 280, 283։
Կռուածաղիկ — Տես Ծաղիկ (Պոլիս)։
Կրետէ — 72, 73։

Հալէպ — 140։
Հաւր — 82, 83։
Հնդկաստան — 256։
Հռոմ — 255։

Ղարաբաղ — 179։
Ղարս — Տես Կարս։

Մալաթիա — 18։
Մակեդոնիա — 154, 211։
Մամուրէթ իւլ Ազիզ — 151։
Մանազկերտ — 184, 185։
Մանչեստր — 40, 120։
Մարաշ — 48, 89, 134։
Մարսէյլ — 40, 130, 158, 189, 195, 206, 213։
Մեծ Հայք-Արեւմտահայաստան — 10, 285, 286-289։
Մեծ Քաղաք — Տես Թիֆլիս։
Մինարէթ (Սալմաստ) — 222- 223, 252։
Միջագետք — 27, 170։
Միւնիխ-Միւնխէն — 63, 137, 149, 263։
Մոլեկիւլ (Պերլին) — 42, 43, 58, 70։
Մոսկուա — 179, 181, 190, 195։
Մուշ — 19, 48, 106, 116, 117, 170, 184, 186, 187, 246, 248, 256, 282, 284, 285։

Յունաստան — 235, 270։

Նաւահանգիստ — Տես Բաթում։
Նիս — 96։
Նիւ Եորք — 40, 57, 82, 83, 258։
Նոր Նախիջեւան — 179։

Շամ, Շամիրամ — Տես Վան-Վասպուրական։
Շուեցերիա — Տես Զուիցերիա։
Շումլա — 83։
Շուշի — 249, 264։

Ոսկանապատ (Բագու) — 25, 27, 85-87, 89, 106, 107, 118, 136, 242, 249-252։
Ոսկեհանք (Տես նաեւ Իզմիր, Զմիւռնիա) — 55, 152, 153, 226, 227-234, 239, 244, 245, 254, 267, 268, 270-273։
Ուլնի, Ուլնիա (Զէյթուն) — 18-20։
Ուկրաինա — 11։

Զինաստան — 256։
Զիքակո — 162, 163։
Զմշկածագ — 57։

Պաթում — Տես Բաթում։
Պալքանեան — Տես Բալկանեան։
Պաղեստին — 154, 164։
Պաղտատ — Տես Բաղդադ։
Պարսկաստան — 37, 160, 195, 239, 283։
Պաքու — Տես Բագու։
Պեռն — 193, 194։
Պետերբուրգ — 91, 224։
Պերլին — Տես Բերլին։
Պէյրութ — 5, 13, 14, 23, 108, 140, 141, 236։
Պիրէ — 230, 231, 239։
Պոլիս (Ծաղիկ, Կռուածաղիկ, Վիշապ) — 5, 16, 22-24, 27, 35, 44, 48, 54, 55, 60-64, 66-69, 74, 86, 89, 94, 96, 99, 105, 107, 114, 116, 124, 131, 134, 145, 146, 148, 152-154, 156, 164, 168, 169, 190, 196, 199, 201, 217, 228, 230-232, 235, 236, 238, 239, 242, 244-247, 249, 253, 254, 257-261, 265-268, 270, 273-276, 278, 280, 289։
Պոսթըն — Տես Բոստոն։
Պորտ Սայիդ — 67։
Պուլկարիա — Տես Բուլգարիա։
Պրիւքսէլ — 186, 187։
Պրովիդենս — 59, 82։

Զրաբերդ — Տես Կարս։

Ռազգրադ — 156, 164։
Ռաշտ — 158։
Ռոստով — 179, 180։
Ռուան — 193։
Ռումանիա — 47, 215, 301։
Ռուսիա, Ռուսաստան — 9, 11, 27, 48, 89, 92, 97, 115, 127, 132, 143, 145, 151, 181, 247, 252, 255, 262, 263, 275, 278, 299, 301։
Ռուսչուք — 83, 155, 197, 276։

Սալմաստ — 54, 252, 283, 288։
Սամաթիա (Թաղամաս Պոլսոյ) — 69, 72, 156։
Սամսոն — 17, 19, 34, 160, 200։
Սասուն — 9, 48, 87, 89, 151, 154, 170, 171, 176, 190, 191, 214, 225, 227, 229, 238, 239,

247, 248, 260, 275, 280-284, 289։
Սարուստան (Կովկաս) — 26, 27, 44, 48, 87, 89, 247, 248։
Սեպուհ (Երզնկա) — 60, 61։
Սէն Ժիւլիէն — 276։
Սէնտ-Էտիէն — 266։
Սիբիր, Սիպերիա — 252, 299։
Սիլիստրէ — 83։
Սլիվէն — 83։
Սղերդ — 116, 170։
Սորպոն — 220։
Սուխում — 152, 160։
Սուրիա — 48, 69, 75։
Սոֆիա — 50, 53, 59, 83, 145, 156, 191, 218, 222, 224, 227, 231, 234, 241, 257, 263, 275, 280, 289։

Վան-Վասպուրական — 27, 54, 55, 67, 86, 117, 124, 151, 154, 156, 169, 222, 223, 225, 249, 251, 252, 256, 275, 282, 283, 285, 286, 288։
Վառնա — 23, 83, 91, 145, 152, 228, 230, 242, 244, 253, 254, 272, 281, 289։
Վարշաւա — 133։
Վենետիկ — 122։
Վիեննա — 88, 145, 193, 194, 213, 232, 259, 273, 301։
Վիշապ — *Տես Պոլիս*։
Վրէժ-Վրէժստան (Ատրպատական) — 25, 27, 47, 67, 69, 86, 89, 169, 195, 196, 208, 222, 249, 252։

Տաճկաստան — *Տես Թուրքիա-Տաճկաստան*։
Տարօն — 190, 191, 246-248, 275։
Տիգրանակերտ — 116։
Տիվրիկ — 166։
Տրապիզոն (Տես նաեւ Ծովափ) — 17, 19, 61, 66, 67, 96։
Տփխիս — *Տես Թիֆլիս*։

Ցիւրիխ — 140։
Ցրօնք — 48, 61։

Փարիզ — 39, 40, 58, 71, 72, 76, 80, 85, 89, 94, 95, 99-101, 103, 104, 106, 107, 110, 113, 118, 119, 122, 124, 125, 129, 136, 138-140, 142, 149, 152, 155, 157, 160, 162, 178, 179, 181, 186-188, 190, 195, 210-212, 220, 229, 255, 256, 262, 265, 276։
Փիլիպպոպոլ — *Տես Ֆիլիպպէ*։

Քարվանսարա — 195։

Օդեսա — 79, 145։

Ֆիլիպպէ (այժմ Փլովտիւ) — 54, 59, 60, 83, 114, 136, 145, 147, 148, 152, 154, 155, 168, 218, 219, 265, 271, 273, 275, 276, 278, 279։
Ֆռնուզ — 28։
Ֆրայբուրգ — 96, 116, 151։
Ֆրանսա — 32, 68, 80, 86, 91-94, 99, 105, 193, 194, 229, 239, 247, 255, 266։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրիստափոր Միքայէլեանի ժառանգութիւնը
Գէորգ Խուդինեան ---------- 5

Քրիստափորի անտիպ նամակները – Ե. Փ. ----------13

1898-ի նամակներ (թիւ 1-8) ----------16-35

1899-ի նամակներ (թիւ 9-34) ----------36-93

1900-ի նամակներ (թիւ 35-59) ----------94-142

1901-ի նամակներ (թիւ 60-79) ----------143-181

1902-ի նամակ (թիւ 80) ----------182-183

1903-ի նամակներ (թիւ 81-112) ----------184-221

1904-ի նամակներ (թիւ 113-139) ----------222-275

1905-ի նամակներ (թիւ 140-143) ----------276-289

Յաւելուած 1.– Աւետիք Իսահակեանի
1896 թ. բանտարկութիւնը ----------293

Յաւելուած 2.– Հ.Յ.Դ. առաջին թռուցիկները
եւ «Դրօշակ»ի համարները ----------301

Յաւելուած 3.– Յասմիկ Համբարձումեան.
Քր. Միքայէլեանի հետքերով ----------302

Անձնանուններ ---------- 333

Տեղանուններ ---------- 343

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ
ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն
եւ ծանօթագրութիւններ՝
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ

Համակարգչային շարուածք եւ ձեւաւորում՝
ԹԱՄԱՐ ՍՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ

Ստորագրուած է տպագրութեան՝ 03.06.2020։
Չափսը՝ 70X100 1/16։
Տպագրութիւնը՝ օֆսէթ։ 22 տպ. մամուլ։
Տպաքանակը՝ 1000։

«ԳԷՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

հրատարակչութիւն
Երեւան, Գրիգոր Լուսաւորչի 6
Հեռ.՝ (011) 52-79-74, 055-52-79-74
Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru